

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Урзага

Хуучин үзэмсэг

Том I

1785

9(47.925)


W-31

Утгаартай

1901

2012

2004



ՀԱՅԱՊԱՏՈՒՄ

ՊԱՏՄԻՉՔ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ



25932

9(47-925)

Ա-31

ՀԱՅԱՊԱՏՈՒՄ



ՊԱՏՄԻՉՔ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՅ

ՅՕՐԻՆԵԱԼ ԵՒ ՀԱՒԱՔԵԱԼ

Ի Հ. ՂԵՒՈՆԴԵԱՅ Վ. Մ. ԱԼԻՇԱՆ

ՅԱԹՈՌԱԿԱԼ ՎԱՐԴԱՊԵՏԷ

ՄԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

ՅԻՇԱՏԱԿ ՅՈՒՆԵԼԻՆԻ
ԵՐԿՀԱՐԻՐԱՄԵԱՅ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
ՄԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ
8 ՍԵՊՏ. 1701-1901 ՍԵՊՏ. 8

55876-ահ



9 1091-69



ՎԵՆԵՏԻԿ — Ի ՎԱՆՍ Ս. ՂԱԶԱՐՈՒ

ՌՅԵԱ — 1901

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Ն Զ զարմանալի հողերանական
բերումն է մարդոյ, որ ի ծագել
մտաբացութեանն՝ ախորժի լսել
Պատմութիւն կոչուածը. և շատ
հեղ իր կենաց սննդատուն՝ մայրիկն կամ
գայեակն՝ է իր առաջին Պատմաբանն որ
զկենսապահ գոյութիւնը (կաթն) երա-
խային շրթանց ծծել տուած ատեն, անոր
գատարկ և թարմ մտաց այլ ծծել տայ
իմաստից ախորժիլի սնունդ մի, որպիսի՝
և է պատմութեամբ, ըլլայ և առասպել,
այլ և երբեմն (իցէ թէ միշտ) ստոյգ և
սրբազան աւանդութիւն, որով տղայն ոչ
պակաս քան զմարմնոյն՝ այլ և աւելի եւս
հոգեկան սնունդ առնու, և այսպէս շատ հեղ

մարդկութեան և երկնից ընծայուի իմաստուն մի, հայրենասէր մի, սուրբ մի: Ինչ անոյշ է այն քունն՝ որ յետ անոյշ կաթին և անուշագոյն շրթանց օրօրախառն պատմարանութեան՝ յափշտակէ զտնդիւայն: Բայց նա քիչ ատենէ կ'արթընայ. նիւթական սնունդն արգէն սպառած է. նորէն կ'ուզէ և կու տրուի. բայց մտաւորն՝ շատ հեղ գոյացեալ կամ տպաւորեալ մնայ մտացը մէջ. և թէ և փափագի նորէն լսել՝ սակայն ոչ գնոյնն, այլ նման կամ աննման: Շատ վայրենի ոմն պիտի ըլլայ՝ որ ի տըզայութեան սիրած չըլլայ զՊատմութիւնս: Այս յայտնի է հասարակաց. ոչ պակաս և այն՝ որ եթէ ամենուն այլ նման է նիւթական սնունդն, բայց մտաւորն իրարմէ տարբեր, ըստ զանազանութեան ազգի և լեզուի, և ըստ տարբերութեան ընտանեկան և քաղաքական վիճակի ծնողացն և հոգեկան կրից:

Անտարակոյս է որ այդ ազգային և լեզուային զանազանութիւնն՝ Պատմութեան զանազան գաղափարներ աւանդէ նորածին մարդոյն. թէ և քիչ շատ ամենն այլ հաճոյականք տղայոց, բայց քիչ ատենէ ընտրութեան կարողութիւնն այլ զարգանալով ի մանուկն, հաճոյագոյն կ'ըլլայ իրեն՝ իր

պապերու՝ իր սեփական ազգի պատմութիւնն, իսկ օտարացն՝ ընտրանօք: Զարմանք չէ ուրեմն որ Հայու գաւակն այլ սիրէ զՊատմութիւնս Հայուն. շատ խորթ և անկիրթ պիտի ըլլայ մէկն՝ որ չզգայ այդ ազգային հաճութիւնը, թէ և կրնայ ճանչնալով օտարաց որպիսութիւնն այլ՝ հաւնիլ կամ չհաւնիլ ասոնց կամ անոնց եղածին և ըրածին, դատելով հասարակաց մարդկութեան գործերը, կամ բազդատելով իր ազգն ուրիշներուն հետ. բայց ի վերայ ամենայնի սիրողաբար սաւառնի Հայրենեաց զգացումնն ի սեփական ազգային Պատմութեան: Դիպուածք և գործք կրնան աւելի կամ պակաս սիրելի ընել զհայրենիս, ինչպէս աւելի կամ պակաս զբաղդաւոր և ընչեղ ծնողս. բայց ազնիւ սրտի միշտ սիրելի են ծնողքն՝ թէ հարուստ թէ աղքատ, թէ բարեբաղդ թէ դժբաղդ. այսպէս և Հայրենիքն և յիշատակք հայրենեաց:

Եւ որպէս քաղցրագոյն են մանկան՝ մայրենի քան օտարի շրթամբ աւանդածն, նոյնպէս և մեծ տղայոց՝ ամեն հասակի մարդկան (բայց բարեմոյն մարդկան)՝ իրենց մայրենի լեզուով գրուած Պատմութիւնք Հայրենեաց. պարզապէս ըսել՝ իր ազգային Պատմչաց լեզուով, ոճով, գրով աւան-

զեաւըն, որ կենդանական և մտերմական
ինչ կ'ազգեն կիրթ ոգւոյ՝ քան օտարալե-
զուքն: Աւելի պարզ ըսելով, հայրենի պատ-
մութիւնն՝ հայրենի լեզու կ'ուզէ. մանա-
ւանդ եթէ այն լեզուն ունենայ իր յա-
տուկ շնորհքն, վայելչութիւնն և ճաշակն
(համն):

Բազդաւոր համարելի է յայսմ մեր ազգն
կամ իր ազգային Գպրութիւնն՝ երկու մեծ
բարեմասնութեամբ կամ շնորհօք. — նախ,
ոչ սակաւ թուով Պատմիչներ ունենալովն՝
գրեթէ անընդհատ հազար չորս հարիւր
տարուան ընթացից մէջ, ինչպէս պիտի
ցուցնէ ՀԱՅԱՊՍՏՈՒՄՍ Առաջին Մա-
սիկ մէջ. — Երկրորդ, որ Պատմիչք մեր
բաւական վայելուչ յստակ լեզուով և ոճով
գրած են, և ոմանք կատարեալ և գերա-
գոյն հայկաբանութեամբ, որոց ճաշակ պիտի
ընծայէ Երկրորդ Մասնն ԳՐՈՅՍ: Եւ
կրնայ Հայն իր առաջին դարուց Պատմա-
բաններով պարծիլ և չնախանձիլ օտարաց,
և նոյն իսկ դասական կոչուած (Classiques)
մատենագրաց:

Միով բանիւ, կրնամք ըսել կամ խոս-
տովանիլ, որ մեր ազգային Գպրութեան
աւանդից մէջ հաճոյագոյնն և իսկազոյնն՝
իր Պատմագիրքն են, որք եթէ և հասած

չլլան ի ճարտարութիւն և ի բարձրու-
թիւն քանի մի ճառագրաց և երգողաց
(Շարականաց), սակայն և ոչ շատ վար-
կամ հեռու մնան: Ով որ մեր այդ ճա-
ռագրաց, Երգողաց և հին Պատմչաց լե-
զուն չի հասկանար, իրեն խորթ և խրթին
կու գայ անոնց ձայնն, և անհնար է որ
ճաշակէ արժանապէս, այսինքն անոնց համն՝
քաղցրութիւնն և վսեմութիւնն ըմբռնէ, և
գոհ ըլլայ այժմու կերպ կերպ աշխարհաբար
կամ աշխարհաբառ կոչուած բարբարիկ
բարբառներով, յորոց գէթ զոմանս մեր
խորենացին կրնար կոչել աղիւստոյոյ և
խեցքեկագոյն: Սակայն եթէ մէկն ասոնց-
մով այլ զմայլի, ըստ խրատու հին առա-
ծին՝ չեմք վիճեր, բարով վայլէ իր հաւ-
նածը. բայց չեմք կրնար չցաւիլ մեր այժ-
մու գիտնոց և հանճարեղ գրչաց վրայ, որ
իրենց ոսկեղինիկ նախնեաց՝ թարգման-
չաց Աստուածաշունչ մատենին և Ս. Հարց
գրոց գերագոյն ճաշակը չեն կրնար կամ
չեն ուզեր վայել:... Հապա ո՞վ չցաւի իմ
իսկ վրայ՝ որ ոչ միայն գրոյց Երկրորդ
Մասին ծանօթութիւններն, այլ և ողջոյն
Առաջին Մասնը՝ զիջանելով ի պէտս համ-
բակաց և անհմտից՝ բռնադատուեցայ նը-
մանապէս ոսկիօրէն գրել, իրբեւ կերպա-

սեղէն և ոսկեթել հագուստը թանձր քթանով կարկատելով, մանաւանդ որ նպատակս էր՝ ոչ այնքան ազգային պատմութեան գիտելիք աւանդել, որքան մեր Պատմըչաց բացատրութիւնը իրենց հարազատ հայրենի լեզուաւ, ինչպէս կ'ընեն ամեն ազգի ուսուցիչք, իրենց հեղինակաց գրածներէն ընտրանօք հատուածներ քաղել՝ յօրինակ և ի ճաշակ աշակերտաց և բանասիրաց:

Ոչ ամէն տեսակ գրուածներէ ընտրեցի այս ճաշակներս, այլ ի Պատմչաց, ըստ վերոյգրելոյս, զատնք հաճոյագոյն համարելով յընթերցումն քան զայլս: Աւելի այլ հաճոյ և գիւր ընելու համար՝ ընտրեցի ժամանակագրական կարգ մի պատմութեան քան Պատմչաց, թէ և շատ տեղ զուգընթանան ժամանակք Պատմչաց և Պատմութեան, և որ և է կերպով չի խափանուիր հեղինակաց լեզուի և ոճոյ զանազանութիւնն: Ուղեցի միանգամայն և ժամանակի չափ մի սահմանել Պատմչացս, սկսելով ի Գ. կամ Ե. դարու հեղինակներէ մինչեւ ի ԺԷ, այսինքն մինչեւ ի 1600 թուականն Քրիստոսի: — Ասկէ վար՝ միայն քանի մի Յօդուածք կան, զի կամ Առաքել Գաւրիթացոյ գրածէն են՝ որ մեր վերջին օրինաւոր

Պատմիչն կրնայ համարուիլ, կամ կարեւոր գիպուածք են և հնագոյն պատմչաց ըսածը պարզեն կամ լրացընեն: Վերջին երեք դարուց (ԺԷ. ԺԸ. ԺԹ.) գրողները թողի, զի ընդհանրապէս անօճ են, և լեզունին շատ խանգարած. որոց քիչ շատ նման գտնուին և ընտրած Յօդուածոցս մէջ եւս, ինչպէս 381. 387. 391:

Յետ այսր ամենայնի եթէ ընթերցողացս մէկն հարցընէ, թէ ինչո՞ւ այդչափ (400) Յօդուած միայն առած եմ այնքան Պատմիչներէն և Յիշատակագրողներէ, ասոր պատասխանը գտնէ վերջին (400դ) Յօդուածին գրող մեզմէ հինգ վեց դար առաջ ապրող հեղինակէն: Արգարեւ երկու երեք հազար պատմական տարիներու մէջ ապրող ազգի մի համար՝ շատ փոքր նմոյշ մի է այդ. հանդերձ այսու սակաւ կոտորոց (Յօդուածոց) մէջ այլ՝ բանասէր և զգայուն մտք կրնան գտնել բաւական ինչ հաւնելու, սիրելու, նաեւ լալու: — Իսկ թէ հարցուի, ինչո՞ւ այս և այն Յօդուածներն են ընտրուած և ոչ այլք նմանիք կամ լաւագոյնք, այդոր պատասխանը նոյն ինքն հարցընողին թողում, զոր՝ եթէ ինքն այլ ուզէ այսպիսի ինչ հաւաքել, յառաջագոյն պատրաստէ տալու պատասխանը իրեն հարցընողաց: Այսպէս

այլ իմանայ խնդրողն՝ թէ ինչու այդչափ միայն քիչ կամ կարճ ծանօթութիւնք գրուած են մեր Պատմութիւնը պարզելու, ստուգելու, և այլն. — այսչափս կ'ըսեմ կամ կրկնեմ որ իմ նպատակս չէր պատմութեանց ստուգութիւնը քննադատել, ինչպէս հիմայ կ'ընեն ոչ սակաւ բանասէրք մեր (իմաստութեամբ և իմաստակութեամբ եւս, չափով և չափազանց), այլ մեր հեղինակաց հաւատքն և կարծիքը ներկայացընել, աւելի իրենց պատմական ոճը գիտելով քան գիտութիւնը. միայն ուր յայտնի սխալ կամ մթութիւն կամ տարակոյս կար՝ ուզեցի շտկել կամ պարզել, որչափ պատշաճ համարեցայ կամ կրցայ:

Չեմ ուզեր գրոցս Առաջին Մասին (որ իմ գործս է) վրայօք գրել. թողում բանասիրաց ճաշակին և դատաստանին. միայն յուսամ որ գէթ ոմանք գտնեն նոր ինչ և անծանօթ գիտելի, իսկ այլք այլ թերեւս և պակաս ինչ քան իրենց գիտցածն և ուզածն:

Գալով առ բովանդակութիւն գործոյս և հրատարակութիւն, հարկ համարիմ խոստովանիլ՝ որ քանի մի տասնեակ տարիներով առաջ սկսած էի հաւաքել այս Յօդուածներս, մասամբ ինքնին, մասամբ ձե-


ռօք ընկերաց և աշակերտաց, որոց հիմայ հրապարակաւ շնորհակալ կ'ըլլամ, որք և մինչեւ այս ետքի օրերս պէսպէս կերպով շարունակեցին իրենց ձեռնտուութիւնը: Իսկ ես յետ այնքան երկար ամաց սկզբնաւորութեան, այն ինչ անցեալ դարուս վերջին տարին (1900) և նորոյս առաջին տարին (1901) լրացընելով և ծանօթաբանելով զհաւաքածս, յայնժամ գրեցի և զԱռաջին Մասն գրոցս, արգէն յոգնած անձամբս՝ եթէ ծերութեամբ և եթէ որ և է տկարութեամբ, որք (եթէ ներուի ըսելս) ինքնին պահանջեն զանկատարութիւն գործոյս: — Անշուշտ նոր հրատարակեալ բնիկ և օտար գրոց և օրագրոց մէջ կան կարեւոր գիտելիք այս գործոյս համար, որք կամուր և ակամայ վրիպած են աչքէս, կամ չեմ ուզած երկար քննաբանութեանց առիթ տալ, յսրոց թէ և օգտուեր եմ երբեմն, բայց և ձանձրացեր ի շատաբանութեանց, և չեմ փափագիր ձանձրացընել զուրիշները:

Արգ, որպէս և այլք դատին այս երիտասարդութեան մտածութիւնս և ծերութեան ծնունդս, որովհետեւ մարմին գործոյս (Յօդուածքն), հարազատ և անփոփոխ բանք են մեր նախնեաց, չեմ քաշուիր յուսալու որ

ցորչափ պատուին այդ մեր նախնի գրելչքն
 և ՊԱՏՄԻՉՔ՝ պատուի և անմահանայ ա-
 նոնց գործն և անունն և պիտանի ըլլայ:
 Այսու յուսով և իմ Պատուական Եղբարքս
 հաճեցան որ ՀԱՅԱՊԱՏՈՒՄՍ այս՝ ընդ
 գործոց այլոց՝ նուիրի ի Յիշատակ ԵՐԿ-
 ԴՍՐԵԱՆ ՅՈՐԵԼԻՆԻ հաստատողի Ուխ-
 տիս՝ ՄԽԻԹԱՐԱՅ ԱԲԲԱՀՕՐ, և կամե-
 ցան եւս որ սոյն գործս առանձին փոքրա-
 գիր եւս տպագրուի ի պէտս և ի դիւրու-
 թիւն համբակաց:

Իսկ ես նուստաբար դնեմ զգործս առ
 ոտս նոյն իմ հոգեծնող Հօրս և Նոր մի
 Լուսաւորչիս Հայոց, պատկառանք խնդրե-
 լով ի նմանէ, որ թէ՛ զայս և թէ՛ զայլ նմա-
 նիս՝ որոց համար այնչափ ժամանակ կե-
 նացս ծախեր եմ (իցէ՛ թէ լաւ եւս ըլ-
 լային և առ լաւագոյնս), եթէ երբէք զա-
 ռածեր եմ ասոնց մէջ և ոչ միշտ նուիրեր
 առ կենսատուն իմ Աստուած և յօգուտ
 իմ և այլոց, մտղթէ և արժանացընէ նե-
 րողութեան Նորա (Աստուծոյ). և մինչ ահա
 հրապոյրք երկրաւոր և սգաւոր Հայրե-
 նեաց իբրեւ երազ ցրուին և ցնդին յա-
 չացս և ի կամաց, բորբոք՝ յիս զփափագ
 վերին Հայրենեաց և անդատապարտ հաս-
 ցընէ ի նոյն. որոյ համար և յազգասէր և

բարեսէր ընթերցողացդ՝ խնդրեմ աղօթս,
 և այլ ինչ ոչ. բայց զի և Պատմիչքս և հա-
 ւաքողս և ընթերցողք՝ ընդ ամենայն սիրողս
 և սիրելիս Աստուծոյ՝ հանգիպինք հօն՝ իրա-
 րու. մի անգամ միայն ժպտելով այս սա-
 հուն երկրիս մէջ կրածներնուս և գրած-
 ներնուս վրայ, և ապա միշտ վայելելով
 զանսպառ ճշմարիտ յաւիտենական Բա-
 րին... զՅաշիտեկալանն:



ՀԱՅԱՊԱՏՈՒՄ

Ա.

Պ Ա Տ Մ Ի Զ Ք Հ Ա Յ Ո Ց



Ի Զ Ե Լ Ո Վ, մեր Հայ ազգի Պատմիչները՝ մի ըստ միովէ ժամանակի կարգաւ ներկայացընել, անոնց յատկութիւնը կամ պատմական ոճն և արուեստը լաւ ճանչնալու համար, կարեւոր համարիմ' նախ ճանչնալ, (քանի մի դրուագօք), — Ա. Պատմութեան էութիւնը և որպիսութիւնքը, որով զանազանի պատմիչ ի պատմէ. մեր Պատմչաց որքանութիւնը, անոնց արժէքն՝ թէ՛ յաչս մեր և թէ՛ օտարաց: — Բ. Յիշել մեր հայերէն լուսաւորութենէն և դպրութենէն առաջ (որ է ըսել Գ. Ե. դարէ առաջ) Հայապատում կոչուելու մերազգի կամ օտարազգի գրողքն՝ թէ գտուին, և զորս կըրնամք անուանել մեր Նախապատմիչք: — Գ. Հնա-

գոյն և միջին ժամանակաց օտարազգի Պատմիչները հարեւանցի աչքէ: անցընել, գոնէ յանուանէ յիշելով, որք կամ առանձին կամ ընդհանրական պատմութեանց մէջ՝ աւելի կամ պակաս գրած և յիշած են զՀայս. և որք՝ եթէ այս գրուածիս մէջ չընծայեն ընթերցողացս՝ մեզի նկատմամբ իրենց զիտելիքը, սակայն նոյն իսկ իրենց (պատմըչաց) բազմութեամբն բաւական են մտքերն անգրագարձընել, թէ որքան այլազգի և այլալեզու հեղինակք օտար պատմութեանց մէջ յիշեր են զՀայս, և թէ որքան ընդհանուր պատմութեան մէջ (մանաւանդ ի հնունն) հարկ եղեր է յիշել զՀայս. կամ որ նոյն է բսել, որքան և ինչ յիշատակ թողած են Հայք ի միջի մարդկութեան այլեայլ ցեղից, անբութեանց և աշխարհաց, և որքան իրենց կենդրոնէն հեռուոր սահմաններու մէջ, միանգամայն բազգատելով զմերայինս սահմանակից ազգաց հետ և թողած կամ չթողած յիշատակաց յօտարութեան:

Գ Ր Ո Ւ Ա Գ Ա.

- 1. Դոքրիւն Պատմութեան: — 2. Տեսակք Պատմութեանց: — 3. Թիւ և Կորուստ Պատմւոց մերոց: — 4. Արժեք Պատմւոց մերոց:

1. Ամեն ազգի սեփականագոյն յիշատակն իր Պատմութեանն է, որ և է կերպով աւանդեալ ըլլայ, մանաւանդ գրաւորն, զի կան և անգիր յիշատակք՝ պատկերօք կամ քանդակօք. կան և աննիւթք, զրոյցներով կամ երգերով բերնէ բերան աւանդեալք: Ստոյգ Պատմութիւնն սովորաբար արձակ շարագութեամբ կ'աւանդուի, եղածն և ուր և երբ և ինչպէս ըլլալը յայտնելով, և ոչ այսպէս

կամ այնպէս կարելի ըլլալն, երբեմն եւս անկարելին, ինչպէս բանաստեղծից հնարքն են: Սակայն դուրս թողով սոցա երեւակայեալ հիւսուածքը, եթէ ստոյգն արուեստաւոր չափով կամ ոտանաւոր գրուած ըլլայ, ինչպէս ի մերայոց Ներսիսի Կլայեցոյն, Վահրամայ, Սիմոնի Ապարանեցոյ, և այլն, Վիպասանութիւնքն, այն այլ ընդունելի է ի կարգ պատմութեանց:

Չուզելով իմաստասիրել Պատմութեան որպիսութեան վրայ՝ ինչպէս կ'ըմբռնեն գիտուեք և տգէտք, և ինչպէս արտագրեր են այլեայլ ազգք, մեր Հայոց ազգին ըմբռնածն և զիտածը և ինչ կերպով աւանդելն է իմ նպատակս: — Այս բանիս համար պահանջուի որ իրն՝ Պատմութեանն իր անունէն ստուգարանուի: Եւրոպական ազգաց հին աւանդութիւնք (զորս կրնանք նախածնող Պատմութեան անուանել) յունական Ἔπος բառով կոչուին, ըստ Փոսանկաց Ἐποποιέ, որոյ զոյգ և մեր Հայկական բառս Վեպ, յորմէ և Վիպասանութիւն: Սակայն, ըստ վերոյգրելոյս՝ զանազանի սա ի ստոյգ պատմութեանէ, զոր Յոյնք և անոնց հետեւող Լատինք և սոցա հետեւողքն կոչեն Ιστορία, Historia, Histoire. մեր ազգն չէ ընդունած այդ անունը, թէ և համաձայն ստորագրութիւն բառն այլ երբեմն պատմութիւն նշանակէ: Իսկ այս իր բնիկ բառն՝ եթէ շանանք լուծանել, թուի պատ, պատել արմատէն ծագի, և զուգի Հիշատածք բառից բուսածին, և երկուքն այլ՝ պատել և հիւսել՝ հոմանիշ կամ մօտանիշ են. ըստ այսմ և Պատկիպատ բանք՝ ազատօրէն զրոյց նշանակեն: Շատ հաւանական է որ մեր հին նախնեաց յիշատակաց աւանդութիւնք վիպասանական ոճով եղած են քան զբանական պատմութեամբ: Բայց զի մեզի չեն հասած այդպիսիք՝ ոչ գրով և ոչ բերնով, բաց ի քանի մի տողերէ, առ այժմ՝ աւելորդ համարիմ զայն պիսիս հետազօտել, այլ բուն մերոց գրած Պատմութիւնը քննել, և ինչ որ իրենք այդ անուամբ իմացիք են, և դիտեր են ի գրելն:

Ըստ բառին Historia օտարք տեսութիւն կամ ժանօթութիւն կ'իմանան, որպէս և յատկապէս նշանակէ Գերմանացոց բառն Geschichte. Թէ ոչ յատուկ այսպէս բառիւ՝ այլ մտօք նոյն է և մերայոց ըմբռնածն, և նոյնպէս ուզած են աւանդել ակնցալ և ներկայ ժամանակի եղածն կամ հանգիպածն. և գրեթէ ամենքն միաբան վկայեն, թէ կամ ինքնաբերաբար կամ ուրիշի զրգմամբ ուզած են գրել զայսպիսիս, որ անմոռաց մնան նախնեաց և իրենց ժամանակի յիշատակք. և շատերն հարկաւոր իմն համարած են ի նախահարց և ի նահապետաց ազգաց սկզբնաւորել իրենց պատմագրութիւնը, և յառաջելով ժամանակի՝ յիշել և ընդարձակել իրենց բնիկ ազգին յիշատակները, երբեմն խառնելով և օտարացը, մանաւանդ իրենց երկրին մօտաւորաց կամ իրենց ազգին որ և է կերպով գործակցաց և ազգոգաց:

Մեր Պատմչաց շատերն աւելի ուրիշներու խընդրանօք կամ հրամանաւ զրգուած են պատմագրելու քան ինքնակամ. ինչպէս, Ազաթանգեղոս՝ հրամանաւ Մեծին Տրդատայ, Խորենացի՝ ի խնդրոյ Սահակաց՝ Բագրատունւոյ և Արծրունւոյ, Եղիշէ՝ Դաւթի Երեցոյ, Ղազար՝ Վահանայ Մամիկոնենի, Ղեւոնդ՝ Շապհոյ Բագրատունւոյ, Թովմաս Արծրունի՝ իր ցեղին Թաղաւորին, Աւետանէս՝ Անանիայի Նարեկացոյ, Ասողիկ՝ Սարգսի կաթողիկոսի, Սամուէլ Անեցի՝ Գրեգոր Տղայ կաթողիկոսի, և այլն, և այլն: Կան և ինքնայօժար զրոյք, որպէս Բուզանդ, Զենովբ, Լաստիվարացին, Մխիթարքն, Վարդան, Կիրակոս, Օրբելեանն, Մեծօփեցին, և այլն: Շատերն իրենց նախորդներուն զրածը համառօտեր և շարունակեր են, գրեթէ ամենքն այլ նախնեաց յիշատակներն անկորուստ պահելու փափագով: Ոմանք այլ յատկապէս իրենց երկրին կամ ցեղին, մանաւանդ քաջութեան գործերն անմոռաց պահելու համար մինչեւ ի յետին դարս. որպէս և առաջինն ի պատմչաց մերոց (Ա-

զաթանդ.) կ'ըսէ. « Պատմել նախ զհայրենեացն » գործս քաջութեան քաջին Խոսրովու, և որ ինչ » գործք գործեալք քաջութեանն մարտից պատե- » ռազմացն... և կամ վասն հօրամոյն քաջութեանն » Տրդատայ », և այլն: Ըստ այսմ և Խորենացի (Ա. գ). « Բազում գործք արութեան գտանին » գործեալ և ի մերում՝ աշխարհիս, և արժանի » զրոց յիշատակի ». գովէ սա և իր մեկենասն եւս՝ որ այսպիսի լաւ մտածութիւն ունեցաւ և ի զործ դնել տուաւ: Նոյնպէս և Օրբելեանն. « Ձի » մի կորիցէ, կ'ըսէ, առաջնոյն զօվելի գործք քա- » ջութեանց »: Այս նուրբ կամ հպարտ՝ բայց և զօվելի իմաստն՝ այնքան խոր կամ կիպ ապաւո- » րեալ է ի Հայում՝ կամ այնքան բնածին է, զի շնն կրցած խել զայն իրմէ՝ այնքան դառն դիպուածք զարուց՝ մինչեւ այս մեր տժգոյն ժամանակս:

2. Ըստ տեսակի և շափու պատմագրութեան՝ զանազանին Պատմիչքս. կայ որ Բերքանրակաւ է, սկսեալ ի Հին ազգաց և յատկացուցեալ մերոյն, համառօտ ի սկզբան՝ ընդարձակ յետոյ. այսպէս, Խորենացին, Կաղանկատուացին, Յովհան կաթողիկոս, Արծրունին, Ասողիկ, Վարդան, և այլն: Կայ որ Ժամանակագրակաւ է, կամ Տարեգիրք է, ըլլայ ընդհանուր ազգաց, ըլլայ յատուկ մեր ազգին, ինչպէս, Սամուէլ և Մխիթար Անեցիք, Մատթէոս Առհայեցի, և այլն: Կայ որ Մասնական ինչ է, ներկայ կամ կարճ ժամանակի յիշատակ. ինչպէս են Զենովբ, Յովհ. Մամիկոնեան, Եղիշէ, Ղազար Փարպեցի, Սերխոս, Ղեւոնդ, Լաստիվարացի, Մեծօփեցի, Աւաբել Դավրիժեցի, և այլն: Կան և կենսագիրք, անձի մի վարք գրոյք, ինչպէս Կորիւն, Մեսրոպ երէց, և Վկայարանք, այսինքն Մարտիրոսաց և Սրբոց վարքերը գրոյք: Դարձեալ, ոմանք գրած են տեղոյ մի պատմութիւն կամ ստորագրութիւն, ինչպէս Գր. Նարեկացին՝ յԻտալիս Ապարանից, այլք Հացիւնեաց և

Ծիծառեկոյ և Բարեդէկ խաչից, Դարկրծի պատմութիւն, և այլն: Ոմանք գրեր են զԺողովոց (եկեղեցւոյ) պատմութիւն, որպէս Զաքարիա Ծործորեցի, և անանուն գրողք Կարնոյ և Կիլիկիոյ ժողովոց: Աւելի նշանաւոր են յատուկ ցեղի մի պատմագրողք, ինչպէս Թովմաս՝ Արծրունեաց, Ստեփանոս Օրբելեան՝ Սիւնեաց, Կաղանկատուացի՝ Ադրասեցի, Կամարակեաց, Կիլիկեցոց կամ Ռոբրիկեաց, և այլն: Յիշուին եւս օտար ազգաց անուամբ Պատմութիւնք, Սարդոց, Յունաց, Հեփրաղաց, և այլն: Դարձեալ, այլեւայլք. Պատմութիւն Խաչակրաց կամ Բառասիկ (Passage, Les Croisades), Միաբանոց կարգին պատմութիւն, Ծայր կամ Ծայր ժողովրդեան պատմութիւն (Ուխտանէսի):

3. Նկատելով կրկին (Մեծ և Փոքր) Հայոց 20 կամ աւելի Աշխարհք ունենալն, յորս աւելի քան 200 գաւառ, և աւելի քան 600 իշխանական և ազնուական Յեղք կամ Տոնք կային, իւրաքանչիւր քիչ շատ նախանձաւոր իրեն պատուոյն և համբաւոյն, ո՞վ կըրնայ շնամոզուիլ որ շատ (թէ կարճ թէ՛ երկայն) պատմագրութիւնք եղած պիտի ըլլան ի Հայս, վերոյիշեալ մէկ կամ միւս տեսակով, և ըստ Խորենացւոյ ըսածին «Անբաւ» զրուցաց մատեանք» ի վաղուց. թող գոյտագայս:

Ո՞ր են հիմայ այգքան յիշեալ և ոչ յիշեալ Պատմութիւնք Հայոց: — Թողով Խորենացւոյ ետքի ըսածը, զի հայերէն յատուկ գիր չեղած ժամանակին վերաբերի. իսկ անկէ ետեւ մինչեւ առ մեզ գրեթէ 1400 տարի է. և այս դարուց մի քան զմի հին փորձանքներէն ո՞րչափ և ի՞նչ կըրնայինք յուսալ: Յիշենք եւս, որ եթէ ազգերնիս բազմատոհմ և բազմիշխան էր, գրեթէ անտարակոյս է որ շատ սոհմական Պատմութիւնք գրուած են: Զմտնանք այլ

վերն ըսածնիս, թէ՛ դոքա իրենց սեփականին շատ սիրով յարեալ և նախանձաւոր էին, և չէին սեղեր որ իրենց յատուկ սոհմական ծանօթութիւնք հրատարակուին և անցնին ի ձեռս օտար ցեղից. և այս մեր ամենէն հին պատմաց վկայութենէն յայտնուի. ինչպէս կ'ըսէ Զենովը, որ երբ ուղեց քիչ մ'ընդարձակել իր պատմագրութեան սոհմանը՝ Լուսաւորիչ Հայոն մեր արգիլեց, իրբեւ թէ օտար երկիր պիտի կոխէր. Զենովը այլ պարզօրէն խտտովանի իր խեղճ մխիթարանքը, թէ՛ եթէ ես ուրիշ վիճակինը չկարողացայ գրել, ուրիշն այլ չի կըրնար իմ վիճակիսը գրել: Այս յայտնէ, որ եթէ և գրուած էին շատ յատուկ սոհմից և կողմանց Պատմութիւնք, սակայն քիչ օրինակք հանէին անոնց, զուցէ մի երկու, ինչպէս ինչուան հիմայ մեր վաւորեցի և եկեղեցեաց Կոնդակքն:

Աւելցնենք աւելի ցաւալին. երկայն դարերով մեր հին և գեղեցիկ Հայրենեաց ոտնակոխ, սրակոխ, այրեացաւեր ըլլալն՝ այնպիսի ազգերէ և հրոսներէ, որոց ինչ արժանի անուն տալն՝ գուցէ գեո վնալուելու է: Յայտ է որ այդ շանուանելիքն՝ ոչ միայն անձանց արիւնը քաղեր են, այլ և անոնց նիւթական ձեռագործաց հետ՝ բանաւորներն այլ, Գրքերն այլ. հրով և սրով փճացնելով: Թերեւս ծայրագոյն և սրբագոյն կոկիծով երբեմն ծնողք և տեարք՝ իրենց զաւակաց խամբած ծաղկանց հետ՝ զրքերն այլ թաղելին լու համարեր են՝, զուցէ և ապագայ յարութեան մի յուսով: Յայսմ մասին, եթէ ստոյգ է, բարբարոսագոյնն այն յաշխարհաւերս՝ բարեմոյն գտուեր է առ գրեանս՝ Լանկիթիմուրն, որ ըստ աւանդութեան՝ ժողովել տուած է զգրեանս, և իր մայրաքաղաքին Սմրղանդի ամուր աշտարակի մի մէջ պահել. շատերն հաւատարով յիշեն զայս.

1. Այսպէս ըրած է, կ'ըսուի, Դուխսս զբապեան Ալթամարայ. Անկիթիմուրէն ապատելու համար զըրքերը՝ սակաւաց մէջ լեցընելով թաղեր է:

որպէս Վիլլոզ հայագէտ փրանկ Յիսուսեան Հայրն իր Հայ-լատին Բառարանին վերջը (1713)։ Թէպէտ սա կատարեալ համարի զգործ բարրաբոսին. զի « Յայնժամ (1388) գրեթէ Հայ գրեանքն ամենեւ » քեան մաշեցան ի հուր », կ'ըսէ : Այսպիսի ինչ և Յակովբ Նալեան պատրիարքն՝ Եզնկայ գրոց տպագրութեան վերջը, յամին 1762 : Լանկթիմուրի այս գրոց ըրածն ստոյգ թէ անստոյգ՝ վայլէ իր ըրածին ի Սերաստիա. բայց իրմէ առաջ և վերջն եւս շատ հեղ այնպիսի ջարդ, կորուստ և կողոպուտ ըլլալն մեր գրոց՝ յայտնի է. սկսեալ անկէ հազար տարի առաջ, ոչ միայն կրօնից այլ և գրոց ուրացող Մերուժանէն, որ, « գորս միանգամ գիրս գը » տանէր՝ այրէր » (Խորեն. Գ. զգ) : Այլ շատ վերջը, է դարու կիսում Ներսէս Գ. կաթողիկոս գրէր. « Թշնամիք աստուածապաշտութեան բազառմ' ան » գաւ՝ արշաւեալ կորուսին զկտակարանս եկեղեց » ցւոյ, և զվարդապետս նոյնպէս սպառեցին » : (Մերիոս) : — Մովս. Կաղանկատուացի թերեւս ժամանակակից, նոյնպէս ողբայ « զմտտեանից և զկտա » կարանաց հրկիզութիւն » (Ա. ը) : Աշուանից կաթողիկոսաց շարքն և գործքն այլ չգտնելով ամբողջ՝ նոյնպէս կ'ըսէ (Գ. իգ) . « Հրկէզ եղեալ յանօրի » նաց՝ կտակարանք և սպասք և տեղիք կալոյ նո » ցա » : Սիւնեաց պատմիչն իր երկրին ամուր Բաղա կայ բերդին առնուած ատեն ի թշնամեաց՝ 10,000 մատենանք կորսուեցան, կ'ըսէ, յամին 1126 : Դար մի վերջը (1241) երբ Թաթարք տաին զԿարնոյ քաղաք, « Անթիւ գոյին կտակարանք աստուածային » գրոց՝ մեծամեծաց և փոքունց. զայն առեալ այլ » ազգեացն ծախէին... ընդ գոյն գնոց » : (Կիւրակոս, Խթ) : — Ասոնցմէ աւելի կսկծելի կամաւոր կորուստք եղած են գրոց մինչեւ ի մեր օրերս, և ոչ լով այլաիրօնից, այլ և քրիստոնէից և կարգաւորաց ձեռօք, զոր յիշելն անգամ ճնշէ զսիրտ : — Սմբղանտի աշտարակի մէջ փակելն յիշէ Շամիրեան, 1776 . նոյնպէս և Յովհ. Կարրեցի կաթողիկոսն գրելով

առ Կրտիոս գիտնական ուսուցիչ Տորրագայ համալսարանին (1833), և հաստատէ, « Ոչք' ծա » նեաք զի կան և մնան ցայսօր » : Բայց քանի մի եւրոպացի ճանապարհագիրք և յետ Ռուսաց այն կողմերը նուաճելուն, չեն յիշեր զայս¹ : Ոմանք այլ կարծեն թէ հիմակուան Պարսից տիրած Հայոց մասին մօտ յԱրտագ՝ Մակոչ կոչուած քարաբեր գին մէջ ծածկուած կան շատ գրեանք. և յայտ է թէ բան մի ծածկուած է հօն. զի պահապանք բերդին շթողուցին որ և է հետաքրքիր քննողի՝ մտնել ի ներս. միայն դրան վերեւ արձանագրու թիւն տեսնելնին վկային, այլ չեն կըրցած որոշել ինչ լեզուով ըլլալը : Շատ պէտք չէ երկրայիլ այս բանիս. զի Մխիթար Ապարանեցի կ'ըսէ, թէ իր ատեն ոչ շատ յետ Լէնկթիմուրի՝ այդ ի բնէ ա մուր քարաբերդին մէջ, զոր Ծակն Մակոչայ կոչէ, « Միայն ի Մակուա՝ 50 լիտր գիրք աւելի կայ » միայն ի Սըսայ բերած » : և այս միայն կրօնից Միաբանութեան խնդրոյն համար գրուածքն էին : Շոյնն կ'ըսէ թէ իր ատեն այլեւայլ կողմեր Հայոց գտուած գրոց՝ « Եթէ հնար էր զամենայն ժողովել » ի մի վայր, աւելի գոյր քան զնազար քեռն » :

Անշուշտ մենք այլ գրասիրութեամբ հեռացանք մեր նպատակէն. բայց և այս ի հաստատութիւն շատութեան ազգային պատմական գրուածոց, յորոց հիմայ գտուածքն՝ նշխար մի համարելու է չգտուածներուն և չգտուելիներուն : — Մեր ամեն ճշմարտասէր՝ որով և մանրաքնին պատմիչք՝ վըկայած են իրենցմէ առաջ զբողներուն, ինչպէս տեսանք վերեւ Խորենացւոյ ըսածն, որ շատ հեղ այլ այնպէս գրած է. զոր օրինակ Սանատրիկոյ ժամանակին համար. « Ար ինչ առ սորա ժամանակաւ՝

1. Աւելի դարմանալի և չափազանց ինչ գրէ այս կաթողիկոս, թէ երբ այլազգիք յամին 1170 տիրեցին Ասորաց Պապլպէք քաղաքին՝ « կրեան առաւել քան » զ'10,000 Ձեռագիրք Հայոց » :

» յառաջագոյն գրեալ յայլոց... այս ամենայն այլոց
 » պատմեալ յառաջագոյն քան զմեզ » : Բագրա-
 տունեաց ցեղին համար (Ա. իբ) : « Ստեյն ոմանց
 » անհաւաստի մարդոց ըստ յօժարութեան և ոչ
 » ըստ ճշմարտութեան... մի այդպիսեաց յիմար
 » բանից հաւատար » : Աբրիշ տեղ (Բ. զբ) :
 « Հագներգութիւնս ըստ իբրաքանչիւր պատմա-
 » գրաց արտասանութեանց՝ ոչ ի մէնջ յատուկ շա-
 » բադրեցաւ » : Հոփսիսեանց համար : « Աչ երեւին
 » գրեալ ի յորովից ճօխարան պատմութեանց » :
 և այլն : — Ղաղար Փարպեցի իր պատմագրու-
 թիւնը սկսի ըսելով : « Ընդ բազում ճառս մատու-
 » նից Առաջնոցն Պատմագրացն Հայոց անցի, յորոց
 » ըստ երկար ընթերցողութեան՝ դաի ի նոցանէ
 » զժամանակս և զգարուց աշխարհին Հայոց բազ-
 » մադիմի յեղափոխութիւնս » : — Յովհան Մա-
 միկոնեան իր ցեղին պատմութիւնը գտնէ յԱբհա,
 ասորերէն գրուած : — Մովսէս Կաղանկատուացի
 կ'ըսէ (Բ. ա) : « Գտանին զրոյցք արեւելիայց կող-
 » մանց որ ոչ անկեալ են ի զիր ձևագրական պատմա-
 » գրաց » : — Ղեւոնդ յ'Ը գարու : « Ծատ ինչ աշխա-
 » տասիրեցաք ի պատմագրական տառս առաջնոցն...
 » զանուանս և զժամանակս Ամիրամունեանցն,
 » զոմանց այլեայլ գտաք ի պատմութիւնսն » : —
 Թովմ. Արծրունի ի Յառաջարանին : « Չմնացորդս
 » ի յիշատակարանաց ի յառաջագոյն և ի ձին պատ-
 » մագրաց » : Աբրիշ տեղ : « Ի հնախօս շարագրա-
 » կան մատենանս և ի բազում վեպս պատմաբանաց
 » անցեալ գրեցի » : Դարձեալ (Ա. և) : « Արպէս
 » ցուցանեն մեզ առաջինքն ի պատմագրացն »,
 զդէպս Սփրահակայ : Կոյնպէս և, « Յուցանեն բա-
 » զումք ի Պատմագրաց », զգործս Ստասեանց :
 Իր ցեղին Արծրունեաց համար այլ կ'ըսէ, որ չու-
 զեց երկարարանել՝ « Ընթանալով զհետ բազմա-
 » խոյզ գրուցատրութեանց՝ զոր առաջնոցն մատենա-
 » գրեալ գրոյմեալ կայ ընդ ժամանակս ժամանակս » :
 — Անուշտ դարձեալ ազգային պատմագրութեանց

սիրով հեռացանք, թէ ոչ մեր նպատակէն՝ այլ մեր
 ոճէն կամ չափէն : դառնանք հիմայ այնքան յուսալի
 շատերէն մնացեալները թուելու : որոց ոմանք լաւ
 սովորութեամբ՝ իրենցմէ առջիններուն անունները
 նշանակած են իրենց պատմելիքէն առաջ, կամ լոկ
 Պատմչաց անուանց ցանկ մի գրած են :

Այսպէս ընողներուն այլ առաջինն է յառաջա-
 զէմն Խորենացի, որ մեր ազգը յիշող հին պատ-
 միչները նշանակէ, որ և է ազգէ ըլլան : Ինչպէս
 գիւրտոսս կամ Պիւռոս քաղզէացի, Աբիւղենոս,
 Աղեքսանյր Բաղմովէպ, Խոռոհրոտ, Ուրիշպ կամ
 Ուլմբ, Բարդածան, Ափրիկանոս, Ագաթանգե-
 ղոս, Մար Իբաս, Եւսերի, Բանան, Գորգի, Իսալիթ-
 թո՛ղ որք պատահարբ բան մի յիշեր են զՀայոց :
 Փարպեցին միայն զԱգաթանգեղ և զԲուզանդ յիշէ
 իր շատ կարգացած պատմիչներէն : Իրմէ վերջինք
 մինչեւ ի Ժ գար՝ հազիւ մէկ երկուք յիշեն : այն
 գարուն վերջերն Աստղիկն է որ նախ յիշէ զանուանս
 պատմչաց՝ ինն թուով, և որոց միայն վերջինն՝ Ծա-
 պուռն դեռ հասած չէ ի ձեռս մեր : Յետ նորա ի
 վերջ ԺԲ գարու Մխիթար Անեցի իրմով մէկտեղ
 18 պատմիչ համրէ, որոց առաջին Ղեքոռնայ,
 վերջին Յովն : Կոզեան : ԺԳ գարուն գրողաց մէջ՝
 Կիրակոս թուէ իրմէ առաջ 22 պատմիչ, որոց եր-
 կուքն յոյն (Եւսերիոս և Սոկրատ) : Իսկ Հայոցմէ
 դեռ անգիւտ են միայն Խոսրով և Վանակաւ վար-
 դապետի գրածն : Նոյն գարուն վերջերը Մխ. Սյ-
 բիվանեցի 40 կամ աւելի պատմիչ համրէ, բայց
 անոնցմէ տասն՝ յոյն և օտարք են, և սրոց մէջ են
 և Ղեքոռնայ և Մար Աբաս : Իսկ Հայոց մէջ կան
 քանի մի յիշեալ կամ անգիւտ պատմիչք, ինչպէս
 Խոսրով, Ծապուռն, Կոզեան Յովն., Սո. Տաթևեցի,
 Վահրամ Տիգրակակերտցի. մասամբ ծանօթ՝ Յովն-
 վ. Սարկաւազ, Մխիթար Գոշ. յետ ամենեցուն
 դասէ զինքն, « Ես Տէր Մխիթար » : Ասոնցմէ վերջ
 քանի մի գար այսպէս յատուկ յանուանէ զպատ-
 միչս յիշողք չկան : Եթէ գարու բազմաքեր իրն Աշե-

տիք Տիգրանակերտցի՝ 20ի շափ յոյն և ասորի եկեղեցական պատմիչներ յիշէ, եօթն այլ խորեանացոյ յիշած հին ծանօթ և անծանօթներ. իսկ Հայ պատմիչ ութ միայն, որոց վերջինն Աշաքեղ Գաւրիժեցի, ամենքն այլ ծանօթ : ԺԸ դարու մէջ Ղազար Չահկեցի կաթողիկոսն 36 պատմիչ թուէ, ամենքն Հայ (Ագաթանգեղ և Բուզանդ այլ ի միասին). ասոնց մէջ բաց ի կիսածանօթներէն, ինչպէս վերոյիշեալ խոսրով, Շապուհ, Վանական, Վահրամ, կան և անծանօթք. որպէս Յակոբ, Եսայի, Սարգիս, Դանիէլ, Մատրեոս Երկրորդ (առաջին համարելով զԱռահայեցին), և Հերոս. այս եօթինիս բաց ի փոանկ և լատին գրուած պատմութենէն՝ հայերէն միայն համառօտ ժամանակագրութիւնն ծանօթ է մեզ և տպագրեալ : Յետ Աշաքեղի կարգէ և զԵրեմիա Կոստ. պօղեցի (եղբայր Եր. Տէր Կոմիտասայ) և զՂուկաս Վանակեցի. այս եօթինիս ոճով գրած պատմութիւն շեմ գիտեր, իսկ ամբինին շատ կտոր պատմական գրուածք կան, հայերէն և թուրքարէն : Պէտք էր որ ասոր հետ յիշէր իր հետեւողը կամ աշակերտն այլ Մաղաքիս զպիտը. ինչպէս իրմէ առաջիններն այլ պէտք է յիշէին զՄաղաքիս Արեղայ պատմիչն թաթարաց՝ յԺԳ դարու :

Այս քանի մի ցանկողաց յիշած զուտ Հայ պատմիչները թուելով՝ ծանօթ և անծանօթ՝ հազիւ յիսնեակ մի կ'ըլլան. բայց հարկ է որ բոլորովին անծանօթներէն զատ՝ նոյնչափ այլ դեռ ուրիշ ծանօթ և կիսածանօթ, կամ պատահաբար յիշեալքն այլ զուժարելով՝ գուցէ նոյնչափ մ'այլ աւելնայ : Երեմիայի բնագիր զործոյ մի մէջ՝ օտար ձեռքով՝ որ հաւանօրէն թուի Մաղաքիայն, գրուած է. « Պատմագիրք 62 ատեն, և ոմանք՝ 28 գոլ » Հայոց. զորս ժողովեալ ումենն՝ ութ գիրք շինեալ է, ի Սաղմոսավանքն և ի Սիս » : Սոյն բանքիչ արարեցութեամբ գրած է ուրիշ մի, 26 Պատմըլաց անուններն այլ ցանկելով, որոց մէջ կան և

պատմիչք անյիշատակք՝ խառնակ ժամանակագրութեամբ, այսպէս. « Յանկ Պատմագրաց Հայոց. —

Մարիրաւս կատիկայ, Ատենադպիր Վազարշակայ արքայի.

Ագարակեղոս.

Մովսէս խորեակցի.

Եղիշէ, Ատենադպիր մեծին Վարդանայ.

Ղազար Փարպեցի, զոր ոմանք Փարիսեցի կոչին, և ոմանք Ղազարիկ.

Ուխտակես, Եպիսկոպոս Ուռնայի.

Հերակղ, ի Սերիսու.

Կորիւն, այլևս սքանչելի.

Խոսրով.

Ղեռնդ Երեց.

Թոռնս վարդապետ տակն Արծրունեաց.

Շապուհ Բագրատունի.

Տէր Յովնակես Գանեցի.

Մովսէս կաղիստավացի.

Ստեփանոս ակոռակեաց Ասորիկ Վարդապետ.

Ստեփանոս Տարօնեցի, ի խնդրոյ Տեառն Սարգսի կաթողիկոսի.

Արիստակես Լադիվարեցի.

Համալ վարդապետ.

Մատրեոս վանացերեց Ուռնայեցի.

Սամուէլ երեց կարուղիկէիկն Աւեոյ.

Սարկաշագ վարդապետ.

Վանական վարդապետ.

Կիրակոս վարդապետ.

Վարդան վարդապետ.

Մ. Գրիգոր Խարեցի, առաջնորդ վանից Սրբոյն

Ստեփանոսի, որ կոչի Յիպլեայ.

Թոռնս վարդապետ (Թեժուիեցի) :

» Եւ այլ 36 պատմագիրք Հայոց, զորոց զանուանս չգիտեմ. և ընդ ամենայն Պատմագիրք 62, որ գտանին ի Սաղմոսավանքն և ի Սիս » : — Ոչ այս ամեն Պատմիչք գտուէին այդ քաղաքներում, այլ ըստ նախագրելոյս՝ ասոնցմէ հաւաքեալ ոչր

գիրք պատմագրութիւնն. որ անշուշտ այս այլ հիմայ չի գտուիր ի Սաղմոսավանս, գուցէ գտուի ի Կաթողիկոսարանի Սոսյ: Իսկ ստոյգ գտուած ժամանակն՝ շատ հաւանօրէն է Երեմիայի ժամանակն, որ է մեզմէ ամբողջ երկու դար առաջ: Այս յիշեալ և ոչ յիշեալ 62 Պատմչաց վրայ՝ նոյնչափ մ'այլ պիտի աւելցընեմք, թէ ծանօթ և թէ անծանօթ կամ զրուածնին կորած Պատմիչներ, և մի առ մի թուակարգեմք. կորուսելոց անուան կամ թուին նշան զնելով:

4. Արժան է հիմայ յիշել մեր Պատմչաց գրութեան արժէքն, ոչ միայն յաչս մեր ազգայնոցս այլ և օտարաց, յորոց քիչ կան հայագէտք, բայց տեղեկանան և գոհանան թարգմանութեամբք, որք հրատարակուած են ի լատին, փրանկ, իտալ, սուս, անգղիերէն, հունկարերէն, նաև թուրք լեզուօք: Ամենէն հռչակելոյն Մ. Խորենացոյ՝ այլեւայլ լեզուաւ և կրկին նոյն լեզուաւ տասն թարգմանութիւնք եղած են, իսկ քննադատութիւնք թիւր և ուղիղ՝ այնչափ մինչև ի ձանձրութիւն: Եղիշէ այլ շորս կամ հինգ թարգմանութիւն ունեցեր է, նոյնպէս Ագաթանգեղ. աւելի նուազ Կորիւն, Բուզանդ, Ղազար, Սերիս, Ղեւոնդ, Յովհ. Կաթողիկոս, Թովմաս Արծրունի, Հեթում, և այլն: Յայտ է որ օտարք լեզուին վայելչարանութեանն համար չեն կարգար, այլ տեղեկութեանցն համար, զոր երբեմն չեն գտներ օտարազգի պատմչաց քով, և կան որ միայն մերայոց քով գտուին: Սակայն ընտիր ճաշակ ունեցող գրագէտք՝ նոյն իսկ և մեր պատմչաց ոմանց կարգաբանութեանն և ոճոյն հաւնին գովութեամբ: — Վերջին դարուս ամենէն հռչակեալ պատմիչն՝ իտալացին Կեսար Գաւդոս՝ յիշելով զմատենագիրս մեր՝ վերընտրէ զՊատմագիրս. I più importanti sono gli Storici, che oltre farci conoscere il lor paese... forniscono molti lumi alla Storia degli altri popoli dell' Asia e delle

religioni. Յառաջ քան Վիսգոնեանց լատիներէն հրատարակէն զԽորենացի (1736), փրանկ օրագրոյն Michel de Toul ծանուցանէր. L'ouvrage auquel on travaille actuellement, soit en Angleterre soit ailleurs, sur les Antiquités Arméniennes, servira pour convaincre le public, que l'on eut soin dès les premiers temps de conserver l'histoire qui a précédé Moïse, et l'on verra sur ces monuments qu'entre plusieurs faits célèbres et véritables, il ne s'en trouve que quelqu'uns insérés dans l'histoire Sainte.

Օտարք ոչ միայն նոր ծանօթութիւններ գտնեն մերայոց քով, այլ և իրենց արդէն ունեցածին լրումն և ուղղագրութիւն սխալանաց: Այս մեր Հայոց ամենէն աւելի ծանօթ և թարգմանողն՝ իբրև 12 պատմչաց՝ Պրոսէ փրանկ, ոչ միայն հաւատարիմ՝ և ճշմարտարան դատէ զնոսա, « զի շատերն » կրօնական անձինք էին, այլ զի և ամենքն այլ կ'ըն- » ծային զկենդանի պատկեր իրենց ժամանակին, » կրօնից և քաղաքական կենաց »: — Իրմէ առաջ և լուսագոյն հայագէտն Սեն Մարթէն, այլ և խիտ քննադատ, խոստովանի որ մերոնք խնամով ջանացեր են ընտրութեան և զգուշանալու յաւելորդ բանից. իսկ գրաւորական ոճով գերազանցեն քան զԱրարացիս և Պարսիկս, նա և քան զբազումս ի Իւլզանդապետոց, և առանց հեռանալու յարեւելեան ճաշակէ՝ հեռի են յայլանդակ ցնորքներ և ի փքլից շատիսութենէ. առանց մեծարանութեան՝ շատերն (օրպէս Եղիշէ, Ղազար, Խորենացի) իրենց ճարտար և պերճախօս գրութեամբ՝ կըրնան կարգացուիլ՝ յետ Յունաց և Հռոմայեցաց մեզի ընծայած օրինակազիր հեղինակաց. On peut même assurer sans exagération, qu'il en est plusieurs, tel que Moïse de Khorène, Lazare Pharbetzi, le Patriarche Jean VI, et quelques autres qui ne seraient pas indignes de l'attention d'un lecteur européen, par leur élo-

quence, la pureté soutenue de leur style et la contexture savante de leurs périodes oratoires; et qui pourraient encore se faire lire avec intérêt après les grands modèles que nous possédons, et après ceux mêmes que Rome et la Grèce ont produits. Մեր պատմւոց տուած տեղեկութեանց համար այլ կ'ըսէ, թէ Ասիոյ պատմութեան թողած մէկ մեծ գատարկը լեցընեն: (L'histoire de l'Arménie remplit un vide assez considérable dans l'histoire générale de l'Asie; il est indispensable de la connaître pour avoir un tableau complet des peuples qui se partagent cette vaste partie du monde).

Այսպիսի տեսութեամբ և օգտի համար է՝ որ աւելի քան դրսան Պատմւոց մերոց թարգմանուած են յեւրոպական լեզուս, և յետ անոնց խիստ քննութեանց եւս կարգացուին և հարցուին. և ոչ սոսկ զբունդոյ կամ հեռաբարբութեան համար այնքան աշխատած են այդ բանասէրք. որոց ամենէն գլխաւորն է վերոյիշեալն Պրոսէ, և յետոյ Վիկտոր Լանկուա, որ ուղած է զբովանդակ պատմագիրս մեր թարգմանել, անուանելով Collection des Historiens anciens et modernes d'Arménie. և յետ երկու ութածալ հատոր հրատարակելու ի Բարիզ, առ Տիտոյի, դեռ կարին հասակաւ վախճանեցաւ այդ եռանդուն հայասէրն, որ այլեւայլ գործեր այլ հրատարակած է զՀայոց, որոց գլխաւոր Կիլիկիոյ ճանապարհագրութիւնն կըրնայ համարուիլ:

1091-1601

Գ Ր Ո Ւ Ա Գ Բ .

ՆԱՒԱՊԱՏՄԻՉԲ ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶՀԱՅԿԱԿԱՆ
ԴՊՐՈՒԹԻՒՆ

1. Յոռնարեկի ձաշակ ի Հայս. Տիգրան Ա. — 2. (Ա) Արտաշատր Ա. — (Բ) Մետրոպոլ. — Տիւրան. — Լուկիանոս. Անտիոքիանոս. — Պոլիար. — Թեոփիանէս. — Ապոլոնոս Արտիսեղացի: — 3. (Գ) Մար Իբաս: — 4. Լարոնք: — 5. Մեհենական Պատմիչք. Ուղիւն: — 6. (Դ) Վիպասակը Հայոց. — (Ե) Վրոյր:

1. Ակնարկեցինք Պատմութեան վրայօք խօսած ատեն՝ թէ անհաւատալի է որ յառաջ քան զհայերէն դպրութիւն մեր, և յառաջ իսկ քան զբրիտանեական լուսաւորութիւն՝ Հայ մի ո՞ր և է կերպով կամ լեզուով ըլլայ ազգային յիշատակ մի նշանակած և աւանդած ըլլայ. բայց այդ մը թութեան մէջ թաղուած ըլլալով՝ քիչ մ'աւելի լուսով նշմարուածը պէտք է խնդրենք. և այս այն ատեն՝ երբ աւելի կիրթ տէրութիւն մի ունեցան Հայք, և Յունաց լեզուն ընդունելի եղաւ յարբունիս, գրեթէ ի սկզբանէ թագաւորութեան Արշակունեաց, իբր դար ու կէս նախ քան զթուական Փրկչին, թողով անկէ առջի դարու կէսն այլ սկսեալ ի մեծէն Աղեքսանդրէ, որոյ երկրակալութենէն աւելի հզօր և պիտանի եղաւ յունական նորը լեզուն ընդունելի և ընտանի ընելն ասիական թանճր ազգաց¹. յորոց՝ ինչպէս հիմայ՝ այն և աւելի հին

1. Աղեքսանդրի և Վաղարշակայ ժամանակի միջուս եղած են ի ընկի Հայս և ի հայաստանի Հայ թագաւորացաւ. Ա.



զարեբում՝ Հայք ամենէն աւելի ընդունակք էին այս բանիս, որպէս և աւելի մերձաւորք Յունաց: Ինչպէս Աղեքսանդր զէնքով տարածեց յոյն լեզուն յարեւելեայս, մեր ազգի ամենէն մեծ կամ միակ աշխարհակալն այլ Տիգրան Ա թոսնորդի Վաղարշակայ՝ գնոյն իր արքունեաց և ընդարձակեալ տէրութեանը մէջ, և կերպով մի իր անհամար արծաթի և պղնձի անուանակիր դրամօքն (յորոց հարիւրաւորք գտուին և մեր օրերումս) տարածեց և զյունականութիւնն, մինչև իրենք զիրենք յունասէր (φιλῆλληγος) անուանողաց մէկն համարուի:

Սա և առաջին յիշուի ի խնդրոցս մեր ազգային պատմութեան՝ յետ իր նախահաւուսն Վաղարշակայ. զի գրելով առ անուանի թագուհին Եղիպտոսի Կղէոպատրա, ուզեց և օրինակել ու բերել տուաւ Աղեքսանդրիոյ մեծ գրատունէն՝ իրեն հարկաւոր համարած պատմիչը կամ պատմութիւնը: Չայս յիշատակ ի նախնեաց աւանդեալ գտեր և ծանուցանէ մեզ Թովմ. Արծրունի ի սկիզբն Ժ դարու: Կըրնայ ըսուի որ Տիգրան իրմէ և իր ամեն հզատակներէն աւելի յունասէր յունագէտ և յունագիր բրաւ իր յատուկ ժառանգն և որդին յաջորդ ԱՏԱԻԱՉԻ Ա., որ վկայուի ի Պալատարքոսէ և յայլմէ՝ թէ ոչ միայն իր փեսային Արովզի (Հրահատայ) Պարթեւաց թագաւորի հետ յունարէն թատերգութիւն լսելով զուարճանար, այլ և ինքն իսկ գրեր էր յունարէն Ողբերգութիւնս, Ճառս և Պատմութիւնս. զորս անշուշտ տեսած է յիշողն Պալատարքոս, և իրմէ դար մի յետոյ Ապպիանոս՝ իր Պարթեւական Պատմութեան (ԻԱ) գրոց մէջ: Որչափ պանծալի յիշատակ մեզ, այնքան և կսկծալի այդ գրածներէն պատասխի մ'այլ չունենալն. այլ որքան աւելի կսկծալի այնպիսի յունասէր յունագիր և մեր Առաջին ազգային Պատմչին իր գրչին

ւորքս՝ որք յոյն գրով իրենց անուներ հասուցեր են մինչև առ մեզ, զրամաց վրայ գրածամ:

և բաղդին անարժան՝ ողբերգելի վախճանն, զոչ ըլլալով մի քան զմի անառակ հոմանեաց, Կղէոպատրեայ և կոպտատարազ Անտոնիոսի եռագետի: Արդեօք իր բանտարգել գերութեան մէջ Արտաւազդ ինքզինքն այլ չէ՞ սղբերգած:

2. Տիգրանայ և որդւոյն յիշատակն՝ գրեթէ աններելի կ'ընեն քիչ մ'այլ խոտորելով մեր բուն ճամբէն՝ չյիշել քանի մի մերձաւոր և նշանաւոր անձինք. որոց գլուխ՝ իր քեռայրն կամ դստրայրն՝ Միհրդատ Մեծն, որոյ անշուշտ իր բազմաթիւ խօսած լեզուաց մէջ առաջիններէն էր և հայերէնն, և գրած Բռնաւարանոյրեան մէջ (զոր յիշէ Եպիփան (Յդ. Հերձուածոց, Ա. գ), Հայաստանի գունակ գունակ րոյսք և ծաղկունք այլ նկարագրուած էին: Ասոր մէկ մեծ պաշտօնեայն քաջածանօթ մեր երկրին՝ այլեւայլ պատմութեանց զրիչ էր, Մեւտրոդոս, Μετροδωρος (Միհրատուր?) Սիկարիիեան կոչուած՝ իր հայրենեաց անուամբ, (Սիկարիս քաղաք Միւսիոյ ի Փոքր Ասիա). շատ բանի հմտութիւն ունէր սա և կարգէ դուրս զօրաւոր յիշողութիւն. բաղդի յաջողութեան հետամուտ, զուցէ և հեռանալ ուզելով Հռովմայեցոց տիրած կողմերէն, (որոց այնքան ատեցող էր մինչև Հռոմատեաց կոչեցաւ, Misorome), եկաւ յարքունիս Միհրդատայ և պատուեցաւ, ինչպէս յետոյ և ի Տիգրանայ՝ առ սա իրր դեսպան եկած ատեն. թուի թէ շրջեալ մեր թագաւորին փառքով կամ դարմացեալ՝ գրեր է անոր գործոց Պատմութիւնը, թերեւս և նախնեացն և աշխարհին. վասն զի Ստրաբոն իր մեծահաչակ Աշխարհագրութեան մէջ (ԺԳ. 609) վկայութիւն կ'առնու: Ուրիշ հեղինակ այլ իրմէ հնագոյն (Բ դար Քրիստոսէ առաջ) Ապոլոնիոսի Հերոդիանոսի գրուած մի մեկնաբանելով յիշէ Մետրոդոսոսի ՏիգրանԱԿԱՆ Գրոց Ա մասն¹, ուր զԹերմոզոն գետ

1. Εν πρωτω των περι Τυγράνῃ. յորմէ գուշակուի զործոյն քանի մի գիրք կամ մասն բաժնուած ըլլալն:

Պոնտոսի՝ Երասիս անուանէ: Կիկերոն գրեթէ ժամանակակից Մետրոգորի, Պուտարբոս, Պլինիոս և Սենեկա շատ հեղ յիշած են զնա և քանի մի կտոր բան պահած են իր գրածներէն, զորս՝ այդպիսեաց հաւաքողն Միւլլէր հրատարակած է (Գ. 203-5): Մետրոգոր ի գործին ի Տիգրանայ առ Միհրդատ՝ ի ճանապարհին մեռած է, ըստ ոմանց մի կամ միւս թագաւորին կամօք թունաւորեալ, ըստ այլոց՝ բնական հիւանդութեամբ: Մեզի ցաւալին է Կորուստ Տիգրանակաւացն, ուր հաւանորէն շատ տարբեր գոյնով նկարագրուած էր աշխարհակալն Հայոց՝ քան ինչ որ Հռոմայեցոց սլաքանման խոցտիչ գրչով: Ինչպէս այլ ըլլայ՝ իր ժամանակակից և ծանօթ Արտաւազդէն առաջ կամ ետեւ երկրորդ նախապատմիչ Հայոց կըրնամք համարել զսա. և ա. սոր հետեւող համարիլ զոնէ զամանա ի գրողաց զՄիհրդատայ, զորս երկարորէն յիշէ ասոր նոր պատմիչն Ռայնախ (Reinach) (եր. 417-55), սակաւ ինչ և Միւլլէր: — Ամասիոյ նշանաւոր քարաբերդին ստուրուր պակասաւոր յունարէն արձանագրութեան մի մէջ կարգացունին Փառնակ և Մետրոգոր անուանք¹. բայց զուցէ ուրիշ մ'ըլլայ յետինդ և ոչ Տիգրանակաւ գրողն:

Մետրոգորի ժամանակակից և անկէ աւելի մերձաւորք Հայոց և Պոնտացոց՝ քանի մի պատմիչք այլ կան, մին հայրենակից Միհրդատայ յԱմիսոսէ (Սինուպայ), և գրեթէ հայանուն, Տիգրան կամ Տիգրակեռն, Τυγρανώ, բնիկ անուամբ Թեոփրաստ, զի առջինն իր ուսումնակցաց վրայ բնաւորաբար խորխալուն համար կոչուած կ'ըսուի. Լուկուլլոս գերի տարաւ զսա ի Հռովմ, ուր մեծարեցաւ ի Կիկերոնէ և յայլոց, ուսուցիչ եղաւ և զրապետ, բիւրաւոր զրբեր աւելցընելով Սիլլայի ժողվածին վրայ. քաջ քերական էր և աշխարհագէտ, և իրմէ

1. Ռայնախ, 456. — Բերրոյ, Perrot, Mémoires d'Archéologie, 153:

շատ աւելի հոչակեալ Ստրաբոնի վարպետ: — Իրեն հայրենակից է և Իպսիկրատ կամ Հիշպսիկրատ՝ պատմիչ գործոց Միհրդատայ, անշուշտ մասամբ և Տիգրանայ. գրուածքն կորած են. թողած յիշատակներէն մէկն այլ իր երկար ապրիլն է, (93 տարի) զոր յիշէ Լուկիանոս, որ նոյնպէս և զՏիգրան յիշէ ընդ երկարակեացս: Այս իբր պատահմամբ յիշուած հեղինակ՝ Հայոց սահմանակից Շամշատ կամ Սամուսատ քաղաքէն էր, յունագիր բայց ոչ յոյն, այլ Հայ կամ ասորի, յ'Բ գարու Քրիստոսի. շատ բան գրած է, քննագատորէն այլ և երգիծարանութեամբ. գիրք մ'այլ պատմագրութեան կերպի վրայօք, ուր իր սրախօսութեամբ ի մէջ բերէ և զՀայս. երբ յԱքայիա էի, կ'ըսէ, հանդիպեցայ պատմըչի մի՝ որ Պարթեաց և Հռովմայեցոց վրայօք գրելով բանէ բան ցաւքբտէր, առանց առջի ըսածին յարմարելու, և յիշէր թէ ինչպէս ի Հայաստան ձարտասանընթիւն կ'ըլլայ. մեկնիչք համարին թէ ըսել կ'ուզէ՝ որ Հայ ձարտասան մի օգնութիւն խնդրած ըլլայ ի Հռովմայեցոց: Գարձեալ կ'ըսէ, թէ մէկն այլ Պարսից և Հռովմայեցոց պատմութիւնը գրելով՝ յիշէ զՌարոյի կամ զՌքսիլայի թագաւոր՝ որ հալածեց զՍեւերոս կայսր. անունն լսեցնէ զԽոսրով: Ուրիշ մ'այլ որ ի Կորնթոսէ դուրս ելած չէր՝ աչօքս տեսեր եմ կ'ըսէր զԱսորիս և զՀայս, և Պարթեաց վիշապանշան գունդերը: Անտիոքիանոս անուամբ մէկն այլ 50 տող լանով պատմէր Հռովմայեցոց ըրածն ի Հայս, ի Մարս և ի Միջագետս: Որչափ այլ կեղծ ըլլան այս բաներս, ժամանակին Հայոց հոչակն և ծանօթութիւնը կ'իմացընեն: Ի Հայս գործողաց մէկն՝ էր մեր Արտաւազդը խաբէութեամբ բռնող յիշեալ ձառագէմ եռապետն Անտոնիոս, որոյ բարեկամն Ատեփիոս գրած է անոր ըրածն ի Պարթեա, համարիմ՝ թէ և ի Հայս (Ստրաբոն, ԺԱ. 523): Այս քանի մի հեղինակաց յիշատակք յիշեցընեն մեր Խորենացոյ ըսածը (Բ. կր) այն

ժամանակի Պարթևաց համար. « Բազումք են ժա-
 » մանակիս այսորիկ պատմողք ի Պարսից և յԱսոր-
 » ւոց այլ և ի Յունաց, զոր պատմէ Պաղեփատոս
 » (Παλαιφάτος) և Պորփիր և Փիլեռոն »: Յետինս
 անծանօթ աշխարհագիր մ'է. Պորփիր ի կէս Գ
 դարու հռչակաւոր փիլիսոփայ՝ հակառակող քրիս-
 տոնէից. Ս. Հերոնիմոս ի Մեկնութեան Գանիէլի
 մարգարէութեան յիշէ, որ սա (Պորփիր) յիշած է
 Հայոց Արտաշէս թագաւորի յաղթութիւնն ի վե-
 րայ Անտիգոնոս թագաւորի Ասորւոց: Իսկ Պալե-
 փատոս անուամբ քանի մի անձինք յիշուին, բայց
 զործերնին անծանօթ¹: — Ասոնցմէ հին է Թեո-
 փակես Միլետացի՝ որ Պոմպէոսի հետ գնաց յԱ-
 զուանս և ի Հայս, և սա՝ մեր երկրիս մէջ գոյա-
 ցած սառնորակ որդեկող յիշէ. նոյնն նշանակած
 էր և Հայաստանի տարածութեան չափը, երկայնքն
 (հրեւիս-հարաւ) 400 արեւոս, լայնքն (արեւմտ.-եւր)
 200. արեւոսն 10 բնամղոն (kilom.) հաշուի:

Ասոնցմէ առաջ ետեւ են զսա յայլոց՝ Պոսիդոնիոս
 բազմահմուտ աշխարհագիր և պատմիչ. Գեկլոս, Չ.
 Dellius, զօրավար մի Անտոնիոսի, որ անոր բա-
 րեկամ՝ Ատելիոսի նման գրեր է Պարթևաց պա-
 տերագմի պատմութիւնը: — Իսիդոր Խառաքս (Ισι-
 θώρος Χαρακηνός) աշխարհագիր պատմարան ի
 կէս Ա դարու: — Ապոդորոս Արտեմիդացի ('Αρ-
 τεμιτιδός) ժամանակն անստոյգ. սա եւս գրած է
 չորս գիրք Պարթևաց պատմութեան, առանձինն և
 Պոնտոսի պատմութիւն. հետաքրքրական է ասոր
 հայրենիքն, զոր գիտնականք փնտռեն յԱսորես-
 տան, ի Բարեթոն, ի Միջագետս, բայց ողջամիտք
 հաւանին թէ ըլլայ Արտաշէսն Հայոց ի Ռըշ-
 տունիս²:

1. Մէկն յոյն է և գրեր է Զարմանալեաց կամ
 Անհունատալեաց վրայօք, Περὶ αἰετων.

2. Գերմանական ընդարձակ կենսագրական բառա-
 րանն ըստ Պաղամէսի և Ստրաբոնի՝ յԱսորեստան

3. Ամեն Հայոց պատմութիւն քննողաց և ուսու-
 ղաց՝ ծանօթ է անոր աղբիւրն, աւելի կամ պակաս
 ստոյգ, անուանեալն (Գ) Մար-Արաս կամ Իրաս
 և մականուանեալ կատիւնա, զոր նախ յիշէ մեր
 բնիկ պատմահայրն Խորենացի և անկէ քաղելով
 պատմէ Հայկազանց պատմութիւնն և Արշակու-
 նեաց առաջին թագաւորաց, որոց ժամանակակից
 համարուի նա (Խորեն. Բ. Գ). « Աստանօր սպա-
 » ռին բանք Ծերունւոյն Մար Արաս կատինայ »:
 Իրմէ ետեւ այն ամեն Պատմիչք մեր որ իրենց նա-
 խորք պատմիչները յիշեն՝ զՄար Արաս կարգեն
 առաջին կամ առջիններէն մէկն: — Մար Արաս
 Պատմիչի կամ իր պատմութեան հնութիւնն և Վա-
 դարչակայ կամօք գրելն, չիւնուէի մէջ հրամանաւ
 Աղեքսանդրի քաղգէարէն լեզուէ ի յոյն թարգմա-
 նուած գրքէ մի հանելով և ասորերէն և յունա-
 րէն գրելով բերել տալն առ Վաղարշակ (որպէս
 պատմէ Խորեն.), շատ քննութեան և ստուգութեան
 կարօտին, որ մեր նպատակէն դուրս է. հաւանա-
 կանն է Վաղարշակի ուղեւն իմանալ Հայոց աղգին
 ծագումն և անցեալն և պատմագրել տալն, քան
 թէ իր ատեն Մար Իրասի մի գտուած և գրած ըլ-
 լալն. աւելի ստոյգ է ասորի Մար Արասի մի գրած ըլ-
 լալը՝ որ և է ոճով և չափով Հայոց պատմու-
 թիւն մի, բայց ոչ Վաղարշակայ ատեն: Ասորիք
 իրենց եպիսկոպոսաց կ'ընծայեն Մար կոչումը, որ-
 պէս մենք Տեր: Արաս կամ Իրաս անունն այլ
 սովորական է առ Ասորիս, որով չորոշուիր անձն
 և ժամանակն. որոշողն պիտի ըլլայ մականունն
 կատիւնա. զոր իրեւ ի կարգս հին պատմըաց
 փնտռել առ օտարս՝ անյուստալի էր. սակայն ինձ

կ'ըսէ զԱրտամետ՝ այլ մօտ ի Վանայ Ծովն: = Եթէ
 Ապոլոնի բանասիրական ճրից կըրնայ զուգուիլ Հայոց
 Տեր զիքն Գպրութեան, պատմիչն անունն այլ չի
 կըրնար զուգուիլ Տիրատուր անունն, և սպահովել
 մեզ յունացեալ կամ յունագիր Հայ պատմիչ մի:

չատ հաւանական երեւի՝ որ դա է յիշուածն ի բազմահմուտ և պատկառելի ասորագէտ և սրբազան գրչէ, գրեթէ դար մի յառաջ քան զՄ. Խորենացի, (համարելով զսա ի Ե դարու), այն է հռչակաւորն Ս. Հերոնիմոս: Սա ի Մեկնութեան Մարգարէութեանն Եգեկիելի՝ ասոր տեսած Աստուծոյ կառաց և Իսրայելացւոց բանակին վրայ գրելով՝ վկայ բերէ՝ առանց անուան, բայց մականուամբն (որ աւելի կարելոր է), զԿատինա. *Legi et cuiusdam Catinae, quem Syrii Acutum et ingeniosum vocant.* և ոչ միայն լաւ կ'իմացընէ այն կոչման նշանակութիւնը, այլ և մեր Խորենացւոյ և այլոց նոյնպէս ըսելը. ինչպէս Խորեն. « Այր Ոչխը և » վարժ քաղղէացի և յոյն գրով ». զայս բան Յովհ. կաթողիկոս փոխադարձընէ, « Ոչխը և վարժ » էր մտոր, քաղղէարէն և յունարէն դպրութեամբ »:

Յետ Խորենացւոյ՝ կարծեմ առաջին յիշող Մար Աբասն է մեր է դարու Սերիոս պատմչի գրոց սկիզբն գրուած՝ իրմէ հնագոյն պատմչի մի հատակաւորն. սա՝ զՄար Իբաս փիլիսոփայ կոչէ և մականուամբ Մժոռնացի, Մժրնացի կարծուած. այդ կոչումն այլ համեմատ է Ուշիմ կոչման: Այս հեղինակին աւանդածէն կարծուէր՝ թէ Սանատրուկ թագաւոր Արշակունի՝ ի Մժրին ապարանք մի ունեցեր է սիւնագարգ տաճարաւ, որոյ ճակտին կամ սեան մի վրայ յետոյ գրեր կամ փորագրեր է « Ագա » բանգեղոս՝ հրամանաւ Բաբելոն Տրդատայ, առեալ » ի դիւանէ արքունի, զան առաջին թագաւորացն » Հայոց »: Այս շատ հետաքննական յիշատակը թերեւս քիչ մի լուսաւորէ, թէ ոչ աւելի մթընցընէ, իբր հազար տարի վերջ հետեւող մի Ագաթանգեղոսի, ճարպիկ վիպասանն Սիւնոն Ապարանցի, իր Մամիկոնէից և Պաշլուունեաց Վիպասանութեան մէջ. ի սկզբրան իբրեւ իրեն ազբիւր յիշելով զՓարսպեցի Ղազար կ'ըսէ, թէ սա,

« Ի Մար-Աբայ մատեանն մըտեալ,

ՁՄժրունացւոյնըն վերծանեալ,

Եւ զվաղընջուցըն թարգմանեալ
Հեյլեն գըրով նուրբս (քան սուրբս) գըտեալ
ՅԱգաթանգեղոսէ գրումեալ,
Ի վերնագրէն զայս իմացեալ:
Աբանց հրեգից թագաւորեալ
Հայոց և Պարթեւաց տիրեալ.
Այլ և զԲելայ բոււըն հարեալ,
Եւ գեղեցիկ ոճով պատմեալ »:

Այդ հինգ արքն ըստ այս հեղինակի՝ թագաւորած են ի միջոց ժամանակի թագաւորութեան Սենեքերիմայ Ասորեստանույ և Նարազոգոնտորի, և են Չարեհ, Արնոգ, Սարնակ, Գաւալ, Փառնաւազ, զորս Սիմէոն այլ պարծանօք կոչէ. « Այս հին » գերեկներս խրոխտացեալ, — Ըզպատեալով ազանց » վանեալ »: Այս տեղ զմեզ հետաքրքրողն պատմութիւնն չէ՝ այլ պատմիչն. որ ըստ բանից աւանդուղացն Ղազարայ և Սիմէոնի վիպուռի Մար Աբաս: Սակայն այս խնդրոյս մէջ քանի մի տեսակ շփոթութիւն, և սխալ կարծիք կան՝ թէ անձանց թէ տեղեաց վրայ, զոր միայն համաւաստ նշանակեմ: Ա. — Մ. Խորեն. Մար Աբասայ հայրենիք չի յիշեր. իսկ երկրորդ պատմիչն յորմէ կ'աւսու և Ապարանցին՝ Մժոռնացի կոչէ. Բ. — Խորենացի կ'ըսէ, թէ Մար Աբաս իր գտած և թարգմանած Պատմութիւնը բերաւ առ Վաղարշակ ի Մժրին՝ որ էր իր տէրութեան մայրաքաղաքն. միւսն չի յիշեր այս բերումը և բերումը տեղը. և թուին շփոթել զՄժրին և զհայրենիս Մար Աբասայ: Գ. — Թուր թէ և Խորենացի այլ շփոթէ տեղուանքը Սանատրուկոյ պատմութեան մէջ. որոյ համար կ'ըսէ (Բ. զգ), թէ Մժրին աւրուած ըլլալով գետնաշարժէ, « Վերստին չինեաց պայծառ » գոյն և պարսպեաց կրկին պարըստով և պատուա » բաւ, և զինքն անդրի ի միջի հաստատեաց »: անդրի՝ և ոչ սիւն յիշէ, ոչ ապարանք, թէ և կրնար շինուած ըլլալ. սակայն շատ տարակուսական է Սանատրուկոյ տիրելն այդ քաղքին, որ իբր Ասորոց և Միջագետաց մասն՝ Հռովմայեցւոց իշխանութեան

տակ էր. և Սանատրըկոյ բուն աթոռն էր ի վերին Հայս, յԱրմաւիր հին մայրաքաղաք Հայոց, զոր թողով իր բռնակալ յաջորդն՝ Երուանդ, իր աւնուամբ նոր քաղաք շինեց: Դ. — Ուր է ուրեմն այն քաղաքն կամ տեղն ուր Ագաթանգեղոսի արձանագրութիւնն գտուեցաւ: Մար Աբայ արուած վայրենական կոչումն՝ Մծռռնեցի յայտնէ զայս, նա և պատմութիւնն եւս վկայէ այս տեղ ըլլալը Սանատրըկոյ սպարանքն, զոր Խորենացիէն զատ հին պատմիչն եւս յիշէ «յապարանն Սանատրուկ» արքայի, հանդէպ դրան արքունի տաճարին, «ծածկեալ յաւերակի արքունի կայնիցն»: Արդ, քան զԽորենացի հնագոյն պատմիչ մի յիշէ զտեղին և զանունն հանդերձ Սանատրըկոյ արքունեօք, այլ ոչ ի Միջագետս կամ յԱսորիս՝ այլ ի բուն ի Մեծ Հայս և ի կենդրոնական տեղի մի ընդ մէջ Տարօն և Ծոփք գաւառաց: Յիշողն է Բռնզակը (Գ. Ժգ). յիշածն է մեծին Ներսիսի և Բ. Արշակի ժամանակ, յերրորդ քառորդի Գ դարու. «Գնայր» մարդպետն Հայր ի սուրբ տեղեացն (յԱշտիւ» շատ) և էջ յաին գետոյն հտանացն Եփրատու. «առ հովիտն թանձրախուռն անտաօին, ի գետա» «խառնունն երկուց գետոցն, ի թաւուտ խար» «ձիցն մամխեացն, որ ի տեղուցն ի հնոցն (նախ» «նեաց) իմն շինած քաղաք, զոր շինեալ Մսնա» «արուկ արքայի, որում անուն տեղոյն Մծռռք կոչի». ուր Եւուասոյ Արծրունի նետահար սպանեց զմարդպետը:

Այսքան խառն և անկատար յիշատակներէ մեզի երեւցած հետեւանքն է. ա, Վաղարշակայ հրամանաւ գտուած և թարգմանուած է Հայոց պատմութիւն մի յոյն և ասորի լեզուօք, որ և է անձին ձեռօք. ք, հրամանաւ Տրդատայ Ագաթանգեղ արձանագրութիւն մի գրէ կամ գտնէ ի Մծռռք, Սանատրըկոյ դաստակերտի աւերակաց մէջ, զի հաւանական չերեւիր Տրդատայ այն տեղ բնակիրն. գ, երեւի ոչ երկայնաբան պատմութիւն ցուցընել, այլ

«զամս առաջին թագաւորացն Հայոց». իբր ժամանակագրութիւն յաջորդութեան թագաւորաց, զորս Սիմ. Ապարանցին համարի՝ հինգ հզօր և յաղթող Հայկազն թագաւորս. որոց վերջինին աւտնն, Նարսէզոգնոսոր

- « Զասքանպեան գունդըն կոչեալ,
- » Զթագն ի գլխոց նոցա առեալ.
- » Փառնաւազայ այս պատահեալ.
- » Ի Բարեւոն վախճան առեալ»:

Ե. — Մար Աբաս ոմն ի կէս Գ դարու, թաւի և պիսկոպոս Մծռնացի, թէ Վաղարշակայ հրամանաւ թէ Տրդատայ հրամանաւ, և թէ ուրիշ գրուածներէ և Հայոց հին աւանդութիւններէ հաւաքելով՝ գրեր է Պատմութիւն մի Հայոց, հիմն Խորենացոյ պատմութեան առաջին մասին և ամենայն հայկական ծանօթ հին պատմութեանց: — Յօվհ. կաթողիկոս լաւ գրող իր ժամանակի պատմութեան, և հետեւող կամ կրկնող հիներուն պատմածին չգիտեմ ուստի գտած՝ կերպով մ'այս հին Հայոց պատմութեան ակնարկէ, գրելով յետ յիշելու գերուանդ Հայկազն հայր Տիգրանայ՝ բարեկամին Կիւրոսի. «Այսքան ա» «նուանք և զրոյք (Հայկազանց) թէ հարցեալ լի» «նի՛ յորմէ գոլ, զիտասցէ, զի Քաղդէացուց մա» «տեանքն մեզ ընձեռեցին, որ կան ի Նինուէ և» «յԵգեսիա, առ Տիբերիս գրեալ»: Միթէ Խորենացոյ (Բ. իե) բտածէն հետեւընէ, որ յետ յիշելոյ Տիբերի յաջորդելը զՅոստոս, անմիջապէս յիշէ Արգարու շինելը գԵգեսիա և հօն փոխելը «զմատանան մեհենիցն վարժարանին և միանգա» «մայն զգիւանս թագաւորացն»: Ուրիշ յարմար զուգադիպութիւն Եգեսիոյ և հին մատենից ու գիւանաց չկայ առ Խորենացոյ՝ որ սակայ յիշէ գԵգեսիա, այլ ոչ զՏիբեր, բայց միայն Քրիստոսի համար Արգարու իրեն հետ թղթակցութեան առթիւ:

Մեր վերոյգրեալ բանից մէջ հարկ եղաւ յիշել զՍեբրիս, որ է եպիսկոպոս մի Բագրատունեաց տոհմին է դարու կիսում, որ իր ժամանակի քանի

մի դէպք պատմէ ընտիր շարագրութեամբ, զլիսաւու-
րապէս Հերակլ կայսեր յաղթող արշաւանքն ի
Պարս, որոյ համար և գրածն Պատմութիւն Հերա-
կլի կամ ի Հերակլ կոչուի. բայց իր ժամանակին
գործերէն առաջ գրուած է վերոյիշեալ Հայկա-
զանց և անոնց նախաձօր Հայկայ յիշատակն. Խո-
րենացւոյն նման և աննման, և յայտնապէս ուրիշ
աղբիւրէ հանած կամ ի նոյն ինքն Մար Աբա-
սայ. բանասիրաց վէճ եղաւ ի նորումս, ո՞վ է այդ
բանից գրող կամ՝ հաւաքողն: Հաւանելի է որջա-
խոհից, թէ հնագոյն քան զՍերխոս մէկն ըլլայ. և
ահա մեր յիշած Ապարանեցի վիպասանդ ցուցուց
մեզ Ղազար փարպեցիին է նա՝ որ « ի Մար-Աբայ
» ժատնանս մբտեալ-ՉԾրուանացւոյնըն վերծա-
նեալ»: Մեր միջին գրող պատմչաց մէջ ամենէն հե-
տախոյզն Թովմաս Արծրունին՝ ունի հին պատմա-
կան յիշատակներ նա և Հայկազանց ժամանակի,
որ յայտնապէս ի Մար Աբասայ բղխած են, ըլ-
լայ ի ձեռն Ղազարայ՝ ըլլայ ուրիշ աւելի պակաս
անծանօթ պատմչէ մի փոխանցեալ: Ասոնց ի Մար
Աբասայ առած մէկ նոր յիշատակ մ'այլ նշանակած
է Արծրունին, որ է Եղր մարգարէի կամ՝ քահանայի
և Սաղաթիէլի՝ այլազգեաց հետ ըրած պատերազմն
և իրենց մահը. զոր ընդօրինակող մի՝ փոխանակ
գրոց լուսանցքին մէջ նշանակելու, Թովմայի պատ-
մագրութեան կարգին մէջ անցուցեր է. տպա-
գրողքն այլ, ընդ որս և Պատկանեան Քերովրէ
բանասէրն, խառնակ տպագրեր են. « Չգին մինչ
» յԱրգաւորն: Սաղաթիէլ վախճանեալ թաղի, ի
» թագաւորն: Սաղաթիէլ վախճանեալ թաղի, ի
» Մարթակատինս, ի բլրակի մի տեղով»: Կ.
պոյսի տպագրութիւնն (1852) անունն այլ սխալ
գրէ, « թաղի ի Մարբակա Նինս ի բլրակի» և այլն:
Այս հնաբրբիր պատմիչս Թովմաս՝ տայ կարծել,

1. Եղր անունն այլ Չեռագրաց մէջ ի լուսանցս
գրուած է և ոչ ի կարգի բանիցն:

թէ ոչ միայն Մովս. Խորենացւոյ՝ այլ և իր ըն-
կերաց ծանօթ ըլլայ Վաղարշակեան Մար Աբաս
մի, այսինքն Աղեքսանդրի ատեն կամ յետոյ
գրուած պատմութիւն մի Հայոց, յորում Արծրու-
նեաց տոհմին վրայօր այլ տեղեկութիւնք կային.
գոր, մեր Տիգրան աշխարհակալն Աղեքսանդրոյ մեծ
գրատունէն ընդօրինակել տալով բերել տուեր է, ինչ-
պէս յիշեցինք առաջ. և կարեւոր է այս յիշատակս
Թովմայի, իր Ա. գրոց կամ՝ դպրութեան վեցերորդ
յօդուածին, « Կղէտպատրա... բացեալ զսուն դի-
» ւանապահ մատնիցն, և գտեալ գերունդս Սե-
» նեքերիմայ և զգործս նոցա զմիոյ միոյ ուրուք
» յականէ յանուանէ զասն իւրաքանչիւր զանուն և
» զքաջութիւն իւր, նոյնպէս և զայլն ամենայն ըստ
» տոհմից տեղեաց, և զվատացն և զաննշանիցն
» նշանաւորեալ՝ ըստ վատութեանցն և զգործս նո-
» ցա. (և) ետ տանել զդիւանն մագաղաթեայ յու-
» նարէն գրով հանդերձ պատարագօք, Տիգրանայ
» թագաւորի Հայոց... գոր Ընթերցասէրն Պաղա-
» մեոս (թագաւորն) գրեալ և յարդարեալ ստուգա-
» բանութեամբ՝ դնեն զգուշութեամբ ի դիւանա-
» պահ տունս գանձուց, մինչեւ ի Կղէտպատրա:..
» Իսկ առ մեզ հասին զրոյցքս այս ըստ մնացոր-
» ղաց պատմագրացն առաջնոց, ի Մարտրեէ Վեր-
» ժակողի և ի նորուն եղբորէ Մովսէս կոչեցելոյ,
» և միւսունն Թեոդորոս քերդոյ, որք լեալ էին յա-
» շակերտութենէն Ղեւոնդ քահանայի՝ որ ի Պարսն
» մարտիրոսացաւ...: Ուրիշ տեղ այլ գրէ Թով-
» մաս (Ա. Ժ). « Մակեդոնացին Աղեքսանդր ոչ սա-
» կաւ դրուատեօք արձանագրէ ի մտեանս դիւա-
» նապահ աւանդութիւնս՝ զսորայս (Արծրունեաց
» տոհմի) մեծափառ զլիսաւորութիւնս»:

Թովմ. Արծ. Ա. Ժ. Մագաղաթեայ և Տիգրանայ պատե-
րագմին և Շամիրամայ պատմութեանց մէջ այլ
այնպիսի պարագաներ յիշէ որ չեն գտուիր ի Խո-
րենացի. այլ ըստ իրեն ըսածին՝ առ « Առաջին պատ-
» մագիրսն». կամ « Մնացորդք Յիշատակարանաց

» ի յառաջնոցն և ի հին պատմագրաց» կամ «Հնա-
» խոս շարագրական մատեներ», և այլն:

Չեմք տարակուսիր որ թափմաս ստոյգ գրած է
իր գտածը. և է սա մեզի անծանօթ հատուկտիր
պատմութիւն ինչ կամ քաղուածք պատմական արդ
յիշեալ երևք թարգմանչաց. որոց աղբիւրն եղած է
Մնացորդք պատմութեան կամ Պատմագրաց առաջ-
նոց. ասոնց աղբիւրն այլ է այդ շատ անգամ յիշեալ
հրամանաւ Աղեքսանդրի գրուած մատենան՝ արեւե-
լեան ազգաց վրայ տեղեկութիւն ընդ որս և Հայոց
վրայ՝ մասն և բաւական մանրամասն. և այս է ըստ
իս՝ Մ. Խորենացոյ ըսած Վաղարշակայ հրամանաւ
թարգմանուածն, և Ս. Հերոնիմոսի յիշածն (Մար
Աբաս) Կատինայէ կամ որ և է անձէ համառօ-
տեալ կամ հաւաքեալ, զոր գտած են այդ երեք
թարգմանիչք մեր, և ըստ իրենց պիտոյից անկէ
քաղած կամ իրենցմէ առաջ մէկու մի կամ ոմանց
հաւաքածէն առած, որ և հաւաքօրէն անուանի
Մնացորդքն պատմագրաց առաջնոց. յորս հաւանօ-
րէն դժբա խառնած էին Հայոց ազգային և վի-
պասանական աւանդութիւններ եւս: Երկու բանն
այլ ստոյգ կ'երեւի. այսինքն, այդ թարգմանիչնե-
րէն առաջ Հայոց պատմիչ և պատմութիւն ըլլալն:
Արժան է յիշել և Բուզանդայ ի սկզբան մեզի հա-
սած Պատմութեան (Գ. ա) ըսածն, թէ ի սկզբանէ
քրիստոնէութեան Հայոց մինչեւ ի վախճան մեծին
Տրդատայ եղածքն ի Հայս՝ «Այն ամենայն ի ձեռն
» այրոց գրեցան», անկէ վերջ մինչեւ իր ժամա-
նակն հանդիպածնրն՝ զոր միջիկն (ժամանակի)
Պատմութիւն կ'անուանէ, «Այն եւս ի ձեռն այրոց
» գրել գրեցաւ», կ'ըսէ. բայց ինքն այլ կ'ուզէ
համառօտիւ յիշել զայն, որպէս զի ըլլայ թէ իր
պատմելիքին մէջ «ընդհատ երեւեսցի բան մի, զոր
» օրինակ աղիւս մի կարգած ի մէջ որմոյն շինուա-
» ծոյ»: Արդեօք այդ այրոց պատմածքն և աւելի
հնագոյնի յունարէն Հայոց պատմութիւնն չէ՞ Պրո-
կոպիոսի յիշած (Շիկ. Գ. ա) անկեանիկն պատ-

մուշիւնն, τὸν ἱστορῶν ἀρχαιότατα. և անկէ զաս-
թերեւս Պատմութիւնն Հայոց ուր Պարթեւաց Ար-
շակ թագաւորին իր եղբայրը Հայոց թագաւոր
դնելը յիշուէր, բայց ոչ Խորենացոյ պատմած Մեծ
Արշակն և Վաղարշակ, այլ յաջորդաց մէկն: Եթէ
ինչուան Գ. դար Քրիստոսի քաղզէացի Բերոսոսի
յունարէն հին պատմութիւնքը կարգային Եւսերիոս
և այլք, ինչ զարմանք թէ Բերոսոսէն զար մի վերջ
գրուածն այլ Եւսերիոսէ զար մի վերջ քննասէրք
մեր կարգային. եւս առաւել եթէ Բերոսոսէն զար-
ուկէս առաջ գրող Կատիասին պատմութիւնն՝
իրմէ 4300 տարի վերջը՝ Փոս, Քրիստոսի թ. գարու
վերջերը կարգար և համառօտէր, տարակոյս չի
մնար մեր ըսածին և յուսացածին:

Արեւմն, աներկրայ համարելով Մար Աբաս Կա-
տինայ անուամբ գրուած հին Հայոց Պատմութեան
գոյութիւնն, և իր ծանօթութիւնն մեր Ե. գարու
հեղինակաց, յուսալի չէ՞ որ՝ եթէ ոչ հայերէն՝ գոնէ
ասորերէն գրուած գտուի: Այս յոյսն գրեթէ ստոյգ
համարուեցաւ երբ կէս դար առաջ համբաւ մեղաւ
թէ ի Միջագետս Ասորոց (ի Մէրտին) վանքի մի
մէջ այդ անուամբ մարդոյ գրած պատմութիւն
գտուի հին ասորի ձեռագրի մէջ. և պատուաւոր և
ունեւոր ազգային մի (Յ. Տատ.) հետամուտ եղաւ,
ոչ միայն թուղթ այլ և անձ խարելով հօն առ կա-
թողիկոսն Ասորոց. յորմէ տեղեկացաւ որ այդ
հնագիր մատենան այն ատեն գտուէր ի Բերիւս, բայց
էր քով այլ կայր օրինակ մի՝ անկէ ընդօրինակուած.
որոյ մէջ ոչ միայն Հայոց այլ և ուրիշ մերձաւոր
ազգաց պատմութիւնք կային, իրբեւ ժամանակա-
զրականք կամ գաւազանք. Հայոց մասին վերա-
բերեալն՝ մասամբ հայերէն թարգմանեալ զրկուե-
ցաւ Խնդրողին: Արգարէն սկսեալ մինչեւ ի Տրդատ
երկու թուղթ բան համեմատ Խորենացոյ պատմու-
թեան և նման Միխայէլի պատրիարքի գրածին, քիչ
նոր բան ունելով. գրողն յայտնի եկեղեցական մի-
մեր կաթողիկոսաց շարքն այլ սոսկ անուամբքն

նշանակած, մինչև ի Սին կաթողիկոս, յորմէ կըր-
նար կարծուիլ հեղինակն ը դարու վերջ: Բայց
և նոյնպէս կամ աւելի կրնար կարծուիլ թէ նոր
գրող մի աւելցուցած ըլլայ այդ անուանց շարքը:
Նոր համբաւ մի եւս լսուեցաւ Մար Արասայ յայտ-
նութեան, որ քննելով գտուեցաւ ծանօթ Ապուլ
Ֆարաճի պատմութիւն: Աւելի մօտ ատեն (1890)
նորէն հնչեցաւ համբաւ մի, և փոանկ հայագէտն
Գառիէր մեծ յուսով և պարծանօք խոստանայր
հրատարակել. այն ատեն մենք այս վերոյգրեալ
տեղեկութիւնն հրատարակեցինք մեր Բազմալիկ
ամսագրի մէջ. այնուհետեւ լռութիւն եղաւ:

Սրբ, յետ այսքան երկար քննութեանց՝ դառ-
նալով մեր ամենէն առաջ ըսածնուս, Մար Արա-
սան Պատմութիւնն որչափ այլ օտարագրի է և
օտար լեզուով եղած ըլլայ, օրինաւոր է մեզ ընդու-
նել զնա գոնէ պատմիչ Հայոց և հնագոյն արիւր
մերոց պատմչաց և պատմութեան. և շնորհակալ
ըլլալ Խորենացոյ և Ղազարու, ոչ միայն վասն
տուած ստոյգ և անստոյգ ծանօթութեանց, այլ
մանաւանդ անկէ քաղած և թարգմանած մասանց
համար:

4. ԱԲՏՈՒԲԵԱՅ ԿՍՄ ԱԲՏՈՒԲԵԱ. Թուղթ Ար-
գարոս, և Պատրոնիկի: Երկու համանուն ժամանա-
կագիրք մեր, Մխիթար Անեցին և Մխիթար Այ-
րիվանեցին, ազգային պատմչաց դասագլուխ կար-
գեն այս ասորագիր պատմիչը. ասոնցմէ առա-
ջինն՝ յետ յիշելու քանի մի օտար ծանօթ պատմիչ-
ներ, յարէ. «Իսկ ի նորոց աստի մերոց՝ նախ և ա-
» ռաջին պատմող Ղերշբնայ», և կ'աւելցնէ Խո-
րենացոյ ըսածը (Բ. Պ). «Ղերուբնայ որդի Խի-
» շազարայ Գպրի՝ գրեաց զամենայն գործս՝ որ ինչ
» յաւուրս Արգարու և Սանատրըկոյ, և եղ ի գիւա-
» նին յԵղեսիայ»: Խորենացոյ պատմութեան ա-
» ռաջին տպագրութեանց մէջ ըստ ձեռագրաց ոմանց
Ղերուբնայ է, այլ յիշեալ ժամանակագիրք մեր

նմանապէս Ղերուբնայ գրեն: Որչափ այլ Խորենա-
ցոյ վկայութեամբ ծանօթ էր Երուսաղեաց անուն
հին հեղինակիս, ինչուան անցեալ (ԺԹ) դարուն կէսը
գործն անծանօթ էր հասարակաց, որ՝ դարձեալ մեր
գրականութեան մէջ գտուեցաւ յամի 1852 նախնի
հարց թարգմանութեամբ, Բարիգու մեծ գրատան
հին ձաւընարի մի մէջ, զոր և թարգմանութեամբ
ի փոանկ լեզու՝ հրատարակեցինք ի Ս. Ղազար,
յամի 1868, ծանօթութեամբք. որ առիթ եղաւ
Երուսաղի գիտնականաց այլեւայլ քննադատու-
թեանց, և Լանկուա անցուց ի շարս փոանկերէն
թարգմանութեանց Պատմչաց մերոց:

Մեր գիւտէն քանի մի տարի ետեւ Գիւրբղըն
անգղիացին գաւաւ ասորերէն բնագիրն, թէ և ոչ
ամբողջ, և այնպէս կիսկատար տպագրեցաւ (1874),
յետոյ աւելի կատարեալ օրինակք գտուեցան: Ղե-
րուբնայ ոչ միայն մեր պատմչաց յիշելէն յայտ-
նի էր՝ մերայոցս, այլ և իբրեւ սրբազան գիրք մի
առաքելական ժամանակի գրուած՝ մեր Ս. Հարք ի-
րենց եկեղեցական տօնից և ընթերցուածոց կար-
գաւորութեան մէջ՝ մէկ երկու անգամ սահմանած
են եկեղեցոյ մէջ կարգալ անկէ մասն մի, որոյ
բոլորն կ'անուանեն Թուղթ Արգարոս. վասն զի
պատմէ Արգարու համարեալ թղթակցութիւնն ընդ
Քրիստոսի և իր հաւատալն ի Քրիստոս քարոզու-
թեամբ Թաղէի առաքելոյ: Հաւանօրէն մեր նախ-
նիք՝ Ղերուբնայի գրածին յարեր են այս առաքելոյ
քարոզութիւնն այլ ի Վերին կամ ի Բուն Հայս և
նահատակութիւնն ընդ աշակերտեալ Սանդրիտոյ
կուսին: Այս թղթիս հաւատար պատիւ տուած են
մեր Հարք ուրիշ աւանդեալ պատմութեան մի, որ
կոչուի Պատրոնիկի, իբր զի կղաւդիոս կայսեր կին
ըլլալով սա, յառաջ քան զՀեղինէ՝ Քրիստոսի Խաչը
փնտտել տուեր է Երուսաղէմ: Ս. Սահակայ կար-
գաորեալ հին տօնացուցի մէջ ի տօնի Գիւա Խա-
չին գրուի. «ՅԱրգարու Թուղթն զիս զՊատրոնի-
» կեն և ընթերցիր»: Նոյնպէս և ի տօնի Ս. Ար-

դէի. « Ի 23 դեկտ. Արդէի հայրապետի Եղեսիայ »
 » քաղաքի, աշակերտին Թադէոսի. և ընթեանուն
 » զթռչոյրն Արգարու և զԳիլա նորին »: Այս գրոցս
 մէջ ոչ Թադէոս կոչի զըկուածն առ Արգար Ի Թով-
 մայէ առաքելոյ՝ այլ Արդէ կամ Արդէ ըստ Ստորոց, և
 որ յետ քարոզութեանն և լուսաւորելոյ զԵղեսայցիս՝
 կ'ըսուի թէ իրեն փոխանորդ թողլով իր համանուն
 կերպասագործն՝ Արգարու, « Ելեալ գնաց ընդ Ա-
 » ըեւելս, և յղարկեցին զնա ամենայն բազմութիւն
 » մարդկանն »: Այս երթալը յԱրեւելս է մեր մէջ
 ծանօթ պատմութիւնն՝ Թադէոսի առաքելոյ քարո-
 զութեանն ի թագաւորութեան Սանատրըկոյ և անոր
 դասերն Սանգիստոյ հաւատալն ի Քրիստոս և
 նահատակուիլ, զոր Խորեն. չի պատմեր, վասն զի
 կ'ըսէ (Բ. Կ. ԿԳ), « Գտանի յայլոց պատմեալ յա-
 » ռաչագոյն քան զմեզ »: Ստոր հակառակ իր յիշած
 Ղերուբնայի գրածին մէջ Սանատրըկոյ գործոց
 պատմութիւնն չի գտուիր. այլ միայն երբ աշա-
 կերտ Ադէին նահատակութիւնը յիշէ, կ'ըսուի թէ՝
 « Եղեւ սուգ մեծ... որպէս եղեւ սուգ և տրամու-
 » թեամբ Ադէ առաքեալ վարդապետն նորա ի ձե-
 » ոաց ամբարշտաց, ի կողմանս Արեւելից »: Բայց
 այս կտորը մեր հայ թարգմանչէն աւելցած կ'ե-
 բերի: Իսկ պատմութեանս կամ Թղթոյն Արգարու
 վերջաբանն. « Չամենայն ինչ զոր հրամայեն թա-
 » գաւորք և զամենայն ինչ որ միանգամ լինի ա-
 » ռաջի նոցա՝ գրի և գնի ի տունս Յիշատակաց-
 » այնպէս և յՈւռհա քաղաքի Ղըրուբնէս որդի
 » Անակայ որդւոյ Արդաշարագայ դպրի թագաւո-
 » ըին, զրեաց զամենայն ինչ զոր միանգամ իրք
 » եղեն Ադէի առաքելոյ, ի սկզբանէ մինչեւ ցկա-
 » տարած, միաբանութեամբ ձեռն արկանելով և
 » Անանայ հաւատարիմ թագաւորին. և եղին
 » տան Յիշատակաց քարտիսից, ուր գնին մա-
 » տեանք և օրէնք արքունականք. և որք գնեն և
 » վաճառեն, և զրին ի միջի նոցա մուրհակը հաս-

» տատութեան, անդ պահին հաստատութեամբ
 » առանց արհամարհանաց »:

Ինչպէս վերը յիշեցինք՝ մեր այս Ղերուբնայի
 գործոյն մէջ իր ամեն գրածն չկայ. անոր հակա-
 առակ այլ տեղ տեղ քիչ բան աւելցուցած են յետա-
 դաքը, և մեր ձեռք հասած գործն՝ ի սկզբան Գ. դա-
 րու առած է հիմակուան ձեւը և թարգմանուած ի
 մերոց նախնեաց: Նոյն այս ձեւով կարծեմ գտած
 է և դար մի յառաջ քան զմերայինս՝ Եւսեբիոս,
 որ առանց անուան յիշէ և առնու պատմէ:

Կան ոչ սակաւ կարեւոր գիտելիք և քննելիք այս
 գործոյն մէջ ըստ եկեղեցական կամ կրօնական
 տեսութեան, բայց մեր նպատակէն դուրս մնան:

Անոր փոխան իրրեւ աւելի մերձաւոր Հայկական
 պատմութեան և դպրութեան յիշեմք Թադէոսի
 Առաքելոյ Պատմութիւնն մի, որ կերպ կերպ հիւ-
 սուած և գրուած, մեր գտածները հրատարակած
 եմք (1853) յԱ հատորի Սոփերաց. որոց առաջինն
 հնագոյն է և թուի ասորերենէ թարգմանուած ի Սա-
 տրուէի եպիսկոպոսէ, զուցէ քիչ մի Հայաստանի վե-
 բարերեալ մասերը ուղղազրկելով. իսկ ինքն Սամուէլ
 որ կ'անտւանէ զինքն եպիսկոպոս, ի վերջ պատմու-
 թեանն կ'ըսէ թէ թարգմանածը տուեր է « ամենայն
 » Հայաստան աշխարհի », որով հեղինակաւոր անձ
 մի յայտնուի ժամանակակից թարգմանչաց մերոց,
 զուցէ և Շտրուէն՝ Հակառակ Ս. Սահակայ կաթո-
 ղիկոսացեալն. կամ Ստրուէի օրինաւոր կաթողիկոսն
 ի սկիզբն Չ. դարու, յաճորդ Բարգեճի. որ թուի
 առ նկատման ինչ՝ զինքն լոկ եպիսկոպոս անուա-
 նած, մանաւանդ որ ձեռագիր օրինակաց ոմանց
 մէջ և ոչ անունն կայ. լեզուին շարաբանութիւնն
 եւս յայտնէ թարգմանչաց դարը:

5. ՄԵՉԵՆԱԿԱՍՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՊԱՏՄԻՉՔ.
 ԲԱՐԻԱԾԱՆ, ԱՓՐԻԿԱՆՈՍ, ՈՒՂԻԻՊ, ՊԵՍԻԴՈՆ, ՀԱ-
 ՄԱՄ: Մեր լեզուին յատուկ է Մեհնէս բառով նշա-
 նակել կոսոյ կամ հեթանոսական կրօնից նուր-

բուած չէնքը, որոյ փոխան ի քրիստոնէութեան յունական բառն Եփեսոցի գործածեմք. Տաճար այլ ըսուած է թէ հին և թէ նոր կրօնից նուիրական տեղին, և շատ հեղ սրպիսի և է չքեղ հանդիսի տեղն, ինչպէս արքունեաց մէջ և կոչոնոց՝ խրախու- թեան սրահն կամ սենեակն: Նշանական անուն մի է Մեհեանե. բայց անծանօթ է ծագումը. ոմանց թուեցաւ թէ Միհր դից անունէն ըլլայ, այլ լաւ եւս թուի լուսնի մանիկէն, որ ոչ միայն Հայոց սիրելագոյն գիցուելոյ Անանայ գլխոյն պատկն էր, այլ եւ պարսկերէն լուսնի և ամսոյ անուն, մանաւանդ Կոր-ամսոյ որ Մահիկ-ի կոչուի նոյն նշանակութեամբ. և չէ հետի բառդ ի Մեհէնէ, եթէ համարիմք ի սկզբան ի մերոցս իրենց լեզուի համեմատ Մահիկեռեան ըսած ըլլալ և համասո- ասելով Մեհեան: Բայց թողով անունն այլ, անոր յարմար մեր հեթանոս հարց մեհէնից պաշտօնէից, վերակացուաց այսինքն համարեալ քահանայից (որք Քաշրք կոչուէին) թէ կրօնից վերաբերեալ գը- ըուածք. թէ դից նուիրեալ իրաց յիշատակք, և թէ իրենց հաշիւներն և ազգին տիրապետած թագաւո- ըաց և երկրին ժամանակագրական պատմութիւնք աւելի կամ պակաս ընդարձակութեամբ, Մեհեանե- կան կոչուէին: Աւելորդ է մեզ քննել, թէ ի՞նչ լեզուով և գրով նշանակուէին. հարկ է թէ ժա- մանակին հասարակաց կամ գիտնոց լեզուով. և եթէ տեղեաց ժողովուրդն առ հասարակ Հայ էր, վայլէր որ հայերէն գրուած ըլլային, զոնէ տըրեց և նուիրաց վերաբերեալքն:

Սոյն ատեն հայերէն լեզուի գիր կար թէ ոչ. — հաւանիմք թէ որ և է կերպով կար գիր մի, բնիկ կամ օտարի, և մանաւանդ եղանակի:

Խորենացոյ շատ անգամ յիշելն՝ անտարակոյս կ'ընէ թէ՛ կային ի քրմաց գրեալ Պատմադրիւնք, ըլլայ կրօնական՝ ըլլայ քաղաքական, որ միանգա- մայն Մեհեանակաւք կ'ըսուին: — Արգարու համար կ'ըսէ (թէ և չըլլայ Քրիստոսի ժամանակակից

Արգարն և ոչ թագաւոր Հայոց,) թէ «ի Մծբնայ » փոխէ յԵղեսիա զնառեանս մեհեանիցն վարժա- » րանին և միանգամայն զգլխանս թագաւորացն»: թէ և զԱրգար Ասորոց թագաւոր ճանչնամք և գրուածքը անոնց վերաբերեալ, բայց ի Մծբն հարկ էր Հայոց վրայ գրուածներ այլ ըլլալ, եթէ կային ուրիշ ազգաց. ուր թողունք որ նոյն մեր պատմիչն ուրիշ տեղ (Բ. Ը) կ'ըսէ Հռովմայեցոց գործակալաց համար, թէ յԵղեսիա « ժողովեն » պամենայն Դիւանս, և կարգեն դպրոցս երկու, մի » գրուն իւրեանց զասորին, և միւս եւս զյոյնն. և » զԴիւանե Հարկաց, և զՄեհեանակաւն՝ որ կայր ի » Սինոպ Պոնտացոց՝ անգր փոխեն»: — Տիգրա- նայ և Միհրդատայ առնչութիւնք անտարակոյս կ'ընեն՝ որ այդ Սինոպի գլխանաց մէջ պէտք էր ոչ սակաւ հայկական յիշատակներ գտնել: — Նոյն դարձեալ (Բ. Ժ) որոշակի եւս գրէ, թէ «Ափրի- » կանոս բովանդակ փոխադրեաց և որ ինչ ի քար- » տէսս դիւանին յԵղեսիայ՝ որ է Ուռհայ, որ յա- » զագս քաղաքորացն մերոց պատուեր, որ մասանալքն » ի Մծբնայ էին փոխադրեալ անգր և ի Սինոբայ » Պոնտոսէ, ի մեհեանական պատմութեանց: Մի ոք » անհատատացի. քանզի մեղէն իսկ ականատեսք » եղեալք այն դիւանին: Կը վկայ քեզ ի մտոյ » Եւսերի յԱ. հազներգութեան ի ժգ թուին. » զի վկայէ յԵղեսիայ Դիւանին լինել ամենայն » գործոց առաջին թագաւորացն մերոց՝ մինչեւ » ցԱրգար»: Նախընթաց վկայութիւնն դիտել կու տայ որ Ափրիկանոս ի սկիզբն Գ. դարու, Եւսերի- ոսի այլ առաջնորդն, մեր ազգային պատմութեան եւս մտադիր է եզեր և առիթ մ'ըրբեր է իր այդ գովելի և փափագելի գործոյն, որոյ հիմայ հա- տուածք կամ քաղաւածք միայն մնան:

Եւսերիոս և Խորենացին՝ յիշեն Ափրիկանոսի մասամբ նման և գրեթէ ժամանակակից՝ ուրիշ հռչակաւոր շատգէտ և շատգիր ասորի հեղինակ մի եւս, այլ ոչ շատ ողջամիտ, երկրորդը մեր Բ. դարու

վերջին թագաւորաց գործերը յիշելով՝ կ'ըսէ (Բ. կղ.) . « Զրուցէ մեզ դայո ԲԱՐԴԱԶԱՆ (Bardazane,)
 » որ յԷդեսիայ . քանզի նա յաւուրս Անտոնինոսի
 » վերջնոյ՝ (Թուր Վերոսն, 161-9, կամ մանաւանդ
 » Աւրեղիանոս), երեւեցաւ պատմագրող . . զպատմու-
 » թիւնն ոչ ստեաց, զի էր այր կորովի բանիւք . . :
 » Բաղում՝ Ասացոռածս արար ընդդէմ՝ ազանդոյն
 » Մարկիոնացւոց և Բաշխից և կոոց պաշտաման՝
 » գործ մերուս աշխարհիս : Վասն զի եկն նա այսր,
 » որպէս զի աշակերտել զոք կարասցէ ի խուժ հե-
 » թանոսացս . և իբրեւ ոչ ընկալեալ եղեւ, եմուտ
 » նա յամուրն Անի (որ ի Գարանաղի), և ընթեր-
 » ցեալ՝ զՄենեանական պատմութիւնն, յորում և
 » զգործս քաղաւորացն, յաւելլով իւր և որ ինչ առ
 » իւրեանն, և փոխեաց զամենայն ի լեզու ասորի,
 » որ և ապա անտի յեղաւ ի յոյն բան : Յորում
 » պատմէ՝ որ ի մեհենիցն պաշտամանց վերջին Տի-
 » գրանայ արքայի Հայոց պատուել զգերեզման եղ-
 » րորն իւրոյ Մաթանայ . . : Յայսմ՝ Պատմութիւնն՝
 » առեալ մեր երկրորդեցաք քեզ, ի թագաւորու-
 » թեանն Արտաւազդայ (Բ) . մինչեւ ցՍրճանն Խոս-
 » րովուր : Այսինքն ըստ մեր պատմելին՝ (Բ. կե)
 » Տրդատայ հօր Խոսրովու յաղթութեանց յիշատա-
 » կը՝ Կովկաս լեռանց հիւսիսակողմն՝ Գարբանտայ
 » պահակին մօտերը, « Հաստատէ ներքեացի գրով, որ-
 » պէս զի յայտ լիցի ընդ հնազանդութեամբ լինել
 » Հոովմայեցւոց » : Եթէ մեր ազգային պատմըւաց
 » ժամանակագրութեան հետեւինք, ինչուան այդ
 » Խոսրովու գործն ապրած չէ Բարդաւան . սակայն

1. Երեք կայսերք եղած են իրարու յաջորդք այդ
 անուամբ, թէ և յատուկ անուամբք եւս յիշուին. Ան-
 տոն. Պիոս, 158-61. Անտոն. Վերոս, 161-9. Ան-
 տոն. Մարկ. Աւրեղիոս, 169-80: Անանիա ժամանա-
 կագիր մեր յայտնապէս ասոր ժամանակակից զնն
 զԲարդաւան, որոյ համաձայն կ'ըլլայ Խորենացւոյ
 այլ վերջին Անտոն կոչելը :

կըրնար ուրիշ մէկն յաւելած ըլլալ անոր պատմու-
 թեան, կամ մեր ճանչցած Խոսրովէն առաջ Խոս-
 րով մի այլ եղած է թագաւոր Հայոց, որ շատ
 հաւանական է : Բայց այս տեղ մեզի կարեւորն է
 մեր ազգի և թագաւորի պատմութիւն գրուած
 ըլլալն յերկրորդ կէս Բ. դարու, և գրողն՝ Բարդա-
 ծան : Որչափ որ ծանօթ է սա գրուածովքն և ա-
 զանդով, դեռ շատ յայտնի չէ իր առաջին կեանքն
 և բնիկ ծննդեան տեղին : Անունն այլ ասորական
 թանձր անուանց չի նմանիր, այլ աւելի պարթեաւ-
 կան, պարսկական, հայկական հնչէ . դժուարին է
 չհաւանիլ հասարակաց հին աւանդութեան, սկսեալ
 յԵւանթիոսէ, անոր եղեսպցի ըլլալուն : Մեր կէս ա-
 ւանդական կէս գրաւոր « Պետրոսի Մատիւն » պատ-
 մագրողն, այսինքն Կոզովիտ գաւառի կողմերէն
 ուսմիկ երիցու մի ի Հոովմ երթալով՝ Ս. Պետրոսի
 նշխարներէն մէկ մատը գողնալուն և այն (Յօդ.
 234), ի Ս. Սովիա Կ. Պօլսի՝ յիշող մի կ'անուա-
 նէ, « Պատմեաց մեզ Բարդաւան (այսպէս գրուած և
 » ոչ Բարդաւան) որ յԷդեսիա այր կորովի և բա-
 » նիւրուն իմաստասէր և հմուտ ժամանակա (գրա-
 » կան) արհեստին, որ կանխեաց ասաց վասն այ-
 » տրիկ, եթէ մեծ թագաւորն Յուստինիանոս՝
 » յորժամ աւարտեաց զչինուածս հրաշատես և
 » սուրբ եկեղեցւոյն Սովիայ », և այլն : Կրնայ
 այդ մէկ (ե) գրով տարբերուած հեղինակն իսկա-
 կան տարբեր անձ մի ըլլալ 400 տարի յետոյ քան
 զԲարդաւանն վերոյիշեալ . իսկ մեր պատմըլի խօս-
 քին սկիզբն՝ Եւանթիոսէ առած երեւի :

Նոր տարակոյս մ'այլ կ'ընծայէ Բարդաւանի
 վրայօք մեր երիցագոյն պատմըւաց մէկն, Չենովի
 Ստորի, կրք Գր. Կոստանորչի և Ս. Յակովբայ
 Մժրնայ ծագումը յիշէ . յեանոյս համար պէտպէս
 կարծիք եղած էր կ'ըսէ . սոսյզը տեղեկանալու
 համար « Ընթերցիր զթագաւորութիւն Հեկիթաղե-
 » նիկայ հեղինացի գրով, և կամ զԹագաւորութիւն
 » Ճենաց, զոր դատենս յԱռահա քաղաքի առ Բար-

» դայ պատմագրի¹» : Զենորայ գրոց հին ձեռագիր օրինակ մի՝ փոխան Բարդայ Բարդեճան գրէ : Կու վայլէր ստոյգ Բարդածանայ որ գրած ըլլար Հեփ-րադաց՝² (հին թուրք ցեղի մի) պատմութիւն . բայց եթէ ստուգիւ այդոր համանուն կամ մերձա-նուն մէկն գրած է Ս. Յակովբայ վրայ՝ դատ անձ պիտի ըլլայ, բայց ոչ շատ հեռի ժամանակաւ, մանաւանդ եթէ մեր ծանօթ Խոսրովի ժամանակը կանխենք կամ ուրիշ Խոսրով մ'այլ ընդունիմք : Ինչպէս այլ ըլլայ՝ շահաւոր է մեզի այդպիսի մեր-ձաւոր յունագիր պատմընի ծանօթութիւն՝ իրմէ ոչ հեռի մեր պատմընէ, որ գրած ըլլայ այն հիւսիս արեւելեան կէս բարբարոս ազգաց պատմութիւնը, որք անծանօթ չէին Հայոց, թէ՛ անոնց և թէ՛ իրենց թաղաւորաց փոխադարձ արշաւանօք իրարու վրայ, և թէ՛ վաճառականութեան պատճառաւ . մինչեւ կըրնայինք տարակուսիլ՝ զոնէ փոփոզել՝ որ ստու-գիւ մեր նախնի ազգայնոց մէկն եւս ըլլար այնպի-սեաց պատմագրող³ :

Այս պատմական յիշատակիս և ժամանակին յարմար գալով՝ անցողաբար յիշենք Զենորայ այդ նշանակածին նման ուրիշ պատմիչ մի, Պիսիդոն . Ս. Աթանագինեայ Նշխարաց փոխադրութեան վը-

1. Նորագոյն օրինակ մի գրէ . « Թէ ստուգիւ զի-»
 » աննալ կամիս զայսսսիկ . ով ընթերցսլ Բեկտոր .
 » կարգաւ զԹագաւորութիւն Եւրպոլեայ որ կայ հել-
 » լէնացի գրով կամ » և այլն :

2. Անշուշտ արեւելեայց մինչեւ հիմայ Ղրիշախ կոչուած Թուրքաց նախահարքն, և ըստ յոյն և լատին հեղինակաց Ephthalitae կոչուածքն, զոր և Հոնաց՝ ձերմակ ցեղն անուանեն :

3. Իբրեւ պատահական զուգորդէս յիշենք որ Մոլերի բազմահմուտ հեղինակ մեծ և հուսկաւոր կենսագիր Բառարանի յ'ժէ դարու կ'ըսէ թէ Միւլլէր Կրայթենակ անուամբ Գերմանացի մի թարգմանած ըլլայ ի հայերէնէ համառօտ Չինաց պատմութիւն մի . Historiola de Sinis. (Մօրերի M. 536) :

բայ տեղեկութիւն ուղղի համար՝ կ'ըսէ « Զոր՝ եթէ » ստուգիւ կամիք իմանալ, ցՊիսիդոն բարդաւանիչ » իսկ հարցէք¹ : — Իսկ Պիսիդոնը՝ ով և որպիսի՞ ըլլայն իմանալու համար որո՞ւ հարցընեմք . զի չեմ կարծեր թէ այդ անուամբ հեղինակ մի ուրիշէ յիշուած ըլլայ :

Բայց մենք յետ այսբան ծանօթ և անծանօթ իրաց և անձանց մէջ գեղերելու, դառնանք բուն մեր վերնագրած խնդրոյն, որ էր Մեհենյական Պատմութիւնն Հայոց . և որչափ այլ նուագ ըլլայ յայտմ մասին մեր գիտութիւնն, այն սակաւ յիշատակներէն այլ զուշակուի որ բաւական արժանի մտադրութեան Բարդածանայ և Ալիբիկանոսի նման գիտուն և սրամիտ անձանց՝ աւանդութիւններ մատակարարեր են Հայոց մեհենյակիր Քուրմքն, յորոց միայն մէկ մի ծանօթ է անուամբ և վկայութեամբ պատմագիր ըլլալ, և այն շնորհիւ մեր բազմերախտ Խորենացոյ, որ Բ. Արտաշիսի զանազան գործոց և շինուածոց և օտարաց հետ անոր վերաբերութեանց համար՝ գրէ (Բ. խր) . « Զայս մեզ ստուգապէս » պատմէ Ուղիւսայ, քուրմ Հանույ, գրող Մեճնեսաւ » կան Պատմութեանց² . և զայլ բազում՝ գործս » (Արտաշիսի, գուցէ և յաջորդաց) զոր ասել կայ

1. Carrière խճճելով զՍորեն . մերժէ զայս աւան-
 ղութիւն, և համարի թէ զՈղիւսայիակաւ Արամազդայ
 կոչումն՝ փոխեր է Խորենացի ի քուրմն Ուղիւսայ : Տես
 Հանդես Ամսօր . ԺԲ . 538 :

2. Արդեօք այսպիսի գրուած մի անցեր է ի ձեռս
 մեր հետաքնին Արծրունի Թովմայ պատմընին, որ
 նոյն իսկ Հեփթաղացի թագաւոր հեղինակի մի գործ
 կարգացող երեւնայ . Զրադաշտի կրօնական աւանդու-
 թեանց վրայ խօսելով՝ կ'ըսէ . « Իսկ Մակիթոյ ար-
 » քայ խեփառաց եւս յաւելուածով զայսսսիկ հաս-
 » տատէ . . . զոր աւանդեցին իաւարայսձ արեւելա-
 » կանքն՝ Զրադաշտ և Մանիթոս » իւրեանց հաւանե-
 » լոցն » : (Տես յետոյ ի կարգի Պատմաց զԹովմ .
 Արծրունի) :

» մեզ առաջի. որում և Պարսից մատենանքն վը-
 » կայեն, և Հայոց Երզն Վիպասանաց »: Բարդա-
 » ւոր համարիմ՝ զԽորենացի եթէ դարերով վերջը
 » գտեր և կարգացեր է այդ իր և մեր հեթանոս
 » նախնոյն պատմագրութիւնը, և զմեզ այլ՝ որ գոնէ
 » Հայոց այնքան մեհենաց պաշտօնէից թուէն գոնէ
 » այդ մէկին և արժանայիշատակ մէկին անունը գի-
 » տեմք, և իրեն նմանեաց գրութեան վրայ այլ չեմք
 » տարակուսիր: — Եթէ ոչ որոշակի մեհենական՝
 » այլ Դիւանական գրութեանց հմուտ մէկ մ'այլ ժա-
 » մանակից Ուղիւպի՝ յիշէ թովմ. Արծ. իր ցեղէն,
 » և է Հանամ որդի Արշարի, զոր Արտաշէս Բ «կա-
 » ցուցանէ ի վերակացութիւն գործակալաց զրան
 » արքունի . . . զի և տեղեակ էր Դիւանական Մա-
 » տենագրութեանց»: — Իրբեւ ոչ միայն ազգական՝
 » այլ և գործով մերձաւոր Համամայ յիշենք և զՄա-
 » հակ Արծրունի, որ թէ ըստ պատմութեան թովմայի
 » (Ա. Ժ) և թէ ըստ Խորեն. (Բ. խը) Պարսիկ Պերդգ-
 » Վաւ անուն երազանաւ մոգի մի աշակերտ էր եղած
 » Մարաց կողմը, զոր՝ Սմբատ՝ Արտաշիսի մեծ զօ-
 » րաւորն և պաշտօնեայն՝ փոխանակ Երուսաղայ՝ եղ-
 » բոր Երուսանգայ՝ « ի վերայ բազնացն կացուցանէ »,
 » այսինքն Քրմնպետ կարգէ. իր վարպետին յիշատա-
 » կա Մորպաշտն կոչուեցաւ սա, և անոր պէս Երա-
 » զազան այլ եղած կարծուի:

Վերագտանալով Խորենացոյ վերջին վկայու-
 թեանն մեհենականաց վրայօք, այն գրութեանց
 մերձաւոր տեսակ գրութիւնն և զորոք խնգրենք, որ են,

6. ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻԻՆՔ ԵՒ ՎԻՊԱՍԱՆՔ ՀԱՅՈՅ.
 — ՎՐՈՅՐ:

Այս տեսակ բանակարգութեան և գրութեան
 անունն՝ յայտ է որ ի Վեպ և աւելի յոգնականաբար
 ըսուած Վեպք բառէն ծագի, որ ինչպէս ի սկզբան
 յիշեցի՝ ձայնիւ զոյգ է յունական ἑπις բառի,
 և նշանակէ բան, ասացուած, երգ, (επιειν, ասել),
 այլ յատկապէս արձակ կամ ոտանաւոր պատմական

գրոյցք, մանաւանդ քաջաց և դիւցազանց վրայօք.
 որով և դիւցազներգութեան իմաստ կ'ունենայ. և
 յարմարապէս մերայինք անոր հեղինակն ըստ յու-
 նին (επιποιός) կ'անուանեն Վիպասան: Աւելորդ
 է բնիլ որ ամեն ազգաց հասարակ կամ բնա-
 կան եղած է վիպասանութիւնն, եթէ ոչ ըստ
 դիւցազնական գատագրաց Հոմերոսի և Վիրգի-
 լեայ, այլ և սամկական Գովր կամ Ողբք՝ քաջաց
 կամ որպիսի և է սիրելի անձանց, որ Զրոյցք այլ
 կոչուի: Անտարակոյս է մերազնեայց այլ այսպիսի
 վէպք հնարելն, և կարգալէն աւելի երգելն: Մեր
 ազգային հին պատմութեան քիչ շատ մեզի հաս-
 նելն՝ պահանջէ որ և է կերպով նշանագրի գոյու-
 թիւն մի. մանաւանդ Խորենացոյ ստէպ յիշելն
 զՎիպասանս, և յատկապէս Բ Արտաշիսի և իր որ-
 դոց տառն Հանդիպածներու. և քանի մի տող
 մնացած բանք այլ յայտնեն որ, Բ դարու կի-
 սուս, ոճով կամ շափական կարգով Վիպասանու-
 րիւն մի հիւսուած է, և երկար տառն երգուած՝
 տեղոյ դիպաց և ժամանակին համեմատ. անոր
 այլեւայլ մասերն՝ եթէ Գրուագ կոչեմք և եթէ
 Հագներգութիւն՝ ըստ Խորենացոյ և այլոց:

Ո՞վ էր Հայոց վիպասանութեան Գիւցազակն. —
 նախ Հայկն, և Հայկազունքն Արաւ, Արայն Գեղե-
 ցիկ, Տիգրանն Երուսաղեան, և այլ Քաջագունք
 Հայոց, որոց վրայ եթէ ջոկ ջոկ երկար Վէպք չեն
 այլ գրուած, գոնէ երկրորդ գարու մէջ հիւսուած
 երկար Վիպասանութեամբ երգուած են. և յատ-
 կապէս Բ Արտաշէսն է երգուած, որ խորթ ցեղէ
 բռնաւոր թագաւորի մի (Բ Երուսնդայ) բռնութե-
 նէն ազատուելով Սմշատայ Բագրատունոյ ձեռքով
 և քաջութեամբ, և իր հօր Սանատրըիյ թագը ժա-
 սանգելով, իրր նորոգող ցեղապետ մ'եղաւ ազգին,
 և շատ սիրելի, միանգամայն և իր երկար թագա-
 ւորութեան տառն շատ տեսակ կարգեր, շէնքեր,
 հանդէսներ հաստատելով, զորս Խորենացի աւելի
 երկար պատմէ քան անկէ առջի և վերջի թագա-

ւորաց յիշատակները: Արտաշիսի խնամանակն Ալանաց հետ նախ զենքով պատերազմած և յաղթած ասեն, անոնց թագաւորին ամագոնակ աղբուկան աչքերէն յաղթըւելով, և ըստ վիպասանիցն ամենաճարտար ստեղծարանութեան՝ այնքան սիրովառեցաւ, որ գրեթէ իր գեղեցիկ սեռւ ձիուն այլ սիրոյ թեւեր հիւսելով՝ արծուպէս թռուց քշեց անցուց երկու բանակաց անջրպետ գետոյ ալեաց երեսէն կամ անգունգէն և հասաւ, և նոյն սիրապարիկ քան սգապարիկ ընթացքով դարձաւ բերաւ ոսկէօղ կարմիր փոկով կապած զՕրիորդն Ալանաց (Սաթենիկ) քան անոր զէնքով գերած եղբայրը, որ պատճառ եղաւ այսպիսի յարմար վիպասանութեան. որոյ եթէ գիւտն լոկ երեւակայաւ կան այլ համարուէր, գարձնալ քաջ բանաստեղծ կոչուելու արժանի էին մեր Վիպասանքն: Ծանօթ են շատ և շատ անգամ գոցա այս առթիւ վիպասանած քանի մի սողերն, զոր յետոյ թերեւս և մենք ի շարակարգի պատմչացս և պատմութեանց կրկնեմք:

Չոյգ Արտաշիսի և գերագոյն քան զնա և քաջութեամբք և աշխարհաշինութեամբ, միով բանիւ անոր և ազգին թագաւորութիւնը վերականգնող Դիւցազն, արգարեւ յատուկ Վիպասանելին էր Սմբատն այն Բագրատունի, որոյ արժէք լաւ ամփոփեցին երախտագէտքն և գովարանք՝ մէկ բառով, Այրարաջ կոչելով (զՍմբատ) իբրեւ քաջաց մէջ քաջագոյն, կամ ըստ հեթանոսաց՝ դիւցախառն էակ, Քաջ. և արգարեւ Դիւցազն կոչման գաղափար ընծայէ զա: Ասոր վրայ Վիպասանից երգածը Խորենացի տեղ տեղ՝ բայց աւելի Բ գրոց ծր զըլխում նշանակէ, ինքն այլ գեղեցիկ գրոյցով բացատրութեամբ. «Ասան Առնև-բաչիև Սմբատայ. » քանզի արգարեւ ըստ Առաւսելիև (վիպասանութեանն) ոչ ինչ կարի հեռի ի ճմարտութենէն. » որ ունէր հասակ անգամոց համեմատ քաջու- » թեանն », և այլն, մինչեւ աչքին մէջ ունեցած քիչ

մի արեան բիծն այլ նմանցուցեր են «զբակոնտիւ» կոնի (escarboucle) ի վերայ սոկւոյ և ի մէջ «մարգարտոյ», կարմիրն ի մէջ գեղնի և ձերմակի:

Խորենացի երբեմն Վիպասանք և Վիպասանութիւն կոչէ այս մեծ բանաստեղծարար հիւսուածքը, երբեմն Առաւսել, բայց յետին անուամբ անկէ գուրս շատ բերանացի աւանգութիւններ ևս, որ արգարեւ արժանի են այդպէս կոչուելու, և երբեմն ըստ նոյն Խորենացւոյ Առաւսելաց առաւսել: Թէ մէկ տեսակն և թէ միւսը՝ շատ հեղ յիշատակէ նա, զոր երկար կ'ըլլայ մեզ ի մէջ բերել. այլ կըրնանք գոնէ յիշել իր գրոց մէջ յիշուած գլուխներէն (Ա. գլ. գ. ծ. ծր. ծր. իգ. իգ. յ. շա. Բ. Կ. Բ. ը. ըգ. ըհ. իք. իք. ծ. ծա. ծր. ծր. կա. կե. և այլն): Վերջին յիշատակն, Բ Արտաւազդայ Մասիս բեռնէն գահաւիժիլն երիվարուն հանգերծ, որ ամենայն Հայոց ծանօթ էր և մեր Յայամաւորք այլ յիշեն ի Տարեմլտի օրը, Խորենացի Գողթան առաւսելաբան Երզնայց հնարք համարի. անշուշտ է անոնց երգելն, այլ անտարակոյս է և մեր Արտաշեսեան Վիպասանից այնպիսի իրենց ներկայ քաջն և գէպքը երգելն. գուցէ վերոյնշակեալ գլխոց մէջ յիշուածներէն ոմանք այն Վիպասանութենէն գուրս Գողթան կամ ուրիշ կողմանց երգչաց հնարքն ըլլան, կամ խառնուած և հիւսուած նախորդ վիպասանութեան մէջ:

Իսկ ո՞վ էր յատուկ ասոր հեղինակն: — Կարծեմ թէ նախ նոյն իսկ Արտաշիսի եռանդուն որդւոց մէկն, իր հաղարապետն ՎրՈՅԲ, որոյ համար վկայէ մեր պատմիչն, թէ էր «Այր իմաստուն և Բաւնաստեղծ». իր հաղարապետութեան պաշտօնն այլ՝ որ էր ըստ նորին պատմելի «ամենայն կործք տանն արքունի», նշանակէ անոր բազմագիւտ բազմահնար հանճարը, որ արքունեաց ամեն տեսակ կարգաւորութեանց կարող էր. և այդպիսի բազմատեսակ գործոց ճանչցող, հետրող և կարգադրողն չէր կըրնար չըլլալ բանաստեղծ,

եթէ և շըլար գրող. սակայն նոյն ինքն Վրոյր
թաւի գլխաւոր հեղինակ Հայոց Վիպասանութեան:
Կըրնա՞նք արդեօք մեր նախայիշեալ մեհենորան
Ողիշպն այլ աշակցել Վրուրի, որոյ ժամանակա-
կից էր. — չեմք տարակուսիր որ ինքն այլ անոր
միտքէն ոչ շատ հեռու առասպելներ խոսնամ ըլլայ
իր գրուածոց մէջ, բայց հաւաստի փաստ չունիմք
իր բանաստեղծ և երգիչ ըլլալուն: Չայս բտելով
կ'անդրադառնամք յիշեցընել՝ որ այդ Վիպասանու-
թեան հիւսուածքն յարմարուած էր եղանակաւ եր-
գելու, անոր համար և Խորենացի երբեմն կ'անուանէ
զայն (Բ. իր) « Հայոց Երգն Վիպասանաց » . և
արդէն քանի մի տեղ և քանի մի տող պահած
հասուածքն՝ ցուցընեն շափած կամ ոտանաւոր
գրուած ըլլալ. զոր և ի վիպութիւն բերեն մեր հին
քերականք և քերդողք: Որքան ազգային ոգւով
և աշխուժի՞ նաեւ գոտոցութեամբ գրուած և եր-
գուած է այս Վիպասանութիւնս, նշմարուի մնա-
ցորդներէն, մանաւանդ Հոսովմայեցոց հետ ունե-
ցած վերարբնութիւննին, ծաղրելով իմն և Դոսեոս
անուանելով անոնց ժամանակակից կայսրը (Խոր.
Բ. ծր): Արժան է յիշել և զայն՝ որ մեր սրտա-
միչք՝ սկսեալ ի Բուզանդայ մինչեւ ի Կաղանկաւ
տուացին, թովմ. Արծրունին և Մագիստրոս, յի-
շեն ոչ սակաւ առասպելական գրոյցք Հայոց, նա-
եւ յետ ժամանակաց Վրուրի, որք յայտնապէս
անոր կամ այն հին Վիպասանութենէն չեն, զոնէ
մեծաւ մասամբ. այլ անոր յարմարի ինչպէս Տըր-
գատայ համար գրոյցն՝ զոր Ագաթանգեղոս ի մէջ
բերէ (Ժա). « Իբրեւ զսեզն Տրգատ, որ սիգարովն
» աւերեաց զթումբս զետոց, և ցամաքեցոյց իսկ
» ի սիգար՝ իբրում զյորձանս ծովուց »:

Այլ աւելի յիշատակաց արժանի է այդ Վիպա-
սանութեան քանի մի նշխարներէն՝ վիպասանից

1. Քննութեան արժանի է միտք այս երեցս կըր-
կնեալ բառիս Սեգ, Սիգար:

նուրբ զգացմունքն կամ ճաշակն, ոչ պակաս քան
զազգային ոգին և զերեւակայութիւնն: Որքան
գեղեցիկ, հզօր և փափուկ է այն « Հեծաւ արի ար-
» քայն Սրտաշէս », իր կենաց զարնան ատեն. և
որքան աւելի սրտագին և մելամաղձիկ իր կենաց
աշնան կամ ձմրան մօտ անցեալ գրօսանաց յի-
շատակաւ բացատրուածն, զոր Խորենացոյ հե-
տեւոզ բազմակրկիտն Գր. Մագիստրոս մեզի ա-
ւանդած է. թէ, « Բաղձայր մըղոյ, մըրկեալ ծխոյ
» շամանդաղեալ մակաւասար՝ շինից և քաղաքաց.
» Ո՞ւ աայր ինձ, ասէր, զծուխ ծխանի և զտաւ-
» ւօտն Նաւասարդի, զվագելն եղանց և զվագելն
» եղջերուաց. (յորժամ) մեր փող հարուաք և թըմ-
» բըլի հարկանէաք »: Ո՞չ այն նաւասարդի առա-
ւօտուն որսորդութեան ելած ատեն՝ օգուն թեթեւ
մշուշն՝ մառախուղն, անակներու ծխաններէն տա-
րածուած ծըխոյ հետ ոչ պակաս և որսաւէր թա-
գաւորին նուաղեալ սրտի մուխն. որ նաեւ յետ
հազար ամաց՝ հին հայրենեաց ծխոտ և անծուխ
օրերը յիշուին, սրտին վրայ անգամ մ'այլ մելա-
մաղձիկ մուխ մ'իջեցընեն: Ոչ միայն երեւակայու-
թեան, այլ և մտաց և սրտի կրթութիւն ցոլացը-
նեն Վրուրիկ վիպասանքն. և հաւանելի է, թէ
Տիգրանայ և Արտաւազդայ օրերու յունական ճա-
շակն այս Բ. Արտաշիտի ժամանակ դեռ մարած
չըլլայ: Ինձ թուի թէ անկէ այլ աւելի նուրբ,
կըրնամ ըսել և սուրբ՝ բան մի չնշեն այդ տողերն,
քրիտոնեական նմոյշ մի. միթէ Ս. Ռիկեանց քա-
րոզութիւնն ի դրունս քաղաշէտոյն (Մաթինկան), և
(Բաղաշայ) Սուքիասանց նահատակութիւնն՝ խղճի
ծուխ մի չազգեց թագուհւոյն և թագաւորին Ար-
տաշիտի:

Բայց շատ համարելով այս հայկական Վիպասա-
նութեան վրայ ըսածնիս, որոյ վրայօք շատ ան-
գամ այլ գրուած է թէ՛ մեզմէ առաջ և թէ՛ ետքը,

1. Այդ բառը Մագիստրոս ներմուծած երեւի:

գառնանք մեր բուն պատմական նպատակին, յետ քիչ մ'այլ ըսածներս լուսաւորելու, քանի մի հա- յապատում անձանց յայտնութեամբ:

Գ Ր Ո Ւ Ա Գ Գ.

- 1. Օտարագգի Հայապատուելք. — Տառիաւնու. — Անտոն Անպատակաւ Հոռոմայեցի. — Փեր- մեղիաւնու եպիսկոպոս Կեսարիոյ. — Արիստոն Պել- ռացի (Փեղ'ղ'ացի): — 2. ՉՀայս յիշող հին պատ- միչք. Որմպիոդորոս. — Բերոսոս և Բիշունեան Միքիլլա. — Անեիոսեան Բերոսոս. — Սանկոնիա- րոն. — Սեւերոն: — 3. Հարազատ Յոյն Պատ- միչք. Երոդոտոս. — Կոնսիլաւ. — Պրատոն. — Բսենոփոն. — Մեգալաքեհեկ. — Մանեքովն. — Աղերսանդր Բագմակեպ. — Եւպոլեոն. — Պո- դիշքիոս. և այլք: — 4. ԱՄ եւս Յոյն և Լատին ծաւօր պատմիչք և Հարք: — 5. Բիշգակեպ- ցիք: — 6. Խաչակրաց պատմիչք: — 7. Արա- բացի պատմիչք: — 8. Բովանդակոչքիւն:

1. Վերոյիշեալ Նահատակաց (Ոսկեանց և Սաւ- քիասանց) հին Վկայարանութիւնք՝ Խորենացւոյ գրչին ոճն ունին. բայց խառնակ կամ սխալակ ա- ւանդուած է մեզ անոնց ազրիւրն կամ սկզբնա- գիրն, որոյ համար այսպէս կ'ըսէ հեղինակն. « Գաի » միւս եւս այլ Պատմոչքիւն (զոր ի վերնագրին » կոչէ « Բան և ասութիւն ճշմարիտ ») ի կողմանս » Հայոց՝ որ Յոյնք էին. այր մի ընթերցասէր Տա- » տիաւնոս անուն, յաւուրս Յուստինիանոսի կայ- » սեր: Բագում ինչ պատմեաց մեզ նա ի յունական » մատենից, որոյ գրեանն ակրիշ շատարսնուրեանք » զրոյցք՝ և այժմ ի միջի մերում գտանի. զոր իմ » իսկ բագում անգամ ընթերցեալ գաի ի ճառս

» նորա », և այլն և այլն: Տառիանոս շատ ծա- նօթ անձ է, բայց ոչ յաւուրս Յուստինիանոսի կայ- սեր, այլ անկէ քանի մի դար առաջ՝ Ս. Յուստի- նոս իմաստասէր վկային ժամանակ, որոյ և առաջ աշակերտեր էր, և թուի անոր վարդապետու- թենէն լուսաւորեալ ընդունեցաւ գրքիստոնէու- թիւն, վասն զի առաջ հեթանոս էր. Հայրենեօք՝ հաւանօթէն Միջագետացի, թէ և ինքն Ասորես- տանցի կոչէ զինքն, այբք Ասորի: Բայց այս երեք աշխարհքն այլ իրարու անուամբ շփոթին ըստ այլ և այլ հին գրողաց. ոմանք կարծեն եւս՝ թէ թէ- պէս այս կողմերու ծնունդ է նա, բայց ցեղով լատին կամ յոյն: Յուստինիանոս կայսեր ատեն այդ անուամբ գրող եթէ եղած այլ ըլլայ՝ ոչ ոք յիշած է. իսկ այդ երկրորդ դարում ապրող հռե- տորն՝ Գ-Ն. դարուց Ս. Հարց ծանօթ և շատ յի- շուած է, թէ իրեն գնտոսիկեան (gnostique)¹ կամ Ենկրատիոսեան (Encratites) մոլորութեանց համար², և թէ ակրիշ շատարսնուրեանն գրելոցն, որում վկային Լատին Հարք գրեթէ նոյն բացա- տրութեամբ, infinita volumina (անբաւ հատորք): Իսկ մեր հեղինակն (Խորենացի) երեւի յԵւսեբիոսէ առած (Եկեղ. Պատմ. դ. ժգ. իր) այդ բացատրու- թիւնը. իսկ ըսածը՝ « ի կողմանս Հայոց որ Յոյնք » էին », իմանալու է Հայաստանի այն մասն՝ որ Յունական կայսերաց պատկանէր և ոչ Պարսից- իսկ բագում՝ անգամ ընթեանուլն այլ՝ կու վայլէ Խորենացւոյ ճաշակին և իր յիշած հեղինակին ըն- քերցանարտքեան: Ասոր մոլորութիւններն շատ ծա- նօթ և շատերէ հերքուած են, բայց իր վարքն և վարձանն՝ ոչ այնքան ծանօթ: Մեզի հետաքրքրա- կանն է իր Ս. Ոսկեանց վրայ գրած Ճշմարիտ

1. Գիանական, շատոգէս: 2. Խորեկալք կոչուին այս աղանդաւորք, որք ի գինեոյ և յամուսնութենէ հրաժարել՝ ժուժկալել քա- բողէին:

աստըրիւնն, յորմէ օգտուելով պատմէ մեր Հայ հեղինակն: Այդ դիպուածն, նահատակութեան Սըրբոցն՝ լաւ յարմարի Տատիանոսի ժամանակին, որ ինչպէս շատգիր՝ նոյնպէս և շատըջիկ ըլլալով, գուցէ իր Հայրենեաց սահմանակից մեր աշխարհին ալ հանդիպեր է այն ատեն՝ երբ այդ Ս. Քաջանայք (Ոսկեանք) նահատակուեր են, և ինքն այլ ուրիշ յիշատակաց մէջ խառներ է զայս, մեր վիպասանից թողած լուծը՝ յայտնելով օտարաց. և այսու մասամբ մերձաւոր կ'ըլլայ Հայ Պատմչաց, որպէս մերձաւոր է Հայրենեօք, և ոչ հեռի անուամբն իսկ. կըրնար մէկն գնոյն ազգաւ այլ ըսել, եթէ մեր հեղինակին գրածը՝ այլափոխ կիտազրուութեամբ կարգար, «ի կողմանս Հայոց՝ որ Յոյնք» էին՝ այր մի՛ Տատիանոս»: Բայց մեզ բաւական ըլլայ իր յարընչութիւնն Հայ պատմչաց և պատմութեանց, որոյ մեծ վկայութիւն մ'այլ է այս՝ որ Անեցին և Այրիվանեցին մեր Պատմչաց անուանալարքին մէջ՝ Մար Արատայ, Լարուրնայի, Աբրիկանոսի հետ դասեն և զՏատիանոս: Եւսերիոս վրկայելով ասոր շատագրութեանն՝ չի յիշեր պատմագրութիւնը, բայց Ռուփինոս և Մալալ յիշեն Չատկական Տօմարագիրն որ նա Դամանակագրոտրիւնն եւս գրած է: Պատշաճ է յարել այս գրութեան և Հեղինակին՝ անուն մի եւս զոր գրէ Խորենացիէն առաջ մեր Ս. Նահատակաց պատմութիւնը գտնող սմն, ի վերջ վկայարանութեանն Սուքիսանց. «Ես Անտոն Անպատակակն ի Հռոմայ, ցանկացայ» վկայութեան և վարուց երանելեացն... և Աս» սուռած զեա արժանի արար գտանել ի մատենի զՎկայութիւն. և զՎարս նոցա գրեցի, և զիս զԱնտոն գրեալիք»: — Կարծեմ ուրիշ կողմէ ծանօթ չէ այս Անտոն Հռոմայեցի Անպատակականն: ՓԵՐՄԵՆԼԻԱՆՈՍ. — Տատիանոսի և նման օտարազգեաց հետ (ինչպէս են Սոկրատ, Եպիփան, Անդրեաս) դասելի է մէկ հնագոյն և մերձաւոր մի եւս անգեաւ և ժամանակաւ գիտուն և սուրբ անձ

մի, Փերսեղիանոս եպիսկոպոս Կեսարիոյ, մայրաքաղաքի Փոքր Հայոց. զոր և չի մոռնար մեր սրամիտ Խորենացին, աւելի քան զԵւսերիոս (Չ. իզ), յատուկ գլուխ մի եւս իր պատմութեանն (Բ. հե) նուերելով ասոր. «Փերսեղիանոս եպիսկոպոս Կեսարու Կապադովկացոց՝ էր սքանչելի յուսու» մնասիրութեան...: Սա բազում խօսս արար. յո» բոց մի է Պատմոտրիւնն հայաժանաց եկեղեցոյ...: «Գրէ բազում վկայեայս և ի Խոսրովու ի մերում՝ աշխարհիս. համայն և յետ նորա օտարք յօտա» բաց. բայց զի ոչ ճշմարտութեամբ ոճով պատ» մէ, և ոչ զանուանս նշանակէ կամ գտեղի կա» տարմանցն, ոչ ինչ կարեւորագոյն համարեցար» երկրորդել. նոյնպէս և որ զԱնտոնէ (Կարա» կալլայ) որդոյ Սեւերեայ՝ ասէ, պատերազմեալ» ընդ Վաղարշայ Պարսից արքայի ի Մելիագետս, և մեռանել ի մէջ Եդեսիայ և Խառանու, և մե» բոյն Խոսրովու ոչ յօք հակամիտեալ»: Յանկալի էր որ Խորենացի քիչ մ'այլ ներողամիտ ըլլար և ծանօթացընէր մեզի. մեր երկրին մէջ այդ Բ-Գ. դարուց Քրիստոսի վկայող նահատակները. այլ այդ փոքր յիշատակին համար եւս շնորհակալ եմք: ԱՐԻՍՏՈՆ. — Արտաշիսի ատեն Յունական լեզուին և դպրութեան ճաշակն ի Հայս (գօնէ յարքունիս) դեռ վառ ըլլալուն պայծառ նշանակ մի է՝ և մեր թագաւորին ծերութեան ատեն իր քարտուգար ունենալն նշանաւոր յոյն պատմիչ մի, Սոխտոն Փեղացի, (Հրէաստանի քաղաք մի), որոյ ծանօթ բայց կորուսեալ գրուածքն է՝ Հրէից աւլըստամբութեան պատմութիւնն՝ Ադրիանոս կայսեր ատեն: Թուի թէ ուրիշ մէկ գործոյ մէջ գրած ըլլայ՝ իր Արտաշեսի հետ իբրեւ քարտուգար՝ հրամանաւ նոյն կայսեր ի Պարսկաստան ուղեւորելը, և դեռ Հայոց սահմանէն չհեռացած՝ Արտաշիսի մահը, որուն մեծահանդէս յուզարկաւորութիւնը զինքը սիրող ազգէն՝ շատ վայելուչ կերպով նկարագրած է, կ'ըսէ Խորենացին (Բ. կ), և ինքն այլ

Համառօտիւ ստորագրէ (տես Յօդուած 43) : Միայն այս զրօսասէր թագաւորին և Տրդատայ չքեղ և սգեղ յուզարկաւորութիւնքն յիշատակուած են ի պատմչաց մերոց : Արիստոնի գրածքն այլ կորսուած են, բայց ի սակաւ կտորներէ. ուրիշ գրուած մ'այլ (Վիճարանութիւն Հրէի մի ընդ քրիստոնեայ Հրէի) յայտնէ որ Արիստոն քրիստոնեայ էր :

Չատ այս քանի մի հին մատենագրաց զոր յիշեցինք՝ իրբեւ զյիշողս մեր նախահարց, Խորենացին իր պատմագրութեանց մէջ անուանէ իրբեւ 40 կամ 50 օտարագրի պատմիչ, որք աւելի կամ պակաս յիշած են զՀայս, և ոմանք մեր աշխարհին մէջ հանդիպած այլեւայլ դէպքեր, կամ Հայոց առնչութիւններ օտարաց հետ : Անշուշտ անոնց նման ուրիշ շատ պատմիչք այլ եղած են՝ զորս Խորենացի չէ յիշած. և եթէ մենք այլ ուղեհինք յիշել՝ շատ երկար և օտար կ'ըլլար մեր գործէն այլ : Բայց Հայոց որքան այն պատմըաց և այն ազգաց առջեւ կարեւոր համարուիլը, և նախ քան զմերայինս օտարաց մեր նախնեաց վրայօք գրելը ճանչնալու համար, կարեւոր համարիմ յիշել համառօտիւ զոմանս անոնցմէ, մանաւանդ որոց գրածէն ինչ ինչ մնացեր է, որպէս զի Խորենացւոյ ըսածներն ալ հասկացուն, եթէ ստուգապատուժ հեղինակք ըլլան և եթէ կեղակարծ կամ առասպելախառն :

2. ԱՂՄՊԻՈՂՈՐՈՍ. — Հիներէն սկսելով, կամ ըստ կարգի ժամանակագրութեան, Խորենացի (Ա. գ) իրբեւ երկու աղբիւրէ առած յիշէ հին դարուց մէջ ստուերակերպ երեցած պատմիչ մի, հաւանօրէն քաղդէացի՝ որ Նոյի և որդւոցն յետ Նոյի զին ո՞ր կողմն երթալն և շինածն պատմած ըլլայ, զՆոյ կոչելով Քսիստոքրոս, անշուշտ արեւելեան աւուան մի յունացեալ կամ ի Յունաց այլակերպեալ :

Այդ աղբերց մէկն նորագոյն է և գրեթէ իրեն ժամանակակից, զօւցէ և ազգական, որ պատմէր թէ երբ ի Յունաստան ուսմանց գնացեր էր, որ մի

ազգաց հնութեան և բաժանմանց վրայ քննութիւն ընելով իմաստունքն, մէջերնէն մէկն Որոմպիոքոս անուն՝ այսպէս ըսաւ. « Պատմեցից ձեզ և » զորոցս անգիրս յաւանդութենէ ի մեզ հասեալս, » զոր և բազումք ի գեղջկաց գրուցեն մինչեւ » ցայժմ, Մատենակ լիպ Վիսիտութեայ և զորդւոց » նորա, որ այժմ ոչ ուրեք երեւի », և այն (տես Յօդ. 2) : Այդ Որոմպիոքոսն է հաւանօրէն Թեբացի (Եգիպտոսի), գրեթէ ժամանակակից մեր առաջին թարգմանչաց, որ գրած է ՉՉ գիրք Պատմութեանց և նուիրած է Բ Թեօդա կայսեր. իսկ այն զինքն յիշող Յունաց մէջ վարժողն՝ հաւանօրէն է Գաւիթ Անյաղք փիլիսոփայն մեր. որովհետեւ Խորենացի երեք ազգային աւանդաբան պատմիչ յիշէ, բրորոզն Գաւիթ, և անմիջապէս կ'ըսէ, « Յորոց մի ոմն ». իսկ ինքն Գաւիթ՝ իր գրուածոց մէջ յիշէ զՈրոմպիոքոսս (տպագր. երես 143) : (Տես ի շարակարգի պատմըաց զԳաւիթ) : Այս բաներս յիշողաց միւս աղբիւր Խորենացւոյն՝ է իր սիրելի կոչած « և քան զշատս արգարախօս Բիւռ » ռուսեակն Սիրիլլս » : Այս Սիրիլլս կին կամ կոյս՝ եթէ գրիչ և եթէ երգիչ՝ շատք համարին (որպէս Ս. Յուստինոս) դուստր Բերտուսի. իսկ սա (որ պէտքս գրուի և Բիւռոս, Պերոզ, և ըստ ոմանց ստուգաբանուի Բար-սուխս՝ Որդի Ովսէոսի), Քաղդէացի էր ազգաւ և քուրմ, ժամանակաւ քիչ վերջ քան զՄեծն Աղեքսանդր. արեւելեան հին պատմըաց մէջ ճանչցուած ամենէն նշանաւոր և ստուգաբան հին աւանդութեանց և աւսիական տէրութեանց, որոյ գրուածէն շատ օգտուած են Արիւղեհոս և Մեգասթեն, և ասոնցմէ՝ բազմերախառն Եւսեբիոս, ուսկից և մերս Խորենացի (Ա. բ. դ. և. գ) և այլք, յորոց կրնան տեղեկանալ փափագողք :

Աւելի անմանօթ և հետաքննական է նոր ոմն Բերտոսս յայտնուած փե. դարու վերջերը, և կերպով մի Հայոց ձեռքով, և Եւրոպիոյ ժ.Ձ. դարու նաեւ յաջորդին գիտնոց մեծ շուկ և վէճ պատ-

հառած. շատ բան գրուած և հերքուած՝ զայն և ուրիշ շատ հին անծանօթ պատմչաց գրուածներն ամփոփելով հրատարակողին կողմ կամ անոր հակառակ. այսպէս են շատերն հիմայ և գրեթէ ամենքն: Այս նոր Բերոսոսը ծանուցողն է Աննիոս (Իտալերէն Նանի) Վիգերպոցի Գոմինիկեան բարեկրօն հնասէր և քննասէր մի, քիչ կամ շատ այլ դիւրահաւան. որովհետեւ իր յիշած և հրատարակած պատմիչներէն ոմանք ամենեւին անծանօթ էին, ոմանց այլ պատմածն (աննման առաջուց մնացածին առ Եւսեբիոսի կամ առ օտարս), քիչերու ընդունելի և հաւատալի և զովելի եղաւ, բայց շատոնց անընդունելի, և անոր համար զինքն այլ խարդախող և ինքնահնար համարեցան: Սակայն այս բանս ծանր երեւցաւ այլոց ոմանց, որպէս և ինձ. վասն զի Աննիոս շատ բարեպաշտ պատուաւոր անձ մ'էր, ի սրբազան քահանայապետաց Հռովմայ այլ պատուեալ և անոնց մէկուն խոստովանահայր, կարգինալի խորհրդական, և հրաշալի բժշկութիւն մի եւս ընդունող. իր (Գոմինիկեան) կրօնին մէջ այլ վանահայր եղած է, և այնպէս էր ի ձենովա՝ երբ (յամին 1498) հիւր ընդունեցաւ մեր Հայ Միաբանող (Ունիքոր) անուանեալ Գոմինիկեանց առաջնորդ եպիսկոպոսն Մատթէոս և Եղ. Գեորգ վարդապետ մի. ասոնցմէ ընդունած է, կ'ըսէ, մասն մի այդ գրուածներու, մաս մ'այլ ի Մանդուա՝ ձեռագրի մի մէջ գտած, զոր հաւաքած էր մէկ մի յամին 1345: Եթէ Աննիոս խաբող չէ՝ այլ խաբուած է, խարեութիւնն մնայ մասամբ իր հիւր Հայոց վրայ. սակայն ասոնց կարողութենէն շատ վեր է այնքան հին ստոյգ և անստոյգ հեղինակաց ծանօթութիւնն և այնքան ճարտարապէս հնարելն. բայց եթէ իրենցմէ առաջ մէկն հնարած կամ հաւաքած ըլլար, և մէկն այլ թարգմանած հայերէն կամ տարած ի Հայաստան: Այս խնդրոյս վրայ շատ բան գրուած է, բայց դեռ պարզուած չէ բոլորովին, որչափ այլ անընդունելի են այդ հին պատմիչքն:

Գանք աւելի հնագոյն պատմիչի՝ Թերեւս հազար տարի առաջ քան զԲերոսոս, այն է Փիւնիկեցին ՍԱՆԿՈՆԻՍԹՈՆ (Σανκονιάθον), որոյ գրած հին պատմութիւնները յունարէն թարգմաներ է Փիլոն Պիլապոսի (Philon Byblius), դար մի Քրիստոսէ առաջ, (սչ մեզի ծանօթ Երրայեցին), և անտի առած և աւանդած են քանի մի բան քրիստոնեայ գրիչք առաջին դարուց, բայց անծանօթ Խորենացոյ: Թէ՛ բնագիրն և թէ՛ թարգմանութիւնն կորած են. ոմանց այս այլ անվաւեր երեւցած է, բայց շատերուն հաւանելի. անհաւատալին այն է՝ որ մեր օրերումս համբաւեցաւ Փիլոնի գրածին գառնիչն Փարբուգալիոյ վանքի մի մէջ, և իսկոյն գերմաներէն այլ թարգմանութեամբ սպազրեցաւ ի Հաննովէր, 1836, յետոյ յունարէնն այլ ի Պրեմա, 1837. բայց խարերայի մի գործ համարուեցաւ այդ ձեռագիրն:

Զատկական ժամանակագիրն յիշէ Պարսիկ պատմիչ մի Սեմիրոնիոն (Շամիրոն?) անուն, որպէս թուի շատ հին, և աւելի հին ժամանակի պատմութիւն գրած, Բելի և յաջորդացն, որ Աննիոսեան Բերոսոսի կեղակարծ պատմութեանց նմանի:

3. ՀՐՐԱԶՍ ՅՈՅՆ ՊՍՄԻՉԲ. — Թողով այդ հին դարուց թանձր մթութիւնը, քիչ մ'աւելի պարզութիւն փնտռենք Յունաց նախնի մատենագրաց մէջ, որք երկար և պատուական շարք մ'ունեցեր են պատմչաց և աշխարհագրաց Քրիստոսէ առաջ Զ. գարէ սկսեալ՝ մեր Հայկազն, թագաւորաց օրերում, թողով իրենց հնագոյն բանաստեղծ և փիլիսոփոս հեղինակներն. յորոց հազիւ մի երկուքն ամբողջ հասած են մինչեւ առ մեզ, շատերէն միայն փոքր հատուածք, շատոց այլ գրեթէ միայն անուանքն: Այսպիսիք են մեր Հայկազն Տիգրանայ ժամանակակից ՀԵՏԱԻԷՍ (Ἰεσσαίος) Միլետացի, և ԵԼԼԱՆԻՎՈՍ (Ἐλλαίνιος) Լեոբացի, աւելի հին քան զառաջինն՝ և գրող նաեւ Պարսից պատմուչ:

րեան. ասոնց գրուածոց հատուածք կամ յիշատակք մնան առ Ստրաբոնի, նոյնպէս և Սիմիլիւֆոսի, որ քիչ աւելի յետոյ է և ինչուան ի Հնգիկս գնացեր և տեղագրեր է. երեքն այլ անծանօթ կամ անյիշատակ են ի Խորենացոյ: — Կրնայ ասոնց մերձաժամանակ ըլլալ և Ա.Ղ.Ս.Թ.ՈՍ Ինն աշխարհագիր, որոյ մէկ գրուածն կոչուեր է Ասիական Լուռաք (Asiatica Carmina): Ասոր մերձանուն պատմիչ մ'այլ յիշուի, Ա.Ղ.Ս.Բ.ՈՒՆԻՄՈՍ, որոյ համար կ'ըսէ Պլուտարք (Յղ. Գետոց) թէ Պարսից պատմուչքիւն գրած ըլլայ: — Ասոնցմէ քիչ մի յետոյ է Փեմեկիմի (Փερεκλιδης), Աթենացի կամ Լերիացի (ի Լերիա կղզի ծնած), որ նոյնպէս գրած է Տեղագրութիւն կամ աշխարհագրութիւն մի՝ յիշուած ի Ստրաբոնէ: Իրմէ Հին ճանչցուի համանուն փիլիսոփայ մի, Սիւրացի, զոր ոմանք Սիւրոս կղզին համարին՝ այլք զԱսորիս կամ զԱսորեստան. այս երկիրներուն և Հայոց յարմարի իր հօր անունն այլ Բաբ (Babys):

Ասոնցմէ հռչակուոր և աշխարհածանօթ և քիչ ետք, ի կէս Ե. դարու Ն. Ք. է ՀԵՐՈՒՄՈՍ կամ ԵՐՈՒՄՈՍ աշխարհածանօթ պատմաչայրն Յունաց, որք այնչափ զմայլեալ են իր վրայ՝ մինչև իր պատմութեան ինն գիրքն ընծայեն յանուն ինն Մուսայից. Խորենացի տեղ մի միայն յիշէ ասոր Գգիրքը (Բ. ք) տարակուսական բացատրութեամբ մի՝ երբ Պարթեւաց Ս. Արշակայ համար կ'ըսէ թէ երկրիս երրորդ մասին տիրեց, իբր թէ և Երոզոս գերկիր երեք մասն. բաժնէր. «Որպէս յիշակուեացն» պատմուչքեանց Հերոզոտեայ (Հերոդոտուայ) է «ուսանել». այս երկրայելի իրականաց անունն քանի մի ձեռագրաց մէջ գրուած է Երիկեայց, զոր բանասէրք իմանան Երեկորեայց այսինքն Արեւմտականաց. ընդ հակառակն մեր հնախօս ինծիճեան Հայրն՝ Իրերական և հիւսիսային կարծած է:

Ա. գրոց մէջ (ձձդ) Երոզոս յիշատակ մի կ'ընէ Ասորեստանեայց, և կարծել տայ թէ առանձինն

այլ գրած է այն մեծ ինքնակալութեան պատմութիւնը, մանաւանդ որ իր անուամբ յիշէ Սըրիստոսէլ Նինուէի պաշարումը, որ չի դառիր իր ծանօթ ինն գիրք պատմութեանց մէջ. անտարակոյս անոր մէջ պիտի ըլլային Հայոց յիշատակներ. իսկ ծանօթ եղածին մէջ կան քանի մի յիշատակք, որոց զլիաւորն է Հայոց և Փոսիւզացոց համացերութիւնն. նա զՀայս ի Փոսիւզացոց ծագեալ համարի. գիտնականք զանոնք ի Հայոց կ'ըսեն. երկուքին այլ տէրութիւնքն ժամանակաւ անտարակոյս իրարու սահմանակից էին և սովորութեամբք այլ նմանք. ինչուան այսօր եղլիւրածեւ գլխաբկն (ինչպէս Վենետկոյ դքսից) փոխգակակն գրակ կ'ըսուի. Հոմայեցոց զրամոց և քանդակաց վրայ այլ Հայոց ազգն այլ ձեւ գտակով ներկայացուի: Վերոյիշեալ Խորենացոյ ըսածը՝ Թովմաս Արծրունի այլ յիշէ (Ս. ա). «Ըստ ասացելումն Հերոզոտեանցն». բայց կ'երեւի թէ Ս. Եպիփանու գրուածներէն առած է: — Երոզոստի անունն մերձաւոր և իրմէ հին՝ զեցարան և տեղագիրն է մեր երկրի դրացի, ԵՐՈՒՄՈՍ ('Ηερóθωρος) Պոնտացի ի Հերակլեայ քաղաքէ, որ իր հայրենեաց վրայք գրած է, նաև այն կողմերու Մակրոն կոչուած ազգի վրայօք: Իր գրուածներէն միայն հատուկտիրք մնան, որոց մէկն է, թէ «Կովկաս՝ Հայոց երկրէն մինչև ի» «Կողբիս ձգուի», ('Από της Ἀρμενίαν χῶρας ἕως Κολκίον¹):

Քրիտոսէ առաջ Ե. դարու մէջ ապրած է Միլետացի ՍՐԻՍՏՍՄԻՄՈՍ լուսուորն, որոյ համար գրէ Երոզոս (Ե. իք) թէ պղնձէ աշխարհացոյց տախտակի մի վրայ ցուցած ըլլայ Սպարտացոց թագաւորին զՀայաստան՝ իբրեւ շատ անասուն մտուցող երկիր. ինչպէս և Փոսիւզիա, որ քան զամէնն աւելի վարսակ (avoine) հասցընէր: — Քիչ առաջ քան զԵրոզոս՝ ԽՍՐՈՆ (Χάρων) Լուսկալիեցի, որ

Պարսից և Եթովպացոց պատմութիւն՝ գրած է: — Իրմէ քիչ վերջ ԿՏԵՍԻԱՍ (Κτησιάζ) Կնիդացի բըժիշկն, որ Պարսից արքունիքը կենայով՝ անոնց և ուրիշ արեւելեայց վրայօք երկար գրած է, և յատկապէս Հնդկաց և Ասորեստանեայց: Ասոր գրածները համառօտ ամփոփած է Փոս իւր Հագարաւնատեան գրոց մէջ. իսկ իրմէ առաջ յիշողաց մէջ կարճ կտորներ կան:

Ստոնցմէ վերջը Քրիստոսէ առաջ Կ. դարուն մէջ շատ պատմագիրք և տեղագիրք կան, որոց գերագոյն է աշխարհահռչակն ՊՂԱՏՈՆ: Թէ և ոչ յատուկ պատմութիւն գրած ըլլայ, բայց մեզի շատ հաճոյական է Արայի մահուան այլարանական պատմութիւնն և տեպեանց յիշատակն իր գերագոյն գրոց՝ Փեդրոնի մէջ, էր անուանելով զմեր գիւցագն: — Իրեն պէս աշակերտ Սոկրատայ իմաստասիրաց գերագունին՝ է նոյնպէս զեղեցկարանն և նոյնպէս հանրածանօթ Աթենացին ՔՍԵՆՈՓՈՆ (Ξενοφών), ամենուն ծանօթ է մեր Երուանդեան Տիգրանի վրայ վիպասանօրէն գրուածն իր Էյիւրոսաւարգ (Cyropædia) կոչուած գրոց մէջ, որ կըրնայ օրինակ ըլլալ նոր դարուց արձակարան վիպասանից: Ոչ պակաս պիտանի և հռչակաւոր և աւելի մեզ կարեւոր է իր Նանանէ Բիւրոն Յոյն գորաց զիրքն, յորում Հայաստանի՝ (գոր կըտրելով անցան ի Պոնտոս) շատ աշխարհագրական և բնակչաց ստիորութեանց տեղեկութիւնք կան, որոց մէկն է Հայոց զեանափոր բնակարանաց ըստօրագրութիւնն և սպրուտան շատ անգամ յիշուած և կարդացուած: Մեր օրերում այլ առջի գրուածն թարգմանուած և տպագրուած է հայերէն ի Միսիթարեանց վիեննայ, 1843:

1. Միթէ զայն պատմիչ կարգար Գր. Մագիտորոս, որ իր թիշթոյ մէջ առ Աբրեհիմ կըսէ թէ Եթովպացոց պատմութիւնն այլ ուրիշ ազգաց պատմութեանց հետ կարդացել էր:

Ըստ ոմանց՝ ասոնց ժամանակակից, ըստ այլոց քան զԵրոզոտ անգամ հին, համարուի ՔՍՍԵՆՈՓՈՆ (Xsivos) Լիւդացին, որ մոզոց վրայօք գրած է, տեղագրութեամբ այլ վկայէ Հայաստանի մէջ լինի մի տեսած ըլլալն. զոր յիշած է ԵՐԱՏՈՍԹԵՆԷՍ (Ἐραστοσθενής) աշխարհագիր յՊ. դարու Ն. Ք. անկէ այլ առնելով աւանդէ Ստրաբոն (Ա. գ): Ինքն Երատոսթենն այլ տեղագրած և տեղաշարած է. և յիշէ Ստրաբոն (Բ. ա), որ ի Տապակոնէ մինչեւ ի գրունս Հայոց 1100 ասպարէզ՝ հաշուած է: — ԱՆԱՔՍԻՄԵՆ Լանդաակեցի, ժամանակակից Մեծին Աղեքսանդրի, որոյ վարքն այլ գրած է. գրեր է նաեւ Պատմութիւնս Յունաց և Բարբարոսաց, որք ըստ մտաց Յունաց՝ էին Ասիացիք: — Աղեքսանդրի աշխարհակալութիւնք պատմողներէն մէկն այլ է իր ուղեկից Կալիսթրոն, գոր և ինքն սպաննել տուաւ: Թո՛վմաս Արծրունի յիշէ զսա, անուշա Աղեքսանդրի առասպելախառն պատմութեանն առած, որոյ այլեւայլ հեղինակք կան. մին Եսոփոս կոչուած ըստ ոմանց՝ թարգմանուած է ի հին թարգմանչաց մերոց և տպագրեալ ի Ս. Ղազար, 1842: — ԵՓՈՐՈՍ (Ἐφορος) կոչուցի, ի Կ. դարու Ն. Ք., գովութեամբ յիշուած պատմիչ, որ գրեր էր Յունաց պատմութիւն մի 30 գիրք բաժնուած, ամենն այլ կորսուած. միայն քանի մի վկայութիւններ գտուին առ Սուրբատայ և այլոց, որոց մէկն յիշէ Պոնտոսի արեւելակողման և Հայաստանի արեւմտակողման ազգեր, Խողտիք, Տիրարենք, և այլն, որով հաւատնական է յիշելն և զՀայս:

ՄԵՂԱՍԹԵՆԷՍ (Μεγασθενής), զոր Խորենացի (Բ. ը), և Եւսեբիոսի ժամանակագրութեան թարգմանիչ մեր՝ սխարմամբ չեն ճանչցած անձն և պատմիչ, այլ կարծեր են սոճական կոչում մի Նարուզոզոնտորի ընծայուած, և թարգմաներ են ինչ որ յունարէնն նշանակէ, Մեծագոր: Սա գրած է Հընդ-

1. Ասպարէզն հաշուի 175 Չափ, (mètre).

կախան պատմութիւն, (անձամբ դրկուած ըլլալով ի Հնդկիս ի Սելեւկիոսէ՝ Նիկանովրէ), արեւելեան ազգաց յիշատակօք խառնած. այս այլ կորած է: — Խորենացի (Բ. ք) այդ Բարեկացոց թագաւորին համար ըսուածը կ'ընծայէ ԱԲԻԻՒԵՆՈՍԻ ('Αβυδηνός), Սյս Հեղինակիս ծանօթ բայց կորուսեալ գործն է Ասորեստանեաց պատմութիւն մի. յորում՝ ըստ Խորենացոյ (Ա. հ գ) մեր հին այկապանց յիշատակներ այլ կային: Ոմանք Բերոսոսի աշակերտ համարին զսա, գուցէ և ազգակից, թէ և գրածին մնացորդն յունարէն է, որոյ հայերէն թարգմանութիւնն յԵւսեբրիոսի ժամանակագրութեան՝ մեծ լոյս տուաւ Եւրոպացի գիտնականաց, վասն զի Եւսեբրիոսի բնագիրն այլ պակասաւոր էր: Երկու գար առաջ լսուեցաւ թէ Սքիւդեսոսի բնագիրն գտուեր է Իտալիոյ գրատան մի մէջ, բայց ստոյգ բան մի չյայտնուեցաւ: Աննիոսեան Բերոսոսի հետ Մեգասթենի անունն այլ Մեղաքեկ գրուած է փոխանակ գ տառի: Սյս բանս կրնար օգնել այն կարծեաց՝ թէ այդ յիշատակն հայերէն գրուած ըլլայ, յորում՝ շատ հեղի ձեռագիրս չիտթին գ և դ տառք. ինչպէս Խորենացոյ յիշած (Բ. Ժգ) փղեղեոսիս այլ, որ է Հաւանօրէն փղեղեոս Տրադիակացի (Փլեչոն), որ յ'Բ. դարու Քրիստոսի կ'ապրէր, զոր Խորենացի երբեւ վկայ յիշէ (Բ. Ժգ) մեր Ա. Արտաշիսի գործոց և մահուան:

Մեգասթենի ժամանակակից շատ հռչակեալ Եգիպտացի քուրմ պատմիչ մի եղած է, ի Յունաց ՄԱՆԵՌՈՎՆ (Μανέθων) կոչուած, զոր յիշէ և Խորենացի (Բ. իգ). իր գլխաւոր գրածն էր Եգիպտացոց պատմութիւն, արեւելեան ազգաց յիշատակօք, և շատ յարգի ի նախնեաց. բայց իր անուամբ խորագրուող գրողք այլ եղած են: Մերձաւոր ժամանակաւ կամ դար մի եւս յետոյ նշանաւոր է պատմիչն Աղեքսանդր Կռնեղիոս ԲԱՁՄԱՎԷՊ (Πολλύσιωρ), որ սովորաբար այս մականուամբն յիշուի, ինչպէս և ի Խորենացոյ (Ա. դ), և յայտնուի ա-

նուամբն որ շատ բան պատմած է. որոց գլխաւորն էր 42 գիրք ընդհանուր պատմական և աշխարհագրական գիտելեաց, զստ ի յատուկ Հոսովմայեցոց և Հրէից պատմութեանց: Ոմանք զսա հայրենեօք Փառեգացի համարին: — Սյս ժամանակներս ապրած է և ԱԳԱԹԱՐՔԻԻԵՍ ('Αγαθαρχιδης) Կնիդացի, որ գրած է շատ ազգաց պատմութիւններ, և յատուկ 40 գիրք Պատմ. Ստիոյ, 49 գիրք Պատմ. Եւրոպիոյ, ըստ ոմանց և Պատմութիւնն Պարսից և Փոռեգացոց. բայց այլք զստնք ուրիշ նոյնանուն Սամոսացոյ մի համարին: — Ա. Արտաշիսի աշխարհակալութեանց վրայ գրողներէն կամ յիշողներէն (իրան թէ ոչ) Խորենացի անուանէ զՊոյիկրատես. այս անուամբ յիշուի այլեւայլ գրողք բայց ոչ իբրեւ պատմիչք: — Ասոնցմէ առաջ թուի Պափոյրանոս, որ մեր Աղեքսանդրի Պատմութեան թարգմանութեան մէջ յիշուի իբրեւ յիշող դաստիարակաց Աղեքսանդրի. « ի Չորրորդում գիրս իւրում աւե » ևսգան ճեարագետ Պատմութեանցն: — Գուցէ ժամանակակից է կամ յ'Բ. դարու Ն. Ք. ԵՒՊՈՒԵՄՈՍ ('Ευπόμενος), որոյ Հրէից Պատմութեան յիշէ Եւսեբրոս՝ Արրաշամ՝ Նահապետի արտերագմիլն ընդ Հայոց. որ է ըստ Ս. Գրոց (Ծննդ. Ժդ) իր 318 ընդոմին ծառաներով ազատելն զՂուփա ի գերութենէ քաղաքաւորայ քագաւորի Էլիսայ և թարգաղայ քագաւորի Ազգաց. զայս յետինս ոմանք ի մեկնչաց համարին թագաւոր Հայոց, և զՊարգաղ անունն թորգում: Յայտնապէս հետաքրքրական յիշատակ մի է այս, և վկայութիւն հին առընչութեան Պարսից և Հայոց, եթէ և ստոյգ չըւար պատմութիւնն: — Ասկէ առաջ է ժամանակաւ Պոյիքիոս գերազնչակ պատմիչն Յունաց, որոյ բազմաթիւ գրքերէն հինգ միայն մնացած են:

4. Քրիստոսի թուականէն դար մի կամ կէս դար առաջ գրող շատ նշանաւոր պատմիչք և աշխարհագիրք յոյնք և հոսովմայեցիք եղած են, և

գրուածքն այլ մնացել են մեծ մասամբ, որք և հանրածանօթ ըլլալով՝ շատ ըլլայ ոմանց անունները միայն յիշել. ինչպէս Կաստոր Հոռպացի՝ որ յիշէ զԱլեքսոս և զԱրեսոս. — Դիոնիսիոս Աղիկաւացի. — Հոմմայեցիքն Մարտարոս, Տրագոս Պոմպեոս, և գերագոյնքն՝ Յուլիոս Կեսար և Տիտոս Լիվիոս: — Նոյնպէս գերահռչակն ի Յոյնս Պրոտարքոս բազմազմուտ և ախորժարան, որ շատ կարեւոր ծանօթութիւններ տայ մեր Արշակունեաց վրայ. թարգմանեալ և տպագրեալ հայերէն ի Ս. Ղազար, 1834: — Ստրաբոն, աշխարհագրաց թագաւորն, հայրենեօք մերձաւոր Հայոց, զի Ամասիացի էր. անբաւ տեղեկութիւն ընծայէ՝ զատ յայլոց Փոքր Ասիոյ և Հայաստանի վրայ պատմական և աշխարհագրական, մանաւանդ իր ժՅ. և ժԹ գրոց մէջ:

Փրկչական թուականին Ս. դարուն՝ ոչ քրիստոնեայ պատմարան և աշխարհագիր հեղինակաց մէջ՝ որոց քով հայկական յիշատակք գտուին, նշանաւորք են Յովսէպոս Եբրայեցին, Դիոդորոս Սիկիլիացիին՝ յիշեալ և ի Խորենացոյ (Գ. ա), Պիլիոս Լատին բազմազմուտ բնախօսն, Պաղոմեոս երեւելի աշխարհագիրն յետ Ստրաբոնի, ուսկից քաղուած է Խորենացոյ անուամբ հայերէն Աշխարհագրութիւնն. — Հոմմայեցի պատմիչքն Վայ. Մարտիւնոս, Կոչրոսիոս, սրամիտն և սրալեզուն Տակիտոս, և այլն: — Բ. դարու այս տեսակ գրողաց մէջ յիշելիք են Ապպիանոս և Արրիանոս, որոց քով այլ գտուին մեզ պիտանի յիշատակք, և Կեփաղիոն, զոր Խորենացի երկու հեղ յիշէ (Ս. ե. ժը) իբրև շատ հին պատմութեան աւանդող. որոյ հետ անցողաբար յիշենք իրեն յիշածներէն (Բ. ժգ) երկու անձանօթ պատմիչներ եւս, Եռագարոս և Կամարոս, զորս ի վկայութիւն բերէ Ա. Արտաշէսի վրայ աւանդածին: — Արժանաւոր զրիչք քննելիք են այս և յաջորդ դարուն՝ Յոռատիկոս, Դիոգիլիկոս Լայերուացի, Յոյնք. և ի Լատինաց՝ Մոռտոնիոս, Փլոյոս, և շատ մի կայսերական անուանեալ պատմիչք, ինչպէս

Վեյ. Պատերկոչոս, Սեքստոս Ռոշիոս, Կուպետոլիկոս, Հերոլիիանոս, Սպարտիանոս, Լաւրերոսիոս, և այլն. և պիտանի քան զշատս Դիոն Կասիոս (Dion Cassius Cocceianus): — Յաջորդ դարէն և ցկէս Ե. ին գտուին դեռ հեթանոս պատմիչք, ինչպէս Պոլլիոն Տրեքեղիանոս, Լաւրերոսիոս, Եռտաուսիոս, Աշրել. Վիկտոր, Եռնարիոս՝ պատմիչն վարուց և հանձարոյ այն ժամանակի ճարտասանաց թագաւորին՝ որ է հայ և քրիստոնեայ Պարոյրն կամ Վրոյր (եթէ այսպէս կըրնանք դարձընել յունարէն անունը Προαιρέσιος). Վիգետիոս, Չոսիկոս, Մուչպիկիոս Մեկերոս, Ամ. Մարկելիկոս՝ որ կարեւոր տեղեկութիւններ տայ մեր Պապ թագաւորի և ժամանակին վրայ, և այլն:

Իսկ այս երկու դարուց՝ Գ. և Ե. որքան քրիստոնեայ Ս. Հարք և այլ զրիչք և պատմիչք եղած են և որոց քով գտուին Հայոց յիշատակք, ծանօթագոյն են և ոմանք արդէն յիշեալք, ինչպէս Ափրիկանոս, Եռնարիոս Կեսարացին՝ հայր եկեղեցական պատմըաց, և իրեն հետեւողքն Սոկրատ, Սոզոմեն, Թեոդորետոս, Ռոշիլիկոս, Ռոսիոս. յետ որոց Եռագր, Պարքարեան այսինքն Չատիկակա Մանակագրութիւնն (Ե. դարու), Թողլով մեր ասնելի և պաշտելի Յոյն եկեղեցոյ անմտանալի Հարքն, Բարսեղ, Գր. Աստուածաբան, Ռսկիբեան, որոց քով մէկ մէկ կերպով գտուին յիշատակք մերայնոց:

Ծ. Հետեւեալ (Զ.) դարէն (յորում գրէին և օտարազգիք՝ գոթացին Յորնակոն, Գր. Տոռպացի, փոսնկ եպիսկոպոս), սկսի հազարամեայ Բիզանդացի Պատմչաց երկար շարն մինչեւ ի ժՆ. դար, որոյ կիսում վերջացաւ արեւելեան կայսերութիւնն Յունաց: Այդ երկար շարէն յիշենք նախ յատկապէս Բիզանդացի կոչուած Մոսիսանոսն, որ իրեն հանրագիտակ Բառարանով շատ պիտանի տեղեկութիւններ կ'ընծայէ, հաւաքելով ի նախնեաց. — Աղարիս, Թեոփիլակոս, Պետրոպիոս՝ Յուստի-

նիանսս կայսեր բազմակերպ գործոց վրայ գրող, յորում կան շատ հայկական յիշատակք. և հետ գհեաէ Սիւնկերոս, Նիկիտորոս, Թեոփանես, Մարտի Եռտիքիոս ազգաւ արար, Կամենիստ, Գեկեսիոս (Թ. դար), արքայազարմն Կոստ. Պերսիկոստիկ, և հաշակեալն փոտ՝ շտեմարան բազմաթիւ նշխարաց իրր 300 հին պատմաց, որոյ համար իր հաւաքածն կոչուած է Բիւրաւաւտեակ (Myriobiblon), ուսկից քանի մի բան յիշեցինք և շատ յիշելիք այլ մեան. — Սուրբաւ՝ նման Ստ. Բիւզանդացոյ շատ բան ի նախնեաց ատեր աւանդէք է. Լեռն Սարկաւագ (Ժ.), Լեռն Գրաւատիկոս (Ժ.), Յովն. Սկիշիտե (ԺԱ.) (Σκυλίτης), Զուարաս (ԺԱ-Բ.) (Ζωναρᾶς), Անեա Կամենեա, Կեդրիկոս (ԺԱ.) (Κεδρηός), Նիկիտոր Պրիւնենիոս (Βρυσένιος), Միքայել Ասալիտք (ԺԱ.), Կոստ. Մաւնսկր Կիկենաւոս (Κίνναμος), Նիկիտաս Խոնիարեա, Գեորգ Պախիսերե (Παχυσερής), Նիկիտոր Գրիգորաս (Γρηγορᾶς), Կոստ. Կաւերակոզեկ, Գեորգ Գեկիստոս (Δεμιστός), Գրիշիս (Γλωχᾶς), Դոշիս (Δούχας), Խալիփոկի փրակիկ (Φραυκίης), և այլն, և այլն:

Յօտարագգի մանաւանդ Լատին պատմաց այս դարուց՝ յիշենք Իսիդոր Սիւրիպցիկ (Ե. դար), Բեդա (Ը.), Անատաս Գրապետ (Թ.), Արաւ Պրեւացի (ԺԱ.), Եւստոր պատմահայր Ռուսաց (ԺԲ.), Գալենեկո Սպանիացի (ԺԳ.), Մարկոպոլ (Marco Polo) Վենետիցի, նախաշաւիղ եւրոպացի ճանապարհագրաց (ԺԴ.), և այլն:

6. Յետ և հետ Բիւզանդացի պատմըաց հարկ է գատել և Խալսարաց Պատմիչքն, ինչպէս Գաւ յիշուո Տիւրացի, այսինքն եպիսկոպոսն Տիւրոսի, Ժոննիկի, բարեկամ և պատմիչ Ս. Լուդովիկ թաւաւորի Փռանկաց, ծանօթ մեր Ա. Հեթմոյ, (ԺԴ.). Գրոշասար (Froissart) (ԺԴ.), ծանօթ և գրող Հայոց յետին թաւաւորին Ե Լեռնի վրայ. որոց գործոց հաւաքումնը տպագրուած է ի Բարիզ վայելուչ

և ճօխ կերպով, և որոց շարքին մէջ դասած են և մեր Մատթ. Ուսհայեցին, փռանկ թարգմանութեամբ հայագէտ Տիւրոբէի, և այլ Խալսարաց վրայօք մերհայրեաց գրուածներ: Արարագիր քրիստոնեայ Ասորի հեղինակք՝ ծանօթք և ծանօթարարք Հայոց՝ են Միխայել պատրիարք նոցա, բարեկամ մեր Ն. Ենորհալուոյ և յաջորդացն, որոյ գործն թարգմանուած է հայերէն յ'ԺԳ. դարու, և ի հայերենէ թարգմանեալ ի փռանկ, ի նորումս. Էլ Մաւին Գէորգ (Elimacin), Պէկ Սմիտ (ԺԳ.), Գրիգոր Ապուրֆարաձ որ և Բարեքրեոս պատմիչ և բժիշկ (ԺԳ.), Ապուրիկոս Խալայել Գամակացի՝ Համա քաղքի իշխանն (ԺԳ.) (1273-1332). ասոնց գործերն թարգմանուած են ի լատին և ի փռանկ. և այլն¹:

7. Արժանապէս Բիւզանդացոց յաջորդեն՝ և ըստ մասին գերագանցեն ԱՐԱՅԱՅԻ ՊԱՏՄԻՉՔ, իբրեւ ծանօթագոյնք Արեւելեան ազգաց և աշխարհաց, և մերձաւորք Հայոց առաւել քան սահմանաւ երկրի՝ իրենց երկրակալութեամբ, անմիջապէս յաջորդելով Սասանեան Պարսից, և տիրելով աւելի կամ նուազ ուժով՝ մինչեւ ցարչաւանս Սելջուկեան թուրքաց և ապա թաթարաց: Բազմաթիւ են և սոցա Պատմիչքն, յորոց յիշեմք անուանի-

1. Միխայել Ասորի պատրիարքին ժամանակադրութեան կորուսեալ բնագրին ամբողջութիւնը զբանուեցաւ վերջերս ի Միջագետս, և Յ. Մ. Շապոյ տտորագէտ փռանկ զիտունն (որ ասորական բազմաթիւ նշանաւոր հրատարակութեամբք ծանօթ է զիտական աշխարհի) հրատարակեց զայն անցեալ տարի (1900) զեղեցիկ նմանահանութեամբ, և հանգերձ փռանկերէն թարգմանութեամբ (Էռնէստ Լըռուի քով), ուր կը յիշուին նաեւ մեր հայերէն բնագրին տարբերութիւնքն, և ուր Ս. Ղազարու վանացո սպաղարութեան փռանկերէն յառաւարանութեան համառօտութիւնն զբուած է: Ստուար երկասիրութիւնս՝ շատ մի հմտական ծանօթութեամբք նոխացած է:

հայապ. Ա.

ներն, Պեղազօրի (Թ.), որ զրեց Արարացոց աշխարհակալութեանց վրայ, և գլուխ մի յատուկ Հայոց նշանակեալ. նոյնպէս և ժամանակակիցն՝ Էլ Սարիտի Ապու Ապրիլա, և Եարքտի, երկուքն այլ յԹ. դարու, յետինս Արարացոց զԱսորիս նուաճելուն պատմութիւնը գրող (Ծորուձ Էլ-Շաւ) . — Դապարի Ապուձաֆար (838-922) . — Էլ Մասուտի Ապու Հասան (Փ.) . — Իպն-Հազալ Ապու յիսսեմ (Փ.), հեռաքննական ճանապարհագիր . — Իպն Ֆուլան (Փ.), Գոտանս Ապու իշֆարաձ (Փ.), Պայքի աշխարհագիր (Փ.), Միւզգատտուխի Անմետ (Փ.), նոյնպէս աշխարհագիր . Ապիշֆարաձ Էլ-Ճաուզի (Փ.), նախապետաց պատմութիւն գրող . Գազուհիևի Չաքարիա աշխարհագիր անուանի (Փ.), որ իր ընդարձակ գիրքն անուանեց «Չարմանալիք Արարածոց», Էննաիպի մահլուզար . — Իպն-Էլ-Էրիբ (Փ.), նշանաւոր գրող ընդհանուր պատմութեան և յատկապէս Արարաց . — Եարուչի (Փ.), հեղինակ պիտանի աշխարհագրական բաւգրոց . Էլ-Վարտի (Փ.), աշխարհագիր բնապատում . Ապ-իշր-Ֆաշիտ (Փ.), աշխարհագիր . Ապ-իշր-Ֆարա (Փ.), նոյնպէս աշխարհագիր . Մանսուրի (Փ.), տարէգիր . Միրխոնտ (Փ.), հոշակաւոր պատմիչ. նոյնպէս, և աւելի Մարրիդի թարքտտիև, († 1441), շատ գրուածներ ունի, որոց մէկ նշանաւորն այլ է Եփիպտոսի տեղագրութիւնն: Աւելի նորագոյն գրիչք, Շեմսիւշտիև (Փ.), տիեզերագրութեան հեղինակ. ինչպէս և աւելի ծանօթն Համի Գալֆա (Փ.) նմանօրինակ գրութեամբ, զոր և գրոց անուեն յայտնէ՝ Ճիհան-Նիւս (Աշխարհագրատում) . նման իմն անոր և ընդհանրական պատմագիրն Միւննիմիմ պաշի (Փ.-Փ.) . և այլն, և այլն:

8. Այս ամէն պատմագրողաց ազգակից և դասակից զեւ շատեր այլ եղած են և կան, զորս կամ մաւ կամ ակամայ չեմք յիշած . նոյնպէս բաւորովին թողումք նոր ատենի եւրոպացի հնակրկիտ հեղինակները, որք մանր քննութեամբ շատ լոյս տուին

հին պատմութեան և շատ անծանօթ գրուածներէ կարեւոր գիտելիք հրատարակեցին, թէ՛ զուտ պատմական և աշխարհագրական և թէ՛ որ և է տեսակ հնաբանութեան, կրօնից, սովորութեանց, ծիսից, գիտութեանց, արուեստից և այլն . յորս քիչ շատ և Հայոց ազգիս գործոց, ճարտարութեան, վաճառականութեան վրայօք, յորս աւելի կամ պակաս լաւ դատողութեամբ տեսութիւնք և ծանօթութիւնք կան, և տարուէ տարի հրատարակուին, թէ՛ առանձին գրքերով և թէ՛ պարբերական թերթերով և օրագրութեամբք, զորս ամփոփել, քաղել և դասակարգել՝ եթէ անկարելի այլ չէ՝ սակայն երկար աշխատութեան և ժամանակի գործ, միանգամայն և շատ կարեւոր՝ Հայոց ազգին անցեալը և ներկայն իր բնաշխարհին մէջ և ի տարաշխարհի և անոնցմէ առած և անոնց տուած հանգամանքք ճանաչուլու համար . և դատելու և կշռելու թէ՛ Հայն յընդհանուր պատմութեան, որ է ըսել յընդհանուր մարդկութեան կամ ազգաց մէջ՝ ի՞նչ գիրք, ի՞նչ կերպարանք, կիրք և գործք ունեցեր է, և ի՞նչ գործակցութիւն ընդ օտար ազգաց իր երկար տեւողութեամբ 25-30 դարուց ստոյգ պատմութեան:

Այս յետին կէտս՝ նշանաւոր գիտելիք մ'է մեր ազգի և հայրենեաց, այս ինքն իր երեւոյթն հնագոյն ազգաց մէջ, և իր յիշատակն հնագոյն պատմելչաց մէջ, որոյ համար յիշեցիւք այնքան Պատմիչներ և որոց հնագոյնքն հազար տարւով յառաջ են քան զՄասիսի անուանեալ հեղինակս և պատմիչս մեր՝ (թողով զամենահինն և զամենապատին՝ զՍուրբ Գիրս) : — Արժան էր յարել Պատմչաց և զարձանագիրս քանդակեալս ի քարինս, յազիւս և ի մետաղս, մանաւանդ յանուանեալ բեւեաագիրս՝ որովք ճոխագոյն է Հայաստան, յատկապէս Այրարատ և Վասպուրական . բայց զեւ լաւ քննութեան կարօտ համարիմ այդ տեսակ գրութեանց ծանօթութիւնը:

Այս երկար գրուագէս, որ է օտար ազգաց և հին հեղինակաց յիշատակն Հայոց և Հայաստանի.

կարծեմ անաչառ մտաց այս հետեւութիւնն կամ
 ամիփուռն պէտք է ներգործէ, թէ, Ս. այդ Հայ
 ազգն՝ ոչ միայն հին է (զի և ամենայն ազգք կըր-
 նան ըսուիլ հին), այլ և զգալի և իսկական կեր-
 պով երեւցեր է ի վաղ ժամանակաց, և որպէս սո-
 վորութիւն է հիմայ մերոցս ըսել՝ թեր մի կամ
 դեր մի խաղացեր է աշխարհիս թատեր վրայ հա-
 զարաւոր տարիներով յառաջ քան այժմու տերու-
 թեամբ, գիտութեամբ, շքով և շառաջմամբ ծանօթ
 եւրոպական ազգերն, որք ոչ միայն որդիք այլ և
 թոռուք կրնան ըսուիլ մերոցս, ըստ ընթացից
 ժամանակի: Բ. թէ ոչ աննշան եղած էր Հայն
 ի միջի հին ազգաց. եթէ ոչ իբրեւ զՔարեւացիս,
 Քաղդէացիս, Եգիպտացիս, Պարսիկս, և Յոյնս,
 այլ շատ աւելի քան զայլ և բազմաթիւ ազգս
 և լեզուս՝ որոց անուանք յիշուին ի զիրս սուր-
 բըս և արտաքինս, այլ արժանաւոր յիշաատկ մի
 չեն թողած և ոչ ստոյգ պատմութիւն: Գ. զի-
 աելիքն է որ, Հայք ի հնուց հետէ մինչեւ ցայժմ՝
 գէթ 3000 տարի ճանչցուած են, և գոնէ Նարու-
 զոգոնտորի և Կիւրոսի օրերէն մինչեւ ցայսօր,
 25-30 դար՝ անընդհատ անուամբ և իրօք կեցեր
 և կան և մնան, յետ այնքան հին և նոր պատա-
 հարաց և հալածանաց յօտարաց: Եւ հետեւաբար,
 Գ. որ ի հարկէ աննուած և դատուած են ի
 մերձաւորաց և հեռաւորաց, որպէս և այժմ, և ոչ
 անարգ գաուած, և ոչ անարգելի՝ որպէս յովանց
 ըստ բաղդի բերման և ըստ հարեւանցի գատման
 կամ կրից: Ս. յս բանիս հաւաստիք և ցոյց ըն-
 ծայեն զգօն մտաց՝ զատ յայլոց՝ 1500ամեայ շարք
 մի Ազգային Պատմչաց, որոց ոճն և արժէքն յի-
 շեցինք ի սկզբան բանիցս, և որոց իւրաքանչիւ-
 րին առանձին ծանօթութիւնն ժամանակագրական
 կարգաւ սկսինք յիշել համառօտ քննութեամբ. և
 ըստ կարգի ժամանակի և ըստ պատշաճի գրու-
 թեանն՝ Պատմական մասեր 400 թուով կամ Յօ-
 դուած քաղած կազմած ենք ՁԶԱՅԱՊԱՏՈՒՄՍ (մասն
 Բ) մինչեւ ց՝ժՁ. դար:



Բ Ն Ի Կ

Պ Ա Տ Մ Ի Զ Ք Հ Ա Յ Ո Յ

1. Ա.Գ.Ա.Թ.ԱՆԳԵՂՈՍ

Հին ազգային մատենագրութեան ծանօթք
 գիտեն՝ և իբրեւ տաղին ազգային պատմիչ ճանչ-
 նան զԱզարակեղոս. օտար անուն մի, յոյն լա-
 տինացեալ. իսկ անձին ազգութիւնն թերեւս դեռ
 ոչ բացայայտ. ոմանք ընդունին դնա լատին կամ
 Հոտվայեցի, որոց մէջ շատ անձինք կրած են այդ
 անունը, և մեր պատմիչէն առաջ՝ ինչուան Հոտվ-
 մայ Պրիսկիլլեան Գետնադամբանոց մէջ Ազա-
 թանգեղոս մի իր անեկնունչակ (dulcissima) Ռու-
 փիկն դօտրիկն աւանդած է ի քնարանս նախնի
 քրիստոնէից. ուրիշ Ազաթանգեղ մ՝այլ նոյնպէս
 իր արժանաւոր (benemerita) դօտրիկը. Աստիք
 յայտնի բաներ են գիտնոց. բայց մենք մեր ազ-
 գային գաղտնարօք լցուած՝ գրեթէ յանկարծ զար-
 մանքով բռնուեցանք օր մի, երբ մեր պանդխտու-
 թեան կղզեկէն քիչ հեռու ցամաք երկրի ազարա-
 կոց մէջ շրջագայելով, զիւզական եկեղեցւոյ մը
 դրան դուրսը պատի մէջ ազուցած լատին արձա-
 նագրութեան մի հանդիպեցանք, զոր ոմն Անտոն

Ագաթանգեղոս նուիրեր է հոսվմայեցի նախարարի¹ մի :

Մեր հեղինակն հայերէն գրութեան մէջ զինքն Հոսվմայեցի յայտնէ, ըսելով. հրաման եկաւ ի Տրդատայ « առ իս ոմն Ագաթանգեղոս, որ ի քա- » ղաքէ ի մեծն Հռոմայ, և վարժեալ հայրենի ա- » րուեստիւ հռոմնարեկն և յունարէն ուսեալ դպրու- » թիւն, և ոչ ինչ կարի անտեղեակ լեալ ձեռն- » արկութեան նշանագրաց », և այլն: Զենովբայ պատմութեան մէջ այլ (օրինակ մի) գրէ. « Ճար- » տարի ումեմն Ագաթանգեղոսի առն Հռոմէցոյ », յանձներ է Ս. Լուսաւորիչ մեր՝ գրել զՊատմու- թիւնն: Յայտնի է որ նախնական գրուածն այլ յունարէն եղած է. և սակայն եղած են գիտնա- կանք՝ որ Հայ համարած են զնա, առանց տա- րակուսելու այդ օտար անունէն, զոր բազում մասամբ հմուտ և մեր հեղինակին հայ և յոյն գրութիւնը լաւ քննող գիտնական մի համարի թէ՛ պատմագիր մեր իր այնպիսի շնորհաւոր և աւել- տաւոր բան մի գրելուն համար՝ ինքն իրեն կամ ուրիշներէ այդպէս յունարար կոչուած ըլլայ՝ (Ա- գաթանգեղոս) Աշեղաշոր բարի կամ բարեաց: Ե- ղած է մեր ազգային ոչ աննշան այլ և բազմա- հմուտ մատենագիր մի Ժ. Գ. գարու (Վանական վար- զպպետ), որ գէթ իբրեւ աւանդութիւն՝ Հայ հա- մարի զնա և իր հայրենիքն այլ (ի Հայս) անուանէ, և անկէց ծագած իր սեփական կոչումը:

1.
T. Praef. I. D.
V. F.
A. Antonius. A. F.
Agathangelus.

Ներուելի մեր անձնական զգացման՝ այս յիշատա- կիս և յիշատակարանիս աստ հրատարակութիւնը: Գիւղիին անունն է Santa Maria di Lugo, վիչէնցայի գաւառին մէջ, մերձ ի Թիւնէն:

Գրոցս նպատակէն գուրս ըլլալով քննելն և բա- ցատրել Ագաթանգեղոսի նախ ի՞նչ լեզուով գրելն և երբ թարգմանուին, որն առաջին ըլլայ հիմայ դը- տուած յունարենին և հայերենին. միթէ երկու եղած են հայերէն և յունարէն գրուածք. որչափ համաձայն կամ տարածայն են յոյն և լատինս. ի՞նչ նշանք, բառք և ոճք կան այդ երկու լեզուք գրութեանց մէջ՝ որ կարծել տան մէկմէկէ թարգմանուած ըլ- լալն, և երբ, և այլն: Ստոնց վրայ եղած կարծիքն և հաւաստիքը բացատրելն՝ երկար գրուածք պա- հանջէ. և այդպէս ըրած է շատ հմտութեամբ և հետաքննութեամբ ի մեր միաբանից մէկն, Հ. Բար- սեղ Վ. Սարգիսեան՝ այսպէս անուանելով իր գոր- ծը. « Ագաթանգեղոս և իր բազմադարեան գաղա- նիքն », 1890: Այլեւայլ օտարազգի հմուտք այլ, սկսեալ ի Բոլլանդեանց և ի հրատարակողաց Ս. Լուսաւորչի վարուց և զործոց յունարէնը, ոչ սա- կալա բան գրած են այլեւայլ լեզուք. և ամենէն ճոխ և հմտաբար վերոյիշեալն այն՝ որ Հայ հա- մարի զԱգաթանգեղ, և է գերմանացին՝ երբեմն իր բնիկ մականուամբ Boettiger կոչուած, այլ յետոյ յաճախ փանկերէն Paul de Lagarde. գրածն այլ է գերմաներէն, Agathangelus und die Acten Gregors von Armenien¹, neu he- raus gegeben von P. de Lagarde. Göttingen, 1887. որոյ երկար վաթսուս երեսէ աւելի Յառա- ջարանութեամբ լաւ քննութիւն և ծանօթութիւն ընծայէ, թէ և մեծաւ՝ այլ ոչ ամենայն՝ մասամբ ընդունելի:

Մեր պատմագրաց ցանկին մէջ տեսանք որ յետ Մար Արատայ առաջին Հայ պատմիչ գրուած է. ինչպէս անյարմար կերպով գրէ մեր Սամուէլ Ա- նեցի ժամանակագիր եւս. « Ասեն առաջին պատ- » միչ լինել ի սկզբանէ տրարածոց մինչև ի մար- » մնանալ Բանին Աստուծոյ Տեաան մերոյ Յիսուսի

1. Ագաթանգեղոս և Գործք Ս. Գրիգորի Հայոց:

» Գրիտոսի զԱգաթանգեղոս, որ և գրեաց զպատ-
 » ճառ լուսաւորելոյն զՀայս՝ Սրբոյն Գրիգորի » :
 Լաւագոյն կ'ըսէ Ղազար Փարպեցի ի սկզբան
 իր պատմութեան. « Սկիզբն առաջին գրոց Պատ-
 » մութեանն Հայոց. որում սկիզբն արարեալ պատ-
 » մեաց ստուգիւ այրն երանելի Ագաթանգեղոս » :
 Իրմէ առաջ ի Չենովրայ և ի Խորենացոյ սկսեալ
 գրեթէ ամեն պատմիչը մեր յիշեն զԱգաթանգեղոս :
 Խորենացի ի յիշելն զՍ. Նունէ (Բ. օգ) կ'ըսէ .
 « Արպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս » . սակայն
 մեր այժմու Ագաթանգեղի օրինակաց մէջ չկայ յի-
 շատակութիւն Նունեայ, որպէս և ոչ Մանեայ : Նոյն-
 պէս կ'իմացընէ Խորենացի (Բ. օգ) որ՝ Ագաթան-
 գեղ յիշած է Կոստանդիանոսի հաւատարոյն պատ-
 մութիւնը և Ս. Սեզրեաստրոսի պահուրախն հալա-
 ծանաց ատեն ի Սերապտիոն կամ Սորակտիոն
 լերին . այս յիշատակս այլ չկայ մեզի ծանօթ Ագա-
 թանգեղի մէջ : Արդ, թէ Խորենացոյ այս ըսած-
 ներէն և թէ ի Ղազարայ, հաւանական է որ Ագա-
 թանգեղոս շատ աւելի բան զրած է զՀայոց քան
 ինչ որ գտուի հիմայ թէ հայ թէ յոյն գրոցը մէջ :
 Չնոյն հաստատէ և Սիմոն Ապարանեցոյ ըսածն
 զՄարիրասայ և զԱգաթանգեղոսէ . (Տես երես
 721, յ'Բ մասն) :

Այ օք տարակուսի մեր նախնեաց որքան մեծ
 համարմունք և սէր ունենալուն Ագաթանգեղոսի
 պատմութեան, վասն զի իրենց հոգեոց Լուսաւոր-
 շին վարքն է, միանգամայն և իրենց ճշմարիտ
 կրօնից առաջին ընդարձակ վարդապետութիւնն,
 որոյ համար ինչուան Աւետարան Ս. Գրիգորի Լու-
 սաւորչի կոչուած է : Այ պակաս քան զքրիտոս-
 նէական վարդապետութիւնն յարգուած էր՝ ազ-
 գային պատմական յիշատակաց հետգոյն աւան-
 դօղն այլ ըլլալով . և այս երկու նկատմամբ այլ հորիկ
 է որ շատ ծանօթ և փափագելի ըլլար մերոյոց
 հեղինակին օրերէն : Բայց եթէ ինքն ժամանակա-
 կից է պատմածին և Տրդատայ ու Լուսաւորչի

հրամանաւ գրող, երբ հայերէն գիր չկար՝ ըստ
 հասարակ կարծեաց, ի՞նչպէս այդպիսի կարեւոր
 գիրք ընթեռնելի և հասկանալի կ'ըլլար բազմաց .
 միթէ Ս. Աւետարանաց պէս զայն այլ բերնուց
 հայերէն թարգմանէին . թէ արդեօք որ և է կերպ
 նշանագիր մի կար ի Հայս Գ. զարու մէջ, որով
 կարենար կարգալ կամ հասկանալ ճանչցողն և
 ուրոյն :

Ասոնք այլ մեր հիմակուան նպատակէն դուրս
 թողով, այս անտարակոյս է, որ ինչ կերպով
 այլ ըլլայ, այդ Ագաթանգեղոսի կամ Լուսա-
 ւորչի վարուց և վարդապետութեան գիրքն իրենց
 օրէն սկսեալ՝ ծանօթ և յարգի էր Հայոց, և նախ
 քան մեր Թարգմանչաց դարը : Ասոնցմէ առաջ,
 ըստ պատմութեան Մովսիսի Կաղանկատուացոյ
 (Բ. ա), երբ նախարարք Հայոց՝ զսոսլ գտուլ և երկա-
 րակեաց Եսայոյ արքունեաց հանգիսի մէջ ստի-
 պուեցան իրենց ցեղերուն աղտութիւնը և կարգը
 ստուգութեամբ ցուցընել, « Նոյնժամայն ի խոր-
 » հուրք բերեալ իշխանաց Հայոց Մեծաց, մասու-
 » ցին առաջի թագաւորին զԱգաթանգեղեայ պատ-
 » մութիւնն ցանկալի . և հրամայեաց ընթեռնուլ
 » և թարգմանել ի պարսիկ գիր և լեզու : Եւ իմա-
 » ցեալ՝ եթէ սկիզբն յԱրտաշէտ առնէ՝ ի նախ-
 » նոյն իւրոյ, առաւել զուարճացեալ և ներբողումն
 » գրոյն առնելով՝ գնէր ի վերայ աչաց իւրոց խան-
 » դադատելով : Եւ գտեալ ի նմա գիր տառն և
 » եօթն բարձի (Նախարարութեանց Հայոց), սկսա-
 » նէր ըստ այնմ՝ յարգարել զնրստ իւրաքանչիւ-
 » ըոցն ի սեղանն արքունի . հասանէ շորեքտասա-
 » ներորդ բարձն՝ Անգովկայ Սիւնեաց սեառն . և
 » նա հպարտացեալ՝ ոչ ինչ ճաշակեաց . և զգա-
 » ցեալ թագաւորին վասն այնր ոչ ինչ փոյթ լինէր
 » նմա » : — Երկար գրեցինք այս յիշատակու-
 թիւնը՝ երկու երեք բան անզրագարձներու համար .
 Նախ թէ՛ այդ նախարարաց ցուցած օրինակն մեր
 այժմու օրինակներէն աւելի և տարբեր բաներ ու-

ներ: — Երկրորդ, Շապհոյ նախնայն՝ այսինքն Սասանեան Արտաշրի պատմութիւնն, որ յիրաւի գտուի յունարենին մէջ հիմայ այլ, բայց ոչ հայերենի, գուցէ պարկեշտութեան համար այդ խայտառակ յիշատակը դուրս թողած են մեր նախնիք: Ինչպէս Պատմութեան սկիզբէն՝ այսպէս և վերջերէն այլ պակաս երեւի մեր հայերէն Ագաթանգեղոսն, եթէ զատ գրուած չէ Նոնէի ձեռքով Վրաց քրիստոնէութեան Պատմութիւնը, որոյ համար Խորենացի (Բ. ձգ) կ'ըսէ. « Որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս »: Նոյնպէս Ահարոն Վանանդացի Նոնէի խաչին համառօտ պատմութիւնն ընելով՝ կ'ըսէ. « Չայս՝ մինչեւ ցայս վայր՝ յԱգաթանգեղոս » պատմագրէ ուսաք »: և սակայն մեր այժմու ձեռագրաց մէջ ոչ Նոնէի¹ անուն կայ, ոչ Վրաց դարձին պատմութիւնը: — Երրորդ, (տասնըեօթը) նախարարաց դասակարգին մէջ՝ Սիւնեացն ԺՂ էր կ'ըսուի՝ անոնց ցուցած օրինակին մէջ, իսկ մերոց մէջ տասնըվեց նախարարք յիշուին, որոց ԺՍ է Սիւնեաց: Ափսոս որ Կաղանկատուացին շրտեր թէ՛ ինչ լեզուով գրուած էր Նախարարաց ցուցած օրինակն. հաւանելու եմք որ յունարէն ըլլայ, թէ ոչ ասորերէն: Բայց մեզի մխիթարական է որ օտար երկրի մէջ իշխանք մեր հետերնին կրէին այդ Յաւիկայի Պատմութիւնը: Այս և նման բաները քննելու և ստուգելու համար փափագելի էր գտնել մեր ճանչցածներէն աւելի հին ձեռագիրներ Ագաթանգեղոսի պատմութեան. և անյուսալի չեմք համարիր²:

1. Անցողաբար յիշենք որ այդ կուսին անունը այլազգ յիշեն հին օտար գրողք. Ղփտեաց Յայամաւուրք Նոնէի կուսմն համարին ըստ Լատինաց Nonna, Էրբու Մամ կամ Մայր իսկ իր ընդիկ անունը Thognosta, Հաիփսիմէին՝ Arpissima, Գայիսանէի՝ Ագարա:

2. Փիրղալէմեան Ղեւոնդ Վարդապետ կ'ըսէ, Վա-

Ագաթանգեղոս իրբեւ արքունի գրիչ՝ Տրդատայ հրամանաւ ուրիշ ազգային յիշատակներ այլ գրած կ'աւանդուի: Չենովր՝ Ճաւահակագրոտրիւն կ'անուանէ Ագաթանգեղոսի գործը, և ժամանակագրութիւնն պահանջէ շատ աւելի բան գրած: Տես ինչ որ ըսինք Մար Արատայ վրայօք գրելով (3, — էջ 17): Հօս աւելցնենք մեր Վարդան պատմչի վկայութիւնն եւս (գլ. ԺԵ). « Լուսք և տեսաք գրով. . եթէ թագաւորն » Պարօից խնդրեաց զսիւնն կճեայ՝ որ ի Մծրին, » յապարանս արքայութեան Հայոց. և ի յառնուլն » զաւա գիր յունարեւ, եթէ ես գրեցի Ագաթանգեղոս »: Սոյ այլ կ'աւելցնէ մեր այս վերջի յիշուած պատմիչն, թէ Ագաթանգեղոս զՎաղարշակ՝ Արշակայ որդի գրեք էր և ոչ եղբայր: Սակայն Վաղարշակ կրնար միանգամայն երկուքն եւս ըլլալ, որովհետեւ Պարթեւաց ամեն թագաւորք այլ Արշակ կոչուին: Հայերէն Ագաթանգեղոսի շարադրութիւնն կամ լեզուն՝ լաւ ճանչցողներէ վկայուած է որ մեր սոկեղէն ըսուած դարու լեզու է, այսինքն թարգմանչաց. ընտիր և հարուստ, ճարտար գրչի մի: Ո՞ր արդեօք ի ծանօթ մեր թարգմանչաց: Բարիզու մեծ գրատան Հայերէն Չեռագրաց մէջ կայ ընտիր օրինակ մի Ագաթանգեղոսի, որոյ վերջն անթուական յիշատակ մ'այլ հին ոճով, որ է համառօտիւ Գ. և Ե. դարուց մեր թագաւորաց և կաթողիկոսաց յաջորդութիւնքն մինչեւ ի Ս. Սահակ. յիտոյ յիշուի Կոստաս կաթողիկոսին Հաիփսիմեանց նշխարքը գտնելն և անոնց եկեղեցին նորոգելն. վերջը տողով մի կ'ըսի գրուածն. « Եղեցի յիշ » շատակ Եզնկաեւն¹ ի թարգմանել զգիրս զայս »: Ասկէ մեր նոր բանասէրք ոմանք հետեւցուցին թէ,

նայ կողմեր Բելու գեղում տեսեր է երկաթագիր օրինակ մի մագաղաթէ. քանի մի տարի յետոյ հօնփնտեր է Արիստակէս Տեվկանց, բայց չէ գտած. Հայերգ, Գ:

1. Ի Չեռագրին գրուած է Եզնկակ:

Կոմիտասայ ատեն, որ է Ե. դարու առաջին քառորդն, Եզնակ անուամբ երէց մի ըլլայ թարգմանողն Ագաթանգեղեայ: Զարմանալի է որ Հայերէն դպրութեան սկսելէն 200 տարի վերջը թարգմանուած ըլլայ այդ Յանկայի Պատմութիւնն, որ գրեթէ Հայոց համար Սրբազան Գիրք մ'է: Այդ Եզնակ երիցու ժամանակագրական յիշատակարանն ինքնին թուի յայտնել՝ որ գրողդ ինքն մեր Ե. դարու սակեգիր Եզնիկն է, պարագլուխ թարգմանչաց մերոց. վասն զի կարգաւ Լուսաւորչի յաջորդները յիշէ՝ մինչեւ Ս. Սահակ և անկէ անդին շանցնիր. նոյնպէս թաղաւորաց կարգն այլ՝ մինչեւ ի վերջինն՝ յԱրտաշիր կամ Կարաշէս. և անկէ վերջը կ'ըսէ. «Մարգպանք Պարսիկք կացին մինչեւ ցմեզ», ոչ յիշելով զՎասակ: Իսկ եթէ յիշատակարանին վերջը պատմէ Կոմիտասայ գործն՝ հարկ է թէ վերջի գրիչ մի անոր կցած ըլլայ, առանց Ս. Սահակէն մինչեւ ի Կոմիտաս նստած քսանի շափ կաթողիկոսները կարգաւ գրելու, ինչպէս անշուշտ պէտք էր որ գրէր՝ եթէ Կոմիտասայ ժամանակակից մ'էր այդ թարգմանիչն. կրնամք ըսել թէ նաեւ պէտք էր որ Հայոց թուականն այլ յիշէր, որոյ պակասութիւնն՝ հաւաստիք մ'է թէ՛ այն թուականն առաջ էր թարգմանիչդ Եզնակ: Կրնամք թարգմանութեան հնութեան հաւանութիւն մի համարել նաեւ Վրթանէս Քերգողի՝ Սիւնեաց եպիսկոպոսի (որ գրեթէ Կոմիտասէն քառասուն տարի առաջ վախճանած է, իբր յամի 580), Պատկերամարտից դէմ գրուածին մէջ՝ գրեթէ բառ առ բառ Ագաթանգեղի միջի Լուսաւորչի Վարդապետութենէն առած խօսքը: Եթէ Ագաթանգեղոսի լեզուն բաղաատուի Եզնիկայ հաշակաւոր Եղծ աղանդոց գրուածին, յետինս աւելի կոկ և յստակ գտուի, գրութեան նիւթն այլ այնպէս պահանջէ. իսկ և Ագաթանգեղոսին՝ որ ճոխ և ճապարհ է՝ նոյնպէս յստակ հայկարանութիւն է, որչափ որ ներէ յունարեան թարգմանուիլն հայկական ոգւով. և հաւանական թուի

որ մեր ծանօթ Եզնիկն երիտասարդութեան ատեն թարգմանած է զայն՝ շատ տարի առաջ քան ըլլալը թիւնն Աղանդոց դէմ:

Ագաթանգեղոսի պատմութեան գրոց կցուած Եզնիկայ յիշատակարանէն բոլորովին տարբեր և անարժան գրուած մ'այլ գտնուի, այն է Դաշակց բռնոր կոչուածն՝ խաւն ի խուսն ի հնոյ և ի նորոյ, և թուի Ռուբինեանց տէրութեան սկիզբներում հնարուած, երբ Հայք սկսան ծանօթանալ և ընտանեանալ Լատինաց: — Աւելի հաւանական է ուրիշ աւանդութիւն մի, թէ Ագաթանգեղ գրած ըլլայ իր ատեն Հայոց նախարարաց յՆրուստղէմ և ի սահմանս նորա շինած վանաց և եկեղեցեաց յիշատակները, որոց յ'Ե. դարու գրիչ մի՛ ինչ վիճակի մէջ ըլլալը յիշէ համառօտ, գրեթէ սոսկ շինողաց անուններով: — Տես ի յաջորդսն, թիւ 40 Պատմչաց:

Պարզ գրաւորական արդիւնքէն դատ, բարոյապէս սրբան արժանաւոր և յարգելի եղած է Ագաթանգեղոս յարգի մերում, լաւ յայտնէ Ղազար Փարպեցի, երեք կամ չորս անգամ Երանեղի, և Երանեղի այրն Արտաշոյ կոչելով. գիտութեանն համար այլ կ'ըսէ. «Այր բանիրուն գիտութեամբ և լի ամենայն հրաւանգիւ. ստուգարան ի կարգադրութիւն ճառից, և յարմարագիր ի պատմութիւնս ասացուած ի իւրոյ»: Իրմէ առաջ և նոյն իսկ ժամանակակից Ագաթանգեղեայ՝ Զենօր, ոչ միայն քանի մի անգամ յիշէ զնա՝ և զգոյութիւնն ի Լուսաւորչէն մերմէ, այլ և անոր մեծ իշխանական պատիւը. զի կ'ըսէ. «Ունէր գիտադարարորտրեսն պատիւ յար» քայէ¹»:

Հայապատու միս մէջ (մասն Բ) Ագաթանգեղոսէ առնուած Յօդուածք են, 4. 46. 47. 49. 51. 54. 55. 57. 59. 61. 63. 65—9. 79:

1. Այս յիշատակս գտուի մեր տպագրած Զենովբայ օրինակներէն զատ Զեռագրի մի մէջ:

2. ԶԵՆՈՎԻ ԳԼԱԿ

3. ՊՕՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՅ

Որչափ մեծ է հիմայ յաչս և յոգիս ազգայնոցս Ս. Լուսաւորչի արգիւնքն և համբաւն, այլ աւելի համարելու է իր ժամանակակցացն. որոց շատ բարեպաշտ, գիտուն և կիրթ անձանց, եկեղեցականաց հետ նաեւ արքունական պաշտօնէից, գրեթէ անհնար էր որ չուզէին իրենց աչաց առջեւ հանազակամ հրաշալի կրօնական յեղափոխութիւնը՝ հըռչակել, ոչ բանիւ միայն այլ և գրով, և յիշատակ թողուլ ապագայից. և եթէ յետ Տրդատայ և Գրիգորի ցանկալի աւուրց՝ ազէտալիքն չհանգիպէին և Հայաստան սոնակոխ և աւար չըլլար օտարաց, անտարակոյս կ'ուենայինք Ազաթանգեղոսի հետեւող գրիչներ. որոց հիմայ հազիւ մէկ երկու իրական կամ անուանական նշանք մնան: Ասոնց միակն կամ գլխաւորն, գէթ ըստ բաղդէ մեղ հասածն, է Զենոյր, մականուանեալ Գրչի. անունն յունական է, ազգն Ասորի. վիճակն՝ եպիսկոպոս ի Լուսաւորչէ ձեռնագրեալ Տարօն գաւառի, որ և Մամիկոնեից, զի սոքա էին պայազատք այն գաւառին, որոյ սահմաններն այն ատեն աւելի ընդարձակ թուին քան յետոյ:

Զենոյր հաւանօրէն ասորերէն գրած է, և բաւական ծանօթ է մերազգեաց տպագրութեամբ գրոցն՝ նախ ի Կ. Պօլիս, 1719, և յետոյ ի Ս. Ղազար մեր, 1836: Բայց այդ հրատարակեալ տպագիրք բաւական չեն ճանչցընելու իր գրածները. ոչ սակաւ ձեռագիր օրինակք գտուին իր Պատմութեան, և ոչ սակաւ տարբեր և աւելի անղեկութիւնք. զորս կ'արժէ բանասիրի մի բաղդատութեամբ յար-

մարցընել և ի լոյս հանել¹: Մենք հաւանիմք թէ՛ ո՛ր և է մեղ ծանօթ օրինակ՝ դեռ հեղինակին բոլոր գրածը չի բովանդակեր, եւս առաւել իր գրելու զածը: Վասն զի պարզապէս կ'ըսէ ինքն (ըստ այլեւայլ ձեռագրաց) թէ Ազաթանգեղոսի պէս փափագեր և խնդրեր է ի Ս. Գրիգորէ, « Զի տացէ » հրաման գրել զԽոսրովու մահն և զՏրդատայ փառ » խուսան ի Յոյնս », և այլն, միով բանիւ՝ Ազաթանգեղոսի գրածները. բայց Լուսաւորիչ թող չէ տուած, ըսելով թէ այդ բանդ յանձներ է ճարտար գրչին Ազաթանգեղոսի. և թէ ինքն գոհ ըլլայ իր թեմին (Տարօնոյ) մէջ հանդիպածները գրելու²: Որչափ այլ այսպէս կ'ըսուի և կ'երեւի հիմաւ կուան մեր ունեցած օրինակներէն, շատ դժուար է որ Զենոյր գոնէ յառաջբանով մի իր թեմին կամ գաւառին և անոր տեարց վրայ ծանօթութիւն մի գրած չըլլայ. այլեւայլ Զեռագիրք այլ իր գործը վերնագրեն. « Սկիզբն Պատմութեան Հայոց » և Դաւանակագրութեան Զենոյրայ Ասորոյ, որ » ձեռնագրեցաւ ի Սրբոյն Գրիգորէ եպիսկոպոս » երկրին Մամիկոնեից »: Լաւ եւս ուրիշ օրինակ մի. « Սկիզբն Պատմութեան Զորորոյ Հայոց, ի » Դաւանակագրութեան Զենոյրայ Ասորոյ, որ ձեռնագրեցաւ առաջին եպիսկոպոս », և այլն: Օրինակ մ'այլ. « Պատմութեան Տարօնոյ, զոր բարգ- » մանեաց Զենոյր Ասորին՝ եպիսկոպոսն³ »: – Մեր յիշած երկրորդ գրիչն համարի զՏարօն ի Գ. Հայոս,

1. Ասոնց դասոնք ճանչնալու և քննելու՝ սխալի ուլ որ կարծէ զԶենոյր կամ իր անուամբ գրուածն՝ Բ. կամ Թ. դարու գործ. սրպէս յօտարաց Գեղեր, Հայկական ևկեղ. Սկզբնաւորութիւն, էջ 43:
 2. Այս խօսքիս կցէ օրինակ մի՝ անչուշտ օտար և Ասորիները ատող գրիչ, թէ « Ասորիք կարի յիմա- » թախօք են և շողիտողփապատուձք, իսկ Յոյնք ճար- » տարաբանք և կարեւաւոս բանիւք », և այլն:
 3. 30ր. գրուած է եպիսկոպոսին:

որ ըստ հասարակ կարգի է գաւառ Տուրուբե-
րան նահանգի. սակայն ոչ սխալ համարելու է
զնա, վասն զի Տարօն սահմանակից է Գ. Հայոց,
և քույց այն ատեն մասն իսկ այն նահանգին, որ
կոչուի եւս Աշխարհ Ծովաց. կամ լոկ Ծովիք:

Արդ, Զենովրայ գրածին կամ հաւաքածին մէկ
մասն է՝ Թղթակցութիւնք Լուսաւորչի և Տրդա-
տայ ընդ Ղեւոնդեայ, Հայրապետին Կեսարիոյ, և
այլ եպիսկոպոսաց՝ որք փափաղէին գիտնալ ի Հայս
հանդիպածները: Ասոնց հետ գրէ Զենովր իր թե-
մին մէջ հանդիպածները. որք են գլխաւորապէս,
այն տեղ եղած մեծ և հաշակեալ կռատանց պաշ-
տող և պաշտպանող քրմաց ընդդիմանալն նաեւ
զէնքով՝ Գրիգորի քարոզած կրօնից, և նորագարձ
քրիստոնէից՝ հանդերձ նախարարօք և թագաւորաւն
և վերջապէս Լուսաւորչի աղօթիւք և իր ի Կեսա-
րիոյ բերած Յովհ. Մկրտչի և այլ Սրբոց նշխա-
րօք և բարեխօսութեամբ յաղթահարելն զքրմանն
և զանոնք զրգոող դեւս հալածել, կործանել զմե-
հեանս, և հիմնարկել զեկեղեցիս, որոց գլխաւոր
Յովն. Կարապետին հանդերձ մեծ վանքով, զոր
Զենովրայ մականուամբ Գրախայ վանք կոչէ: Այս
անունս հայերէն ձայնի յարմար է, և յիշեցընէ Հայ-
կազանց Գրակ նահապետը. սակայն եթէ բնիկ էր
Իսկ տեղին այն ատեն կ'անուանուէր Ինկեակնեան, որ
ինն աղբիւրս ջրոց նշանակէ՝ այն տեղ բղխած կամ
բաժնուած: Քրմաց գլխաւորքն են Դեմետր և Գի-
սակէ՝ իրենց նախահարց անուամբ, մէկն այլ Ար-
ձան, որոյ անուամբ կոչուեցաւ կուռատեղին: Ա-
սոնց պատերազմի պատմութենէն առաջ չի կըր-
նար Զենովր շնչել զոնէ Ս. Գրիգորի ծագումը,
Անակայ զործը, Հայոց դարձը և այլն. իսկ պա-
տերազմին դիպուածները մանրամասնութեամբ
պատմէ:

Զենուրայ Պատմութեան երկրորդ մասն, կամ
ինչպէս գրուած է Պատմեանն է Կովկասէ և Կաս-

պից Ծովէ անդին ի հիւսիսակողմն բնակող կամ
թափառող ազգի կամ ազգաց հրոս տալով՝ ար-
շաւելն ի Հայաստան մինչև ի Տարօն. իրենց զը-
խաւորն կոչուի Գեղաեհոն, որ անշուշտ նշանակէ
Հոնաց ցեղ մի, Գառըր կամ ասոր նման կոչմամբ:
Ոմանք չեն հաւանիր որ այն ժամանակ Հոնք իրենց
արշաւանքն սկսած ըլլան, այլ աւելի ուշ: սակայն
բանաւոր պատճառ մի չկայ ըսածնուն: Ըստ Զե-
նովրայ՝ Տրդատայ և Գրիգորի ի Հոովմէ նոր դար-
ձած ատեն պատահած է այս դէպքս: Մեծ շիռ-
թութեան և վախի մէջ գտեր է մեր թագաւորն
իր երկիրը, և ոչ սակաւ դժուարութեամբ՝ բայց և
քաջութեամբ՝ յաղթեր վաներ է զբարբարոսս, և
զԳեղաեհոն իր ձիով մէկտեղ ողովնական մրցու-
ղաց ուժով կարեր կտրեր է: Արչափ այլ դիւցապան-
կան և փրպասանական երեւի պատմութիւնն, տա-
րակուսելի չէ հիմը, եթէ և օրինակողք Զենովրայ՝
զարգարած ըլլան պատմամբ. որ՝ և ունի պարզու-
թիւն մի, հանդերձ մանրամասնութեամբք. յորոց
մին է և այս Հոնաց պատերազմաց մէջ սպանելոց
թիւն, Հայոց կողմանէ 4080 հոգի, Հիւսիսայնոց՝
43000 կամ 45942: Ի Տարօն մտած ատեննին
տքա՝ ըստ այլեւայլ ձեռագրաց՝ 58000 էին, կամ
40400: Պատերազմին և յաղթութեանց տեղերում
խաչարձաններ կանգնել տուաւ թագաւորն, և անոնց
վրայ զրել թէ՛ այդ սպանելոց թիւը և թէ՛ այն
արձան կանգնելու ատեն ժողոված մարդկանց թի-
ւերը, մէկ տեղ մի 100,450, ուրիշ տեղ մի 60,000:

Այս երկրորդ Պատճէնի պատմութեան մէջ Գը-
րուաց մ'այլ կայ, Ս. Անտոն և Կրօնիդես ճգնա-
ւորաց վրայօք, զորս Ս. Գրիգոր ի Ս. Ղեւոնդայ
ընդուններ և բերեր էր ի Կեսարիոյ, կրօնաւորաց
վանքեր հաստատելու և անոնց կարգ սովորեցընելու
համար: Ի Հոովմէ դարձած ատեննին՝ Տրդատ
փափաղեր է տեսնել զանոնք, և Ս. Գրիգորի հետ
փնտառելով և զանելով՝ իրենց միայնարանին մէջ,
կ'ուրախանան նոքա, մէկզմէկ կ'օրհնեն, և իրարու

Հանդիպած տեղերնուն՝ յիշատակելի և ուրախալի անուշներ դնեն: Հաւանօրէն աւելի երկար գրած պիտի ըլլայ Չենօվը այս ձգնաւորաց և Տարօնոյ առաջին Վանորէից պատմութիւնը. հիմայ եղածն այլ կրնամք համարիլ մեր պատմչաց հնագոյն կամ առաջին մանրամասն պատմագրութիւն. յորում բանասէրք դանեն և կրնան գտնել այլեւայլ քննադատութեան կարեւոր մասեր, սակայն սառագութիւնն երկբայելի չէ, և շատ յարգ ունի՝ այն կարեւոր ժամանակի և Ս. Գր. Լուսաւորչի գործոց համար: Գրութեան ոճն այլ վայելուչ է, ոչ չոր և ոչ այլ շատ ուռած. հայաբանութիւնն այլ չափաւոր յտակ: Պատմութեան մանրամասնութեանց մէկ շատ կարեւոր կտորն է՝ Ս. Գրիգորի կամ Թագաւորին Գլաւկայ վանաց կալուած տուած տասն և երկու դաստակերտաց կամ գիւղից անուանքն և տանց և բնակչաց թիւն և զօրաբաժինն: Ի հարկէ թիւերն ասրբերին ըստ Օրինակաց. այլ մեզի առաւել հետաքննականն է պատմչին մանրախուզութեամբ նշանակելն, և մանաւանդ այս երկու բան. Նախ թէ, « Գիր եր- » դաՀամարացն գտաք ի գիրս Մամիկոնեան իշխա- » նին, ի տախտակ պղնձի, որ գրեալ էր այսպէս. » Կուռսս՝ ունի երգս 3012, իսկ հեծեալս 1030, » իսկ հետեւակս 2200 », և այլն. - և « Երկրորդ, » Չայս ամենայն ի դիւանն արքունի գրեցաք. զի » յետոյ՝ թէ նուազի՝ գիտացեն զչափ մեծութեան » եկեղեցոյս ». այսինքն կալուածներուն չափը: - Վերոյիշեալ պղնձեայ տախտակին նման մ'այլ յիշէ Չենօվը՝ այս թիւերը նշանելէն ետեւ. « Գրեաց » տախտակ մի պղնձի Ս. Գրիգոր և եղ յեկեղեցոյն՝ » այսպիսի պատճառաւ, թէ Կին օք՝ թէ և ի սըր- » բոց է, մի իշխեսցէ քայլել ընդ սեամս եկեղե- » ցոյն ի ներքս, զի մի վրէժ փութանակի առցէ » նա. և սպասաւորքն մի տայցեն թոյլ, վասն զի » ի Հոգւոյն հրամայեցաւ այս: Զայտօրիկ և Պի- » սիդոն ձեր պատմագիր ընթերցաւ »:

Սեր դիտել տալիքն այս խօսքերով էր Պղնձէ

տախտակօք գրուածները, անշուշտ անմտաց յիշատակաց համար. այլ ինչ գրով ինչ լեզուաւ՝ թուղուք ի վիճարանութիւն բանասիրաց: Նոյնպէս և ի վերջոյ յիշած պատմիչը, Պիսիդոն, որոյ անունն յոյն է (եթէ ստոյգ այս անունն էր), բայց ինքն Ասորի յայտնուի կամ Ասորուց եկեղեցւոյ յարեալ: Ուրիշ տեղ Ս. Աթենագինեայ նշխարաց բերման զէպքը յիշելով, Եթէ լաւ եւս գիտնալ կ'ուզէք՝ կ'ըսէ Չենօվը, « ՅՊիսիդոն քարգնակիչ » Ասորի իսկ՝ հարցէք »: Թէ թարգման ըլլալով և թէ յիշատակագիր, արժանի է Պիսիդոն մեր Պատմչաց գասակցելու: Չենօր այս Պատճէնը գրած է առ Եպիսկոպոս Ասորուց. բայց այս եպիսկոպոսք հաւանօրէն էին սահմանակիցքն Հայոց, որպէս և ինքն Չենօրայ թեմն մերձաւոր Ասորուց. ձեր պատմագիր այլ կոչելով զնա՝ կարծել տայ թէ Պիսիդոն այլ իրեն (Չենօրի) պէս սահմանակից տեղոյ մի պատմութիւն գրէր: - Չենօր իր առաջին Պատճէնին վերջն այլ յիշէ յոյն եպիսկոպոսաց՝ որոց գրէր, յոյն եղբայրակից մի Պիռոս անուն, որ կարգացեր էր Ագաթանգեղոսի Դաւանակագրաշրիշերը. և որովհետեւ անոր գրածին մէջ չկայ իր (Չենօրի) պատմածը, չըլլայ թէ տարակուսիք կ'ըսէ. « Չի ամենայն ազաչանք իմ առ Ս. » Գրիգոր այս եղեն, զի զոր ինչ յիմում վայրի » աստ (ի Տարօն) գործ գործեցան՝ ինձ շնորհեսցէ » գրել առանձինն զիմոյ վանացս պատմութիւն. » զի և իմն անջնջելի եղիցի յիշատակով՝ յեկեղե- » ցոյս իմոյ », և այլն: Ուրիշ կերպով այլ կ'ըսէ, թէ ինչպէս եւ ուրիշներու սահմանին վերաբերեալը չեմ կրնար գրել, ուրիշներն այլ իմ վիճակիսը չկարենան գրել, ինչպէս յառաջագոյն յիշեցինք: Գարձեալ, իր պատմութիւնը Բ Պատճենով վերջացնելու ատեն՝ կ'ըսէ թէ, Ասկէ վերջի եղածները, (յայտ է թէ ուրիշ վիճակի մէջ) իմանալ ուզողը՝ ուրիշ պատմիչ պէտք է փնտռէ. « Չկնի այտօրիկ » եթէ կամի օք իմանալ, յայլ պատմագրէ ծանի-

» ցե. բայց այսօրիկ առ ի մէջ՝ պատասխանի բա-
 » ւական լիցի ձեզ »: Ըստ այսմ՝ հաստատի մեր
 յառաջաբանին մէջ յիշածը, թէ գրեթէ ամենայն
 նախարարք և աշխարհք Հայոց ունէին իրենց յա-
 տուկ Պատմութիւնը և Պատմագիրը. ուրեմն և
 կրնանք կրկնել թէ ո՞րքան բազմաթիւ եղած պիտի
 ըլլան Պատմագիրք Հայոց: — Այս ըսելէն ետեւ
 Չենոր վերջացընելով իր Պատմութիւնը, հրաւիրէ
 իր ասորի ընթերցող եպիսկոպոսները՝ թողուլ իրենց
 խորշակահար երկիրը և գալ ի Հայաստան. զի
 « Բարի է երկիրս, և վայրքս անուշօղ և բազմա-
 » ջուր, դաշտածեւ, խոտաբեր, և մեղրաբուղիս.
 » և... իջանէ քաղցր առաւել քան զմեղր՝ որ կոչի
 » Գազպեն... Այս երկիրս ամենայն բարութեամբ
 » լի է, և աշոգակ և առողջ »...:

Մեր շատ պատմչաց բազմակից եղած է Չենով-
 բայ Պատմութիւնն թարգմանուելու եւրոպական
 լեզուաւ: Սորա փոանկերէն թարգմանելն էր երի-
 տասարդ հայագէտ մի, Prud' homme, սպագրեալի
 Բարիզ, յամի 1864: Քիչ տարի յետոյ (1867) նոր
 թարգմանութեամբ հրատարակեց Լանկուա Սա-
 ջին հատոր մեր պատմագրաց փոանկերէն թարգ-
 մանելոց:

4. ԱՐՏԻԹԷՍ

Գր. Լուսաւորչի երախտապարտից մէկն է սա,
 Հայոց հին և նոր կրօնից կցորդ. զի քուրմի որդի
 էր, և հաւանօրէն քիչ շատ ուսեալ. որոյ համար
 ընտրեցաւ և ձեռնադրեցաւ ի Լուսաւորչէն՝ եպիս-
 կոպոս նորագարձ ազգին. և ութերորդ դասուի
 յԱգաթանգեղոսէ ի մէջ երկոտասանից իր նմա-
 նեաց ձեռնադրելոցն ի Գրիգորէ, որոց երկուքին

միայն վիճակը կամ թեմը նշանակէ, առաջին զԱ-
 րիանու զնելով, որոյ նախապատուութիւնն յայտնի
 է և ի պատմութենէ. միւսներն այլ համարելով
 ըստ աւագութեան յիշուած, կրնայ գուշակուիլ
 Արտիթէսի աստիճանն: Ո՛ւր ալ որ ըլլայ՝ երեւի
 թէ ընդարձակ էին առաջին այդ եպիսկոպոսաց
 վիճակքն, ինչպէս երեւցընէ Արիանոսին բացար-
 ձակ կերպով Եփրատական կողմակց թեմն, Եռու-
 դիտի այլ՝ կողմակց վայրաց Բասեկոյ, առանց
 զանազանելու անոր երկու գաւառները, որոց մին
 Վանակն եւս կոչուէր:

Արտիթէս անուան վերջաւորութիւնն նշանակ է
 յունարէն Ագաթանգեղոսի, ինչպէս միւս եպիսկո-
 պոսաց անուանքն այլ, յորոց մէկն կոչուի Տիրի-
 կես, որոյ յայտնապէս հայ անուան վրայ յոյն մաս-
 նիկն ՚է կամ ՚էզ աւելցեր է. որպէս և Սարաչիկս.
 երեքն եւս զուտ հայկական անուանք են: Խորե-
 նացի (Ֆ. Ծ) միայն է որ յիշէ Արտիթէայ մէկ
 պատմական գործը, այս վերնագրով. « Յայտարա-
 » բութիւն սակաւօք Սննդեան և Վարոց Գրի-
 » գորի և Որդւոցն. ի թիրոյն Արտիթէայ եպիսկո-
 » պոսի, որ վասն հարցմանն Մարկոսի միայնաորի
 » ի յԱգոնանի » (Օր. մի ի Չագրիսանի): Գրածն
 թռչող կոչուի, որովհետեւ Հարցման մի պատաս-
 խան էր, և երկար գրուած չի կարծուիր. սակայն
 Խորենացոյ սակաւոք յայտարարոչիւն ըսածն՝ իր
 գրածն հասկընալու է, և ոչ Արտիթէայ, յորմէ ինքն
 համաօտեր է: Ագաթանգեղոս՝ միայն Գրիգորի
 հայրը յիշէ, և զնա փախցընել տանելն ի կողմանս
 Յունաց, այսինքն ի Կեսարիա. Արտիթ պատմեր է՝
 Գրիգորի հօն սնանիլն, ամուսնանալն և երկու որ-
 դւոց հայր ըլլալը, որպէս յայտ է ամեն Հայոց, նա-
 եւ յայլոց պատմելէն: Անշուշտ աւելի փափաղելի
 մանրամասնութիւնք այլ կային ի թղթին Արտի-
 թէայ, որով կրնայինք յետ Ագաթանգեղոսի ա-
 ռաջին ազգային Պատմիչ համարել զնա: — Պատ-
 մութեան խնդրոյն Մարկոս հգնաւոր, և իր հայ-

ընդհանրապես Սգառնան կամ Ագրիոնան՝ (ըստ գրութեան հինկեկ ճառընտրի), անծանօթ են. խնդրողն յոյն թուի, տեղն այլ յունական անուն, սրածայն տառն և փոխուելի է գ, իբրու թէ ըլլար բնիկ անուն տեղւոյն Ագառզանի:

5. ԳՈՐԳԻ. — 6. ԲԱՆԱՆ

Խորենացի (Ա. 9), յիշելով Ջրհեղեղի և անկէ ետեւ հին պատմական աւանդութիւններ, յետ Բերոսոսի կամ Բիւսոսեան Սիրիլայի աւանդածին, կ'ըսէ. « Պարտ է մեզ երկրորդել զամանց անգիր » հին գրոյցս, որ պատմեալ եղեն վաղ ուրեմն ի » մէջ իմաստնոցն Յունաց, և հասին մինչեւ ի մեզ » այս Չրոյցք, ի Գորգի և ի Բանան անուն կոչե- » ցելոց, եւս երրորդ ամն՝ Գառիք ». կարծել տայ թէ իրենցմէ առջիններուն առանց գրելու բերնէ բերան աւանդածները՝ այս երեք յիշեալքն զրով այլ աւանդած ըլլան, և երբ այնպիսի աւանդութեանց վրայ օր մի խօսք եղեր է, « ի մէջ արանց » իմաստնոց և հմտագունից » (Յունաց), անոնց զլիաւորն Որոնպիտորոս՝ աւելի տեղեկութիւններ տուեր է, նոյնպէս անգիր գրոյցներէ, Քախու- թրոսի (Նոյի) և որդւոցն վրայօք: Առմպիտորոս ծանօթ Յոյն գրող մ'է Եգիպտոսի Թերէ քաղքէն՝ Ն. գարու սկիզբները, կրօնքով հեթանոս կարծուի. գրած է Պատմութիւն մի քանսեւերկու մաս բաժ- նուած և Բ թէոդոս կայսեր ընծայած, իբրեւ շա- րունակութիւն Եւնաբիոսի Պատմադրութեան (417- 25): Յիշէ զսա Գառիք Անյաղթ (տպ. 143): Իսկ մեր քննելիքն՝ ազգային պատմիչք երեւին. որոց առաջնայն (Գորգի) անունն աւելի վրացի ձեւ ունի քան Հայ¹. բայց Սիմէոն Ապարանեցի Խո-

1. Լանկլուա ի ծանօթութիւնս Մ. Խորենացւոյ՝ ակնարկէ հարեւանցի ի Գորգիաս յոյն պատմիչն:

րենացւոյ ըսածն յոտանաւոր վերածելով՝ զանունն այլ աւելի մերձեցնէ հայերենի.

« ի Գորգեւայ ճառարանեալ,

» ի Բանանայ ըստոյք պատմեալ »:

Թ.-ԺԲ. գարուց մէջ շատ լուսի Գորգեկե անուն ի մէջ Հայոց և վրաց. իսկ Բանան աւելի մերձաւոր է հայկականի. Խորենացւոյ ձեւագրաց մէջ կայ և լոկ Բան գրուած: Որպէս այլ ըլլան՝ ուրիշ յիշատակ մի շկայ այս երկուքին վրայ. գրեթէ նոյնպէս և երրորդին, որ է,

7. ԳԱԻԻԹ (ՀԱԳՆԵՐԳՈՒ)

Սա թուի ոմանց նոյն ինքն մեր Անյաղթն, որոյ համբաւն և գրուածքն ծանօթ են, այլ անձն ոչ բաւական: Մ. Խորենացւոյ քեռորդի կ'ըսուի, բայց հայրենեօք ոչ ի Տարօնոյ, այլ մերձաւոր Հարք գաւառին Հերեք կամ Հերք կամ Հերեակ գեղէն. կոչի և Ներգիւցի, բայց այս անուամբ գեղ կամ տեղի անծանօթ է: Այլ եթէ տեղն և անձն իսկ այդ աւանդապահին տարակուսական են, անտա- րակոյս կ'երեւի Գառքի մի մեր պատմըաց կար- գին սրտաշաճիլն և զուցէ հնագոյն քան զԱնյաղթն. և ոչ միայն պատմիչ՝ այլ և բանաստեղծ կամ գոնէ Քերդոյ. որ, ըստ բանից Հիւ Բերականաց կամ մեկնիչք Բերականի՝ երգեր կամ շարադրեր է ՉՊատերազմն Հայոց և Մարաց, ըստ ոճոյ զիւց- աղնական վիպասանութեանց: Անուշա իր զիւց- ազն էր Հայկազանց ամենէն սիրելի թագաւորն՝ Տիգրան Երոշակեան: Մի կամ երկու սող միայն այդ զիւցազներգութենէն ի մէջ բերեն յիշեալ մեկնիչք Բերականի, այն այլ մթին կամ խանգա- րեալ շարագրութեամբ, որ առաւել իմաստասիրա- կան երեւի քան բանաստեղծական. և է,

« Եւ արդ ներգործող ի միտս երեւիւր առ խոր-
 Հուրդս Փողարին,
 » Մեծոգոյ Տիգրանայ՝ Գեղակեկ Տիգրանուհի.
 » Իւր ներածեալ կողարդ¹ նաեւ ողջամիտ աշ-
 խարհածուհի »:

Քերականքն այս սողերս բերեն, ասոնց շեշտերու
 և վանգերու արուեստը ցուցնելու համար, զոր
 մենք լաւ չենք հասկընար, և ոչ իրենց ըսածը:
 Բայց բանասիրաց հետաքննութիւնը մասամբ գո-
 հացընելու համար՝ գնեմք հին օրինակ Քերա-
 կանի մի՝ այս սողերուս տուած մեկնութիւնը, զոր
 միշտ կօչէ Ռուսաւորք Գաւրի ի վերայ Տիգրա-
 նայ. « Գաւրիթ Փիլիսոփայն՝ տաղ և պատմութիւն
 » ւորին. որ կին Տիգրանայ մեռեալ էր. և էր
 » խիստ պատշաճաւոր, շինարար և ողջամիտ, և
 » գեղեցիկ կին էր. նմա՝ ողբերգակ այսինքն լա-
 » լականն՝ թէ՛ կին մարդ էր թէ՛ (այլ) մարդ, լայր
 » և զայս ասէր. Եւ արդ ներգործող ի միտս
 » երեւիւր, այսինքն թէ՛ այնպէս լաց ասէր փողարն,
 » որ է լալականն՝ ողբերգակն, ի վերայ Տիգրա-
 » նայ կնոջն, որ զինչ ի Տիգրանայ միտքն ներա-
 » ծէր կիրք իմացուած, զայն յայտնէր խորհրդա-
 » ւոր բանն՝ զնորա կիրքն. այսինքն, մեծահոգի,
 » մեծահաւատ և բարի կին էր Տիգրանուհի. զայս
 » ամենայն լալականն ասէր: Չկինն՝ որ մեռեալ էր
 » և կայր՝ գովէր այնպէս, որ զՏիգրանայ կիրքն՝
 » զինչ ի միտքն ցաւ և կսկիծ էր և կայր՝ ցու-
 » ցանէր: Չայս Ողբերգակի բանս՝ Գաւրիթ Փի-
 » լիսոփայն տաղ շինեաց. այնպէս որ ձայնաւոր և
 » բաղաձայն և կրկնակ զրէր, և այլն, ի ներքս ի
 » վանգն գտնուաւ. յորժամ զբողոքն ասեն պարմա-
 » խոհութիւն՝ ի միտքս տաղին երեւէր »:

Ոչ աւելի պարզ քան զայս բացատրեն ուրիշ
 անանուն մեկնիչք, և անուանիքն Մագիստրոս,

1. Ուրիշ օրինակ՝ կողոյ բաղնեայ և:

Համամ, Եսայի Նշեցի, Յովհ. Եղնկացի, և այլն.
 յորոց երկրորդն (Համամ) զրէ. « Եւ ի մերոցս
 » տալով տեղեկութիւն, զի Տաղ ափ Գաւրեան
 » քերթարիւնն՝ յարմարական բառք ողբականացն,
 » որ զիրս ձայնիցն աննէին որպէս ողբակօք իմն
 » յայտ ածել զմիտս տաղին, մերս խոհունակու-
 » թեամբ զգիւտս իմաստիցն քերթողականացն բե-
 » ղելով ի գէմս լաւին և անլաւին, զտաղն վերառու-
 » ցական ձայնակաց և երգակաց՝ ըստ իւրաքանչիւր
 » պատահման ասացեալ. որպէս Ողայն և Ողղի-
 » բայն ձառքն կրից, կամ Գերովրային մարգա-
 » ղէական ձայնիւ ասացեալն ի վերայ Սիսարայ
 » արքային, կամ Գաւթին Ողբք որ ի վերայ սի-
 » ղելոյն Յովնաթանայ, և Սաւուզայ ի վերայ
 » Գեղբուայ լերին », և այլն: Կայն Համամ և
 » Եղնկացին և այլք ոմանք յիշեն և Սրաաշուի և
 » Բարեհի վրայ այսպիսի Ողբերգական բան մի,
 » Բայց հեղինակը չեն ծանուցաներ, Գաւթին է թէ
 » ուրիշ մի: — Մեզի կարեւորն է նախ, յիշեալ
 » մեկնըին բանն, որ յայտնէ թէ մեր Գաւրիթ փի-
 » լիսոփայն զրեր է Ողբ մի վարպետ եղանակաւ՝
 » Տիգրանայ կնոջ մահուան վրայ, և ինքն զայն յո-
 » տանաւոր փոխեր և ընդարձակեր է: (Մեր խնդրէն
 » զուրս մնայ այս Տիգրանուհւոյ կինն ըլլալն Տիգրա-
 » նայ թէ քոյր, և կին Աժգահակայ): — Գուցէ այն
 » հին ողբերգակին գրածէն շարժեալ Գաւրիթ՝ շա-
 » րադրեր է ընդարձակ քերթուած մի իր ազգայնոց
 » ամենէն սիրելի թագաւորութիւնը վերջընելը,
 » որ ստոյգ գործ է, նաեւ ըստ Ս. Գրոց: Թէ և սա
 » և արտաքինք Կիւրոսի Պարսից ընծայեն այս մեծ
 » գործը, բայց Քսենոփոնի վկայութիւնն այլ մեծ է,
 » որ վկայէ Տիգրանայ որ և է կերպով Կիւրոսի
 » գործակից ըլլալուն: Եստ ցանկալի էր գտնել այդ
 » Գաւթեան գրուածը, որ մեր ազգի Համերոս պիտի
 » Համարուէր և քիչ շատ թէ բանաստեղծութեանը
 » ձաշակ մի կ'ունենայինք և թէ տաղաչափութեանը:

Այս ետքինև նկատմամբ՝ քերականք ուրիշ մեկ երկու տողեր այլ բերեն, առանց հեղինակը յիշելու. բայց շատ հաւանական է Գաւթին ըլլան, մանաւանդ այս տողս. « Փոխատեղեցին ի Պարս՝ » զՄարային թագաւորութիւնն ». զոր այսպէս բացատրեն տաղաչափօրէն կիտաղրութեանց վրայ խօսելով. « Արպէս յառաջակայում տաղի. Փո. » խատեղեցին ի Պարս՝, և դնէ զկէտն որ կոչի » ստորակէտ. զի յորժամ ի վերայ ածէ՝ զՄա. » բային թագաւորութիւնն, աւարտեալ լինի տրա. » մախոհութիւն, և դնէ մեծակէտ »: — Գուցէ նոյն Գաւթեան քերզուածէն է և այս այլանդակեալ տողն եւս, զոր Եղնկացին յիշէ. « Այլ և ի » յաշխարհաժողովութենէն անդր եթէ որ հասա. » նիցէ ». և կ'աւելցընէ թէ՝ Մագիստրոս այս կերպով կարգացեր և գրեր է նոյն տողը. « Այլ և ի » նաշխարհաժողովութենէն անդր եթէ որ հասանի. » ցէ »:

Իբրեւ գիւտ նշխարաց փափագելի ազգային բանաստեղծութեան և պատմութեան՝ երկարեցաւ մեր խօսքն: Դառնանք մեր Խորենացոյն այլ, հարցընեմք թէ իր յիշած Գաւթին է այս քերզողոս, կամ ով և է՝ ծանօթ է իրեն, ինչպէս նման ազգային աւանդութիւնք: Կարծեմ թէ այս Գաւթեան գործոյն համար կ'ըսէ (Ս. իս), երբ մեծ ուրախութեամբ գրէ Պարոյր Հայկազին թագաւոր անուանելն Հայոց. « Արժան է մեզ աստանօր մեծ » գործ կատարել, և բազումս ասել առարկութիւնս » բանից (կամ՝ ճառից). զորոց մեզէն իսկ զհիմունն » այսպիսեաց բանից ընթեռնուլ արժանաւորեցաք » ի չորս Հագներգոռքիւնս, զարգասաւորիս ի բան » և զխնաստեղցն իսկ և զ'ի մէջ իմաստնոց իմաստնա. » գունին »: Արքան ցանկալի գրուածք մեր նախնեաց, յորոց զրկեր է զմեզ ժամանակն կամ բարբարոսութիւնն. զօնէ կրնամք մխիթարուիլ երբեմն այնպիսի գրուածներ և այնպիսի գրողներ ունեցած ըլլալնուս, զորս Խորենացի մի վկայէ խնաստեղց

խնաստեղց, և բաղդաւոր համարի զինքն որ արժանի եղեր է կարգալու այդպիսի ազգահաշակ Հագներգոռքիւններ¹:

Հեղինակն այգպիսի շնորհաւոր գործոյ՝ եթէ ըլլայ մեր Անյաղթ Գաւթին և թէ՛ ոչ, որովհետեւ հարկ եղաւ զսա յիշել, երախտագիտութեան հարկ համարիմ զօնէ հարեւանցի ողջոյն մի տալով հոշակել զինքն իբրեւ գերագոյն հանճարեղ և պատուաբեր ազգիս, թէ՛ փիլիսոփայական գրուածքն և թէ՛ կրօնական, Ս. Խաչի վրայ Ներբողինիւ, որ արժանի եղած է Շնորհալույ մի մեկնարանութեան, իսկ ինքն Գաւթի՝ Սրբոց դասակցութեան և տօնուելու եւս ընդ Խորենացոյ և Եղիշէի. և ինքն միայն է ի մերոցս՝ որոյ գործերն մասամբ յունա.

1. Խորենացի Հագներգոռքիւն կոչած է և Եւսեւբիոսի Եկեղեցական Պատմութեան գրքերը. այլ հասարակօրէն այս բառս սեփական է երկար քերզուածոց մասանց. իսկ բառն՝ ըստ մեր քերականաց՝ նշանակէ Հագնի ծառը, որ է հաւանօրէն դափնիկն, որոյ հիւղերը ձեռուրնին առած Յոյնք՝ երգէին Համերսոսի բանաստեղծութիւնը: Հետաքրքրութեան համար գնենք մեր մեկնչաց ըսածը, որպէս Մագիստրոսին. « Հագներգութիւն. ըստ որում առէ ի հագ » նեւայ կարկատուն բանս. կարկատուն բանիւ յար » մարին շարամանեալ ամենայն մրնռնէրք և երգք » գոռասննոռքեան. քանզի բազում բանից պէտք են » կարկատել և աւարտել զսա. զոր այժմ ի Հայոցմս » առաւել քան ի յունականին գատնեմք չափ և կշիռս » բանի արուեստարեալ ի գովս և ի պարսուս, » ոտանաւորս յարմարութեամբ՝ վեցոտանիս և քառ » ոտանիս »: Յետին զրոյ մի կ'աւելցընէ ռամկօրէն, թէ Յոյնք սարդեկի գառազանով երգէին » զար և այժմ » Ղաւնռախաւնայի մանչերն առնուն ի ձեռս իւրեանց » երկու փայտ՝ զոր չարսխալայ ասեն (Թուրքերէն) և » բաղխելով ընդ միմեանս իբր ծափս հարկանելով » և կաքաւեն յուով, և մանս առնեն պար գալով, » և ճօնեն ճեմելով, և տափս հարկանեն ծնծղալքով.

րէն գրուած մնան կամ հին ժամանակէ ի վեր
 թարգմանուած են ի յոյն, յարաբ և յերբայեցի
 լեզուս, և դեռ կ'ըսուի թէ զանունին այսպիսիք ի ձե-
 ոսագիրս. որովք Գաւիթ արժանանայ իրաւամբք
 Անշարի կոչուելու առ մեզ, և եթէ ոչ Պատմագիր՝
 այլ պատմագրուելու արժանաւոր:

Գաւիթ անուանն պատճառաւ և ի Խորենացւոյ
 յիշուելուն, չթողունք անյիշատակ և զԴաւիթ եկ-
 շեսխատես, անշուշտ Եկեղեցական Պատմութեան
 գրող. որոյ ժամանակն և գործն անծանօթ. իսկ
 Խորենացին Հոսիփոսմեանց ճանապարհորդութեան
 պատմութեան մէջ՝ ցուցընէ զնա գիտցող անոնց
 նոյն իսկ օր տեղ երթալուն:

» և խաղս խաղան թատերով », և այլն: — Այլք
 Հագներգութեան բառը Հագագեկ ստուգաբանեն .
 որպէս) « Հագներգութիւնն է ելք շնչոյն հագագին »,
 » զոր երաժշտականաւն նուագէին ի խաղս պարանցիկ
 » երգոցն. ըստ խաթ (Այլ օր. հւսմ) և զիւրագիւտ
 » բանիցն՝ սովորեալ էին իւրաքանչիւր ոք մեծա-
 » պէս յարմարել զձայնս իբր զողորական ձայն գոչ-
 » մամբ (Այլ օր. փողորական գոչմամբ), առ լսելեաց
 » հեշտութիւնն »: — Աւրիշ մի համարօտ կ'ըսէ .
 « Չինչ է Հագներգութիւնն . — Գիւրին բան ստեղ-
 » ծանել և հոսովմամբ հանդերձ նուագել. որ առա-
 » ջինքն պար դալով շուրջ զբագնօքն և զստան շարժե-
 » լով նուագէին »: Բայց առաջին ըսածնիս աւելի ըն-
 » դունելին է. զոր և հնագոյն մեկնիչ մի այսպէս ա-
 » լանդէ. « Մանկունքն Յունաց՝ որք ոչ զայլսն հզօ-
 » ըագոյնս գիտէին (քան զինքեանս?), զորճարան երա-
 » ժըգականութեան առեալ մահակս սարգենի, որ է
 » դաւիթի ելեալ յուս միմեանց, և երկու գաւազանօք
 » բախեն՝ կալով ի վերայ ուսոցն, և երգեն զհոմե-
 » րական տաղսն: Եւ եթէ էր աղագաւ զդաւիթին առ-
 » նուն. — սակս անթառամութեան և կանաչութեան
 » և հոտոյն. քանզի սա միշտ անթառամ գոյ. իբրու
 » թէ զայս գուշակելով նոցա միշտ լինել ուրախ »:

8. ՄՍՄԲԲԷ. — 9. ԹԷՈԴՈՐՈՍ
 ԳԵՐԳՈՂ. — 10. ՄՆՍՏՈՐԴՔ ՊՍՏՄՍԳՐԱՅ
 ԱՌԱՋՆՈՅ. — 11. ՍՆԴԲԷՍՍ ՎՍՆԱԿՍՆ

Վերոյգրեալ վիտրասան կամ Հագներգու Գաւիթն
 և իրեն հետ յիշեալքն (Գորգի և Բանան) և մեր
 ծանօթ առաջին պատմչաց՝ իրենցմէ հին պատմիչ-
 ներ յիշելն, թէ և առանց անուան, գրեթէ անտա-
 ըակոյս կ'ընեն օր Գ. գարուն և Ե-ին կիսէն առաջ
 եղած են աղգային պատմագիրք, զորս շատ ան-
 դամ յիշէ Խորենացի և անոնց զրիկ՝ իր չպատ-
 մածը կամ համարօտածը՝ աւելի լաւ տեղեկանա-
 լու. (Ինչպէս, Ս. իք: — Բ, ա. ք. ք. դր, և այլն):
 — Գագար Փարպեցի՝ Ե. գարուն վերջերը նոյնպէս
 իրեն համար վկայէ, թէ « Ընդ բազում ճառս մա-
 » տենից Առաջնոց Պատմագրացն Հայոց անցի »:
 — Թովմա Արժրունի իր ծանօթ Արժրունեաց
 Պատմութեան մէջ շատ անգամ յիշէ Հին Պատ-
 մագիրներ, յորոց առած է այնպիսի դիպաց յի-
 շատակներ, որք չեն գտնուիր ոչ Խորենացւոյ քով և
 ոչ անկէ ինչուան Թովմայի ժամանակի պատմչաց
 քով. երբեմն կ'ըսէ. « Ի հնախօս շարագրական
 » մատեանս և ի բագում վեցս Պատմաբանաց՝ ան-
 » ցեալ գրեցի ». — երբեմն (Բ. ք), « Արպէս ցուցա-
 » նեն բագունք ի Պատմագրացն », Պարսից Ե. և Զ.
 դարուց գործոց նկատմամբ. — կամ (Ս. Ե), « Արպէս
 » ցուցանեն մեզ Առաջինքն ի Պատմագրացն », Աժ-
 դահակայ և Տիգրանայ վրայօք. — երբեմն եւս կոչէ
 « զՄեացորդս Յիշատակարանաց ի յառաջագոյն և
 » ի Հին Պատմագրացն ». — կամ (Ս. ք), « Առ մեզ
 » հասին զրոյցքս այս՝ Ըստ Մեացորդաց Պատմա-
 » գրացն Առաջնոց ». (և հօս յանուանէ յիշէ երեք,
 որոց մին է ծանօթ՝ Խորենացին, իսկ միւս եր-

կուքն՝ ասոր եղբայրն Մամիրի, որոյ անունը նախա-
 դասէ քան զՄովսէս, և թեոզորոս ֆեդորոյ): Թով-
 մաս կամ ասոնց գրուածներէն հատուածներ գտեր
 է, ինչպէս մենք այլ գտնեմք ի ձառընտիրս, կամ
 (որ և հաւանական է) իրմէ շատ առաջ մէկն այն
 հնագոյն պատմիչներու գրածէն այլեւայլ մասեր
 հաւաքեր է, և այդ հաւաքումն կոչուեր է Մնա-
 ցորդի Պատմագրաց Առաջնոց: Միթէ այդ Մնա-
 ցորդներէն չէն Սերիոսի պատմութեան ձեռա-
 գրաց մէջ գտուած այն հատուածքն, զոր յիշեցինք
 ի սկզբան մեր բանիցս: Թովմաս՝ այս իր յիշած
 երեքին համար այլ կ'ըսէ, թէ «Լեալ էին յաշա-
 » կերտաց Ղեւոնդ քաջանայի»: Այս քաջանայն
 է սովորաբար Ղեւոնդ Երեց կոչուած արիասիրտ,
 աստուածասէր և հայրենասէր Ս. Նահատակն և
 առաջնորդ նահատակաց և իրմէ բարձրագոյն աս-
 տիճան ունողաց յեկեղեցական կարգի, որպէս
 յայտ է ամենայն ազգայնոց: (Անցողաբար յիշեմք
 որ այս յիշատակս ցուցնէ զՄամբրէ եղբայր Մով-
 սէսի Խորենացոյ, և: դարուն կիսէն առաջ աշա-
 կերտած թէ Ղեւոնդեայ, և թէ ասոր վարդապե-
 տին՝ Մեսրոպայ): Մամբրէի գրաւոր թանկ ար-
 ժէքն վաղուց յայտնի են ամեն ազգային գրագիտաց:
 Հարկ է անոր հաւատարմապաիւ համարիլ և
 քֆեդրողն թեոզոր: Յաջորդ Զ. և Ե. դարուց մէջ
 կան քանի մի այդ անուամբ քերդողք և փիլիսո-
 փայք յիշեալք, որոց երիցագոյն է սա. և իր յի-
 շեալ երկու աշակերտակցաց հետ, ըստ վկայութեան
 (Թովմայի), «Սոքա հրամանաւ Վառնանայ Արծրաշ-
 » նոյ՝ յանձին կալեալ խուզել քննել կարգել ի հա-
 » մառօտ բանս դամբունս ազգացն անցելոց, ոչ
 » կարի ինչ ընդերկայնագոյնս, աշխատասիրաբար
 » անցանել պատմութիւնս»: Անչուշտ ի Թեոզո-
 րոսէ կամ ի Մամբրէէ առած է Թովմաս իր ցելին
 (Արծրունեաց) հնագոյն նահապետաց պատմու-
 թիւնը, ինչպէս Երուանդեան Տիգրանայ և Կիւ-
 րոսի հետ Աժգաջակայ գէմ՝ պատերազմը, և այլն:

Այս երկու՝ հիմայ կորուսեալ Մնացորդ Պատ-
 մագրաց ժամանակակից, թուի և գրակից կամ
 Պատմագիր՝ Անդրեաս Վանակակ Տարօնոյ Ղազա-
 րու վանաց, վկայեալ աշակերտ մեծին Սահակայ,
 որ ասոր գտեր Ս. Շուշանկան բանտարգելութեան
 ատեն գտուէր ի վերս. և Խոստովանող տիկինն
 գաղտուկ յանձնեց ասոր Ս. Նունէի Խաչը, որ
 տանի իր հայրենի Մամիկոնեանց երկիրը, յԱռա-
 քելոց վանս. և երեւի որ ինքն գրած է այս գէպ-
 քըս, և իրմէ առած պատմէ Հայրն Ահարոն յ'Թ.
 դարու, յիշեն և Յայսմաուրք ի ԻՒ Արեգի ամսոյ:

Այս չորից յիշեալ աշակերտակից Պատմըչաց
 ընկեր, և Սրբազան անձ, և Պատմիչ եւս է,

12. Ս. ԱԲՐԱՀԱՄ ԵՐԷՅ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ

Ի դասս տօնելի Սրբոց մերոց ծանօթ է ազգիս
 պատմիչս այս, գովեալ և հռչակեալ իրմէ աւելի
 ծանօթ և հռչակեալ պատմիչներէ, որպիսի են Ե-
 ղիշէ և Ղազար Փարպեցի. սա յիշէ անոր հայրե-
 նիքը՝ Չենակս գիւղ Տայոց նահանգին: Ամեն զգօն
 աշակերտք դպրոցաց մերոց շատ հեղ գորովանօք
 կարգացեր են Եղիշէի փափուկ և բարակ իմն մե-
 լամաղձիկ գրածը անոր խոստովանողական հարցա-
 փորձին վրայ, երկար տարիներ անապատէ անապատ
 երթալ գալը՝ աքսորեալ քրիստոնէից պաշար տա-
 նելով. և հուսկ յետոյ ի դարձին ի հայրենիս, իբրեւ
 հրեշտակ մի և իբրեւ նահատակեալ Ղեւոնդեանց
 կենդանի նշխար՝ ընդունուիլն ի Հայոց, և ձգնողա-
 բար ապրիլն երկար տարիներ, նաեւ ըստ Փար-
 պեցեոյն՝ Բղնունեաց եպիսկոպոս ձեռնադրուելով:
 Աբրահամ դրեր է, ըստ վկայութեան Թովմայի
 Սրծրունոյ՝ Արեւելեակ վկայից Պատմութիւնն, որով

կ'իմացուին Սասանեան Պարսից նահատակած վրկայքն թէ՛ Պարսիկ թէ՛ Հայ և թէ՛ ուրիշ արեւելեկայք, որոց ոմանց վկայաբանութիւնքն գտնուին մեր ճառընտրաց մէջ, առանց յիշատակի հեղինակին անուան, որ թերեւ առ խոնարհութեան չէ ուզած գրել զայն, գոնէ ամէն նահատակի պատմութեան վերջը կամ սկզբան: Բայց իր գրած կամ հաւաքած գործն իրրեւ ամբողջ գիրք մի ինչուան հիմայ չէ հասած մեր ձեռքը, որով չեմք այլ գիտեր թէ որչափ է իր ինքնօրէն գրածն և որչափ թարգմանածն: Այդ՝ յետ Հոովմայեցեաց՝ քրիստոնէից հալածիչ Սասանեանց ըրած նահատակները յիշելով, կ'ըսէ մեր Արծրունին (Ա. Ժդ). « Ընթեանումք ի Գիրս Պատմութեանց վկայելոցն » որ Արեւելեայ ասին գրոցն վերագրութեամբ, զոր շարագրեայ երանելի Խոստովանողն Քրիստոսի՝ « Արշակունի, ի գեղջէն Արածոյ՝, որ էր աշակերտ և հետեւող Սրբոց Ղեւոնդեանց. և զսակաւուց » քան թէ զյուրովից գրեաց անուանս ի յիշատակարանս անդ. զՇահարուք², որ թարգմանի Արքայստեր, և զԳոնդարատ որ թարգմանի Ներկադործ ծիրանեայ արքայական զգեստուց, և զՇահառն եպիսկոպոս, վէմ՝ եկեղեցոյ. ընդ նմին և այլ եպիսկոպոսունք և քահանայք, արք հարիւր », և այլն: — Նոյն Թովմաս ուրիշ տեղ մի (Բ. ա) վարդանանց նահատակութեան առթիւ յիշէ մեր երանեալ հեղինակին գործը, « Համառոտառքիւն Արքահամու Խոստովանողի » կոչելով: Մետրովպ Երէց այլ առանց հեղինակին անուան գործոյն անունը յիշէ, նախ յառաջարանին մէջ. « Ծաղկաբաղ արարի զգիրս զայս՝ ի Հայոց Մնացորդաց յայն յԱրեւելեայ գրոց ». յետոյ (Գլ. իե), « Զայս

1. Այսպէս կոչէ և Եղիշէ: Կայ և Արքահամ Սարկաւազ մի Ղեւոնդեանց հետ հալածուած, ըսոյց ուրիշ է Խոստովանողն՝ որոյ հայրենիքն ծանոցց Ղազար: 2. Ըստ Թուրք լեզուի՝ Թագաւորի բարեկամ:

» հանեալ ի յԱրեւելեայ գրոցն՝ ի Հայոց Մնացորդացն Պատմութեանց »: — Նորագոյն գրողներէն՝ ԺԼ. գարու վերջերը Յակովբ Այուբեան, կարծեցընէ թէ Արքահամու ամբողջ Արեւելեան վկայից Պատմութիւնը տեսած կամ լսած ըլլայ, և ինչ լեզուէ թարգմանելն այլ. « Արեւելեան վկայից » Պատմութիւնք, թարգմանեցաւ (Ի) Սրբոյն Արքահամու Խոստովանողէ, մինչ բանաարկեալ » կայր ի Պարսիկ սակա Խոստովանութեան սուրբ » հաւատոց, ի Պարսիկ լեզուէ »: — Յայտնի է որ Արքահամէն առաջ եղած են շատերն այդ Արեւելեան վկայից, անոնց ազգակիցք կամ Ասորիք՝ որք զրած են անոնց վկայաբանութիւնը, յորոց մէկն կոչուի Արքոս պարսիկ կամ ասորի. և ըստ Ասեմանեայ (Մատենադարան Արեւելեան, Բ. 401), սա հաւաքեր, զրեր և անուաներ էր Պատմութեան Արեւելեան վկայից. որոց թարգմանող և համառոտող երեւի մեր Խոստովանողն. բայց անշուշտ ինքն այլ հեղինակարար զրած էր, ինչպէս Վարդանանց նահատակութիւնը, զոր յիշեց Թովմաս Արծրունի, հաւանօրէն և զՂեւոնդեանց՝ որոց աշակերտ և հետեւող վկայեցաւ. և այս յառաջ քան զՂազար և զԵղիշէ, զորոց շէր կարծեր թէ իր Խոստովանութիւնն այլ պիտի գրեն երկարօրէն:

Բազմահմուտն Ասեմանի (Ա. 15) յիշէ ուրիշ ասորի քան պարսիկ վկայագիր մ'այլ՝ Եսայի որդի Ատապայ, որ ասպետութեան պատիւ ունէր Ա. Շապուհայ ատեն, և զրեց զպատմութիւն անոր նահատակելոցն Զերինայ, Ղազարոս և այլոց, որոց մին կոչուի Սմբատ. դիւրին է կարծել թէ և Հայ ըլլայ, ո՛ր և է պատճառաւ գտուած ի Պարսս:

Իրրեւ հեռաւոր յարմարութիւն մի այս արեւելեան Գրչաց, յիշենք մէկ մ'այլ Խորենացեոյ Խոսքերով (Բ. Կ), « Խոստովանողն¹, զպիր եղեալ Շապ-

1. Մեթէ՞ խնարամբար պարսիկ լեզուաւ, որ նշանակէ դեղեցիկ զրուցուած, և յարմարի դպրի մի:

» Հոյ... և անկեալ ի ձեռն Յունաց... և մերոյ
 » հաւատոյս դաւանեալ՝ անուանեցաւ Եղիազար. և
 » յոյն լեզու ուսեալ՝ պատմագրեաց զգործս Դաւիթ
 » Հոյ և Յուլիանոս: Ընդ նմին թարգմանեաց և
 » զառաջնոցն պատմութիւնս. մատեան մի, որ գե-
 » ղեկից իւր լեալ Բարսառնայի ուրումն անուամբ,
 » զոր Պարսք Ռաստառնուն կոչեն»:

13. Փ Ա Ի Ս Տ Ո Ս

Բ Ո Ւ Զ Ա Ն Գ Ի Կ Ս Մ Բ Ո Ւ Զ Ա Ն Գ Ի Ս Յ Ի

Երկրորդ պատմագրաց մերոց (յետ Առաջնոյն՝ Ագաթանգեղոսի) համարուի սա իրրեւ Հայոց պատմիչ, ճատարակորեկ և ոչ մասնաւոր որպէս զՋեւնովբ, որ ժամանակաւ հնագոյն է: Անունն և մականունն (որ սովորաբար գործածուի պարզ անուանը անդ), իսկոյն դրոշն զմիտս՝ ոչ բնիկ Հայ, այլ յոյն ճանչեալ զնա, թէ և ոմանք՝ Հայ համարին, ոչ միայն ազգային հմտութեամբ և հոգւով գրելուն համար, այլ և տեղ մի գրոցն (Գ. Ժբ), զինքն Սահառունեաց ցեղէն կարծեցընելով, երբ Ս. Յուսկան հետ ի կեսարիա ուղեկից իշխանաց կարգին գրէ. «Եւ զմերոյ տոննի ազգի իշխանն» Սահառունեաց». բայց որովհետեւ իշխանին աւնունն չկայ՝ մինչ ուրիշ իշխանաց անուանք կան, և տոննի հետ ազգի այլ կրկնելն՝ օտար իմն է, ոմանց թուի թէ այդ երկու համանիչքն մէկ յաւտուկ անուն մի պիտի ըլլան, իբր Մերստանն, կամ գուցէ լաւ եւս Միհր-Արտովն: Եւ դեռ երկրայական մնայ իր ցեղն և ազգութիւնն: Այս բանս պէտք էր վճռաբար որոշեր մեզի Ղազար Փարպեցին, որ նախ քան զայլս յիշէ զնա¹, բաւական

1. Զարմանալի և նշանական իմն է Խորենացւոյ բնաւ չյիշելն զԲուզանդ:

երկար խօսելով, միանգամայն և յայտնելով՝ որ իր ժամանակին իսկ բանասէրք տարակուսէին կամ չհաճէին անոր գիտման և ոգւոյն վրայ, ինչպէս և ոմանք ի մեր ժամանակս: Ղազար՝ Փաւստոս Բուզանդացի կոչէ, և ջատագովէ զնա իրրեւ ճշմարտախօս. «Յայնպիսումն քաղաքի (Բիւզանդիոն)» և ի մէջ այնչափ բազմութեանն ռսելոյ՝ վար» թեալ այրն Փաւստոս», և այլն, և թուի թէ իր խօսքն՝ աւելի յոյն քան թէ հայ ցուցընեն զնա. իսկ ես միանգամայն համարիմ Յունահայ, այսինքն Յունաց կամ կայսերաց բաժնի և իշխանութեան ներքեւ եղած Մեծ կամ Փոքր Հայոց որ և է մասնն, բնիկ Հայոց ծնունդ, ըլլայ նոյն երկրին մէջ, ըլլայ ի Բիւզանդիոն. այլ այս մայրաքաղաքիս մէջ՝ ոչ միայն երկար ատեն՝ այլ և ի մանկութենէ վարժեալ:

Եւ որովհետեւ այս երկրայութեան զլիաւոր պատճառն հին ատենէ ի վեր եղած է՝ հեղինակին երբեմն երկրիմի, կամ թէ կարելի էր ըսել երկնոգի ոճն և գրոյցն, այսինքն երբեմն իրրեւ տաք ազգասեր, երբեմն շատ պախարակող ազգայնոցս, ինքն իսկ Ղազար ջատագովն՝ չի համարձակիր վճռել մի կամ միւս կողմը, և լռելեայն խօստովանի թէ կան ի Բուզանդ այդպիսի գատաքննելի և ոչ արդարանալի բանք, վասն որոյ խոնարհաբար տկարանորեալք կարծէ, «Թէ գուցէ այլ որ յան» գուզն և անհրահանգ բանի լրբաբար ձեռն ար» կեալ յիւրն (ի Բիւզանդայն) գրեաց զինչպէտս» ըստ կամի», և այլն. և այլ եւս երկարաբանելով խորդախ անձէ մի մուծած կամ յաւելած համարի՝ «զայնպիսի անհաճոյս լսողաց բանս»:

Ինչ են այդ անհաճոյ բանքն: — Մաս մի երկրիմանք Հայոց՝ ոմանց պախարակելի գործոց. և յայսմ թերեւս Հայոց շափազանց ազգասիրութիւնն է անհաճոյն, և ոչ մեղադրելի Բուզանդ, մասն մի եւս շափազանց կամ սուր երգիծանք կամ ծիծաղ մի ընդհանուր ազգի բարուց և սովորութեանց

վրայ ձգելով՝ իրեն ակնհայտ երեւցածին համեմատ, յորում ինքն ալ մեղադրելի է, եթէ իր բուն գըրուածն է այն, ինչ որ հիմայ կարգամբ: Միով բանիւ, եթէ բուն իրենն են այն պախարակելի գործոց և անձանց վրայ՝ սաստիկ կամ թանձր գունով բացատրութիւնք, կամ ծաղրաբանութիւնքն սրբազան աստիճան ունող անձանց (ինչպէս Յովհաննէս եպիսկոպոս մի և այլք), լուրջ և ազնուոգի գրողի մի անվայել են. սակայն աշխարհական և աշխոյժ անկողմնակի գրողի մի չեն աններելի, մանաւանդ գրուածին ճարտարութեամբն, որ իր յարգն այլ ունի, և յայտնէ թէ հեղինակն չէր եկեղեցական, և ոչ հոգեկից Լուսաւորչի հարագատ պայադատաց, որոց ժամանակակից էր. և ոչ էր այն Փաւստոս եպիսկոպոսն՝ զոր քանի մի անգամ յիշէ՝. այլ իբրեւ ազատ գրիչ մի՝ Ղազարու շատագովութեան համեմատ՝ ճարտար և ախորժարար գրուած կարգալի է:

Բայց Բուզանդայ կարեւոր յարգն է՝ իր գրած Հայոց Պատմութիւնն, որպէս կոչուի իր գործն, բաժանեալ ի չորս Գպրոտքիւնն (մասն), այլ սկսեալ յ'Գ գպրութենէ մինչեւ ի Զ, և է իբրեւ վաթսուն տարուան պատմութիւն, և շարունակութիւն Ազաթանգեղոսի. կամ ըստ Ղազարայ՝ «մինչեւ ցթա» գաւորութիւնն Արշակայ», ոչ որդւոյն Տիրանայ, որպէս զբնն օրինակք Փարպեցւոյն, զի Բուզանդ պատմէ մինչեւ ցԱրշակ Գ, թո՛ւն Տիրանայ: Եւ ինչ որ զրէ այս ժամանակիս վրայօք՝ շատ յարգի է մեր պատմութեան համար, թէ եկեղեցական և թէ քաղաքական իրաց նկատմամբ, որոց այնպիսի տեղեկութիւններ սոյ՝ որ միայն իր քով դասուին. և թէ ստուգութեանն համար, վասն

1. Փ. Բուզանդ, Գ. դ. Խդ. - Զ. ե. գ:
 2. Արդեօք Ա և Բ գպրութիւնքն կորած են, թէ նշանակեն Ազաթանգեղոսի գրածքն կամ ուրիշ պատմիչ մի եւս, հաւաստի չէ:

զի պատմածներուն մեծ մասին ժամանակակից է և զրեթէ ականատես, միանգամայն և համաձայն օտարազգի պատմչաց, մանաւանդ Բիւզանդացի կուչեցելոց. յորոց կարգի և ինքն անուանի, և իր գործն՝ Բուզանդարան. և իրմէ դար մի և աւելի յետոյ եկող Բուզանդացիքն՝ զայն կարգալով օգտուած են, որպէս անոնց մէջ շատ անուանին Պրոկոպիոս ի Փաւստոսէ առած է (Ա. և) մեր Բ Արշակայ յԱնյուշ բերդն Պարսից արսորանաց զէպքը: զոր կարգամբ ի Բուզանդ (Գ. ծր, ծդ): Այս յիշատակս անտարակոյս կ'ընէ Բուզանդայ պատմութեան սկզբնազրին յունարէն ըլլալը, և իրմէ դար մի կամ զոնէ կէս դար վերջը հայերէն թարգմանուիլն յոսկեղինակ թարգմանչաց մերոց:

Ի՞նչ ոճով և ոգւով գրած է Բուզանդ, մեր յիմասին ի մէջ բերած Պատմական Յօդուածներէն այլ կրնայ դատուիլ, (80. 81. 86-8. 93-100. 104. 105. 107-9. 110). եւս առաւել՝ իր ամբողջ գործը կարգալով: Հայերէն շարագրութեան վրայօք չեմ ուզեր երկարաբանել. յայտնի է ընտիր հայաբանութիւնն, թէ և չափազանց՝ կրկնաբանութեամբ կամ ճոխութեամբ, որ թուի թարգմանչին քան հեղինակին առատութենէն է, ինչպէս և Ազաթանգեղոսի թարգմանութիւնն, թերեւս աւելի քան զԲուզանդին: Բաւական ըլլայ և Փարպեցւոյն խորհրդածութիւնն՝ պատմութեան տեղ տեղ աւելաբանութեան վրայօք, որպիսի են և թիւք Արշակայ ատեն պատերազմաց և պատերազմողաց և կոտորելոց ի պատերազմունս, որոց զումարն առասպել կ'ըլլայ, և ոչ միայն հեղինակին չի վայլեր, այլ և ոչ թարգմանչի, և ոչ խոհական զրջի, և ոչ միայն յանդուզն մէկի, ըստ Ղազարայ, այլ և յիմարի. իսկ եթէ այդպիսի ոք չկայ և չէ կարծելի, ապա թուանշաններն սխալ կարգացուած և գրուած են: - Ասոնք արժանի չեն մտադրութեան անգամ. իսկ պատմական զիպաց յաճախութիւնք և այլ եւս նկատելիք՝ գործոյս նպատակէն դուրս է. փափագողին քննել և

տեղեկանալ, յիշեցընեմք քանի մի ազգայնոց և օտարաց քննարանութիւնն: Ետքիններու մէջ հարկ է յիշել նախ՝ Բուզանդի իրենց լեզուաւ թարգմանութիւնը, որպէս է Փռակեղերեկն Էմինի՝ հրատարակեալ ի Լանկուայէ ի շարս նոյն լեզուաւ թարգմանեալ Հայ պատմւչաց՝ յամին 1867, անուանելով Faustus de Byzance, Bibliothèque historique en quatre livres, traduite par E. R. Émine, etc. — Գերմաներէն ի Լաւերի (Lauer), տպագրեալ ի Կոլնիս, յամի 1879, Des Faustus von Byzanz Geschichte Armenier. Ի հարկէ ասոնք թէ՛ ի յաւաջարանի և թէ՛ ի կարգին պէսպէս ծանօթութիւններ գրած են:

Նորերումս բազմաճմուտ պատմագէտն, միանգամայն և շտիւտոր հայադէտ Գելզեր (H. Gelzer), ուսուցիչ պատմութեան և լեզուաց ի համալսարանի Ենայ քաղաքի, զատ յայլեայլ գրուածոց մեր Հայոց պատմութեան և դպրութեան վրայօք, հրատարակեց յամի 1895-6 հմտալից երկար տեղեկութիւն մի Հայոց Եկեղեցոյ Սկզբնաշրոյթիւն անուանելով (Die Anfänge der Armenischen Kirche, զոր թարգմանեալ հրատարակեց Հ. Յովնանեւս Վր. Թորոսեան, միարան մեր, ի 1898, ի տպարանի մերում): յորում քննադատէ զովելով զհեղինակն: Շատ կարեւոր կէտեր պայծառ բացատրած է և պարզած. շատ տեղ այլ խիստ գատած թէ՛ զլաւն թէ՛ զվատն, և պատմական ստուգութեան սիրով թուի երբեմն գործական դէպքերն այլ լոկ զրոյց և վիպասանական գիւտ համարիլ: Բնգունի զԲուզանդայ Սահառունի ըսալը, նաեւ եկեղեցական, և բոլորովին անակնկալ տեսութեամբ, գուցէ Լուսաւորչի ազգակցութեանց պատմութեալ անյարմար մերձաւորութենէն զրգած՝ զպ իսկ չի համարիր որդի Անակայ Պարթեւի, այլ Հայոց քուրմի, որով ոչ միայն Ազգութանքեղոսի աղբիւրն ցամքի, այլ և Հայոց նուիրական հաւատքն իմանգարի: — Յազգայնոցս նորերումս

Բուզանդայ վրայ քննադատութեամբ գրած են միարան մեր Հ. Բարսեղ Վր. Սարգիսեան, Ազգասեղեղոս և իր գատակիրն անուանեալ զրոյց մէջ, և ի Վիեննա՝ Հ. Յակոբոս Վր. Տաշեան, նոյնպէս Ազգութանքեղոսի գիրքը քննելով. և Ս. Մարխանեան, Ռուսնուսիրտարիւն Փաշտոտս Բուզանդի Պատմութեան անուանելով, և հրատարակելով ի ծանօթ Անսորեայ Հանդիսի Միսիթարեանց Վիեննայ, ի 1896: Թողունք մեր ազգային դպրութեան պատմութեանց և կենսագրական քառազրոյց մէջ հրատարակուած յօգուածները: — Աւելի նորումս (1900) յիշեալ Հանդիսի մէջ Գրիգոր Տէր Պօղոսեան՝ Նկատողութիւնք Փաշտոտի Պատմութեան վերնագրով հրատարակեց քննութիւն Բուզանդայ զրոյց՝ մասանց և զլիսոց կերպ կերպ անուանց, որ յիրաւի մեկնութեան կամ հասկընալու պէտք ունին, սակայն այնպէս որ արդէն մութ եղածն աւելի շմթըննայ. ինչպէս շատ հեղ մեր նոր ծանօթարանոցը աւելի անծանօթացրինն հիներուն ըսածը, և երկարարանութեամբ շփոթեն իսկ:

Գտննալով հայերէն բնագրին, առաջին անգամ տպագրուած է ի Կ. Պօլիս՝ յամի 1721. ի մեր Ս. Ղազար, 1831. նորագոյն՝ ի Պետրպոլսկ, 1883, խնամօք Պատկանեան Քերովբէ բանասիրի:

14. Կ Ո Ր Ի Ի Ն

Անտարակոյս մեր դպրութեան նահապետաց (Սահակայ և Մեսրոբայ) երիցագոյն աշակերտաց և գործակցաց մէկն է կորիւն, որոյ անունէն կրնայ գուշակուիլ թէ՛ զուտ ազգային հին հօգի ունող ծնողաց վաւակ է. որք ոչ միայն իրենց հեթանոս նախնեաց անուանքը չէին ջնջեր մկրտութեամբ, այլ և երբեմն և կենդանեաց անուանք այլ կրէին,

որպէս և Եղևակն և Րնձակ, Յիկ, Արիծ և Գազակ, և այլն. նաեւ եպիսկոպոսական աստիճան առնեցէն ետեւ, ինչպէս և ինքն իրեն համար վկայէ Կորինն, թէ երբ Ս. Մեթրովր եկաւ ի կողմանս Վրաց քարոզելու և իրենց լեղուաւ այլ կարգաւ գրելը դիրացընելու, անոնց յառաջադիմաց մէջ « և իմ անարժանիս եղեալ ի կարգ եպիսկոպոս » սութեան վիճակ(ի) »: Այս խօսքէս հետեցընեն ոմանք թէ ազգաւ այլ վրացի էր Կորինն. այլ հաւանորէն վրա-հայ կրնայ ըսուիլ, ազգաւ Հայ, այլ բնիկ այն գաւառներուն՝ որ երբեմն Վրաց իշխանութեան ներքեւ էին, և երկիրն Վրաց դաշտ կ'ըսուէր. այսպէս էին Զ. դարու վերջ և ի սկիզբն է-ին Մովսէս Յուրտաւայ եպիսկոպոսն, և ասոր հակառակորդ՝ մերձաւոր անուամբ մեր հեղինակին՝ Կիչրիոնն, առիթն կրօնական բաժանման Վրաց և Հայոց, երկուքն այլ նախ Հայոց եկեղեցւոյ և կաթողիկոսութեան ներքեւ:

Թարգմանչաց գլխաւորաց մէկն ըլլալուն վրկայեն Ս. Մեթրովրայ աշակերտներէն երեք գլխաւոր յիշողք, Ղեւոնգ, Արձան և Եղնիկ: Խորենացին անցողաբար յիշէ որս և տհաճութեամբ իմն՝ Ս. Ղեւոնգի հետ ինքնակամ ի Բիւզանդիոն երթալուն համար, նախանձելով միւս թարգմանչաց՝ որք յատկապէս ի Սահակայ և Մեթրովրայ զրկուած էին: Իսկ Փարպեցին քանի մի անգամ յիշէ զԿորինն, և իր գլխաւոր գրածը, և ամէն անգամ անոր գիտութենէն աւելի՝ վարուց ազնուութիւնը կամ սրբութիւնը յայտնէ. Յանկայի և Երանելի կոչելով, որոյ մէկ փաստ մ'այլ տայ ի պատմելն՝ թէ անգամ մի Ս. Ղեւոնգ Երէց ի բուն ըլլալով, Ս. Մեթրովր Կորեան և Արձան աշակերտաց հետ՝ տեսնեն անոր դէմքը ճառագայթարձակ լուսաւոր, և յայսմ առթի եւս, միայն Կորեան կու տայ զԵրանելի մակդիրն: Յետագայ պատմիչք այլ հետեւին, ինչպէս Կիրակոս՝ որ Արանելի կոչէ. հարկ է որ ըստ այսպիսի պան-

ծալի և սրբազան կոչմանց՝ փայլած ըլլայ նա վաւրուքն, որ ինչպէս շատերու ի մեր Թարգմանչաց՝ անծանօթ մնայ, որպէս և իր գրաւոր գործքն. յորոց բարեբաղդաբար անկորուստ է Պատմութիւն Վարուց և մանուշակ Ս. Մեթրովրայ. զայս ինչպէս կ'ըսէ ինքն՝ գրեր է հրամանաւ Ս. Յովսեփայ աւղակալի կաթողիկոսութեանն Հայոց, և յորգորանօք իր և ասոր աշակերտակցաց:

Այս միակ ծանօթ գործս Կորեան՝ քանի մ'անգամ տպագրութեամբ հրատարակուած է. և երկու տեսակ է Պատմութիւնն, համառօտ և երկար. յետինն հարազատագոյն գործ համարուի հեղինակին, Սրբոց Վարուց և Վկայարանութեանց կարգին գրուելու համար, որպէս և գրուած է ի հնագիր ձառնորի (Բարիզու մեծ Գրատան), յորմէ ընդօրինակեալ տպագրեցաւ ի շարս Հայկական Սովետաց (ի Վանս մեր, Հոր. Ժ.Ս., 1854):

Հնագոյն մեր մատենագրաց և թարգմանչաց մէկն ըլլալով՝ ընտիր և յարգի է թէ լեզուէն, թէ խոհական և վարդապետական ոգին. թէ և չեմք իրնար ըսել թէ՛ մեր ունեցած և հրատարակած օրինակաց չափ և համանման էր իր սկզբնագիրն: Ինչպէս երկարին հետ համառօտն այլ կայ, երկարէն այլ երկարագոյն եղած թուի սկզբնագիրն. գոնէ անտարակոյս է այդ մեզի ծանօթէն զատ՝ իր ուրիշ պատմական գրուածք արտադրին: Գոհանանք հիմայ մեր ձեռաց հասածին համար, և գովեմք թէ հեղինակին թէ՛ իրմէ խնդրողներուն գովելի փափագը, այսինքն՝ մեր գպրութեան հայր անհամեմատ երախտաւոր անձին՝ Ս. Մեթրովրայ վարքն արձանացընելուն համար: Թէ և ոչ հաւասարակչիս անոր երախտեաց, ոչ մանրապատում ինչպէս վայլեր կամ փափագիմք. սակայն գովելի է իր ճշմարտասէր ջանքն ի գրածին, և ճշգրիտ արիւններն, ամիսներն և օրերն և ինչուան ժամերը՝

1. Ս. Սահակայ մահը ղնէ, « յառաջնուսն ամի » (Բ) Յազկերտի սրբւոյ Վառմայ (459)... ի կատարել

նշանակելն իր վարդապետաց մահուան, և Հայոց զպրութեան կամ գրոց գիւտին թուականաց. յորմէ երեսուն և հինգ տարի վերջը դնէ զմահ Ս. Մեսրոպայ, իսկ իրեն վարդապետութեան կամ քառորութեանն (գոր հասարակողէ) քառասունեւհինգ տարի: Իր հաշուած Պարսից թագաւորք՝ հիմակուան ժամանակագրաց նշանակածէն մէկ կամ երկու տարի ետք մնան:

Մատենագրիս գրութեան և պատմական յիշատակաց վրայ աւելի տեղեկութիւն ուզողն՝ կրնայ Քաղնալիպի ՄԵ հատորին մէջ գտնել (եր. 114. 303), ուր յիշուին նաեւ այլեւայլ գրողք և քննադատք. նաեւ թարգմանիքը գրոյն և հրատարակողք, որպէս Լանկուա՝ փոանկերէն. իրմէ շատ առաջ (1841), Վերլե (De Welte), գերմաներէն հրատարակած է ի Տիւրյինկէն (Goriun's Lebens Beschreibung des heil. Mesrob). ուրիշ գերմանացի մ'այլ Յեդդեր, (Vetter), քննադատութիւն գրած է, և իրենն այլ թարգմանարար հրատարակած է ի Վիեննա, Հայերէն, Հ. Յակոբոս Վդ. Տաշեան:

Ժամանակիս հետաքնին երոպացի բանասիրաց՝ մեր պատմիչները քննել և թարգմանելն՝ զարմանք չի բերեր. այլ զարմանալի համարիմ իրենցմէ դար և կէս առաջ՝ փէ-փէ. դարու բանասիրաց զԿորիւն ճաննալը. յորոց գիտնականն Վիստոն (Whiston) անգղիացի գրէր առ հայագէտն Լակրոզ (La Croze) թէ, Զարմանամ որ դու և Շրոեդեր (Schroeder) (ուրիշ գերմանացի բանասէր մի) կ'ըսէք թէ՛ Խորենացին ի Կորիւնէ առեր է Յովսեփոսի յիշած (Բ. Ժե) ապրտամ (իւզոյն) յիշատակը. բայց երկու-

» ամսեանն նաւասարդի (50).. յերկրորդ ժամու առ
» ւուրն »: Իսկ Ս. Մեսրոպայ. « Յեա ամսոց վեցից
» անցելոց վախճանի երանելոյն Սահակայ, յերեքտա-
» սաներորդում ամսեանն մեհեկանի, յառաջնուսմ
» ամի Բ Յագկերտի »:

քին (Խորենացոյ և Կորեան) բանից ոճն զանազանի իրարմէ, միաբանին՝ բախտանը ապրտամ կոչելով: Աւելի զարմանալի է այդ բանասիրաց գտնելն զԿորիւն և ի Կորիւն՝ զապրտամ, որ չի գտնուիր մեր օրինակաց մէջ. այլ Ս. Մահակայ վախճանելու առեն օծմանը համար՝ կ'ըսեն, « Ի » պաշտաման անուշահոտ իւզոյն¹ ». միթէ այս տեղ սպրբոքած էր ապրտամն, եթէ ուրիշ տեղ. ըսել է թէ բանք պակսին մեր օրինակաց մէջ: Եւ այս անտարակոյս է, ինչպէս առաջ այլ յիշեցի, թէ աւելի երկար գրած էր Կորիւն այս գործը: Անանիա Սանահնեցի Ս. Ստուռածի մեկնութեան ճառին մէջ կ'ըսէ. « Զգործս շարութեան (Նեստորա) կանաց) ուսցիս ի պատմութենէն Կորեան աշտ. » կերտին Մաշթոցի, ի տպառուածին ». այսինքն, պատմագրութիւնը վերջացնելուն մօտ: Յերաւի, հին համարու օրինակին մէջ յիշուի թէ, « Արք » ոմանք հալածեալք ի ժողովոյն Եփեսոսի, որում » (միոյն) անուն էր Թէոդորոս՝ ըստ Պաւղոսի Սա- » մոսպացոյ և ըստ Նեստորի հերձուածոյն զիրս » ստացեալ... եկեալ յաշխարհս մեր կամէին ու- » սուցանել զչար աղանդն », և այլն. բայց Ս. Հարք Ժողովոյն փութացան իմացրնել Ս. Սահակայ և Մեսրոպայ. և սոքա « Ճշմարտապէս փութով ըզ- » կամակար հերձուածոսն ի բաց հալածեալ յիւ- » ղեանց աշխարհէն », զգուշացան, և թղթով այլ իմացուցին իրենց թղթակցաց Ս. Պրոկզի և Ակա- » կայ, ինչպէս յիշէ և Խորենացի (Գ. կա). սակայն Անանիայի ակնարկութիւնն կարծել տայ թէ աւելի երկար գրած էր Կորիւն այս խնդրոյս վրայք: — Կիրակոս պատմիչ մեր յիշէ թէ գրեց նա « զՊատ- » մութիւն Ս. Մեսրոպայ և այլ ժամանակաց »: Իրմէ առած երեւի և Վագար Զահեցի կաթողիկոսն, ի կարգի Պատմագրաց Հայոց, ըսելով.

1. Համարու հին օրինակն գրէ. « Յերրորդ ժամու առաջնու պաշտաման »:

« Արար զՊատմութիւնն Դամանակաց, և զլիակաւ » տար պատմութիւնն Սրբոյն Մեսրոփայ » : Ասոնցմէ կամ ուրիշ աղբիւրէ առած՝ Բարիգու հայերէն լեզուի առաջին ուսուցիչ մերազգի Մարգէն-Ջրպետն սկիզբն ժԹ. գարու գրէր թէ Կորիւն գրած է իր ժամանակին թէ քաղաքական և թէ կրօնական իրաց վրայ : Իսկ իրեն գրեթէ ժամանակակից, յարանուն և յաջորդ Սէն-Մարգէն փռանկ հայագէտն այլ, հաւանօրէն իմաստասիրելով կ'ըսէ թէ Վառձապուհ թագաւորի հրամանաւ գրած է Կորիւն զՊատմութիւնն :

Անցողաբար յիշենք որ Կորիւն՝ իր վարդապետը միշտ Մաշտոց կոչէ և ոչ Մեսրոփը. թէ և իր գրոց ձակտին այս յետին անունն գրուած է, բայց կ'իմացուի որ ինքն չէ գնօղն :

Դարձեալ յիշենք որ հաւանօրէն ոչ Կորիւն միայն՝ այլ և իր աշակերտակիցը ոմանք գրած են զվարս իրենց Վարդապետին. կամ թէ Կորեան մեզի ծանօթ ընդարձակէն աւելի ընդարձակ վարքը գտեր է Ստեփանոս Կամենիցացին, որ իր Հայ-լատին բառագրոց մէջ վկայութիւն բերէ այն պատմագրքէն, և ինչուան խԹ (49) զլիահամարն յիշէ : — Այլ աւելի հետաքրքրական է ստոր յիշելն Մեսրոփի պատմիչ մի հնագոյն քան զԵրէցն ժ. գարու, և թուի նոյն ինքն Մեծն Մեսրոփի, որ յիշեր էր իր գրոց մէջ զՀռովմայեցիս, զՊայտոս, զԲարգէն ոմն. և մէջ բերած բանից հատուածներէն և բաւերէն՝ թէ հին լեզու և հին ժամանակ գուշակուի՝ թէ նոր. զոր օրինակ. « Յցաշինութիւն պարբայ » պաց. Արժոց Յախնապակոռնն. — Սմբատ որ դերկիրն ագռռեաց Մարաց. — Թորոս՝ յար մարմնով » : — Հաւանական չերելի ասոնց գրողն Ս. Մեսրոփի ըլլալ. հաւանականագոյն թուի որ գրած ըլլայ Մեծին Երեսիսի վարքը կամ յիշատակ մի. և զայս կարծեմ՝ այն Ս. Հայրապետին հնագիր ձառնարի մէջ գրուած վարքին վերջերջ անոր մահուան մօտ ըսածներուն համար յիշելն

թէ, « Եւ ունկն դնէր նմա Մեսրոփը, որ անուանեցան Մաշտոց » :

Ի Հայապատումիս, յ'Բ մասին, Կորեան են Յօգուածքն 115. 124 :

15. ԵՂՆԻԿ ԿՈՂԼՍՅԻ

Շատ բան արժան էր գրելն, որպէս գրեր են ոմանք մերայինք և օտարք՝ այս սքանչելի հայկաբան գրչի վրայօք, եթէ պատմական բան մ'այլ գրելն յայտնի ըլլար : Արգէն Ագաթանգեղոսի թարգմանութեան վրայօք յիշեցինք՝ զօս կարծելով անոր թարգմանիչն և հայացընելով զյոյն սկզբնագիրը : Իր եզական Եղծ աղակոց գործոյն մէջ նշմար մի հին հայկական յիշատակի գուշակել տայ իր և մեր ազգի նախահարց աւանդութեանց տեղեկութիւնը. բայց այս բաւական չէ մեզ ի շարադասել զնա ընդ Պատմիչս մեր : Այլ քիչ մի աւելի հաւանական կ'ընեն Ստեփանոս Կամենիցացոյ քանի մի պատմական բանքն կամ բառք անուամբ Եղնրկայ. որպէս. « Հեծաւ յուտնաւոր ձի. բայց ի թօթափե » լոյն խօթացաւ » : մեր տպագրեալ բառագրոց մէջ չէ մտած այդ ոտնաւոր բառն. իմաստն նշանակէ վեր վեր նետուող անկիրթ ձի, զոր նոյնպէս յայտնէ և թօթափելն : — « Պատուեն զնա հիւրընծայիւք » : « Պարգեւէ նմա զօսացեալն Մոշկոշայ սկն » : — « Թախանձ մեզ եղեր խնդրելով այդքան գրամն » : Թերեւս գտնուին և ուրիշ այսպիսիք յիշեալ ի Հայ-լատին բառարանին. բայց և ասոնք բաւական չեն մեր դիմանն :

Եղնրկայ վրայ ուրիշ ծանօթութիւն չունիմք՝ բայց ի յիշատակէ Բագրեւանդայ եպիսկոպոս ըլլալուն. զի ինքն կարծուի Ս. Յովսեփայ և ուրիշ եպիսկոպոսաց հետ Յազկերտ թագաւորի հրովարտակի

պատասխանին ստորագրողաց մէկն, և նախագահներէն մէկն. ինչպէս տեսնուի Եղիշէի և Ղազարայ գրոց մէջ:

16. ԱՐՁԱՆ

Ոչ միայն գլխաւոր թարգմանչաց մէկն վկայուի սա, այլ և հոգեւոր ոմն ըստ տեղեանն զոր յիշեցինք Կորեան համար ընդ Ս. Մեսրոպրայ, Ս. Ղեւոնդեայ լուսափայլ երեւմանն ի ննջելն: Ի նախնեաց մերոց չունիմք յիշատակ ինչ Արձանի գրուածոյ. բայց ժկ. դարու վերջը գրող մեր Հարց մին՝ (ընդ անուամբ իտալերէն հրատարակող Սեղբուսեան Յովհաննու) Compendio Storico, և այլն, գրոց մէջ կ'ըսէ (Գ. հտ. 510), յետ յիշելու զուրիշները թէ, և սա պարագեցաւ Պատմութիւն գրելու (Si esercizio nella Storia). բայց հիմայ իրմէ գրած բան չի գտնուիր:

Իսկ նախընթաց դարուս սկիզբները գրող ծանօթ Փռանկն Սէն-Մարգէն՝ անակնկալ ինչ կ'ըսէ (Ս. 14) թէ, Եզնիկ և Արձան Արծրունի և ուրիշներ այլ գրեցին Ընդէմ Մոզուց, և գրածնին գտնուի հիմայ: — Ո՛ր գտեր է ինքն, և ո՛ր կըրնաւք մենք գտնել (զատ յեղձ աղանդոցն Եզնիկայ): Այս բանիս նկատմամբ յիշելի է բազմազնուս այլ և բազմաճնար փոռի (ծանօթ և առ մեզ թղթակցութեամբն ընդ Զաքարիա կաթողիկոսի) գրածն ի Բիւրասպրակ (կամ Բիւրաստուեան և կամ Հաղաքանատեան) Մատենադարանի իւրում (ՉԱ), Թեոդորոս Մոռպուռեստուացոյ համար, թէ գրեց առ Մաշտոց քրեպիսկոպոս Հայոց՝ Մոզուց աղանդոյն վրայօք և Զրուանայ ըրած զոհին յառաջ քան զծնունդն Արմըղի: Արդեօք չիտթուած են երկու թղթագիրքն առ Մաշտոց, թէ մեր Կողբացին ի

Մոպուռեստուացոյն քաղած և օգտուած է, որ աւելի հաւանական է: Վասն զի գիտեմք ստուգիւ, այլ և ցաւօք, որ Եզնիկ այդպիսի կրօնական խընդրոյ մի վրայօք գրած է առ Վարդապետ իւր Մաշթոց: Այս թուղթն ազգասէր պարոն մի՛ ընդ այլ ձեռագրաց զոկէր մեր Հարց վաթսուն և հինգ կամ աւելի տարի առաջ՝ առագաստաւոր նաւով ի Հնդկաց. անկուշտն Ովկիանոս՝ նաւովն հանդերձ կլկեց այդ ցանկալի գրուածն եւս:

17. ԽՈՍՐՈՎ

Յայտնուորք (Հոսի Ը) ընդ գլխաւոր և երեւելի թարգմանիչս յիշեն զԽոսրով. և ի կարգի Օրննուրիշնաբեր Յուցակի Մաշտոցիև կ'ըսուի թէ Ս. Բարսղի կարգադրած Զորոհնեաց կանոնն յերուսողեմէ « Խոսրով թարգմանիչն երբեր ի Հայս, » որ երթեալ էր յԵրուսողեմ՝ հրամանաւ Սրբոյն » Սահակայ »: Վարդան և Կիրակոս պատմիչք՝ աւելի վար գասեն զԽոսրով ի կարգի թարգմանչաց, և իրմէ և ամենէն վերջ զՂազար: Նոյնպէս անանուն զրիչ մի՛ երեք բաժնելով զթարգմանիչսն՝ ժամանակի կարգաւ, յերրորդին գնէ զԱղան Արծրունի, զԽոսրովիկ և Ղազարիկ պատմիչ, ի մարգպանութեան Վահանայ: Եթէ Ս. Սահակայ ատեն բերաւ Խոսրով այս կանոնը, ըսել է որ շատ երկատարող էր այն ատեն կամ երկարակեաց:

Բայց մեր ինդիրն իր Պատմիչ ըլլայն է, զոր և ի շարս պատմչաց յիշեն Կիրակոս և Մաիթար Արիվանեցի. յետինս յետ Կորեան գրէ (ըստ մեզի հասած ձեռագրի) Սահակայ Խոսրով. ուր պակասի բառ մի, և պիտի ըլլայ Պատմաբիշև Ս. Սահակայ: Զայս գրած ըլլալն անտարակոյս է. վասն զի Հայրն Ահարոն յ'Թ. դարու յիշէ զայդ: Նաև յե-

տին դարուց Նոր Զուգայի Զեռագրաց Յանկի մի մէջ յայտնապէս գրուած է. « Խոսրովայ թարգ- » մանչի Պատմութիւն Սրբոյն Սահակայ » : Եւ Յակոբ Այուբեանց այսպէս կը գրէ. « Խոսրով թարգ- » մանչի, որ է պատմութիւն Սրբոյն Սահակայ » հայրապետին » . և ինքն յիշուի ի Մատրաս Հնգկաց տպագրեալ Ազրարարի մէջ, յամի 1795 : Այսքան մօտ ժամանակ, դար մի առաջ ծանօթ ըլլալն այդ ցանկալի գործոյն՝ տարակոյս չի թողուր, այլ ցաւ՝ այնուհետեւ չյիշուելուն : Անյայտը չեմք կրնար դատել, բայց ժամանակովն և ընկերներովն յուսամք որ անոնց արժանաւոր գրչակից էր, և Կորեան ոգւով գրած՝ իր մեծ վարդապետին և մեր մեծ և անմահ Ս. Հայրապետին վարքը :

Պէտք չէ շփոթել այս Խոսրով պատմիչը՝ ընդ հետոր Խոսրովի, որ և Խոսրովիկ, յ'Ա. դարու :

18. Ն Ե Ր Ս Է Ս

Մխիթար Անեցի ընդ մէջ Կորեան և Ղազարիկի կարգէ գտաւ. « Եւ Պատմութիւն Հայոց ի » Ներսիսէ շարագրեալ » : Եւ նոյնն աւելի առաջ յետ Ագաթանգեղոսի և Բուզանդայ գրէ. « Եւ » զկնի նոցա Պատմութիւն Ներսիսի, զոր՝ Ղազար » րիկ՝ Հայոց անուանէ » : Ո՞ր և ո՞ր Ղազար անուանած է զայս : Ստեփանոս Օրպելեանն այլ իշխանաց դասակարգին վրայ գրելով կ'ըսէ (Գլ. յե). « Զայս այսպէս ի գահ-նամակի իշխանացն Հայոց » զոր Ղեւոնդ գրեաց, և սակաւ մի ցուցանէ Ագա » թանգեղին և Ներսիսին » : — Կրնայ այս յիշատակներէն մէկն կամ մէկայն Ներսիսի անուամբ՝ ոչ հեղինակն իմացուիլ, այլ Մեծին Ներսիսի պատմութիւնն. սակայն եթէ այսպէս այլ ըլլայ՝ հարկ կ'ըլլայ ընդունիլ որ անոր վարքը գրողն այլ հին

է, թէ Ս. Մեսրոպը ըլլայ՝ թէ իր աշակերտաց մին. բայց Անեցոյն կրկին անգամ զՆերսիս յիշելն հաւանեցընէ թէ՛ մէկն պատմիչ էր այդ անուամբ, և ո՞ր և է մասամբ գրեր էր զՊատմութիւն Հայոց :

Իսկ Ս. Ներսիսի վարքն գրողք՝ մէկ երկուքէն աւելի գուշակուին. այլ շատ զարմանալի է Մատթ. Ուհայեցոյ ըսածն՝ որ կրնար կարծեցընել թէ նոյն ինքն Ս. Ներսիս գրած ըլլայ իր մարգարէութիւնը. « Զոր Հոգոյ ակամբ գրեաց ի մաքուր » Պատմութեան իշրուս յազգեցութենէ վերնոյն » : Բայց զայն գրողն ո՞վ այլ ըլլայ, գրուածն երկբայական է, թէ ոչ և մասամբ անվաւեր :

Մխիթար Այրիվանեցիին այլ յիշէ (քիչ մի շփոթ կերպով) Ներսեճ պատմիչ մի ընդ մէջ Բուզանդայ և Կորեան :

19. Մ Ո Վ Ս Է Ս Խ Ո Ր Ե Ն Ա Յ Ի

Եթէ սա է Բագրեւանդայ եպիսկոպոսն, որ ի կարգի այդ վիճակի ժառանգաւորաց դասուի, կամ ո՞ր և է աթոռոյ վիճակաւորն՝ Մովսէս ֆիլիստիոս կոչուածն, որում իբրեւ մահուան դեղ սուրն այն սուրբ և բարձր աստիճանաւորին և կերպով մի ձեռն-ձոռցիկ, ձայնը կտրեցին իր հակառակորդքն, ինչպէս գրէ Ղազար Փարպեցի ի թղթին առ Վահան Մամիկոնեան, ի վերջ Ն. դարու, յիշելով նաեւ անոր « Ի ժամ վախճանին զինչպիսի ահաւոր նոյնս գրով » ի վերայ զլիաւորաց քահանայութեանց սաս- » ցեալ » , տարակոյս չի մնար՝ որ յառաջ քան զայս յիշուողն՝ նոյն Ն. դարու վերջերը վախճանած է. և նոյն տօնելի Ս. Քերդողահայրն կ'ըլլայ, որոյ սրբութեան վկայէ նոյն պատմիչն՝ կոչելով զնա Երանեղի. և « Ար արգարեւ մինչդեռ էր ի մարմնի » ցանկ երկնային գօրացն էր քաղաքակից... լու-

» սաւորիչն և տգիտաւհարած», և այլն: Ասոր նման գրեն և նշանաւոր իշխանք ժամանակին երկու Սաւակըն Բագրատունին և Արծրունին, միատեղ ի Նախճուան գանուած ասին, իրենց խնդրանաց թղթովք. « Հրեշտակ և սպասաւոր մեծութեանցն »
 » Քրիստոսի, յերկրի երկնայինդ ցուցեալ այր եր-
 » կակենցաղ¹. . . որ տուարդ մեզ երկրորդ Սահակ
 » և Մեսրովպ՝ յեա գնալոյ նոցա առ Աստուած»: Այս թուղթս իրբեւ յառաջարան է թղթոյն Մովսիսի՝ յորում Ս. Աստուածածնի ի Հայս բերուած Պատկերին վրայ խօսի. մեզ կարեւորն ի ժամուս՝ գրուածին վերնագիրն է, որ ոչ միայն ի նոր օրինակս, այլ և ի ցանկալի մեծ և ստուար վկայագիրս (կամ Մարտիրոսոյ) Բարեկեան Գրատան² (Հայերէն ձեռագրաց թիւ ԶԸ, միջին երկաթագիր կոչուած տառերով՝ ԺԲ. դարու), նշանակէ այսպէս. « Թուղթ Սահակայ մեծի իշխանի սպարաւ պետի առ Մովսէս Խորենացի վարդապետ. յորս »
 » և բանք Սահակայ Բագրատունեոյ, ի միում »
 » տեղւոյ լինելով ի Նախճուանի»: Աւելի մեծ և հսկայ Ձեռագիր մ'այլ նոյն գրատան մէջ, (թիւ ԽԶ), և անշուշտ առաջնոյն պէս հնագունէ մի օրինակուած յամի 1307, այսպէս վերնագրէ. « Թուղթ »
 » Սահակայ Արծրունոյ և Սահակայ Բագրատունոյ՝ »
 » իշխանաց, առ Մովսէս Խորենացի, ի միում »
 » տեղւոյ լինելով ի Նախճուանի»:

Չկայ բանաւոր պատճառ մի տարակուսելու թէ յիրաւի այդ իշխանքդ գրած շքլան առ Խորենացին Մովսէս. և գրեթէ աներկրայելի է թէ գրած ըլլան առ նա իրբեւ առ հմուտ ոք ազգային իրաց, և առ նոյն իսկ հեղինակն Պատմութեան Հայոց:

Որչափ այլ այս հաւանական է, և ընդունելի բաղմաց, սկսեալ գրեթէ յամենայն պատմիաց մե-

1. Ուրիշ Օր. երկրալեկցաղ, որ անյարմար է:

2. Յորում հարիւր վաթսուներեւոթն Վկայաբանութիւնք և ճառք կան:

րոց, որք կամ Խորենացի անուամբ կամ առանց տեղւոյն սոսկ անուամբն կոչեն, սակայն ոչ անունն և ոչ տեղանունն բաւական է լուծելու Մովսիսի Պատմութեան վրայօք եղած տարակոյսներն և խնդիրները, որք գրեթէ երկու դարէ ի վեր՝ եւրոպացի գիտնոց քննադատութեան առիթ եղած են, և շատ մասամբ ստուգութիւնն անընդունելի. եւս առաւել մեր դարուս և աւելի մեր մտ քննողաց և օրերուս՝ մանաւանդ ազգայնոցս, որք գրեթէ երկու հսկառակ կարծեօք կամ կուսակցութեամբ և չարիտանց վիճով և երկարաբանութեամբ գրած են, շատերն աւելի հերքելով, պախարակելով, անարգելով, և իբր ոչնչացընելով պատմին հազարամեայ համբաւը: Այդպիսիք բաց ի գործոյն պայքարին նաեւ հեղինակին ժամանակին կամ գարուն վրայ. հին և բաղմաց ընդունած են. դարէն գլորեն մինչեւ յ'Պ., իբր թէ Մովսէսոյ այդ Խորենացի՝ Բագրատունեաց ցեղի շատագով և կողմակից ըլլալով, երբ Բագրատունիք առին առաջնութիւնը յիշխանս Հայոց և թագաւորութեան եւս հասան ի վերջ թ'. դարու, այդ հեղինակդ չնթելով շողմելով հնարեր է իր հաշակեալ Հայոց Պատմութեանը, յորում յայտնապէս Բագրատունեաց ցեղին թեւարկէ: Սակայն պէտք է աւելցընենք, որ քիչերն ինչուան այդ տարօրինակ գաղափարով իջեցընեն գնա այդքան վար. այլ շատ վայր իջողք եւս՝ կամաց կամաց իններորդէն յ'Ը. դար, անկէ այլ յ'Ե. կ'Ելլեն՝ այլեւայլ փաստերով և օտար պատմիաց յիշածներու վկայութեամբք. որք որչափ այլ գիտնական արգասիք երեւին, դեռ չեն բաւական հաստատելու Խորենացեոյ կամ այս անուամբ յիշեալ Պատմիկ կամ պատմութեան նորութիւնը: Սակայն միշտ զանազանելու է զժամանակ Պատմիչին և զպատմութեան ստուգութիւնն. պատմութեանց մէջ եղած տարակուսելիք, անստոյգք, սխալք եւս՝ չեն հարկադրեր զպատմիչը նորացընելու կամ դարէ դար վար իջեցընելու:

Այս ըսածիս դէմ բողոք բարձրանայ, թէ ուրեմն այդ Ե. դարու համարուած Խորենացիքն է զրեբ այդ ստոյգ և անստոյգ Պատմութիւնը, այն հին յիշատակաց հետ՝ նորութեան նմոյշներով:

Եթէ երկու կողմի կարծեաց փաստերն ուզենք ի մէջ բերել, քննել և դատել, մեր նպատակէն շատ հեռու և շատ երկար կողմեր հարկ կ'ըլլայ երթալ և գրել, մինչ մենք այդպիսի գրուածներ կ'արգալէ այլ ձանձրացանք, և շեմք ուզեր ձանձրացընել: Այլ ըստ կարելոյն համառօտիւ քանի մի քան յիշեցընենք՝ այս անձին և հեղինակութեանն վրայօք, որք դեռ շճանձրացողաց կարենան գիտելու կէտեր ըլլալ: — Եւ նախ թէ, նոյն մի անձն է Խորենացին Մովսէս և այլեւայլ հեղինակաց՝ կոչած Պատմագիրն, Եպիսկոպոսն, Փիլիսոփոսն, Քերպողաճայրն, Քաջ Քարտառչարն Սահակայ Բագրատունւոյ, նաեւ Գրիչն մեծին Ս. Սահակայ, Երանելին, Սրբազանն, այն Մեծն իմաստասիրաց և հռչակեացն ընդ տիեզերս, ինչպէս կ'անուանէ զնա ինքն իսկ հռչակեալ իմաստասերն Յովհ. Կաթողիկոս ի սկիզբն Ը. դարու, որ յիշեալ զՅգնիկ և զընկերները՝ կ'ըսէ Մովսիսի համար. « Ար ըստ ևնցանն և ոչ ձեռի ի ևնցանն »: Իմաստասիրէն մէկուկէս դար առաջ, այսինքն ի կես Զ. դարու, Յովսիս ի համառօտ Պատմութեան Ս. Թաթլոյ յիշէ. « Երանելին Մովսէս քերպողա » հայրն՝ ի Պատմութեանն նշանն »: Թերեւս հնագոյն յիշող է Մովսիսի քերթողաճօր պատմագիր եւս ըլլալուն. (Տես Յօդուած 151, յ'Բ մասն): — Յիշենք և Սերբոսի պատմագրութեան սկիզբը գրուած ժամանակագրական համառօտ քան մի, զոր ուրիշ հնագոյն պատմաց յիշատակաց հետ ինքն (Սերբոս), որ գրէր ի կէս Ե. դարու, գրեր է իր հարազատ պատմութենէն առաջ, Խորենացի անուամբ իսկ.

1. Արպիսի են Ղազար Փարպեցի, Գրիգոր Սարկաւազապետ, Մագիստրոս, և Մաշտոց, և Տօնացոյց, և այլ շատեր:

« Ի Պատմագրացն, Մովսիսի Խորենացոյ և Սաե » փանոսի Տարօնացոյ »:

Այս անտարակոյս է որ ամենայն հեղինակք մեր՝ պատմիչք և ոչ պատմիչք, թէ՛ Խորենացի անուանելով թէ՛ ոչ՝ մեծաՀամբաւ Մովսէս մի յիշեն, և իրր գերագոյն քան զամենեօին իրենցմէ առաջ եղած հեղինակ մի. ոմանք այլ անշուշտ ազգային պատմութեան սիրողք՝ առանց երկրայելու նոյն համարին զԽորենացին և զՊատմիչն Մովսէս. բայց ամենէն յետին ժամանակի և յետին ոճով գրողքն եւս միաբանին մեծիմաստ և կշռաբան Կաթողիկոսին այնպիսի փառաւոր վկայութեանն՝ հռչակեացն ընդ տիեզերս:

Այսպիսի անձին այսպիսի վկայութիւն՝ հաւատօտ և այդ համբաւեալ Մովսիսի հնութիւնը, ոչ ձեռի յեզերկայ. յետինք աւելի Մովսիսի Պատմութեանն համար համբաւեն զնա և հռչակեն, այլ և իր-բաւ ժամանակաւ հնագոյն Պատմիչ. և Ե. դարու պատմաց մէջ այլ նախագասեն զԽորենացի: Մի-թար Անեցի մինչ զԷդիչէ և զՂազար ի 500 թուականին նշանակէ, զԽորենացի ի 460 ատէ: Արոշակի զԽորենացի՝ նաեւ Պատմիչ վկայող են՝ խոհական և նշանաւոր Պատմիչք մեր ի սկզբան ժ. դարու, — Յովհաննէս Զ կաթողիկոս, և Թովմաս Արժրունի, և այլք. — թէ և ժամանակը թուականօքն շիշեն, միշտ իրենցմէ շատ վեր հնութեան գաղափար մի տան անոր: Ասոր հակառակիլ և իրենցմէ պահանջել որոշ թուականը՝ շատ տրամբան պահանջ չերեւիր: Էջմիածնի հոկարան չափ մեծ և Հրաշարիտ ճառընարին մէջ, որ հնագոյն օրինակէ գաղափարուած է, Խորենացոյ Պատմութեանն (Բ. կգ) զլուխը մէջ բերուած է այս վերնագրով. « Ի յիշատակի Սրբոյն Սահակայ » հայրապետի ի Քերպողակն գրոց, յաղագս վա-րուց և կենաց նորա, և վասն անելեանն զոր » ակամայ պատմեաց Կախարարաց Հայոց: Յայն- » ժամ ժողովեալ ի միասին ամենայն նախարա- » րացն Հայոց », և այլն:

Հասարակաց հնոց և նորոց միաբարբառ և վը-
կայութիւն համբաւոյ և գերազանցութեան Մովսի-
սի. և յայսմ՝ չէին կրնար խաբուել այնքան խոհական
հեղինակք մեր, որոց հարկ է հաւատալ, մանաւանդ
հնագունից, (ինչպէս Փարպեցին, Յովհ. Իմաս-
տասէր, Ստեփ. Սիւնեցի, Գր. Սարկաւազապետ,
և այլն), որոց հետեւին իրենցմէ յետինք: — Ի՞նչ է
պատճառ այդ համբաւոյն և հուշակին: Եթէ ի մի
բերենք ամեն ինչ որ հիմայ գտնուի յանուն Մով-
սիսի (Ըլլայ Խորենացի՝ միանգամայն և Պատմիչ,
Ըլլայ Քերզոզահայր և Փիլիսոփայ), մեզի գեռ բա-
ւական զուգակչիս մի չեն ընծայեր այնքան մեծ
հուշակի: Փարպեցւոյն յիշածն է անշուշտ էկեղեցւոյ
տօնակարգին մէջ գրուած Մովսիսի Քերզոզահօր
անունը, որ յայտնէ իր սրբութիւնը. բայց այդով
բաւական չեմք կարծեր վերադասելու զնա քան իրեն
հետ տօնուածները: Համբաւն սրբութենէն աւելի՝
իմաստասիրութեանն համար է, որոյ հաւատամ,
եթէ և հաւաստել չեմ կարեր մեր ձեռաց հասած
Մովսիսի անուամբ գրուածներով, որոց ի՞նչ Ըլլալը
նշանակուած է Հայերէն հին Դպրութեան Պատ-
մութեան մէջ: — Եթէ Խորենացւոյ Պատմագրու-
թեանն համար է այդ համբաւն: Այս գործս արդա-
րեւ սիրելագոյն է մեզ հեղինակին գրուածոց մէջ՝
ս՛վ այլ որ Ըլլայ. բայց դարձեալ չէ բաւական կամ
համեմատ առ համբաւն: Ուրեմն պէտք է խոստո-
վանիմք որ գեռ անծանօթ է մեզ պատճառ այդ
գերազանց համբաւոյն, թէ և հաւատանք անոր:

Արդ, հարկ է դառնալ ի Պատմագրութիւնն, որ
ստուգիւ նշանաւոր և կարեւոր գրուած է մեզ քան
յամենայն ծանօթ գրուածս Խորենացւոյ կամ որ
և է Մովսիսի: Պատմագրին անհաւան քննադատք
կ'ըսեն թէ դա՛ մեր այդ հուշակեալ և տօնելի
Մովսիսի գրուածն չէ. այլ ուրիշի մի: — Այո,
կրնան ժամանակակից կամ մօտաժամանակ Մով-
սիսներ Ըլլալ, մէկն Խորենացի, միւսն այլ տեղացի:
Մովսիսի ընծայուած մակդրրաց մէջ Ս. Սահա-

կայ գրիչ կամ դպիր մի եւս յիշեցինք, որ դա մեծ
հայրապետին առաջնորդութեամբ կարգադրեր է
մեր Մաշտոց գրոց կանոնները, որոց ցանկ մ'այլ
զրեր է, որ կ'ըսուի « Կարգաւորութիւն Օրհնու-
» րիւնարքեր Յուցակի », և գտնուի հին ձեռագիր
Մաշտոցից վերջը կամ սկիզբը գրուած. և այս ար-
դարեւ մեծ գործ մի է (Մաշտոցն), և արժանի մե-
ծահամբաւ ընելու իր կարգաւորողը, եթէ է և եթէ՛
ոչ Մովսէս օմն: Այդ գրոց շատ օրինակաց մէջ միայն
Մովսէս անունն յիշուի. բայց ամանք մակա՛նուամբ
կամ հայրենեօք կիշրենացի գրեն, որ հաւատալի
չէ. կայ այլ որ որոշ Խորենացի գրէ: Կանոնաց կամ
Օրհնութեանց կարգաւորութիւնն (զոր այլեւայլ
թարգմանիչք յայլեւայլ քաղաքաց Յունաց ի գործոց
Ս. Հարց բերած են), Հայիական գրերու գիւտէն և
թարգմանութեանց սկսելէն քանի մի տարի վերջը
սկսուած կ'ըսուի, և իբրեւ տասնեւհինգ տարեօք
սեւած. ըսել է որ երբ հետ զհետէ թարգմանու-
թիւնք կանոնաց բերուէին՝ յարմարութեամբ դա-
սաւօրելով ձեւանար այդ Օրհնուրիւնարքեր գիրքն,
որ յետոյ Մաշտոց կոչուեցաւ: Այդ կարգաւորու-
թիւնն Մովսիսի ձեռօք եղած է իբր յամի 431.
յետոյ Մանդակունին և այլք՝ աւելցուցեր են նոր
կանոններ: Արդ, եթէ այդ Մովսէս գրիչն Ս. Սա-
հակայ՝ էր Խորենացին, շատ երիտասարդ եղած
պիտի Ըլլայ ի սկզբան կարգաւորութեանն. բայց
աւելի նշանելին այս է, որ շատ յաջող և հանճա-
րեղ երիտասարդ մի եղած պիտի Ըլլայ, և յար-
մար է այն գաղափարին՝ զոր հասարակօրէն ունիմք
Խորենացւոյ վրայ, և որոյ վկայեն իր գրուածքն:
Դարձեալ, եթէ այդ ստոյգ է, կրնայ կերպով մի
յարմարիլ և աւանդութեան թո՛վմայի Արծրունւոյ՝
թէ նա հարիւր քսան տարի ապրած Ըլլայ և մին-
չեւ Գնեսն կայսեր ատեն (474—94): Այս ստոյգ
է որ՝ իր վկայութեանն համեմատ (Գ. կա. կր),
յետ առաջնոց թարգմանչաց՝ վերոյիշեալ թուակա-
նէն ետեւ զրկուած է ինքն ուրիշ ընկերներով

հմտանալու յունարէն լեզուի՝ ստոյգ թարգմանութեանց համար, և հետ զհետէ՝ զնացեր է գրատուններ և զիւաններ քննելու՝ յԵղեսիա, յԵրուսաղէմ, յԱղեքսանդրիա, ի Հռովմ, յԱթէնս և ի Բիւզանդիոն: Աստի երբ դառնայր մտաւոր հարստութեամբ իր «ամէնիմաստ արուեստիւն և» կատարելագոյն յարմարութեամբն, յուսայով (ուրախութեամբ) հարսանեաց պարել և առագաստի ասել երգս» (Գ. կը), Հայոց թագաւորութիւնը վերցուած գտնէ, և փոխանակ իր փափագելի վարդապետաց փարելու (Ս. Սահակայ և Մեսրոպայ) ստիպի «ի վերայ գերեզմանի (նոցա)» Ողբս ասել: — Այս երկու Ս. Վարդապետաց վախճանը յիշած ատեն (Գ. կէ), երկու անգամ այլ կ'իմացընէ որ՝ մանր պարագայիւք չի գրեր, վասն զի մէկուն համար (Սահակայ) ուրիշ տեղ կու գրեմ կ'ըսէ. միւսոյն վրայ ծագած խաչածելուսոյն համար, «Որպէս լուայ, կ'ըսէ, ի բազմաց» և ի հաւատարիմ արանց»: Քիչ մ'առաջ այլ (կէ) Ս. Սահակայ ի դրան Պարսից խօսածին համար. «Ոչ յուսմքէ ի լսելիս մեր հասեալ է բովանդակին՝ ճշմարտութեամբ, և ոչ մեք ի Պատմութեանս հիւսել հաւանիմք»: Այս ամեն բանք ցուցընեն որ Պատմիչս ժամանակակից էր մահուան Ս. Սահակայ և Մեսրոպայ՝ բայց ոչ ներկայ, այլ յօտարութեան, զոր և հաստատէ Ողբոցը մէջ թէ՛ երբ դարձաւ ի հայրենիս, զանոնք վախճանեալ դատաւ:

Խորենացի թէ՛ իր Հայոց Պատմութեան և թէ՛ Թղթոց մէջ՝ քանի մ'անգամ յիշէ շատ ծեր ըլլալը: Թո՛վմ. Արժրունիէն դատ ուրիշ աւանդութիւնք այլ կ'ըսեն որ Յովհ. Մանդակունի կաթողիկոսին օրերուն հասաւ, որ վերոյիշեալ Զենոն կայսեր ժամանակակից է. Բագրեւանդայ և Արշարունեաց եպիսկոպոսաց շարքն այլ մօտ ցուցընէ այդ ժամանակին զՄովսէս եպիսկոպոսն: Փարպեցւոյն ըսածէն գուշակուի՝ թէ ինչպէս անհա-

ւան Հայք ճանճրանալով Տրդատայ խտակրօնութեան և տեսնելով որ շատ երկար կ'ապրի, թոյն տալով «Եղևցին յինքեանց զբազմափայլ ճառագայթն աստուածպաշտութեան», (Խորենացի Բ. դր): Այսպէս և Մովսէս եպիսկոպոսին ժամանակակից անհաւանք՝ նեղանալով իր յանդիմանական խօսքերէն և գրածներէն, տուին իրեն, «նման զեղոց մահու՝ զխաբէական եպիսկոպոսութիւնս, և հեղձոցիկն». թէ ոչ նիւթական թուսով, այլ զբազանօք, որպէս զի իր եկեղեցին հոգալով՝ զարդի զիրենք կշտամբելէ: Այլ նա՛ թէ ի բնահաս թէ՛ ի բունահաս «ժամ՝ վախճանին զինչ» պիտի ահաւոր նզովս գրով. ասացեալ է՝ ձեզէն» իսկ զիտէք տեղեկացեալք»: Այս տեղ Փարպեցւոյ մէկհնարիկ մեզի հասած Թղթոյն օրինակն կտրուած կորած է, անուշտ այն հին անհաւանից ձեռքով:

Բոլոր այս մեր յիշատակեալ բանք՝ կրնան յարմարել մեզ ծանօթ Խորենացւոյ, և հարկ չեմք տեսներ դար մի այլ աւելի ետք ձգել զնա՛ մինչեւ յ'իշն: Քանզի բաւական չեմք համարիր այսպէս ըսողաց երկու գլխաւոր փաստերը. մի, զի Զ. դարուն վերջը ի հայ թարգմանուած Սոկրատի պատմութեանէն առած ըլլայ բաւ առ բաւ, կամ նոյն դարու Ասորի Մալալայ պատմութեանէն առած և թարգմանաբար իր պատմութեան մէջ խառնած: Երկրորդ, որ Խորենացւոյ լեզուն կամ շարագրութիւնն նման չէ ուիկեդէն ըսուած դարու հեղինակայ, ինչպէս են Եգնական, Եղիշէ, և այլն: Մենք այդչափ բարակ զննութիւն կամ սրատեսութիւն չունիմք, և նոյն Ե. դարու կամ մօտ համարեալ գրութեանց և թարգմանութեանց մէջ եւս շատ հեղ ըստ նիւթոյ իրացն կամ գրոցն՝ զանազանութիւն լեզուի և ոճոյ նշմարեմք մեր տկար աչօք: Ի վերայ այսր ամենայնի գրչիս զիտաւորութիւնն չէ Խորենացւոյ ուշ կամ կանուխ ըլլալուն վրայ վիճել. միայն չեմ կրնար մոռնալ Յովսէփայ, Յովհ. Իմաս-

տասիրի և նոյն ինքն Խորենացոյ վերոյիշեալ ըսած-
 ները, և համոզուիլ թէ՛ ի՞նչպէս է. դարու կամ՝
 աւելի ուշ գրող մի՛ ճարտարութեամբ սրտէ և զինքն
 Ե-ին մէջ ներկայացընէ. և ի՞նչպէս այդ Զ. և Ե. դա-
 րուց մէջ իր ազգին հանդիպած նշանաւոր դիպաց՝
 նշան կամ նմոյշ մ'այլ շի տար իր պատմագրու-
 թեան մէջ: Ի՞նչպէս է. դարու նաեւ առջի կիսուն
 մէջ գրողն՝ ոչ միայն Արարացոց աշխարհակալու-
 թեան և աշխարհաւերութեան յիշատակ մի շերեւ-
 ցըներ, այլ և այն տիեզերագործ յեզափոխու-
 թեան ատեն, մանաւանդ իր աշխարհին և ազգին
 հանդիպածներուն մէջ գտնուելով և տեսնելով՝ նստի
 և այդպէս անզգայարար իր ազգի հին առասպել-
 ներն հիւսէ: Ի՞նչպէս այդ միջընցած ատեն՝ այդ-
 քան անբաւ հին տեղեկութիւններ գտնէ Յունաց
 և արեւելեայ հեղինակաց սակաւագիւտ գրքերէն:
 Դարձեալ, իր ոճն, հոգին և հառաչանքն հնու-
 թեան բնագրոյն ունին: Բայց եթէ այլք յետ այսր
 ամենայնի այլազգ դատին, իւրաքանչիւրոց ճաշա-
 կին վրայ պէտք չէ վիճել, կ'ըսէ լատին աւածն:

Հարկ համարիմ՝ այս տեղ յիշել և Խորենացոյ
 պատմութեան Չորրորդ գրոց խնդիրը, զոր ամանք
 կ'ընդունին և այլք ոչ: Ասանց երկարաբանութեան,
 ինձ այլ ընդունելի երեւի, և ինչպէս ուրիշ տեղ
 յիշած եմ՝ ի նոյն Գրոց համարիմ՝ ներկայ հաւաք-
 մանս 125 Յօդուածն, ի մասն Բ: — Յիշած եմ եւս՝
 որ Առաքեան Ստեփանոսի Հայ-լատին բառագրոց
 մէջ գտնուին քանի մի բառք և վկայութիւնք յանուն
 Մովսիսի Խորենացոյ, որ իր ծանօթ երեք գրոց մէջ
 չեն գտնուիր. բայց կրնայ եւս ըլլալ որ այդ Հայոց
 Պատմութենէն դուրս առանձին պատմական գը-
 րուածներէ ըլլան. ինչպէս են Ոսկեանց և Սուքիա-
 սանց պատմութիւնք, Ամասիոյ շինութեան պատ-
 մութիւնն ի Վկայարանութեան Ս. Թէոդորոսի. և
 Յովսիայ ըսածն թէ « Երանելին Մովսէս Քերթոս-
 » զահայրն՝ ի Պատմութեան ուրեմէ ասէ. Չայտա
 » ժամանակաւ երանելին Թաթուլ, երկրորդ Անտոն,

» ընդ գագանս և ընդ վիշապս բնակեալ՝ ընտանե-
 » նայր, և իբրեւ զանմարմին մարմնով հանդիսա-
 » նայր: Եւ այլ որ ինչ քան զայստիկ զեղեցիկագոյն
 » հիւսէ Պատմութիւնս»: Նշանաւոր վկայութիւն
 և Պատմութեան և ժամանակին. զի լաւ գիտեմք
 թէ Թաթուլ և եղբայրն Վարոս աշակերաք էին
 Սահակայ և Մեսրոպրայ:

Յետ այսքան կամայ և ակամայ երկարաբանու-
 թեանս, կարեւորագոյն խնդիրն առաջ գայ, այս-
 ինքն. Եթէ Խորենացիդ այդ պատմագրող՝ Քեր-
 ղոզահայրն էր կամ այլ ոք հին և ժամանակակից
 Թարգմանչաց, ի՞նչպէս այնքան սխալ կամ տար-
 բեր՝ ի մերձաժամանակ պատմչաց Յունաց և Պար-
 սից բաներ գրեր է, ժամանակաց և անուանց այլ
 փոփոխութեամբ կամ ծուլութեամբ: — Յիրաւի
 դժուար է յայտմ պաշտպանել զպատմիչը, եթէ
 հին ըլլայ եթէ նորագոյն, գիտնալով եւս՝ որ նա
 շատ տեղ կ'իմացընէ որ կ'ուզէ ստոյգն ըսել, և
 ասոր համար քննութիւններ ըրած է (Ա. գ), և
 խոստանայ ժամանակագրութիւնն ուղղել և վերա-
 դարձեալ իր գրածին. և սակայն գեռ կան շատ ան-
 ստոյգ մասեր. չեմ ըսեր հին Հայկազանց պատ-
 մութեան նկատմամբ, որոյ ամենք վկայեն թէ՛ հին
 աւանդութեանց և վիպասանութեանց հետեւանք
 են, այլ նոր ժամանակի Արշակունեաց և Քրիստոսի
 առաջին հինգ դարուց զիպուածոց մէջ եւս:

Այս բանիս պատճառ զիւրաւ գտնեն պարսա-
 ւոք Խորենացոյ, գող, խարդախ և տգէտ ըսելով,
 սակայն միւս կողմանէ իրենք այլ վկայեն անոր
 շատգիտութեան: Արդարեւ եթէ նա գողցած ըլ-
 լայ ուրիշ պատմիչներէ, այդքան բան գողնալն այլ
 ճարտարութիւն և գիտութիւն է: — Ըսածս՝ յի-
 բաւի շի լուծեր ինդիրը, զոր և երկար ընդգիմա-
 բան գրողք չեն լուծած հաւանեցուցիչ կերպով: —
 Չենք կրնար հաստատել թէ, այդ գրոց շատ հին
 ձեռագիր շունենալով՝ չենք կրնար դատել, թէ

արդեօք սկզբնազիրն այլայլած չէ՞ օտար ձեռօք, որպիսի ոգևով այլ ըլլայ, ինչպէս Եղիշէին պատմութիւնն նոյն իսկ իր կենդանութեան ատեն (ի Բարձումայէ)։ Թերեւս անտեղի երեւնայ ըսելն կամ տարակուսիլ, թէ մի գուցէ ինքն իսկ հեղինակն շատ բան ծերութեանն ատեն զրելով շփոթած ըլլայ։ Այս բանիս հաւանագոյն և մանր քննութիւնն և պատասխանը ստիպուիմ թողուլ զԽորենացի բարակ մաղողներուն։ Բայց փափագիմ՝ որ հանդարտ և ոչ կանխակալ կարծեօք կամ սեթեւեթեալ փաստերով պատասխանեն։

Արպէս և որչափ այլ դատուած է Խորենացւոյ Պատմաբիւնն Հայոց, իր ամեն քննադատելի թերութեամբքն հանդերձ՝ հաճոյ եղած են ազգայնոց և օտարաց՝ ընծայած ծանօթութիւնքն մեր Հայ ազգի վրայ յընթաց հազարաւոր տարիներու, որքան եւս մասամբ սոսկ աւանդական ըլլան։ Ինչիկք և օտարք առ նա դիմեն՝ իրրե առ աղբիւր ծանօթութեան հին Հայութեան, և մեր ամեն պատմբնաց հիմն նա է։ Այս անզուգական արժէք մ'է, զոր չեն կարող ուրանալ Խորենացւոյ ամենէն խիստ դատողք և դատապարտողք եւս. մանաւանդ օտարք, որք իրրե օտար և արեւելեան մութ ազգի մի զրոյցներ համարելով՝ ցըրտութեամբ քննեն, թէ և ոչ միշտ յանիրաւս։ Սակայն եթէ այդ գիտնականք ունենային Խորենացւոյ ժամանակակից՝ իրենց յատուկ նախնեաց քանի մի կտոր աւանդութիւն, որքան եռանդեամբ և նախանձով պահէին, պաշտպանէին և պաշտէին, և անհաւանից դէմ կռուէին. և եթէ մեր պատմըչին զրած քանի մի սողորու չափ գտնէին, միթէ իրրե որբազան մասունք չէին պահէր։ Եթէ Խորենացի ազգային ոգևով փառեալ՝ զանվաւերն ընդ վաւերականին խառնէ և փառէ նոյն ոգևով՝ իրմէ հազարով տարիներ վերջի հայ սերունդն այլ, այդով այլ չէ՞ երախտաւոր։ Աւր թողունք որ ինքն իր ամեն ազգային եռանդեամբ այլ՝ անշառ դատէ և դատապարտէ անզգոյ ան-

ձինքը, ըլլան թագաւոր՝ ըլլան խոյրաւոր, թէ քաղաքական թէ կրօնական պաշտօնեայ, փոքր և մեծ։ Յայսմ մասին աւելորդ համարիմ երկարել, վասն զի զգաստ ընթերցողք աւելի քան զայն կրնան իմանալ և դատել։

Պատմաբանութեան ոճն այլ իր մեծ յարգն ունի. իր համառօտութեամբ այնքան կարեւոր և պիտանի դէպք բովանդակելով, և երբեմն ճարտար նկարագրութեամբ դիպաց, անձանց և տեղեաց. և ըստ պատշաճի իրաց, երբեմն պարզ պատմաբան է, երբեմն բանաստեղծ, երբեմն փիլիսոփայ և պաշտօնեայ եկեղեցւոյ. ճշմարտելով այն վերոյիշեալ մակղիրները՝ զոր հեղինակք մեր ընծայեր են Մովսիսի։ Եւ յիբաւի, զարմանք է այդ փոքրիկ մատենին մէջ այդքան տեղեկութիւն ամփոփելն և այնքան հաճութեամբ ընթեռնել ընելն. գունագոյն նորօտանկար բանաւոր հիւստեամ մի է, որոյ վրայ տեղ տեղ փայլփայլեն ակնխտիղ զմայլեցուցիչ գոհար իմաստք՝ քանի մի տողով և սոսկ մէկ երկու բաւերով, որք շատ աւելի արժեն քան իր վրայ քննադատից զրած երկար և ցուրտ ցուրտ թերթերն։ Մեր պատմիչն ըստ Առաքելոյն (Պօղոսի) գիտէ սոսկելուլ, գիտէ նուազել. գիտէ լալ ընդ լացողս, ինչալ ընդ ինչացողս։ Աւնի մանկական պարզութեամբ և աշխուժիւ նկարագրութիւններէն մինչեւ մարգարեական օճով և սղւով պատգամներ, հրեղէն, սրտաուռ և յափշտակիչ հառաչանքներ։ Անկարելի է կարգալ իր Բ և Գ գրոց վերջին գլուխները և շլեցուել խորին զգացմամբ, որ սրտի արտասուքը սառեցընեն. և արգարեւ, ինչպէս ինքն կ'ըսէ, « Հիացումն իմն են ճառքս և սարսափելի՝ » որոց միտս ունին », (Գ. դք), մանաւանդ թէ և սիրտս ունիցին և կարգան Հայապատումիս Բ մասին 75-104 Յօդուածները։

Մեծագոյն արժէք մի եւս Խորենացւոյ է հարուստ հմտութիւնն և ծանօթութիւնն բազմաթիւ հեղինակաց, մանաւանդ Յունաց, թէ հեթանոսաց

Թէ՛ Սրբոց Հարց. որոյ համար եւրոպացի գիտնական մի՛ յետ Եւսեբիոսի զԽորենացի կարգէ բազմահմուտ հեղինակ այն ժամանակին. և որքան այլ երբեմն հարեւանցի քաղելով՝ շփոթած կամ սխալած է յանուանս կամ ի բանս ինչ, շատ աւելի է պիտանին քան զխոտանն: Ստոր համար է որ քննողք շատ բան գտնեն այդ փոքր զրոյ մէջ՝ գիտնալու, բացատրելու, բարդատելու, միանգամայն և զարմանալու: Ստոր համար դարձեալ՝ չկայ մեր ազգի գպրութեան մէջ պատմիչ մի, գուցէ նաև ուրիշ արեւելեայց, որ այնքան օտար լեզուօք թարգմանուած ըլլայ: Գրեթէ երկու հարիւր տարիներէ առաջ գերմանացի գիտնականք սկսած են ծանօթանալ Խորենացւոյ և ծանօթացընել, նաև մասնական թարգմանութեամբք, ինչպէս ըրած է Պրեկներ օմն Ծուետացի ի Սթոքհոլմ, յամի 1723: Ոչ շատ տարի վերջը՝ (1736), Վիտրոնեան Սնդղիացիք՝ ամբողջ լատիններէն թարգմանութեամբ և ծանօթութեամբք, ի Լոնտոն: — Իտալերէն՝ հայագէտ Վենետկեցի երէցն Գարբելլերոյի, 1850. և անկէ առաջ, մեր Հարքն Ս. Վազար, նոյն լեզուաւ, յամին 1841, իտալերէնն ուղղագրել տալով հմուտ և հոչակաւոր թօննագեոյ հեղինակի: — Փոանկերէն, նոյն տարին 1841, դարձեալ ի Վանս մեր, Բարիզու Լեզուաց օւսումնարանի հայերէն լեզուի օւսուցիչն Լրվայեան տր Յորիվալ (Le Vaillant de Florival), որ առաջ ալ (1836) տպագրեր էր զնոյնն ի Բարիզ, և յետոյ դարձեալ՝ ծանօթութեամբք հօն (1845): — Ուրիշ Փոանկ թարգմանութիւն կայ Վիկտոր Լանկուայի ի Բարիզ ի տպագրատան Տիտայի, 1869, ի շարս Պատմաց Հայոց (հատոր Բ, 45-176): — Գերմաներէն հրատարակած է (1869) Լաշեր, ի Ռէկենպպերկ: — Ռուսերէն՝ ծանօթ բանասէրն Մկրտիչ Էմիլեան ի Մոսկուա, 1858: Նոյն լեզուաւ շատ տարի առաջ (1809), Յովնան Յովնանիստոս սարկաւազն հրատարակեր էր ի Պետրպուրկ: — Հունգարերէն՝ ի Կեռլա (կամ

Սամսուժվար քաղաքի) Սոնկոս անուամբ օմն: — Փոանկ օմն եւս (որոյ անունը չեմ՝ յիշեր) Խորենացւոյ պատմութիւնն զիպատանական ձեւի վերածելով, իրբեւ երեք հազներգութիւն հրատարակեց ի Բարիզ, և անձամբ բերաւ ի ցոյց՝ ի 1860-1 թուականին:

Աւելորդ համարիմ յիշել հայերէն բնագրին հրատարակութիւնքն: Եւ ով որ թէ՛ այդ ամեն լեզուաց թարգմանութեանց և տպագրութեանց և թէ՛ Խորենացւոյ ամեն գրուածոց վրայ կարեւոր գիտելիք ուզէ, կրնայ գտնել մեր Բարեյիշատակ Հ. Գարեգին Վր. Զարպէանալեանի հմտալից Հայկական ինի Դպրոսքեան Պատնոսքեան մէջ (Գ. տիպ, եր. 350-90):

Թարգմանութիւններէն աւելի քննադատականք գրած են (թողով զմերայինս) եւրոպացի գիտնականք՝ զԽորենացւոյ, յորոց նորագոյնն Գարրիէն Լըվայեանի յաջորդաց յաջորդ իրբեւ հայ լեզուի օւսուցիչ ի Բարիզ, այլեւայլ թերթեր հրատարակեց, աւելի ջանալով և պնդելով՝ զնա Ե. կամ Ը. դարու գրիչ ցուցընել և յարգը նուազեցընել: Լաւագոյն և մանրամասն քննադատութեամբ գրած է գերմանացին Կոշտշմիտ: Թողում յիշել աւելի համառօտ գրողները, յորոց կարգի են և այդ խորհրդաւոր գրոց թարգմանողաց յայլեւայլ լեզուս Յառաջաբանութիւնքն:

Իսկ ես իրբեւ վերջաբան, դեռ պարզելի և հաւատարի թողում. — Ս. Մը է թէ երկուք, կամ աւելի եւս Մովսէս՝ Խորենացին և Քերդողաշայրն և Գրիչն Սահակայ: — Բ. Ինչո՞ւ Ղազար Փարպեցի ի վերջ կոյս Ե. դարու գրելով՝ իրմէ առաջ Հայոց Պատմիչ միայն զԱզգութանգեղ և զԲուզանդ յիշէ, և ոչ զՄովսէս, այլ և ոչ զԵղիշէ և ոչ զօտարազգի պատմագիրս մեր Գ. դարու: Եթէ ասոնք իրեն ծանօթ չէին, նոյնպէս չէր կրնար ըլլալ և Խորենացւոյ գրածն, որոյ պատմագրելուն ժամանակը՝ ոմանք մինչեւ ի Զենոն կայսեր ժամանակ իջեցը-

նեն: Բա տ Թովմ. Արծրունեոյ, Մովսիսի և իր եղբոր Մամբրէի և Թէոդորոս Քերգողի՝ Հայոց պատմութիւններ գրել յանձնողն եղած է Վահան Արծրունի, և սա հաւանօրէն է նահատակուածն ի պատերազմին Վարդանանց, որոյ յիշատակն ինչու չի գտնուիր Յեղիշէ՝ պատճառը յայտնէ նոյն Թովմաս, որ և բաց այս Վահանէն ուրիշ Արծրունի Վահան չի յիշեր՝ բայց եթէ դարերով յետոյ: — Գ. պարզելին և հաւաստելին է Խորենացւոյ պատմութեանց մէջ՝ թէ ժամանակագրութեան և թէ՛ դիպաց անձըութիւնն կամ վրիպանաց պատճառն: Կրնամ յուսալ որ հետախոյզ մի կամ ժամանակն՝ լիովին պարզէ զասոնք. այլ ես չեմ յուսար ունենալ ժամանակ զայն տեսնելու և ոչ ախորժ կարգալու. եթէ ըլլան գրուածքն Խորենացւոյ ըսած ի կարգի բայ բանից:

Խորենացւոյ են Հայապատմ գրոցս (Մասն Բ) 30. գրուածքն 2. 3. 6. 7. 11-5. 17-9. 21. 23-7. 34. 37-40. 42-4. 48. 56. 60. 62. 75-6. 101. 111-2. 116. 120-1. 123. 125-6:

20. Ե Ղ Ի Շ Է

Որչափ հռչակուած է Խորենացին մեր՝ իրրեւ պատմահայր Հայոց, ոչ պակաս հռչակուած և այլ աւելի կարգացուի Եղիշէ՝ իր գեղեցիկ և հաճոյական Վարդանանց Պատմութեանն համար, որ թերեւս և ամենէն ախորժելի՝ միանգամայն և վայելուչ գրուածն է մեր նախնեաց մատենագրութեան մէջ, և նոյն իսկ այն համբաւեալ ոսկեղէն Ե. դարուն. որոյ համար և հիմայ մեր ամէն դպրոցաց մէջ՝ քիչ չատ մեր գրոց լեզուն հասկընալ սկստուցաց կու արուի կարգալու: Յստակութիւն հայերէն լեզուին, պարզ բայց և քաջարուեստ շարա-

գրութիւն, ազնուութիւն իմաստից, պատմականին հետ վարդապետական և փիլիսոփայական ըսուածք, փափկութիւն զգացման և բացատրութեան, առանց ճամարտակութեան. հայրենական կամ ազգային եռանդ, նուրբ շնորհք մի աստուածասիրութեան. և իրրեւ կուսական քողով պատեալ դիմաց թափանցիկ անմեղուկ սրտառուչ տիրութիւն մի՛ հասկըցողաց զմայել տայ և փափագիլ նորէն կարգալու: Եթէ այս միայն ըլլար Եղիշէի գրածն, այսով այլ կրնար այն տեղը բռնել ինչ որ բռնած է թէ՛ իւր ժամանակակից և թէ՛ յետագայ մատենագրաց և պատմագրաց մէջ. և այդ միայն բաւական էր զինքն անմահացընելու ի դպրութեան մեբում:

Բայց նա գրած է նոյն ոգևով և գրչով, եթէ և հետեւողապէս ըլլայ, « Բաւ խրատու յաղագս » Միանանց », որ թէ ոչ Պատմութեանը պէս հասարակաց կարեւոր է, այլ միշտ յօժարութեամբ կարգացուի, և Պատմութեանը մէջ խօսող կամ նուագող ձայնին՝ արձագանգ մի է. և ի՞նչ կարմանք՝ եթէ այն մտաւոր եղանակաց մէջ՝ հնագոյն ստեղծարանից նուագներէն եւս խառնած՝ համերգութիւն մի արտագրած ըլլայ: Զայս կ'ըսեմ անոնց, որք այդ ճառին կամ խրատու մէջ գտնեն Փիլոն երբայեցիկէն կամ ուրիշէ առած նկարագիրներ միանձնական կենաց և սովորութեանց, ինչպէս ըրած են և ուրիշ հեղինակք մեր, որք իրենցմէ առաջ չունէին յետնոց պէս՝ տասնեակ և աւելի գարեբու գրողներ և գրքեր, այլ Ե. կամ Զ. դարուց մէջ գրէին, և իրենցմէ մէկ կամ երկու դար նախընթացից գրածները ստէպ կարգալով՝ մաքրենին այնպէս սոզորուած էր, որ անոնց իմաստներն և իրենցն՝ անդանագան գրչի տակ կ'ինկնար:

Եղիշէի մնացեալ այլեւայլ գրուածոց և ճառից վրայ տեղեկանալ ուզողն կրնայ գտնել ի Պատմութեան մեր հայերէն Հին Գպրութեան (Գ տպագր. էլ 335-49): Որոց մէջ գլխաւորաց մին պէտք է

ճանչնալ Արարածոց մեկնուշրիւնը, այսինքն Մովսէս մարգարէի Կննդոց գրքին, և ցաւիլ այդպիսի գըրուածոյ ամբողջ օրինակ մի դեռ չերեւնալուն. և որովհետեւ Յետաւայ գրոց այլ մեկնութիւն զրաձ է, գուշակուի որ նաեւ ուրիշ Ս. Գրոց այլ մեկնութիւն զրաձ ըլլայ: Բայց մենք մեր պատմական նպատակին համար բաւական համարիմք ակնարկ մի եւս տալ հեղինակին կենաց և վարուց:

Եղիշէ հաւանօրէն Տարօնացի էր, և այդ գաւառին նոյն ժամանակին պանծալի և գերագոյն անձին Վարդանայ Մամիկոնեանի՝ ծանօթ, մըտերիմ, սպասաւոր և Գարապետ, ինչպէս կոչեն զնա: Բարերար զանուած է (թէ և ոչ ըստ չափու մեր փափագանաց) գոնէ մի երկու իջով զինքը յիշող ունենալու, նաեւ ի Յայտաւորս եւս ի կարգի Արբոց: Տես ի Մասն Բ, Յօդուած 155. յորում երեւի թէ Եղիշէ իրեն (գոնէ յետ Վարդանանց պատերազմին) վիճակ կենաց ընտրած է՝ զկրօնաւորութիւն, և անոր բարձրագոյն կամ խոնարհագոյն աստիճանը՝ զճանաւորութիւն, և այդ վիճակին մէջ զրաձ է հոգեւոր կենաց պատշաճ խրատ, կանոն, մեկնութիւն Ս. Գրոց, և այլն: Սակայն այդ բաւական չէ լուծանել բանասիրաց տարակոյսն իր առաջին կենաց ընտրութեան վրայ: Անտարակոյս է Վարդանայ Գարապետ ըլլալն, այսինքն քարտաշար ինչպէս հիմայ կ'ըսուի (Secrétaire), միանգամայն և հմուտ զինուորութեան, թէ ոչ և զօրական. վասն զի իրնար և իրբեւ դրան երեց մի եղած ըլլալ այն մեծ սպարապետին, որոյ՝ զէնքի փոխան՝ զըջով շարժեց ձեռքը, իրեն նման՝ կրկին կրակով վառելով զհոգին (հայրենեաց և երկնից): Հաւանական չէ որ ինքն ըլլայ իր յիշած Ամատունեաց Եպիսկոպոս Եղիշէն ինչպէս համարին ամանը, և ինչուան թարգմանողքն եւս¹: Մեզ աւելի յայտնի կ'երեւի՝ որ յետ այն բաղդաւճիս Պատե-

1. Արպէս հայման:

րագմին՝ տեսնելով իր աշխարհին երկպառակ և անստոյգ վիճակը, սրտախոց հրաժարեր է թէ ի քաղաքական և թէ՛ յեկեղեցական վարիչ կենաց. և եթէ քահանայ եւս եղած է, որպէս կարծել տայ իր Վարդապետ կոչումնը, և այն կոչման յարմար գրուածքն, սակայն ինքն իր զուլան և սիրան առած՝ թուի թէ նախ ի վանս միաբանակեցաց, յետոյ այլ աւելի առանձնութեան փափագելով՝ քաշուեր է Մոկաց գաւառի մթին միայնութեանց և քարանձաւաց մէջ, յետոյ և մերձաւոր Աշտուկեաց կողմերում. և ի նոյն մենարանս՝ միայն ընդ միայնոյն Սատուոյ՝ խորհրդածելով, իր յիշած առակին համեմատ բոլորովին ընկզմեր է ի նոյն, « յե » մացեալ մահն՝ յանմահութիւն »: այս կեանքս իրբեւ ոչինչ համարելով՝ պարապեր է ի խոկումն հանդերձելոյն, և լուծեամբ անցեր է յերանելի կեանս. իր սրբութեան օրինակն և յիշատակն կենդանի և պաշտելի թողով՝ զինքը ճանչցողաց, և անոնցմէ յետագայից՝ մինչեւ առ մեզ և առ մեր յետագայս՝ ընդ Սուրբս տօնուելով:

Արքան մեծ է և գրեթէ կենդանի յիշատակ Վարդանայ՝ յոգի ազգին, մինչեւ լեզուակորոյս ազգայինը մեր յօտար աշխարհս Եւրոպիոյ՝ Լուսաւորչի հետ զնա անմոռաց յիշեն՝ քաջ Վարդան կոչելով, այնքան մեծ համարելու է և զսէր Եղիշէի առ նա, թէ և կիսայօժար երեւի ի գրեւն զգործս վեհագնին՝ վասն տխրութեան ժամանակին և զզուանացն յաշխարհէ, և բունագատուած իր հայրենակից՝ զուցէ և գործակից անձէ մի, Մարիկոնեան Գաւիթ Երիզուէ, « Այլ ըստ կտակաց, (այլ) և » արտօնաբեր ողորմը ճառագրել, ինքնին իսկ ակա » նատես գոլով »: Արով և մեծ յարգ ունի զրաձն, այսինքն ստուգութեամբ. զի ինքնին իր սեսածը, լսածը, ճանչցածը զրէ, և իր անձամբ գտնուած տեղերը նկարագրէ, նոյնպէս և անձինքը, ըլլան քաղաքական ըլլան կրօնական: Զի եթէ այն ժամանակի ազնուական Տիկնայց Հայոց հինգ հարիւրէն

աւելին ճանչնար յախակե յակոռակե, որքան եւս աւաւել զինուց և խաչի պաշտօնեաները: Եթէ իր գրածին և իր համբնթաց հետեւող Ղազարու Փարպեցւոյ (կամ ո՛ր և է ուրիշի) պատմածին մէջ գտնուի աւելի կամ պակաս ինչ յանուանս և ի դէպս¹, գրեթէ ոչինչ կրնայ ըսուիլ և ոչ արժանի տարակուսելու: Ղազար՝ թերեւս աւելի պատմարան է ըստ սոսկ պահանջանաց պատմութեան, այլ Եղիշէ թուի իմն թէ պատմական յատակը ոտքով չկոխելով՝ քայլէ կամ երթայ թռչի՝ առանց իսկ զօրս կոծելոյ՝ ըստ իր ըսածին:

Իր պատմութիւնը բաժնած է եօթն մասն, զոր ոչ գիրք կոչէ, ոչ գլուխ կամ ճառ, այլ Յեղանակ, դիտելով զդիպուածս կամ զկերպարանս պատմութեան, և փոփոխութեան իրաց ժամանակի, որ յեղանակաւորիլ իմն է: Ըստ իր բաժանմանց՝ այդ եօթն Յեղանակքն են. — Ա. Ժաւանակքն. — Բ. Խրացն պատահողն յիշխակե և Սրբելից, այսինքն Պարսից թագաւորին հրովարտակն և պատուէր Հայոց, Վրաց և Սղուանից որ Զրազաշաի կրօնը և կրակն ընդունին. — Գ. Անոր դէմ Միաբանութիւնն Ռշխտի Եկեղեցոյ, չառնուլ յանձըն. — Դ. Երկպառակութիւնն ունեց, այսինքն, ի Պարսից Իուսն գնացող նախարարաց ոմանց առ երես և ոմանց վատութեամբ ուրանայն զքրիստոնէութիւն, ինչպէս Վասակն, և այսով երկու բաժնուիլն Հայոց. — Ե. Յարձակումն Սրբելիցայց, այսինքն Պարսից զօրաց մտնելն ի Հայաստան. — Զ. Ընդդիմանակն Հայոց պատերազմաւ, որ է Վարդանանց մեծ գործն և կենդրոն Պատմութեան Եղիշէի. — Է. Յերկարումն իրացն խոռվոքեան. յետ մեծի պատերազմին չիոթ և անո-

1. Այսպէս զԱրտաշէս վերջին Արշակունի թագաւոր մեր՝ փոխանակ որդի Վառմշապէսոյ գրեւու, գրէ ... « Արտաշէսի արքայի Հայոց, որչւոյն Մտանդաւ » յայնոյ »:

րոշ վիճակ աշխարհին Հայոց: Իբրեւ քաղաքական մեծ գործ մի դասոնք ի մի Պատմութիւն բովանդակել ուզեր է Եղիշէ: Յետոյ, ե՞րբ և ուրիշը՝ յորդորմամբ թէ ինքն իր յօժարութեամբ, յայտնի չէ, աւելցուցեր է երկար (Ը.) Յեղանակ մի եւս, « Վասն նորին պատերազմի և շարչարանաց սուրբ » Քանանայիցն », որ են Ղեռնդեանք. որոց քուրիլն ի խորս Պարսկաստանի, երկար քննութիւնն ի Գենչապէսոյ, գեղեցիկ և քաջարտաբար պատասխանիք այդ քահանայից, մանաւանդ Ս. Ղեռնդի, մանրամասն գրած է, ակնաւտես և ականջարուր վկաներէ տեղեկացեալ: Այս Յեղանակին կըցէ Նախարարաց երկար (տասնամեայ) յօտարութեան աքօրն և հաւատարիմ մնալն իրենց սուրբ կրօնից մինչեւ ի մահ, և յետ մահուան այդ խելառ Յագկերտ հալածողին, ի թագաւորելն Պերոզի՝ անոնց արձակուիլն և դարձն ի հայրենիս: Այս Յեղանակին կըցէ՝ վերջին ի կարգի և առաջին ըստ սրտաւուչ բարուց և բանից՝ այդ նախարարաց պանդխտութեան ատեն՝ իրենց ի հայրենիս թողած կանանց համբերող մանաւանդ թէ խստամբեր, և թէ ոչ գերմարդկային՝ այլ գերկանանցային կեանքը. և այդ դառնութեան քաղցրիկ յեղանակով կնքէ զգիրսն, որով կրօնական սղբաթատեր ազնիւ, լուրջ և երկար տպաւորութիւն մի թողու սրտի և մտաց վրայ: Ոչ պակաս ազդու են երկու խոստովանողաց վրայ գրածն (Խորենի և մանաւանդ Արքանաւոր), Քահանայից և Կանանց յանդիմանութիւնքն առ Նախարարս իրենց առաջին անգամ իբրեւ ուրացող դատնախնուն ատեն ի Հայս. և նոյն իսկ Ուրացողաց զլուխ Վասակայ դատապարտութեան և մահուան դրուագն, որ այդ Սիւնեաց իշխանին ատողաց և դատապարտողաց արտասուքն անգամ շարժէ:

Այսպիսի փափուկ՝ միանգամայն և արիական ոգւով գրուածը և նկարագրածը կարգալով՝ օտարք, մեզմէ յառաջ զմայլեր և Հայոց Քսենոփոն ա-

նուաներ են Ղեղիչէ. և ամենայն թարգմանողք և ընթերցողք քան զգովեստ աւելի բան չեն կրցած գրել, մեր այժմու դեռակիրթ գրչաց թողով գուրտ քննադատութիւններ :

Իբրև կէս դար յառաջ ամերիկացի ճանապարհագիր քարոզիչ մի՝ որ շատ ստույգ տեղագրական ծանօթութիւններ թողած է մեր հայրենեաց շատ կողմանց, երբ յառաջաբանին մէջ խօսի մեր ազգին անցելոյն վրայ և գայ կարգն յիշելու զՎարդանանս և զհետեւեալոն, չի կրնար զօպել գրիչը, և այդ մեր վերջին յիշած պարագային նկարագրութեան մեծ մասը թարգմանէ, այն յետին սրտախոց և արտասուաշարժ վերջաբանով. « Բազում ձմերաց » հալեցան սառնամանիք. եհաս գարուն, և եկին » նորեկ ծիծեռունք. տեսին և խնդացին կենցաղա » սէր մարդիկ. և նոքա (Տիկնայքն Հայոց) ոչ եր » բեք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց » . (գամուսինս, զեղբարս նեղեալս ի տար և ի տօթագին աշխարհս Պարսից) :

Այս երկու գրուագաց միջոց, Նախարարաց օտարութեան և Կանանցն առաքինի համբերութեան, Եղիչէ տող մի խօսամամբ մեծ յոյս մի տայ, որ դեռ տարակոյս մնայ. յետ յիշելու զգարձ նախարարացն ի հայրենիս, ի հինգերորդ ամի թագաւորութեան Պերոզի, որ է իբր 463 թուականն, կ'ըսէ. « Բայց, ի տեղի այսր՝ ինձ դարձեալ զալ » պիտի ». որով կարծեցընէ՝ թէ ինչպէս յետ եօթն Յեղանակաց ութերորդը գրեց, այսպէս մտադիր էր անկէ վերջ հանդիպածն այլ, այսինքն նախարարաց դառնալէն վերջն, գրել և շարունակել պատմութիւնը : Թէ՛ գրած է և կորած, և թէ՛ միայն փափագած է և չէ գրած, ոչ է յայտ, և ոչ ոք ի նախնեաց յիշած է այսպիսի ցանկալի Յեղանակ մի :

Ասոր հակառակ՝ վկայուած է պակասորդ ըլլալն Պատմութեանն : Ժ. դարու սկզբան գրող Թովմա Արծրունի՝ իր ցեղին անցեալ յիշատակները շատ հետազօտութեամբ փնտռելով և իր պատմութեան

մէջ անցընելով՝ երբ յիշէ զՎահան, Վարդանանց ժամանակի Արծրունեաց ցեղին նախարարը (զոր մենք այլ յիշեցինք իբրև յորգորող Թարգմանչաց՝ Հայոց պատմութիւններ գրելու), այն մեծ պատերազմին մէջ ասոր յիշատակը չգտնուելուն պատճառ գրէ՝ Բարձռաւս աղանդաւոր Ասորոյ զայն ի Հայս՝ զասնք մայրցընելու համար, և վաճառուին երկրին իշխանէն. որմէ վրէժ առնուլ ուզելով՝ երբ հանգիպեր է Եղիչէի՝ ասոր Ռըշտունեաց ճգնարանին մէջ, և խնդրեր է անոր գրած Պատմութիւնը կարգալ՝ մինչ դեռ չէր հրատարակուած, ատեն մի քովը պահելով՝ միջէն ջնջեր է Վահանայ նահատակութիւնն Վարդանանց հետ, որով և անունն եւս : Յետ մահուան Եղիչէի՝ գիրքը դարձուցեր է անոր ժառանգաց. և ոչ այսչափ միայն, այլ փոխան վերուցածին՝ մտուցեր է գրոց մէջ իր մուար վարդապետութիւնը, որ իմացուեր և ջնջուեր է :

Այս բանիս նկատմամբ դիտելի է մէկ կողմէ՝ որ Փարսիցեոյն պատմութեան մէջ այլ չի յիշուիր Վահան Արծրունի. և այնպէս պէտք էր ըլլալ, եթէ սա յԵղիչէէ առած ըլլար Վարդանանց պատերազմին պատմութիւնը, որ շատ հուանական չերեւիր. մանաւանդ որ թէ՛ սա և թէ՛ ինքն Եղիչէ՝ Վարդանայ զլիաւոր նիզակակից և առաջնորդ ի մեծ ճակատամարտին անուանեն զՆերշապուռն Արծրունի. որ ապրած է, և յետոյ միւս երեսուն նախարարաց և իշխանաց հետ արսորեալ ի Պարսս : Բայց կայ ձեռուրնիս թուղթ մի մագաղաթի, զոր ծանուցեր ենք յիսուն տարի առաջ (Բազմալեւոյ, 1854, եր. 226-30) հնագոյն քան զպատմիչն թովմաս, յորում Եղիչէի Ե Յեղանակին սկիզբը կարգամբ այս վերնագիրը... « Վկայութիւն Սրբոյն » Վարդանա եւ Հմայեկա եւ ՎԱՀԱՆԱ եւ Սահակա » Հայոց Սպարապետաց, եւ ամենայն սուրբ արանց » որք մեռան ի Քրիստոս » : Վարդանայ և Հմայեկի հարազատ եղբարց հետ յիշուածն Վահան, եթէ չէ անոնց որդին և եղբորորդին, և մարդպանն (զի

ոչ որ յիշէ զսա յետոյ մեռած ի պատերազմի), ապա է Արծրունին Վահան. և ասով վիայուի Թովմայի պատմածին ստուգութիւնն: Այս ալ դիտելի է որ Թովմաս չի յիշեր զՆերշապուհ:

Միւս կողմէ՝ մեր օրերուս Հայագէտ գիտնականն Պրոսէ (իբրեւ կէս դար առաջ) էլ միածնի Չեռազրաց մէջ հանգիպեր է, կ'ըսէ, Եղիշէի Պատմութեան օրինակի մի, յորում վերոյիշեալ աղանդաւորին մտաց յարմար վարդապետութիւն կայ եղեր: Ուրիշ քննողը չեն յիշեր այդպիսի մատեան մի. և ոչ այդ գրոց ուրիշ օրինակաց մէջ, որք սակաւաթիւ չեն և կան բաւական հինք, չէ նշմարուած այդպիսի բան աղանդական. բայց եթէ այդ փրանկ Հայագէտն մեր հեղինակին միջի քրիստոնէական հաւատոց վարդապետութիւնները ուրիշ կերպ հասկըցած ըլլայ¹: Այս գիտելիքս մեր նպատակէն դուրս էր, բայց Եղիշէի պատմագրութեան քանակը ճանչնալու համար՝ հարկաւոր էր յիշել:

Այդ գրոց ինչ յարգ ունենալն՝ արգէն ծանօթ է. մէկ հաւաստիքն այլ է՝ գրեթէ երեսուն անգամ ապագրուիլն, ինչպէս ի Կ. Պօլիս (1764, և այլ շորս անգամ), ի Վենետիկ (1825, և այլ եօթն անգամ), ի Երուսաղէմ (1865), ի Նոր Նախիջևան (1787), ի Տփլիս (1879), ի Չմիւռնիա (1867), ի Կարկազա (1816), ի Պետրոբորգ (1787), ի Մոսկուա (1861 և 1892), ի Թէոդոսիա (1861), և այլն: Եւ ի Կաֆա հրատարակուած է ի Խորէն Վր. Գալֆայեանէ ի 1864, իբր ժ. դարու հին օրինակէ մի, Անձեւացեաց իշխանի մի համար գրուած, և ունի քանի մի սովորականէ տարբեր ընթերցուածք²:

1. Պրոսէի քննութիւնն և հասկընալն որքան արժէք ունի, և էլ միածնի Չեռազիրք այլ իր քննած ատենէն ետեւ որքան պակասած և աւելցած են, այս այլ քննելի կէտ է:

2. Այս Չեռազիրս, կ'ըսուի թէ անգղիացի աղնուա-

Երկրորդ հաւաստիք է Եղիշէի Պատմութեան արժանեաց՝ այլեւայլ լեզուաւ թարգմանուիլն, որոց առաջինն է Ժամանակաւ՝ անգրիարեկն, 1830, ի Լնտան սոպագրեալ. Թարգմանողն է Նայման (C. I. Neumann) Կերմանացին, History of Wartan... by Eliseus bishop of Amadunians, և այլն: — Իտալերեկն, ի 1840, Վենետիցի հայագէտ քահանայն Յովսէփ Գարբելլեդդի (Eliseo, Storico Armeno del V secolo; versione del prete G. Capelletti): — Փասնիերեկն, ի 1840, ի Բարիզ, Գալարսաձեան կարապետ Վր., որ աւելի Հայոց քաղաքական շարժմունքն ուզելով բացատրել թարգմանութեան բաւական ճշգուծիւնը պահած չէ, և կ'անուանէ Soulèvement national de l'Arménie chrétienne. — 1868ին, Լանկրաւ՝ իր Հայոց Պատմըաց շարքին Բ հատորին մէջ անցուցեր է ամբողջ թարգմանութեամբ և ծանօթութեամբ: — Ռուսերեկն հրատարակած է Շանշիեֆի ի Տփլիս ի 1853: որոյ վրայ քննադատութիւն մի գրած է ուրիշ ուսու մի, Պերիզիս, ի 1857: — Ռուսերէն կաշկաս օրագրի մէջ այլ Մեյիքոֆ գիտնականն յօգուած մի հրատարակած է, ի 1850: — Այս թարգմանչաց վրայօք աւելի պակաս և այլ գիտելիք յիշուած են ի Պատմութեան Հայերէն Հին Գպրութեան (Գ. տիպ, էլ 348-9), հանդերձ քննութեամբ հեղինակին զործոց: Մեր Հայերէն օրագրաց մէջ այլ գտնուին այլեւայլ անձանց գրուածք Եղիշէի վարուց և գրոց վրայ,

կանի մի (Charles White) ձեռք անցեր է, և տարեր է իր երկիրը: Ոչ շատ տարի առաջ հետաքրքիր բանասէր ազգային մի շատ հարցուց քննեց, բայց չկարցաւ գտնել, և մեր և ինչ ըլլալն իմանալ. բայց զայս միայն՝ որ այդ անուամբ անգղիացի հետաքնին և հնաքնին ոմն ի 1844 թուին գործ մի հրատարակեր է Կ. Պօլսի վրայօք, յորում յիշէ և Չեռազիրս, զայց ոչ մեր խնդրածը: Իսկ զնա տեսեր է Գալֆայեանն (ըստ իր դրածին) ի Բարիզ՝ անկէ զսնէ տասներկու տարի մի վերջը:

որպէս և ի Բագմալիկ ամսագրի: Բայց լիագոյն ծանօթութիւն Եղիշէի անձին և Պատմութեան գրոցն և անոր յիշած Պարսից կրօնից վարդապետութեան և քաղաքական օրինաց վրայ՝ արժանաւոր հմտութեամբ գրուածք մի արդէն պատրաստ է և սպասուի ի բանասիրաց՝ հրատարակութեանն, երբեմն մեր Մուրատեան վարժարանի աշակերտ և ապա Օսմանեան արքունեաց Էլեմըտի պաշտօնեայ եզող անձէ, որ օրչափ մեծ երախտաւոր պիտի ճանչցուի այս գրաւոր գործոյս համար, նոյնքան և սգալի է իր դեռ ոչ ծերութեամբ վախճանելուն:

Եղիշէի են յ'Բ մասին Հայապատումիս՝ Յօդուածքն 129. 130. 135-6. 140-1. 144-5. 147-50:

21. Ղ. Ա. Չ. Ա. Ր. Փ. Ա. Ր. Պ. Ե. Յ. Ի

Հայոց հայրապետանոցի և թագաւորաց երբեմն մայրաքաղաքի (Վաղարշապատի) մօտ ծանօթ գեղ մի է Փարպի, որ մեզմէ տասնեւչորս դար առաջ հայրենիք եղած է մեր դպրութեան պայծառագոյն ժամանակի գրող այս պատմչիս՝ Ղազարոս. որոյ ընտանութիւնն ընդ մեծին Վազանայ Մամիկոնենի և ընդ Կամարականս նկատելով մեր այժմու քննարանք՝ ասոնց խնամի և հայրենակից կ'ուզեն համարիլ զնա, ուստի ոչ ծննդեամբն՝ այլ ուրիշ պատճառաւ կոչուած Փարպեցի: Թողունք իրենց այդ կարծիքը: Ժամանակն՝ Ե. դարուն վերջերն ըլլալն անտարակոյս է, այլ և Զ. ին սկիզբներում և ոչ աւելի ուշ: Ժամանակագիր մի Թ. Գարուն¹, որոշակի կ'ըսէ անոր մէկ պատմագրական գործոյն համար՝ թէ, « Արար ի 507 թուին Քրիստոսի », անշուշտ մեզի անծանօթ յիշատակարանէ մի առած: Վերոյիշեալ

1. Բազտասար դպիր:

ընտանութիւնն Ղաղարայ իր տղայութենէն ի վեր՝ այն մեծատոհմ իշխանաց հետ, սնած ու վարժած տեղուանքն՝ Վրաց Աշուշայ բղեչխին տիկնոջ ձեռաց տակ, Աշանայ Արծրունւոյ և նոյն իսկ Վազանայ Մամիկոնենի քով, յայտնեն որ ինքն այլ աշուատուած էր, ըստ իւր վկայութեան, թէ և այս Մամիկոնիս քով իրրեւ նուստ և խաղու ատեն անոր թիկնոցը կրող էր, բայց ոչ իրեն կարօտ: Յիշեալ Աղանէ՛ նախարարի որդի էր, բայց ժամանակին զիպուածներէն զգուած՝ թողուց աշխարհական կեանքը և ընտրեց ճգնաւորականը, զՂազար այլ իրեն հետեւող ըրաւ և զգեցուց կրօնաւորական սքեմը. յետոյ երբ դարձաւ սա առ Վազան, նորոգեալ Վաղարշապատի եկեղեցւոյ և վանաց վերակացու կամ առաջնորդ կարգեցաւ. որով յայտնուի իր կենաց վիճակն եւս, առանց որոշակի յիշուելու թէ քաջանայ կամ վարդապետ էր:

Այս վերակացութիւնս առած է մեծ սպարապետին մարզպանութեան ատեն, իրրեւ 485 թուականին. բայց շատ բարեբաղդ չէ եղած՝ պատճառաւ տեղւոյն միարանից կամ անմիաբանից նախանձու ատելութեան Յունաց և անուսումնասիրութեանն, որք ուժգին հակառակեցան, շարախօսեցին առ նոյն ինքն սպարապետն Վազան, որ և սա թուլցաւ. և Ղազար կոզոպտուած իր սիրելի յունարէն գրքերէն, զատ ուրիշ ունեցածներէն, ստիպուեցաւ իրրեւ մերկ մաղապտրծ փախչիլ անոնց ձեռքէն, և երթալ յԱմիդ, ուր գրեց առ ոչ բաւական պաշտպան իւր Վազան թուշքի մի, որ եթէ իր Պատմութիւնն այլ գրած չըլլար, բաւական էր զինքը մեր գերագոյն գրչաց կարգին անցընելու. վասն զի շատ մասամբ ընտիր և անմասն է ի գպրութեան մերում: Կիկերոնական ջատագովութիւն մ'է իր անձին, խօհեմ միանգամայն ազդու և քաջարուեստ. որոյ համար իսկ կ'արժէ իրեն յատուկ ընծայուած՝ Ճարտասան կոչումը, որպէս Մովսեսի՝ ֆերդոյ: Միանգամայն տայ կարծել թէ

ուրիշ ճարտասանական ձևեր գրած ըլլայ, որոց և ոչ անունն հասեր է մեզի: Թղթոյն ծանօթարարն կամ յառաջարանութիւնը գրողն, որ շատ հաւաւ նօրէն տեսեր էր զՂազար, այլեւայլ խօսքի դարձուածով և կրկնութեամբ, երբեմն Բանական գիտոռքիւն, երբեմն գիտոռքիւն բանի կամ շատոռքիւն բանի, բան զօրոռքեան ըսելով, յայտնապէս կ'ուզէ իմացընել անոր ճարտասանութիւնը: Այս թուղթս ամբողջ չէ (ինչպէս հրատարակուած է), այլ երեւի թէ կամաւ քանի մի բան դուրս ձգեր են նախանձօտք:

Այս գրուածին նիւթական փոքր պակասութիւնն՝ յիշել տայ իր ծանօթ և կարեւոր գործոյ՝ Պատմառքեանն Հայոց պակասութիւնն, որ նոյնպէս տեղ տեղ պակաս կամ յետեւառաջ խառնուած ըլլալով՝ պակասած երեւի: Ո՛ր և է կերպով այլ ըլլայ՝ բոլորովին իր գրածն անայլայլակ և լիակատար չի գտնուիր Հիմայ, որպէս և հանդիպած տեսանք Եղիշէի և Խորենացւոյ, մեր երեք հնագոյն և ոսկեղինիկ պատմագրաց, որոց ժամանակին հնութիւնն այլ կրնար պատճառել այսպիսի բան մի, բայց անկէ աւելի կամաւոր գոգութիւն կամ կողոպտումն կ'երեւի. ինչպէս ի Ղազար ՀԳ գլխոյն մէջ, ուր հեղինակն խոստանայ գրել Ճարմայանու գանաց և Սահակայ ասպետին անուանքը, և չկան:

Բայց որչափ այլ այս բանս և Ղազարու Պատմութեան ձեռագրաց սակաւագիւտ ըլլալն՝ մեզի զրկանք է, սակայն ոչ այնքան մեծ՝ որ գործոյն յարգն և ոճը նուազեցուցած ըլլայ: Ղազար՝ ինչպէս իր Թղթին մէջ՝ Պատմութեան մէջ այլ երեւի՝ հանգարտ, խոհական և կարգաբան գրող. եթէ Եղիշէի փափկութիւնը շունի և ոչ Խորենացւոյ իմաստից փայլակները, թերեւս անոնցմէ աւելի յատուկ պատմաբան է, ինչ որ սովորաբար հասկընանք պատմիչ և պատմութիւն ըսելով:

Ի՞նչ է իր Պատմութիւնը. — մեր գրագիտաց ծա-

նօթ է, որ գրեթէ զլիւսուոր մասնը կամ մարմինն՝ նոյն Եղիշէին պատմածն է. բայց անկէ աւելի ունի, թէ ի սկզբան, և թէ մանաւանդ ի վերջոյ՝ ի սկզբանն կարգէ Հայոց թագաւորութեան երկու բաժնուիլն երկու աշխարհակալ տերութեամբք՝ Յունաց և Պարսից. և այս ետքինիս գերիշխանութեան ներքեւ եղողները յիշէ, որոց երկիրն՝ Հայոց բնաշխարհի Սյրարատայ մէջ էր. և ի յիշելն զայս՝ Ղազար աշխարհագիր կամ տեղագիր դառնայ, այդ աշխարհին կամ գաւառին՝ բնական գիրքն և պարատութիւնը նկարագրէ, զգայուն ոգով. այլ աւելի զգայուն սրտով յիշէ և զրէ իր և Հայոց անզուգական մեծ վարդապետները, Սահակ և Մեսրոպ, առաջինին տեսիլքն¹ և այլ սրտառու խրատներն առ նախարարս՝ որք ու ճանչցան իրենց ապերախտութիւնը, և երկուքին վախճանը, և տեսակ մի որբանալն ազգին՝ այնպիսի հոգեւոր ծնողներէ և դատարարակներէ: Այս կարգ պատմութեանն բերէ Եղիշէի պատմածը. քիչ շատ նոյնպէս պատմէ Յազկերտի ստիպելն զՀայս յօրէնս Պարսից, Հայոց եկեղեցւոյ առաջնորդաց արխարար հակառակիլն զրութեամբ, նախարարաց տկարանալն ի դրան Յազկերտի. դարձն, զղջալն, և պատրաստուիլն զէնքով գիմագրել. ապա Վարդանանց պատերազմն, և Ղեւոնդեանց նահատակութիւնն: Մինչեւ հօս զուգրնթանայ Եղիշէի, առանց ինչ նշան տալու թէ ասոր գրածը տեսնը է թէ ոչ. շատ տեղ գրեթէ նոյն և նման է երկուքին պատմածն, և նոյն յիշատակարաններէն առած կ'երեւին՝ ուր անձանց անուանքը յիշեն, նախարարաց և եպիսկոպոսաց, քիչ տարբերութեամբ անուանց և թուոց:

Բայց յետ այդ մեծ զիպուածին և դարձի նախարարացն ի Պարսից՝ Ղազար գեռ եւս իրբեւ

1. Որոյ հարձակատութիւնն և առաջին գրողն՝ երկար քննութեանց տակ ինկած է:

տասնըճինգ տարուան պատմութիւն շարունակէ , գործովք Վարդանայ եղբորորդւոյն՝ Վանական Մաւթիկոնէի, որոյ փառաւոր յաղթանակաւ և Հայոց մարդպանութեամբ, և այս մեծ բազդին ինդագին գոհարանութեամբն առ Աստուած՝ բերանով քահանայապետին Յովհաննու Մանդակունոյ կնքէ պատմութիւնը, շատ յարմար տեղ: — Այս տեսութեամբ՝ մինչ Եղիշէի պատմութիւնն, յատկապէս կոչուի Վասն Պատերազմին Վարդանայ կամ Վարդանանց, Ղազարուն՝ որ կրնար ըսուի նոյնպէս Պատմութիւն Վահանայ, սովորաբար կոչուի Պատմութիւն Հայոց աւելի քան հարիւր տարւոյ: Այսպէս յիշեն մեր ամենայն յետագայ պատմիչք: Բայց միթէ աջդասի էր իր գրած Պատմութիւնն՝ որչափ հիմա կայ ի ձեռս մեր:

Ղազար իր Յառաջարանին մէջ (որ ինչպէս յիշեցինք այլայնեալ և կարատեալ է) թուի մեր ունեցածէն աւելի քան մի խոստանալ: Ի յիշելն գլխավոր Հայոց, կ'ըսէ թէ իրմէ առաջ երկու Պատմիչք եղեր են, Ազաթանդեղոս և Բուզանդ, և հիմայ ինքն Երրորդ է և կ'ուզէ երկրորդին գազրած տեղէն շարունակել, « կարգել մի ըստ միով է » զիրս և զգործս, զբազմաշեղանակ դիպրուռն Հայոց » աստան աշխարհիս, բաժանմանց յերկուս թա » գաւորութիւնս », և այլն. այս երկուքին մէկ բաժինն՝ անօրինացն անուանէ, այսինքն Պարսից, և ասոնց հպատակաց դիպրուռնները պատմել դիտէ, Վարդանանց և Ղեւոնդեանց և յետագայն, « Մին » չիւ ցօր սկզբան մարդպանութեանն Հայոց Վա » հանայ Մամիկոնէից տեսուն և մեծի զօրավարին » Հայոց. և դադարեալ հանգուցից յայնմ տեղով » զքան վաստակոց պատմութեանցս այսոցիկ » . և այնպէս է, ինչպէս և կարգամբ, և այս բանս ըրած է « Հարկաւորեալ հրամանաւ իշխանաց և բանիւ » սուրբ վարդապետաց »:

Սակայն այսչափս բաւական չերեւիր իր խոստման՝ շարունակարար պատմելու Բուզանդին դա-

գրած տեղէն՝ զԲազմաշեղանակ դիպրուռնս մեր աշխարհիս. մանաւանդ երբ լսեմք միւս յառաջարանը, թէ « Ընդ բազում անոս մատենից առաջնոցն » Պատմագրացն Հայոց անց. յորոց՝ ըստ յերկար » ընթերցողութեան՝ գտի ի նոցանէ զԺամանակաց » և զդարոց աշխարհիս Հայոց՝ բազմադիմի յե » ղափսութիւնս, յստոյգ և յանսխալ կարգաւ » ըութենէ Առաջին գրոցն », որ է Ազաթանդեղոսինը: Ղազար՝ թէ և յանուանէ իրմէ առաջ երկու պատմիչ միայն յիշէ, սակայն շատ ուրիշ և աւելի բաներ անշուշա կարգացեր և տեղեկացեր է բազմադիմի յերկարաշեղանակ, և այլ ժամանակաց և դարոց վրայօք ի յիշեալ Բազում անոս մատենից առաջնոց պատմագրացն Հայոց: Աւելորդ էր զասոնք յիշելն, եթէ միայն իր կարգալն ուղէր իմացընել. այլ յուսացընէ զմեզ պահանջելու աւելի երկար ժամանակի պատմութիւն: Այսպէս իմացած և թերեւս տեսած է վերոյիշեալ ժամանակացոյց զպիրն, որ Ղազարու գործն այլ ժամանակագրութիւն կ'անուանէ. այսպէս իմացեր են և մեր ծերունի Հարք կամ հեղինակն իտալերէն գրոց Compendio Storico, և հրատարակեալ ի Վենետիկ յանուն Սեղբոսեան Յովհաննու, (Հատ. Գ, էջ 510), որ յԱզամայ մինչեւ իր առենի պատմութիւնը գրած է Ղազար, կ'ըսէ. Compose una Storia Armena, da Adamo fino al suo secolo. Ուստի առած է այս տեղեկութիւնս ինձ յայտնի չէ. բայց աւելի հաւատուեալ վկայէ մեր ինդրոյս՝ Ժ.Ձ. Գարու վիպասան Սիմեոն Ապարանեցիկն, ի վերնագրի Վիպասանութեանն Պանդառնեցիկ և Մամիկոնեանց, անընդիմ ի վիպասանութեանն Ղազարու Փարսպեղոյ. և ի կարգի իր Վիպասանութեանն կ'ըսէ.

- « Ըղճարպեցուն ձառ ընթերցեալ
- » Ս.ն որ Ղազարըն կոչեցեալ,
- » Փիլիսոփային աշակերտեալ,
- » Ալան՝ անուանն հրպատակեալ,

1. Որ է Աղանն Արծրունի:

- » Ի յԱրժրունեացն ազնւացեալ...
- » Ի Յունական երկիր գնացեալ (Ղազար),
- » Եւ դարտաքնոց հանճարս ուսեալ,
- » Աթենացի զինքն առձայնեալ,
- » Քան ըզնոսա այլ հմտացեալ» :

Յետոյ զրէ թէ Վահանայ մարդպանի սիրելի ըլլալով, անոր

- « Ըզկամն հայցմանքն կատարեալ,
- » Եւ Պատմագիր Հայոց եղեալ.
- » Ի Մովսիսէ կարգ ըսկըտեալ,
- » Եւ ըզմնացեալս վիպասանեալ » :

Այսինքն Մովսիսի Խորենացոյ ոճով գրեր է իր Պատմութիւնը՝ հին ժամանակէ սկսելով, և անոր թողածը կամ շիշածն՝ ինքն իր գրածին մէջ աւելցուցեր է. և ասով վկայուի թէ Ղազար ճանչցեր է իրակ առաջ գրող Մովսէս պատմիչ մի, զոր մենք Խորենացի կոչեմք: Բայց Ղազար՝ որ ըստ իւր վկայութեան՝ խնամով պրտւորեր էր հնագոյն պատմչաց գործերը, ասոնց ամենէն յարգելին՝ մեր նկատմամբ՝ նման Խորենացոյ քններ է. այսինքն

- « Ի Մար-Արայ մատեանս մըտեալ,
- » ՉՄժրունացունքն վերածնեալ¹ » :

Ասկէ առաջ նախաջրհեղեղեան կարծեցեալ թագաւորները յիշելով ըստ աւանդութեան Քաղզէացոց, յիշէ և Խորենացոյ յիշած Գորգենն և Բանան՝ իբրեւ գրողք այն աւանդութեանց.

- « Ի Գորգենայ ձառարանեալ,
- » Եւ ի Բանանայ ըստոյգ պատմեալ »²:

Իբր թէ Գորգեն համառօտ յիշած ըլլայ զայն, Բանան աւելի երկար պատմաբանօրէն. և թէ աւսոնց գրածները տեսած է Ղազար և աւելի բան քաղած քան զԽորենացին: Իսկ Մար-Արայ Մծուր-

1. Թերեւս վերածեալ էր կամ վերծանեալ. Մր-ժորենացի կամ Մժրունացի ըսելն և ոչ Մժրենացի... յիշեցինք արդէն յերես 17-18:

2. Տես թիւ 5-6 Բնիկ Հայ Պատմչաց՝ երես 41:

նացոյ յիշատակին յարէ, իբրեւ տեսող և քննող զՂազար,

- « Եւ զվաղընջուցն թարգմանեալ,
- » Հելլէն գըրով սիւնարն¹ գըտեալ
- » ՅԱգաթանգեղոսէ դրոշմեալ,
- » Ի վերնադրէն զայս իմացեալ:
- » Արանց հնգից թագաւորեալ », և այլն.

որք են հինգ Հայկազունք յետ Սենեքերիմայ ազատօրէն թագաւորեալք ի Հայս. ինչպէս ծանօթ է մեր բանասիրաց²:

Սիմոն յառաջ տանելով իր Վիպասանութիւնը՝ Վաղարշակայ յաջորդաց պատմութիւնը լռէ, որովհետեւ Ղազար այլ չէ ուզած Խորենացոյն պատմածները կրկնել.

- « Զի Պատմագիրն (Ղազար) ոչ ախորժեալ
- » ԸզՔերթողին կրկնաբանեալ » :

Բայց փոխան Արշակունեաց՝ Մամիկոնէից ցեղին վրայ երկար գրած է, կ'ըսէ, չհաւնելով կամ չմիաբանելով Մովսիսի.

- « Այլ զճենազունս յիշատակեալ,
- » ՉՄամիկոնեանքս զեկուցեալ,
- » Վասըն սոցա դրուագագրեալ.
- » Բայց Մովսէսի ոչ ձայնակցեալ,
- » Ագաթանգեղայ գոլ հետեւեալ.
- » Այն՝ որ զդեսպանս ճեւնաց հարցեալ,
- » Ի սոցանէ զըստոյգն ուսեալ.
- » Ար է գըրով մեզ աւանդեալ,
- » Մառն և կռակիրն փախուցեալ,
- » Ճենաստանէ ի Պարս անցեալ », և այլն:

Խորենացին (Բ. ձա) արդարեւ յիշէ Մամիկոնեանց ծագումը, սակայն փոխան երկու անձանց (Մամ և Կոն կամ Կոնակ), մի անձն ընծայէ երկու աւուանց զուգութեամբ, Մաղզուն: Այս ցեղին յա-

1. Յօրինակին տարբարն դրուած. մենք յէջ 17, ևնորրոս գտեալ զրինք: Արն է արդեօք սւղիղը:

2. Տես նոյն 17 երեսը:

տուկ պատմութիւնը գրողն Յովհաննէս՝ յ'է. դա-
րու, և յետագայք, որպէս և Մեծին Ներսիսի վարքը
գրողն, (որ թերեւս հնագոյն ըլլայ քան զՅովհան-
նէս), այսպէս Ղազարու հետեւին, երկու եղբայր
Մամ և Կոն ճանչնալով նախահարս այն մեծ և
բազմեքարխտ ցեղին:

Մամիկոնեանց ծագումնը և քիչ կամ շատ յա-
ջորդութիւնը յիշելէն ետեւ, Ղազար՝ ըստ Ապա-
րանեցոյն՝

« Չոճ բանին առ այլրս փոխեալ,

» ԸզՄարտակէ սկիզբն արարեալ ». և այլն,
շատ նորալուր բան մի պատմէ, իբր թէ Աբրահամ
Նահապետի հաւատարիմ ընտոծնին՝ Եղիազարու՝
հայրն (Մարտակ ըստ Ս. Գրոց, Ծննդ. ժե. 2) Մա-
սէկ Դամասկացի (որոյ անուան այլեւայլ կարծիք
ունին Մեկնիչք) յետ մահուան մեծ նահապետին՝
ապոստամբելով յԻսահակայ՝ երեք որդուովք կու գայ
ի Հայս, և Արայի դաշտին մէջ բնակելով՝ անոնց
մէկուն անուամբ՝ Ազատ կոչէ աշխարհահոշակ բարձր
լեռը, որը լաւ եւս բտելու էր թէ իր իսկ անուամբ
կոչէ, գոր լաւ և մինչեւ հիմայ կոչուի ի Հայոց Մա-
սիք: Այս տեղ աւանդութեան հետ շփոթի կամ
խառնակի կամ պակտի մեր վիպասանին գրածն.
զի այն լերին Ազատ անուանադրութիւնն յիշելէն
ետեւ՝ անմիջապէս կըցած է.

« Եւ ընդ սրմա շարունակեալ,

» ԶՔուզայս որ զԼստամպօլ շինեալ »:

Եւ է այս յիշատակս անշուշտ հիմայ մեր ձեռ-
քում եղած Ղազարայ Պատմագրութեան մէջ ան-
յարմար դրուած հին Բիւզանդիոն քաղաքին շի-
նութեան պատմութիւնն և Նորոյն ի Կոստան-
գիանոսէ, և այս իբր պատճառաւ յիշման Փաւլու-
սոս Բուզանդի ներմուծուած: Ղազարու զգօնու-
թեան շէր վայլեր այսպիսի զարտուղութիւն. բայց
եթէ ուրիշ պատմական կապերով կապած ըլլայ
այդ տեղեկութիւնը, իր անկէ առաջ և վերջը ըսած-
ներուն հետ, որք կորած են կամ խառնակուած,
տոմ վերոգրելոցս:

Ապարանեցին շարունակէ համառօտել իր սճով
և շափով Ղազարայ պատմածները. անկէ վերջն
ալ ի Սերիոսէ և յայլոց՝ մինչեւ յաշխարհակալու-
թիւնս Աբարաօցոց. զոր յետոյ պիտի յիշենք, երբ
Սիմոնի կարգն գայ ի շարս Պատմչաց մերոց:

Իսկ Փարպեցոյն վրայ մինչեւ հիմայ մեր ըսա-
ծէն երկու երեք բան գլխաւորեմք. — Առաջին, իր
հիմայ գտնուածէն աւելի երկար Հայոց Պատմու-
թիւն գրած ըլլալն: — Երկրորդ, այս մեր գտածն
այլ տեղ տեղ պակաս, և յետեւառաջ գրուած շփո-
թուած է: — Հանդերձ այսու, Երրորդ, այս ամե-
նայն արտաքին պակասութիւնքն, ինչպէս առաջ այլ
ըսինք, շեն նուազեցններ իր մատենագրական
յարգը. այնպիսի յարգ, որոյ համար եւրօպացի
բանգէտք և հայագէտք ըսած են թէ՛ սա և Եղիշէ
և քանի մի նմանիք՝ կրնան հաճութեամբ կարգա-
ցուիլ նաեւ յետ կարգալու հեյլենական գասագիր
պատմիչները:

Հետեւի դարձեալ, որ այսպիսի մատենագիր մի
արժանի էր ուսումնասիրութեան քննաբանից, և
իրօք ուսումնասիրուած է, թէ և ոչ Խորենացոյ
և Եղիշէի շափ: Ի մերայոց, թողլով զայլս՝ մեր
կրօնակից հեղինակն Պատմութեան Ազգային հին
Դպրութեան բազմակերպ տեղեկութիւն տուած է
(Գ. տպ. եր. 391-406). — Մտկուայի Ճեմարանի
Ժանօթ և հմուտ մագիստրոսն Գր. Խաչաբեան երկար
(130 երես) քննաբանութիւն մի՛ Ղազար Փարպեցի
և գործք նորին, հրատարակած է ի նոյն քաղաքի,
յամի 1883: — Ընթերցողք սպասեն անշուշտ այս-
պիսի հեղինակի մի յօտար լեզու այլ թարգմանու-
թեանց, ինչպէս իր զուգակցաց՝ Եղիշէի և Խորե-
նացոյն: Եղած էր արդարեւ իտալերէն թարգմա-
նութիւն մի ի Վանս մեր իբր վաթսուն տարի առաջ,
բայց թարգմանչին հեռանալովն՝ անկատար և ան-
տիպ մնաց: Գրեթէ՛ նոյնքան տարի առաջ (1843)
Եղիշէի առաջին փասակերէն թարգմանողն Տ. Կա-
րապետ Գապարաձեան, նոյն ազատութեամբ և քա-

դուածով բան մի հրատարակեց ի Բարիզ, վերագրելով Abrégé de la vie politique et guerrière du prince Vahan le Mamiconien, par Lazare de Pharbe; par le P. Garabed Kabaragy. Իսկ կատարելով թարգմանութիւն մի նոյն լեզուաւ և ծանօթութեամբք՝ մեր միտքան Հ. Մամուռի Վգ. (Կեսարեան) Գանրարեան հրատարակեց՝ նոյնպէս ի Բարիզ, 1869, ի շարս Հայ պատմչաց Վիկա. Լանկուայի (Ս. հոր), վերագրելով, Lazare de Pharbe, Histoire de l'Arménie, traduite pour la première fois en français, et accompagnée de notes historiques et critiques, par le P. Samuel Dr. Ghésarian (Cantar), և այլն:

Ղազարու անձին ծանօթութեան նկատմամբ՝ գուցէ աւելորդ չլլայ յիշել՝ որ Մխիթար Այրիվանեցի ի շարս Պատմագրաց մերոց յետ Բուզանդայ կարգէ զՂազար, և յետ ուրիշ հինգ պատմչաց զՄովսէս Խորենացի, ապա զՂազար փարպեցի. որ կրնայ կարծեցրնել գառաջինն՝ այն նորոց անանունն կոչածը. զի և մեր պատմիչն, ինչպէս տեսանք, ի յառաջարանին խոտտանայ Բուզանդայ գըրածը շարունակել. իսկ Վահանայ գործոց պատմագիր՝ յատուկ զՓարպեցին ճանչնայ: Ուրիշ յիշելիք մի այլ. Մխիթար Անեցին իր պատմագրաց շարքին մէջ՝ Ղազարի կոչէ զՓարպեցին. գուցէ անոր յանդիմանած արեղայքն այնպէս կոչէին զնա ծաղրելով. թերեւ և փոքրահասակ էր. ինչ որ ըլլայ, մեր հայրենի դպրութեան մէջ մեծագունից և անմահից մէկն է: Մեր Պատմագրաց թիւն վախճաններկու ըսողն և միայն քսանեւեկեց անուն յիշողն, թերեւ նոյն ծաղրողաց անուանարկութեամբ ըսածը կրկնէ. « Ղազար Փարպեցի, » զոր ոմանք Ղազար փարպեցի կոչեն, և ոմանք » Ղազարիկ »:

Հաւանելի է որ երկու Ղազարք եղած են: Մին աշակերտ Ս. Սահակայ, յորմէ զրկուած է միւս թարգմանչաց հետ և իբր յամի 425 բերած է առ

նա յունարէն Քանանայարայի աղօթքները, և թարգմաներ են մեր Ս. Հայրապետը. (տես Մասն Բ, Յօդ. 453): Իսկ միւսն է մեր Պատմիչ Փարպեցին, զոր առջինէն որոշելու համար և ժամանակաւ յետոյ ըլլալուն՝ պատշաճ գայ Ղազարիկ անուանելն: Այլ թէ առաջին Ղազարն այն գրած է և պատմական բան, չէ յայտ:

Ղազարու են յԲ Մասին Հայպատուիս՝ Յօդուածքն 413. 418. 420. 422. 427. 431-4. 437-8. 442-3. 446. 458. 460-5. 467:

Փ Ո Ք Ը Պ Ա Տ Մ Ի Զ Ք

Հ Ի Ն Գ Ե Բ Ր Ո Ր Դ Դ Ա Ր Ո Ւ

22. Ս Ա Հ Ա Կ. — 23. Խ Ո Ս Ր Ո Վ

Նախայիշելոց՝ Խոսրովու, Անդրէի և այլն, կարգին կրնան յարել և յետագայքս, թէ և ոչ աներկբայք: Այրիվանեցին ի շարս հնագոյն Պատմչաց չփոթ իմն դասէ յետ Բուզանդայ, Ներսէս, և Ղազար (զորս յիշեցինք ի թիւս 18 և 21), և Մանակ, յետոյ Կորիշն (Կորեան գրուած), ապա Մանակայ Խոսրով:

Իրմէ առաջ Կիրակոս ծանօթ պատմիչն մեր դասէ Սրբոց Թարգմանչաց (Սահակայ և Մեսրոպայ), Գլխաւորք Աշակերտաց՝ Ս. Յովսէփ, Յովհանն, Ղեւոնդ, Մանակ, Մովսէս Քերդող, և այլն: Ասոր յիշած Սահակն՝ Այրիվանեցւոյն կրկին Սահակաց մին պէտք է ըլլայ, եթէ արդարեւ երկուք էին: Կիրակոսի յիշածէն անտարակոյս

երեւի աշակերտ կամ Թարգմանիչ մի, թերեւս և Ղեւոնդեանց հետ նահատակեալ եպիսկոպոսն . բայց չի վկայուիր իբր պատմիչ :

Իսկ Սյրիվանեցոյն Սահակ Կորեան և յետոյ Սահակայ Խոսրով սեռական հոլովով և անորոշ կիտաղութեան բաժանմամբ անուանքն, կարծեցընեն թէ պէտք է իմանալ Պատմաբանն բառն այլ . և թէ ինչպէս Կորիւն՝ Ս. Մեսրոպայ վարքը գրած է, նոյնպէս գրած ըլլայ և Խոսրով ոմն Ս. Հայրապետին Սահակայ վարքը, որ հաւանական երեւի : Արդէն առանց անուան գրողին՝ Ահարոն Վանանդեցի յիշէ զՎարք Ս. Սահակայ, ուսկից և Ս. Կունէի Խաչին տեղեկութիւնն : Զահկեցի Կաթողիկոսն այլ ի շարս Պատմըաց ընդ մէջ Բուզանդայ և Ղեւոնդի կարգէ զԽոսրով : Ղեւոնդ՝ Ութերորդ դարու պատմիչն է՝ Սրբաբացոց գործոց . առաջ կամ ետեւ՝ անտարակոյս երեւի Խոսրով անուամբ հին պատմիչ մի, և հաւանորէն Ս. Սահակայ վարքը գրող :

24. Կ Ի Ր Ա Կ Ո Ս

Յայտմաւորք յիշեն յ'30 մայիսի (Մարերի ԻԳ) Ս. Թադէի և Սանդրխոյ նշխարաց գիւտը հրաշալի յայտնութեամբ Կիրակոս անուամբ ճգնողի մի՝ այդ Սրբոց նահատակութեան տեղերում . որ և յետոյ գրած է իր տեսեանց և գիւտին Պատմութիւնը . և գտնուի Ճառնորաց մէջ ընդարձակ քան ինչ որ ի Յայտմաւորս, այլ թուի ի սկզբան ընդարձակագոյն եւս գրուած ըլլայ : Յայտմաւորաց ամանք սխալմամբ զրեն Յովհան Օձնեցի կաթողիկոսին ժամանակ ի ՃՀ (721) թուականին եղած ըլլայ, առանց խորհրածելու թէ իրենք իսկ գիտեն որ Մամիկոնեան Վահանայ մարզպանին ատեն էր

եղածն, որ է ըսել ի վերջ կոյս Ե. դարու, Յովհաննու Մանդակունույ կաթողիկոսութեան ատեն : Արդէն Խորենացին այլ յիշէ (Բ. ՂԳ). « Ստ ու » ըբմն յայտնել նշխարաց երկոցունց և փոխել յԱ. » սապարն . այս ամենայն, որպէս ասացաք, այլոց » պատմեալ յառաջագոյն քան զմեզ » :

25. Մ Ա Տ Թ Է Ո Ս Գ Ի Տ Ն Ա Ի Ո Ր

Կարծեօք կարգեմ զսա ի շարս Պատմաց ժամանակիս : Իբրեւ պատմիչ յիշէ Ղազար Զահկեցին յետ Ուսայեցոյն՝ Երկրորդ Մատրեոս մի, բայց կարգովն այլ ցուցընէ իբրեւ ԺԳ. դարու հեղինակ : Այս դարուս մէջ գնա՛ն գնա և օտարագգի բանասէր մի (Շորէն), չգիտեմ որմէ՞ առած, և Լուսաորչի վարքը գրող համարի . եթէ չի սխալիր մեր ԺԸ. դարու նոյն վարքը գրող Մխիթարայ աշակերտ՝ մեր Հ. Մատթէոս Եւդոկիացոյ հետ :

Ստեփանոս Ռոչքեան իր Հայ-Լատին բառագրոց մէջ վկայութիւններ բերէ ի Մատթէոս պատմչէ, որոց մէջ յիշուին անուանք Բակոչր, Գագես զօրս վար, Մարգիս ռոմկապետ, և բառքս Բոչրակսն զօրք . Զարկոցաւ զբարբառս բարիսել . Մայրաճիշրով պատեղ զտապաւնն, և այլն . որք ինձ երեւին ԺԳ. դարէ շատ վեր պատմչի պատշաճ . և կարծեօք համարիմ թէ ըլլայ Ե. դարուս վերջերը կամ ի սկիզբն յաջորդին, Գիտնաւոր մականուանեալն, աշակերտ Յովհաննէս կաթողիկոսի Մանդակունույ, որ զրկեց գնա առ Վաչագան թագաւոր Աղուանից . և կարծեմ թէ ասոնց կաթողիկոս Ս. Գրիգորիսի նշխարաց Գիւտին պատմագրողն ըլլայ :

26. ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՕՆ ԱՅԻ

Տարակուսանօք յիշեմ՝ և զսա, ըստ վերոյիշեալ Բառագրոց Հեղինակին բերած վկայութեանց, յորս յիշուին Շարատ, Սրտաշատ, և այլ հնութեան վերաբերեալ անուանք: Պատմըչաց շարագասող մէկն՝ երկու Ստեփանոս յիշէ, զատ անձինք համարելով զԱստղիկն և զՏարօնեցիկն: — Իբրեւ կէս դար առաջ հրատարակուած էջմիածնի Արարատ օրագրի մէջ կեղակարծ Գաւազանակարգի մէջ Թաղէոսի Առաքելոյ յաջորդաց մէջ՝ Հեղինակ համարուած է Ստեփանոս Տարօնացի աշակերտ Ս. Մեսրոպայ: — Սերիոսի պատմութեան սկիզբն այլ ժամանակագրական յիշատակք կան առաջին դարուց, « Պատմագրացն՝ Մովսիսի Խորենացոյ » և Ստեփանոսի Տարօնացոյ: Եթէ Սերիոսի է այս խօսքս, ուրեմն իրմէ հին է Ստեփանոսդ, և կրնայ կարծուիլ եպիսկոպոսն Տարօնոյ ի սկիզբն է. դարու, որ գնաց առ Կոմիտաս կաթողիկոս, և առաւ բերաւ Ս. Հռիփսիմեայ նորագիւտ նշխարէն՝ իր աթոռը, Ղազարու վանքը:

27. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԱՊՈՍՆ

Հաւանօրէն սա ի վերջ Ե. կամ ի սկիզբն Զ. դարու էր, Սիւնեաց Գողթն գաւառի Ս. Գողթութայ Վանաց Եկեղեցւոյան. որ այդ վանքը շինողաց՝ Գիւտ վանահօր՝ (երբեմն Վասակ կոչուած, թո՛ւն Շարիք իշխանի), և քրիստոնասիրի իր աշակերտին՝ վարքն և նահատակութիւնը գրած է. ըստ վկայութեան Օրպելեան Ստեփանոսի, որ իր Սիւնեաց պատմութեան մէջ (ԻԱ) համառօտած է

զնոյն. և կ'ըսէ. « Ահա աւանդեաց մեզ զայս » հրաշալուր Պատմութիւն՝ Յովհաննէս Եկեղեցւոյան » սուրբ ուխտին (Գողթութայ), որ դքսան և հինգ » ամ ոչ ել արտաքոյ եկեղեցւոյն, և ոչ խօսեցաւ » ընդ ումեք, բաց ի պաշտամանէն »: Դիպուածն՝ մասամբ աւելի կամ պակաս հրաշալուր, բայց բունն ստոյգ է. ժամանակն Ե. դարու վերջերն: Անտարակոյս երեւի պատմըչին ժամանակակից և հաւանօրէն ականատես ըլլայն՝ գոնէ վերջին մասին գրած պատմութեանը. մանաւանդ որ Հայր Գիւտի և աշակերտին նահատակութենէն վերջը այն վանքն այլ աւրուեցաւ:

28. ԱՆԴՐԷԱՍ

Մի յաշակերտաց Ս. Սահակայ, ի Տարօն գաւառէ և անոր հոշակաւոր Ս. Ղազարու վանաց Վանական, թուի յազնիւ տոհմէ. վասն զի Մեծին Վարդանայ դստեր Ս. Շուշանկան հետ եկեր էր ի Վիրս կամ ի Գուգարս՝ իբրեւ հոգեւոր հայր, և անոր երեք մանչ և մի ազնիկ գաւակները կնքեր էր. և երբ այդ Շուշանն Վարդենի ի սկզբան իր եօթնամեայ տառագանաց յանգութ էրկանէն՝ Վազգենէ՝ քովի եղած Սրբոց նշխարներն և սրբազան գրքերն ուզեց ապահօզցընել, յանձնեց Անդրէասայ, պատուիրելով որ Մծխիթայի քով բլրոյն վրայ կանգնած Ս. Նուէի Խաչն այլ վերցընէ տանի ի Տարօն: Եւ այնպէս կ'ընէ Անդրէաս, տեսածին և եղածին Պատմաբիւնն այլ գրելով: Իններորդ դարուն վերջերը այս գրուածը գտեր է Ահարոն Վր. Վանանդեցի և քաղելով աւելցուցեր է յիշեալ Խաչին յետոյ տեղէ տեղ փոխադրուիլը: (Տես թիւ 52): Ահարոն անկէ առած պատմութեան յիշատակը վերնագրէ՝ Սրբոյն Անդրեասոս առաջեալ:

յայտնելով որ թէ՛ գիտնական աշակերտ և թարգմանիչ էր սա, թէ՛ սրբակեաց և ճգնազգեաց արեղայ մի. « Խարազնազգեստ և բոկազնաց եղեալ, » անեալ առ ոտս Սրբոյն Սահակայ, և յաւերմաւ » նէն Հայոց անդ հասեալ՝ խաղաղեալ կայր » : Խաչն և նշխարները տանելով Անդրէաս ի Սպեր դաւառ՝ Պարխար լերանց ամուր ու ծածուկ խորշի մի մէջ պահէ. և երբ լո՛ւ է Շուշանկան մահը՝ կ'իմացընէ Ս. Վարդանայ (Հմայեակի) եղբորորդւոյն Գրիգոր պատանի իշխանին. որ զօրօք կ'երթայ հօն, և ի Յունաց ազատելով՝ բերէ ի Վանանդ և դնէ կարևեկեաց վանքը : Անդրէաս այլ օրհնելով զնա և փառք տալով Ստուծոյ, վախճանի. « Զի էր » այր ծեր և անցեալ ժամանակօք. և բազում վիշտս » յաղագս կործանման աշխարհիս Հայոց կրեալ » :

29. ԱՆԴՐԻԱՆԷ ԿԱՄ ԱԳՐԻԱՆԷ

Ժամանակակից Անդրէասայ և զրեթէ անուանակից, ինչ վիճակի անձ ըլլալն չի յիշուիր, սակայն անտարակոյս եկեղեցական է : Սա պատմագրած է իր օրերուն՝ Զ. դարու կիսում՝ Հայ-Աղուանից երկրին կամ Արցախայ կաղսեր կոչուած գաւառի մէջ՝ շատ մի Սրբոց նշխարաց գտնուելը, Ս. Ստեփանոս Նախավկայէն սկսեալ, Մամատայ, Կոզմայի և Գամիանոսի, և այլոց. յորոց մին, Ս. Վարդու, երեւի Վեհիկ անուամբ մէկու մի՝ յիրազի, ինչպէս և իրմէ առաջ ուրիշ մի, և յորդորեն զսա որ երթայ հանէ իրենց նշխարները : Վեհիկ առաջ անհոգ կ'ըլլայ, յետոյ վախնալով կ'երթայ յայտնէ այն ատենի Աղուանից ծանօթ կաթուղիկոսի՝ Արսւսայ (չոր մեր պատմիչք՝ Հայոց թուականին հաստատութեան տարին, 551, յիշեն). և նա Վեհիկ և եկեղեցական և քաղաքական պաշտօնէից

ձեռօք հանել և փոխադրել տայ Սրբոց նշխարները, և մեծ հանդէսով տօնախմբէ : Այս բաներուս համար կ'ըսէ պատմիչն. « Ես Անդրիանէ որ զՅիշու » տակս զրեցի, մաղթեմ՝ զանարժանութիւնս իմ » յիշել՝ ընթերցողացդ. և զհայրապետն Արաս մի » եւս մտանալ, յորոյ ժամանակս լոյս աշխարհի » ծագեցաւ. ընդ նմին և զՎեհիկ կարապետ նո » ցին յիշեսցէ՛ Տէր Աստուած ողորմութեամբ իւ » թով մեծաւ » : — Թերեւս Վեհիկն է գրուածքը զրոզը, իսկ Անդրիանէ՝ յաւելուածն յօրինողը. (Տես Բագմալիկայ 1897 ամի, էջ 374) :

Այս յիշատակս՝ Աղուանից պատմիչն Մովսէս Կաղանկատուացի իր հռչակաւոր պատմագրութեան մէջ անցուցեր է, (Բ. գ). յայտ է թէ համառօտելով :

30. Յ Ո Վ Ս Ի Ա

Անտփօր անուն մի, համառօտ գրուածի մի հեղինակ, որ ոչ յիշուի յայլոց, բաց ի վերնագրէ իր գործոյն, որ է այսպէս. « Քրիստոսասիրի Վարագ » դայ Գարեղենից տեառն աղաչեալ զՅովսիս ճըլ » մարտախորհ և երկիւղած ի Տեառնէ, ստուգել » զպատմութիւն երանելեացն՝ Թաթլոյ և Ղլուտի » և Թովմասու, և Վարոսի ճգնաւորաց Քրիստո » սի » : Պատմութիւնն յայտնէ որ Վարոս և Գիւտ նոյն անձն է, եղբայր Թաթլոյ, որ առանձնութեան մէջ մեռած գտնուելով՝ կոչուեցաւ Գիւտ և Գտոչի : Տօնելի Սուրբեր են ասոնք, և Յայսմաւուրք այլ պատմիկն անոնց վարքը, որոյ աղբիւր եղած է Յովսիսայ գրածն. որ թէ և համառօտ, այլ բաւական կարեւոր, ոչ այնքան յիշեալ Սրբոց վարուց նկատմամբ, որքան Զ. դարու քանի մի նշանաւոր անձանց, իշխանաց և ուրիշ զրօղներէ շիշուած աշխարհագրական տեղեաց յիշատակներով :

Վերնագիրն ինքնին ներկայացընէ նախ զՎա-
րագդ, որ յիշի քանի մի ուրիշ իշխանաց հետ Բ-
Ներսէս կաթուղիկոսի գումարած ժողովոյ մէջ, Զ.
դարու կիսուն մէջ: Թերեւս սրբութենէն աւելի հե-
տաքրքրական ըլլայ Յովսիայ բաժն թաթլոյ հա-
մար, թէ Ս. Մեսրոպայ և Ս. Ղեւոնդ երիցու
» զՄեսրոպայ, և զԳառնիկ և զՂեւոնդ»: Այս բանս
աւեր է պատմիչս ի կառնարահանաց Պատուոքե-
նէ. և ըստ այսմ՝ վկայուի՝ որ թաթուլ ոչ միայն
մի էր յառաջին աշակերտաց Ս. Մեսրոպայ, այլ
և Վարդապետ կարգեալ կրտսեր աշակերտաց¹:

Յովսիա բերէ վկայութիւն և ի Մովսիս Բեր-
թողաճորէ՝ թաթլոյ ճգնաւորական վարուցն հա-
մար, յորում երկրորդ Անտոն կոչեր է զնա, իբրեւ
զերազոյն ի ճգնաւորական վարս և իբրեւ առաջ-
նորդ ճգնաւորաց և շինող ճգնարանաց և վանո-
րէից, որոց զլիսաւորն կոչուեր է արժանապէս թաթ-
լոյ վանք. ուր եօթն տարեկան եղած ատենն բե-
րեր է զՅովսիա՝ իր հայրն. « Եւ կացի, կ'ըսէ, ի
» վանքս յիսուն և վեց ամ ». յայտ է որ ինչուան
գրած ատենն: Եւ հօն գտնելով Աստուածատու
անուամբ ծեր եկեղեցական մի, շատ բան անկէ
տեղեկացեր է: Յիշէ եւս որ թաթուլ՝ զթովմաս
գրաւ առաջնորդ իր վանաց: Ասոր այլ՝ յետ ու-
րիշի՝ յաջորդեր է Յովնանէս, յետոյ կաթուղիկոս
(Բ), (557-74), զոր կաթուղիկոսաց գաւազանա-
գիրք այլ վկայեն թէ ի Գարեղենից երկրէն էր:

Յովսիայի անցողաբար յիշատակածներուն մէջ
շատ նորալուր է Մեծին Վարդանայ գերահռչակ
պատերազմին մէջ՝ հետը իր Զուրա անուամբ որդւոյն
այլ նահատակուիլն, զոր ուրիշ մէկն յիշած չէ:

Գարձեալ, թաթլոյ թաղման եկողաց հետ այլ յիշէ
« զՎարագդ-տիրոց իշխանն Բագրեւանդայ և Ար-

1. Թաթլոյ լուսաւոր մտաց վկայ են իրատքն՝ զոր
սուած է բանիւ՝ գուցէ և գրով՝ առ թովմաս:

» շարունեաց, որ ի Բանաստեղծացն՝ Սպարապետ
» Հայոց անուանիւր»: Եթէ հեղինակին ակնընկն
զարկեր է այդ Սպարապետ կոչումնը, մեզ այլ աւելի
այդ Բանաստեղծից լուեալ ձայնքն: Եօթներորդ դա-
րու կիսու մօտերն յատկապէս Սպարապետ կոչուէր
Մուշեղ իշխան մի. իսկ անկէ քիչ առաջ Սերաւ մի
Բագրեւայադր, և այլն: Այդ գովարանեալ սպարա-
պետը պէտք չէ շփոթել իր համանուն մեծ իշխա-
նին հետ, որ ժամանակակից է յիշեալ Մուշեղին:

Աւելի հաճոյական յիշատակ մի եւս է այդ կող-
մերի Վանգոյ կամ Վանկոյ վանաց վարդապե-
տաց գրչուքեան արուեստն, որք « Զսուրբ գրեանն
» յօրինէին (թէ՛ գրէին և թէ՛ կազմէին գրքերը),
» որք էին երեսուն և վեց վարդապետք ». այսինքն
վարպետք Վայելչագրութեան (Calligraphes),
հաւանօրէն և զարգագրողք կամ մանրանկարիչք
(miniaturistes), գուցէ և նկարիչք՝ պատկերաց
զոնդ: Ծանօթ է այդ վանաց (Վանկոյ) մէկ սրբա-
կան խաչն, որով Ս. Ծնորձալին այլ ողջունէր և
օրհնէր զանոնք՝ առ որս գրէր իր կոնդակները: —
Եթէ այլեւայլ տեղեաց հետ յիշելով զքաղաքա-
գետոյն Տեկոս, աւելցուած է թէ մերձ է յարքայա-
նիստն Անի, զայս վերջի ժամանակի ընդօրինակողն
Յովսիայի աւելցուցեր է: Այս քաղաքագետոյն մօտ
երեւի Բղրոջ գեղն՝ հայրենիք Ս. Թաթլոյ:

31. ՊԵՏՐՈՍ ՔԵՐԹՈՂ ՍԻՒՆԵԱՅ

Քերթողաճօր Մովսիսի աշակերտ կոչուի սա՛ իրա-
րու արժանի վարպետ և աշակերտ. եթէ Սորենա-
ցին ըլլայ և թէ՛ ոչ այդ Քերթողաճայրն՝ աշակերտ
Ս. Սահակայ և Մեսրոպայ, իր ծերութեան ատեն
կրնայ եղած ըլլալ ուսուցիչ Պետրոսի, որ Զ. դա-
րու երկրորդ կիսուն յիշուած է, իբրեւ եպիսկո-

պոս Սիւնեաց և իբրև մի ի կարգաւորողաց Հայոց տօմարին: Ամէն զինքն յիշողք՝ մեծ գովութեամբ յիշեն, մանաւանդ իր յաջորդաց մին, ԺԳ. դարու պատմագիրն Ստեփ. Օրպելեան. ինչպէս (Պ. ԻԲ), « Բազմերջանիկն և անհամեմատն ի մարդկանէ » Պետրոս, աշակերտ Մովսիսի Քերթողազօրն, քաջ » Հոստորն և անյաղթ փիլիսոփայն... նախաթոս » վարդապետաց Հայոց, Քերթող և Թարգմանիչ, » որ արար բազում՝ թարգմանութիւնս, և խօսեցաւ » Ճառս իմաստայեղզ ի Ծնունդ Քրիստոսի... և » այլ յորվս. և մեկնեաց զխրթին և զգժուարի- » մաց բանս Հիև և Նոր կտակարանաց: Սա հար- » ցեալ ի Վաչագանայ Աղուանից թագաւորէ բանս » բազումս ուժեղս և զօրաւորս, և ընկալեալ պա- » տօխանի յոյժ ի ճահ և ուղիղ լուծմամբ»: Յե- » տոյ կ'ըսէ, թէ « Սա զնաց ի ժողովն Դընայ յա- » ռաջինն », որ ստոյգ թուի:

Մեզ կարեւորն է իր Պատմական գրուածն, որոյ համար նոյն յիշեալ հեղինակն կ'ըսէ (Ա). « Հան- » զէս արարեալ ամենայն Պատմագրաց Հայոց... » նաև սակաւ ինչ ի Պետրոսի ճառիցն՝ որ վասն » Բարկայ Սիւնեաց տեառն»: Աւրիշ տեղ այլ (ԺԶ), յիշելով Անանիայ եպիսկոպոսի՝ աշակերտին Ս. Մեսրոպիբայ՝ երթալն յԱղուանս, կ'ըսէ. « Յու- » ցանէ մեզ սուղ ինչ Մովսէս Քերթողազայրն. և » զրովանդակն՝ ձշգրիտ աշակերտ նորին Պետրոս » եպիսկոպոս Սիւնեաց », և այլն:

Արեմն Պետրոս ընդարձակօրէն գրեր է Ս. Մես- » րովայ քարոզելն յԱղուանս և այբօրբն հնարելն » անոնց այլ: Այս գրուածս չէ յայտնուած. բայց իր » ճառօրէն պատմածներէն քանի մի դէպք մէջ բերէ » Օրպելեանն, ինչպէս Բարկայ Սիւնեոյ քաջութիւնն » ի վերայ Հոնին, անոր հօր Անդովկայ վրէժն ի » Շապհոյ, ասոր աւերելն զերկիր Սիւնեաց, և Բար- » կայ նորոգելն զաւերածն և գտնել անոնց տակ » ծածկուած սրբազան նշխարներն և սպասները: Տես » յ'Բ մասն Յօդ. 89. 90. 91. 92. յորս լաւ երեւի

այս Քերթող եպիսկոպոսին և Հոստորին արդարև » ճարտասան լեզուն և գրիչն. որոյ վկայ է և գե- » ղեցիկ Գովեստն յԱմենասուրբ Կոյն Մարիամ » կամ ի Ծնունդն Քրիստոսի, որ բարեբազդաբար » հասած է առ մեզ, և քանի մի կոտորք ուրիշ ճա- » ուից. այլ բազուն չէ պահեր իր պատմախառն » ճառերը կամ ճառաբան պատմութիւնները, որք իր » յատուկ երկրին և թեմին՝ Սիւնեաց վրայօք են. և » յունական գեղեցիկ դպրութեան և Հոստորութեան » ճաշակ ընծայէին անշուշտ:

32. Ն Ե Ր Ս Է Ս Ա Բ Ե Ղ Ա Յ

Ի սկզբան թուականութեան Հայոց, ի կէս Զ. » դարու, երբ Մախոժ պարսիկ մօզն հաւատաց ի » Քրիստոս, և գալով ի Հայս՝ բանտուեցաւ ի Գուբն, » նոյն բանտին մէջ երկար ատենէ ի վեր բանտուած » էր Ներսէս անուամբ մէկն (Աբեղայ ըստ Յայամ- » աւուրաց): Ասկէ սովրեցաւ պարսիկն զքրիստո- » նութիւն և մկրտեալ կոչուեցաւ Յիզիա-բռնզիտ, » այսինքն Ատուածատուր, և յետ երկար բանտար- » գելութեան և շարչարանաց՝ խաչուելով նետազար » նահատակեցաւ, և տօնուի ի Հայոց (ի 25 փե- » ւրուարի ըստ Յայամաւուրաց): Ներսէս ականատես » վկայ և վշտակից՝ զրեց այս Սրբոյ նահատակու- » թեան պատմութիւնն, թերեւս ընդարձակ. սակայն » ճառընտրաց մէջ կամ ի կարգի Վկայարանութեանց » գտնուի շափաւօր բան մի, յատակ սճով, յորում » կ'ըսուի Սրբոյն համար, թէ « Գտանէր Սուրբն իւր » վշտակից զոմն ի բանտին, որում անուն էր Ներ- » սէս, որ ի բազում ժամանակաց էր կապեալ ի » բանտին՝ վասն Ատուածոյ. և ուսանէր ի նմանէ » երանելին զսուրբ հաւատս և զսաղմոսս », և այլն: » Յայամաւուրք համառօտելով զվկայարանութիւնը,

գրողին բերնով վերջացընեն. « Եւ ես Ներսէս չար-
» չարակից և վշտակից Սրբոյն՝ արարի զՊատմու-
» թիւնս, ի փառս Աստուծոյ » :

Սրբոյն վարքէն գատ կարեւոր յիշատակ է Հայոց պատմութեան համար, այն ժամանակի (քանի մի տարի առաջ և քանի մի տարի վերջն ի կիսոյ Զ. դարու) Պարսից տէրութեան կողմանէ եկած մարդպանից կամ հաւակարից անուանքն, ինչպէս կոչէ Ներսէս, և ուրիշ պատմչաց քով չեն գտնուիր. նոյնպէս և անոնցմէ գատ անուանքն երեք իշխանաց՝ զորս Պարսից թագաւորն զրկեր էր իբրև տուած նեղութեանց. որք կոչուին Նատոյ Դրովան. դական, Պերոզ՝ Ռէոյ գաւառին մոզպեան, և Խոյապ, « որ էր սպասաւոր արքային » : Իսկ համակարքն որ զիրար յաջորդեցին՝ կոչուին Խոսրով-Պերոզ, Նիխորական, և Նախապետ : Աստուածատրոյ նահատակութիւնն եղած է յամի 553 : Իրեն վշտակից պատմչին վախճանն յայտնի չէ. սակայն կրնայ գոնէ գասակցիլ երանելի Խոստովանողաց :

33. Ա Պ Լ Գ Ա Ր Ի Պ

Անհաւատալի անուն և զրիչ ժամանակիս, Զ. դարու, յառաջ քան զժագումն Արարացոց և մրտնեն ի Հայաստան, որոց յատուկ են այս և ասոր նման անուանք, զորս քանի մի դար վերջ յիբրեւի ընդունեցան և Հայք, գոնէ իբրև մականուն : Զրպետ Մարդեկ կոչուած Թ. դարու սկիզբները՝ Հայ լեզուի ուսուցիչն ի Բարեղ՝ է գա յիշողն. իբր թէ ի Զ. դարու եղած ըլլայ և երկու հարիւր տարուան Հայոց պատմութիւն գրած. որոյ հատուածք միայն գտնուին՝ կ'ըսէ : Զարմանալի եւս է՝ որ նոյնպէս Ռոսնեկ հմուտ Գերմանացին կրիշպիթի ընդարձակ

հանրագիտակ Բառարանին մէջ իբրև ստոյգ հեղինակ յիշէ գա : Իսկ ինձ թուի թէ կամ ժամանակն շփոթուած է, կամ անունն, եթէ եղեր է այդպիսի պատմիչ մի :

34. Թ Ո Վ Մ Ա Ս

Նոյն Զրպետ գա եւս Ե-Զ. դարու պատմիչ համարի. սակայն որովհետև իր ատեն դեռ չէր յայտնուած Թումա Արծրունին, կրնար սխալիլ և ասոր հետ շփոթել : Իր սխալնաց պատճառ կրնար տալ և Մխիթար Այրիվանեցին, որ ի շարս պատմագրաց՝ յետ Կորեան և Խոսրովու և յառաջ քան զԽորենացի, զՂազար և զԵղիշէ՝ կարգէ զԹովմաս : — Վանական վարդապետ՝ Զորս ըստ պատկերի ըստ շարականին համար կ'ըսէ, թէ Թովմաս պատմիչ յիշէ որ զայս երգեր է Գր. Մագիստրոս իր ի Տարօն շինած եկեղեցոյ մէջ կամ համար : Մեզ ծանօթ Թովմաս պատմիչն Արծրունի՝ Մագիստրոսէն առաջ է ժամանակաւ. կարելի է որ ուրիշ Թովմաս զրիչ և պատմիչ մ'այլ եղած ըլլայ, և շփոթուի ժամանակն և անձն :

35. Յ Ո Վ Հ Ա Ն Է Ս Մ Ա Մ Ի Կ Ո Ն Ե Ա Ն

Մամիկոնէից մեծահռչակ և արժանաւոր ցեղին և Տարօն գաւառի Պատմութիւնը գրելով կամ շարունակելով՝ մեծ անուն ստացած է սա, թէ և հիմայ իր անուամբ մեր ձեռքն հասած գործն փոքր ինչ է և ոչ մեծայարգի : Ինքն այն ցեղին և գաւառին եզրիսկոպոսաց շարքէն երեսունհինգե-

որդ էր, ըստ իր վկայութեան, է. դարուն կիսէն վերջ: Շատեր յիշեն Մամիկոնեից Պատմութիւն, որպէս և Կաղանկատուացին, որ ժամանակաւ շատ հեռի չէ ի Յովհաննիսէ: Պատմութեան նախադրողն՝ Լուսաւորչի ընտրած Ատորի Զենովր եպիսկոպոսն է, զոր յիշած եմք. սա աւանդեց՝ որ իր յաջորդքն այլ շարունակեն ինչ որ իր թիմին մէջ հանգիպի. և այսպէս ըրին, գոնէ ոմանք. բայց շատերն ազգաւ ասորի ըլլալով և յառաջ քան ըզգիւտ հայերէն տառից, ասորերէն գրած են, և հաւանորէն այս է կոչուածն Ասորոց Պատմութիւն: Երբ Հայք յաջորդեցին ասոնց, և առաջինն կամ մի յառաջնոցն՝ Թողիկ՝ հեռացուց Սասրիները իր անունէն (Գլակայ վանք), թուի թէ իրենց լեզուով գրուած տեղւոյն պատմութիւնն այլ հետերնին տարին ո՛ր որ տարին. կամ ինչպէս կ'ըսէ Յովհաննէս, ատեն մի Պարսիկը այս կողմերս աւարելով, այն պատմագիրքն այլ կողպտեր էին վանքէն. և մեր պատմիչն լսելով որ յԱռհա քաղաքն Մարտառ կամ Մարտարա անուամբ Ասորոյ մի քով գտնուի, գնաց առաւ և թարգմանեց ի հայ: Քսան և ութ գլուխ կամ Պատմիկ էր այդ պատմութիւնն, Տրդատայ օրէն սկսեալ շարունակուած. որոց վրայ տասն այլ ես աւելցուցի կ'ըսէ Յովհաննէս, և ըրի երեսունեւութ պատճէն: Հիմայ իր անուամբ մեզի հասածն հազիւ թէ իր յատուկ գրած տասն կտորն ըլլայ, որոց քանի մի ետքիմներուն վերեւ գրուած է Պատմիկ, իսկ առջի յօդուածոց վրայ՝ Գրչիս, թերեւս օրինակողներէն այսպէս գրուած: Արեմն դեռ յայտնուած չեն մեզ Մարմարայի քով գրտնուածներն, եթէ անոնց մաս մի չհամարինք Զենովրայ գրածն այլ:

Արդ գալով Յովհաննու գրածին, Պատմութիւնն թէ և ըստ լեզուին բաւական մաքուր և վայելուչ է, բայց չունի յատուկ և շարունակ պատմական կարգ. այլ ընդհանրապէս Զ. դարու մէջ Յունաց և Պարսից հակառակութեան և պատերազմաց

կէան է, և այդ երկու հակառակորդաց՝ երբեմն մէկին երբեմն մէկալին ձեռնտու ըլլալն Մամիկոնեից իշխանին, և այս պատճառաւ Պարսից դիմելն ասոնց երկրին վրայ ի Տարօն, կուռիլն և աւրելն շատ պատերազմներով, որոց մէջ շատ հեղ յաղթուած և ջարդուած են: Սակայն այս պատերազմաց դիպուածոց և թուոց մէջ՝ շատ տարակուսելիք և չափազանցութիւնք կան, միպատանական հանգամանօք և երբեմն անյարմար՝ ծիծաղելի յարմարութեամբք, որ չեն վայլեր Մամիկոնեից եպիսկոպոսի մի. թերեւս աշխարհական ձեռաց միջամտութիւն եղած ըլլայ, որք իրենց մեծ իշխանը՝ Մուշեղ Քաջախրով անուանեալը դիւցազնացընել ուղեր են, ինչպէս և անոր յաջորդ ազգականը՝ Գալլ Վահանը, զուարճալի ոճով հիւսելով, բայց ոչ շատ հաւատալի: Մէկ պակասութիւնն այլ է ժամանակագրական թուականն, որ բնաւ չի յիշուիր, այլ երբեմն այս կամ այն կայսեր և Պարսից թագաւորի ատեն կ'ըսուի: Կոյն իսկ ինքն Յովհաննէս իր գրածին վերջացընելուն ժամանակը՝ իր եպիսկոպոսութեան երեսունեւհինգերորդ տարին կ'ըսէ և չի յիշեր ըզթուական, այլ Սաւուռէ կաթուղիկոսի դեռ չորս ամսուան հայրապետութեանն ատեն: Բայց այդ անուամբ կաթուղիկոս չկայ այն դարուն մէջ, թէ և մեր ձեռքում եղած օրինակք այդպէս գրած են: Մեզի ծանօթ Սամուէլ կաթուղիկոսն՝ Զ. դարու առաջին տարիներուն մէջ ընտրուած է: Աւելի զարմանալին է մէկ ձեռագրի մէջ գրուածն, թէ Սևդրեա եպիսկոպոսն Մամիկոնեից (իբր երեսուն տարի յետ Մանգակունուոյ), Վարդան (?) կաթուղիկոսի հետ զնացեր է ի Հոռոմս ի ժողով՝ Զենոն կայսեր ատեն: Զենոն և Յովհաննէս Մանգակունի ժամանակակիցք են. եթէ անոնց ատեն եղած է այդպիսի ժողով մի վասն միաբանութեան, Վարդանն այն կրնայ Մամիկոնեան իշխան մի ըլլալ. եթէ արժան է այդ գրութեան արժէք տալ:

Պատմական զիպուածներուն անստուգութեանը

նմանին երբեմն Յովհաննու յիշած տեղեաց անուանքն եւս, կամ մանաւանդ կողման պատճառքն. և Պարսից հետ կամ պարսկերէն խօսուած ատեն՝ ըսածնուն համաձայն հայերէն անուններ դնելն: — Միով բանիւ, շատ զգուշութեամբ ընդունելի են իւր պատմածքն, և աւելի շատ փափազելի՝ ստոյգ և ամբողջ Պատմութիւն մի Մամիկոնէից:

Հիմայ գտնուածքն, Զենովր և Յովհաննէս Մամիկոնեան, փոանկերէն թարգմանուած և տպագրուած են ի շարս այն լեզուով փոանկ թարգմանութեանց Լանկլուայի, յամին 1869, ի Բարիզ: Իսկ բնագիրն տպագրուած է ի Վանս մեր, ի միասին ընդ Զենոբ Գլակայ, ի 1832, և ի 1889:

36. Ս Ե Բ Ի Ո Ս

Գրեթէ ամէն շարագասողը Պատմագրաց յիշեն գաս. մէկն միայն, Անեցին, Իսիրիոս կոչէ, որ է ծանօթ Եւսեբիոս անունն: Իր գործն այլ՝ միշտ անուանը կըցեն. Հերակլ ի Սերիոսէ, այսինքն Պատմութիւն Հերակլ կայսեր ի Սերիոսէ. կամ Սերիոսի եպիսկոպոսի Պատմութիւն Հերակլի, կամ Իսիրիոս՝ որ Հերակլիս է. կայ այլ որ սոսկ Հերակլ գրէ: Ասողիկ կ'ըսէ, « Պատմութիւն Հերակլի որ ի » Սերիոսէ եպիսկոպոսէ ասացեալ »: Կիրակոս, « Հերակլ՝ ի Սերիոսէ եպիսկոպոսէ ասացեալ »: Ամէնքն այլ վկայեն որ գրածին զլիսաւոր նիւթ է՝ այդ Յունաց կայսեր արշաւանքն ի վերայ Պարսից, և յաղթութեամբ անոնց թագաւորեցընելով զԽորով Բ, Ապրուէզ մականուանեալն, դարձընել անոր հօր ատեն Երուսաղեմէն գերեալ Ս. Խաչը: Այս մեծ զիպուածէն առաջ՝ Վահանայ Մամիկոնեանի օրերէն սկսեալ ինչուան իր ատենի Հայոց երկրին զլիսաւոր զիպուածքն, անոնց խո-

հեմ և անխոհեմ քաջութիւնները համառօտիւ պատմէ Սերիոս, կամ քաղէ իրմէ առաջ գորղնէրէն՝ մանաւանդ ի Սմբատայ Բագրատունւոյն, որ երբեմն գերի ընկած ի ձեռս Յունաց, և ճարտարութեամբ ճողպարած ի կողմն Պարսից, քաջագործութեամբ արժանացաւ Վրկանայ երկրին (Կազրից ծովու արեւմտակողմն) մարզպան ըլլալ, և Հայոց ամէն նախարարներէն գերագոյն, նոյն իսկ և Պարսից, և փառաց մէջ վախճանեցաւ ասոնց երկրում. կարեւոր գործեր այլ հոգալով ի Հայս, մանաւանդ ի սկիզբն Ե. դարու, Հայոց և Վրաց կրօնական վիճից և բաժանման ատեն: Յունաց հետ այլ Հայոց կրօնական խնդիրը յիշէ Սերիոս, և երկու կողմէն գրուած քանի մի թղթերն ի մէջ բերէ. զոր յետոյ աւելի երկարօրէն գրէ Ուխտանէս պատմիչ, և Սմբատայ գործերն յիշելով կ'ըսէ. « Որպէս ուսուցանէ քեզ Պատմութիւն Հերակլի »:

Մէկ զլիսաւոր յիշատակ մի եւս Սերիոսի պատմութեանն է իր ատեն Արարացոց աշխարհակալութեան սկիզբն, և Սասանեանց շորսհարիւրամեայ բռնակալութեան բարձումը:

Խոհական կերպով գրէ պատմիչս, ինչպէս վայելէր իր աստիճանին, զի Բագրատունեաց եպիսկոպոս էր. շարագրութիւնն այլ յստակ՝ ընտիր, պատմածքն շատ հետաքննական, առանց երկարաբանութեան, և կարծես իր պատմած զիպուածոց և փոփոխութեանց պէս՝ կ'երազէ գրչին ընթացքն. օրոյ համար և թարգմանուեցաւ յօտար լեզուս:

Սերիոսի պատմագրութեան հրատարակողը ի 1851 և յետոյ, ի սկզբան գրոցն գտած և կցած են այն հին պատմութեան կոտորքն, որոց հեղինակը չգիտեցով՝ Աւանուռն կոչած են, և մեք Ղազարայ Փարպեցոյ ըլլալ յիշեցինք: Այս հատուածք պատմութեանց՝ կերպով մ'անյայտացընեն Սերիոսի յատուկ պատմութեան սկիզբը կամ յառաջաբանը. վերջարանն այլ նոյնպէս որոշակի ռճով ցուցուած չէ: Պատմութեան ժամանակն հասնի մինչև յամն 656:

Սերբոսի պատմածներէն են Հայապատումիս Բ Մասին մէջ՝ Յօդուածքն 175-7. 181. 193:

Ըստ արժանի պատմական յիշատակացն Սերբոս թարգմանուած է ուսերէն ի Ք. Պատկանեանէ ի 1862, ի Բեդրպուրկ. գերմաներէն այլ մեծաւ մասամբ՝ ի Հիւպլմանէ. և փանկերէն փոքր մասամբ՝ ի Տիւրքիէէ, իր Հայկական Ժամանակաւ գրութեան մէջ:

37. ՊՍՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐԴ ՊԱՏՐԿԻ

Վարդ՝ անուանի և կարիճ թեոդորոս Ոչտունի զորավարի որդին էր, և յետ ասոր տարագրութեանն ի դուռն Արարացոց Խալիֆայից, հասաւ իշխանութեան, յերրորդ քառորդի է. դարու, նախ պատուեալ ի կայսերաց Յունաց, ինչպէս յայտնէ իր պատուանուածքն (Պատրիկ), յետոյ թշնամեանալով անոնց թէ՛ քաղաքական թէ՛ կրօնական տեսութեամբք, և դաւաճանութեամբ անոնց յաղթուելուն և կոտորուելուն պատճառ եղաւ: Այս բանիս անվաւեր աննդութիւններ հնարած են ազգայինք, որպէս թէ Վարդ խղճահարած իր ըրածին վրայ՝ ահաւոր տեսիլքներով, հագար եկեղեցիներ շինած է, ի քառութիւն ըրած մասնութեանը:

Որչափ որ ասիկայ ուսմական զրոյց մի է, ըստոյք է իր քանի մի տարուան զլիսաւորութիւնն յիշխանա Հայոց և իր գործոց պատմագրուին յատուկ գրքով, թուի թէ բաւական մանրապատում վասն զի համառօտագրեալ Հայոց Պատմութեան մի մէջ կ'ըսուի, « Որպէս գրեալ է ի Պատմութիւնս » Վարդայ Պատրկայ » . և այս խօսքիս դիմաց՝ գրոց լուսանցից վրայ նշանակուած է՝ Գլ. ԼԶ. այսինքն թէ յիշեալ դէպքն՝ Վարդայ պատմութեան երեսներորդ վեցերորդ զլիսում գրուած է: Ոչ հե-

ղինակ պատմութեանն ծանօթ է, և ոչ գրածն յայտնուած. համարիմ թէ ժամանակակից կամ մօտ ժամանակաւ մէկն գրած է:

38. ԱՆ ԱՆ Ի Ա Շ Ի Ր Ա Կ Ա Յ Ի

Մեր դպրութեան մէջ ուսողական և չափագիտութեան և համարողութեան (mathématiques) հետեւողաց գերագոյնն եղած և համբաւուած է Անանիա՝ յերկրորդ կիսում է. դարու: Ինքնին պատմէ որչափ տեղ գնացեր է հմտագոյն վարպետ գտնելու այս գիտութեանց, և վերջապէս գտնելով զՏիւրքիոս ոմն յոյն, բայց լաւ հայագէտ՝ ի Տրպիզոն, ութ տարի աշակերտեր է անոր, և կատարեալ հմտութեամբ դարձեր է ի Հայս, զնոյն սովրեցընելու. բայց քիչեր գտեր է հետեւող, և շատեր արհամարհող նաեւ թշնամանող. այս պատճառաւ իր գործոց ամբողջ գրուածն չի գտնուիլ հիմայ, այլ կտորք ինչ և թուարանական հանելուկք, որք հանդերձ վկայութեամբ զինքն յիշողաց՝ հաւատտեն իր սրամտութիւնը: Ուրիշ բարոյական գրուածք այլ կան իր անուամբ, որոց վրայօք գիտելիքն՝ ուղղուն կրնայ գտնել ի Պատմութեան Հայկ. Հին Գպրութեան (Գ տիպ, էջ 456-65): Մեղի վերաբերեալն է իրեն Ժամանակագրութիւնն, կամ համառօտ ժամանակագրական Պատմութիւնը, աւելի ազգային տեսութեամբ, որոյ համար պատմագրաց յիշող մի (վերջին դարուց) գրէ, թէ նա « Սկիզբն արարեալ յԱզամայ, համառօտ գաւազա » նաւ իջանէ մինչեւ ի ժամանակս Անաստասայ » կաթողիկոսի », որ է 660-7 թուականն:

Ասոր մասն, կամ մանաւանդ ասկէ զատ է Բիւզանդական կայսերաց յաջորդարար համառօտ պատմութիւնն, որ հասնի մինչեւ ի 685 ամն, և վեր-

նագիրն նշանակէ յԱնդրեասէ և ի Մովսիսէ Քեր-
թողաճօրէ առեալ¹: Անդրէի ժամանակն տարակու-
սական է, բայց նախագասուած քան զմեր Մով-
սէսն՝ Հնագոյն կ'երեւի: Այս յիշեալ գրուածներէն
աւելի կամ զատ պատմական բան այլ գրած գու-
շակուի՝ Պատմըչաց կարգին մէջ յիշող մ'ունենա-
լով. սակայն տարակուսիմ Մարգէն Զրպեաի ըսա-
ծին, թէ Անանիա գրած ըլլայ շատ վարքեր նշա-
նաւոր մարդկանց:

Ինչ որ ստոյգ կամ հաւանական գրուած Անա-
նիայի հասած են առ մեզ՝ ցուցընեն լեզուի հնու-
թիւն և ոչ անարժան իր (Է.) դարու:

Տես զՅօդուածս 191-2, յ'Բ Մասն:

39. Զ Ա. Կ Ք Է Ո Ս

Երկրայութեամբ Է-Ը. դարու կամ Հնագոյն եւս
համարիմք այս անձանօթ անձը, որոյ յիշատակն՝
միայն Աոր Զուղայի Զեաադրաց ցանկի մի մէջ
նշանակուած է, իբր եկեղեցական պատմիչ. գրուի
անուանը հետ, « Բ հատոր, սկսեալ ի բանից Առա-
» քելոցն մինչեւ ի ՃԾ (700) թիւ »: Եոյն Յան-
կին մէջ ասկէ զատ յիշուի և « Առաքելոց Պատ.
» մութիւն, որ ի Հայս կատարեցան »:

1. Գրիգոր Դ (Տղայ) կաթուղիկոսն այլ առ Հաղ-
բատացիս գրած թղթին մէջ յիշէ ընդ Անդրէասայ
նաւ. զԱնանիա Երբակացի:

40. Գ Ր Ի Գ Ո Ր Ս Ա Ր Կ Ա Ե Ա Գ Ա Պ Ե Տ

Այս անուամբ հեղինակի ներբող մի ունիմք ի
Ս. Լուսաւորիչ մեր, շատ վայելուչ և ընտիր լե-
զուաւ գրուած, որ և Հայոց դպրութեան առաջին
դարուց զուտ լեզուի ճաշակ ընծայէ և անով գու-
շակեմք հնութիւնը. միանգամայն և յԵրուսաղէմ
խօսած ըլլալն այդ ներբողը, մինչ դեռ կային հօն
չէն վանորայք Հայոց և բազմաթիւ ազգայինք:
Որովք՝ անյարմար երեւի դա ըլլալ այն Գրիգոր
Սարկաւագն՝ որ Ատուի Վարագայ Հօր հետ Սրբոց
Վարքերն հաւաքեց Թ. դարուն վերջերը. (Տես
Ատուի թիւն 53):

Բայց այդ Երրորդէն աւելի պատմական բան մի
կայ՝ զոր համարիմ այս հնագոյն Գրիգորիս: Լա-
տին հաւաքողը Ս. Հարց գործոց, Գոնպլեֆի
(Combes), Կալան (Galland), և Լքեֆէն (Le-
quien, - Oriens Christianus), հրատարակած են
հետաքննական յունարէն գրուած մի և թարգմա-
նած ի Լատին, ոմանք յանուն սորա, ոմանք Սա-
նակայ կարոշիկոսի մի Հայոց, զոր Հայք չեն
ճանչնար և չէ արժանի ծանօթութեան, ընդգէմ
Հայոց դաւանութեան անհեղեղ բաներ գրելուն
պատճառաւ. իսկ շատք ընծայեն Գեւմետրի կիռզի-
կեցոյ, որոյ ժամանակն այլ ստոյգ չէ:

Յիշեալ կրօնական պատմախառն գրուածին կը-
ցած է՝ յետ քաղաքական իշխանաց Հայոց՝ Կա-
թուղիկոսաց շարքն այլ, որ հասնի մինչեւ յ'Գ Սա-
նակ՝ Է. դարու վերջերը, որ և Արարացոց ա-
միրապետին երթալով՝ վախճանեցաւ ի Խառան ի
սկիզբն Ը. դարու: Ասոր ժամանակակից կարծեմ
մեր Սարկաւագ կամ Սարկաւագապետ Գրիգորը.
և զսա համարիմ՝ այդ կաթուղիկոսաց շարքը գրողն
մինչեւ իր և Սահակայ ժամանակ: Պատճառ կար-

ծեացս է, որ այդ գրուածն կցուած նախայիշեալ աղճատ գրուածին, յայտնապէս թարգմանուած է ի հայերենէ, ըլլայ Գեմետրի ըլլայ ուրիշ ձեռօք, բայց քիչ հայագիտի, վասն զի շատ տեղ յատուկ անունները հասարակ անունաց հետ շփոթէ, հասարակ բառը յատուկ անուն կարծէ, մարդոյ անունը՝ տեղոյ կարծէ, և այլն: Այս մեզ աւելորդ է. կարեւորն այս է որ Բարիզու մեծ մատենադարանին յոյն ձեռագիր մի՝ այդ գործը յանուն Գրիգորեսի Սարկազակեսի գրէ, յայտնապէս հայ հեղինակին անունը յունարէն ծածկելով: Չայս տեսեր նշանակեր և ծանուցեր էր մեզ Վիկտոր Լանկուա. թերեւս ինքն է տպագրողն յոյն և լատին լեզուօք, զոր ունիմք. նաեւ նոր հայերէն թարգմանութիւն, կարծեմ՝ այն ատեն (1861ին) եղած: — Համառօտ բան է այս կաթողիկոսաց շարքն, սակայն նշանաւոր է այսու՝ որ կարգէն դուրս թողած է քանի մի երկրայելի կաթողիկոսաց անուններ, որոց վերայ նորերումս այլ վէճ կայ, թէ պէ՞տք է ընդունիլ՝ թէ ոչ՝ իբրեւ օրինաւոր:

41. Ե Ձ Ն Ա Կ Ե Ր Է Յ

Թուղթ մի բան է գրուածն յանուն Եզնկաւն երիցոշ, նիւթն այլ կ'իմացուի այսու խորագրովս. «Նշանագիր կարգաց բանից, թէ ուստի էին կամ» որպէս գիտօք՝ յաջորդութիւնք թագաւորացն » Տրդատայ և քահանայապետիցն, ի Սրբոյն Գրիգորէ՝ որ կացին մինչեւ առ մեզ. վարունս՝ փոքր » ի շատէ գրոյմեալ, վասն գիտութեան ի վերայ » հասանելոյ»: Թուի մեծ բան մի խոստանալ, այլ համառօտ յիշատակ է Տրդատայ յաջորդաց մինչեւ ցԱրտաշէս վերջին, զոմանս այլ դուրս թողով, նոյնպէս և ի կաթողիկոսացն՝ մինչեւ ի Ս. Սահակ, որոյ

Հովիտիմեանց եկեղեցին նորոգելը յիշելով՝ կ'անցնի գրեթէ երկու դար վերջը Կովիտաս կաթողիկոսի զնոյն եկեղեցին նորէն շինելուն, անոր և Ս. Սահակայ միջոցի կաթողիկոսները բնաւ չյիշելով: Իսկ քաղաքական վարչութեամբ այլ Հայոց երկու բաժին ըլլալը յիշէ՝ ի Յոյնս և ի Պարսս, յորոց «Մարգպանք Պարսիկք կալան (զաշխարհս Հայոց)» մինչեւ առ մեզ», կ'ըսէ անորոշ ժամանակաւ: Թէ՛ խորագրին և թէ՛ հետեւեալ բանից շարագրութիւնն մութկեկ և հնութեան տիպ ունի. այնպէս որ հաւանական կարծեցինք թէ առաջին դասու Եզնկան Կողբացոյ ըլլայ գրուածս, և երկրորդէ մի կցուած Կովիտասայ կաթողիկոսի նոր շինութեանց դէպքն, է. դարու առաջին քառորդին. մանաւանդ որ այս յիշատակէն և Պարսից Բ խոստովու քսանեւերններորդ տարւոյն թուականէն՝ 1 անմիջապէս վերջը կցուած է, նմանապէս միին, այս վերջին տողս. «Եզնից յիշատակ Եզնկան (Եզնկան)» ի քարգեւանեղ գրիխս գայս»: Եւ զի այս Յիշատակարանս Ագաթանգեղի հնկեկ օրինակի մի (Բարիզու գրատան) վերջը գրուած է, կրկին կարծել տուաւ թէ նշանաւոր հին Եզնիկն ըլլայ Ագաթանգեղի թարգմանողն և այս օր և է յիշատակը գրողն. որոյ վերջն աւելցուցած յիշատակն է. դարու, կըրնայ համանուն Եզնակ երիցու մի ըլլալ: Տես ինչ որ ըսինք ի յիշատակի ծանօթ Եզնկան թարգմանչի:

1. Որ ըստ մեր յետին պատմչաց չի համաձայնիլ Կովիտասայ թուականին, բայց եթէ ասոր տալով իրմէ առաջ և վերջը շփոթ ժամանակի տարիներն այլ:

42. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳՈՐԵՊԻՍԿՈՊՈՍ

Եթե՞ներորդ դարու երկրորդ կեսում, երեւի Ար-
ծրունեաց երկրին, Վանայ կողմերու մեծ աւանի կամ
վանքի մի առաջնորդ. յոմանց պարզապէս Քանանայ
կոչուած, այլ ի վերնագրի գրուածքին՝ Քորեպիւ-
կոպոս. գրուածն՝ իբր երկու թուղթ պատմութիւն
«Վասն որ ի Վարազ (լերին) երեւեցաւ սուրբ
»Նշանն» . այսինքն լուսեղէն Խաչի կամ Խաչից
երեւիլն թողկալ, Վարազայ Վանից առաջնորդին,
Վարդ պատրըկի իշխանութեան ժամանակ՝: Որոյ
յիշատակն տարեկան տօն կարգեցաւ և տօնուի
յեկեղեցիս մեր: Այս երեւումնը և համբան, Վար-
դայ և բազմութեան ժողովրդոց գալն և եկեղե-
ցական և աշխարհական հանգէտներ կատարելն և
Խաչից երեւցած տեղերում մատրանց շինութիւ-
նը, պատմէ հեղինակն՝ իր դարուն վայելուչ լե-
զուով. որով և փափագել տայ աւելի երկար գրած
ըլլալուն:

Իրմէ իբր երկու դար վերջը՝ Տաճատ Վարա-
զացիւն այս գրուածին յարեր է թողկայ նախորդ
և յաջորդ վանահարց յիշատակը:

1. Որոյ ժամանակակից գրէ զՎոստանդին Գ կայսր
և զՆերսէս Գ կաթողիկոս. սա ըստ մեր ծանօթ ժա-
մանակագրութեան չի յարմարիր, աւելի առաջ հա-
մարուելով:

43. ՄՈՎՍԷՍ ՊԱՏՄԱԳԻՐ

Յովհաննու Քորեպիսկոպոսի գրածին նման, քիչ
մ'այլ համառօտ՝ նոյն Պատմութիւնն գտնուի՝ վեր-
նագրաւ «Յաղագս Սրբոյ Նշանին որ ի Վա-
»բազ լերին, Մովսիսի Պատմագրի ասացեալ»:
Հեղինէի ձեռքով յերուսաղէմ գտնուած Ս. Խաչի
Պատմութիւն մ'այլ կ'ընծայուի Մովսիսի, զոր Խո-
րենացոյ նորացընողը՝ կրնան իրեն համարիլ. բայց
այս Վարազայ պատմութեան ոճն թէ և հնկեկ,
բայց քան զքորեպիսկոպոսին նորագոյն երեւի և
աննման մեր քերթողաչօր ոճոյն: Ասկէ առնուն և
Յայսմաւուրը, և երկու Խաչգիւտներն այլ միացը-
նելով՝ պատմեն ի 26 Փետրուարի, — ի Մեհե-
կանի:

Այս Խաչի յիշատակաց յարմար տեղ է յիշել
և զՀացունեաց Խաչի Պատմութիւնն, որոյ և ժա-
մանակն մօտ և քիչ մ'առաջ է. սասոր էութեան և
գրութեան ճաշակն այլ ընթերցողք գտնեն ի 183
Յօդուածի յ'Բ Մասին Հայագատումիս, և դատել
հնութիւնը: Վարազայ վրայօք գրուածքն այլ տես
ի Յօդուածս 189, 190:

44. ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՅԻ

Պատմաց Յանկերու մէջ յիշուած՝ բայց շատ
դարեր անծանօթ մնացած, հազիւ ասկէ կէս դար
առաջ յերեւան ելաւ Մովսէս Կաղանկատուացին,
և յարզը ճանչցուեցաւ, քիչ ծանօթ տեղեաց և
իրաց կարեւոր ծանօթութիւններ տալուն համար,
որով և ոչ միայն կրկին անգամ տպագրեցաւ, այլ

և թարգմանեցաւ ի ռուս ի Քերովբէ Պատկանեանէ ի 1861 ամի, և ի փոսանկ լեզու՝ յԵւզինէոս Պորէ և ի Պրոսէ հայագիտաց՝ աւելի կամ պակաս լրութեամբ:

Իր անձին կամ ժամանակին վրայ տարակոյս կայ. ոմանք է. դարու մատենագիր ըլլալն ընդունին, ոմանք Փ. դարու: Երկուքն այլ մէկմէկ կերպով կրնան ստոյգ համարուիլ. զի երկու հեղինակաց, այսինքն երկու Մովսիսից, երեւի գործն, բաժանուած յերիս Գիրս: Առաջին երկուքն շարաբանութեան ոճովն և լեզուաւ՝ հնութիւն և ընտրութիւն ցուցընեն. և հեղինակն Հոնաց ասպատակութեան պատմութեան մէջ յ'է. դարու, անոնց զնացող դեպքանաց մէջ իւր ներկայ ըլլալն և աւանատեսօրէն գրելն՝ հաւատտէ: Տեղ մ'ալ յիշելով զԿաղանկատոռք զիւզն կամ աւանն՝ Ուտի դաւառին մէջ, յայտնէ զհայրենիսն, որով յիշողքն՝ կամ նոյնպէս Կաղանկատոռացի կոչեն զնա, կամ Աղուանեցի, իբրեւ պատմիչ Աղուանից: Սակայն ոչ Ասողիկ ի վերջ կոյս Փ. դարու, կամ ի սկիզբն ՓԱ-ին, և ոչ ուրիշ մի յառաջ քան զՓ. դար յիշեն զնա: Առաջին յիշողն է Փ. դարու վերջերն՝ Մխիթար Անեցի, որ յետ Սերիոսի և յառաջ քան զՇապուհ և զՅովհան Կաթողիկոս դասէ զնա: Գրեթէ նոյնպէս և Մխիթար Այրիփանեցի. սակայն ի ժամանակագրական ցուցակսն՝ ընդ մէջ ՆԼ և ՆԾ թուականաց (980-1000) կարգէ: Իրմէ վերջիններն այլ՝ Կիրակոս և այլք, նոյնպէս յետ Յովհաննէս Կաթողիկոսի կը դնեն:

Ասոնցմէ աւելի նշանաւորն և զրեթէ տեղակից և հնագոյն, գիտնական վարդապետն Մխիթար Գոշ, չի ճանչնար Մովսէս Կաղանկատուացի, այլ Մովսէս Դասխոռանեցի, և վկայէ թէ նա, «Որ» զբովանդակ զրէ (զՊատմութիւն) տանս Աղուանից»: Այս բովանդակն ըստ այժմու ծանօթ և ապագրեալ գործոյն՝ արդարեւ ոչ միայն Փ. դարու վերջերք հասնի, այլ և նոյն ինքն Գոշն՝ այն պատ-

մութեան դադրած տեղէն սկսի շարունակել նոյն Աղուանից երկրի տիրողաց և կաթողիկոսաց յիշատակը՝ քանի մի թուղթ բանիւ, զի գրածն չէ հասած մեզ ամբողջ, որպէս յիշուի իր կարգին: — Իր արժանաւոր աշակերտն և Կիրակոսի վարժապետն Վանական Վարդապետ, որ և նոյնպէս հայրենակից կրնայ ըսուիլ, իր պատմական համառօտ գիտելեաց մէջ հարցընէ թէ ո՞վ է «Ա.» զուանից Պատմագիր», և պատասխանէ, «Մով.» սէս. և զեղջն (անուն)՝ Դասխոռէն»: — Գարձեալ, Գոշն՝ ըստ վերոյգրելոյս՝ մինչեւ ի կէս Փ. դարու այս Մովսիսէն առնելով իր համառօտածը, կ'ըսէ. «Յայն ժամանակէ մինչեւ ցայժմ՝ ոչ որ» գրեաց»:

Արդ, զի անհաւանական է որ Կաղանկատուք և Դասխոռէն նոյն և մի տեղն ըլլան, ապա երկուքն այլ զատ համանուն անձինք եղած են, որ է ըսել երկու Մովսէսք կան: Իսկ թէ ինչպէս մեր երկու հմուտ վարդապետքն (Գոշ և Վանական) չեն յիշեր զԿաղանկատուացի, չեմ կարող ուրիշ կերպ մեկնել կամ կարծել, բայց եթէ Կաղանկատուացին յատուկ իր ժամանակի է. դարու նշանաւոր գիպուածները գրած է, որ է Հոնաց արշաւանքն, մանաւանդ ի կողմանս Աղուանից, և նոցա հաւատարն ի Քրիստոս. իսկ Դասխոռանեցին «Զբովանդակն» զրէ», ինչպէս կ'ըսէ Գոշ. այսինքն՝ իրմէ առջինին գրածը խառներ է իրենին: Թողում մեր արդի բանասիրաց ընտրել և ընդունել զլաւն և զստոյգ:

Աղուանեցոյն Ս. Գիրքն՝ Հայոց ծանօթ պատմութեան համառօտութիւն մի ըլլալով՝ շունի մեծ յարգ մի. և ոչ Գ. Գիրքն, թէ և սա Աղուանից է-Փ. դարուց իշխանաց և քանի մի գիպուածոց վրայ ունի պիտանի տեղեկութիւններ: Պատուականն և հետաքննականն է միջինն, ուր յիշեալ Հոնաց և նմանեաց բարքն և կրօնքն նկարագրուի, որպէս տեսնուի և ի մեր, յ'Բ Մասին, քաղած Յուդուածս 90, 182. 184-7. 194:

Կարեւոր են և Արարացւոց աշխարհակալութեան առաջին դարուն դէպքն՝ մեր և մեր դրացի երկիրներուն նկատմամբ: Այդ ժամանակի պատմագրութեան ոճն և շարագրութիւնն այլ վայելուչ է, և ոչ սակաւ բառ ընծայէ մեր հարուստ լեզուին:

45. ԱՆԱՍՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Համառօտ յիշատակ մի թողած է սա. բայց յիշատակուածին շատ հետաքննական ըլլալուն համար, արժան դատիմ՝ ի շարս պատմըչաց դասել հաւանելով եւս թէ ոչ միայն այս վանորէից չոր ցանկը գրած ըլլայ՝ « Ի խնդրոյ իշխանին Համա » զսոպայ Կամսարականի Պահլաւունոյ », այլ և շափաւոր տեղեկութիւն մի նշանակած այն եօթանասուն վանորէից Հայոց ի Պաղեստին, որով կարենար զօհանալ խնդրողն, « Ար կամէր գնալ յԵ » բուսաղէմ, որ և գնաց իսկ... և ի հայրապետացն Երուսաղեմի թափեաց զՀայոց վանո » բայսն »: Իբրեւ հեռաւոր աշխարհի մէջ մեր նախնի հարց և իշխանաց բարեպաշտութեան և առատաձեռնութեան յիշատակարանք՝ անշուշտ ախորժելով կարդացուին վանորէիցս և շինողաց անուանքն. միանգամայն և արամութեամբ, ոչ միայն հիմայ անոնց ջնջուած ըլլալուն համար, այլ և տեղեացն անյայտութեան. իսկ մեզ եթէ զանոնք գտնենք անկարելի է, ոչ սակաւ և դժուար է շինողներն այլ ճանչնալ և ճանչցընել: Քանի մի տարի առաջ (ի 1896) ի խնդրոյ L'Orient Latin հաւաքմանց փոանկ հրատարակողին՝ Անատասայ գրածը թարգմանեցինք և հրատարակեցինք ի Վանս մեր (փոքրիկ թերթով), որոյ հետ նաեւ ազգային Նիկողայոս Ագրիսեանի եպիսկոպոսի մի՝ Ս. Տեղեաց Երուսաղեմի և չրջակայից ցուցակ մի, 1483ին գրուած: Տես զՅօդուած 188, յ'Բ Մասին:

46. ՍՈՂՈՄՈՆ,

ՀԱՅՐ ՄԱՔԵՆՈՅՍԱՅ ՎԱՆԱՅ՝

Սեւանայ ծովուն հարաւարեւելեան ափանց մօտ՝ շատ նշանաւոր աւերակացեալ տեղեաց հետ՝ դեռ ճանչցուի այն կողմանց վանորէից գլխաւորն, որոյ միանձուիք ոչխարի մորթէ զգետ հազնելունն համար՝ վանքը կոչուեր է Մաքենեաց կամ Մաքենցաց: Արոյ սրբակաց միանգամայն և զիտնական անձանց գերագոյնն եղած է Հայրն Սոլոմոն, Ը. դարու առաջին կիսում. և իր գերագանցութեանն համար, միանգամայն և իրմէ քիչ մի վերջ ուրիշ Սողոմոնէ մի դանազանելու համար, սա ոչ միայն առաջին կոչուի, այլ և Հարակց Հայր, և շատ արժանաւոր աշակերտներ ունեցեր է, որոց գլխաւոր կրնամք համարիլ զՍտեփանոս Սիւնեաց եպիսկոպոսն և հոշակեալ իմաստասէրն, այլ և տարորինակ նահատակեալն:

Այդ հիմայ անձանութացեալ և ի հնումն այլ միայնացեալ վանաց մէջ, Սողոմոն անմահ յիշատակաց արժանի գործ մի ընծայած է մեր դպրութեան և եկեղեցւոյ. Տօնական զիւրքն, ուր հաւաքած է թէ ազգային և թէ օտարազգի Սրբոց վարք. « Վսե » մական արտագրութիւնս հոգեպատումն ճառից » Պատմութեանց ». ինչպէս կ'ըսէ խրթին շարագրութեամբ յառաջարան գրողն: Ութերորդ դարուն առաջին տարիներուն, (իբր 701-10), սկսած կ'երևի այս գործս, և աւարտած իբր 747 կամ 750 տարւոյն. յոր՝ յայտ է թէ յետինք աւելցուցեր են նոր Սրբոց մանաւանդ վկայից, կամ նոր զբա-

1. Տես Ստեփան, էջ 65-7:
2. Մաքի՝ էջ դառն նշանակէ:

նուած Պատմութիւններ: Արպէս է և հռչակաւոր մեծաբանակ Ճառքնտիրն Առաքելոց Վանաց Մշոյ, որոյ յառաջաբանն կ'ըսէ. « Զորս ի մի կանոն կար- » գաղրութեամբ ժողովեալ առն Աստուծոյ Սողո- » մոն Մաքենոցաց ուխտին առաջնորդ, ի գա- » ւառն Գեղարքունի », և այլն: Թէ և յատուկ Հայոց պատմութեան չի վերաբերիր գործն, այլ ունի և Հայ Սրբոց պատմութիւններ. և հեղինակն կամ հաւարդոն արժանաւոր է քան զլատ յատուկ պատմող՝ Պատմիչ կոչուելու:

Տօնականէն զատ ուրիշ պատմական յիշատակներ այլ գրած է Սողոմոն. որպէս Վրաց և Հայոց կրօնական վիճից և բաժանմանց դէպքն, ըստ վրկայութեան Ստեփանոսի Օրպելեան (ԻԵ). « Ար- » պէս ուսայ ի Սրբոյն Սողոմոնէ Մաքենոցաց ա- » ռաջնորդի Թղթոյն, որ կարգեալ է յԱղուանից » Պատմութիւնն, ի միջին հատորն »: Արդարեւ ի միջինն, որ է Բ հատոր Աղուանից պատմչին, ի ԽԷ գլուխն, գոյ համառօտ յիշատակ մի այդ Վրաց և Հայոց խնդրոյն. բայց ոչ Սողոմոնի անուն կայ և ոչ անոր արժանաւոր ռճով կամ բաւական գիտելիք բան մի. թերեւս Օրպելեանի ունեցած օրինակին մէջ գանուէր:

47. ԱՐՏԱԻԱԶԿ ԱԲՐԱՀԱՄ

Այս երկու անուամբ այլ կոչուէր Վասպուրականի Արժկէ քաղաքի Երաշխաւոր անուանեալ Վանաց առաջնորդն, որ ընդունեցաւ զՎահան Գողթնացի, երբ սա իբրեւ ուխտաւոր և ապաշխարող այդ և այդոր նման վանքերու այցելութիւն կ'ընէր, կ'աղօթէր և աղօթք խնդրէր իր չգիտութեամբ ըրած մեղաց (ուրացութեան) գիտութեամբ թողութիւն խնդրելու: Յետ նորա նահատակու-

թեանն, Արտաշատ գնաց յԱսորիս ի Ռոճօսի, Սրբոյն նահատակութեան և թաղման տեղին, ուր Յունաց կրօնաւորներէն խնդրեց առաւ անոր վրկայարանութիւնն յունարէն, և եկաւ յԱւուհա, թարգմանել տուաւ. ապա դառնալով ի Հայս իր վանքը, կամ ինքնին կամ ուրիշ ճարտարի մի ձեռօք գրեց Վահանայ վկայարանութիւնը, նախակարգելով այնպիսի այրած սրտի գորովաշարժ ողբախառն բան մի, այն ժամանակ զՀայս՝ իրենց եկեղեցւոյն մէջ հրակիզողաց և հրկիզելոց վրայ, որ այդ միայն բաւական էր զգորոն անմոռանալի կարգելու մեր ո՞ր և է չափով Պատմչաց և գրչաց մէջ:

Աւելի կամ պակաս երկարութեամբ գրուած գանուի այս գործս հին ճառընտրաց մէջ, և տպագրութեամբ հրատարակուած է յամի 1854, ի Վանս մեր, ի շարս Սոփերաց (Հար. ԺԳ): Ասողիկ յիշելով Գողթնացւոյն նահատակութիւնն ի թուին ճՁԶ, (737), յիշէ և զայս գրութիւն. « Արպէս » ուսուցանէ որ վասն Նորայն ասի Պատմաբիւն »:

Այս գրուածէն կ'ընծայուին, յԲ Մասին Հայապատումիս, Յօդուածքն 199. 202: Վահանայ Հայրենասիրութեան փափուկ բացատրութիւնն, և նահատակութեան հանգիստին հետ անկարելի է չյիշել և իրեն նուիրուած եկեղեցւոյ եղբերեղն, շարականն, զոր՝ ըստ աւանդութեան՝ իր քոյրն կամ իր նորապսակ սրտակից ամուսինն երգած է: — Աչ միայն այն ցաւալի ժամանակներում ի հարկէ ցաւազգած սրտեր ունէին մեր զժբաղդ նախաարք և նախամարք, այլ և այնպիսի ցաւեր բացատրելու սուր և հուր լեզու. եթէ բաւական են սոքա՝ իրենց երկրին և սրտին կրակները զովացընելու, թող թէ մարելու:

48. ՂԵՒՈՆԴ ԵՐԷՅ

49. ՂԵՒՈՆԴ ԱՌԱՔԵԼՈՅ ՊԱՏՄԻՉ

Յետ Սերիոսի, Կաղանկատուացւոյն և ասոնցմէ վերջը յիշուածներէն՝ նշանաւոր պատմիչ է Լ. դարուս Ղեռնդ, որ սոսկ քահանայական աստիճանին համար Երեց մականունանի, թէպէտ և ձեռագրաց Յանկի մի մէջ կոչուած է եւս Եպիսկոպոս. բայց ոչ միայն այս կոչմանց զանազանութեամբ, այլ և յանուն Ղեռնդի յիշուած պատմական բանից՝ որք չեն գանուելի հիմայ մեզի ծանօթ պատմութեանը մէջ, կարծուի որ երկու համանուն Ղեռնդ պատմիչք եղած ըլլան: Ի հակառակէն, որովհետեւ այդ պատմագրութեան սկիզբն պակաս է, ոչ յառաջարան կայ և ոչ Արարացւոց կամ Խալիֆայից և անոնց օրինազրին ծագման և գործոց յիշատակն կայ, որ հարկ էր ըլլալ, վասն զի ինչպէս Կիրակոս իմացընէ՝ անոր զրածն էր «Պատմութիւնն որ զինչ գործեցին... և աթուազերն է՝ «Ղեռնդի վասն Դաւնակագրաց տանու» թորգումայ», այս ամէն բան երեւցընեն, թէ հիմայ գանուած (քիչ) օրինակք Պատմութեանն պակասաւորք են, և թերեւս կամաւ զգուշութեամբ և վախով՝ դուրս ձգուած է պատմութեան սկիզբն, գուցէ և տեղ տեղ: Օրպէլեան Հայոց նախարարաց դասակարգութիւնը յիշելով (ԼԷ), կ'ըսէ. «Չայս» այսպէս ի Գաննակի իշխանացն Հայոց, զոր «Ղեռնդ գրեաց, և սակաւ մի ցուցանէ Ագարան» գեղին և Ներսիսին»¹. երկու կարծեաց այլ փաստ

1. Մեծին Ներսիսի վարուց մէջ յիշուածքն իմանալու է. ինչպէս Մեսրոպ Երեցուս որ հարկեր յետնունէն աւելի Գահակալ ցեղեր յիշէ:

կրնայ տալ թէ ծանօթ Պատմութեանն դուրս մնալուն, և թէ այդ յիշատակը (որ կասկածելի բան մի չէր) ուրիշ Ղեռնդի գրած ըլլալուն:

Արդ, որպէս և ըլլայ, մեր այժմու ունեցած Ղեռնդի պատմագրութեան ամբողջ չէ, որով չեմք կրնար մենք այլ ամբողջապէս դատել իր արժէքը. սակայն հաւանիմք որ արժանաւոր դործ մի եղած է, և յետ Սերիոսի, ինչպէս նախ ըսինք, և աւելի եւս քան զնա, կարեւոր նիւթ մի ընտրած է պատմագրելու. և ըստ այսմ կրնար մեր ամենէն նշանաւոր Պատմըաց կարգն անցնիլ, մանաւանդ եթէ ոչ միայն ակնարկեալ մասերն եւս գտնուէին, այլ և պատմագրութեան վախճանին վերոյիշեալ գրուածը, «Կատարեցաւ Պատմութիւն Ղեռնդի վասն» «Դաւնակագրաց տանու թորգումայ, ի հրամանէ» «Շապհոյ Բագրատունւոյ», ընդարձակ իմանայինք. իբր թէ ըստ օրինակի Կաղանկատուացւոյն և այլոց՝ Հայոց առաջին դարերու պատմութիւնն այլ ժամանակագրութեն համառօտ գրած ըլլայ, և անոնց յարած՝ իր և իր մօտ ժամանակին զիպուածները, որոց զխաւորն է Արարացւոց տիրելն և յաջորդարար գործելն ի Հայս. անկէ դուրս այլ Բիւզանդացւոց հետ ունեցած վերաբերութիւնն, և նաեւ կրօնական երկար թուղթ մի կայսեր՝ գրած առ ամիրապետն Օմար, որ գրոց երրորդ մասը գրաւէ. և եթէ ստոյգ և թէ ոչ՝ Ղեռնդի բաւական երկարօրէն գրելը յայտնէ:

Իսկ ինչ որ իբր երկու դարու միջոց Արարացւոց երբեմն խիստ երբեմն կակուղ տիրապետութեան առնեն՝ Հայոց վրայ գրէ, շատ մանրապատու՝ չէ, բայց միշտ յարգի: Թէ և չունենայ տիրաւոր և վսեմական ոճ մի, և ոչ ամէն անգամ զիպուածները որոշ թուականաւ յիշէ, բայց զարձեալ խոհական կերպ մի ցուցընէ, և բաւական յստակ շարագրութեամբ, ընդ մէջ Ե-Ձ. դարուց նուրբ ճաշակով գրողաց և ընդ մէջ Փ. դարու շափազանց ճոխաբանից, ինչպէս Յովհաննէս Զ Կաթուղիկոսն:

Վերոյիշեալ վերջարանն յայտնէ որ Ղեւոնդ իր ժամանակի Բագրատունեաց մեծ իշխանի մի (Շապհոյ) հրամանաւ կամ խնդրով գրեր է իր Պատմութիւնը: Յայտ է որ այդ Շապուհ՝ գրեթէ դար մի առաջ է քան զհամանուն Պատմիչն: Ղեւոնդի գրածն հասնի մինչեւ յ'788 թուական Փրկչին, ի կաթուղիկոսութեան Ստեփանոսի Ա, որ և այս թուականով վերջանայ:

Ղեւոնդի պատմագրութենէն ընտրած ենք 498, 203-6 Յօդուածներն յ'Բ Մասին:

Արարացուց գործոց նկատմամբ անտարակոյս հետաքննելի պիտի ըլլար Եւրոպացուց՝ Ղեւոնդի պատմագրութիւնն. զոր լաւ գիտնալով Շահնազարեան Կարապետ Վ.գ., որ անոնց մէջ բնակէր ի Բարիզ, յառաջ քան զհայերէն բնագիրը հրատարակեն (ի 1859), փոանկերէն թարգմանելով տպագրեց հօն, (ի 1856¹): յետոյ (ի 1862) Պատկանեանն ուստերէն ի Բեդրսպուրկ:

Վերագառնալով ի խնդիր՝ մի կամ աւելի Ղեւոնդ պատմիչ լինելուն, շատ անակնկալ քննաշարժ յիշատակ մի գտնեմք (իցէ՛ թէ ստոյգ ըլլար), փոանկերէն Բնդանաբական Բիօգրաֆիք Մատենագրութեան (Biographie Universelle) գրքին մէջ: Ըստ ասոր, ի սկիզբն կոյս Զ. դարու՝ Ղեւոնդ կարողիկոս, ուրիշ գործերէ գատ՝ գրած ըլլայ և զՊատմութիւն ընտրեալ Սաքեթոց ի Հայս: Այս Ղեւոնդ կաթուղիկոս, եթէ եղած է, այն Զ. դարուն առաջին քառորդին շփոթ ժամանակին՝ իբրեւ 525 թուականին միայն կեցած՝ հազիւ յիշուի, և շատ գաւազանագրաց անծանօթ է: Բայց թէ ոչ անուանն և ժամանակին՝ այլ գործոյն հաւաստիք գտնեմք Նոր

. Histoire des Guerres et des Conquêtes des Arabes en Arménie, par l'éminent Ghévond Vartabed Arménien, écrivain du huitième siècle; traduite... et enrichie de notes.

Ջուղայի Չեռագրաց հնկեկ ցանկի մի մէջ, յորում նշանակի Սաքեթոց Պատմութիւնն որ ի Հայս կատարեցան: — Ամէն ընթերցող այս կարճ յիշատակիս՝ վկայէ ինքնին թէ ո՛րքան թանկ և ցանկալի գործ պիտի ըլլար դա. և թերեւ ճառընտրաց մէջ հիմայ գտնուած քանի մի Ասաքեթոց պատմութիւնք, ինչպէս Բարդուղիմեայ, Թագեոսի և այլն, ըլլան այդ Պատմութիւնը Գրողին կամ հաւաքողին, և դա ըլլայ այն Ղեւոնդն, կաթուղիկոսական աթոռոյն վրայ յանկարծ երեւեալ և յանկարծ աներեւութացեալն: Եթէ արժան է քննութեան այս գրգռիչ ծանօթութիւնս, յիշուի մեր վերոյիշեալն թէ ցանկի մի մէջ գրուի՝ Ղեւոնդ Եպիսկոպոս Պատմիչ:

50. ՄԱՇՏՈՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ. ԵՒ ԱՇՍԿԵՐՏՆ ՍՏԵՓՍՆՈՍ

Իններորդ դարուն վերջերը մեծ համբաւ ստացաւ սա, հայրենեօք յեղիվարդ գիւղէ Արագածոտն գաւառի, թէ վարուց սրբութեամբ և թէ գիտութեամբ, և զօվութեամբ յիշուի, որոյ համար և արժանացաւ կաթուղիկոսական աթոռոյ, թէ և քանի մի ամսէն մահն վրայ հասաւ: Ստեփանոս Օրպելեանի մէկ խօսքն (ԼՂ) Թանահատի վանաց միաբանից համար, թէ «Չայս ծանոյց մեզ Պատմութիւնն երանելոյն Մաշտոցի որ ի Սեւան», երեւցընէ թէ պատմական մի գրած էր, որ հիմայ չի գտնուիր. նոյնպէս և գրած է Թուղթեր առ Գէորդ կաթուղիկոս, և առ այլս: Իր ատեն հանգիւյած Գընայ մայրաքաղաքի մեծ շարժի և կործանման համար գրած ողբն և մխիթարութիւնը՝ իր աշակերտն Յովհաննէս Կաթուղիկոս իր պատմագրութեան մէջ պահած է:

Կարծած են ոմանք թէ մեր ծանօթ Մաշտոց գրոց կարգաւորութիւնն ըրած է սա, և իր անուամբ կոչուած է այդ կարեւոր գիրքն. սակայն շփոթուի մեծին Մեսրոփրայ Մաշտոցի հետ. թէ և անհաւանական չէ որ այս Սեւանեցին այլ ձեռք մի տուած ըլլայ այն կարգաց. որովհետեւ ընդարձակ կամ Մայր մաշտոց գրոց ոմանց վերջը գրուած կայ իր վարքն այլ, իր մէկ աշակերտէն Մտեփանոս անուամբ. քանի մի թուղթ բան, յամին 896-7. երբ Մաշտոց վաթսուներեւեց տարուան էր, և քանի մի ամիս վերջն ընտրեցաւ կաթողիկոս, և յետ եօթն ամսոց այլ վախճանեցաւ: Իր մէկ մեծ արդիւնական գործն է Սեւան կղզւոյ Գեղաքունեաց ծովակին մէջ՝ քարակտուրի մի վրայ շինած եկեղեցեակն, և յետոյ հաստատած վանքն, ի խնդրոյ Սիւնեաց նախարարին տիկնոջ, որ յետոյ եղեւ մի ի նշանաւոր վանորէից ճգնատուն միանձանց և զիտնականաց, և մինչեւ ցայժմ յետ հազար բազմադէպ տարիներու, իբրեւ ուխտի և ապաշխարութեան տեղի շէն է, և շատ նշանաւոր օտարազգի գիտնոց և ազնուականաց այցելութեամբ և քննութեամբ պատուած:

51. Հ Ա Մ Ս Մ

Հաւանորէն մէկէ աւելի հեղինակը եղած են այս անուամբ. ծանօթագոյնն՝ որոյ և գրուածք ինչ մեան՝ մականուանի Արեւելցի, Հայոց աշխարհին արեւելեան կողմէն ըլլալով, կամ յԱղուանից: Իր աւելի կամ պակաս մասամբ գործերն են՝ քանի մի Ս. Գրոց մեկնութիւնք, ինչպէս՝ Սողոմոնի Առակաց, Յովրայ գրոց քանի մի բանից, և այլն: Իրեն թուի և փերականի մեկնութիւն մի, ուստի Յովհաննէս Եղնկացի քանի մի կարճ հատուած պահած է իր

ընդարձակ մեկնութեան մէջ: — Կայ և ողբական շարական մի՝ անուանը գրերու կարգաւ տնագլուխ ըրած. բայց այս մեծ իշխանի մի գրուած է, որ անիրաւ սպանութիւն մի ըրած կամ ընել տուեր է (եղոր կամ մերձաւորի), և յետոյ զղջալով գրեր և երգեր է, և գտնուի քանի մի հին օրինակաց մէջ: — Այս երկու հեղինակաց մէկն (եթէ չէ և երրորդ մի եւս) կարծուած է Պատմիչ ըլլալ, անծանօթ տեղոյ կամ զիպուածի. որոյ ուրիշ յիշատակ կամ մնացորդ չկայ, բաց ի Ռոչքեան Ստեփանոսի բազմազանձ Քառարանին մէջ բերուած քանի մի տողէ. ինչպէս, « Երթային քառասնեակը » և գոյնպէս դառնային »: — « Նիսազերգուացն » ետ արժանաւոր ընծայս »: Այս ետքի տողս Քերականի մեկնութեան պատշաճի: Սակայն պատմադիր Համամայ մի եղած ըլլալն անտարակոյս կ'երեւի պատմաց լաւագոյն ցանկը գրողէն, այն որ վաթսուն և երկու պատմագիրք Հայոց եղած են կ'ըսէ:

52. Ա Հ Ա Ր Ո Ն Վ Ս Ն Ա Ն Գ Ա Յ Ի

Իններորդ դարու վերջին տասնեկին գրած է սա Ս. Նունէի Խաչին Պատմութիւնը. ինքն զինքը կ'անուանէ թոռն, այսինքն ի ցեղէ Ս. Ղեւոնդեայ Երեցու, յիշեվանից, ուսկից էր Մեծ Նահատակն այն: Իբրեւ նշանաւոր գրիչ կամ պատմիչ մի յիշէ զսա Այրիվանեցին ժամանակագրական թուականաց մէջ: Չորս հինգ թուղթ բան է Ահարոնի յիշեալ ծանօթ գրուածն. բայց ինչպէս կ'ըսէ ի սկզբանն, « Բազում աշխատութեամբ և խուզիւ քննեալ ի » յազու՛մ մատենից Հայոց և Վրաց ». վասն զի որչափ որ փոքր բան մի է պատմութեան նիւթըն, Ս. Նունէի ձեւացուցած և օրհնած փայտե-

ղէն խաչ մի, ի Մծխիթայ մայրաքաղաքի Վրաց, նոյն իսկ փոքրութիւնն դժուարացուցեր է գիտնալը, թէ ո՞ր և որ ձեռքէ ձեռք կամ տեղէ տեղ անցեր, պահուեր և կորեր է: Իբրեւ մեծ սրբազան և հրաշագործ գործի մի՞ ոչ միայն Ահարոնի, այլ և այլոց պատմագրաց և Յայտմաւորաց հետաքննելի եղած է. և յիշեն որ ինչուան ի ժամանակ տառապանաց խոստովանող Ս. Եուշանկայ՝ մնացեր է ի Մծխիթայ, և այս տիկնոջ պատուիրանաւ Անդրեաս մի յաշակերտաց Ս. Սահակայ վերուցեր է գաղտուկ¹: Յայտնի չէ թէ պատմութեան վերջն իրմէ՞ գրուած է՝ թէ ուրիշ մի աւելցուցեր է, խաչին ի Կարս քաղաք փոխադրուիլն (յամի 931). ուսկից շատ ժամանակ վերջը (1094ին) բերուեցաւ յԱնի մայրաքաղաքն, և մնաց հօն մինչեւ յառումն և յաւեր քաղաքին ի Թաթարաց, այն պատահարին ժամանակ՝ անյայտացաւ խաչն:

Ահարոնի կամ շարունակողին պատմած նշանաւոր դիպուած մ'է Սպրբի կամ Սրիբրի Նար² վայրագ ոստիկանի մի իբրեւ տեղակալ Յուսիայ, կողոպտելն զեկեղեցիս Հայոց. ընդ որս և Ս. խաչի եկեղեցին, որոյ և մէկ թեւը զարկաւ իր սրովն, և նշանն մնաց անոր վրայ. բայց ինքն Սրբիքի իբրեւ այսահարեալ « Յերկիր թաւալէր և փրփրեայր. » իսկ խոցուածք Սուրբ Նշանին եռացեալ որպէս « զմտեղինի՝ սպիանայր... (իսկ) Զանօրէնն Սպիքի » ըմբռնեալ սպասաւորացն արքունի՝ պահանջէին « ի նմանէ՛ զհարկ և զհասս... արկեալ տոռն ի պարանոց նորա՝ փութով հասուցանէին ի դուռն » արքունի »:

Վերջարան Պատմութեանն կ'իմացընէ որ Ահարոն Սպասաւոր էր, այսինքն պահապան, իբրեւ եկեղեցապան, և թէ Պատմութիւնը հաւաքած է

1. Տես թիւ 44:

2. Զսա յիշէ և Օրպելեանն, ՔԼ. ԼԸ:

« ՅԱզաթանգեղայ պատմագրէ¹ (?), և ի Վկայու- » թենէ Եուշանկանն, և ի Վարոց Սրբոյն Սա- » հակայ, և ի Ճգնաւորէն Անդրիաստ². զսի և » զՍրբոյն Հնայեկի Վկայարանորիւնն քառասուն » արամբք ի տանն Տայոց, որ այժմ Գառասի » վանք կոչի: Գտի և այլ բազում յիշատակ Սըր- » բոց, որոց մոռացմունք եղեալ (էր) ի տագնապ » լինելոյ աշխարհիս »: Թերեւս և հաւաքելով այդ Սրբոց յիշատակները, ինքն Ահարոն այլ զիբք մի ձեւացուցած ըլլայ:

Ահարոն այս կարճ գրուածի մէջ շատ նոր, հետաքրքրական և պիտանի տեղեկութիւն կ'ընծայէ՝ անձանց և տեղեաց:

53. ԳՍԳԻԿ ՀԱՅՐ ԱՏՈՎՄՍՅ ՎԱՆՍՅ

Ասողիկ (Գ. գ.) յիշելով Սմբատայ Ա թագաւորելն ի վերջին ամս թ. դարու, նոյն ժամանակ Մաշտոցի հետ յիշէ և զսա՝ քանի մի տողով, բայց կարեւոր նշանակաւ. « Յայսմ ժամանակի պայ- » ծառանայր առաքինութեամբ Հայր Գագիկ ա- » ռաջնորդ ուխտին Ս. Ատոմայ (ի Վասպուրա- » կան), որ զյիշատակ մարտիրոսացն միայարեալ » ի գեր, որ Ատոմադիրն անուանի »: — Մեր եկեղեցական գրոց հեղինակները յանուանէ յի- » շողքն կ'ըսեն. « ԶՏօնացոցակն (կամ զՏօնացոցն) » Վարազայ Հայրն Ատոմ կարգեաց »: Մէկն այլ յիշէ որ Ատոմ այս պատուական գործոյ օգնական ունէր Գրիգոր կամ Գրիգորիս անուամբ սարկաւազ մի: Ասողիկ խօսքէն կ'իմացուի՝ որ ոչ սոսկ

1. Մեր հիմայ ունեցած Ազաթանգեղի գրոց մէջ էկայ ընաւ Ս. Նուէի յիշատակ:

2. Տես թիւ 28:

Տօնացոյց մ'էր իր գործն՝ ինչպէս կրնար կարծե-
 ցընել յետնոց այդպէս անուանելն զգործը, այլ մար-
 տիրոսաց յիշատակներ, վկայաբանութիւններ հա-
 ւաքած մէկտեղ՝ միայարեալ ի գիր: Պարզապէս
 ըսելով, Մարտիրոսոց (Martirologium) մի յօրի-
 նեց. նման և աննման Սողոմոնի Մաքենոցաց Հօր
 գործոյն. վասն զի սա հաւաքեց որ և է Սրբոց և
 Տօնից յիշատակները, վարքեր և ճառեր. իսկ Գա-
 գիկ յատկաբար՝ մարտիրոսաց վկայաբանութիւնքը.
 յորմէ օգտուած են Յայսմաւուրաց հեղինակքն:
 Գիտազգարար Գազկայ գործն՝ որ իր վանաց ա-
 նուամբ Ատունադիր անուաներ է, իբր դրուած
 կարգաւորուած յԱտոմայ վանս, հիմայ անձանօթ
 է. ոչ ոք իբրեւ գտած յիշէ. թերեւ ճառընտրաց
 մէջ անցած վկայաբանութեանց ոմանց վերջը գըտ-
 նուի իր անունն կամ յիշատակը:

54. ԵԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Թէ՛ ժամանակակից և թէ՛ յետագայ ամէն պատ-
 մընաց անունները շարագրողներէ յիշուած է սա,
 իբրեւ հասարակաց ծանօթ, և ինչուան մեր օրե-
 րուս այլ հասած և կորած է գործը. շատ մեծ և
 նշանաւոր գործ, և առաջին յետ ոսկեղինակ գարու
 պատմընաց, երկարօրէն գրուած, թէ և յատուկ
 իր Բագրատունեաց ցեղին, որոյ թագաւորութեամբ
 փառաւորող Ա. Աշոտոյ որդի և Ա. Սմբատայ նա-
 հատակի եղբայր էր, քաջ, հանճարեղ և գործու-
 նեայ պայպատ մի: Ասողիկ իր շարագրասած պատ-
 մընաց վերջին զտա գրէ, (Ա. ա). « Հուսկ յետոյ
 » ի վերջին աւուրս՝ Պատմադրիւն Եապհոյ Բագրա-
 » տունոյ »: Ետ հեղ յիշէ զնա Յովհաննէս Կա-
 թուղիկոս, և գրիչը կ'արգելու ճօխաբանելէ, վասն
 զի « Նախ քան զմեզ, կ'ըսէ, Եապհոյ Բագրա-

» տունոյ և մերումս ժամանակի Պատմագրի՝ գրով
 » գրուածեալ է զնորայն (Աշոտոյ Ա.) գործոց և զգնա-
 » ցից և իմաստից և մրցարանաց և շինութեանց
 » և խաղաղութեան հանգէս »: Արիչ տեղ այլ.
 » Հաճեցաւ բանս ոչ երկրորդել միւսանգամ՝ զհե-
 » տեւանս զրուցաց Եապհոյ Բագրատունոյ... որ
 » յայտապատում՝ իսկ արարեալ է զգրոյցս պայա-
 » գատութեան որդւոյ Աշոտոյ Սպարապետին Սըմ-
 » բատայ՝ զիշխանական պատմութիւնն, և զթագա-
 » ւորացն հանգամանացն զկարգս ». և այլն: Պատ-
 մութիւնը լիովին գրելուն պակաս չի գտնար մեր
 կաթուղիկոսն, բայց անոր շարագրութեան կամ
 հայկաբանութեանը չի հաւնիր. « Աչ կարացեալ
 » ըստ քերթողական հրահանգացն համառօտաբար
 » ընձեռել. սակայն ըստ իւրումն ժամանակի ըն-
 » տանի գրով նորա զրուցացն ամենայնի, զեղծուկ
 » բանիւ՝ բաւական քեզ տայ պատճառս տեղեկու-
 » թեան »: Եսնպէս արիչ տեղ այլ. « Ես ստաւ
 » նօր զբովանդակն ի նա (Եապուհ) թողացուցեալ
 » ... համառօտ քեզ ընձեռութիւն աւնելով՝ փոր-
 » ձեցայց սակաւուք », և այլն: Կ'երեւի թէ կա-
 թուղիկոսն կ'ուզէր իր պերճ ոճով գրել այն դի-
 պուածները զոր Եապուհ իրմէ առաջ ծանօթացու-
 ցեր էր հասարակաց, և իր իշխանական շուքոյն
 այլ հաճելի ըրած. սակայն չհամարձակելով կրկնել,
 և շյուսալով որ իբրեւ նոր բան մի գրող ընդու-
 նելի ըլլայ իր ժամանակակցաց, անոր գրութեան ոճը
 զեղծուկ գտնէ: Իսկ իր ոճն այլ մենք չափազանց
 պերճուկ գտնեմք. մինչ Եապհոյ գրուածէն քանի
 մի մնացեալ կտորք՝ շատ վեր են քան զգեղունիկն:
 Եապուհ մեծ արդիւնք ունի նաեւ քաղաքակա-
 նօրէն, իր հօր օգնական ըլլալով յառաջ և յետ
 թագաւորութեանն. երբ նա խայտառակելով ու-
 տիկանի կողմէ եկած Սննար գործակալի խարդա-
 խութիւնը՝ վաւրտեց զնա, Եապհոյ յանձնեց
 « Ելեալ զհետ նորա տանել հասուցանել զնա ի
 » մուտս Ասորեստանեայց ճանապարհին », (թովմ-

Արծր.) որ է ըսել Հայաստանի սահմանէն դուրս վաճառել: Քիչ տարի յետոյ՝ երբ այդ վաճառուածին նման մէկն այլ (Ապլ-բերս) սպաննեց զԳերենիկ Արծրունին (իբր 887ին), եկաւ Շապուհ, « Եւ ետ » զիշխանութիւնն ի ձեռս Աշոտի որդւոյն Գերան » կին... և զԳագիկ՝ որ և Ապմրուան՝ զնա ոստի- » կան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղագահու- » թեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք » Գերանկին » . (ինն, եօթն և հինգ տարեկանք՝ ըստ թովմ. Արծր.): Երբ Ափշին կամ Աւշին ոստի- կանն, Բուզայի յաջորդ, և նախորդ Յուսիպայ, առ ապեցեաց զՀայս, գարձեալ Շապուհ գնաց առ Ափշին (ամ 890), գերիները սպասեց, և իր եղբոր Ա. Ամրատայ թագաւորական թագ բերաւ, (Ստղիկ, Գ. գ): — Երբ վերոյիշեալ Գերենկան որդիքն զարգացան, և անդրանիկն Աշոտ գերի բռնուեցաւ ի վերոյիշեալ Ապմրուանայ, նորէն գալով Շապուհ, « Կացուցանէ զԳագիկ իշխան Վաս- » պուրական տէրութեան. մանաւանդ զի փեսայա- » ցուցեալ էր Շապուհոյ զԳագիկ ի դուստր իւր¹ » . (Թովմ. Արծր.): — Այս տիկինն ըստ խնդրոյ Արծրունեաց տիկնոջ (Սեղայի), աղաչեց զԱւշին և աղատեց զԱրշակ ազնուական Վարաթնունին: Քիչ մի վերջը, (898 թուին), սրածութենէ բռնուելով շարաշար ցաւերով մեռած է Աւշին, ի Մարաղա, իր զօրաց շատերու հետ:

Շապուհ թուի մեռած ի միջոցի 904-7 տարիներու. վասն զի այդ վերջին թուականին իր որդին Աշոտ ուրիշ իշխանաց հետ իր հօրեղբոր Սըմ-

1. Այս գուսարն է՝ որ ստորագրէ զինքն թագուհի արար բառիւ Մլրի Աւետարանի մի յիշատակարանի մէջ, զոր ընծայեր է Վարադայ Վանաց յամին 902: Թուի թէ ոչ այս Շապուհ (ինչպէս կ'ըսէ Արծրունին), այլ ուրիշ համանուն և համացեղ իշխանի մի գուսար էր՝ զոր էր « Առեալ Աւշին կնութեան՝ յա- » նօրէն ամուսնութիւն »:

բատ թագաւորի հետ՝ չմիաբանեցաւ կամ չօգնեց անոր ընդդէմ Յուսիպայ, մինչ հայրն Շապուհ այնքան խնամով պաշտպանէր զեղբայրը և թագով պսակեց¹. և իր գուլթն ու մեծարանքն արձանազրեց ինքն իրեն իր քրոջ ձեռքով պատրաստած զերեզմանին վրայ, յամին 903, ի Վանեկան, Գեղամայ ծովուն մօտերը. « Յանուն Աստուծոյ, ես » Շապուհ Բագրատունի, Հայոց Սպարապետ, Տե- » րանց աէր, որդի Աշոտի Հայոց թագաւորի, ի » ժամանակս Հայոց թագաւորի մեծի Սմպատայ » հարապատ եղբաւր իմոյ... ծանեայ թէ ամենայն » փառք և մեծութիւն սպասելոց են ի վաղիւն և » կորնչելոց, և մեծափափագ տենչանովք վերակա- » ցու և տեսուչ աւնելով զքոյր իմ Մարիամ Սիւ- » նեաց տիկին, յիւրում իշխանութեան ի Վանա- » վանս տուն Աստուծոյ կանգնել զխմատաշս կու- » փածովք շատածախ գանձիւք և մեծալան փառ- » տակով կատարել. թերեւս լիցի ողորմութիւն » յայնմ աւուրն յորում բանք սպառնի և զործք » թագաւորեն » . և այլն: Մահարձանն անգամ վկայէ Շապուհոյ բարեպաշտութեան, քաջութեան, հայրենական սիրոյ և մեծարանաց առ օրինաւոր իշխանութիւնն, և սէրն առ հարազատս իւր: Յաւալին այս է՝ որ իր գործոց զլուին՝ Պատմութիւնն, որ ինչուան այս վերջին տարիներս այլ երեւցեր է հին գրութեամբ, թշնամութեամբ օտարազգոյ՝ տընով տիրոջն այրուեր փճացեր է. և զի այսքան մօտ ժամանակ գտնուած է, և այնքան յիշուած ի նախնեաց, յուսալի է թէ օր մի յերեւան ելնէ ուրիշ օրինակ մի: Երբ Զուղայի վանաց ձեռագրաց ցանկի մէջ ի կէս անցեալ գարու յիշուած է, կուչուելով՝ « Շապուհ պատմագիր, որ է Պատմու- » թիւն Որսիղաքարայ (?) սարատելատին և այլ » Սրբոց Նահատակաց՝ որ ի թուին ԳՃԲ » (853): Յայտ է թէ սխալ գրուած է այդ անհեղեղ ա-

1. Տես Սխալիսն, էջ 60:

նունը, զոր սեղորէն գրէ ուրիշ ցանկ մի... «Որ» է Գիրք Սրբոյն Սմբատայ ստրատելատին», և այլն: Այս Սմբատս է Խոստովանող կոչուածն, Շապհոյ պապն, Բուզայի բարբարոսութեան գերի և զոհ եղած:

Քանի մի հատուածք միայն ծանօթ մնան ի Շապհոյ Պատմութենէն. որոց զլխաւորն՝ աւանդութիւնն Գաւթի մարգարէի թագին, որ Նաբուգոզոնոսորի գերութենէն՝ Քաղզէացոց և յետոյ մի ըստ միոյէ Պարսից, Պարթեւոց և Սասանեանց ձեռք անցեր է, և Կոստանդիանոս խնդրելով ընդուներ է յերկայնակեաց Շապուհ թագաւորէն: Ասողիկ յիշելով զայս (Բ. գ) կ'ըսէ. «Որպէս ու» սուցանէ մեզ Պատմագրութիւնն Շապհոյ Բա» գրատունւոյ, որդւոյ Աշոտի Անթիպատրըկին»: Որչափ զարմանալի երեւի այս բանս, ոչ սակաւ զարմանալի է և մեր Շապհոյ պատմչի՝ Յաղագս Պատմոց ճառ մի գրելն, որոյ և հատուածք ինչ մնան, և վկայեն հեղինակին բազմաշնորհ հանձարոյն. որք և աւելի փափագելի կ'ընեն իր Պատմութեան գիւտը: Հաւատալի է անոր մէջ շատ պիտանի տեղեկութեանց ըլլալն, մանաւանդ Բագրատունեաց ցեղի և իշխանաց վրայօք. և անոնց երկրին բնակութեան և կրօնական տեղեաց. միանգամայն և մեզի ընծայելով պանծալի և հռչակելի ընտանիք մի, Խորատելատ Խոստովանողն, թագաւորութիւն կանգնող որդին Աշոտ Ա, ասոր որդին երկրորդ Խոստովանող և Նահատակ Սմբատ թագաւոր, տանելու արժանաւոր, ինչպէս որ երկուքն այլ ի Յայսմաւուրս նշանակեալ են (մին յ'3 մարտի, միւսն յապրիլ 16 կամ ի մայիս 8). Շապուհ Պատմիւն, Մարիամ Սիւնեաց մեծօգի և աշխարհաշէն տիկինն. նոյն ոգւոյ տէր Մլէ թագուհին, որք ոչ շատ նուազ արժանաւոր ժառանգներ և պայազատներ ընծայած են երկու դարուց միջոց (ի կիսոյ թ-ին ցկէս ժԱ-ին):

55. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Քաղաքական նորոգութիւնն Հայոց՝ թագաւորութեամբք յետ չորս և կէս դարուց անբնիկ իշխանութեան, յայտնապէս արժարժած է ազգին բարոյական կարողութիւնն և մտաւոր եռանդն եւս, և մինչ այն անիշխանութեան դարերուն՝ ոչ մի ոճով երկար զրոյ Պատմիչ մի չէ երեւցեր (զոնէ մեզի ծանօթ), թէ և չափաւոր զրոյք եղած են, ի թագաւորելն Բագրատունեաց յերս Թ. դարու, և ապա Արժրունեաց և Սիւնեաց, իսկոյն ի Փ. դարու անոնց գործոց և նախնեացն եւս Պատմիչք երբ եւն, որոց պարագլուխ և երիցագոյն տեսնուցաւ Շապուհ, դեռ Թ. դարու վերաբերեալն. իսկ յալորք Փ. դարն ընծայած է նախ ամենէն անուանին Յովնանեկս Զ Կարառչիկուր, ապա զԹովմաս Արժրունի, Մեսրոպ Երէց, Ուխտանէս, Մովսէս Դասխորանեցի, որ յիշուեցաւ ընդ Կաղանկատացոյ, և Ասողիկ որ կնքէ զգարն՝ յիշելով իրմէ առաջ Պատմագրողները:

Ասոնց մէջ թէ՛ ժամանակաւ թէ՛ պատուով, թէ՛ վայելուչ զրութեամբ և թէ՛ բովանդակութեամբ Հայոց ի սկզբանէ մինչեւ յայն ժամանակ պատմութեանն, առաջին և հասարակաց ծանօթ ըլլալովն՝ է հռչակեալն Յովնանեկս Զ, միակ Կաթողիկոս Պատմագիր, այսպէս կոչուելու արժանի, եթէ և այլք ոմանք աթոռակիցք նորա՝ գրած ըլլան քանի մի պատմական բան: Իր գրուածին մէջ անձնական յիշատակքն և ոճն, և իր հայրենիքն Դրասխանակերտ, (ոչ շատ ծանօթ, այլ մօտ ի մայրաքաղաքն Դուին), տան գուշակել որ աղնիւ ցեղէ էր, և լաւ կրթուած՝ զատ յայլոց՝ ի Մաշտոցէ՝ որ յետոյ կաթողիկոս եղաւ, (Տես թիւ 50): Բարուցն, աստիճանին և նախնեաց լեզուին հմտութեանն հա-

մեմատ է լեզուն կամ շարագրութիւնն, գուցէ քիչ մի և աւելորդ ճոխարանութեամբ կամ ուռուցմամբ, որ ժամանակին տիրապետող արաբական լեզուի հետեւութիւնը ցոյց կու տայ: Իր միակ ծանօթ գրուածն է Պատմութիւնն Հայոց, յետ Մովսիս Խորենացոյ այսպէս կոչուելու արժանացեալ, վասն զի անոր պէս ի Ջրհեղեղէն կու սկսի համառօտելով պատմարանել զշարս, և զգործս Հայկազանց և Արշակունեաց, և անոնց և իր օրերուն կանգնուած Բագրատունեաց միջեւ եղած դարերում՝ Յոյն, Հայ, Պարսիկ իշխանաց, և ապա Արաբացոց, մինչև հասնի նոր թագաւորութիւն կանգնող Ա. Աշոտոյ. բայց ասոր և իր հօր գործերը թողու որ Շապուհ արքայորդին պատմէ, ինքն համառօտ յիշէ, և սկսի երկարօրէն պատմել Շապուհոյ եղբոր՝ Ա. Սմբատայ և ասոր որդւոյ Բ. Աշոտոյ գործերը, Արծրունեաց զուխ կանգնելն ինքնիշխանութեամբ և յետոյ թագաւորութեամբ, և աւելի երկար և ցաւալի գործեր Բուղայի, Աւշնի, Յուսիսայ և անոնց տեղակալաց, արժանապէս ողբալով անոնց անգթօրէն և աւագակօրէն այրել արել և ջարդելն զՀայս, և զոմանս նահատակելով, որոց զլուխ նոյն ինքն թագաւորն Սմբատ, զոր արժանապէս այլ զեռ ոչ ըստ բաւականին սգայ, որպէս և ինքզինքն՝ այնպիսի աղիտալի իրաց ականատես ըլլալով և իր աթոռէն օտարագիր թափառելով մինչև յարեւմտեան ծայրս Մեծ Հայոց: Արշափ որ շարաբանութեան օճն պահուծեալ է, սակայն ըստ իր աստիճանին ստուգապատում է և արդարագոյն հայրենասէր՝ բայց ոչ վատաօրրտ. միով բանիւ՝ թէ իրեն թէ՛ ազգին պատիւ և հաճոյք ընծայած, որով և հանրածանօթ եղած. և իրմէ վերջը զրոզ պատմիչներէն պէսպէս գովարանութեամբ յիշուած, և կարգացուած: Արով և շատ ձեռագիր օրինակներ գտնուին իր զրոյ. ապագրութեամբ այլ հրատարակուած է, — յԵրուսաղէմ (ի 1843), և ի Մուկուս, յԵմինեանէ (ի 1853): Եւ աւելորդ համարիմ

երկարարանել. զի ամէն Հայերէն Գպրութեան վրայ գրուածոց մէջ թէ՛ մեր թէ՛ օտար լեզուօք՝ գտնուի իր վրայ տեղեկութիւն: Հայագէտն Սէն-Մարդէն թարգմաներ էր փոանկերէն, զոր շատ տարի յետ իր մահուանն տպագրեց յամի 1841 Փելիքս Լաժար (Félix Lajard), Գաղղիոյ Ուսմանց Պաշտօնէին ձեռնառութեամբ:

Յովհաննու պատմարանութեան քանի մի հաշակ կ'ընծային մեր Յօդուածքն (յ'Բ Մասին) 1. 197. 200. 208. 214. 216. 218-9. 221-3:

56. Թ. Ո Վ Մ Ա. Ա. Բ Ծ Բ Ո Ի Ն Ի

Գրեթէ ժամանակակից Յովհաննէս Կաթողիկոսի, քիչ մ'այլ անկէ վերջը, կրնայ ըսուել Թովմաս Արծրունի, անոր մրցակից և հակառակորդ: Կաթողիկոսն իր պատմութեան առարկայ ընտրած էր զցեղն Բագրատունեաց, իսկ Թովմաս իր ցեղն՝ Արծրունեաց, յորմէ ըլլալն յայտնի է, բայց ոչ բնիկ տեղի ծնընդեանն. և ոչ իսկ ծանօթ է իր կենաց վիճակը, որ իր ետանդուն և համարձակ զրելէն՝ կարծուի աշխարհական, քան քահանայ կամ վարդապետ, որպէս կրնայ այլ կարծուի իր շատ հեղ Սուրբ Գրոց բանից յիշատակութիւններէն: Թէ և իր ցեղին ընդհանուր Պատմութիւնը գրած է, սակայն կրնայ ըսուել թէ իրեն յատուկ վեհազն և շահատակ ընտրած է ժամանակակից Գագիկ թագաւորն իր երկրին. մինչդեռ Կաթողիկոսն թէ և իր ժամանակի Սմբատայ վրայ աւելի խօսի, բայց աւելի անյատուկ և հաւասարատես կամ անկողմնասէր է. իսկ Թովմաս իր վեհազնը գովարանելով՝ անոր պէս այլ պակասած կ'ըրելի Բագրատունեաց գերագանցութիւնը ճանչնալու և յարգելու. միով բանիւ՝ աւելի կողմնասէր,

կուսակից կամ մասնակից համարելի է. ինչպէս որ իր պատմութեան նպատակն և կոչումն այլ է յատուկ նահանգ և ցեղ մի: Հանդերձ այսու, առանձին զիպաց և անձանց վրայ գրած ատենն՝ շատ հեղ արդար դատէ: Եւրաբանութիւնն այլ տեղ տեղ պարզ է, տեղ տեղ այլ ճոխ, և ոչ ողորկ որպէս Կաթողիկոսինը: Թերեւս իր գործոյն դեռ շատ հին ձեռագիր օրինակ չգտնուիլն այլ՝ պատճառ է մթութեան և տարակուսի: — Այսպէս պատմական շարակարգութիւնն եւս՝ ըստ ժամանակագրութեան՝ ուղղագնաց չէ իրրեւ զԿաթողիկոսին պատմութիւնը, այլ երբեմն ոստոստուն:

Գալով պատմական հմտութեան և արժէից, անհամեմատ վերադասելի է Թովմաս. շատ աւելի հմտութիւն ունի, ոչ միայն իր ընտրած նպատակին վրայօք, այլ և դայն լաւ ճանչնալու և լուսաւորելու համար՝ ըրած քննութեամբք և խուզարկութեամբք՝ կողմնակի ծանօթութիւններ այլ ստացեր է: Ընդհանուր Հայոց պատմութիւն գրելն, — առաջին գրողներէն աւելլով —, ինչպէս Կաթողիկոսն ի Խորենացոյ, շատ աւելի դիւրին էր, քան յատուկ առանձին ցեղի մի. որոյ համար (գէթ առաջին անգամ հաւաքուած բան մի ըլլալով) հարկ էր շատ տեղ պրպղտել, շատ գրքեր քննել, և մանրուկտորիկ յիշատակներն անգամ ժողվել և կազմել մէկ զանգուած մի: Եւ թէ այսպէս ըրած է Թովմաս՝ վկայէ նախ իր խոստովանութիւնն. «Քանզի բազում աշխատութեամբ է գտանել» զչար ազգաբանութեան տանն Արժրուենաց, վասն» հեռաւոր ժամանակաց կացեալ և դիւանացն ան» երկար տաժաւեմամբ ի մէջ Հայաստանեայց... և իմ» յիկար տաժաւեմամբ ի խոյզ և ի խեղիք ելեալ» զհաւաստին գտանել ի հնախօս շարագրական» մատեանս, և ի բազում վեպս Պատմութեանց» անցեալ գրեցի՝ որ ինչ բաւական ձեռնհաս եղէ»: Այսպէս գրէ ի յառաջարանութեանն. և ի վերջարանին այլ նշանակէ թէ ոչ միայն պատմական

զիպուածները՝ այլ և անոնց տեղիքը փնտեր է ստուգութեան համար. վասն որոյ «Մեր առ ա» մենայնն անձամբ հասեալ և աջօք տեսեալ, ճրկ» տեալ և ի հեռաւոր աշխարհս, մինչև ցեղարքս» և Շառլերացիս և առ Լեւրամբն Կաւղոսայ, և» յԱհիզ, մինչ ի մուտսն Գաղայ և ընդ Տայա» առան, և ընդ ամենայն հիւսիսականս և ընդ Ա» րեւելս. ի հետխոտս գնալով՝ տեսաք զգործ քա» յաց և նախնեաց»: Ուրիշ տեղ այլ կ'ըսէ, թէ գոհ ըլլալով ուրիշներու գրածին, ինքն անձամբ «Ականատես և ականջալուր և իմով իսկ ձեռօք» շօշափեալ, պատմել քեզ հաւաստապէս զեղելոցն» զարմանս»: Վերը յիշեալ տեղեաց երկուքն (Ահիզ և Գաղ) անծանօթ են. սակայն առջիններուն և ամենէն վերջինին մէջ դասուած ըլլալով, թուին անոնց պէս Հայոց երկրին հիւսիսային սահմանակից երկիրներ: Արեւելք այլ՝ Ալուանից և Ատըրպատականի կողմերն են. իսկ զհարաւ չի յիշեր, վասն զի իր վասպուրականի երկրին սահմանակից ըլլալով՝ արդէն իրեն ծանօթ էին:

Հայոց երկրէն դուրս յիշածները ստուգելու համար՝ Թովմաս հարկաւ այն տեղերէն եկողները տեսեր, հետերնին խօսեր և տեղեկացեր է: Ինչպէս Քաղաքացոց, Պարսից և ուրիշ արեւելեայց հին կամ՝ դիւցազնական ժամանակաց առասպել աւանդութիւններն ստուգելու համար, Պարսից Ալլաստան երկրէն (չոր յիշէ Խորենացի յաշխարհագրութեանն) եկող Շախրի կոչուած տեղացիներուն (Պեհրանայ մօտերն) հանդիպելով՝ հարցուցեր, «Եւ ես իսկ տեղեկացեալ, կ'ըսէ, զիտացի ի բազ» մայ յայնցանէ»: Օտար կողմերէ ի Հայս եկողք՝ ինչպէս հիմայ՝ այն ատեններն այլ անպակաս էին: Այս մէկ յիշատակս անտարակոյս կ'ընէ՝ նոյնպէս շատերէ շատ բանի տեղեկանայն:

Չատ յանձանց և ի տեղեաց, կամ ականատես և ականջալուր ըլլալէ, ուրիշ աղբիւր մի կայ տեղեկութեանց. նախնեաց մատեանքն, մանաւանդ

Պատմացն, իրմէ առաջ ազգայնոց զրաճներն՝ աւելորդ է ըսել՝ թէ լաւ քններ է թո՛վմաս . ոչ միայն մեզի ծանօթներն, այլ և զանոնք՝ որոց ոմանց անուանքն յիշեցինք՝ ի Ե-Չ . դարու, որք հիմայ անձանթ են . այլ անշուշտ ծանօթ էին իրեն, ինչպէս Եղիշէի արքայը պատմութիւնն, յիշատակաւ նահատակութեան Վաչանայ Արծրունւոյ, (զոր յիշեցինք ի թիւն 20) . ինչպէս նաեւ Խորենացին՝ հանդերձ Գ գրքովն, և եղբայրն Մամբրէ և թէոզորոս Քերթով, և այլն :

Շատ հաւանօրէն ասոնցմէ և ասոնց նմաններէն առած է այն աւանդութիւնները՝ Հայկազանց և Հնազոյն ժամանակաց, որք չեն գտնուիր առ Խորենացւոյ, Բերտուսի և Հեփթաղաց թագաւոր Մանիքոսի պատմածները Զրադաշտի և Կրակի պաշտաման վրայ . - յանուն Աղքեսանդրի գրուած թողորքը՝ Հնդկաց և մերձաւորաց վրայօք՝ որ անոր Պատմութեան մէջ գտնուին, և Կալիսթրենես (զոր անուամբ յիշէ թո՛վմաս) Աղքեսանդրի ղեսպանն և տեղագիրն գրեր կամ ծանուցեր է . - Պատմագիրքն զոր Տիգրան Ա. Արշակունի ՄԱղքեսանդրոյ գրատանէն բերել տուեր է՝ ինդրելով ի Կղէոպարայ, ինչպէս յիշեցինք . (Տես ի Կրուագ Երկրորդ, երես 29) :

Այս ամէնն յայտնեն որ թո՛վմաս՝ պատմի առաջին կարեւոր յատկութիւնը ճանչցեր և ունեցեր է՝ իր շափով, և յետ Խորենացւոյ առաջինն է պատմութեան աղբիւրներ փնտռելու և ստուգելու : Եթէ իր նպատակն ըլլար ընդհանուր Հայոց պատմութիւն գրել, շատ ցանկալի աւանդութիւններ այլ պիտի ունենայինք իրմէ, և թէպէտ ինքն իր գրոց երեք չորս բաժնած Գալուսթեանց առաջին երկուքին մէջ՝ որ համեմատին Հայկազանց և Արշակունեաց ժամանակի՝ համառօտիւ կ'անցնի, և քանի մի նոր ծանօթութիւններ կ'ընծայէ, բայց անոնք այլ իր Արծրունեաց ցեղին վերաբերին, ինչպէս Կիրոսի և Աղքեսանդրի ժամանակին եղած ցեղին

զլխաւորքն կամ նահապետք, զորս յանուանէ յիշէ, ինչպէս Խորենացի զՀայկազունս : Մօտենալով իր ժամանակին, Գ Գալուսթեան մէջ Հայոց անիշխանութեան ժամանակի դէպքերը համառօտէ, և աւելի ընդարձակօրէն՝ Արարացոց գերիշխանութեան ատեն ի Հայս ըրածքն իրենց Ոստիկանաց ձեռօք, մանաւանդ Բուդայի և յաջորդացն, զորս պատմէ և Կաթուղիկոսն Յովհաննէս, բայց աւելի և նոր դիպուածներ, Վասպուրական և Տուրքերան նահանգաց մէջ . ինչպէս Յուսուփ ոստիկանի կամ անոր օգնականի մի պատերազմն լեռնաբնակ Խոյթի Հայոց հետ, որոց մէկն աշտիւն հարեալ սպաննեց զնա . « Եւ ես, կ'ըսէ, Հեղինակս, աչօք » իմովք տեսի զայրն զայն՝ որ հարեալն էր զնա, » և ի նմանէ ստուգեցի վասն նորս » : Այս հանգիստ է յամի 852 . իսկ թո՛վմաս անկէ գրեթէ ութսուն տարի այլ անդին վերջացընէ իր Պատմութիւնը :

Ասոր ամենէն Հետաքննական և ճոխ մասն է Գ Գալուսթիւնն, յորում պատմէ Գաղկայ՝ որբւոյ Գրիգորի Կերենկայ գործերը, և աւելի քան զպատերազմականն՝ իր խորագիտութեամբ այլ և խորամանկութեամբ՝ թագաւորական փտաց հասնելն . և այլ աւելի իր պերճափառ շինուածքն յԱղթամար կղզի, ապարանքն և Ս . Խաչ եկեղեցին, որոյ հազար տարուան քանդակք ինչ զեռ մնան . Ոստանայ, Շամիրամակերտի և Արտամէտի և ուրիշ կողմեր այլ՝ թէ՛ քաղաքական և թէ՛ կրօնական շէնքերն, զորս ճարտասանութեամբ և բանաստեղծութեամբ մեծ աշխուժով նկարագրէ ոչ միայն ակնատես, այլ և ինչպէս կ'ըսէ տեղ մի, « Իմով » իսկ ձեռօք շօշափեալ » : Գաղկայ կ'ինն այլ Մլրթի թագուհին, զուստրն Շապհոյ իշխանի, իրեն պատշաճ մեծանձնութիւնը ցուցած է բարեպաշտական գործովք և տրովք, որոյ մէկն այլ հիմայ մեր ձեռքն է, հազարամեայ Աւետարան մի՝ իր ձեռագիր յիշատակարանաւ :

Թովմասու վեհազն Գագիկն վախճանած է 940 թուականէն վերջը, զոր չի յիշեր պատմիչն, ապա թէ ոչ յուղարկաւորութեանը ճոխ նկարագրութիւն մի պիտի ունենայինք, ինչպէս Տրդատայն ի Խորենացւոյ. ըսել է որ ինքն Թովմաս անկէ առաջ վախճանած է: Իսկ Արծրունեաց պատմութիւնը շարունակեր է անանուն մէկ մի, կամ յաջորդաբար ոմանք՝ մինչեւ ի Թ.Պ. դար, բայց ոչ ոճով և երկար գրուած. և այս շարունակութիւնն կամ Յաւելուածն, է Գպրութիւն մի համարուի Թովմայի Պատմագրութեան:

Յայտնի չէ թէ Պատմութենէն զատ ուրիշ բան գրած ըլլայ Արծրունին: Իր ժամանակին մօտ յիշուի Թովմաս ոմն վարդապետ, կրօնական խնդրոյ վրայ հարցընող և գրող, բայց չի կարծուիր մեր պատմիչն:

Իր գրուածին ոճին և կամ ճաշակին, իրր ըսածներնուս հաւաստիք, կրնան ընծայել Հայաստանումիս Բ Մասին Յօդուածքն՝ 20. 41. 207. 209-12. 224-5:

Թովմայի Պատմութիւնը ծայրէ ծայր փռանկերէն թարգմաներ և տպագրեր է ի Բեդրպուրկ, յամի 1874, Մ. Արոսէ, (Th. Ardzronni - X^e. S^o., Histoire des Ardzrouni; traduite par Brosset, St.-Petersbourg, 1874), ոչ սակաւ ծանօթութեամբք, այլ տեղ տեղ թէ թարգմանութեան և թէ տպագրութեան սխալանօք, հանդերձ երկար յառաջարանութեամբ և Յաւելուածով Արծրունեաց պատմութեան:

57. Մ Ե Ս Ր Ո Վ Պ Ե Ր Է Յ

Ինքնին ծանուցանէ իր ժամանակը (գրելով յամի 967), և հայրենիքը՝ Սիւնեաց Վայոց-Չոր գաւառի Հորոցմանց գիւղն, ուստի էր Ս. Յովսէփ կաթուղիկոս ընտրեալն և նահատակեալ ընդ Ղեւոնդեանս, որոյ և ազգակից կ'անուանէ զինքն: Իր պատմական գործն է Մեծին Ներսիսի Պարթեւի վարքն, համառօտելով անոր նախորդ հայրապետաց՝ Լուսաւորչի որդւոց և թոռանց յիշատակն այլ. իսկ Ներսիսին և անոր ժամանակի պէսպէս զիպուածներն, Արշակայ և որդւոյն Պապայ՝ ընդարձակօրէն գրէ, շատ կարեւոր՝ միանգամայն և յօժարընթեռնի զիպուածներով, թէ և շատն ողբալիք են, և մասամբ միայն յիշուած ի Բուզանդայ և ի Խորենացւոյ. իսկ ինքն Մեսրոպայ անոնցմէ աւելի՝ քաղեր է իր գրածներն ի պատմութենէ « Հայոց Մնացորդաց յԱրեւելից գրոց » . զոր յիշեցինք իբրեւ գործ Աբրահամ Խոստովանողի, (Տես թիւ 12), եթէ նոյն է ընդ պատմութեան Արեւելեան Վկայիցն:

Որչափ այլ Մեսրոպայ իր կողմանէ կամ իր ժամանակի նորութիւն չի պատմեր, դարձեալ մեծ երախտաւոր է՝ մեր ն. դարու կորուսեալ Թարգմանչաց անուշակ ճաշակն ընծայելով մեզ, յորս համարի իրենց մեծ վարդապետն և հայր գպրութեան մերոյ Ս. Մեսրոպայ Մաշտոց, որ եղած էր աշակերտ և պաշտօնեայ և ընթերակաց մահուան Մեծին Ներսիսի, հաւանօրէն և գրող վարուցն, յորմէ աներ է այս իր անուանակից Երէցն, և այլք: Վերոյակնարկեալ Պ. դարու զիպուածներն շատ զգալի և սրտաշարժ պատմէ Մեսրոպայ՝ նոյն իր հանդարտ և պարզ ոճով և յստակ լեզուով: Յիշատակաց մէջ նշանաւոր է Հայոց ազնուական տաճից և

Թագաւորական ատենի կամ հանդիսից մէջ սահմանեալ դասակարգութիւնն, որ Գահք կամ Բարձք կ'ըսուին, ժողովոց կամ կոչնոց ատեն այլեւայլ ձեւով անթոռոց և բարձից վրայ բազմեւնուն համար, և շորս հարիւրէն աւելի էին, յորոց հարիւր վաթսուն մի կարգաւ գրուած գտնուի ի պատմութեանն, մնացածները ձանձրանալով՝ լռէ, և «Շրանք» համարեցայ արկանել ընդ գրով», ըսելով՝ ինքզինքն անմեղադրէ:

Այս օրինօք սահմանեալ դասակարգութիւնն երբեմն փոփոխէին կամ հաստատէին թագաւորք մեր, և յետ բարձման մերոցն՝ թագաւորքն Պարսից. ինչպէս ընել տուաւ Ս. Ներսէս՝ Արշակայ. իր որդին Ս. Սահակ այլ Պարսից Վրամ՝ թագաւորին. որոյ հին գրուած մագաղաթի մասն մի (եթեթանասուն գահ) գտնուած և հրատարակուած է նմանատիպ ի Տեղագրութեան Այրարատ աշխարհի (երես 430):

Յիշեցինք պատմագրութեան թուականը (967), զոր անտարակոյս կ'ընէ և վկայելն՝ թէ «ի վե» ըրդիտողութեանն Տեառն Վահանայ Հայոց կա» թուղիկոսի». որ արդարեւ միայն 966-7 թուականաց միջոց եղած է կաթուղիկոս: Սակայն վրայ բերելն «Եւ յամս Աշոտոյ Բագրատունւոյ Հայոց» թագաւորի», ձիշդ չէ. զի իրագործութիւն թագաւորութեանն՝ քսան տարի վերջ եղած է: Բայց արդէն առաջ այլ իբր իշխանաց իշխան կերպով մի թագաւորական շուք ունէր. և թերեւս զրոց օրինակողքն՝ իշխանի տեղ բագաւոր գրած են: Անհաւանական չէ որ ինքն Մեսրոպ այլ յետոյ տեսած ըլլայ Աշոտոյ թագաւորելը:

Հեղինակն կ'իմացընէ եւս ինամով՝ թէ իր գործը «Ետու օրդիացելոյն խնոյ սուրբ աւաղա» նին ծննդեամբն՝ Վահանայ Մամիկոնեանոյ, ի» զիւղն որ կոչի Վարժի»: Այս գիւղս չի յիշուիր ո՞ր գաւառի և ո՞ր նահանգի մէջ էր, ի Տարօն, թէ ի Սիւնիս՝ ուր կարելի է եկած էին ծնողք

Վահանայ և սա հօն ծնած, և մկրտուած ի Մեսրոպայ Երիցուէ: Սիւնեաց Սոթք գաւառին մէջ յիշուի Վարժակ աղբիւր անուամբ տեղ մի, և գաւառն չէ հեռի ի Վայոց-Չորոյ և Հողոցմանց գիւղէ իր հայրենեացն: Թերեւս աւելորդ էր մեզ զայս յիշել. բայց ուզեցի ասով և ասոր նման Մեսրոպայ անդրադարձընելն ի յիշելն զՍ. Յովսէփ՝ թէ սա թէպէտ կաթուղիկոս էր, բայց դեռ ոչ ձեռնադրեալ եպիսկոպոս, և ցուցընել թէ ինչպէս հեղինակս մանրամասնաբար քննած և պատմած է, որով և վստահութեամբ ընդունելի է, և փափագելի որ աւելի շատ այլ գրած ըլլար, կամ հնագոյն ձեռագիրք գտնուէին իր գրոց:

Իր գործն բաւական կանուխ տպագրուած է, 1775 տարւոյն, և օտար աշխարհի մէջ, ի Մատրաս Հնդկաց, ազգասէր Յակ. Դամիրեանի ձեռօք: Նորերումս (ի 1853), ի Վանս մեր, ի շարս Սոփեայց հրատարակուած է (Հար. 2): Փոանկերէն այլ թարգմանուած Յովհ. Ռափայէլեան երիտասարդին ձեռօք և տպագրուած է ի շարս Պատմացն Լանկուրայի, ի 1869:

Մեսրոպայ պատմագրութեան ճաշակ մի կ'ընծայեն, յ'Բ Մասին, Յօդուածքն 102. 103. 106:

58. Պ Ա Ն Գ Ա Լ Է Ո Ն Ք Ա Ն Ա Յ Ս

Գրեթէ Մեսրոպ Երիցու գրած տարին կամ երկու տարի առաջ (965) այս յոյնանուն Երէցս այլ պատմական յիշատակ թերթ մի թողած է, զոր կ'անուանէ Խօսք (վասն) «Գիւտի Մատինն» Սրբոյ Առաքելոյն Պետրոսի, թէ զիւրդ եղև կարումն, կամ սրպէս բերաւ ի Հայս»: Դարագրութիւնն կամ լեզուն պատշաճ է դարուս (Փ.), քիչ մի ճոխարանութեամբ. այլ աւելի մեծարան

է պատմութիւնն, եթէ բոլոր գրուածն այլ հարազատ հեղինակին է և ոչ օրինակողներէ աւելցուած. բայց գրուածն գտնուի և իբր ծի. դարու հին ճառընտրաց մէջ: Մեծարանութեան օրինակ ըլլայ ժամանակին Արծրունեաց թագաւորին համար գրելն (որոյ կողմանէ պատգամաւոր կ'երթայ ի Կ. Պօլիս) Երկրորդ Տիեզերակայ, արքայից արքայ, և այլն: Սակայն ստոյգ համարելի է ինչ որ ինքն իր համար կ'ըսէր թէ երբ մտաւ ի Ս. Սոփիա ի տօնի Յայտնութեան Տեառն և տեսաւ այն փառաւոր տաճարն անթիւ կանթեղօք և մօմեղինօք լուսաւորեալ, « Հիացեալ ուշ յապուշ զարմացմամբ » մնաց և յափշտակուելով մտօք սկսաւ ինչ որ « Բղխեաց » յիս Հոգին Սուրբ, բանս բարիս ներբողականս » և գրուատելիս խօսել, ի խորանն լուսոյ, հառաւ » չագին արտասուօք. զի ոչ գիտէի զիս յերկրի, » այլ յափշտակեալ մինչև և յերբօրօք երկինս »:

Հիացմանն ատեն խօսած ներքողակաւք լսողք զարմանալով, ներկայացուցին զինքը Նիկեփոր կայսեր. որում մատոյց իր թագաւորին կողմանէ բերածը, և ընդունեցաւ փոխարէն՝ ընծաներ: Եօթն ամիս կենալով ի մայրաքաղաքին, շատ բան քններ տեղեկացեր է Պանդալէոն: Ամենէն աւելի փընտըւածն էր Ս. Պետրոսի Առաքելոյ նշխարք մի: Կ'ըսեն իրեն, թէ ատենօք Յուստինիանոս կայսրն ինդրեր և բերել տուած էր ի Հսոմայ, բայց Հոովմայեցիք յետոյ ծածուկ գողցան: Հօս Պանդալէոնի պատմութիւնն շիտթի. վասն զի նախ կ'ըսէ, թէ դառնալով ի Հայո՝ հարցուցեր է աւանդութեան մի վրայօք, և Յակովբ Հայոց մարգպանն պատմեր է իրեն. յետոյ կ'ըսէ, թէ ի Կ. Պօլիս գտած է իր խնդրածը, և Յովսէփ անուամբ մէկու մի ձեռքով յունարենէ թարգմաներ է, աւելցնելով իր տեսածներն այլ:

Իսկ ծուծ պատմութեանն այս է. Տուրուբերանի կողովիտ, կամ Սպաղուսնեաց գաւառի՝ Գոմ Բրծրայրի (կամ Բզրայրի, Բծարի) գեղջ երեցն բա-

նագրեր է տեղւոյն գլխաւորներէն մէկը՝ զինքն անարգելուն համար: Անարգողն յետ մահուան երկրուն զգաստացեր և ուզեր է արձակուիլ բանագրանքէն. բայց զայդ անկարելի գատեր են որոն որ դիմեր է. կամ պէտք է որ կապողն արձակէ՝ ըսելով, կամ Ս. Պետրոս՝ Հոովմի քահանայապետին ձեռօք: Զղջացողը կ'երթայ ի Հոովմ, լայ պաղատի. Պապն երկաթէ շղթայ մի անցընել տալով վըզին, ութ օր սպաշխարել տայ Ս. Պետրոսի գերեզմանին առջև. որոյ շնորհօք շղթաներն արձակուած գտնեն՝ տեսեան մէջ, և զինքն այլ արձակեն ի բանագրանացն: Նա խնդրէ, և նոյն Ս. Պետրոսի եկեղեցոյն մէջ եօթն տարի սպասաւորէ. յետոյ ուզելով դառնալ ի հայրենիսն, փափագի և Ս. Առաքելոյն նշխարք մի տանիլ հետը, և զիչերանց անոր ճկոյր ձատր կտրէ. սակայն պատժուելով՝ իբր կիսամեռ ինկած մնայ: Աստուտուն սովորական ատենին ժամահարը շտելով քահանայք՝ բանան եկեղեցին և գտնան զնա այն զրից մէջ: Իմանան զողութիւնը և կ'ուզեն սպաննել. բայց լսելով աղաչանացն, և Ս. Առաքելոյն ազգամար՝ Պապն ներէ, և նշխարն այլ թողու իրեն. զոր բերելով իր գիւղը ի Բծրայրի Գոմն, շինեն հօն եկեղեցի և դնեն, և կ'ըլլայ տեղին Ախտատեղի: Որչափ և վիպասանական հիւսուած մի երեւի այս, անտարակոյս ստուգութեան հիմն մի ունի: Այս է Պանդալէոնի գրածն, որով ի շարս Պատմաց դասել արժան համարեցաւ:

Թէ և ի Յայտնաւորս ի մայրիս 24 նշանակի այս Պատմութիւնս, բայց Պանդալէոնի գրածն սակաւագիւտ ըլլալով, մեծաւ մասամբն հրատարակեցինք յ' Մատին Հայապատումիս, ի Յօդուածն 234:

59. Ո Ի Խ Տ Ա Ն Է Ս

Նորալուր է անունս մեր ազգին մէջ. ծագմամբ աւելի յոյն թուի քան հայ ուխտ բառէն: Երեք տասաներորդ դարու պատմիչք մեր յիշեն զնա, նոյնպէս և պատմըչաց անուանագրողք. և ոմանք Սոսրբ կոչեն զնա, որպէս և իր գրոց վերնագիրն. աստիճանաւ՝ եպիսկոպոս էր Սերաստիոյ. միայն Կիրակոս՝ Ռաշնայի եպիսկոպոս կ'ըսէ, գուցէ սխալմամբ գրչի: Սերաստիոյ եպիսկոպոս ըլլալն վկայուի թէ՛ այն քաղքին հռչակաւոր Պաշտպանաց՝ Ս. Քառասնից տօնը փառաւորելուն առթիւ, և թէ՛ այն կողմանց Ծաղր կամ Ծաղր կոչուած ազգին պատմութիւնը գրելուն:

Գրութեան ոճն և լեզուն բաւական վայելուչ և կոկ է, միանգամայն և հանդարտ, հետաքնին և հմուտ, և հոգեսէր: Այս յետին նշանակեալ ոգով գրած է իր գլխաւոր գրածը, ըստ իր ձանչցած ճշմարտութեան:

Երեք մասն բաժնած է, զոր ինքն Հատուած կոչէ, իր Պատմութիւնը: — Առաջին. ըստ սովորութեան մեր նախայիշեալ գլխաւոր պատմչաց, սկսի ի սկզբանէ մարդկութեան և նախահարց Հայոց, հասուցանելով ազգային պատմութիւնը մինչեւ ի վերջ թագաւորութեան Արշակունեաց մերոց, հանդերձ յիշատակաւ հայրապետաց: Կրնայ գուշակուիլ՝ որ Խորենացոյ պատմութեան հետեւանք և քաղուած մ'է գրածն, բայց կան ի նմա ինչ ինչ նոր գիտելիք, ինչպէս Ս. Քառասնից վրայօք, ի Եսայիայ Բագրատունեոյ առած Դաւթի թագին պատմութիւնն, Հոչէի և Տրդատայ մենամարտն, սորա Դաշնադրութիւնն ընդ Կոստանդիանոսի, Հայոց սրբազան դասակարգութեան երեսուն արքայնկալ նախապատիւ եպիսկոպոսներն, Ս. Թէոդորոսի

Սմասիացոյ վկայութիւնն, Եուշանկի յՈւփրէթ բերդի տառապիլն, և այլն: — Երկրորդ Հատուածն է իր գլխաւոր և յատուկ գիտած Պատմութիւնն Բաժանեմանն Վրաց ի Հայոց՝ ասոնց Մովսէս և Աբրահամ կաթողիկոսաց և անոնց Կիւրիոն կաթողիկոսի ատեն, որ յարեմտեան Հայս Յունաց մէջ դաստիարակուած, Քաղկեդոնի ժողովոյ խնդրոյն տեղեկացեր և ընդունեեր էր, և երբ ի Մովսէս Վրաց կաթողիկոս ձեռնադրեալ՝ գնաց, կամաց կամաց այն ժողովոյն վարդապետութիւնը ծաւալեց, « Թարգմանել (տալով) զգիրս Զորից Ժողովոցն » որով Հոռոմք վարին, և ի Ս. Անաստաս և ի Ս. Սիովն նոյն քարոզի », և ընդունելի բրաւ Վրաց ասկէ ծագեցաւ տարածանութիւն, վէճ, հակառակութիւն և յետոյ կրօնական բաժանումն այս երկու աղջաց մէջ. որոյ առթիւ երկու կողմէն քանի մի տարի թղթակցութիւնք եղած են, ի ժամանակս Հայոց կաթողիկոսական աթոռոյն պարպութեան՝ յետ Մովսէսի, և Վրքաքեալ քերքոյի տեղապահութեան, յետոյ Աբրահամու կաթողիկոսութեան ատեն: Կիրիոն շատ խոնարհաբար և պատուազրարար գրէ առ գլխաւորն մեր եկեղեցոյն. սա այլ ի սկզբան բաւական ծանրութեամբ. այլ երբ յետ կրկնութեան նման բանից չհաւանեցան իրարու և մեր կաթողիկոսն տիրաբար և սպառնալեօք իմն գրէր. Կիրիոն անօգուտ համարելով աւելի երկար վիճելը, բողբեց առ պատրիարքըն Երուսաղեմի, և որպէս երեւի՝ նաեւ առ քահանայապետն Հասմայ, զի կայ Ս. Գրիգոր Մեծին Պապի թուղթ առ Կիրիոն այս նիւթին վրայօք: Աւխտանէս ոչ միայն այդ երկու կողմանց թըղթերն հաւաքած է, որոց մէկ մասն պակսի իր մէկհատիկ գտնուած ձեռագրին մէջ, այլ և այն փոխադարձ թղթոց ժամանակին միջեւ հանդիպածներն: Կարեւոր տեղեկութիւն տայ այդ թըղթոց և վիճից գրգռման առիթ եղող Մովսէս Հայոց եպիսկոպոսի վրայ, և իր եպիսկոպոսական աթոռ

ուոյն, որ էր Յոշրուսւ, միջասահման Հայոց և Վրաց-
տորա փախչելուն՝ երբեմն ի Յովհաննափանս, երբեմն
ի Գուռին, դիմելն առ Սմբատ մարզպան, Պետրոս
եպիսկոպոսին ստէպ առ Վիրս նուիրակ երթալն,
երբեմն իր կողմանէ այլ կրթով խօսիլն և գրգռելն,
որոյ համար Քաջ կոչեցին զնա Վիրք և գայլօրէն
այլ սպաննեցին լերանց վրայ:

Անշուշտ այս Երկրորդ գրոց կորսուած մասին
մէջ այլ հետաքննական դէպք կային, մանաւանդ
վերջարանն, յորում թերեւս յիշուէր Կիւրիոնի
առ պատրիարքն Երուսաղէմի և առ Սրբազան
Պապն Հռովմայ նուիրակութիւնն: Այս կորուստն
թուի կամաւորաբար եղած. այսինքն այդ վիճաբա-
նութեան մէկ կողմի անհաւանն վերուցեր ջնջեր
է, կողմնատես աչօք և մտօք:

Կարծեմ թէ նոյն տեսութեամբ և Երրորդ Հա-
տուածն կամ դիրքն կորսուած է, որ մեզ աւելի
հետաքննական էր. ժամն զի ոչ միայն այդ Ծաղ-
ագգին կրօնից կամ դաւանութեանն վրայ խօ-
սէր, այլ և մանրամասնաբար յիշէր և տեղագրէր
« զՔառասն և զգիւղս գլխաւորս և զքաղաքս և զգ-
» րերդս՝ Իւրաքանչիւր գաւառօք, որ են յաշխար-
» հին յայնմիկ, որպէս և կամք քո (Անանիա Նա-
» րեկացի) հրամայեցին, և զՎանորայս հանդերձ
» վանականօք, անոռամբ Իւրաքանչիւրօց »: Այս-
պիսի յատուկ տեղեկագրութիւն ոչ օք ի մերօց
պատմչաց ըրած է, կամ յիշուած. ժամն որոյ և
կսկծալի է կորուստն, թերեւս աւելի եւս կորու-
սիչն: Վասն զի այդ Ծաղն, որ ըստ նշանակու-
թեանն ձեղքուած բաժնուած, ծած ծրդած նշա-
նակէ, և հիմակուան Կեսարիոյ և Սերաստիոյ մի-
ջեւ դեռ մնացեալ Հայ-Հոռոմներն են, այդպէս կո-
չուեցան ի Հայոց Քաղկեդոնի դաւանութիւնն ըն-
դունելուն համար, ինչպէս նաեւ Յունաց ծէսերն
և աղօթքներն (որք կան մնան և առ մեզ քանի
մի հարիւր տարուան ձեռագրաց մէջ):

Այս Երրորդ գրոց վերնադիրն, « Յաղագս Միլը-

» տաքեան ազգին այնմիկ Ծաղ կոչեցեալ », կըր-
նար կարծուիլ՝ թէ անոնց Մկրտութեան ձեւն և
արարողութիւնը նշանակէ. սակայն այդ ձեւին հա-
մար միայն, այդչափ երկար տեղագրութիւն չէր
արժեր: Թուի (թէ և չուզեմ զՈւխտանէս նուսա-
տացընել) սա էր ազգայնոց եռանդեամբն և կար-
ծեօք վառեալ, այդ Ծայդերը (մասամբ) դարձու-
ցեր է իր եկեղեցւոյն դաւանութեան, և կրկին
մկրտել հարկաւոր և օրինաւոր համարած ըլլայ,
ինքն կամ ուրիշ մի. ինչպէս Ռուբինեանց թա-
ղաւորութեան ժամանակ այլ կ'ընէին եռանդնամը
Հայածէսք և Լատինածէսք:

Վերը փակագծի մէջ յիշուեցաւ Անանիա Նա-
րեկացին, ոմանք սորա աշակերտ կարծեն զՈւխ-
տանէս. յայտնին այս է որ բարեկամն էր, և անոր
խնդրով գրէ իր եռահատուած Պատմագրութիւ-
նը, ինչպէս իմացընէ երկար և քիչ մի ձանձրա-
նալի Յառաջաբանութեանը մէջ:

Ուխտանեսի Պատմութիւնն փոսնկերէն թարգ-
մանութեամբ հրատարակեց Պրոսէ ի Բեդրպուրկ,
ի 1870: — Արդէն շատ տարի առաջ այլ բանա-
սիրական օրագրաց մէջ այդ գրոց վերայ տեղեկու-
թիւններ տուեր էր Պրոսէ:

Ուխտանեսի գրուածներէն են Հայապատումիս
Բ Մասին Յօդուածքն 178. 180:

60. ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՅԻ

Մեր նպատակին համար ամենէն կարեւոր տե-
ղեկութիւնն Անանիայի համար՝ տուած է նախա-
յիշեալ Ուխտանէսն: Ուրիշներն այլ շատ գոված են
զինքն՝ սկսեալ իր եղբօր թոռնէն Ս. Գրիգորէ, թէ
վարուց մաքրութեանն և թէ՛ գիտութեան և վար-
դապետութեանն համար. այլ զարմանք է՝ որ նա որ

զինքն աւելի պէտք էր գովել և պաշտպանել՝ Հայոց կաթողիկոսն ժամանակին և անոր անուանակիցն՝ Անանիա Մովկացին՝ անշուշտ ուրիշներու քսութեամբ անոր հաւատոց վրայ կասկած ունենալով յայտներ է խիստ գրուած թղթով մի՝ (ինչպէս առ Խոսրով Անձեակցի, հայրն Ս. Գրիգորի Նարեկացոյ) իբրու թէ Թոնդրակեցոց համամիտ ըլլայ. զորս Անանիա նզովէ և հերքէ իր պատասխանոյ կամ՝ անձին ջատագովութեան գրուածով մի: Թուի ինձ թէ ոչ Թոնդրակայ, այլ Քաղկեդոնի համախոհ ըլլալուն համար ամբաստանուած ըլլայ և Մովկացիէն մեզ դադրուած:

Թողլով այս խնդիրս կրօնաբանութեան, և Անանիայի այլեւայլ գրուածոց քննութիւնն այլ՝ մատենաբանութեան (որք յիշուած են ի Պատմութեան Հայ. հին Գպրութեան, Գ. տպագր, էջ 532-4), յիշեմք մեր քննելին, որ է Պատմութեան Հայոց: Զուգադէպ իմն է՝ որ Անանիա խնդրեր է Ռուստանիսէ ինչ որ գրեց և քիչ առաջ ծանուցիւնք. Ռուստանէս այլ կերպով մի խնդրէ Անանիայի գրածն: Սորա խնդիրն՝ Վրաց բաժանման պատմութեան, մեր վերը յիշեալ կարծեաց փաստ մի ընծայեն, թէ Անանիա ուզած է տեղեկանալ այն խնդրոյ առթիւ կրօնական դաւանութեան մասին եղածն և ըտուածն: Իսկ իր գրածն ի՞նչ նպատակաւ կամ ի՞նչ ոճով էր, այսչափ կ'իմացընէ Ռուստանէս գրելով անոր. « Լուեալ էր մեր յաղագս » Պատմութեանցս սակաւ հատուածով, յ'սկզբանց » թագաւորացն Հայոց՝ մինչև ի մեզ... Զուրախա » ըրա զիր Պատմութեանց Հայոց, փոքր հատուած » ծովք, որպէս վերագոյն ասացաք. զոր արարեալ » առ ի միթարութիւն ընթերցողաց... Յիշա » տակեալ զայս եւս Պատմութիւն հայցելի գրով » իմով »:

Երկու բան կ'իմանամ այս կրկին կրկին ըսածէն... որ Անանիա՝ մեր ուրիշ պատմչաց սովորութեամբ ազգին բովանդակ պատմութիւնը գրած է,

այսինքն Հայկազանց և Արշակունեաց. — Բ. որ փոքր հատուածովք գրեր է, այսինքն համառօտ, կարճ գրչիս կամ հատուած բաժնելով: — Բայց հետեւընեմք Գ., որ առանց կարեւոր պատճառի այնպիսի ծանրագլուխ հեղինակն չէր գրեր միայն այդ սակաւ կամ փոքր հատուածները. հարկաւ մեծ հատուածովք բան մ'այլ գրած է, կամ իր ժամանակին պատմութիւնը, կամ աւելի վեր երթալով՝ կրօնական եղելութիւնքը. և կասկածիմ որ ինչպէս Ռուստանէսի՝ եւս առաւել սորա գրածն այլ հակախոհք անհետ ըրած են, կամ շատ չէ օրինակուած, և կորուսելոց և փափագելեաց կարգին մէջ մնայ: Իսկ համբաւէն և ուրիշ իրեն անուամբ յիշուածներէն հարկ է յուսալ թէ խոհական գրուած մ'էր այդ Պատմութեան:

Իրմէ առաջ յիշուած ըլլալով Նարեկայ վանքն՝ Անանիա համարուի հիմնադիրն և առաջնորդն, գոնէ ամենէն զլիսաւոր առաջնորդն, ինչպէս ամենէն երեւելի միաբանն այլ եղած է իր եղբոր դստեր և Խոսրով եպիսկոպոսին որդին,

61. Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

Այնպիսի անձանց թոռն և որդի ընծայուած ի կէս ժ. դարու, իբրեւ ի ծնէ ծծած է անոնց բարեպաշտութեան հոգին, և իրեն նման հոգեկիր Ներսիսի Լամբրոնացոյ կշռադատ կոչմամբն՝ Հրեշտակ ի մարմնի երեւեալ, շնորհաց զաւակ: Մեր Ս. Լուսաւորչի արժանապէս երախտագէտ որդեք՝ անոր Գրիգոր անուամբ շատ և շատ անգամ կնքեր են և կնքեն իրենց զաւակները. բայց անոնց մէջ յետ նախաձոր մեր Հաւատոց՝ Նարեկացին եղած է ամենէն արժանաւորն, համբաւաւորն և սիրելին: Լուսաւորիչ Գրիգորն յարգուի և

սիրուի հայրաբար. իսկ Նարեկացի Գրիգորն գգուի որդիաբար, և թերեւս զժուարինն ըլլայ ըսել թէ սրն աւելի ժողովրդական (populaire) եղած է ազգիս: Եւ զժուարագոյն է քիչ խօսքով բացատրել Նարեկացեոյս բարքն ու բանքն: Վասն զի Գրիգոր Նարեկացի շատ դիմօք իսկատիպ անձ և զրիչ մի եղած է, և ամէն տեսակ գրութեանցը մէջ նոյն իսկական և սեփական կերպարանքն յայտնուի: Սակայն որչափ այլ նոյն և նման ըսուի կերպարանքն, աւելի դիրին է յամենայնի գերազանց ինչ ըսել՝ քան բացատրել զայն:

Նոյն իսկ իր վիճակն մեր եկեղեցեոյ դասուց մէջ Սրբաբեան գերագանց կօշմամբ՝ նշանափայլ է, վասն զի ի կիսոյ Յ. դարու մինչեւ ի կէս ժ-ին, յորում ինքն ծնած է՝ ուրիշ ազգային եկեղեցական մի չի տօնուիր մեր մէջ, և ոչ ոք իրրեւ Հայր մի եկեղեցեոյ համարեալ է յետ Ս. Թարգմանչաց՝ որոց դասակարգեալ է, և յետ նորա ոչ այլ ոք՝ բայց երկու Ներսէսքն, Ծնորհային (Կլայեցի), և Սիրելին (Լամբրոնացի): Ըստ անուանակոչութեան յետնոյս՝ Գրիգոր Հրեշտականամանութիւնը ոչ միայն երկնաթռիչ աղօթիւք՝ իր վանաց անուամբ կոչուած Նարեկ գրովքն յայտնէ, որ իր Գործոց զլուին է (Chef-d'œuvre), և յետ մեր քանի մի եկեղեցական կանոնական գրոց (պատարագի, ժամերգութեան) ամենէն շատ առ Աստուած նուիրուած աղօթքն է, Ծնորհալոյ Հաւատով Խոստովանիւմին մրցակից, այլ և ուրիշ ամէն գրուածոց մէջ այլ հրեշտակային թեւօք թռչի, հրեշտակաձայն նուագարան մի հնչեցընէ, հրեշտակափայլ մաքրութիւն մի արտայայտէ. գոր և հաւատտեն որչափ ինչ ծանօթ է իր վարքէն և աւանդութենէ, ինչպէս իր հւատոց ուղղութիւնը ցուցընելու համար՝ մորթած և խորոված աղանիները ողջ ողջ թուցընելով, Վանայ Ծովուն եզերքէն լրին վրայ քայլելով երթալն յԱրտեր կղզի (Ս'ն Տիւր ստուգարանելով) առ Տիրաւայրն, գոր հրեշտակային աչօք տեսնելով՝ կ'երթար

և կ'երգէր յետոյ մեղի նկարագրելով զՆա, « Աչքն » ծով՝ ի ծով ծիծաղախիտ, — Ծաւալանայր յաւ » աւառուն », և այլն: Այսպէս՝ ոչ միայն ասոր նման իր Տաղից և Գանձոց մէջ, այլ և Ճառից և Մեկնութեանց մէջ՝ վերաթռիչ և հոգեբակ է: Եւ աւելի զարմանալին այս է, որ գեանէն կուտ մի յափշտակող և վերացող թռչնոց նման, երեւակայութեան տակ ինկած չնչին ճճի մ'այլ ըլլայ՝ վերացընէ աղնուացընէ հոգեգարգէ սըրբացընէ աղօթիցը մէջ:

Չասոնք թողով հիմայ կամայ ակամայ, և ակնարկելով ի Պատմականն՝ ըստ բուն մեր գիտման, յԱպարանից Խաչի Պատմաբիւռն կոչուածն, կըրնայ ըսուիլ թէ ոչ միայն մերազգի պատմական գրուածոց, այլ թերեւս և ամենայն ազգաց՝ սա գերաթուոյց պատմուածն է. կարծես թէ ոչ միայն մտօքն (իմաստիւք), այլ և շարաբանութեամբն թռչի, և անկարելի կ'ընէ ըմբռնել զկարգն և թարգմանել հաւասար բարձրութեամբ և խորութեամբ. հարկ է ընթերցողին՝ անոր զժամ զօրային ճամբուն միջէն նոյնպէս թռչըտելով հետեւի որչափ կարենայ:

Պատմութեան նիւթն այս է. իր հայրենեաց երկրին (Անձեւացեաց կամ Ռչտունեաց) դրակից Մոկաց երկրին մէջ անուանի վանք մի կար Ս. Խաչ անուամբ. տեղւոյն Գառիթ եպիսկոպոսի եղբորորդին ագնուական մի կ'երթայ ի Կ. Պօլիս առ կայսրն Վասիլ, սիրուի և պատուի, խնդրէ և ընդունի մասն մի Ս. Խաչին Քրիստոսի և ուրիշ տնօրինական նշխարներ, որոց համար հանգուցեալ Գաթիլի քեռորդին և յաջորդն Ստեփանոս եպիսկոպոս եկեղեցի մի շինէ, և անոր Նաւակատեաց համար խնդրէ ի Գրիգորէ որ ներբողեան մի գրէ Ս. Խաչին. յետոյ նաեւ զՊատմութիւն յիշեալ Կենաց փայտին և միւս նշխարաց բերուելուն: Գրիգոր գրէ զայն իր յիշեալ սճովն, նաեւ բարձր և խոր աստուածատես հոգևով և մտօք՝ Ներքող մի ի

Ս. Խաչն, որ իրաւամբ աստուածաբանական կրնայ կոչուիլ: Այլ պակաս է քան զայն և Ներբողն ի Ս. Աստուածածինն, զոր հիացմամբ երկարօրէն բացատրած է ի սկզբան անցեալ դարու մեր աստուածաբան և հայկաբան Առնոյիքեան Հ. Գարրիէի Վարդապետն: Առաքելոց և Ս. Յակովբայ Մծրեացոյ զրած ներբողականքն այլ՝ եթէ չեն այնքան բարձրաթռիչ, այլ և ոչ հետեւակ: Գր. Նարեկացի յամէն զբրուածսն եւս՝ Գր. Նարեկացի է: Արպիսի և է առարկայ ըլլայ իր գրելիքը, եթէ անձն, եթէ բնութեան կամ երկրի դիրք մի, տեղ մի, շէնք մի, գործ մի, հեղեղօրէն թափէ նկարագրութիւնը, և հրեղինօրէն փայլեցընէ:

Շատեր ջանացեր են Նարեկացոյ Աղօթքն և այլ ինչ գրուածք բացատրել կամ յոտանաւոր չափ վերածել, այլ միշտ իրմէ շատ վար մնացեր են:

Յիշեալ պատմական գրուածին ճաշակ մի ընծայեն, յ'Բ Մասին, Յօդուածքն 231-2:

Իր ամենէն ծանօթ Աղօթագիրքը՝ Նարեկը՝ կարգացողք կրնան հաւանիլ, թէ այնպիսի կրակ կրող հոգին չէր կրնար շատ դանդաղիլ մարմնոյն մէջ, և զարմանք իսկ է սովորական կենաց միջօրէին հասնելն այլ, ինչպէս և Լամբրոնացոյն. սա յիսնամեկին այլ չէ հասած, Գրիգոր հազիւ լցած զայն. երկուքն այլ իրենց դարուն կիսուն ծնած են, Նարեկացին հազիւ ԺՎ-ին դուռը մտեր է, միւսն չէ հասեր ԺԳ-ին: Երկուքին համար այլ կ'արժէ Իմաստնոյն վկայութիւնն, « Ի սակաւուն » ելից ժամանակս երկայնս ». Լամբրոնացոյն մեզի հատուցած գրուածներն ակներեւ ճմարտեն ըսածս. իսկ Գրիգորէն կամ մեղ չէ հասած ամէն զրածն, կամ տեսութեան՝ հովուութեան պաշտօն և պարտք շունենալով, ինքզինքն աւելի մտածութեանց, հոգեւոր թռչանաց, հեծութեանց, հառաչանաց տուած է, քան զրով և մրով զանոնք յայտնելու:

Մեզի ծանօթ ամբողջ գրուածքն, որ են Նարեկ աղօթագիրքը, Մեկնոչքիւն Երգոց Երգոյն, Պատմոչքիւն Խաչիկ Ապարանից, Ներբողք Սրբոյ Խաչիկ, Սրբոյ Աստուածածնի, Առաքելոց, Սրբոյն Յակովբայ Մծրեայ, Գանձք և Տաղք եկեղեցականք, և Խրատական բանք վասն ոռիղ հաւատոց և մարտք վարոց առաքիկոչքեան, ամիսփուած են տպագրութեամբ ութածալ հաստկեկ հատորի մի մէջ, տպագրեալ ի Վանս մեր ի 1840: (Իսկ Նարեկն այլ և այլ անգամներ տպուած է, նոյնպէս ի Վանս մեր, և այլուր):

62. Ս Տ Ե Փ Ա Ն Ո Ս Ա Ս Ո Ղ Ի Կ

Տասներորդ դարու Պատմչաց շարք կնքէ սա, իր գրածը մինչեւ ի 1004 թուականն հասցընելով: Վարդապետ ըլլալը վկայուի զինքը յիշողներէն, որք և միշտ գովութեամբ և պատկառանք յիշեն, մանաւանդ մեծահանճար Մագիստրոսն Գրիգոր¹, որ « Երջանիկ և ծայրագոյն ծեր », և Առողնիկ կ'անուանէ զնա. ուրիշ ոմանք այլ այսպէս և տառիւ Առողնիկ գրեն, որոյ պատճառն յայտնի չէ, բայց համարուի շատ աւանդութիւններ կամ խրատներ ըսելուն համար, և կամ ըստ ոմանց երգեցողութեանն համար: Հայրենեօք ի Տարօնոյ համարուի. բայց պատմչաց շարակարգ մի գատելով երկու Ստեփանոս՝ դնէ զմին Առողիկ Վարդապետ, զմիւսն անմիջապէս անկէ ետեւ՝ « Ստեփանոս Տարօնացի և » զրող ի խնդրոյ Տեառն Սարգսի կաթողիկոսի »: Ասողիկ առաջին է իրմէ առջի Պատմիչները կար-

1. Գրիգոր Մագիստրոս ծանուցանէ որ Ասողնիկ գրեր էր Երեմիայի մարգարէութեան Մեկնութիւնը, որոյ օրինակը խնդրէր իր մէկ բարեկամէն:

գաւ յիշող, ինն թուով, հինգն՝ Գ. և Ն. դարուց ծանօթքն, միւսքն՝ Սերբոս, Ղեւոնդ, Շապուհ, և Յովհաննէս Կաթողիկոս:

Աւետանէսի նման իր Պատմութիւնը երեք Հատառձ կամ գիրք բաժնած է, և նման անոր և ուրիշներու՝ Առաջին գրոց մէջ քաղելով իրմէ առջիններէն՝ մանաւանդ ի Խորենացոյ՝ համառօտէ ըզպատմութիւնն Հայկազանց և Արշակունեաց՝ մինչեւ ի Տրդատ: — Երկրորդ գիրքն՝ ասկէ մինչեւ ի թագաւորութիւն Բագրատունեաց. յայտ է որ ասոնց մէջ ոչ կամ քիչ նոր գիտելիք գտնուին: — Իսկ Երրորդ գիրքն, որ Բագրատունեաց ժամանակի պատմութիւնն է, կարեւոր մասն է. ոչ միայն զքաղաքավար անձինս յիշելով՝ այլ և զնշանաւոր գիտնականս և վարդապետս ժամանակին:

Յափշտակիչ հանճար մի չի փայլեցըներ, այլ հանդարտ, խոհական և բաւական յստակ լեզուով գրիչ, որով իրմէ առաջնոց մօտենայ քան վերջնոց: Արշափ այլ իր պատմածներն շատ բան չեն, բայց իր ծանր և ճմարտասէր ոգւոյն համար յարգելի են:

Քանի մի անգամ տպագրուած է բնագիրն: Կարեւոր և հմտալից ծանօթութեամբք տպագրութիւն մի եւս ըբաւ 1885ին, ի Մոսկուա, Ստ. Մալխասեանց: Առսերէն այլ թարգմանուած է յԷմինէ՝ ի Մոսկուա, ի 1864. Իսկ ի փոսնկերէն մէկ մասն՝ պիտանի ծանօթութեամբք Տիւրքիէի՝ ի Բարիզ, ի 1883:

Ատղերկայ են յՔ Մասին գրոցս, տասն Յօդուածք, այսինքն 227-9. 236-41:

63. ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԿՈԶԵՌՆ

Մետասներորդ դարու Պատմչաց նախագասուի այս մականուամբ այլ վարուքն այլ այլանշան անձը. յայտնի չէ ի՞նչ պատճառաւ կոչուիլն Կոզեռն՝ որ ուղտու ձագ նշանակէ¹. Իսկ վարուց համար ակնարկածս՝ իր վրայ աւանգութեանն համար էր, թէ ճգնողական և զղջական կեանք մի անցընելէ գատ, իրրեւ 1035-6 թուին պատահած արեւուխաւարմանէն² գուշակելով աշխարհիս կատարածի մօտենալն, ողորց և արտասուաց մէջ ընկզմեր է, և գրեր է զայն. որ չերեւիր հաւանական, ոչ տեւսիլն և ոչ գրածն. բայց թուի թէ իր օրերուն Սելչուկեանց և Տուզբիլ Սուլտանին աշխարհակալութիւնքն և արշաւանքն՝ ազգած ըլլան իրեն մեծ սարսափ և կասկած մի. զոր անշուշտ ստուգուպէս գրած պիտի ըլլայ՝ իր Պատմութեան մէջ, որ մեզի համար դեռ ցանկալի է, զի չի գտնուիր հիմայ:

Մխիթար Այրիվանեցի երկու անձն բաժնէ գտա, մէկը Կոզեռն կոչելով, և անկէ անմիջապէս յետոյ Յովնաննէս վարդապետ Տարսնեցի. բայց Արիստա-

1. Թերեւս շատ ծնրաբարութենէն ծուկերն կաշիւացեալ և կծկած ըլլալով, վասն զի ուրիշ ոմանք այլ ի նախնեաց այդ նմանութիւնը տան շատ ծնրաբարուլաց:

2. Մխիթար Այրիվանեցի 1051-41 թուականաց միջոց նշանակէ. « Արեգակն խաւարեցաւ ի Քաղց ժԳ, » յուրբաթու, ի մէջօրէի. և արձակեցաւ սաստանայ », և այլն: Ստուգիւ ըստ աստեղագրաշինից հաշուին՝ 1036ին ապրիլ 29ին, օրհասարակին, բոլորական խաւարումն եղեր է արեգական, Ասիոյ արեւմտեան հաւաւային կողմերում տեսանելի. որ յարմարի Այրիվանեցւոյն նշանակած ժամուն. բայց Քաղց ամսոյ թիւն ստոյգ է թէ սխալ չգիտեմ:

կէս Լատտիվարտցի՝ որ իրմէ քիչ վերջն է, յայտնապէս նոյնութիւնը ծանուցանէ. զի տեղ մի Յովհաննէս վարդապետ Կողեան կոչէ, յետոյ յիշելով զՍտեփանոս Ստոզնիկ՝ յարէ. «Եւ Յովհաննէս ի նոյն (Տարօն) գաւառէ, զոր վերադիր անուամբ » Կողեան կոչէին » :

Յիշեալ Այրիվանեցին, երկու բաժանողն, ի կարգի ժամանակագրութեանն՝ (ի Հինգ հարիւր թուին Հայոց, որ է 1054) գրէ. «Յովհաննէս Վր. Տա» րօնացի արար զՊատմոռքիւն Բագրատունեացն, » հրամանաւ Տեանն Պետրոսի » կաթողիկոսի : Որչափ Պատմիչք Բագրատունեաց. Եագուհ, Յովհաննէս Կաթողիկոս, Ստոզնիկ, Կողեան, և այլք յետագայք. գովելի սովորութիւն՝ թոչուն ժամանակին դիպուածները բռնելու և աւանդելու, որ թէ և շատերը թոռուցեր կորուսեր են, գոնէ ոմանք ապրած հասած են մեզ : — Պատմագրաց Յանկ մ'այլ յատկապէս կարգէ. «Յօհան Տարօնեցին, » որ է Պատմութիւն Բագրատունեաց » : Ուրիշ մի աւելի ընդարձակօրէն, «Յոհաննէս Կողեան՝ որ » ինչ ի ժամանակս իւր » . յորմէ կրնամք կարծել թէ ոչ սոսկ Բագրատունեաց ցեղի կամ թագաւորացն պատմութիւն էր Կողեան գրածն, այլ և շրջաշայեաց իր ժամանակի և աշխարհի հանդիպածն, որ էր գլխաւորապէս վերոյիշեալ Սէլչուկեանց երեւոյթն :

Մատթէոս Ուռհայեցի, որ շատ յետոյ չէ քան զԿողեան, տեղ մի կ'ըսէ անոր համար՝ թէ «Տկար » բանիւ և մեծ գիտութեամբ բացայայտեք զգի» տոռքիւն Գրոց Սրբոց » . ուրիշ տեղ կոչէ զնա՝ Բանիքունն հետար. ուրեմն տկար բանիւ ըսելն իմանալու է՝ պարզ, անպաճոյճ, սովակաց հասկանալի : Կոյն ժամանակագիրն դարձեալ ուրիշ տեղ աւելցնէ (ինքն այլ իր յայտնի տկար բանիւն) . «Սա » խօսեցաւ Բագրատն բանք, որպէս զմարգարէու» թիւն ի վերայ այսմ ժամանակիս, և խափանե» լոյ աստուածպաշտութեան յամենայն մտաց և

» թուրանալոյ հաւատոց . և զայս ասաց ի նոյն » Գիրքս յառաջ Ժամանակաց » : Ետքի խօսքովն թերեւս իմանալու է որ ժամանակագրական կարգաւ պատմական բան գրած ըլլայ, վասն զի վրկայուած է իր ժամանակագիրութիւնն, մանաւանդ տունարագիտոռքիւնն, և այսպիսի գրուածի հատուածք գտնուին իր անուամբ :

Երեցագոյն քան զՈւռհայեցին՝ նախայիշեալ Լատտիվերտցին՝ Կողեան գրչին կ'ընծայէ Հառատոց գիրք մ'եւս, որ իր Պատմագրութեան դժբաղդութիւնն ունեցեր է, մանաւանդ թէ մենք եմք ունեցեր, զերկուքն այլ հիմայ շտեմնելով, բաց ի վերոյիշեալ տօմարական բանէն և Վարդապետի տունին վրայօք երկար գրուածէ մի, որ բաւական հմտութիւն և զգօնութիւն ցուցնէ, միանգամայն և ոչ տկար՝ այլ կորովի և դարուն համեմատ Հայաբանութիւն. որոյ իրբեւ ճաշակ դնեմք հատուած մի այս տեղ, իր գրած Պատմութեանէն զրկուած ըլլալով, և թողով կարգի Հայապատմիս՝ Յայսմ աւուրաց աւանդութիւնն իր վրայօք : Տես Յօդուած 247, յ'Բ Մասին :

«Ամենայն աստուածային տօնք զանցեալ իրաց ունին զխորհուրդ և զեղելոց իրաց յիշատակ . իսկ Վարդեշարի՝ տօնիս՝ չէ կատարեալ . վասն զի զհանդերձեալ աւուրն ունի զյիշատակ, զի անգ առնու զկատարումն . վասն որոյ քան զամենայն տօնս երեւելի և պայծառագոյն է : Կեսեւ յորժամ խաւարն անօրէնութեան և մառախուղ կռապաշտու»

1. Երբեմն այսպէս, երբեմն Վարդապետ գրէ Ձեռագիր մեր, որ բաւական հին և ընտիր է : Գեղեցիկ խորհրդածութիւն մ'է Կողեան վարդապետութիւնն, թէ Սյուկերպուութիւն Քրիստոսի՝ միայն առժամայն երեսոյթ մ'էր, և նշանակ իր հանդերձեալ լուսափայլ փառացն, և ոչ կատարեալ իր մի, ինչպէս Քրիստոսի միւս տնօրինական գործքն :

Թեան մածեալ ունէր զաշխարհս ամենայն, տունէին Հեթանոսք զիւաց զտօնս զայս. զի ի Նաւասարդի մին տօնէին Արամազդայ և ի Հնգետասանն՝ Անահտայ, և ի ՍաՀմի Հինգ՝ տօնէին Վաճեան¹ և Վահագնի, և յամառնային ժամանակս տօնէին Ափրոդիտէ: Եւ այսպէս առասպելաբանէին, թէ Արամազդ որդի էր Կրաւնոսի, և Կրաւնոս աստուած տիեզերակալ. իսկ Արամազդ որդի նորա նախանձեցաւ ընդ որդէծնութիւնն Հօր իւրոյ, զի երկեաւ թէ ծնցի որդի, և յարուցեալ զօրասցի և լինիցի աստուած. յարեաւ ի վերայ Հօր իւրոյ և կտրեաց զերկ... նորա և ընկէց ի ծով. և ծովու փրփրեալ յարենէն, և ի սպիտակ փրփրոյ ընծայէր զԱփրոդիտէս². զոր և ստաբանեալ ասէին թէ, ընդ որ անցանէր և ընթանայր՝ յընթացիցն արիւն իջանէր յոտից նորա, և վարդ և մուրտ բուսանէր: Իսկ խաւարեալ ի լուսոյ Հեթանոսական սովորութիւնն՝ զտօն նորա Վարդափառ անուանէին, և զվարդ նմա ընծայ մատուցանէին: Իսկ Սուրբն Գրիգոր ածեալ զմեզ ի լոյս աստուածգիտութեան, խզեր զգիւական սովորութիւնն և ի ճշմարտութիւնն փոխէր. և ընդդէմ նոցին կարգէր ի Նաւասարդի մի՝ Յովհաննու Կարապետին տօնել, և ի Հնգետասան՝ Աւետեաց Աստուածածնի, և ի ՍաՀմի Հինգ՝ Յովաննու և Աթանազիսի. և զՎարդեւորիս՝ տօնել զԵրեւումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի Թաբովրական լերինն՝ օրինադրէր³: Զի, զոր օրինակ վարդն՝ յորժամ ի կոկոնին է՝ զանուշահատութիւնն Հօտոյն և զտեսիլ զունոյն ընդ իւր պարփակեալ ունի, իսկ յորժամ ի կոկոնէն փթըթեալ ելանէ, զՀոտն և զտեսիլ զունոյն՝ ամենեցունց ցու-

1. Սովորաբար Վահագնեան գրուի:

2. Զոր Հայք նոյնացընեն իրենց Աստղկան Հետ:

3. Այս իւրաքանչիւր տօներն ըստ նշանակեալ մասոց և աւուրց՝ նոյնպէս նշանակին և ի Յայտմաւուրս՝ ըստ աւանդութեանց Ագաթանգեղի և Զենոբիայ:

ցանէ. այսպէս և Տէր մեր ի մարմնի ծրարեալ զվարդ աստուածութեանն, իսկ ի Թաբովր յայտնեալ զաստուածութիւնն՝ աշակերտացն, փայլեցն երեսք նորա որպէս զարեգակն, և անոյշութեամբ Հոգւոյն լուսաւորեցան զաւք Առաքելոցն »:

64. ԱՐԻՍՏԱԿԷՍ Վ. ԼՍՍՏԻՎԱՐՏՅԻ

Լաստիվարտ Կարնոյ գաւառի գիւղ կամ աւան մի եղած է. Հիմայ դերքն անծանօթ է, և միայն իր ընծայած այս Պատմիչովս է յիշուած: Սա ժ. Ա. դարուն կիսում՝ իր ժամանակի Հայոց հանդիպած դժբաղդութիւններն ողբացել և գրել է, Բագրատունեաց թագաւորութեան վերնալն, Անի մայրաքաղաքին անջջանայն, Սէլջուկեան սուլտանաց յաղթական արշաւանքը, Յունաց կայսերաց չկարենալն անոնց ընդդիմանալ, և այլն: Երգական կամ իսկատիպ գրիչ մ'է Արիստակէս, յստակ և վայելուչ լեզուաւ գրող, քիչ կամ ոչ մանրամասն պատմող, այլ շատ լացող և լացընող, սրտազգած հայրենասէր մի, լաւագոյն ժամանակաց արժանի, այլ հակառակին հասած, և զայն բացատրելով սկսի իր գրածը, յարմար՝ այլ տխուր. « Ժամանեցին մեզ » աւուրք չարչարանաց, և գտին զմեզ նեղութիւնք » անհարինք ». երես մի բան այսպէս ցաւազնելով, ցաւոց առիթն փութացընէ զանոնք յայտնելու. « Ժամ է մեզ ի դուրս Պատմութեանս ընթալ » նալ, և աստի սկիզբն առնել, զի դիւրածան լիցի » մեզ բանս »:

Դաւթի Կիւրապաղատի մահուընէն սկսելով, որ ժամանակին իշխանաց և թագաւորաց մէջ ամենէն քաջ և խոհեմն էր, քսանեւհինգ զուրս բանիւ՝ Յունաց կայսերաց և Պարսից (Սելջուկեանց) ի Հայս և ի Վիրս ըրածն և չըրածը, և այն ազ-

գաց կրածը նկարագրէ կամ ողբայ. Կարնոյ, Ար-
ծնի, Անուոյ և ուրիշ քաղաքաց աւերն ու այրեցն
և կողոպտուիլն՝ իրրեւ կենդանի անձանց չարչա-
րանք և մահ համարի, մինչեւ Անուոյ արկածն այլ
սրով խողխողուսն. կիսաւեր ամայի մնալն այլ
« Իբրեւ զկին ևորանարսն մնացեալ յայրիու-
» թեան » կ'ըսէ: Այսպէս անշունչներն այլ շնչա-
ւորելով՝ սաստկացընէ և ստիպէ զկսկիծը, և ո՛ր
կողմ և նայի՝ սգալի կերպարանք տեսնէ, և միով
բանիւ բովանդակէ. « յՈղբս փոխեցաւ մեզ ամե-
» ւայն » գրելով: Երկայն վերջաբանութեամբ այլ
գնոյն կրկնէ, ձախորդութեանց պատմիչներու սո-
վորական ոճով կնքելով, թէ « Գիտասլիք, զի մեղքն
» եղեւ այս ամենայնի պատճառ՝ որ անց ընդ մեզ.
» զի հայեցեալ ընդ մեզ զարհուրեանք երկնչել յե-
» բեսաց Տեառն... և ապաշխարութեամբ վաղ ժա-
» մանել՝ քան զչարժել պատուհասին՝ և ընդգէմ
» կալ »:

Ողբան և ողբն շատ է քան զպատմութիւնն, ո՛վ
կրնայ մեղադրել հեղինակի մի այնպէս գրել ու-
ղելը. մանաւանդ երբ այնպէս մաքուր և փափուկ
սրտով և լեզուով բացատրէ իր կիրքն, և փափագի՝
որ այնուհետեւ հայրենակիցքն բարեպաշտութեամբ
ձարեն իրենց հանգստութիւնը:

Արիստակէս այդ ողբոց մէջ անգամ երբեմն բա-
նաստեղծական վառվռուն նկարագրութիւններ ու-
նի, որ բնական իմն և ոչ բռնազբօս կամ արուես-
տական ջանիւ՝ բղխած ըլլալով, հաճոյական կ'ընեն
ընթերցողաց և անուշընեն իրաց դառնութիւնը:
Այսու զգացմամբ կրնանք ըսել թէ և օտարազգի ոմն
երիտասարդ Բրիտոմ (E. Prud'homme) թարգ-
մաներ է Արիստակիսի Պատմութիւնը փռանկե-
րէն և տպագրութեամբ հրատարակեր ի Բարիզ,
յամին 1864¹:

1. Տես Պատմ. Հայկական հին Գպրութեան, էջ 593
և 705:

Հայապատումիս Բ Մասին սակաւ Յօդուածքն՝
կ'ընծայեն Արիստակիսի Լաստիվարացոյ պատ-
մագրութեան ճաշակն, որ են՝ 253. 255-7:

Արիստակիսի անուամբ իր կամ ուրիշի գրուածք
գտնուին, եկեղեցականք կամ բարոյականք:

65. Գ Ր Ի Գ Ո Ր Մ Ա Գ Ի Ս Տ Ր Ո Ս

Ժամանակի կարգաւ ժԱ. դարու կիսուն վերա-
բերի այս մեծանուն և արժանաւոր անձն, Գրի-
գոր Մագիստրոս, որոյ վարքն իսկ զանազան կող-
մամբ նկատելով՝ բովանդակ Պատմութիւն մի կ'ըն-
ծայէ. իսկ իր բազմապատիկ գրուածոց մէջ Թռռո-
րերն մօտ հարիւրի, և Յիշատակարաններն՝ գրեթէ
կրնային ըստ ինքեան զինքն այլ մեր Պատմաց
դասակարգելու. սակայն իր մեծութեան համեմատ՝
իրմէ պատմական ոճով գրուած մի չունենալով, և
ոչ այնպիսի համարելով իր հուշակաւոր Ս. Գրոց
պատմութեան հազարտողեան համառօտութիւնը,
չեմք համարձակիր այդ դասակցութեան մէջ դնել
զինքն. այլ Յօդուած մի ընդունիմք իրմէ այս
գրոցս մէջ, Մասն Բ, Յօդ. 262:

Իր վրայ լիւրի տեղեկութիւն գտնուի ի Պատ-
մութեան Հայկ. Հին Գպր., էջ 572-86. Ինչպէս
Լանկուայի Ասիական Ընկերոջքեան օրագրին 48դ
թուոյն (ի 1869) հմուտ գրութեան մէջ:

66. Վ Ա Հ Ր Ա Մ

Վարդան պատմիչ յիշելով Սէլուկեան թուրքաց
կամ Պարսից սուլտանաց նախահօր մահն (յ'933)
և յաջորդութիւնը, կ'ըսէ. « Այս ըստ Վանքաւանյ

» որդւոյ Տիգրանայ Վիպազրի»: Այս խօսքս կամ շարադրութիւնս երեք կերպով այլ կրնար իմացուիլ, կամ մէկը մէկայլին հայր կամ որդի ըլլալ, կամ երկուքն այլ պատմիչ ըլլալ: Հաւանականն է թէ Վաչրամ է պատմիչն, և որդի Տիգրանայ. մանաւանդ որ Մտիթար Այրիվանեցի գաս (Վաչրամ) կարգէ Պատմիչ, բայց փոխանակ Տիգրանայ որդի կոչելու՝ Տիգրանակերտցի կ'անուանէ: Անցեալ դարու մեր բանասէրներէն մէկն այլ ժ. դարու մէջ համարի Պանշառուի Տիգրան մի, որ Հայոց պատմութիւն գրած ըլլայ¹: Մեզ թուի թէ ժԱ. դարու պատկանի Վաչրամ, ըլլայ Տիգրանայ որդի, ըլլայ Տիգրանակերտցի, վասն զի յիշեր է զՏօրու պէկ սուլտանը: Ամենեւին ուրիշ յիշատակ չկայ իր վերայ, և ոչ տող մի գրուածն, որով չեմք զիտեր թէ ինչ շափով և ոճով գրած էր պատմութիւնը:

67. ԳՐԻԳՈՐ Բ, ՎԿԱՅԱՍԷՐ, (ՄԵԾՆ)

Իբրեւ զուտ Պատմիչ չեմք կրնար ըսել այս մեծ անձը, արժանաւորապէս յետ իր հօգւոյ և մարմնոյ նախահաւուն Ս. Լուսաւորչի՝ անոր անունը կրող և իբր կէս դար աթուր նստող և փառաւորող, երախտաւոր և առաքինի հայրապետ մեր եկեղեցւոյ, ծանօթ ժամանակին արեւմտեայ Սաշա-կրաց և Քաչանայապետին Հռովմայ. բայց եթէ ոչ Հայապատում, այլ իր կարգաւորած և թարգմանած մեծագործ Վկայաբանութեանց մէջ, (որոց համար ըսուեցաւ Վկայաքեր), բռնադատուած էր ազ-

1. Tigrane Pahlavense coltivo parimente la storia armena; ma i suoi scritti non si ritrovano. (Compendio storico, etc. զոր քանի մի անգամ յիշեցինք գրութեանս մէջ):

գային Սրբոց վարքն և վկայութիւնքն այլ կարգել, կամ ինքնագիր, ինչպէս վկայէ իր թարգմանած վկայաբանութեանց համար, կամ իր օգնականաց ձեռօք, ինչպէս կիրախու և Մատրիոս վարդապետք. դարձեալ, այդ վկայաբանութեանց ներքեւ գրած Յիշատակարանացն համար, որ թէ և համառօտ են, այլ բաւական թուով, արժանաւոր է իբրեւ պատմագիր հեղինակ կոչուելու:

Կրնայ ըսուիլ ինքն կերպով մի և հեղինակ իր Պատմութիւնը գրողաց. եթէ, որպէս կարծուի, եղեր է որ աւելի քան զվերոյիշեալ օգնականսն՝ ամբողջ իր վարքը կամ Պատմութիւնը գրած ըլլան. որ ոչ սակաւ հետաքննական պիտի ըլլար, անոր երկար կաթուղիկսութեանն և ըրած ճամբորդութեանց, զանազան աշխարհաց և զանազան թագաւորաց հետ տեսութեանն համար: Եւ թէ եղեր է ստուգիւ այսպիսի պատմիչ՝ վկայէ իր եղբորորդւոյ թոռան Ս. Կերտիսի Ծնորհալւոյ վարքը գրողն¹. և ինչպէս արժանի էր, բոլոր այդ Գրիգորեան հայրապետաց (որք 4065էն մինչեւ ի վերջ ժԲ. դարու նստան յաթոս Լուսաւորչին) վարքերն մէկմէկ կերպով առանձին կամ շարունակ գրուած են, այլ մասամբ միայն հասած մեր ձեռքը, ինչպէս վերոյիշեալ Ծնորհալւոյն վարքը²:

Գր. Վկայաքերի և իր Գործակցաց Յիշատակներէն ընծայուած են յ'Բ Մատին՝ Յօդուածքն 272-6:

1. « Մեզ ոչ է ժամանակ պատմել զբարեկրութիւնս » ի նմանէ (Վկայաքերէն) եղեալս առ նորակերտ » հայրապետն (քեռորդին) և առ ժողովուրդն իւր. » քանզի նախկի յայոց հաւեցաւ մակրասպատոռն և » երկարագոյն ճառագրութեամբ, զոր՝ իմ ընթերցեալ, » փոքր ի շատէ ի պատմութեանս նշանակեցի »:

2. Տէս Պամ. Հայկական հին Գպրութեան, էջ 596-605:

68. ՅՈՎՀԱՆՆԵՍ Վ. ՍՍՐԿԱՒԱԳ

Հայաստանի արեւելահայաստան կողմէն Արցախ նահանգի Փառխոստ՝ հիմայ անծանօթ՝ գիւղէ մի ընծայուած է ի լոյս Յովհաննէս վարդապետ Սարկաւագ, ժ.Ս. դարու երկրորդ կիսում, և այդ դեռ հնաշնորհ դարը լծեր է ժ.Թ-ի մեր դպրութեան նորաշնորհ դարուն, վախճանած ըլլալով յամին 1129, որպէս գրեն պատմիչք, և սխալմամբ ոմանք տասն տարի վերջ՝ 1139ին: Եթէ այդպիսի դարեր կցող և ուսմանց նորոգութեան կամ հանճար արթնցընող անձ մի պէտք էր, քան զսա չկար յարմար և կարող: Իր մեղի հասած գրուածքն և յիշուածքն ի ժամանակակից կամ մերձաւոր հեղինակներէ աչքէ անցընելով, և անոնց իրարմէ բոլորովին տարբեր նիւթոց վրայ ըլլալն, միանգամայն և ամէնքն այլ գիտութեամբ և ճարտարութեամբ հիւսուած լինելն խորհրդածելով, գերագոյն հասնարեղ մի ցուցընեն զնա, և առաջին ըստ իս՝ ի հին հանճարեղ ազգային բանասէրս և հեղինակս մեր: Եթէ վկայեալ ըլլային յայտոյ՝ յանուանէ՝ իր գրուածքն, նոյն իսկ ոճն, շարագրութիւնն և իմաստքն՝ անտարակոյս կ'ընէին իրեն ըլլալն և դարմացընեն թէ իւր մտաւոր հարբսութեանն և թէ ճարտարութեամբ արտազրելուն:

Ուսկից կամ որմէ՝ առեր և կրթուեր է այդպիսի հանճարն, որ Յունաց Հարց և նախնի դասական Հեղեանաց ճաշակն ընծայէ: Անհաւատալի թուի՝ թէ այն ժամանակին ազգային վարդապետ մի աւոր միտքը կրթած և յուսաւորած ըլլայ. յունական և արեւմտեայ հրահանգօք դաստիարակեալ կարծելու էր զնա, եթէ չգիտնայինք իր հայրենեաց տեղն, և Հայաստանի հեռաւոր ծայրի Հաղարատայ և Սանահնի վանաց մէջ բնակիլն, սո-

վրիլն և սովրեցընելն, թէ իբրեւ արեղայ և թէ իբրեւ արբայ. և մանաւանդ այդ երկու մայրավանից մէջ ամփոփուած Չեռագրաց գանձն, և անոնց մտաւոր քարայրներու մէջ՝ օրերով և գիշերներով մտնել կարգալ քննել և գրելն, երբեմն և քնոյ և կերակրոյ պէտքն և ժամերն մոռնալով, և ինքնին վկայելով, թէ « Չօր անեկայն և զգիշերն » յովանդակ առ իմաստս ցանկութեամբ, նաեւ սիւրով առ հանճար » զբողէի: Վարդան պատմիչ կ'իմացընէ որ Սարկաւագ՝ էր « ի քահանայական » ազգէ », այսինքն հայրն՝ հաւանօրէն, և պպն քահանայ էր: — Սամուէլ Անեցի այլ որդ կ'ըսէ թէ, « Էր որդի քահանայի միոյ »:

Որչափ այլ ի մանկութեան ուսուցիչ մի ունեցած ըլլայ, ինքն իրեն եղած է զլիւսուորն, մեծ և անխոնջ եռանդեամբ և աստուածապարգեւ սրամտութեամբ: Յետ այն աստուածատուր շնորհաց, եթէ արտաքին (որ սակայն նոյնպէս աստուածատուր է) և առաջին միջնորդ մ'այլ հարկ էր գտնել իր հանճարոյն բուսման և մշակութեան, զայն այլ կ'իմացընէ ինքն, թէ՛ ընծայուած էր ի լոյս « Ի » նախնեաց բարեպաշտից, և յիւսուորն ծնողաց » բուսեալ, որք սնուցիւն զիս օրինօք Հոգւոյն կե » նաց առնել՝ քան ըստ բնութեան տածիւք խնամս՝ » առ մանկունս. որովք յառաջնուսն հասակիւ դաս » տիարակեալ յոյս տայի քաջութեան »: Անբաւ գովութեան և զոհութեան արժանաւոր ծնողք, այսպիսոյ զակի բուսցընողք և սնուցողք: Կարծես թէ Յովհաննէս իմաստասէր կաթողիկոսի հոգին և լեզուն նորէն բուսեր է ի սա:

Իր վրայ շատք և շատ աւելի գովեստի բան գըրած են՝ քան այն իմաստասէր կաթողիկոսին, և արժանապէս. զի սա արդարեւ ըստ ասից սոցա՝ եղեր է « Մեծիւստո գիտառեալեր, Հանճարեղ յա » մեկայնի և մտանարուստ, յոյժ իւսաստուռն ». աւսոնց համեմատ՝ և ճարտարաբան. որոյ համար արգարապէս կ'ըսէ Կիրակոս պատմիչ թէ, « Սորա

» բանքն ամենայն իմաստասիրական սճով է. որ
» պէս զԳրիգոր Աստուածարանի, և ոչ զԵղիշուկ ».
և առաւել յստակ քան զԱստուածարանին, որոյ
գրուածքն շատ տեղ մթին են, ոչ միայն ի հայե-
րէն թարգմանութեանն, այլ և ի բնագրին, և
Յոյնք իսկ կարօտացեր են մեկնըչաց, զոր և մե-
րայինք թարգմաներ են:

Այսպիսի տեսութիւնք զմեզ շատ հեռացընեն մեր
նպատակէն. բայց նոյն իսկ մեր նպատակին գլխա-
ւոր մէկ կէտն կամ մէկ երեսն ըլլալով մեր Պատ-
մըչաց հանձարն՝ իրենց պատմութեանց հետ, երբ
այսպիսեայ մի հանդիպինք՝ անկարելի է լռելն. և
զրեթէ հարկ կ'ըլլայ այդ հանձարոյ ընդարձակու-
թիւնը կամ զանագանութիւնը մատնանիշ ընելու
համար՝ յիշել անոր արտագրութիւնքն, որ են.

— Ա. Պատմութիւնք, որոց վրայ յետոյ պիտի
խօսիմք. որ մեզի համար ամենէն ցանկալի գոր-
ծըն է:

— Բ. Տօնարագիտութիւն, և ոչ սոսկ զիտութիւն,
այլ և կարգադրութիւն և ուղղութիւն մեր հին տօ-
մարին Հայոց և Զ. գարու կիսում հաստատուածին:
Սարկաւազ ստոյգ հաստատուն կամ անշարժ տօ-
մար կարգաւորեց, որով և Նոր բոշակսն հաստա-
տեց յամին 1084, երբ Հինգհարիւրեակ ըսուած
Շրջանն (հինգ հարիւր երեսունեւերկու ամաց) կա-
տարուեցաւ, Հայոց թուականին սկզբնաւորութե-
նէն հաշուելով, և կամ Քրիստոսի 552 թուակա-
նէն: — Այս Նոր տօմար և թուականը՝ գործա-
ծուած է Հայոց արեւելակողման գաւառաց մէջ՝
զարերով, և թէ՛ տօմարն՝ թէ՛ թուականն կոչուած
է Սարկաւազարի, կամ Նոր թուական: Եւ զրեթէ
զեւ գործածուի Պարսից և Հնդկաց Հայոց մէջ,
նոր հինգհարիւրեակով մի սկսելով անուամբ Ազա-
րիայ, կերպով մի վերանորոգողի գնորդեալն ի
Սարկաւազայ:

— Գ. Աստուածարանական խնդրոց վրայօք գը-
րուածք, որոց մէջ թերեւս ուրիշի մատն մտած ըլլայ:

— Դ. Քանի մի Շարակներ, որպէս Ղեւոն-
դեանց Պայծառացիքն:

— Ե. Ներքողք ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ, ի
Ս. Ներսէս, ի Ս. Սահակ և Մեսրոպ, և ի Ղե-
ւոնդեանս, որոց միայն առաջինն հասած է ի մեր
ձեռս, և որ նոյն նիւթին վրայ գրուած ճառից գե-
րագոյնն է իր համառօտութեամբն իսկ: Այսպէս
և նոխարիչեալ ամեն գրուածքն եւս իր յատուկ
անգին գրչին շնորհքովն են, մէկն քան զմիւսն
ընտիր:

— Զ. Քանակայրքեան պաշտաման և պատուոյ
վրայ՝ խոհական ընտիր գրուած ճառ մի:

— Է. Աղօրագիրք մի, շատ պատշաճ սճով և
սղբով, ոչ որպէս Նարեկացեոյն թառցիկ, և ոչ
ճապաղ՝ որպէս Քոչին և այլոց:

— Ը. Պատկերաց Սրբոց կամ տէրունականաց
ի՞նչ և ի՞նչպէս պատիւ տալու է, խոհական ճառ մի:

— Թ. Իր օրերում հանդիպած մեծ գեանա-
շարժի մի վրայօք, յորում կ'ըլէ թէ ըստ իր կա-
րողութեան գրեր է, նաեւ բարոյական, թէ « Ըն-
» զէր (այդպիսի զիպուածոց ատեն) բարիք ընդ
» շարս մեռանին և անմեղք ընդ մեզաւորս ». այս
թէ և կորուած չէ, այլ մեզի ծանօթ չէ:

— Ժ. Անակնկալ ոտանաւոր բանաստեղծական
« Բան իմաստութեան, ի պատճառս զբոսանաց,
» սոն Զագն որ զաղօթանոցաւ նորա ճըռուողէր
» քաղցրածայն, որ կոչի Սարիկ ». որ կրնայ ան-
նման կոչուել մեր մատենագրութեան մէջ, միան-
գամայն և յունական հանձարով և յիշատակու-
թեամբք, գոհար մի ի շարս իր սոփերացի՝:

— ԺԱ. Յիշուին նաեւ Մեկնաշրիւն մի Ղռնիա-
ւոչ աւետարանին, և այլ ինչ կրօնական գրուածք,
որք զեւ անծանօթ են մեզ:

1. Տես այս քերթուածն ի Քաղնալիպի 1847 ամի,
էջ 221, և անոր վրայ և Սարկաւազ վարդապետի ամէն
գրուածոց վրայ, նոյն տեղը, էջ 214-221:

— ԺԲ. Ոչ պակաս թերեւս և աւելի արդիւնա-
կան աշխատութիւն և գործ մի ըրեր է Սարկաւագ՝
Մարտիանոս ընտիր և սոյոյգ նախնեաց գրածը գրու-
նելով և հաստատելով: Յայտնի է որ հոգեւոր կամ
Սուրբ գրոց մէջ ամենէն շատ գործածուածն է Մաղ-
ւնակ, որով և շատ թուով օրինակուած, և ըստ
շատութեանն՝ օրինակելու ատեն կամ կամուս կամ
ակամայ փոփոխութիւն եղած բառից, կամ բառից
չարքին: Այս բանս ուղղելու և միաձեւելու հա-
մար՝ շատ հին ձեռագրեր փնտռեր է և վերջապէս
Հաղբատայ վանից մէջ գտեր է Թարգմանչաց ձե-
ռօք գրուած օրինակ մի, և « Խնդութեամբ համ-
» բուրեալ և եզ ի վերայ աչաց իւրոց», անշուշտ
ոչ առանց արցունքի, և ըստ այնմ՝ ուղղեր և հրա-
տարակեր է նոր օրինակներ: Գար մի վերջը նոյն-
պէս ըրաւ և Յովհաննէս Գառնեցի, որ զայս
պատմէ:

— ԺԳ. Աւելի մեծ և ծանր գործ մ'այլ ըրած
է Սարկաւագ Վր., ոչ մէկ այդ Ս. Գիրքը, այլ
բոլոր Աստուածաշունչի գրքերն այլ նոյնպէս քննե-
լով և ստուգելով լաւագոյն գրուածը. որ՝ որպէս
մեծ աշխատութեան գործ է, այսպէս և մեծ ար-
դեանց և երախտեաց արժանաւոր:

— ԺԴ. Այն ընդարձակ և սուր միտքն՝ որ ա-
մէն կողմէ աւելի դէպ ի վեր սլանայր (հոգեւոր
իմաստութեան հետեւելով), եթէ թուշնոյ ճոռու-
ղելն այլ իր աղօթելու ատեն կ'իմաստասիրէր և
վերաբերէր, արտաքին կամ փիլիսոփայական գրոց
այլ ստուգագոյնը կ'ուղէր. և որովհետեւ աղգին
մէջ ամենէն հռչակեալն այլ ոչ քաջ հասկացեալ
էր մեր Գաւթի Անյաղթի թարգմանած և մեկնած
Արիստոտելի գործերն, զոր ինչպէս դժար էր շի-
տակ հասկանալն՝ նոյնպէս և շիտակ գրելն, յանձն
առաւ մեր անխոնջ և ամենազատ Սարկաւագն՝ այն
գրքերն այլ ուղղագրել և վաւերական օրինակ
մի հրատարակել, ըստ պատշաճի տեղեաց՝ կէ-
տերով և նշաններով բաժնելով, և երբեմն կարծ

ծանօթութիւն կամ բացատրութիւն մի յարելով:
Այս գործոյն ընտիր օրինակ մի գտնուի ԺԳ. գա-
րու գրուած՝ ի գրատան Բաւիա քաղաքի Իտա-
լիոյ, յորմէ մենք այլ օգտուած եմք:

— ԺԵ. Թէ որչափ կարեւոր են այնպիսի քնն-
նութիւնք կամ որպիսի և է գիտելիք, երես մի
բան գրած և Բաւ իրատոռ առ ուսումնասիրս մա-
կագրած է, որ իր փոքրութեան մէջ այլ՝ գոհա-
րիկ մ'է:

Այսչափ են մեզի ծանօթ երկասիրութիւնքն
Սարկաւագ Վարդապետի:

Գանք հիմայ մեզի ցանկալի և ցաւալի եղած
Պատմագրութեանց Սարկաւագայ. վասն զի ոչ մէկ՝
այլ քանի մի տեսակ պատմութիւն գրած կարծուի-
որոց զլիսաւորն էր իր ատեն Ասիոյ մէջ՝ Արարա-
ցոց ամիրապետութեան տկարանալէն ետեւ նոր
աշխարհակալ տոհմի և տէրութեան պատմութիւ-
նը, այսինքն Մեղրնիկեան կողուած Պարսից կամ
Թուրքաց՝ իրենց հնագոյն ծանօթ հօր անուամբ,
որ Սարդուկ գրած կ'երբեւի մեր հեղինակն. վասն
զի այսպէս գրէ իրմէ առնողն Սամուէլ Անեցի ժա-
մանակագիրն այլ, ազգն այլ կոչէ Սկիւթացի: Հա-
ւանօրէն այս տոհմին և իշխանութեան ծագմանէն
սկսած է պատմութիւնն և աւելի ընդարձակօրէն
գրած Տոշդուր կամ Տօղդուր րեկի և իր ժամանա-
կակից՝ անոր սրբոյն և յաջորդացը, Ալի-Ասլա-
նիկ, և Մեղիք-շահի՝ որ մեռած է յամին 1092:
Սամուէլ տեսեր և կարդացեր էր՝ հեղինակին յա-
տուկ ձեռքով գրածը, և քանի մի հաստուած մեզի
աւանդած է, (Տես Յօդուած 58, և 266, յ' Բ Մա-
սին). յորոց կրնայ գատել ուշիմ ընթերցողն՝ պատ-
մըշին ինչ արժէք ունենալն, որոյ վրայ զմայլեալ
առաջին օրինակողն՝ Իրևաստասերն աստուածային
կոչէ գնա: Սա, և Կիրակոս՝ մինչեւ ի մահ Մէ-
լիք-շահի հասուցած է Սարկաւագ Վր. պատ-
մութիւնը, կ'ըսեն. սակայն իրմէ բերուած յօդուա-
ծին մէջ՝ անոր եղբայրը Գուգուր և Մէլիք-շահի
որդին Բեզիարուխն այլ յիշուին:

— Երկրորդ Պատմութիւնն եղած է «Եկեղեցւ»
 » կան Պատմագիրք, ինչպէս յիշեն անցեալ գարու
 » բանասէր Հմուտք:

— Երրորդ առանձին Պատմութիւն, գոնէ երկար յիշատակ մի, գրած երեւի յոյժ հաւանութեն՝ շատ հետաքննական զիպուածի, որ աւելի Եւրոպացւոց փափազը կրնար գրգռել և գուցէ զարմացնել, իրենց խաչակրաց վրայօք, ըլլայ առանձին, ըլլայ ուրիշ պատմագրութեան մասն. վասն զի Սամուէլ այդ ուխտաւոր զինուորները յիշելով, անոնց գալն և Յունաց կայսեր խորհական ընդունելութիւնը, կ'ըսէ. «Եւ այս բանք զրեալ էր Վար» զպպետին Սարկաւազի»:

Աւելորդ է իմ կողմանէս խորհրդածել թէ որքան ծանր է մեզ Սարկաւազի այս ամէն Պատմութեանց կորուսան կամ թաքուսան. և որքան թանկ և մեծագնի պիտի ըլլայ գիւտն, զոր կ'ուզեմ յուսալ. վասն զի Քերովբէ Պատկանեան՝ Յանկի մի մէջ նշանակած է, թէ գոնուէր ի Տըրխիս ի Երրօսեան Վարժարանի օրինակ մի՛ գըրուած յամին 1403. հաւանօրէն մեր յիշելոց առաջինն էր: Զալարեան Սարգիս եպիսկոպոսն եւս ըսեր է մեր կրօնակից չօր մի, թէ իր քովն է եղեր այդ (կամ ուրիշ օրինակ մի) Սարկաւազի պատմութիւնն և գողցեր են իրմէ: Մօտ ժամանակի յիշատակք ըլլալով ասոնք՝ չեն յուսահատցըներ ըզմեզ տեղէ մի նորէն ի լոյս ելնելու մեր փափազածին:

Սարկաւազ ինչո՞ւ այս մականունն առած և պահած է, չէ նշանակուած. թուի թէ իր հօր քահանայութեան ատեն առած է այս աստիճանը, յետոյ զքահանայութիւն և զառաջնորդութիւն Հաղբատայ վանից, որոյ հռչակն աւելցուցեր է, և աւտոր մի փոքր եկեղեցւոյ գրան մօտ (ուր յետոյ գեղեցիկ վանգակատուն շինուեցաւ) թաղուած է յամին 1129: Ինչուան հիմայ կարդացուի կարճ բայց նշանաբան տապանագիրն. «Արձանս այս սեւաւ»

» կան է Սօփեստոսի Սարկաւազին». եթէ ոչ սեւ փական էր գրուած կամ գրելի, սեւական վսեմ իմաստ մի կ'ընծայէ, թէ այդ տապանաքարն վերջին ասնակոխն է, յորմէ իրր երկրի կամ մահուան գըրնէ՛ անցնի Սարկաւազ յանմահականն: Սոփեստես մակգիրն յարմար է իր շատգէտ իմաստասիրութեանը:

Այն ժամանակ Հաղբատայ վիճակն և սահմանքն՝ Վրաց իշխանութեան ներքեւ էին. երբ հարկ կ'ըլլար Սարկաւազի տեսնուելու անոնց (Գաւթ Ա) թագաւորին հետ, սա (Թագաւորն) «Յօտն» յառնէր, և ելանէր ընդ առաջ նոտա, և խօնար» հեցուցեալ զգլուխն՝ խնդրէր ի նմանէ օրհնու» թիւն... և ի պատճառս սորա սիրէր թագաւորն» զազգս Հայոց»: Այս անուանի թագաւորին ըրածն՝ բացատրութիւն մի է այն մեծ յարգանաց, զոր ամենայն ճանչցողք՝ ընծայէին Սօփեստէսին, բայց Ջաղղուս Ստեփանոս քահանայէն, զոր վասն անարժանութեանն արգիլէր է ի պատարագելոյ. իսկ նա փորձեց սպաննել իր արգելիչը. և երբ սա անոյշ ձայնով զգուշացուց զնա այդպիսի ալլանդակ վրէժխնդրութենէ, և Ստուծոյ յանձնելով թող տուաւ որ պատարագէ՛ և նա յանդըգնեցաւ, «Վաղ» վաղակի ոգի շար եմուտ յայրն աներկիւղ, և ընկէց զնա ի բեմէ անտի յատակս տաճարին, և սկսաւ լլկել զնա յոյժ. և հասին զնա ի տաճարէ անտի՛ որպէս զՈղիա, և երկիւղ մեծ անկաւ ի վերայ տեսողացն»:

Պատմիչ բանիս Կիրակոս, զուարճալի մ'այլ յիշէ, որ դարձեալ վկայութիւն է Սարկաւազի գերազանցութեան. ասոր ժամանակակից և բարեկամ երկու մեծաճամբաւ վարդապետք, մէկն Գառիթ Արաշիայ որդի, որոյ գրուած մի հասած է մեզ, միւսն Գրիգոր Թորակերի որդի, յորմէ բան չէ հասած, որ մի Սարկաւազի հետ նստած խօսէին. հանգիսի գեղացի մի՛ որ անոնց համբաւը լսեր էր, բայց փափագէր իմանալ, և հարցուց թէ Արդեօք

ձեզմէ որն է աւելի իմաստնագոյնն. Թորակերի որդին այլ ծաղրածութեամբ մի կ'ըսէ. « Մինչգեռ » էաք ի մերում աշխարհիս՝ ես կարող էի և կը- » արող, իսկ Սարկաւագ կարել միայն գիտէր. իսկ » այժմ՝ սա կարէ և կորէ, և բազում նկարս յա- » լելու ի վերայ » :

Իսկ Կիրակոսի ուսումնակիցն Վարդան՝ քանի մի տողով միայն յիշէ զՍարկաւագ, բայց շատ նշանական բանիւ. « Որոյ յիշատակք ձառագայ- » թիցն՝ փայլեն մինչեւ ցարդ ի բանս իւր և ի նը. » մանէ աշակերտեալսն » : Նորա ըրածն և գրածն ուրիշ կերպով չէ կրցած բացատրել՝ բայց լուսոյ կամ արեգական զուգելով, յորմէ լուսաւորեալքն իսկ ճառագայթեր են :

69. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ. — 70. ՆԵՐՍԷՍ

ԼԱՄԲՐՈՒՆ ԱՅԻ

Բագրատունեաց պայազատութեամբ Հայոց թա- գաւորութեան վերջանալուն ատեն ի բուն ի Մեծ Հայս, նորէն ծագած է նոյնպէս հին հայացեալ ցեղի մի պայծառութիւն, և սրբազան կերպով, այսինքն Պանդառնեաց ցեղն, որ մեր եկեղեցւոյ ըն- ծայած է Հայրապետաց երկրորդ վեցեակ մի՝ մէկ- ուկէս դարու մէջ (ԺԱ-ԺԲ.), որ են Գրիգոր Բ, Գ, Դ, Ե, Զ, և Ներսէս Գ. ինչպէս առաջին շարն այլ ի Գրիգոր Լուսաւորչէ մինչեւ ի Ս. Սա- հակ՝ վեցեակ մի, մի և կէս դարու միջոց (Դ-Ե.):

Երկրորդ շարին մէջ միակ Գրիգոր շնորհա- նուածն, այլ Ներսէս և մականուանեալ Կրայեցի կամ Շնորհալի, գերազանց է ի շարակիցսն, և յետ առաջնոյ շարին Ս. Հայրապետաց՝ միակ Սուրբ կոչեցեալ և պաշտեալ արժանապէս՝ 1500 երկայն

տարիներու հարիւրաւոր կաթուղիկոսաց մէջ : Սա- ակնարկութեամբ չեմք ուզեր նուազեցընել մեր շատ առաքինի հայրապետաց, մանաւանդ Վկայասէր Գրիգորեանց, արժանիքն, այլ մատնանիչ ընել ար- դէն ծանօթ Ներսիսի գերազանցութիւնը¹. և այս ոչ միայն սրբութեան փայլմամբ, այլ և եկեղեցա- կան կարգաւորութեամբ և գրագիտութեամբ, յու- բում միայն Ս. Սահակ՝ իր Ս. Գրոց հրաշալի թարգմանութեամբ ք և եկեղեցական գրոց և տօնից կարգադրութեամբ՝ բարձրագոյն է քան զՇնորհա- լին, և սա բարձրագոյն քան զնա՝ իր պէտպէս գրուածովք, մինչ Ս. Սահակայ հարազատ գրուած մեզ հասած կամ չկայ կամ քիչ, թէ և Շնորհա- լւոյնն այլ ոչ ամէնն :

Քանի որ Ժամերգութեանց ատեն իր Շարա- կանքն և աղօթքն հնչեն, և իր Յիսուս Որդին և այլ շափաւ (ստանաւոր) գրուածքն կարգացունին, ինչպէս մինչեւ հիմայ՝ այսուհետեւ եւս անմտա- նալի, անմահանալի և հինալի պիտի մնայ՝ այս յամենայնի քաղցր և անայ Շնորհալի հայրապետ. որոյ վրայ անկարելի է մեր ոճով համառօտ գրել՝ եթէ իր արժէքը բացատրել և հռչակել դիտելիք : Արդէն քիչ շատ, բայց ոչ ըստ բաւականին՝ ա- ռանձին գրուածով և գրքով այլ ծանօթ է² :

Ուրեմն մեր նպատակին գալով, եթէ չենք կըր- նար զՇնորհալին օրինաւոր Պատմաց դասակցել, կարող այլ չենք ի դուրս թողուլ. նախ, իր երկու օրպիսի և է երկար քերդուածոցն համար, յորոց

1. Եթէ նոքա Վկայասէր կառուցան, Սա կրնար կոչուիլ նաեւ Վկայաբեր. երբ արաբացի ծնեալ և է Քրիստոս վերածնեալ Յովսէփի Նոր վկայն՝ եկաւ իրեն ի Հոռովալայ, Ներսէս յորդորեց և խոստացաւ որ եթէ նահատակուի՝ ընդ Սուրբս դասակարգէ զնա. և թեր- եւս ըրաւ այլ, զի իր մահուանէն քիչ առաջ նահա- տակեցաւ պատանին, և դասեալ է ի Յայմաւուրս :

2. Տես Շնորհալի և Պարագայ իւր :

մէկն Վիսպասանոսը ինն, ութնուեան չափով Հայոց Պատմութիւն համառօտեալ, որ չի համեմատիր իր ուրիշ ընտիր քերգուածոց և Գարականաց՝ սրոց համար Երզողն մականուաներ է. միւսն Ռոբր Էջեւսիոյ յայլազգեաց առման ի ձեռանէ Խաչակրաց. որոյ մէջ իրաւ քիչ է պատմական քան զողբերգականն, բայց դարձեալ տեսակ մի պատմական է, և ունի գեղեցիկ, զգայուն և ճարտար նկարագրութիւններ: Երկրորդ, իր եղբոր և հօրեղբոր Սեծ և Փոքր Վիսպասիաց՝ հետեւող և զործակից է, Սրբոց վարքեր թարգմանելով կամ թարգմանուածը սրբագրելով իր սքանչելի յստակ և փափուկ շարադրութեամբ, որով պարագլուխ է շատ մի իրմէ առաջ և ամէն իրմէ վերջի հայագրաց, և ոչ նաեւ յԱսկեղինակ անուանեալ հին կամ առաջին մատենագրաց և թարգմանչաց մերոց:

Եթէ Ծնորհալին արձակ յատուկ ազգային պատմութիւն գրած չէ, ինքն իսկ թէ չափով թէ արձակ պատմագրութեան առարկայ եղած է: Չափով, այսինքն ոտանաւոր գրող վարուչն է իր թոռն և հօգիւրնկալ Ս. Ներսէս Լաւրրոռնացի, սա այլ միակ Սոբր հաշակեալ ի համօրէն դասս եպիսկոպոսաց մերոց՝ յաւուրց Ս. Ղեւոնդեանց. բայց այս գրածն՝ հետեւակ է, իրր մանկական եռանդեան պտուղ, անհամեմատ իր յետագայ թէ արձակ գրուածոց, թէ շարականաց և թէ քանի մի ոտանաւորաց: — Իրր եօթանասուն տարի յետ մահուան Ծնորհալոյն, (1240ին), գրեր է մէկն (որ անուանը չէ յայտնած) խոջական և վայելուչ ոճով Ծնորհալոյ վարքը, որ և տպագրութեամբ Սոփերաց Ժ. Գ. Հատորին մէջ հրատարակուած է, ի Վանս մեր, և վերնագիրն է. « Պատմութիւն վարդոց Սրբոյն » Ներսիսի կաթողիկոսի Հայոց և տիեզերալոյս » Ինասուսիքի, սկսեալ ի նախնեաց անտի նո» րին ». Լաւ գրուած, բայց ոչ բաւական այնպիսի մեծ անձին, որոյ յուսալի էր ընդարձակագիր վարք մի գտնել. և ոչ շատ տարիներ առաջ լսուած է

թէ Սրբոյնի Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանաց մէջ պահուած է չափաւոր գիրք մի անուանեալ Պատմութիւն մակեդոնեան Ծնորհալոյն: Արդարեւ խնամքով ի ծնողացն յանձնեալ սրբազանից և կրթեալ ի սրբացեղոց՝ մանուկն այն, որպէս և իր հետեւող Լամբրոնացին, եթէ ներուի՝ յորովայնէ սրբեալ անուանելոց պատուակից են, և մանկութիւննին այլ հարկ էր որ զարմանալի և հաշակելի լլար. որչափ եւս հատուն հասակնին:

Սրբութեամբ, հանձարով և արեամբ զուգակիցս այս, Ներսէս Լաւրրոռնացի, արժանի է անբաժան մնալու ի Ծնորհալոյ նաեւ ի Պատմականին: Թէ և իր շատ այլեւայլ նիւթոց վրայ եղական գրուածոց մէջ չէ թողած մեզ յատուկ այսպիսի գրուած, եթէ ի բաց թողումք իրր մանկական՝ գրած ոտանաւոր Վարք Ծնորհալոյն, սակայն ունի միւս գրուածոց վերջը կամ առաջ՝ թէ և կարճ՝ շատ կարեւոր պատմական յիշատակորաններ: Տե՛ս, յ'Բ Մասին, ի Յօդուածն 305 դէլ 429. և զամբողջ Յօդուածն 306 (էջը 430-450):

Չառ ասոնցմէ՝ Յունաց և Հայոց միարանութեան համար եղած թղթակցութեանց իրր օղակ կապող Պատմական տեղեկութիւնքն, որովք արժանաւորի և Պատմչաց շարակցութեան:

Որպէս իր մեծ քեռուոյն (Ծնորհալոյ) վրայ՝ քիչ շատ վարք և ծանօթութիւնք հրատարակուած են, աւելորդ համարիմք Լամբրոնացոյ վրայ գրուածներն ալ երկրորդել, մանաւանդ զի այսպիսի անձանց վրայ գրելու դժուար է չափ սահմանել¹:

Ի Ծնորհալոյ առած եմք զՅօդուածն 284, 288, յ'Բ Մասին Հայապատուծիս:

1. Տե՛ս Սիւռուան, էջ 86-101:

71. ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՌԱՅԻ

Անյարմար և գրեթէ անկարելի է բաժնել զսա-
 ի Ներսիսէ Լամբրոնացոյ, որ երբեմն անոր աշա-
 կերտ, յետոյ սերտ բարեկամ, գործակից, ի Մե-
 ծէն Լեւոնէ զոյգ զրկուած ընդ առաջ Փրետորիկ
 կայսեր ի գալ նորա ի Կիլիկիա (թէ և ոչ հասան
 իրարու), և այն խորատես թագաւորէն (ի Լե-
 ւոնէ) ընտրուած իրեն ներքին զազանեաց քննիչ
 (Խոստովանահայր), և միով բանիւ ըստ քաջ ճա-
 նաչողութեան և կշռողութեան նորա՝ երկու մեծա-
 զոյն հանձարք իրենց ժամանակին, ի վերջ ժԲ.
 գարու: Գարձեալ կերպով մի Գրիգոր անբաժան
 է ի Ներսիսէ յետ մահուան սորա. քիչ տարի վերջ
 նուիրելով ասոր Ներքողեան մի, արժանաւոր գու-
 վելւոյն և զովողին. որ և Պատմական շնորհք ու-
 նենալով՝ կրնայ ինքն եւս դասուիլ ընդ Պատմիչս.
 վասն զի և ի ծննդենէն մինչեւ ի մահն յիշէ զբէպս
 կենաց իր սուրբ հօր և բարեկամին. բայց ճարտա-
 սանօրէն, նաեւ երբեմն բանաստեղծօրէն. բարձր
 և վսեմ ոճով, որպիսի գրեթէ չի գտնուիր իրմէ
 վերջը զրողներու քով, և մօտենայ հնագոյն կիրթ
 գրողաց: Իր հանձարոյ վկայ են և ուրիշ գրուած-
 քըն, քանի մի Ճառք, Աղօթք և Յովհաննու Կա-
 բապետի նուիրեալ գեղեցիկ և այբբենաշար Շա-
 րակաւն, յորում շատ վայելուչ և յաջող զրու-
 ցուածք կան: Ասոնց և այլ ինչ գրուածոցը տեղե-
 կանալ խնդրողք գտնեն ի Պատմութեան Հայկա-
 կան Հին Գպրութեան, էջ 715-8:

Ներսիսի Լամբրոնացոյ զուգութեան մէկ փաստ
 մի եւս է՝ երկուքին համար այլ կաթուղիկոս ըն-
 տրելու եղած մտածութիւնն. զի և գիտութեանն
 և խոհականութեանն հետ փայլէր սա և վարուց
 մտքութեամբ, որ նշմարուի և իր գրուածներէն և
 զինքը յիշողներէն, յորս Գրիգոր Անաւարդեցի կա-
 թուղիկոսն՝ Առքր նայր կոչէ զնա:

72. ՄԻԽԱՅԷԼ ԱՍՈՐԻ. - 73. ԱՅԼ ԱՍՈՐԻՔ

74. ԵՆՈՎՔ ՎՍՀԿԱՅԻ

Ս. Ներսիսի Շնորհաւոյ հետ ունեցած՝ վերա-
 բերութեանն համար պատշաճ է՝ մերձ ի նոյն յա-
 ընել զՄիխայէլ Ասորի, և պատշաճագոյն եւս վասն
 հռչակաւոր Պատմադրեանն կամ Ժառանակագրու-
 րեանն, որ այնքան երկար ատեն անուամբ եւեթ
 ծանօթ էր յԱսորեոց գպրութեան և միայն հայերէն
 թարգմանութեամբն գտնուէր, և քիչ ժամանակ է
 որ գտնուեցաւ ասորերէն բնագիրն¹: Ուրեմն այդ
 գործը առաջին յիշողք և կարգացողք՝ մեր հայ
 թարգմանութենէն օգտուած են, ինչպէս Տիւրու-
 րիէ. իսկ անոր հետեւողն Լանկուա՝ ամբողջ գործը
 թարգմանելով փոանկերէն՝ հանդերձ ծանօթու-
 թեամբք՝ տպագրել սուաւ ի Վանս մեր, յա-
 մին 1862: Ժամանակ շուենալով Շապոյի հրա-
 տարակած ասորերէն բնագիրն ուսումնասիրելու,
 չեմ կրնար գատել՝ թէ որքան տարբերի ի հայ
 թարգմանութենէն: Համարիմ թէ շատ տեղ աւելի
 երկար պիտի ըլլայ բնագիրն, զոր թողեր է մեր
 թարգմանիչն. թերեւս լաւ եւս կ'ընէր թողուլ
 շատ մի առասպելախառն պատմութիւններն այլ
 Քաղկեդոնական խնդրոց վրայ, որոյ շեմ հա-
 կառակորդ է Միխայէլ՝ հարիւրերորդ պատրիարքն
 իր ազգին, որ և աթոռ փոխադրեց ի Ս. Անա-
 նիայ վանս մօտ ի Մերտին:

Այն ժամանակի գործունեայ կայսրն Մանուէլ՝
 շատ ծանօթ մեր պատմութեան մէջ, երբ ուզեց
 հաւատոց դաւանութեան միաբանութիւն ընել,
 ինչպէս մեր կաթուղիկոսին՝ Շնորհաւոյ, նոյնպէս

1. Տես էջ 65:

գրեց և Միքայէլի. և սա երեսօթան զրկեց ի Հռովմայ գՅովհաննէս եպիսկոպոս: Ծանօթ է որ գործն անկատար մնաց. սակայն այն առիթ եղաւ բարեկամութեան և թղթակցութեան երկու հայրապետացն: Ծնորհալի միշտ շնորհալի եղած է իր գործոց և գրոց մէջ. Միխայէլ աւելի ճօխարար և տիրարար գրէ, խրատելով և մեղադրելով իմն մեր սուրբ հայրապետը: Ետ տարի վերջը քան զսա մեռած է Միքայէլ, ժԲ. դարուն այլ վերջը, գրեթէ նոյնքան ապրած որչափ մեր Ս. Երսէս: Միխայէլ ծնած է ի 1126, և մեռած ի 1199: Մահուանէն վերջն այլ իր բարեկամութիւնն տեսցցի ի Հայո. վասն զի իր յաջորդն Իգնատիոս՝ մեր թագաւորի և հայրապետի քով կեցած է երկար ժամանակ և հօն վախճանած. ասոր քովն էր Միխայէլի պատմագիրքն այլ, և մնաց ի ձեռս մերայոց: Կոստանդին Ա. կաթողիկոս մեր՝ թարգմանել տուաւ Դաշիթ վարդապետի մի՝, բայց անկատար մնացած կ'երեւի. յետոյ յանձներ է Վարդան վարդապետի, որ անշուշտ մեր Արեւելցի՝ հռչակաւոր պատմիչն է, ձեռամբ Իրոյս (Իսահակ) անուն ասորի կրօնաւորի մի, յամին 1246. և թուի թէ այս ետքինս հեղինակին բազմայիշատակ դիպաց մէջ՝ խառներ է և զհայկական յիշատակս. մանաւանդ Ռուբինեանց թագաւորաց, Լեւոնի Ա., Հեթմոյ Ա., կնքելով երկար և պատուական Յիշատակարանով մի:

1. Ի կարգի պատմութեանն յետ մահուան Անաստաս կայսեր, ձեռագրի մի մէջ գրուած է. «Ջրաւ» ընացապարտն ամենայն բարեաց և զթարգմանիչն» հին և նոր պատմութեան գրոց, մանաւանդ այսմ» ընտազարդ մատենիս, զմեծապատիւ Բարոնիկն և զբարոզիչն տիեզերահաւի և զամենագով սուրբ» վարդապետն Դաշիթ՝ յեջեցէք»: Թուի թէ սա մինչեւ յԱնաստաս կայսեր պատմութիւնը թարգմաներ է:

2. Ինչպէս համարի և Ղազար Չահկեցի ըսելով. «Վարդան Մեծն և առաջին... թարգմանեաց զպատմութիւն Միխայէլի կաթողիկոսին Ասորւոց»:

Արդ, այս յիշատակաց համար Միխայէլ՝ մեր ազգային Պատմաց կարգին անցած էր, ինչպէս դասակարգէ և Այրիվանեցին: Իսկ հեղինակն մեր շատ պատմաց նման յԱզամայ սկըսի պատմութիւնն, և շատ նոր աւանգութիւններ ունի՝ իր ազգային ոչ սակաւ նախորդ պատմիչներէ և գրողներէ հաւաքած, որով կրնայ ըսուիլ բազմահմուտ, այլ մեծ հանձար և ճարտար ոճ մի չի ցուցըներ. սակայն պատմական տեղեկութեամբքն՝ մանաւանդ Խաչակրաց ժամանակի՝ հետաքննական է և Եւրոպացւոց, որպիսի է և յիշատակ առմանն Երուսաղեմի ի Սալահէտտինէ: Տես Յօդ. 299, յ'Բ Մասին: Երէօտէր Գերմանացին ժՋ. դարու մէջ յիշած է զՄիքայէլ, չգիտեմ ինչ աղբիւրէ առած, և կ'ըսէ թէ գրած է զՄնացեալ կամ Մնացորդ Պատմութեան թաթարաց. բայց կամ շփոթէ Մաղաքիս Արեղային գրածին հետ, որ գտնուի գրուած Միխայէլի պատմագրոց հետ, և կամ Ուռհայեցւոյն Տարեգրոց շարունակողաց հետ:

Միխայէլի Ժամանակագրութեան մեծ գործոյն կից գտնուին Չեռագրաց մէջ անոր քանի մի ուրիշ գրուածքն, ինչպէս Քանանայոռքեան կամ Չեռնայոռքեան վրայ, և այլն:

Միխայէլի յիշատակն ներելի կ'ընէ մեզ յիշել և իր մէկ ազգակից ժամանակակից վիճակակից մի, Դիոնիսիոս Եպիսկոպոս, որդի Սալիբայ, որ թէ Հայոց ծիսից վրայօք գրած էր՝ հակառակութեամբ, և թէ Հայոց ազգին Ծագրեան Պատմութիւն, զոր յիշէ Աստեմանի (Բ.) շատ անգամ: Թուի թէ առ սա գրած է մեր Ծնորհալին՝ Թուղթ մի: Քիչ առաջ քան զԴիոնիսիոս ուրիշ ասորի մի՝ Բար Սոռան՝ երկար բան մի գրած է ընդգէմ Հայոց, (Աստեմանի, Բ. 211. 383):

Եթէ կ'արժէր յիշել զասոնք՝ պէտք էր յիշել և զԵնովք Վանկացի, որ մերձաւոր է մեզ ազգաւ. չայսպ. Ա.

սա առաջ շատ նախատական բաներ գրեց Յունաց դէմ՝ երբ անոնց կայսրն Կիւռ խան կոչուած ի մերոց՝ բունեց գերի տարաւ Ղլեւոն պարոն Ռուբինեան. յետոյ զբոջակը շրջելով, Յունաց կողմն անցաւ՝ անոնց ծէսն ընդունելով, և Հայոց դէմ գրեց: Չայս յիշելով Ներսէս Լամբրոնացի ի Թըղթին առ Յուսիկ Անտիոքացի, շատ լաւ խորհրդադէ: « Ահաւասիկ մի աղբիւրն՝ բղխեաց քաղցր » և դառն, ըստ ժամանակին պատահման »:

75. ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ

76. ԳՐԻԳՈՐ ԵՐԷՅ. - 77. ՄԻԻՍ ՄԱՏԹԷՈՍ

Երկոտասաներորդ դարու Հնագոյն Պատմչաց մէկն է Մատրեոս Առնայեցի, միանգամայն և նորանշան՝ իր պատմագրութեան ձեւովն կամ տեսակով, որ ոչ սոսկ ժամանակագրութիւն է, այլ և Տարեգրութիւն, այսինքն տարիներու կարգաւ գիպուածները պատմէ: Թէ և ի սկզբան՝ հին ժամանակի գիպուածներ այլ յիշած է, բայց գրեթէ ժՍ. դարու կիսէն սկսեալ մինչև ի 1136 հասցընէ իր տարեգիրքը: Ինքն իր ծննդեան քաղաքին անուամբ կոչուի, որ է Եղեօսի կամ Ուոհա, ուր վանքի մի առաջնորդ էր, անոր համար Վանացրեց կամ լոկ Երէց և երբեմն Վարդապետ այլ կոչուի: Ըստ շարաբանութեան լեզուին՝ իր իսկ ըսածին նման տկար է, չըսեմ տխուր ինչ պէս ինքն խոնարհութեամբ կ'ըսէ. տեսութիւնն կամ գիտութիւնն այլ շատ ընդարձակ չէ, բայց իր մօտակայ սահմանները շատ լաւ ճանաչէ, և ըստ այնմ ստոյգ գրէ. և այս է իր գովելի և վաստակելի շնորհքն: Եւ զի գլխաւոր առարկայ պատմութեանն՝ իր հայրենեաց (Միջագետաց և Փոքր Հայոց) կողմերուն վրայ է, ուր տեղ տեղ իշխէին և արեւ-

մտեայ Խաչակիր կոմսք կամ իշխանք, ոչ միայն մեզ՝ այլ և անոնց այլ հետաքննական և պատուական է իր պատմագրածն. և կան պարագաներ՝ որոց համար երախտապարտ են և պէտք է ըլլան իրեն՝ եւրոպացի մանրաքնին Պատմիչքն Խաչակրաց. անոր համար ոչ միայն քննած և քաղած են իրմէ, այլ և ամբողջ փոանկերէն թարգմանած և ծանօթագրած է զայն Տիւրքիէ և դրած ի մեծաշատոր շարս Խաչակրաց Արեւելցի Պատմչաց (ի 1848), հանդերձ հայերէն ընագրաւն. առանձին հատորով այլ միայն փոանկերէնը: Իրմէ առաջ Նեշ արեւելագէտն՝ գերմաներէն լեզուաւ թարգմաններ էր այլեւայլ մասեր, իսկ Պելճիացի Խաչակրաց առաջնորդաց վրայ Մատթէոսի և ուրիշ Հայոց գրածներն թարգմաններ էր փոանկերէն: Ասոնցմէ առաջ և վերջը ուրիշ արեւելաքնին գիտնականք այլ օգտուած են հեղինակէս:

Ուռհայեցւոյն գլխաւոր յարգն է, ինչպէս ակնարկեցինք, իր ստուգագրութիւնը տեղեաց և անձանց, զոր Բագոււմ հոգաբարձութեամբ կ'ըսէ քններ և գտեր է, մինչև և ուր որ հասեր է կարողութիւնն: Ասոր հետ ունի և ազգային նախանձ և տաք հոգի մի, թերեւս ոչ այնքան ի պաշտպանել իրենները, որքան ի պարսաւել զօտարս. որոյ համար իր պատմական տարեգրութեան ճամբէն խոտորելով, կրօնական գիպուածներ և երկար գրուածներ ի մէջ բերէ. սակայն հանդերձ իր պարզ՝ մասամբ և ուսմկական ոճովն՝ ունի ոչ սակաւ զգայուն և ճշգրիտ նկարագրութիւններ, ինչպէս Բագրատունեաց վերջին թագաւոր Գագկայ եղերական վախճանն՝ հետեւեալ իր շափազանց վրէժխնդրութեամբ, և այլ ցաւալի զիպուածք երբեմն և պանծալիք քաջազործութեամբ:

Բաղդաւոր գտնուած է Մատթէոս, կամ մենք՝ իր տարեգրութեանց շարունակող ունենալով զԳրիգոր Երեց ոմն, որ հասցընէ զպատմութիւնն մին-

չեւ յամն 1162, գրեթէ նոյն ոճով, և աւելի յըստակ լեզուաւ. և հաւանօրէն ուրիշ շարունակողք այլ եղած են, յորոց կարգի ունիմք և ընտիր պատմագրութիւն մի իրր ժ.Պ. դարու, որ մասամբ Մատթէոսի գրածն է, աւելի կոկ լեզուաւ, և թուի Մմբատ Գունդատապլի (Տես թիւ 91), և հասուցած մօտ ի վերջ յիշեալ ժ.Պ. դարու:

Չահկեցիին՝ ի շարս Պատմագրաց՝ յետ Վարդանայ և յառաջ քան զՀեթում և զՄեծօրհեցիին գնէ Երկրորդ Մատրեոս պատմիչ մի. որոյ անծանօթ է մեզ և անձն և գործն. սակայն այս անուամբ կան որպիսի և է գրողք ժ.Ն. դարու, յորոց մէկն պիտի ըլլայ այդ հետաքննելի պատմիչք. որպէս Մատրեոս Զաղայեցի, աշակերտ Գրիգորի Տաթևացոյն, որ իր վարդապետին վարքը կամ գովեալը գրած է, և Մեկնորիսն Գործոց Առարկոց, և այլն:

Մեծօրհեցիին յիշէ և աշակերտ մի Տաթևացոյ ի Գանձասարայ՝ Մատրեոս Ուշտեցի կամ Տփիսիւսեցի: — Ուրիշ Մատրեոս մի եւս քանի մի օտանաւոր քան գրած է առ յիշեալ Մեծօրհեցիին: — Ասոնցմէ վերջն է, նոյն ժ.Ն. դարու վերջերք, « Մատրեոս վարդապետն ի Սեւաստուր վանքն », և սուրբան Պայէզիտի ժամանակ (1481-1512) ըստ Առաքելի:

Այսքան Մատթէոսից մէջ որն է պատմիչն, և ինչ պատմութիւնն. : Թուի թէ առաջինն ըլլայ, Զուղայեցիին, որոյ այլեւայլ գործոց երկար յիշատակարաններն յայտնի մնան:

Մատթէոս Ուշտեցիին ոչ սակաւ պատմական Յօդուածներ տուած է գրոցս, յ'Բ Մասին, որ են, 233. 243-5. 248-50. 252. 254. 259-60. 263-5. 269. 275. 278-9. 283. 285:

78. ՍՍ.ՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ

Տարեգրողներէ աւելի Ժամանակագիրք եղած են ի կարգի Պատմչաց ժ.Ն. դարու. որոց հնագոյն համարի Անեցի Երեցս այս Սամուէլ, զոր ոմանք Յովհաննէս Սարկաւագ վարդապետի աշակերտ և ժամանակակից եւս կ'ըսեն, սակայն հաւանական չէ. զի ինքն զինքն Գէորգ վարդապետի մի աշակերտ կ'անուանէ. նոյնպէս իր գործը Գրիգոր Մեծ Վկայաբրին (զոր միշտ Գրիգորիս կ'անուանէ) խընդրով գրելն և նուիրելն կը ծանուցանէ, իսկ իր մեկենասը կը կոչէ՝ Գրիգոր, որ թուի (Գ) Տղայն. իր Պատմութիւնն այլ մինչեւ ասոր ժամանակն հասուցեր է, 1177 տարին. բայց ուրիշներն շարունակեր են մինչեւ ի կէս ժ.Պ. դարու, յետոյ և այլք մինչեւ յամն 1424 հասուցեր են: Սամուէլ չի կոչուիր Վարդապետ, այլ սոսկ Երեց, բայց պատուաւոր « քահանայ կաթողիկէի Անուայ » ըստ Արարակոսի: Իր նպատակն չէ երկար պատմել՝ ոչ հին և ոչ նոր բաներ, այլ գանձք ժամանակի կամ թուականի կարգաւ՝ ստուգութեամբ նշանակել. և ինչպէս պարզապէս կ'ըսէ, հին ժամանակաց համար հետեւեր է Եւսեբիոսի և Խորենացոյ, յետոյ այլոց. ուստի իրմէ ոճով պատմութիւն խնդրելու չէ, այլ եղածներուն ժամանակը, զոր շատ աշխատութեամբ ջանացեր է ճշդել: Յայսմ իրեն չեն կրցած հաւասարիլ իր շարունակողքն. մինչև բաւական հին գրող մի վկայէ թէ ասոնց նշանակին մէջ՝ միայն Քրիստոսի և Հայոց թուականաց գուգութիւնն ստոյգ է, իսկ զիպուածներու կարգն և այլ թուականք՝ շատ սխալ:

Ունիմք հին Չեուգիր օրինակ մի Սամուէլի. ոչ ասոր մէջ և ոչ նոր օրինակաց մէջ գանուին քանի մի յիշատակք՝ իրր Սամուէլի գրուածք. ինչպէս

Աղթամարայ դիւանագիրն յիշելով Սմբատ Ա Բազրատունեաց թագաւորի դժբաղդ դէպքը և Գագկայ Արծրունայ թագաւորէն ձեռամբ Յուսիայ, կ'ըսէ. « Զոր ճշմարիւ պատմէ Սամուէլ Պատու » մագիր » . և յԱնեցին Սամուէլ չի գտնուիր այս յիշատակս : Կամ շփոթած է այս յիշողս, կամ ուրիշ գրուած մ'այլ թողեր է Սամուէլ, և կամ համանուն պատմիչ մ'այլ եղեր է :

Ժամանակագրութեան ստուգութեան կարեւորութեանն համար՝ երբ անցեալ (ժ.թ.) դարու ըսկիզբները Կարտինալն Մայ ուղեց հայերէնէ թարգմանել Եւսեբիոսի Քրոնիկոնը, որոյ բնագիրն չէր գտնուած, հարկաւոր համարեցաւ թարգմանել և զՍամուէլ, և մէկտեղ տպագրեց . նոյնը յետոյ Պրոսէ ի շարս մեր Պատմաց անցուց, փոանկերէն թարգմանելով . և Տիւրքիէ այլ մասամբ հրատարակեց փոանկերէն, այսինքն Խաչակրաց պատմութեան վերաբերեալ մասերը : — Երախտաւոր է հեղինակս և Սարկաւագ Վարդապետի ցանկալի պատմութենէն քանի մի հատուած մեզ հասցնելով :

Տես Յօդուած 281, յ'Բ Մասին գրոցս :

79. Մ Խ Ի Թ Ա Ր Ա Ն Ե Յ Ի

Գրեթէ ժամանակակից Սամուէլի, զոր յիշէ ի կարգի Պատմագրաց, և մեծապատիւ քան զնա, ինչպէս նշանակէ մեծարան վերնագիր գործոյն՝ « Հանդէսք բանից աշխարհագումար գրուցաց » տիեզերապատում անցից . վիպասանեալ ի Մխիթարայ Աւագերիցուէ մեծի կաթողիկէին Անուոյ » հոյակապ քաղաքի, ի խնդրոյ հօր Հառիճայի » (վանաց) Գրիգորի վարդապետի » : Վերնագրին համեմատ է և յառաջաբանն, որոյ և մասերուն

առաջին գրերն կապեն իր Մխիթար անունը (ինչպէս Կիրակոսի կամ Օրպելեանին՝ իրենցը) . նոյնպէս ուրիշ տեղ այլ այս խմատակ կերպով անունը յայտնած է : Ըստ վերնագրին մեծարանութեամբ կ'իմացընէ, որ առաջին ժամանակաց պատմութիւնն համասօտ պիտի գրէ, իսկ վերջինը երկար և ճոխ : Յերեք Պրակս բաժնելով զգիրսն, առաջնոյն մէջ ըստ իր նախորդաց՝ ազգաց և ազգին և մարդկութեան սկիզբը կ'ելնէ, թէպէտ կ'ըսէ թէ, « Սկսանի ի Պարոյրայ Հայկազնոյ առաջին թա » գաւորէ Հայոց՝ մինչև ցՅովհաննէս վերջին » (թագաւոր Բագրատունեաց) : Ի Հայկայ ցՎասէ երեսունեւհինգ իշխանք Հայոց եղած են կ'ըսէ, և ի Պարոյրէ սկսեալ եօթնեւտասն թագաւորք, բովանդակ հազար հին հարիւր տարուան միջոց : Բուն իր գլխաւոր և ընդարձակ գրելիքն՝ Բ և Գ Պրակքն են, որ միանգամայն հարիւր վաթսուն տարուան պատմութիւն բովանդակին, սկսեալ յետ Յովհաննու Բագրատունեաց թագաւորին մինչև ց'առումն Երուսաղէմի ի Սալաճէապինէ և ց'ամն 1193 : Այս միջոցս այլ երկու բաժնէ, բաժանման կէտ դնէ զ« քահանայանալն Տեառն Բարսղի », որ է Անուոյ եպիսկոպոսն ի կէս ժ. գարու :

Պատմութեան գլխաւոր նպատակն երկուք երկւին : — Առաջին . Բագրատունեաց պատմութիւնը . « Արգ բուն հարեալ զազգէն Բագրատունեաց և » զնախնոյն մերմէ Արգարու (?), զայն դիցուք » սկիզբն, և քաղեսցուք ի պատմագրաց աստի հա » մասօտ և հակիրճ բանի » : Սակայն տեղ տեղ կ'երկայնէ գրանն՝ ուր որ Բագրատունեաց յիշատակ մի գտնէ Արշակունեաց աստն և յետոյ եւս . ինչպէս Այրաքաջ Սմբատայ, Վրկան մարդպան Սմբատայ, և այլն : Արգարու և Սանատրիոյ վրայօք այլ կանգ կ'առնու, անոնց ատեն յիշուած Բագրատունեաց գործոյ համար :

Երկրորդ նպատակն է՝ վերոյիշեալ հարիւր վաթսուն ամաց թէ՛ Բագրատունեաց վերաբերելոց և

Թէ այն ժամանակի մեծ գիպուածոց, Թուրքաց աշխարհակալութեանն յարեւելս և ի Պաղեստին պատմութիւնը, և այս է պիտանեգոյն մասնը՝ զոր երկար գրած է անշուշտ, և որ պակսի առ մեզ, նման ուրիշ պատմչաց ցանկալի մասանց: Վարդան այդ արեւելեան նոր աշխարհակալները յիշած ատեն՝ կ'ըսէ (ՁԳ). « Պատուական երէցն Մխիթար Անեցին, որոյ յիշատակն ի գիրն կենաց, » այսպէս ասէ. Յոյով աշխատ եղէ գտանել զուստն » Սուրբանացն որ ի Թուրքաց: Նոյնն ի յիշելն զՏաղրիլ Գ, « Որ կայր, ասէ, մինչ ի Պատմագ » գիրս » (Անեցին). Տաղրիլ Գ իշխած է 1185-1200 ամաց միջոց: Վրաց վրայօք պատմած ատենն այլ Վարդան կ'ըսէ. « Եւ այս ըստ Մխիթարայ Երեւ » ցու ասիցն »: Այսպէս և Օրսղեւեանն իր պատմութեան սկզբան կ'ըսէ (Ա). « Հաւաստեաւ ծա » նոյց մեզ գեղեցիկ պատմութիւնն Մխիթարայ Ա » նեցւոյ »: — Երկու պատմչացս զովութիւնքն այլ յայտնեն իրենց գոհութիւնը Մխիթարայ գրածներուն համար, որոյ մենք այլ փափագէինք մասնակցիլ, եթէ գրածքն գտնուէին ամբողջ:

Յակոբ Այուբեան՝ Մխիթարայ Պատմութեան առարկայն համարի, « Պատմութիւն Անույ քաղա » քին, և այլ ինչ բանք պիտանիք »: — Իբր երկու դար առաջ ի Լեհաստան գրուած համառօտ Հայոց պատմութեան մի մէջ, ուր Մխիթար յիշուի, գրոց լուսանցքին վրայ գրեր է մէկն. « Սա » է Պատմիչն՝ զոր ունի մեր արքեպիսկոպոսն », այսինքն Լեհաստանի Հայոց եպիսկոպոսն ի Լեւ պերկ կամ Լէոպոլիս: Ստեփանոս Լեհացի Ռոշքեան եւս իր Բառագրոց մէջ քանի մի վկայութիւն բերած է ի Մխիթարայ, յորս յիշուի Բա կառ, Սարխնիկ, և այլն:

Հիմայ ինչ որ գտնուած է ի Պատմագրութենէն Անեցոյն Մխիթարայ՝ տպագրութեամբ հրատարակեց ի Բեդրպուրկ Քերովսէ Պատկանեան յամին 1879:

Մխիթար Անեցւոյ է Յօդուածն 301, յ'Բ Մասին գրոցս:

80. Մ Խ Ի Թ Ա Ր Գ Ո Շ

Մեր մատենագրութեան մէջ գերագոյն հանճարներէն մէկն է սա, և արժանապէս հռչակեալ իր ժամանակին յարեւելեան Հայս, ուր էր իր հայրենիքն՝ Գաւճակ քաղաք, (Կէնճէ, և այժմ Ելիսաբեթուպօլիս Ռուսաց), այն ատեն Հայ-Աղուան իշխանաց վիճակեալ: Երկոտասաներորդ գարու կիսէն առաջ ծնած, և ԹԳ-ին սկիզբները՝ յամին 1213 վախճանած: Գոչ մականունն տրուած է իրեն մօրուացն ուշ և քիչ անելուն՝ համար: Յետ Յովհաննու Սարկաւազայ առաջին հանճարն է յարեւելեան Հայս և գուցէ վերջին՝ իրեն հաւասարող մի չգտնուելով: Այլեւայլ և իրարմէ շատ տարբեր նիւ չեթրու վրայ մեզի հասած գրուածքն և լաւ գրուածք, յայտնի վկայք են իր լայն և հարուստ մտաց, որոց վրայօք բանասէրք կրնան քննել զՊատմութիւն Հին Ազգային Գրութեան (էջ 686-98), և որոց միայն անուանքը յիշեմք ի հաստատութիւն մեր ըսածին. և որոց ամենէն գլխաւորն է Գաւառաւանագիրքն, յօրինեալ յամի 1184. Ժանօթութեամբք հրատարակեալ ի Վահան Վր. Բաստամեանէ յէջմիսածին, ի 1880. առաջին գրուած այդ սեռակ գրոց, որ աւելի կամ պակաս և այս կամ այն կարգաւ և ոճով կրնար զրուիլ. այլ ինչ որ է՝ իր շափաւորութեամբն և ուղղութեամբ, և իրմէ առաջ յազգայնոց այնպիսի ինչ ամբողջ չգտնուելուն և իր աշխատանօք հաւաքելուն համար (որոց ուստի և որպէսն ծանուցանէ երկար Յառաջաբանով), նշանաւոր ճարտար գործ է. և կրնար հեղինակը անմուսանալի ընել, եթէ ուրիշ բան չունենայինք իրմէ: Բազդով Թէ ոչ շատ և ոչ յատուկ բաղձալին, այլ ունիմք իր դանագան հանճարոյ վկայ իսկատիպ, Առախրն, շատ մաքուր լեզուով գրուած. Աղօթքն,

խոհական և հոգեբույժ. Մեկնորիւն Երեմիայի մարգարէութեան. և Կրօնական գրուածք և Թուորք և Ճառք: Այս ետքի երեք տեսակքն փոքր մասամբ հասած են մեզի, և նորօրինակ բան մի չեն ըստ տեսակին, որպիսի էին Գատաստանագիրքն և Առակքն, և կրնայ տարակուսուիլ օտար գրչի խառնուրդ:

Բայց անշուշտ իսկաչնորհ էր՝ մեզի չհասածն՝ Ողբ ի վերայ բնորթեանս մերոյ, որ խրատական իմն երեւի՝ « Ի գիմաց Արամայ առ որդես իւր, » և ի դիմաց Եւայի առ դասերս իւր » . որոյ առ նունն անգամ՝ յայտնէ ստեղծիչ և արթուն մտաց գիւտ:

Յետ սոցա կամ առաջին՝ ըստ դիտման մեր գործոյն՝ Պատմական գրուածքն են, և որ քանի մի տեսակ գուշակուին. նախ իր գրածքն և իր վրայօք գրուածքն. զի ինքն իր Հայ-Աղուանից կողմանց իշխանաց և վանականաց, նոյնպէս և Վրահայոց հոշակաւոր գորգարաց՝ Զաքարէի և Իւանէի և այլոց, եկեղեցականաց և աշխարհականաց հետ կերպ կերպ վերաբերութիւն ունեցեր է, թէ ի կրօնական ժողովս, և թէ յառանձին վանականս, այն կողմէրու համբաւաւոր Վանաց մէջ (ինչպէս Հաղբատ և Սանահին), եւս առաւել ի Գետիկ կոչուածն և ի Եոր Գետիկ՝ զոր ինքն հաստատեց և կառավարեց: Իր աշակերտին՝ Վանական Վարդապետի՝ աշակերտն Կիրակոս Պատմիչ՝ քանի մի գլուխ նուիրած է իր գրոց մէջ ի յիշատակ Մխիթարայ (ԺԱ-ԺԻ), որոյ վախճանն այլ նշանակէ յամին 1213:

Թուի թէ աւելի երկար և յատուկ իր վրայօք գրած է ուրիշ մէկն, և այս պիտի ըլլայ մեր ատեն Զապեան Սարգիս եպիսկոպոսի յիշածը. թէ ի Խաչապատ վանս ի Թարգմանչաց-Չոր գտեր է զ« Պատմութիւնս անցից Մխիթարայ Գոշի », որ ըսել է իրեն հանդիպած բաներուն: Կիրակոս այլ իր մեծ Պատմութենէն զատ յատուկ և զարմա-

նալի բան մի գրած է Գոշի վրայ, զոր թողում յիշել իր կարգին:

Մխիթար Գոշ նշանակուի իրրեւ պատմիչ ի շարս Պատմչաց Հայոց ի Մխիթարայ Այրիվանեցւոյն և ուրիշէ մի: — Ինչ էր իր գրածն. Այուրեանն գրէ, թէ « Արար Պատմութիւնս պիտանի սակս » Հերձոռածոց: — Միթէ՞ իր ատեն եղած խընդիրքն և հակառակութիւնքն են եկեղեցւոյ մէջ կամ դուրս պատարագելու, և զգեստով թէ փիւրնով, և քանի մի տօնից նկատմամբ, որոց համար ստիպեց սպասալարն Զաքարէ ժողովով քըննել և հաստատել դարձանն. և զայս այլ պատմէ Կիրակոս, (Գլ. Գ): — Ինչ այլ ըլլայ այս զըրուածս, ասկէ տարբեր պէտք է ըլլայ զըրուած մի՝ որոյ համար ի կարգս Պատմչաց դատուի: Արգուութեանն Յովսէփ (կաթողիկոսացուն) ժԼ. դարուն վերջերը Շնորհալոյ Ընդհանրական թղթոց տպագրութեան վերջաբանին մէջ իր ցեղին վրայ խօսելով թողունք կ'ըսէ երկար գրելը՝ « Հոգեկիր » արանց, Սամուէլ Անեցւոյն, Գոշ Մխիթարիկ, » Վանական Վարդապետի, Կիրակոս վարդապետին » և այլոց պատմագրոյ մանաւանդ ազգին Վրաց »: Ասով յայտնուի որ Մխիթար այդ ցեղին կամ Օրպելեանց վրայօք երկարկեկ բան մի գրած է, ըլլայ յատուկ ըլլայ զլուաւոր Պատմագրութեանը մէջ, որոյ առարկայն կամ նիւթն ինչ է, յետ այսչափ յիշատակաց՝ դեռ անձանօթ մնայ:

Իսկ ինձ ծանօթն և անտարակոյս, նաեւ նոյն ինքն հեղինակին իսկական ձեռօք, որպէս հաւանիմ, գրած մի է, ի վերջ Գատաստանագրոցն, « Շարք Հայ » յապետացն Աղուանից՝ որք կացին զկնի Տեառն » Էդիշայի՝ որ եկն յԵրուսաղեմէ », և էր մի յաշակերտաց Առաքելոցն Քրիստոսի. ասոր վեց յաջորդաց անուանքը գրէ և կ'ըսէ. « Ի Սուրբն Եղի » շայէ մինչեւ ի Սուրբն Գրիգոր՝ ամբ երեք հա » ըիւր. և ապա խնդրեցին Աղուանք ի Հայոց կա » թուղիկոս զՍ. Գրիգորիս », և այլն: Ասկէ վերջը

դասէ քառասուններկու կամ աւելի կաթուղիկու-
ներ մինչեւ ի ԵԶԸ թուական Հայոց (1139). բայց
սեղ սեղ թուի անուն պակած, կամ կաթուղիկու-
սութեան թիւերն այլայլած: Յիշեալ թուականին
Ենորհալոյ եղբոր Գրիգորիս կաթուղիկոսի կողմէ
կու գայ « Սահակ աստուածընկալ եպիսկոպոս ի
» դրանէ սրբազան Հայրապետին Տեառն Գրիգորիսի
» Հայոց կաթողիկոսի, որ ըստ հրամանի նորին »,
մեծ ժողով խմբելով ի Տաուշ բերդ Բազրատունի
թագաւորազանց, Աղուանից իշխանաց և եկեղե-
ցական ուխտին՝ մեծ հանգիսով ձեռնադրէ Գրիգո-
րիս անուամբ առջի կաթուղիկոսաց և աղնուաց
ցեղէ մէկ մի, դեռ « Ի տիս պատանեկութեան գո-
» լով », ի տօնի Հոգեգալտեան. յետոյ ի տօնի
Վարդավառին՝ աւելի բազմութեամբ ժողովելոց ի
բերդն Կարաշիկոսի-քար՝ երկու եպիսկոպոսք այլ
ձեռնադրին, և միւսոն կ'օրհնեն:

Այս դիպուածէն սկսի Մխիթարայ պատմադրու-
թիւնն ընդարձակել, և նախ պատմէ քանի մի ա-
միս յետոյ մեծ և աղետալի դիպուածը՝ Գանձա-
կայ շարժին և կործանման և շատ անձանց մա-
հուան ի փլատակս, զոր ի մէջ բերեմք յ'282 Յօ-
դուածի գրոցս, յ'Բ Մասին: Յետոյ յիշէ Վրաց
թագաւորի և Պարսից պատերազմներն այն Հայ-
Աղուանից կողմերում, Կարաշիկոսի-քարի աւե-
րումն ի ԵՂԱ թուականին (1142-3). և շարու-
նակէ նոյն ոճով այն կողմերու իշխող այլազգեաց
և անոնց հակառակորդ Վրաց գործերը, մինչեւ ի
1161 տարին, յորմէ վերջն պակսին ձեռագրաց
ետքի թղթերն. վերջին տողերն այլ շատ ջնջած պակ-
սած են: Արդ, ըստ այսմ, քանեւերկու տարուան
պատմութիւն է մեր ունեցածն, որ մեր այս ներ-
կայ գրոցս և ոչ մի թերթին հաւասարի: Մխիթար
այդ թուականէն ինչուան յիսուն տարի այլ վերջ
սպրած է: Եթէ պատմութիւնն այլ նոյն ոճով շա-
րունակած է այդ կէս դարու միջոց, չափաւոր
պատմագիրք մի կրնար ձեւանալ և ոչ սակաւ հե-

տաքրբրական դիպաց յուսալի, այն Սէլջուկեանց
և Պարսից բռնաւորութեան վերջին պարագային և
քիչ առաջ քան զբեւեումն և տիեզերակալութիւն
բանագոյն և րրտագոյն հիւսիս-արեւելեան սղզին
Մոզուլաց և Թաթարաց, որոց ծագումն և առաջին
գործերը մնայր գրել Գոշի ձեռասուն աշակերտին,
այն է Վանական Վարդապետն, զոր և մեզ մնայ
հիմայ քննել, յետ քանի մի ոչ նշանաւոր պատ-
մութիւն գրողներ այլ յիշելու:

Յիշենք վասն Մխիթար Գոշի և զայս՝ որ քանի
մի գրուածոցն առաջ կամ վերջը պատմական յի-
շատակարաններ ունի, համառօտ՝ այլ պատուա-
կան: Բուն պատմադրութիւնն անյայտ ըլլալով՝
ինքն այլ իբրեւ պատմիչ անձնօթ է Եւրոպացոց.
այլ իբրեւ օրէնագիր բաւական ծանօթ՝ Պիշոֆ
անուամբ Գերմանացոյ մի թարգմանութեամբ Լե-
հահայոց օրինագրոց (ի 1862), որ առնուած է ի
Դատաստանագրոց Գոշին. որ վաղուց թարգմա-
նուած է և Լատինարէն, և վաւերացեալ Լեհաց
Սիգիսմունտ Ա թագաւորէն, ժՁ. դարու կիսէն
առաջ: Վերոյիշեալ մեզի հասած պատմութեանէն է
292դ Յօդուածն, յ'Բ Մասին Հայապատումիս:
Իսկ Դատաստանագրոց յառաջաբանէն և վերջա-
բանէն է Յօդուածն 298:

81. ԿԱՐԱՊԵՏ ՍՍՍՆԱՅԻ

Եպիսկոպոս և Վարդապետ ըլլալով Կարապետ
Սահակցի՝ ըստ խորագրի իր գրածին, որ է « Եր-
» րողեան յաղագս Վարուց Սրբոյն Մեսրոպայս »,
նորերումն հրատարակուած յԱրարատ Օրագրի Էջ-
միածնի (ԼԱ, 1897). և պատմախառն ըլլալով և նոր
ծանօթութիւնք ընծայելով մեր անմահ Հօր պարու-
թեան, Պատմըաց կարգին դասեցինք զսա: Թուի

ԹԲ. դարու վերջերը գրող. յաջորդ դարուն վերջերն այլ Յովհաննէս Արքայեղբայր օրինակած է գայր, յորմէ յայտնի՝ որ աւելի նոր հեղինակ չէ: Ետ ետանդեամբ գրած է, բայց ոչ ընտիր և յտակ ոճով, այլ շարագրութիւնն խրթին է, և բառերու խաղերով, բացատրութիւնքն այլ տեղ տեղ խմատակօրէն, իբրեւ հին բաներ գիտցող, և մեծ ու գծուար բան մի ընող. Հոմերոսի յիշած հըսկայից նմանցընէ իր ըրածը, որք լեռ լերան վրայ դրին Արամազդայ հասնելու համար, « Արպէս զՈս » տոսն (Ոթոս) և զՓարտոսն (Եփայտէս) գնելով » զՈսխա (Ովսա լեռն) ի վերայ Ալիմպիոսի և զԲիլոն » տերեւաշարժ, յանելանելին ելանել, խօսել վասն » հոմանոյն », այսինքն համագգի Մերովպայ: Առասպելին յիշատակն անշուշտ առած է ի Գաւթի Անյաղթէ կամ Մագիստրոսի մէկ թղթէն: Ս. Մերովպայ հայագգի ըլլալը ցուցընել ուզելով՝ ինչուան Արամ և Հայկ վեր կ'ելնէ. զնա գովելու համար այլ կ'ուզէ « Եարժել զկընդընդոցն (քնար) և ճա » ուել փոքր ի շատէ ». երբեմն այլ այբուբենի կարգաւ շարէ գովասանական տողերը: Նկարագրութեանց մէջ լաւագոյն է Մերովպայ հայրենեաց՝ Տարօն գաւառինը. լաւագոյն եւս (եթէ ըստոյգ) անոր Լադիկերէն գիտնալն, և յառաջ քան զկրօնաւորութիւնն քաջ զինուորական ըլլալն: Հայերէն տառից զիւտին համար այլ կ'ըսէ, թէ հրեշտակն տասնըջորս զիր տպաւորեց ի սալս սրտին Մերովպայ, որոց ձեւքն իրօք քարի վրայ տպաւորեցան և թէ մինչեւ հիմայ կ'երեւին:

82. Զ Ո Ւ Ա Ն Շ Ի Ր

Զուանչիր կամ Զեռակիր, ազգաւ Վրացի, և անչուշտ գրածն այլ Վրացերէն. բայց ինչպէս Միխայելի ասորոյ իր բնիկ լեզուով գրածն կորած էր և հայերէն թարգմանութիւնն կար, այսպէս և սորա հայերէնս միայն կայ, յորմէ և փոսանկերէն փոխարկեց Պրոսէ և տպագրեց ի Բեդրպուրկ:

Մէկ հեղինակի գործ չէ այս, որ սովորաբար Պատմութիւն Վրաց կոչուի: Զուանչիր Բ. դարու անձն է Վրաց թագաւորական ցեղէ, և գրած է Պատմութիւնը՝ անոնց անուանի Վախտանկ թագաւորէն մինչեւ իր ժամանակը. ինդրելով որ ուրիշներն առաջ տանին պատմութեան կարգը. և այսպէս ըրած են: Մէկ Զեռագրի մէջ որ ինչուան 1125 տարին հասուցեր է, գրուի. « Գտաւ Պատմութիւնս համառօտ՝ ի ժամանակս չիթմանն, » և եզաւ ի գիրքս որ կոչի Քարքրիս ցխօրեպա, » որ է Պատմութիւն Քարքրայ. և եզիտ զնա » Զուանչիր՝ գրեալ մինչեւ ի Վախտանկ թագաւոր, և մինչեւ ցայս վայր ինքն յաւել Զուանչիր. » և զգալոցն յանձնեաց տեսողացն և պատահեւ » լոցն ժամանակին »: — Յիշեալ թուականին հասնելով պատմութիւնն՝ մեզ ծանօթ Զեռագիրք անկատար մնան, որով չէ յայտ թէ ինչուան ո՞ր տարի հասուցեր էին շարաշարողք Զուանչիրի: Մէկ ցանկ մի Զեռագրաց կ'ըսէ՝ որ մինչեւ ԹԲ. դարու կէսը կը հասնի այս պատմութիւնը: Ստեփանոս Օրպելեան յիշէ զՊատմութիւնս Վրաց և զԱզուանից, կ'իմացուի հայերէն:

Որչափ այլ Վրաց Պատմութիւն կոչուի, շատ յիշատակք կան և Հայոց, սկսեալ ի Թորգոմայ և ի Հայկայ, որոյ կռիւն ընդ Բելայ և այլ ինչ գրուուին ի 5. 9. 72 Յօդուածս գրոցս, յ'Բ Մասին:

Ջուանչիբի հայերէն գրուածն տպուած է ի Վանս մեր ի 1884, հանդերձ ծանօթութեամբք:

Պրոսէ թարգմանած է ժամանակագրութիւն մի եւս Վրաց ի հայերենէ, ԺԴ. դարէն սկսեալ մինչեւ ի կէս ԺԸ. դարու:

83. ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՅԻ

Վերջին տարիներումս յայտնեցաւ այս հետաքրնելի հեղինակս, թէ և իր զխաւոր գործն՝ առանց զինքը ճանչնալու՝ վաղուց ծանօթ էր մեր գրականութեան մէջ, և են Սաակքն կամ Աղառեսագիրք. յորում շատ հեղ կենդանեաց բերան և խօսք ընծայելով՝ բարոյական խրատներ տայ: Յայտ է որ այս կերպով առակաբանութեան գիւտն շատ հին է, և քան զՍողոմոն հնագոյն համարուի, և ի գիտնոց Հնդկաց հնարեալ: Այս մեր առակաբանին ծանօթութեան մեծագէտ երախտաւոր է Մաս բանիրուն հայագէտ Ռուսերէն գրողն, որ և հայերէն գրէ շախաւորապէս. և ետքի տարիներս այս գործէս դատ՝ շատ կարեւոր տեղեկութիւններ այլ տուաւ մեր մատենագրութեան և տեղագրութեան նկատմամբ, անձամբ ճանապարհորդելով և քննելով դմասն ինչ Հայոց երկրին, և հետաքննական բաներ ի լոյս հանելով: — Յիշեալ Առակաց գրոց թարգմանութեան Յուսալբանին մէջ երկար խօսած է Մառ այս Վարդանայ վրայ:

Բարոյական կամ խրատական քանի մի գրուածք այլ Վարդանայ՝ ծանօթ են, յորս կ'իմացընէ՝ որ հայերենօք Հայոց և Եփրատացոց սահմաններէն և կ'իշրիս քաղէն էր և ստիպուեցաւ պանդխտիլ յԱյգեկ անապատ վանքն, որում իշխէին մեր Ռուբինեանք: Վարդան գրէ կամ խօսի ծերօրէն. և արդրուածոց մէջ խառնէ ազգային յիշատակներ ազ-

գային ոգւով, ինչպէս է Հայկայ յիշատակն, (Տես գրոցս 10դ Յօդուածն, յ'Բ Մասին). և երեւի հմուտ այլպիսի յիշատակաց, և գրող եւս պատմականաց, որոց մէկը գրեր է ի խնդրոյ Պարոն Պաղտինի՝ Լեւոն Ա թագաւորին ազգականին, ի ՈԿՍ թուականին Հայոց (1211-2), Երուսաղեմի ի Սալահէտտինէ առմանէն քսանըշորս տարի վերջը, երբ « էր թագաւոր Հայոց, կ'ըսէ, Լեւոն Ռուբինեաց ի Կիլիկիա, քրիստոսապսակ և ահարկու ի վերայ անօրինաց »: (Տես Պատմութիւն Հայկական հին Դպրութեան, էջ 745):

84. ՄԻԻԹԱՐ ՍԿԵԻՌԱՅԻ

Երեքտասաներորդ դարու կիսում Սկեւոյ առնուանի Վանաց գիտնական վարդապետներէն մէկն էր սա, որ և թուի հմուտ՝ ոչ միայն արեւմտեան կրօնական խնդրոց, այլ և լեզուաց. զի երբ Հոովմայ քահանայապետին, Ուրբանոսի Գ-ի, նուիրակն՝ արքեպիսոպոսն Տիւրոսի Գուլիելմոս, եկաւ ի Պողոմայիս (Աքքեա)՝ Հայոց և Լատինաց դաւանութեան միութեան կամ տարբերութեան վրայ խօսելու, Հեթում թագաւոր Ս. զՄխիթար զրկեց իր և կաթողիկոսին կողմանէ պատգամաւոր. նուիրակն հանդիսական ժողով կազմած էր իր աստուածաբաններով և իշխանօք, որոց ներկայանալով՝ հետերին վիճեցաւ Միթար, բաւական հմուտութեամբ և ուժով, պաշտպանելով իր եկեղեցին, երբեմն և չափազանց յաջ ու ձախ խոտորելով: Յետոյ այս ժողովոյ և վիճարանութեանց Պատմութիւնը գրի անցընելով՝ տուաւ Հեթմոյ, քառատողեան ոտանաւորով մի: Որչափ այլ յատուկ Հայոց քաղաքական պատմութիւն չէ գրածն, այլ նոյնպէս կրնայ ըստիլ ըստ եկեղեցականին, մանաւանդ որ ի սկզբան՝

Պապին Նուիրակին և անոր ժողովականաց վրայ տեղեկութիւն տայ:

Նման գրուած մ'այլ յետոյ շարագրեր է ի խընդրոյ Կաստաղոնի Յակովբ եպիսկոպոսին՝ երկօտաօան Սաքերոյ և իրենց Աթոռոյ և յատկապէս Յունաց՝ աստիճանաց հաւասարութեան կամ վեր վար դասակարգութեան վրայօք. որ առաջին դըրուածքին շտի հետաքրքրական չէ, այլ այն դարուն համար՝ յորում Լատինաց և Հայոց եկեղեցւոյ միարանութեան խնդիրք յուզուէին, կարեւոր համարելի է:

Այս գրուածներէն զատ բան չէ յիշուած. սակայն անոնց մէջ ցուցած հմտութիւնն և ի դիմաց թագաւորին (և կաթողիկոսի) նուիրակութիւնն՝ անտարակոյս կ'ընեն՝ որ առաջուց այլ անուանի էր գիտութեամբն, որոյ յայտնի նշան է ծանօթ գըրուածն:

Մխիթարայ գրածին նման մի լատիններէն թարգմանուած և տպագրուած է ի կարգի բազմահատոր ընդարձակ Պատմութեան Դոյրոյնց Լատինաց:

85. ՅՈՎՀԱՆՆԵՏՍ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Մխիթարայ Գոշի ձեռասուն աշակերտ է Վանահան Վարդապետ, և յետ նորա մեծահամբաւ ի վարդապետս և ի մատենագիրս մեր, և թերեւս վերջինն այսպիսեաց. իր աշակերտքն այլ, մանաւանդ Կիրակոս՝ շատ գովեն, և իր ժամանակին յառաջին կէս ժԳ. դարու՝ ամենէն գիտուն և հրաշակեալն ցուցընեն: Իր մնացեալ և յիշեալ գրուածքըն այլ նոյնպէս՝ կ'երեւցընեն շատգէտ, խոհական և հանգարտ գրող մի:

Գրեթէ հայրենակից է Մխիթարայ Գոշի, ի Տաւուշ գաւառէ Հայ-Սղուանից. որոյ մտաբըր մեծ

եկեղեցի և վանք մի շինեց՝ Խորանաշատ կոչելով: Յետոյ աւելի առանձնանալ ուզելով, քանի մի աշակերտներով քաշուեցաւ ի քարայր մի ընդարձակ, փոքր եկեղեցի մի շինելով քովը, և հօն անգրաղ պարապէր ուսմանց, սովրեցընելու և աղօթելու: Սակայն իր համբաւն հնչեց շատ հեռու կողմեր այլ. և երբ ըստ խնդրոյ Հռովմայ Հայրապետին՝ մեր Կոստանդին կաթողիկոսն ուզեց պատասխանել անոր՝ Հոգւոյն Սրբոյ ի Հօրէ և Որդւոյ բղխման խնդրոյն վրայօք, հարցուեցաւ Վանական Վարդապետ այլ, որ և հմտութեամբ Ս. Հարց բանից՝ գրեց ի հաստատութիւն հռովմական դաւանութեանն և զրկեց առ կաթողիկոսն, որպէս պատմէ և գրածն այլ աւանդէ մեզ իր վերոյիշեալ աշակերտն Կիրակոս Պատմիչ. յիշելով և անոր ուրիշ գրուածները, ինչպէս Մեկնոսրիւն Գրոց Յովթայ, Համեմատութիւն Հիւ և Նոր Կրակարանաց, այլև և այլ ճառք և տեղեկութիւնք Տարեգրիտոյ, Առաջադրաց Պաճոց, և այլն. և փոքրիկ բայց շատ պիտանի՝ սակաւածանօթ ազգային և կրօնական իրաց ծանօթութիւնք, հարցմամբ և համաօտ պատասխանով. յորոց մին է և Խորենացւոյ պատմագրութեան սկզբան գրածն (Ա. ք) Յունաց համար՝ թէ ասոնք հնարեցին կամ թարգմանեցին այլևայլ արուեստ և գիտութիւն, « Արպէս զԱյր » առ Քե, և զԹոյ առ Փիշր, և զԿեև առ Ել, և » զՇայ առ Թոյ » (կամ Սե):

Ասոնց և նման գիտելեաց հմտացեր էր Վանական շատ ու շատ նախնեաց գրքեր քննելով. բայց այն ատեն հանդիպած արեւելքի քաղաքական մեծ յեղափոխութիւն մի արգելք եղաւ իր անգրաղութեանն և քննութեանց. — Թաթարաց արշաւանքն. որք եկան և իր ու շատ եկեղեցական և աշխարհական մարդկան ապաստան եղած քարայրը պաշարեցին, սովով և ծարաւով նեղեցին: Վանական իրրեւ հասարակաց հոգացող հայր՝ երկու աշակերտներով ելաւ դնաց Թաթարաց զլխա-

ւորին, ազաչելով որ խնայեն իրենց. և երբ անոնք խոստացան և պաշարեալքն դուրս ելան, բարբա-
րօքն կողոպտեցին զանոնք իրենց ամէն ստացուածէն և իրրեւ գերի քշեցին ու յետոյ վաճառեցին: Վանական Վարդապետն այլ յիտուն դահեկանի վաճառուեցաւ և գնուեցաւ, և դարձաւ իր քարայրը, և յետոյ իր առաջին վանքն՝ ի Խորանաշատ. ուր և վախճանեցաւ յամին 1251, յ'18 մարտի. և մեծաշուք յուզարկաւորութեամբ, որում հանդիսադիր էր Ազուանից կաթողիկոսն հանդերձ իր և Հայոց եպիսկոպոսօք և վանականօք, իր շինած եկեղեցւոյն քով՝ աղքատաց գերեզմանոցի մէջ թաղուեցաւ. « Զի ինքն այսպէս հրամայեաց...: Յետ » միոյ աւուր յիշատակի նորա, ողբացեալ և լա-
» ցեալ յոյժ ի վերայ գերեզմանի նորա, և մխի-
» թարեալ զեղբարս որ անդ՝ դարձան յիրաքան-
» չիւր տեղիս »:

Այս Թաթարաց արշաւանաց և Վանականի գերութեան դժբաղդութիւնն՝ մեր դպրութեան և մեր այժմու նպատակին մեծ բազդի պատճառ մ' եղաւ կամ եղած է (զի նոր դժբաղդութիւն ծածկեց զբազդն). այսինքն՝ այս մեծ վարդապետն զրեց և մանրամասնաբար, կ'ըսէ Վարդան՝ իր միւս գըլխաւոր աշակերտն, Թաթարաց կամ Նետոդաց (ինչպէս կ'անուանուէին այն ատեն) ծագման և արշաւանաց Պատմութիւնը, սկսելով 1236 թուականէն. զոր յետոյ շարունակեց Կիրակոս մինչեւ ի 1265. անոր համար ինքն Վարդան չուզեց « երեքիկեղ և բազմաբանել », այսինքն յետ այն երկուքին (վարպետին և աշակերտակցին) երրորդ անգամ գնոյն բան գրել: — Կիրակոսի գրածն իր Պատմութեան մէջ գրեթէ բոլոր գրածին կիսով չափ է, յորում և իր Վարդապետին գերութիւնն, զոր մենք այլ կցած եմք ի մեր հուաքման, (Տես Յօդուած 322, յ'Բ Մասին):

Իսկ իր վարդապետին գրածն որչափ և ո՛ր է: — Ահա մեր դժբաղդութիւնն, որ այս հետաքըն-

նական պատմութենէն այլ, և այնպիսի գրչէ ելած, զրկուած եմք, և ոչ շատ ժամանակէ ի վեր: Մխիթար Գոշի կորուսան ողբալով յիշեցինք՝ որ ժԹ. դարու վերջերը (1788) նա ծանօթ է եղեր մէկու մի՝ որ անոր հետ յիշէ և զՎանական (Տես էջ 251): Հետեւեալ ժԹ. դարու սկիզբները, յամին 1812, Ունկարաց երկրի գաղթական Հայոց մէկն զրէ առ Աբրահայր Ուխտիս (Ստեփանոս Ագոնց Արքեպիսկոպոս) թէ կ'աշխատի գրել զպատմութիւն գործոց ձինկիլիսանի և Լէնկիլիմուրի և յետոյ նաեւ Ղուչի խան Թահմազայ. որոյ համար ոչք Հայ Պատմիչ գտեր է, յորս ամենէն կարեւորն է՝ « Վաւա-
» կաւ Վարդապետ մեծաւոր կրօնաւորաց, որ գերի
» վարեցաւ ի Մոզուաց... գրեաց զամենայն անցորդ
» զործեցին Թաթարք ի Հայաստան և յայլ տեղիս,
» և աւարտեաց զՊատմութիւնն եռնր (իւր) յամի
» Տեսան 1238 »: Վերոյիշեալ Վարդանայ ըսածն ասոր ըսածին զուգելով՝ Վանական երեք տարուան պատմութիւն միայն գրած կ'ըլլայ, և Կիրակոս անկէ ետեւ իրրեւ երեսուն տարուան. բայց զի նոյն Վարդան վկայեց, թէ երկուքն եւս մանրամասնաբար գրեր են, հետեւի թէ բաւական երկար գրած է Վանական, և զուցէ այդ Նետոդաց առաջին անգամ նետերնին ի Հայո հասուցած ատենէն սկըսելով: — Այս ետքի յիշողներէն առաջ Եսայի Հասան Զաւարեան եպիսկոպոսն այլ կ'երեւցընէ թէ ունէր իր գրանոցին մէջ նաեւ այս մեր խնդրած Վանական Վարդապետի Թաթարաց Պատմութիւնը: — Ոչ շատ տարի առաջ մտածելով թէ վերջին ստացողին (Ունկարիոյ Հայոյն) սերունդը կրնայ գտնուիլ և անոր քով թերեւս մնացեալ է իր նախնոյն յիշած պատմագրքերն, հաւատարմի ձեռօք ստուգեցի որ կայ նոյն մականուամբ մէկն՝ ոչ հետու ի Վիենայէ, բայց իր բնիկ ազգին լեզուէն աւելի՝ օտարացեր է ի սիրոյն, և զժուարմերձեանակի անձ մ'է. խնդիրս առաջ չի գնաց:

Վանական վարդապետ այս Թաթարաց Պատ-

մութենէն զատ՝ ուրիշ մ'այլ գրած է՝ ոչ սակաւ կարեւոր և աւելի կրօնական տեսութեամբ, բայց քաղաքական՝ մանաւանդ ազգային իրօք՝ խառն. այն է ԺԳ. դարուն սկիզբներում Զաքարիայ մեծ Սպասաւարի ստիպմամբ ի Լօռէ և յԱնի եղած Ժողովոց ղէպքն, որ շատ յուզմանց պատճառ տուին ժամանակին նշանաւոր Վարդապետաց և Վանահարց, որոց անհաւանից վրայ՝ խստանայր սպարապետն, իսկ Մխիթար Գոշ գերագոյնն Վարդապետաց կակուղցընէր: Կիրակոս Պատմիչ վկայէ (Գ) թէ « Զբովանդակ իրս և զբան և զգործ այս » Ժողովոյ՝ գրեաց մեծիմաստ և առատասիրտն » Վարդապետ Վանական՝ յիշրտմ Պատմադրեանն. » զի ականատես էր նա իրացն եղելոց և ական. » ջայուր, յաշակերտի կարգի գոլով յայնժամ առ » Մեծ Վարդապետն (Մխ. Գոշ): Այս, և այլ » յորով իրք գտանին ի զիրս նորա, որք կամին մը. » տաղիւրութեամբ ուսանիլ »:

Արդ. եթէ զատ պատմագրութիւն և եթէ զոյգ ընդ Թաթարացն՝ դարձեալ ստուգուի Կիրակոսի հարազատին Վարդանայ ըսածն, թէ մանրաւաւ նարար գրած է Վանական, որով և մեր զրկումն աւելի կսկծալի. զի չունիմք այս հետաքննական ժողովոց պատմութիւնն, յորում ժամանակի գումարեալ էին երկու կողմ բաժնուած եպիսկոպոսք և վարդապետք, յորոց քսանիւ շափ յանուանէ յիշէ Կիրակոս, վկայելով թէ եկած էին « Եւ եւս յորովք » քան զյիշեալսն »:

86. ԿԻՐԱԿՈՍ Վ.

ԳՍՆԶՍԿԵՅԻ. - 87. ՄԻԻՍ ԿԻՐԱԿՈՍ (?)

Հիմայ կարգ մեր բանիս կու գայ սոյն Կիրակոս Վարդապետիս Պատմագրութեան, որ հայրենեօք էր ի Գանձակայ, և մերձաւոր սահմանաց իր վարպետին Վանականայ և անոր վարպետին Գոշի, զոր զուցէ տեսած ըլլայ իր նորարոյս տղայութեան ատեն: Բաւական կիրթ ճաշակ և լեզու ունի սա, և կ'ընէ պատիւ իր շատ անգամ յիշած և գոված Վանական Վարդապետին. որոյ և ձեռասուն և հաւատարիմ աշակերտաց զլսաւորն երեւի, անոր հետ պաշարուած և զերուած ի Թաթարաց, և փախտեամբ ապրած և գարձած նորէն առ սիրելի հոգեւոր հայրն՝ անոր հաստատած վանքերուն մին կամ մէկայլը, և յետ անոր վախճանին՝ շարունակած անոր Թաթարաց վրայ գրածը: Բայց այս միայն չէ Կիրակոսի պատմագրութեան նիւթն, այլ նախ ճարտար « Համառօտ Պատմութիւն և ցուց. » մունք անուանց Սրբոյն Գրիգորի և որք յետ » նորա յաջորդեցին ». որ իր բոլոր պատմագրոց՝ գրեթէ ամբողջութեանն երրորդ մասն է, կամ հնգին երկուքն. և է ըստ վերնադրին խառն պատմութիւն եկեղեցական և քաղաքական ի Գ. դարէ մինչեւ ի վերջ ԺԲ-ին, յիշատակօք Արշակունեաց, մարզպանաց ժամանակի իրաց Հայոց, Ոստիկանաց Արարացւոց, յետոյ Բագրատունեաց և Ռուբինեաց Պարոնայց, մինչեւ ի սկիզբն Թագաւորութեան նոցա. ճարտարութեամբ հիւսուած և շարուած, կարեւոր ղէպքերով. վայելուչ Յառաջաբանով, որոյ սկիզբն իր (Կիրակոս) անուան ութ տառերով երկերկու տողերով Պատմութեան զիտութիւնն բնական կիրք և պէտք մ'ըլլալն մարդուս՝ յայտնէ, և թէ այն ազգմամբ շարժեալ են արտաքին

գրողըն. իսկ ներքինըն՝ այսինքն սրբազան և եկեղեցական Պատմագիրք՝ ի Հոգևոյն Սրբոյ գրեցին ինչ որ գրեցին, որոց գլխաւորաց անուանքն այլ յիշէ. և յատկապէս Հայոց՝ իրմէ առաջ գրող պատմըչաց՝ յԱզաթանգեղոսէ և ի Խորենացոյ մինչև յինքն քսան պատմիչ թուէ, որոց երեքն կամ չորս դեռ չեն յայտնուած, և զորս ըստ ժամանակագրական կարգի յիշած եմք. և յետ այն անուանելոց պատմչաց՝ «Մերս ձեռնարկութիւն» պատմագրութեան կ'ըսէ, աղաչելով որ «Մի ումք յանգըզ» նութիւն համարեցի, այլ առաւել բարեացն նա» խանձոյ գործ. զի հարկանեն զմեզ միտք մեր՝ ոչ տալ լուսեան զայսպէս աղէտ տարակուսանացն, զոր լուաք ականջօք մերովք և տեսաք»։ այսինքն Թաթարաց աշխարհակալութիւնն կամ աշխարհաւերութիւնն, որոց ըրածն՝ յետ Վանականի գրածին, լուեն՝ խից՝ կամ մեղք համարէր, և գրեթէ վախէր որ այդ խուժքն առաջնորդ ըլլան Նեոխն, և մօտենայ Քրիստոսի երկրորդ գալուստն, ըստ Կորին բանի, թէ «Ջի գոր գուշակեաց այրն» ըայ», և այլն. և «Ջի գոր գուշակեաց այրն» Աստուծոյ Սուրբն Ներսէս (Պարթեւ) վասն ազգին Նետողաց և աւերման աշխարհիս Հայոց, այժմ կատարեցաւ յազգէն՝ որ Թաթարն կոչի, զի բազում ազգ և ազիւնք ջնջեաց. զոր և յիւրում տեղունջն պատմեցուք»։ Այս ախուր տեսլեան վրայ ցաւալի՝ բայց յարմար խորհրդածութիւն մի կ'ընէ, թէ առաջին պատմիչքն ախորժելի բանի մի ձեռք գարնէին, կամ իրենց թագաւորաց կամ իշխանաց և ցեղից յաջող գործոց, իսկ ինքն ստիպուել այն իր ժամանակի ձախորդութեանց, և միայն մխիթարուի որ Հոգւոյն Սրբոյ Գալլուստեան տօնի օրն սկսի պատմագրել, և խնդրէ որ չարհամարհեն գրելիքը, «այլ զիջանել եղբայրաբար» և ընդունիլ ինչ որ ուզեց «Թողուլ յիշատակ ապագայից»։

Յետ վերոյիշեալ Առաջին մասին ընդհանուր

պատմութեան՝ որ մէկ կտոր ձուլած է, սկսի իր ժամանակին եղածը և տեսածը պատմել՝ բաժնելով յատուկ գլուխներ, վաթսուներեք թուով, սկսանելով Լեւոնի Ա-ի Կիլիկիա թագաւորելէն, յետոյ անոր յաջորդ Հեթմոյ և անոր Սմբատ եղբոր ի Թաթարստան երթալն, ճամբորդութեամբ հանդիպած տեղուանքն այլ մի առ մի յիշելով, և ուրիշ շատ դէպքեր. ինչպէս մեր նախ յիշած Մխ. Գոշի, Վանականի, Զաքարէի ընել տուած Ժողովոց պատմութիւնն, Թաթարաց գործերն յարեւելս, ի Հայս, ի Վիրս և ի Փոքր Ասիա և յԱսորիս, Ազուանից կողմերն եղած իշխանքն, կաթուղիկոսն, վանորայք և վարդապետքն, Հոգւոյն Սրբոյ Բղխման խնդրոյ համար Կիլիկիոյ Ժողովն և Գրուածք, և այլն, մինչև ի Հուլիզուն Ղանի գործերն։

Ըստ այսմ վաթսուներորդական պատմութիւն է Կիրակոսի գրածն, աւելի՛ Մեծ և արեւելեան Հայոց, բայց և յարեւմուտս և ի հարաւակողմանս հանդիպածներու. և թէպէտ հաստ գիրք մի չէ, բայց բաւական հմտութեամբ և ախորժելի կարգալու. ըսածներն այլ ստուգութեան ջանքով և յստակութեամբ. որով ժԳ. գարու պատմչաց ընտրելագոյնն կրնայ ըսուիլ։ — Պատմածներուն կարեւորութեանն համար, մասամբք և ամբողջ այլ՝ փոփոխութեան թարգմանուած է ի Տիւրքիէէ, ի 1858, և ի Պրոսէէ, ի 1871 ամի։

Մեր վանաց տպագրութեան (ի 1865) յարած եմք, «Միւս Պատմութիւն Աբանչելի Վարդապետին Մխիթարայ» (Գոշի), հրաշխտան վեպատանական տեսիլք և գործ մի այդ մեծ վարդապետին. երեք չորս թուղթ բան, որոյ վերջը գրուած է. «Ես Կիրակոս Պատմագիր՝ բանի սպասուոր և աշակերտ Ս. Վարդապետին Մխիթարայ՝ որ մականուամբ Գոշ կոչիր, ականջով իմով լուայ և աշօքս տեսի զայսքան սքանչելիս, և ձեռք իմովք գրեցի զատ ի Պատմութեանց իմոց, և եզի ընդ Ս. Նշանին. և յատուկ կայ գրեալ ընդ

» Մկրտեղիկ (որ յիշուած է ի պատմութեանս),
 » որ ամփոփեցաւ ի տաճարի Ս. Ստուածածնին » :
 Տարակուսական է գրուածս, թէ իբրեւ պատմութիւն և թէ իբրեւ այս մեր Պատմիչ Կիրակոսէն գրուին : Դէպքն եղած կ'ըսուի յամին 1196, յորում դեռ չէր ծնած Կիրակոս (եթէ ծնած է 1203-ին) : Մխիթարայ աշակերտ ըլլալն այլ հա. զի կրնայ ըլլալ, զի նա մեռած է ի 1213. բայց ստոյգ է որ մեր Պատմիչն Գանձակեցի կրթուած է ի Գետիկ՝ ի վանս Մխիթար Գոշի : Ստոյգ թէ անստոյգ՝ կրնայ հաճոյաբար կարգացուիլ այդ վէպն :

Միւս նշանաւոր գործ Կիրակոսի, թէ և ասոր հեղինակութեան վրայ այլ տարակոյս եղած է, այլ ինձ հաւանական երեւի, է Յայտնաշարքն, որ յանուն Արեւելցի Կիրակոսի յիշուի : Այս կոչումն արգելք մի չէ և Գանձակեցի ըլլալուն. զի իր ընկեր Վարդանն այլ Արեւելցի կոչուի : Յայտնի է որ քանի մի տեսակ կամ կարգաւորութիւն Յայտնաւորաց կայ, որոց մէկն այլ կոչուի յանուն Տէր Խորաշէրի, որ անծանօթ անձ մի է, բայց նա այլ Վանականի աշակերտ համարուի : Իսկ մեր Կիրակոսն՝ Յիշատակարանին մէջ կ'ըսէ, թէ այս գործս հաւաքեր և կարգեր է ի Սիս Կիլիկիոյ գանուած ատեն, յամին 1269, իր կենաց վաթսունեւվեցերորդ տարին : Հին օրինակի մի մանր յիշատակաց մէջ գրուած է. « ԶԿիրակոս Վարդապետ Արեւելցի, » ի Վանաց Գետիկցի, գյարմարիչ և լսուաւորիչ » այսմ կտակիս և գտացող սորո » ... : Հօս պակսի հետեւեալն. բայց ուրիշ տեղ յիշուի այն ստացողն ինքնագիր՝ Առաքել Եպիսկոպոս, որ խնդրէ յիշել իր ծնողքն և եղբարքը և քոյրերն : Բայց երեւի որ այդ յիշեալ թուականէն շատ տարի առաջ սկսեր է Կիրակոս այդ Յայտնաւորաց կարգաւ Սրբոց վարուց հաւաքումը, ինչպէս ցոյցընէ այդ գրոց ուրիշ օրինակի մէջ հետեւեալ բանս. « Համարձակեալ ես նուստ Ծառայ Ծառայիցն Քրիստոսի

» Կիրակոս Վարդապետ, ի թուականին Հայոց ԶԲ
 » (1253-4) աշխատեալ յաւելի ի Նախակարգեալ
 » Տօնապատճառս՝ ճոտս համառօտս հարիւր և եր-
 » կոտասան¹, հաւաքեալ յաստուածաշունչ գրոց, ի
 » պայծառութիւն կաթողիկէ եկեղեցւոյ և մեզ տօ-
 » նողացս ի բարեխօսութիւն... : Զիդս և զփա-
 » փազ արտասանութեան այսմ (երկու) սուրբ
 » Վարդապետք լցին, Վահրամ և Ստեփաննոս,
 » զի գրեսցին ի դիրն կենաց. զոր սկսաք ի Վանքն
 » Կողայ² » : Որչափ այլ ճշտ և Տօնապատճառ
 ըսուած է, սովորաբար նախնիք այդ Յայտնաւորաց Սրբոց իւրաքանչիւր վարքերն այլ մէկմէկ ճշտ կոչեն և համբեն : Յայտնաշարքն ձեւանալէն և անուանելէն առաջ՝ յարմար էր այդպիսի հաւաքումնը կոչել հնագոյն կարգաւորեալ գրոց անուամբ մի, Տօնաւակ, Տօնաւանակ, Տօնապատճառ, Տօնախան, և այլն :

Ծանօթ է մեր եկեղեցւոյ ժամերգութեան սիրողաց՝ Ս. Ստուածածնի Վերափոխման պատմական Շարակաւն այբուբենի թուով տանց, հետեւակ պարզ սճով, և որոյ հեղինակն կոչուի Կիրակոս Արեւելցի :

Կիրակոսի են, յ'Ք Մասին գրոցս, Յօդուածքն 175. 270. 280. 297. 312. 314. 319-20. 322-3 :

Թաթարաց գործոց Պատմչաց կարգին երկրայութեամբ յիշենք և Կիրակոս մի՝ որիչ ի Գանձակեցւոյն. զի ժԸ. գարու յիշատակագրող Վարդապետ մի (Իգնատիոս Զաղատ) գրէր՝ թէ Լէնկիթի մուր երբ մօտեցեր է յԱնի՝ իբրեւ թէ բնակիչքն փախեր և գաղթեր են ի Ղրիմ՝ ի Հին Զուլայն, և այս « Ըստ Պատմաշարեակ Կիրակոս գրքին » : Ծանօթ Գանձակեցի Պատմիչն դարով յառաջ էր քան ըզ-

1. Ուրիշ Օրինակք գրեն հարիւր և եօթանասուն :
 2. Թերեւս Կողոջ վանքն՝ որ յիշուի ի կողմանս Արժկէոյ, ի սկիզբն ժն. դարու : — Անծանօթ են այդ երկու Վարդապետքն եւս :

Լէնկթիմուր. իսկ իր ատենի թաթարաց արչաւանաց ատեն չի յիշեր Անեցոց զազթիլը. ուստի թուի թէ ուրիշի է այս Կիրակոս գիրքն, կամ իր պատմածներուն վրայ յաւելած պատմութիւն մի Լէնկթիմուրի գործոց:

88. Վ Ա Ր Դ Ա Ն

Վարդան իբրև հարազատ եղբայր և սիրելի աշակերտակից է Կիրակոսի, Վանական Վարդապետի դաստիարակութեամբ: Երկուքն այլ յարգանօք և ընտանեբար յիշեն մէկմէկ իրենց զբուռածոց և յիշատակարանաց մէջ, և երբ հանգիպին ժամանակակից դիպումաց՝ զընթերցողն մէկն առ մէկալը զրկէ, զգուշանալով կրկնել ընկերին զբածը. երբեմն միատեղ ապրած, երբեմն իրարմէ հեռու, մի և նոյն տարի վախճանած յիշուին (1271), և թէ ոչ նոյն տեղ՝ այլ նոյն Հայոց արեւելեան հիւսիսային կողմ՝ հանգչած, ուր հանգչէր և իրենց վարպետն: Վարդանայ հայրենիքն՝ այսինքն ծննդեան տեղն չի յիշուիր, գոնէ ես չեմ յիշեր. բայց Կիրակոսի պէս Արեւելցի կոչուի, և իրեն մօտաւոր ժամանակի շատ Վարդաններէն որոշուելու համար՝ Մեծն (Վարդապետ) կ'անուանի: Այս մեծութիւնն առած է իր շատ գիտութենէն և զբուռածոցն, որ և բազմատեսակ են, խղճմտութեամբ և հմտութեամբ զբուռած, միանգամայն և յատուկ և վայելչորէն անոյշ բացատրութեամբ, զրեթէ ընտանօրէն ամենուն հետ, հանձարոյ փայլակներով զուարթացնէ առանց իմաստակութեան. որովք ըստ հասարակաց հաւանութեան՝ վերագասեալ և համբաւեալ է քան իր մտերիմը: Քաղցրութեան հետ խոհեմութիւն և պատշաճ մարգավարութիւն ցուցած և հաճոյ եղած է՝

որոց հետ տեսնուեր, խօսեր և զրեր է, ըլլան ժամանակին վանահարք, վարդապետք և աշակերտք, ըլլան իշխանք արեւելեան Հայոց և Աղուանից, ըլլան և արեւմտեայքն՝ Հեթում՝ Ա. և իր դշխոյն Չապել, Կոստանդին Ա. կաթողիկոս, որոց ստիպմամբ կեցեր է ի Կիլիկիա չորս հինգ տարի և անոնց խնդրանօք զբաւոր և բանաւոր գործակատար եղած է. և ի դիմաց նոյն կաթողիկոսի նուիրակ եկեր է առ արեւելեան վարդապետս: Թագաւորին և թագուհւոյն յօժարութիւնը տեսնելով՝ իբրև ծաղկահասակ ուսումնասէր պատանեաց, Ս. Գրոց՝ մանաւանդ Նոր Կտակարանաց քանի մի բանից և անձանց և Քերականի ծանօթութիւններ տուած է աշխարհիկ և ընտանի լեզուով, և զբքոյլը կոչէ Ճղաւք, այսինքն զուարճալիք կամ զբօսանք, և յանձնելով առ Հեթում՝ խնդրէ որ այդ Ճղաւքը՝ թագաւորի պաննի իր քովը:

Արշափ կ'ապշեցնէ զմեզ՝ երբ յանկարծ այդ Սոյո ծիրանածաղիկ պօսակաւորներու արքունիքէն յափշտակուած՝ արեւելից խոժարուժ Մողղաց Հուլաղու զանին վրանին տակ տեսնենք զինքը՝ անոր հետ նոյն իր պարզութեամբ և զգաստութեամբ խօսիլ, պատասխանել, հասկըցընելն այլեւայլ բան, մանաւանդ կրօնական, և խրատելն որ խնայութեամբ վարուի ընդ քրիստոնէից և ամենուն հետ արդարութեամբ: Այսպիսի տեսութեանց և խօսից, որպէս և իր ընտանեբար զբուռածոց առ աշակերտակիցն՝ քանի մի ճաշակ ընծայեն Յօդուածքն 268. 315. 325-7, յ'Բ Մասին գրոցս:

Քաղաքագիտութեանն հետ զուգելով իր գրագիտութիւնն, անտարակոյս յետ Վանականի իր ժամանակին գերագոյն Մեծ Վարդապետն է Վարդան: — Յիշեցինք մէկ երկու գրուածքն և խօսուածքը. յիշենք յանուանէ միայն իր Մեկեղաքիւնները Սուրբ Գրոց, Մաղաւի, Մովսէս մարգարէի հիւնգ գրոց, Երգերգոցի, զոր ընծայեր է առ խնդրող հաւնիրակն իւր Կիրակոս Վարդապետ:

միւս գրքերն այլ և այլ վանահարց խնդրով գրած է և նոյնպիսի քաղցր և փափուկ յիշատակարանօք կամ ընծայական թղթովք: - Աւնի և մի քանի վայելուչ Գարականք՝ որք ախորժով երգըցուին և պիտի երգըցուին յեկեղեցիս մեր, թէ և քիչ մի ծանր են եղանակքն՝ ԱԿ (առաջին կողմն): - Քանի մ'այլ մանր կրօնական գրուածներէ զատ, ունի գեղեցիկ Երբրոյեան մի ի Ս. Լուսաշորիչ մեր, և Երբրոյ ի Ս. Խաւն, Մեկնոչքիւն Անքառամ ծաղիկ Գարականին, Վարք կամ Գովեստ ի Յովնան Օճնեցի կարողիկուն. բայց այս գրուածս չեմք տեսած և չեմք երաշխաւորեր:

Անշուշտ դեռ շատ բան այլ գրած է այդ արգասաւոր և գիւրավարժ գրիչն, որք գոնէ ինծանծանօթ են: Այլ բուն ինդրելիս և քննելիս է իր Պատմութիւնն, զոր լաւ եւս ինքն կոչէ Հաւաքունն Պատմութեան, որոյ նիւթական քանակն երբորք մասամբ մի նուազ է քան զԿիրակոսին, իսկ ժամանակի բովանդակութեամբ՝ աշխարհիս արարչագործութենէն սկսեալ հասնի և կ'անցնի զկէս ժԳ. դարու (1267). որ և յայտնէ համառօտութիւնը, միանգամայն և ոչ շատ հետաքննելի ըլլալը. բայց ունի և ճարտարութիւն ի համառօտութեանն, ստուգագրութիւն, և ինչ ինչ նոր գիտելիք. վասն զի շատ նախնի պատմագիրներ աչքէ անցուցեր է: Ի սկզբան Ս. Գրոց կամ Հրէից պատմութիւնը կ'ընծայէ, խառնելով և արեւելեան աշխարհակալ տէրութեանց և Յունաց յիշատակները, նաեւ մեր Հայկազանց, ամփոփելով յերեքտասան գլուխ բոլոր գործոյն հարիւր զլիւնն, որով յայտնի դարձեալ համառօտութիւնն:

Յետ Ազեքսանդրի Մակեդոնացոյ երբ հասնի Արշակունիս, ընդարձակի գրիչն՝ ազգային պատմութեամբ. և երբ հասնի ի թուականն Հայոց ի կէս Զ. դարու, այնուհետեւ անով գատէ զգեպուածսն, մինչեւ ի 2ԺԶ, որ է հարիւրերորդ գլուխն և որով կնքէ զՊատմութիւնը, յիշատակաւ

մահուան կոտորանքի Ս. կաթաղիկոսին՝ իր հին հիւրընկալին, փափուկ և սրտաբուխ բացատրութեամբք, որոց մէջ ծածկած է և կսկիծն իր հին ծանօթ և Ժողանքովն զուարճացող թագաւորին՝ այժմու ծանր սըգոյ համար, որգւոց մէկուն (Թորոսի) սպանմամբ, միւսոյն (Լեւոնի) գերութեամբ. զորս կ'ակնարկէ ի վերջ նախընթաց իննսուն և իններորդ զլիւսոյն, մաղթելով որ ողորմի Աստուած և « Բժշկէ զմեծաբաց խոցն (սրտից), առնելով » գերեզարձ (Լեւոնի) զոր տարան ընդ այլսն » (Մարտիրոս), հնգետասան օր յամելով յաշխարհն » (Կիլիկիա), և լնով աղետիւք, զնոսս (զգեւ) » ընայն և կոտորեալս իրօք, և զմեզ՝ խոցոտիչ » համբաւովն »: Այսպէս ըստ առթի և տեղոյ՝ Վարդան ինքնաբերաբար թաթխէ գրիչն իր սըրտէն բղխած կակուղ կրից:

Ամենէն հետաքննական զէպքն են յ'ՂԶ և յ'ՂԷ գլուխս գրած իր տեսութիւնն և խօսակցութիւն ընդ Հուլաղուն Ղանի, (Տես յատկապէս Յօդ. 325, յ'Բ Մասին): Այս յիշատակիս կցած է Վարդան կարճ յիշատակ մ'այլ, թէ նոյն օրերում գրած գիրքն և տղայքն, անշուշտ աշակերտքն՝ ձարաւեսաց (աւագակաց) ձեռքն ընկեր են. տասնըհինգ օր ետքը տղայքն կ'ազատին, իսկ գիրքն տարի և կէս վերջը, « Ի Տփլիսի ի վաճառ բերեալ » և գնեալ » լինի ձեռօք Մեղեր անուամբ « եղբոր » մերոյ միոյ »:

Պատմագրութեան վերջին մասնը, ուր Բապրատունեաց և Վրաց թագաւորաց գործերը յիշէ, բաւական հետաքննական և կարեւոր է. իսկ ուր կրօնական կամ հրաշայեաց յիշատակ կայ, Վարդան այլ իր տկար կողմն ունի, բայց միշտ իր հանդարտութեամբ: Գարաբանութիւնն այլ պարզ է, և երբ Հուլաղուի խօսակցութիւնը պատմէ, ուամկօրէնի մօտենայ, ինչպէս Ժողանաց մէջն: (Տես զՊատմութիւն Հայկական հին Գպրութեան, էջ 746):

Ինչպէս յուսացուէր՝ մանաւանդ Թաթարաց գործոց համար, Վարդանայ պատմութեան այդ մասն փռանկերէն թարգմաններ է Տիւրքիէ (ի 1861), բովանդակն այլ Պրոսէ (ի 1862), իսկ Ժողաբըբ Բրիւտով (ի 1867):

89. Մ Ա Ղ Ա Ք Ի Ա Ա Բ Ե Ղ Ա Յ

Կրնամք զՄաղաքիս Արեղայ հետեւող ըսել Վարդանայ և Կիրակոսի, զորս ինքն՝ «գովելի աշակերտ» քըն՝ Վանականի կոչէ, և անոնց հետ երկուք այլ, որ մեզ ծանօթ չեն, և չորսն մէկտեղ «Խաչանման» բաժանեալ զաշխարհն արեւելից՝ լուսաւորեցին՝ կենարար վարդապետութեամբ Հոգւոյն Սրբոյ»: Հետեւանքն՝ Թաթարաց պատմութեան նկատմամբ է, որ է յատուկ և միակ ծանօթ գործ այս անծանօթ արեղային, որ գրեթէ ժամանակակից է իր գովելոցն, և զբաժն է զուտ Պատմութիւն վասն ազգին Նետոյաց. կարճ գրուած մի երկու երեք թերթ, որ թէ և Ադամայ անուամբ սկսի, բայց քանի մի տողով անցնի ի Նոյ, անկէ յԱրրազամ, որպէս զի ասոր Քետուրա կնոջմէ ծնած զաւակները նախաճարք ցուցընէ Պարթեւաց, Արշակունեաց, նաեւ Սկիւթացւոց, յորոց և Նետողքն կամ Թաթարք: Ասոնց ծագման, կրօնից, սովորութեանց և քաղաքական օրինաց կամ վարչութեան վրայ խօսելով համառօտ, և այն մասանց վերարեբեալ Թաթար բառեր ի մէջ բերելով՝ զոմանս մեկնելով և զոմանս ոչ, կ'անցնի անոնց առաջին անգամ ի կողմանս Վրաց և Հայոց յարձակման, և իւրանէ Աթարէզի անոնց դէմ ելնելն, բայց վատութեամբ կամ մատնութեամբ մէկ մարտակցին՝ յաղթուիլ և յետ քաշուիլն: Առաջ տանի պատմութիւնը՝ Թաթարաց այլեւայլ կողմեր արշաւանաց և տիրելուն

և կողմնակալներ հաստատելուն դէպքերն ըսելով: Բովանդակ պատմութիւնն քառասունեւչորս տարուան կ'ըսէ ինքնին, որ հաղիւ թէ կ'անցնի իրմէ առջի գրող հեղինակաց ժամանակը: — Շատ ստորին է լեզուն կամ շարաբանութիւնն. լուսոգոյն մասն է, որ և գորովաշարժ, Հեթմոյ որդւոց պատերազմն ընդ Եգիպտացւոց, ձախորդ դէպքն, և մանաւանդ Հեթմոյ սուգն, և դարձընելն Ղլեւոն ի գերութենէ և հաստատելն զնա յաթոռ Թաթարութեան. ինչպէս կրնան դատել և մեր ընթերցողք ի Յօդուածս 316. 324, յ'Բ Մասին գրոցս:

Ինչպէս իր յատուկ նպատակն էր Թաթարաց վրայ ծանօթութիւն տալ, հարկ էր որ արեւմտեայ բանասէրք և գրողք Խաչակրաց վրայ, շմոռնան և զՄաղաքիս, որոյ բնագիրք տպագրած է Քերովրէ Պատկանեան ի Բեգրպուրկ, ի 1870. իսկ Պրոսէ հանդերձ փռանկերէն թարգմանութեամբ, և Տիւրքիէ՝ ի Բարիզ, քաղելով:

Հայերէնը տպագրողն՝ հեղինակին յիշած Թաթար բառերէն քանի մի տասնեակ՝ գրոցն ետեւը գրած է արաբացի գրով և հայերէն նշանակութեամբը:

90. Գ Ր Ի Գ Ո Ր Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ

(Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն Թ Ա Թ Ա Ր Ա Յ)

Թաթարաց վրայ գրողներուն կարգին հարկ է յիշել և Գրիգոր Պատմիչ մի: Ուսուցանեցւոյն Տարեգրութեան շարունակող Գրիգոր մի յիշեցինք (Տես թիւ 76): Բայց սա ուրիշ Գրիգոր մ'եւրելի, և յատուկ գրող այդ ազգին արշաւանաց վրայ, վասն զի յիշուի երկու երեք Չեռագրաց ցանկերու և Պատմըչաց շարքի մէջ. մէկն զրէ,

« Գրիգոր Պատմագիր վասն Թարսարաց » . միւս մի՛ նոյնպէս, և մինչեւ Ա. Կոստանդին կաթողիկոսի ժամանակ . երրորդ մի գրէ, թէ Գրիգոր Վարդապետ յԱկանց անապատի վանս Կիլիկիոյ՝ հրամանաւ Ստեփանոսի վանահօր՝ Միխայէլի ժամանակագրութեան դադրած տեղէն՝ շարունակեր է զպատմութիւնն քառասունեւորոս տարի եւս, յաւկապէս զԹաթարաց գրելով :

Այսքան յիշատակք բաւական հաստատութիւն կու տան, թէ Ռուհայեցւոյն շարայարողէն տարբեր համանուն մէկն՝ գրած ըլլայ իր ժամանակին զսմենքը սարսափեցընող նորատեսիլ Նետող ազգին ասպատակութեանց վրայ : Թերեւս և այլ անյիշատակ պատմիչք կան : Նոյն ատեններ գրուած Չեռազրաց յիշատակարանք այլ հաւանական կ'ընեն զայս . մանաւանդ որ նշանակուած է ի ցանկս Չեռազրաց Արզնի Վանաց՝ առանց անուան հեղինակ մի Պատմիչ գործոց Հազարացոց և Թարսարաց, նաեւ Ռոշրինեանց : — Ստոնց հարուածները մերային կրողք՝ աւելի Արեւելեան Հայք էին, բնականապէս և Պատմիչքն զոր յիշեցինք՝ այդ կողմի ազգայինքն են : Կան և այլք այս կողմի գրողներէն, որ ոչ յատուկ այլ անցողարար յիշեր են այս աշխարհաւերները . զորս պիտի յիշենք՝ յետ քանի մի արեւմտեան և յատկապէս Կիլիկեցի Պատմիչներու, որոց զլիաւոր արժան է համարիլ՝ Արքայահայր Կոստանդին Պայլ հօր իշխանի հանճարեղ և գործօնեայ որդւոց անդրանիկը, զՄկրատ Գռնդուտայ :

91. ՍՄԲԱՏ ԳՈՒՆ ԴՍՏԱՊԼ

Ռուրինեանց թագաւորութեան ժամանակի ամենէն նշանաւոր անձանց մէկն է Մկրատ Գռնդուտայը, և քաջութիւնն ու զրշութիւնը զուգելով՝

գրեթէ առաջին կրնայ ըսուիլ : Իր գրաւոր հանճարը յայտնէ քանի մի գրած արձակ և ոտանաւոր Յիշատակարանով և արձանագրութեամբք, և նոյն իսկ զատոնք կրող բերդերու և եկեղեցեաց մնացորդներով . արժանաւոր անդրանիկ Հայոց թագաւորութիւնը յետ մահուան Ա. Լեոնի հաստատող Կոստանդին Պայլի, և եղբայր Ա. Հեթմոյ, յորմէ ինն կամ տասն տարի առաջ ծնած է (ի 1206), և անկէ եօթն տարի վերջ վախճանած (ի 1276), և իր երկրորդ պայլ մի եղած է և հաւատարիմ պաշտպան իր թագակիր եղբոր, և աւելի քան յիսուն տարի այդ թագաւորութեան, զէնքով, աւրեամբ և քրտամբ . որով մեծ արգիւնք ունի՛ ըստ քաղաքական և հայրենանախանձ ոգւոյ . զոր և զեռտղայական հասակին մէջ սկսած է Մեծին Լեոնի Ա. հաճութեամբ, և իր հօր կարգադրութեամբ՝ Սպարապետ և ըստ սովորութեան ժամանակին լատին կամ փռանկ բառով Գռնդուտայը կոչուելով (Comes Stabulis, Connétable), որ իր գրեթէ յատուկ անունն եղած է, և կեանքն այլ գրեթէ պատերազմով և յաղթութեամբ կնքած է, երբ յետին անգամ զԵգիպտացիս հալածելով՝ ի հանգիստ դառնալու ատեն խրոխտ ձին անդգուշութեամբ ծառի մի զարնուելով՝ վիրաւորէ իր հեծեալը . և նա իբրեւ ի պատերազմի դաշտին՝ ի մահճի վախճանի քանի մ'օր ետքը : — Քաջութիւնը կրնայ ըսուիլ որ կենացն հետ իր հօրմէն ժառանգեր էր և աջօք տեսած Լեոնի գործերէն, իսկ իմաստասիրութիւնը՝ յատուկ շնորհքով . որ փայլած է իր եղբարց վրայ այլ՝ Հեթմոյ թագաւորի և Բարսղի արքեպիսկոպոսի, այլ քան զնոսա առաւել, գոնէ անոնցմէ յայտնի աւանդ մի չունենալով մենք . և զանազան տեսակ գրուածով ցուցեր է հանճարը :

Միայն անուամբ կամ վերնագրով պարտաւորիմք յիշել իր երկու քաղաքագիտական՝ թարգմանարար և յարմարարար գրուածքը, զորս ընծայելն իսկ իր ազգին և տէրութեան՝ յայտնէ միանգամայն իր

ոգին և հարտարութիւնը. զի բաւական չհամարե-
լով իր այնքան անգամ երկար տարիներով վանողա-
կան և պաշտպանողական զէնք գործածելը, և եր-
կար ճամբորդութիւնն մինչեւ ի Թաթարս (1248-
50), իր եղբոր թագաւորութիւնը և ազգն սպա-
հովցընելու համար, բարոյապէս այլ զայն ուզեր
է հաստատել: Ասոր համար՝ որովհետեւ իր եղբոր
արքունեաց մէջ մտեր էին սովորութիւնք և օրէնք
ինչ Փասնկաց, մանաւանդ իրենց փեսայացեալ
Անտիոքայ իշխանաց, ասոնց համար նոյն ատեն-
ներ գրուած օրինագիրքը (Assises d' Antioche)
թարգմաններ է հայերէն ռամիկ լեզուաւ, Աւսիզք
Անտիոքայ կոչելով, որոյ փոսնկ բնագիրն դեռ չէ
յայտնուած: Եւրոպացոց, որք յօժարութեամբ ըն-
դունեցան մեր՝ Սմբատի թարգմանութենէն յայժ-
մու փոսնկ լեզու թարգմանած և սպազորածն ի
Վանս մեր՝ յամին 1876:

Սմբատ ասոր յարեց Մխիթար Գոշի Դատաւ-
տանագիրքը՝ փոխելով իր աշխարհիկ լեզուին, քիչ
փոփոխութեամբ հին բնագրին. Ասիղաց հետ գը-
րուած Լեւոն Գ-ի ժամանակ (յամին 1334 և այդ
թագաւորին պատկերով) օրինակ մի գանուեցաւ
մեր օրերում: Ասոնց վրայօք տեղեկութիւն տուած
եմք մեր փոսնկերէն թարգմանութեան Յառաջա-
բանին մէջ, և ինչ ինչ ի Տեղագրութեան Սիստա-
նայ, ուր և Սմբատայ կենսագրութիւնն, և ուրիշ
մանր գրուածք և Յիշատակքն, որոց գլխաւոր է առ
քեռայր իւր՝ թագաւորն Արտուրի՝ գրած փոսն-
կերէն թուղթը, իր՝ ի Թաթարս ճանապարհորդու-
թեան նկատմամբ:

Այս առթիւ յիշուի որ ի Թաթարստան եղած
ատենն՝ Վանն ըստ իրենց սովորութեան՝ կին մի
ընծայեր է անոր, ուսկից ունեցած որդին՝ Վասակ
կամ Վասի՝ թարսար կոչուեր է ի մերայոց. իր
մօրը քրիստոնեայ ըլլայն կամ ոչ՝ յիշուած չէ. Լեւոն
Գ-ի հետ բռնուած և գերի գնացած է Վասիլ յե-
զրիպոսս և դարձած. թաղուած է ի Մլիճոյ վանքն:

Իրրեւ Պատմիչ՝ Սմբատ չի յիշուիր Պատմիչ-
ները յիշողներէն, ոչ իր գրածին քանակին հա-
մար, այլ առանձին երկրի մի և տէրութեան (Ռու-
բինեանց) վրայ գրելուն և այն համառօտ իրրեւ
տարեգիրք: բայց աւելի՝ իր գրածն իր երկրէն
դուրս անծանօթ մնալուն համար: Իր երկրին և
թագաւորութեանն առաջին գորական և գորապետ,
գրեթէ միշտ զէնք ի ձեռին, դժուար էր որ եր-
կայն պատմագրէր. սակայն իր արթուն միտքն և
հոգացող սիրտն՝ բաւական բան ամփոփած է այդ
քանի մի թերթ գրածին մէջ, որոյ և ոչ հեղինակ՝
այլ թարգմանող կոչէ զինքն. և հետեւած է Մատ-
թէոսի Ռուհայեցոյ, անոր պէս իր երկրին սահ-
մաններէն շատ հեռու շարձըկելով իր սուր աչքերը,
այլ իրենը և իր գրացիները դիտելով. բայց ոչ
միայն ներկայն՝ այլ և անցեալն. իրրեւ ժ. դարու
կիսէն սկսեալ մինչեւ ի կէս ժ. Գ-ին, քիչ մ'այլ
այնքին. և ոչ միայն հետեւած է Ռուհայեցոյ ոճոյն,
այլ և արդարեւ թարգմաններ է զնա մասամբ, անոր
արդէն պարզ լեզուն՝ իր ժամանակի պարզագոյն լե-
զուով գրելով, և այսու շարունակելով իրեն մօտա-
ւոր ժամանակի զէպքերը և իր տեսածն ու ըրածը:
Այս գործս որչափ այլ ամփոփ կամ ոչ երկայն
գործ մի երեւի, երեւցածէն շատ աւելի յարգի
ընծայեցաւ, թէ՛ նոր և ստոյգ և երբեմն բաւական
մանրամասն տեղեկութեանցն համար, և թէ՛ Փասն-
կաց և Խաչակրաց յիշատակներուն. որոյ համար՝
ոչ միայն երկու անգամ սպազորեցաւ բնագրին
(ի 1856 ի Մոսկուա, և ի 1859 ի Բարիզ), այլ
և երկու անգամ թարգմանուեցաւ ի Փոսնկաց,
(ի 1862, ի Լանկուայէ և ի Տիւրքիէ), որոց
շատ պատուական են սր և է նշմարք իրենց ժ. Գ-ի.
Դարուց գործոց վերաբերեալ յարեւելս. և որոց
հետ մեր հեղինակն գրեթէ ազգակից ըլլալով՝ խը-
նամութեամբ իր քերցն և ծնողացն, և անոնց լե-
զուով գրելով և անոնց լեզուէն թարգմանելով և
իրենց կորուսած Աւսիզքն վերստին իրենց ընծայե-

լով, իրաւունք մ'այլ կրնայ ունենալ իրենց մատենագրութեան մասնակից համարուելու և երախտաւոր:

Իսկ մեզ շատ աւելի և շատ կերպով երախտաւոր ըլլալն՝ արգէն առաջ յիշեցինք: Քայց դառնալով Պատմագրութեանն, յիշեալ Տարեգրութեանց թէ՛ հայերէն թէ՛ փռանկերէն հրատարակելէն վերջը, հասաւ ձեռուընիս պատուական և ընդարձակագոյն գրուած մի, և գրուած հնագոյն, իբրեւ ի վերջ ժԳ. դարու, որ գրեթէ այն ուսմկորէն զըրուածին ոճն ունի, բայց մաքուր հայերէն գրուած է, և աւելի հարուստ, աւելի այլ յայտնի հետեւող Ուսայեցոյն, և աւելի հետաքրքրական և յարգի տեղեկութիւններ տուող, մանաւանդ Մեծագործ Լեւոնի Ա, Հեթմոյ Ա, և Լեւոնի Բ վրայ. յորս պատուականագոյն է յիշատակ թագաւորօրհնութեան Լեւոնի Ա, և այն հանգիսին ներկայացուցիչ եպիսկոպոսաց և բազմաթիւ Պարոնայց անուանքն՝ հանդերձ իրենց իշխած տեղեաց և բերդից անուամբք. զորս և մենք հրատարակած եմք ի Տեղագրութեան Սիսուանայ: Կոյնպէս, զատ յայլոց, գրաւիչ և սրտաուռ է այն Մեծագործ Լեւոնի՝ իբրեւ ինքն իրեն յուղարկաւոր երթալով հանգիսականօք՝ կենաց վերջին արարուածին, տեղ տեղ կանգ առնելով յ'անդարձական ճանապարհին, խրատելով և կտակելով, մինչեւ « Սկսաւ զեւ » լիցն իւր ի կենցաղոյս հոգալ », և տիրաբար իմն « Յանձն առնէր զհոգին հոգալ, և զմարմինն հան » զուցանել ի Ս. Ուխտն Ակներն: Այդ խրոխտ թագախնդիր զլուսը խոնարհած տեսնելով մաւուան հարկապահանջին, կարծես պատմիչն սարսափած կամ սառած՝ չէ իշխեր յառաջ երթալ և ստորագրել յուղարկաւորութեան վերջին մասը, թաղումն և հոգեհանգիստը: (Տես զՅօդուածս 309-10, յ'Բ Մասին):

Այդ, Սմբատ կամ այս Պատմագրութեանէն համառօտած է իր գրածը, կամ ինքն է թելագրել

զայն, և յետագայը շարունակեր են, մինչեւ որ տարի, չէ յայտ. վասն զի մեր օրինակն հասցընելով մինչեւ գրեթէ ի վերջ ժԳ. դարու՝ պակասած մնայ. այսինքն զրոյց վերջին թղթերն կորեր են, ինչպէս և առաջինքն, որով չեմք զիտեր թէ ինչ վերնագիր կամ անուն ունէր զիրքն և զրոզն. բայց, ինչպէս առաջ ըսինք, սկիզբներն գրեթէ օրինակուած են ի Մատթէոսէ Ուսայեցոյ. վերջերն՝ ըստ Սմբատայ՝ մաքուր լեզուով շարայարեալ:

Սմբատ Գունդստապլ բարերազգ գտնուեր է նաեւ իր պարզ գրածին շարունակող գտնելու իր արիւնախառն և շատ մատամբ իր նման մէկ մը, իր Լեւոն որդւոյ դստեր Մարիանի փեսայն, մարաջախտն Պաղտիկ, որ գտնելով Գունդստապլի գրածը՝ յանձներ է խորնի Վանաց առաջնորդ Կոստանդինի նորոգել և հաւանօրէն շարայարել զՊատմութիւնն: Ինքն Պաղտին այլ պատմական յիշատակներ թուրած է իր գործածած Ձեռագրաց մէջ, յորս և իր ցեղին և որդւոց ազգարանութիւնը. թուի իր կնոջ պապուն (Սմբատայ) պէս ոչ միայն կտրիճ զինակիր, այլ և հմուտ քաղաքական իրաց և արեւմտեան լեզուի. որոյ համար Լեւոն Գ դեսպան զրկեց զնա յԱնգղիա, և յետոյ յԵգիպտոս. բայց սորա սուլտանն զրժող քաղաքական օրինաց՝ բանտեց ըզնա. և ասպատակելով ի Կիլիկիա (ի 1336) առաւ և Պաղտնի ժառանգական բերդը, Եղիք, և արեց, զուցէ անոր յարեւմուտս դեսպանութեան կասկածով և վրէժխնդրութեամբ: Քարի և հաւատարիմ մարտախախտ մեռած է ի բանտին (12 զեկտ. 1336) եօթնամեայ գերութեամբ, և մարմինն փոխարեալ թաղուեր է յԱկներ, իր նախնեաց և Մեծին Լեւոնի քով:

92. ՎԱՀՐԱՄ ԲԱՐՈՒՆ. — 93. ՎԱՀՐԱՄ
ՈՐԳԻ ՏԻԳՐԱՆԱՅ

Կարծողք եղած են թէ նոյն անձն է Տիգրանայ որդի Պատմիչն՝ զոր Վարդան յիշած է, և Վահրամ Բարունն. — յայտնի սխալ. զի յիշողէն յայտնուի որ իրմէ առաջ էր Տիգրանայ որդին, և Սէլչուկեան Թուրքաց վրայօք էր գրածն. իսկ Բարունն՝ որ այսպէս կոչուած է իր շատգիտութեան և աւելի մեծ համբաւոյն համար, որպէս աննման իր ժամանակի Բարունեաց (Վարդապետաց) մէջ ժԳ. գարուն կիսէն ետեւ, Բ Լեւոնի ատեն էր, որ իր մեկենասն եղած է: Այդ բարեպաշտ և զբասէր թագաւորն՝ շատ նիւթոց կամ տօնից վրայօք խընդրեր և Վահրամ զրեր է Տօնական Ճառեր և կրօնից Վարդապետութիւն կամ դաւանութիւնք, բաւական վայելուչ և խոհական, որոց համար կ'արժէ իր Բարուն պատկառելի կոչումը. բայց ոչ այնքան վասն Վիպասանոչքեանն, որով դասի ընդ Պատմիչս, և որ շարունակութիւն մ'է Դնորհալոյն, սկսեալ անտի՝ ուր Սուրբս հասուցած է Ռուբինեանց առաջին Պարոնայց յիշատակաւ, որոց յաջորդաց և թագաւորացն Լեւոնի Ա, Հեթմոյ Ա և Լեւոնի Բ-ի գործերը վիպասանէ Վահրամ, ութնտեան և եայ եայ յանգի տաղտկալի կրկնութեամբ. և դայս այլ կ'ըսէ, նոյն Բ Լեւոնի հրամանաւ զրեր է, ինչ որ լսեր և տեսեր է,

- « Ի ստուգագոյն արանց պատմեալ
- » Եւ զոր աչօք մերովք տեսեալ...:
- » Արդ ես Վահրամ Բարուն ձայնեալ...
- » Ի յարքայէ յայս հարկեցեալ...
- » Ի նախնական զրուցաց առեալ,
- » Համոտօտիւք ըզնոյն զըրեալ,
- » Մինչև և ի մերքս ժամանեալ »:

Պարզապէս յայտնէ Վահրամ իրեն հրամայուածը և իր կատարածը, հետեւողութեամբ Կլայեցւոյ սօճոյն և ձեւին գրել. որ՝ եթէ արձակ բանիւ ուզէր գրել, անտարակոյս շատ աւելի ազատօրէն և վայելուչ շարագրէր, և կրնար պատուաւոր՝ նաեւ պիտանի տեղ մի բռնել ի շարս Պատմագրաց, մանաւանդ իր ժամանակին և Կիլիկիոյ գիպուածոց նկատմամբ, և ախորժելով կարգացուի: — Իր ձառից վերնագրաց և վերջաբանից և զրութեան ընթացքին մէջ այլ կարճ յիշատակներ կ'ընէ Վահրամ իր վրայ, խոնարհութեամբ, և իր մեկենաս Բ Լեւոնի թագաւորին, զոր միշտ յարգութեամբ Մեծ կ'անուանէ, ինչպէս մենք սովորաբար կ'անուանեմք իր մայրենի պտղը. զԱ Լեւոն Մեծագործ: Բայց թէ ոչ քաջութեան գործովք՝ յիրաւի ըստ գրականութեան մեղի այլ մեկենաս մի կրնամք կոչել զնա. վասն զի այս գեղեցիկ փառագն և ոգին գրասիրութեան և գրագրութեան՝ որ իր ցեղին մէջ յատկացեալ է, աւելի կերպով իրեն յատուկ ճանչցուի, շատ զբքեր գրել տալով, նաեւ յորինել կամ շարագրել, գրագիտաց խրախոյս տալով, վանաց մէջ և դուրս դպրոցներ հաստատելով, և Մեծ Հայոց և աւելի հեռաւոր կողմեր, ինչուան յիտաւ լիս պանդխտած Հայոց այլ պիտանի զբքեր զրկելով, որոց ոմանք գտնուին ինչուան հիմայ. (Տես Յօդուած 335, յ'Բ Մասին): Իրմէ վերջ իրեն հետեւող եղած են իր որդին Հեքոսն Բ, և ասոր համչիրակ համանուն տէրն Առոիկոսի, զորս առանձին յիշել արժան է. և որք թէ և ժԳ. գարու ըսկիզբը տեսեր են, բայց աւելի ապրեր և գործեր են յ'ԺԳ-ին:

94. ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ, ՏԵՐ ԿՈՌԻԿՈՍԻ
 95. ՀԵԹՈՒՄ-ՀԵՂԻ, ՏԵՐ ԼԱՄԲՐՈՒՆԻ

Մեր գրականութեան մէջ սովորաբար իբր յատուկ մականուն տրուի Հեթմոյ՝ Պատմիչ կոչումն. իսկ արեւմտեայք՝ որոց իբրեւ քաղաքական գործիչ ծանօթ էր իր ժամանակէն, ի կիսոյ ժ.Վ. դարու մինչ յառաջին տասնեակ ժ.Վ-ին, իր ժառանգութեան երկրին կամ զլիւսւոր բերդին անուամբ կոչուիլուցի կոչեն: Երկրորդ անգամ ծանօթացաւ անոնց՝ գիտութեանց նորոգման ժամանակ նոր գարուց՝ նախ քան զամենայն մատենագիրս Հայոց, իր Պատմութեան գրքովն, որ գրեթէ անծանօթ մնացած ըլլալով իր՝ այսինքն մեր ազգին, և դեռ կիսով այնպէս, անձք ի սկզբանէ ժ.Չ. դարու (1520) իրենց լեզուով՝ լատին և փրանկ տպագրութեամբք հրատարակեցին. վասն զի նոյն իսկ հեղինակն Հեթում՝ փրանկերէն բերանացի տուն տալով թարգմանեց ի պալատան Ե Կղեմայ Պապին ի Բուսդիէ, և անոր հրամանաւ գրել տուաւ Զայկոն (կամ Պալկոն) Նիկողոս անուամբ մէկու, որ յետոյ ի լատին դարձուց: Տասնեկեցերորդ և յետագայ դարուց մէջ շատ հեղ տպագրուած է, ոչ միայն նոյն յիշեալ լեզուօք, այլ և իտալ և սպանիոյ. և շատ դոհութեամբ ընդունուած ի սիրողաց և ինքրողաց պատմութեան արեւելից միջին դարուց և յատկապէս Խաչակրաց, և Թաթարաց, և ասոնց տէրութեան տեղեաց, որ է խորին Ասիա, Չինաստան և աւելի ծանօթագոյն կողմանք մտաւորք Հնդկաց և Պարսից. թէ՛ ասոնց և թէ՛ աւելի արեւմտագոյն աշխարհաց Ասիոյ՝ մինչեւ մեր Հայոց և Կիլիկեացոց, առանձին գլուխ կամ հատուած բաժնելով՝ Հեթում տեղեկութիւն գրած է. և ասով յետ Մարկոս-Պոլոս (Marco-Polo) անուանեալ վենետկեցի

մեծ ճանապարհագրին, պիտանեգոյն գրող համարուի ժամանակակցաց և քիչ առաջ վերջը՝ այն տեղեաց վրայօք գրողաց մէջ:

Մեր օրերս դեռ չէ յայտնուած հայերէն բնագիր գործոյն, բայց ըլլալն անտարակոյս է, զի յիշեն Պատմչաց անուանագրողքն, որպէս Ջահկեցին. իբր կէս դար առաջ այլ գրէին յէջմիածնէ, թէ կար հօն այդ գործդ, բայց յետագայ ցանկից մէջ չի յիշուիր: — Յիշողքն Պատմութիւն Թարաբաց անուանեն, որպէս և Լատինն Liber Historiarum partium Orientis. բայց փրանկ և սպանիոյ հին թարգմանութիւնքն կոչեն Ծաղիկ կամ Ծաղկունք Սրեւելեան Պատմութեանց. այսինքն, փրանկն, La Fleur des Historiens de la terre d'Orient, և սպանիոյն, La Flor des Istorias de Orient. Իսկ լատինարէն շատ անգամ տպագրուած է քիչ ասորբերութեամբ վերնագրին:

Իբր վաթսուն տարի առաջ (ի 1842) հայերէն վերաթարգմանեալ ի լատին՝ տպագրեցաւ ի մեր Վանս, ի Ս. Ղազար: Սա յիտունեւորս գլուխ բաժնուած է. բայց կան օրինակք վերոյիշեալ հին թարգմանութեանց՝ որ աւելի կամ պակաս բաներ ունին: Հարազատ հին լատին թարգմանութիւնն շատ տարի չէ որ յայտնեցաւ և հրատարակուեցաւ (ի 1877) ի Բարիզ, ուրիշ Արեւելից վրայ գրող միջին դարուց հեղինակաց հետ (L'Extrême Orient au Moyen-âge, par Louis Backer).

Սա որ և է կոչմամբ Պատմութեան Թարաբաց՝ մասամբ նոյն իսկ Թաթար պատմիչներէն առած է Հեթում, ինչպէս կ'ըլէ (Գլ. ԽԶ), մաս մ'այլ իր անուանակից և անոնց ականատես Ա. Հեթում թագաւորին պատմածներէն, զոր գուցէ ինքն իսկ այն մեր մեծ թագաւորն գրեր էր, ինչպէս իր եղբայրն Սմբատ իր ճամբորդութիւնը, կամ իր ուղեկից վարդապետք և երէցք, զորս յիշէ Կիրակոս Պատմիչ, և անոնցմէ առած գրէ մի առ մի անոնց երկայն ճամբորդութեամբ անցած տեղեաց անուններն, որ շատ

է ի դուռն Պապին (ըստ վերոյիշելոյս) որպէս երեւի՝ անոր յուզած Տանարական Ապետաց բարոյական կենացն քննութեան համար, և այն առթիւ իր Պատմութիւնը ներկայացուցեր է առ Պապին: Մեր հիմայ յիշեալ Հեթմայ Բ-ի և անոր եղբորորդոյ Լեւոն Գ տղայ թագաւորի հետ այլ քաղաքական տեսութեամբ գործակցութիւն ունեցած է և ոչ համակարծիք եղած թուի. սակայն մութ է այս խնդիրս, և ոչ մեզ այս տեղ քննելի: Իսկ իրեն՝ Պատմչիս՝ վախճանն ուր և երբ և ինչպէս եղած է, այս այլ ի միժան մնայ: — Իր ուրիշ յիշատակաց համար կրնայ տեսնուիլ ի Սխտաւն:

Արժան համարիմ վերոյգրեալ Հեթմանց երիցազոյնը, որ է եղբայրն Ներսիսի Լամբրոնացոյ, նորէն յիշել իրբեւ մասնակից Պատմչաց: Ինչ անտարակոյս երեւի որ իր գրեթէ տարի և կէս դեսպանութեամբ ի Գերմանիա և ուրիշ Եւրոպիոյ կողմեր տեսածն և ըրածն գրած է. բայց ծանօթն և մնայունն այս է, ըստ իր յատուկ գրածին. « Ի » վերայ ծովուս ի նաւարկութեանս մերոյ (ի կողմս մանս Սիկիլիոյ) թարգմանեցի գառ ի հոռվման կանէն ի մերս, ի թու. Հայոց ՈՅԹ » (1210): Թարգմանածն է՝ իրբեւ դար մի առաջ Նեղոս անուամբ և Դոքսոպատրիոս (Doxopatros) մականուամբ արքեմանտրիտի (արբայի) մի յորինած Գաւազանագիրքն հինգ Պատրիարքութեանց (Հոռմայ, Անտիոքայ, Աղեքսանդրիոյ, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի). յոր յարեր է և կայսերաց յիշատակ: Ծովու վրայ նաւարկութեան ատեն զըրողն՝ շատ հաւանորէն ի ցամաքի և ի Գրազարկ վանս իւր (ուր առաջնորդ էր՝ կրօնաւորական Հեղի անուամբ) աւելի այլ կրնար գրել և պատմագրել:

96. Հ Ե Թ Ո Ի Մ Բ Թ Ա Գ Ա Ի Ո Ր

Կոսիկոսի Տիրոջ յիշատակաւ յիշեցինք իր համշիրակ և համանուն թագաւորս, որ քան զնա նշանաւոր եղած է քաղաքագիտութեամբ, բարեպաշտութեամբ, աշխարհաշինութեամբ և քաջութեամբ, և ոչ ըստ բաւականին ճանչցուած կամ յարգուած. չեմք կրնար ըսել՝ թէ և մատենագրութեամբ, բայց անտարակոյս է իր ուսումնասիրութիւնն, շատ գրքեր օրինակել տալն, և իր իսկ ճարտար շարագրութիւնն, որ երեւի իր իրբեւ երկու հարիւր երեսուն տող ութստեան (յամի 1275) գրած Յիշատակարանի մի մէջ (Տես Յօդ. 342, յ'Բ Մասին գրոցս), յանգաւոր, բայց ոչ վազրամայ նման ճանչրայի նոյնայանգ, այլ փոփոխուկ: Այս յիշատակիս մէկ մասն է՝ կարճօրէն՝ իր նախնեաց Ռուբինեանց տիրութիւնն և յաջորդութիւնն մինչեւ յինքն, Եգիպտոսի Սուլտանին արշաւանքն, առնուլն զԱնտիոք, զԱքքեա (St.-Jean d'Acro) պատսպարանն խաչակրաց, և զՀոռմկայ, և իրեն երկրին (Կիլիկիոյ) ազատ մնալն: Երկրորդ մասն այլ է նոյն ատեն հանդիպած Մազապատի խնդիրն, զոր ինքն ժողովով և գիանովք ստուգելով պնդեց՝ տօնել այն տարին ի 6 ապրիլի (յորում լուսնին պատշաճ օրն ժղ. կատարուած էր) և ոչ շաբաթ մի վերջը: Փոքր ինչ նշմար մի է այս քերթուածս. այլ առհաւատչեայ անոր նման և անման բաներ այլ գրած ըլլալուն այս զարմանալի թագաւոր և կրօնաւոր անձին, որ և յետին Մեծ կոչուելի անձն է ի Ռուբինեանս մեր, եթէ արդարութեամբ քննուի ինչ որ իր վրայ գրեն մերայինքն — և խոհական գրողք, որպէս Կոստանդին կաթողիկոս, Յովհաննէս Եգնկայեցի, Գրիգոր Սկեւոացի, և այլն, — և օտարք, առ որս և Երանելի կոչմամբ և միանձնա-

կան ձեռովն և անուամբն (Եղր. Յովհաննէս) դասեալ է ընդ սրբազանս: Իրենց շատ փրանկիսկեան վանորէից մէջ նկարած են Երանեւոյն պատկերը՝ պէսպէս կերպարանօք, ըստ իրենց կարծեաց կամ երեւակայութեան:

97. Զ Ա Ք Ա Ր Ի Ա Ծ Ո Ր Ծ Ո Ր Ե Յ Ի

Արտազու կամ Թաղէտի Առաքելոյ աթոռոյն յաջորդ արքեպիսկոպոսներէն է Զաքարիա Ծործորեցի, ԺԳ. դարու վերջն և ի սկիզբն ԺԴ-ին, իր ժամանակին շատ խոհական նշանաւոր եկեղեցակաւնաց մին, բարեկամ և ասպնջական Յովհաննու Եղնկայեցւոյ, և համամիտ անոր՝ այն ժամանակի Լատին Քարողչաց վարդապետութեան մասին, որոց և ընդունող, և թղթակից ընդ Հռովմէական գերագոյն աթոռոյ. յորմէ և մէկ ընդունած լատին թղթոյ պատճէնն կայ յայտնի, իսկ իր գրածն յիշուի միայն: ՅԱյրարատ ամազրի հրատարակուեցաւ գրուած մի վասն այն Թաղէտի Առաքելոյն յաջորդաց, յորոց հինգ կամ վեց յիշուին անմիջական յաջորդք Առաքելոյն, իբր գտնուած ի Զաքարիայէ: Այս ստուգելու համար՝ տողերս զրելու տարին խնդրեցաւ և փնտոռեցաւ բնագիրն ի գրատան և ի դիւանս Էջմիածնի հաւատարիմ և մեծապատիւ անձանց ձեռօք, բայց չի գտնուեցաւ:

Զաքարիայի ուրիշ հետաքննական պատմական կարեւոր գործ մի յիշէ Վարդան Յովնանեան ի Թողթին առ Եւգոկիացիս, և է Ժողովոց Պատմութիւն, յորմէ և վկայութիւն բերէ յ'Թ զլիսոյ, որ է Եզր կաթողիկոսի ժողովոյն պատմութիւնն. մեր ձեռք չէ հասած այս գործս. թերեւս գտնուի ի կողմանս Լեհահայոց: Եոյն բանասէր եպիսկոպոսն

(Վարդան) ուրիշ տեղ այլ յիշէ որ Զաքարիա հաստատէ թէ Լուսաւորիչն ի Յունաց առած է մեր եկեղեցւոյ կարգաւորութիւնքը, որ անտարակոյս է:

Ծանօթ մեզ գրուած մի Զաքարիայի է երկար Թուղթն առ Յովհաննէս Օրպելեան, արքեպիսկոպոս Սիւնեաց, Հայոց և Հռովմայ եկեղեցւոյ խընդրոյն վրայօք, ի պատասխանի անոր տիրաբար և կծու գրածին, մեծարանօք՝ ծանրութեամբ և խոհեմութեամբ՝ անոր ամէն մէկ առաջարկածին՝ ստոյգը դիմադրելով, և այսպէս կնքելով. « Ի լրումն բաւ » նիս՝ գիտեա, զի իմ գիրս և քոյդ պարտին յանձնեմք իննել առաջի երեսացն Աստուծոյ, եթէ » ոչ հնարինք և յայտմ կենցաղի պատուենք »: Լաւ է որ ինքն չէ պատած իր գրածը. սակայն և անով ոչ բաւական ձանչուեք է յազգայնոց և ի զլիսաւորացն՝ իր յարգն և ողջմտութիւնը:

98. Մ Ի Ի Թ Ա Ր Ա Յ Ր Ի Վ Ա Ն Ե Յ Ի

Ինքնատիպ և մանրամասն քննող և գրող հեղինակ մի է Միխրար Այրիվանեցի, որ աւելի քան զառաջինս՝ գտեր և կարգաւ անուանէ զՊատմիչս Հայոց իբրեւ քառասուն, անոնցմէ առաջ այլ Հայոց ծանօթ և թարգմանեալ քանի մի յոյն պատմիչներ, և ամենէն վերջը զինքը գրէ. « Ես Տէր Մը » խիթար »:

Երկու մասն կամ կերպ գրուած է, զոր ինքն « կրկին ձեռնարկութիւն » կ'անուանէ. — Մէկն աշխարհի ստեղծման վրայ այլ խօսելով, երկնից կամ մարները, երկրիս տարերքն յիշէ. և աւելի վեր ելնելով՝ հրեշտակաց ստեղծումն և յետքը, զորս բոլորակ շրջանաօք շարակարգէ, և յետոյ նահապետաց շարքն. նոյնպէս այլ Հրէից և օտար հին ազգաց և Հայոց թագաւորաց շարքն, նաեւ քահա-

նայապետաց, հայրապետաց, և այլն. եւս և Ս. Գրոց իւրաքանչիւրին անուններն և կարգն, ըստ Յովհաննու Սարկաւագ վարդապետի ստուգածին. որպէս և օտար և Հայ Պատմըաց շարքն, և այլն. որք որչափ այլ ցամաք և լոկ անուանք ըլլան, կարեւորք են: — Երկրորդ մասն կամ գործն է, համաօտ յիշատակ պատմութեան՝ նախ Ս. Գրոց, ապա Հայոց մինչեւ իր ատեն, միայն քանի մի տող բանիւ ժամանակագրութիւն. մինչեւ ի թուականն Հայոց՝ արարչագործութեան և ապա Քրիստոսի թուականը գործածելով, յետոյ զՀայոցս. տասն տասն տարիներու բաժնելով յիշածները, սակայն այն տասնամեկին սր տարին հանդիպելն ճշգիւ շինմացուիր:

Յայտնի երեւի որ Արիվանեցին աչքէ անցուցեր է բոլոր յիշած պատմիչները և զլիաւոր կէտերը նշաններ է, արդարեւ իրր մի մի կիտիւ միայն. զորս եթէ բացատրելով ուղէր կամ կարենար պատմել, քան զամեն պատմագիրս մեր ընդարձակ գրող կ'ըլլար: Եթէ այդ անկարելի էր կամ անյուշալի, փափագելի էր որ գոնէ իր ժամանակին դիպուածները զրէր քիչ մի ընդարձակ: Իրմէ անմիջապէս առաջ յիշած պատմիչներն են Կիրակոս, Վարդան, Վանական Վարդապետ: Չէ ճանչցած Օրպելեանի Սիւնեաց Պատմութիւնը, որ ոչ միայն դեռ չէր հրատարակուած, այլ և չէր ամբողջ գրուած:

Իր վերջին յիշատակն է ի կարգի թագաւորաց՝ Հեթում Բ, որոյ և թագաւորութեան եօթնեւտասն տարին նշանակէ, որ է ասոր մահուանն տարի մ'առաջ (1307): Իսկ կաթողիկոսաց կարգն նշանակուած է մինչեւ ի Յակովբ Անուարդեցի: Սակայն ուրիշ մի աւելցուցած երեւի զայս. վասն զի Հեթմոյ ժամանակարդական պատմութիւնն դարբի ՉԼԸ թուականաւ (1289), որ է վերջինն կենաց Լեւոնի Բ-ի և առաջին Հեթմոյ Բ-ի:

Արիվանեցւոյն գրութեան նշանաւոր և կարեւոր ըլլալն ի պատճառս ժամանակակից շատ անձանց

և թուականաց զուգութեան, և ազգային հեղինակներու յիշատակաց համար (յորս կան և սակաւածանօթք) ճանչցեր է և հայազէտն Պրոսէ, և Ռուսաց Բեդրպուրկի Ճեմարանին թերթից մէջ երկար մասեր թարգմաներ և ծանօթագրեր է:

Միւթար ինքնին խորհրդածէ մեր վերը ըսածն, թէ այնքան երկար ժամանակաց պատմութիւնը զրելն անկարելի էր. զի եթէ, կ'ըսէ, Յովհաննէս Աւետարանիչ Քրիստոսի երեք տարուան և երեք ամաց մէջ ըրածներուն համար՝ « Եւ ոչ աշխարհս » բաւական էր տանել (ըսած է). իսկ եթէ այս » պէս, որպէս և է իսկ, ապա զի՞նչ պարտ է ա » սել վասն ի սկզբանէ աշխարհի անցիցն անցե » լոց՝ զոր եթէ գրեալ էին », և այլն:

Տես յ'Բ Մասին Հայապատում գրոցս, զվերջին Յօդուածն, որ է 400:

99. ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐՊԵԼԵԱՆ

Ըստ աւանդութեան Վրաց (քան Հայոց) ասորս դեռ կան ազնուական սերունդք Օրպելեանց, նախահայր ցեղիս ոչ Վրացի էր և ոչ Հայ, այլ ճենացի (Չին), որ այն հին աշխարհին տէրութեան մէջ ծագած շփոթութեան մի պատճառաւ՝ ընտանեօք փախեր եկել է շատ դարերով յառաջ քան զթուական Քրիստոսի, և ի թագաւորաց Վրաց ընդուներ է անոնց հնագոյն բերդերէն մէկը, Օրբեր, որոյ անուամբ իր ցեղն Օրբերաշ¹ կոչուեր է, յորմէ ապա Օրպելեանք: Սորա այն մութ դարերէ ի վեր մինչեւ ի ԺԱ. դար՝ միշտ իրենց ազնուականութիւնն և պատիւն պահեր են. բայց այդ դարէն մինչեւ ի ԺԴ. կամ ԺԵ. պայծառացեր են

1. Ոչ ցեղանիշ մասնիկ է ի Վրաց լեզուի:

ի թագաւորութեան Վրաց, գրեթէ ամենէն պատուաւոր ցեղն համարուելով, մեծամեծ պաշտօն և ծառայութիւն ըրած և արքունի ցեղի խնամեցեր են. անկէ ետեւ այլ մինչև ի մեր ժամանակս պահեն իրենց ազնուականութեան պատիւն:

Երեքտասաներորդ դարու մէջ նշանաւոր եղած է այս տոհմէն Տարապիճ գոռոզ և շինարար իշխանն, որոյ որդւոց մէկն է Պատմիչս Ստեփաննու, որ քաղաքական կամ ընտանեկան ազնուականութեանն զուգեց եկեղեցականն եւս, Սիւնեաց աշխարհին նախագահ եպիսկոպոս կամ արքեպիսկոպոս ըլլալով, և ըստ իր մեծարանութեանն Մեարայօրիտ, իրր զի գարեբով առաջ եպիսկոպոսաց դասակարգութեան վէճ ըլլալով ի Հայս, փողովով սահմանեցին որ այդ յոյն (մայրաքաղաքացի) անուամբ նախապատիւ ըլլայ և կոչուի Սիւնեաց Գլխաւոր եպիսկոպոսն: Թէ՛ ցեղին պատմութիւնն և թէ՛ իր ընտրութիւնն երկար պատմէ ինքն Ստեփանոս (Տէն Յօգուած 337, յ' Մասին), քիչ շատ պանծացընելով թէ՛ իր աթոռոյն պատիւը և թէ՛ իր ցեղին. թէ և շատ տեղ իրաւացի է և արդարադատ. և երբ կարգն գայ իր հօր մեծագործութիւնները յիշել, չի կրնար ծածկել անոր ապօրինաւոր երկրորդ ամուսնութիւնը, որուն չհաւնեցան կ'ըսէ Վարդապետքն:

Իրբեւ Պատմիչ շատ երախտաւոր և զովելի է, և կրնայ վերջին կոչուիլ ի նշանաւոր և մեծ պատմիչս մեր, և պիտանի քան զամենքն իր (ԺԳ.) դարուն, ի բաց առեալ Վանական Վարդապետի պատմութիւնն, որ զեռ անծանօթ է մեզի. և եթէ ասոր հարազատ աշակերտքն Վարդան և Աիրակոս՝ աւելի համբաւելի են և ունին կարեւոր պատմական յիշատակներ, հայարանութեամբ այլ թերեւս աւելի յստակ, սակայն Ստեփանոս աւելի արդիւնաւոր է՝ իր և Հայոց մէկ մեծ ցեղի և աշխարհի մի (Սիւնեաց) թէ՛ քաղաքական և թէ՛ եկեղեցական պատմութիւնը մանր քննութեամբ գտնելով և պատ-

մելով մինչև ի վերջ ԺԳ. դարու, ոչ միայն իշխաններն և եպիսկոպոսներն յիշելով, այլ և զանազան վանորէից շինութիւնն և առաջնորդքն, և այլեւայլ հետաքննական դէպք, երբեմն և կրօնական խնդիրք, որոց վրայօք առանձին այլ գրած է, ոչ հաւանելով իր ժամանակին Արիկիոյ Հայրապետաց ընտանութեանն ընդ արեւմտեայս:

Եթէ իր մեծարանութեան կամ պարծանաց հետ թեթեւութիւն կամ իմաստակութիւն մի համարուի Պատմութեան եօթանասուեւերեք զլրոց առաջին տասնութին սկզբնական տաւերով իր անունը կապելն (Ստեփաննոսի է ասացեալ), բայց ընդհանրապէս կարգաւ և խօհեմութեամբ և ընտրանօք գրէ, որոյ համար և շատ աշխատած է՝ գտնել իր երկրին անցեալն և ներկայն և ստոյգն ի վեր հանել և աւանդել: Պատմութեան սկիզբն այլ իրբեւ յառաջարան՝ անախկալ աստուածարանութեամբ իմն սկըսի (հանդերձ իր անուան առաջին ստառի). «Սկիզբն ամենայն գոյացութեանց Աստուած. սկիզբն ամենայն բարեաց Սէր. սկիզբն՝ ամենայն շնորհաց՝ Խոհականութիւն» . և հետեւցընէ թէ Աստուած զմարդն իրեն նմանցուց՝ տալով անոր սեր՝ բարւոյն ցանկալու, խոհականութիւն՝ ընտրելու, այլ և արարչութիւն, այսինքն ճանչնալ, գիտնալ, հնարել և սովորեցընել. Սիրովն այլ ձկտիլ առ Աստուած և առ բարին, և բողձալով առ այն՝ «Ի կատարումն օճել զբողձային», խոհականութեամբ: Պարզապէս, ըսել կ'ուզէ թէ օրինաւոր է սիրել իր ազգը, քննել և ստուգութեամբ աւանդել ապագայից՝ իրենց նախնեաց գործերը: Այսպիսի զգացմամբ ուզեր է գրել Սիւնեաց ազգին և երկրին Պատմութիւնը, զոր իրմէ առաջ կարգաւ գրող մի չէ գտած. և չուզելով որ իսպառ անծանօթ մնան նախնեաց գործքն և քաջութիւնը, և շփոթութիւն չծագի երկրին վրայ տիրողաց մէջ, յետ երկար փափագանաց՝ «Բազում» խոյզ քննութեան ի մէջ առեալ, կ'ըսէ, տեղեկա-

» ցայ յաշխարհս հեռաւորս և մօտաւորս, ի վսեմ-
 » րայս և յարկեղս կտակարանաց, այլ և ի գի-
 » տունս և ի տեղեակս Հնագէտ պատմութեանց » :
 » (Քայց ոճով գրուած բան մի չէ գտած) : Ապա
 » հանդէս արարեալ ամենայն Պատմագրաց Հա-
 » յոց, և զոր գտաք՝ հաւաքեցաք ի նոցանէ՝ ամե-
 » նայն ձրիիս, նաեւ » ի Ճաթից, ի հին Նաւա-
 կաց թագաւորաց և իշխանաց. և ի կոնդակաց կա-
 թուղիկոսաց, « Ար մնացեալ էին ի վաղ ժամանա-
 » կաց յամուրս քարակառային, և որ ի սուրբ ուխտս
 » հայրապետանոցին Տաթեւու, և յԱրձանագրու-
 » թեանց եկեղեցեաց և ի Յիշատակարանաց գրոց » :
 Նաեւ ժամանակաց ստուգութեան համար հոգ տա-
 նելը վկայէ. և կարդացողին կ'ըսէ. « Բնկալ դու
 » սիրով, և հաւատա՛ գրեթեացս՝ ամենայն ողջմտու-
 » թեամբ, և շնորհ կալ զՀօգւոյն, և զմեզ անմե-
 » զագրելի թող » :

Ճշմարտութեան հետ, որ պատմութեան կարե-
 ւորագոյն խնդրելին է, Ստեփանոս ունի շափաւոր
 մաքուր լեզու, ծանրութիւն և ազնուականութիւն
 մի պատշաճ իր ցեղին և աստիճանին, հանդերձ
 համեստութեամբ, որով յայտնէ ոչ ինքն իրեն՝ այլ
 իր աթոռոյն մեծութիւնը ցուցնել փափագած : —
 Յայտ է որ իր վերոյիշեալ քարանձաւին և ուրիշ
 տեղեաց մէջ շատ գրքեր և յիշատակներ գտեր և
 քաղեր է. ի վերայ այսր ամենայնի շատ երկար
 բան չէ գրած, թէ և տեղ տեղ բառ առ բառ
 օրինակեր է : Քայց աւելի ստուգութեան հոգ տա-
 րեր է ամենայն ձրիիս աւանդելու՝ քան երկարաբա-
 նութեան և տարակուսական բաներ յիշելու. որով
 կրնամք վստահութեամբ ընդունել մեզի ընկալ
 ըսածները, և ախորժաբար՝ իր տեղ տեղ ընտրանօք
 և զգացմամբ գրածները. որոց ձաշակ ընծայն
 Գործոյս Բ Մասին մէջ՝ Յօդուածքն 33. 89. 91—2.
 168. 179. 195. 201. 217 :

Պատմութեան վերջաբանին մէջ այլ սկզբանը նը-
 ման կրկնէ. « Սկիզբն և կատարած ամենայնի Աս-

» սուած. որպէս ի կարակնակերտ բոլորումն (կար-
 » կինով գծած բոլորակի մէջ) է տեսնել, զի ուստի
 » սկսաւ (գիծն)՝ ի նոյն յանգեալ միացաւ » . և
 այլն. և անբաւ գոհութիւն մատուցանէ Ստու-
 ծոյ՝ որ կարողացուց գրել և աւարտել այս գոր-
 ծը, « Ի դառն աւուրս և ի սովամածոյց մահա-
 » շունչ ժամանակիս, յորում՝ մահն՝ ցանկալի և
 » երանական, և կեանքն՝ ատելի և թշուառական » .
 անշուշտ թաթարաց և Եգիպտացուց արշաւանաց
 պատճառաւ :

Յիշեցնէ դարձեալ իր Պատմութեան աղբիւր-
 ները, նաեւ զաւանդոթիւնս « Ստուգագէտ արանց,
 » որում՝ վկայելին իրքն և տեղիքն. զհետ մտեալ
 » ամենայն ճշգիւ ստուգութեան, ի բաց ձգեալ և
 » զունայնախոյզ զբարանութիւնն, զի մի՛ տաղտ-
 » կասցին լսողք. և կարճատօտ վիպասանութեամբ
 » ցուցաք համատօտիւ զատուել պիտանին և զձա-
 » հագոյնն » : Սրտատուշ բանիւ նուիրէ գրածն՝
 Եկեղեցոյն Տարեւոյ. նշանակէ և զթուական գրոցն
 լրանալուն, 1299 Քրիստոսի. բայց Հայոց թուա-
 կան 746 դնելուն՝ պէտք է զՔրիստոսին գոնէ տարի
 մի առաջ համրել :

Օրպելեանի Պատմութիւնն ամբողջ փոսնկերէն
 թարգմաներ և հրատարակեր է Պրոսէ ի Բեզբը-
 պուրկ. որ և հմուտ ըլլալով Վրաց պատմութեան,
 շատ ծանօթութեամբք լուսաբաներ է :

Թողով կրօնական խնդրոց վրայ գրածները, որոց
 մէջ վիճաբանական ոգւով աւելի կամ պակաս
 մղուած է, և աւելի շափաւոր գրած թուղթն առ
 Գրիգոր Անաւարդեցի կաթուղիկոս, իբրեւ պատ-
 մութեան վերաբերեալ ինչ յիշեմք Ստեփանոսի
 գրած Ողբն ի դիմաց Վաղարշապատի, այսինքն
 էլ միմանի, « Վասն աւերման աշխարհիս Հայոց...
 » շարժեալ շափարան բերմամբ հոմերական ա-
 » բուեատի... ի խնդրոյ շնորհապարզ Վարդապետի
 » Խաչատրոյ կեղանեցի. ի թուին ԶԽԸ », (1299—
 1300) : Զորս հարիւր քառասուն տող ութնտեան

և ին ին վերջայանգ ոտանաւոր է. յորում կան վայելուչ իմաստներ, յիշելով ազգին անցեալ փառքն և իշխաններն, և աւելի մօտ ժամանակի Բագրատունիքն և Պահլաւունիք: Ողբին կցած է այլեւայլ յանգով ոտանաւոր Յիշատակարան մի իբր եօթանասուն տող:

100. Խ Ս Չ Ս Տ Ո Ի Ր Կ Ե Չ Ս Ռ Ե Յ Ի

Այրարատայ Կեչառուաց աւանէն և վանքէն ընծայուած է Խաչատուր, այն և այլ շատ կողմերու տառապանաց ատեն ի Թաթարաց և նմանեաց, յորոց իր մօտ ժամանակի ծաղկած և խամրած ազնուագունքը կ'ողբայ համառօտ քերդուածով մի (Տես Յօդուած 354, յ'Բ Մասին). աւելի յստակ լեզուաւ քան ուրիշ աամկօրէն գրածներն. յորոց նշանելի են Աղեքսանդրի Վարդաց այլեւայլ մասանց յարած բարոյական կամ ողբական տողերն, զորս Բարսեղնոչքիւն անուանէ. նաեւ արձակ ողբական բան մի: Բայց իր ամենէն նշանաւոր գործն է այդ յիշեալ մեր հին թարգմանչաց ճարտար թարգմանութիւնն Մեծին Աղեքսանդրի Պատմութեան. որոյ հեթանոսական համարձակ բացատրութիւնները յապաւելով հրատարակեր է Խաչատուր, որով թէ ոչ ինքնին Պատմիչ, այլ մասնակից է Պատմչաց: Արժան է մտադրութեան այս գործոյն համար գրած Յիշատակարանը և տեղն, ի խընդրոյ « Սրբազան Հարանց հօգեւորաց և համչիրակ համբակաց »: — « Արք լսէք զաղիօղորմ Բարսեղնոչքիւնս, զյարմարող սորա զԽաչատուր Կեչառուացիս յիշեցէք ի Քրիստոս...: Ի յարմարունս » սակաւ բանիցս և ի գրչուութիւն գրոցս՝ հաւատով աշխատեցայ: Նաեւ զի հեթանոսական գրեալքն անմիաբան են և անվայելուչ, ի վերոյ շարկապ

» բայելք որակացեալ և ի ներքոյ լի սնտօի կարծիւք խարէութեամբ, որպէս և առ զբասիրաւն Պողոսմէսիւ անպատուեցաւ: Իսկ զայս Պատմութիւնս աշխարհակալին Աղեքսանդրու՝ զոր գրեցի իմով ձեռամբ ի մեծ քաղաքն Հալիմ, առ Պապն Յրանգաց, ի յաթոս նստեալ Պետրոսի և Պաւլոսի Առաքելոցն, սրբագրեալ ի գրոց հնոցն՝ սակս օգտի. և զարդարեցի ոսկով և տնօրինեալ կանոյով և ոտանաւորով, ի փառս Փրկչին. և բերեալ ի Հայս՝ պարզեաւ մեծ վարդապետին և քաջ վարպետին իմոյ Խաչեայ (Նշեցուոյ) և Պարոն եղբարցն իմոց և հարցն Պաւստանց... զի թէպէտ էր յընտիր և ի հին օրինակէ, այլ անյարմար և շողփաղփ. վասն որոյ գտեալ և քննելուք քերդօրէն՝ արարի անխոտորնակ ճանապարհ. զի յընթեանուն իմացին պուէտիկոսք և քարտուղարք. և ապա զիտասցեն զիմ՝ աշխատանս ի սմա՝ զոր լիպպէս վաստակեցի »:

Շատ նկատելի կէտք կան ի յիշատակիս, որ գործոյս քննութեան շեն վերաբերիր. ամենէն նշանաւորն ի Հոսովմ քաղաքն աշխատիլն է, ուր և ենթադրի թէ կարեւոր գործոյ համար գնացեր էր. բայց աւելի զարմանալին այդպիսի գրոց վրայ պարապիլն, որոյ թերեւս քանի մի ձեռագիր օրինակ ունէր, հետը տարած կամ հօն գտած. զի այն ժ.Վ. դարուն կիսէն առաջ և վերջ այլ Հայք ունէին վանատունս կամ հիւրանոցս, մօտ թէ Ս. Պետրոս և թէ ի Ս. Պողոս. անտարակոյս է հետերնին իրենց լեզուով Չեւազիրներ այլ տանելիներն, և նոյն իսկ ի Հոսովմ ընդօրինակելիներն, յորոց ոմանք գտնուին գեա յԷջմիածին և առ մեզ. բայց Աղեքսանդրի Պատմութիւն այլ տանելն, ո՛վ որ ըլլայ տանողն, արդարեւ զարմանալի է:

Պառնալով առ Խաչատուր, իր հետախոյզ բարաց շատ յարմար և ընդունելի է՝ որ այդ մեծ քաղքին Լատին լեզուին այլ ծանօթացեալ ըլլայ, ինչպէս ժամանակակից Եղնկացին. ինքն այլ

ծանօթացեալ է արեւմտեայց, ո՛ր և է՝ բայց թուի կարեւոր պատճառաւ՝ երթալովն և կալով ի Հոովմ առ ժամանակ մի: Այս բանիս հեռաւոր ակնարկ մի ընծայէ իր բարեկամն Օրպելեան ի յիշատակարանի Վարդաշապատու Ողորցն.

- « Բարունպետս հոգւով լըցեալ,
- » Անյաղթ հոետոր շնորհօք ծաղկեալ,
- » Եւ բանիրուն մեզ ճանաչեալ,
- » Յագգաց բազմաց գովարանեալ.
- » Որ Խաչատուր է յորջորջեալ,
- » ՅԱրարատեան տանէն եկեալ »:

Այսչափ գովեստ սոսկ բարեկամութեան համար չի կարծուիր. հարկ է թէ Խաչատուր իր հիմայ մեզի ծանօթ քանի մի քերդուածներէն և Գանձերէն զատ՝ կարեւոր գրուած այլ արտադրած ըլլայ, թերեւս և Պատմական:

101. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՃԻՇԵՅԻ, ՈՍՊՆԱԿԵՐ

Շատ տարիներ կերածն միայն սոսկ ըլլալով՝ այնպէս անուանած է սա, ԺԳ. դարուն վերջերն ապրած: Իր ծանօթ գործն է Պատարագի Մեկնութիւն մի, իրմէ առջի գրողներէն քաղած, և յատկապէս ի Լամբրոնացւոյն: Քանի մ'այլ մանր մեկնողական բանք, բայց տարակուսականք են իրեն ըլլալուն. զորս յիշելով յետին դարու գրիչ մի՛ կ'աւելցընէ և « զՊատմագիրն եւս »: Հետաքրքրութիւն չարժէ յիշատակս, բայց չգիտեմք ի՞նչ ըլլալն: Նոյնպէս չգիտեմք ի՞նչ Պատմութիւն է Պարսից, զոր ի ԺԳ. դարու Յովնանէն Վարդապետ մի թարգմաններ է, ինչպէս կ'ըսէ անցեալ (ԺԹ.) դարու կիսէն առաջ գրող Էւրոպացի մի (Շորէն), և կարծեմք թէ Արճիշեցին ըլլայ:

ԱՆՍԻԱՐՉԵՅԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Կիլիկիոյ Անաւարգայ քաղքի մօտ Մեծքար անուն վանաց հօր և իր քեռւոյն Յակովբայ կաթողիկոսի յաջորդ է Գրիգոր Անաւարգեցի. համամիա Բ Հեթմոյ թագաւորի ի կրօնական խընդիրս, և ոչ սակաւ հակառակութիւն կրած է, ինչպէս քաջածանօթ է ի պատմութեան. սակայն անկողմնասէր գրողք շատ գովեն զնա վարուց սրբութեանն և երկիրգածութեանն համար, որ և յայտնի իր գրածներէն, որպէս նոր ոճով գրած Շարակաք նոր կարգած տօնից համար. Թուշր մի առ յիշեալ թագաւորն Հեթում, յորում շատ գիտելիք կան եկեղեցականք, և քանի մի անգամ յիշէ իր քեռւոյն (Յակոբայ կաթողիկոսի) « Գիրքն, որ է կ'ըլ » սէ, Հաւատոյ արևատ » . այս գրոց հեղինակ համարուի Յովնանէն Մայրապոսեցին, է. դարու մէջ: Բայց ամենէն զլիւար գործ Անաւարգեցւոյն է նոր կարգով Յայրաւառըքն, Յունաց և Լատինաց նոյն տեսակ գրքերէն շատ Սրբոց յիշատակք աւելցուցած: Իր մահուան (1307) գրեթէ յաջորդ տարին թագաւորած Օշնի համար գրուած օրինակ մի այս գրոցս՝ գանուի առ մեզ:

Բաց ի վարուց կամ ի յիշատակաց Սրբոց, որոց համար կրնայ դասուել ի շարս Պատմագրաց մերոց, այդ կարեւոր գրոց մէջ ըստ աւուրց պատշաճ իր հեղինակօրէն գրած ճառերն այլ անցուցեր է, որոց մէկն ի Ծնունդ Ս. Ստոռածածնի, իսկ ուրիշ երկար մի ի յիշատակի Ամենայն Սրբոց, և այլն:

103. ՄՈՎՍԷՍ ԵԶՆԿԱՅԻ

Սա այլ ժԳ. դարու վերջերը կերպով մի նման Անաւարդեցոյն գիրք մի հաւաքեր է Ոսկիտոր կոչելով, յորում թէ՛ ճառական և թէ՛ Պատմական բանք կան, շատն Սրբոց վարուց վերաբերեալ, որոց թէ ոչ բոլորովին յօրինող՝ այլ գոնէ յերևուող և յարմարողն է:

104. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵԶՆԿԱՅԵՅԻ

Թէ և մեծ պատմական գործ մի չէ հասած մեզի յԵզնկայեցոյն, որպէս կոչէ զինքն, և սովորաբար կոչի Եզնկացի, և երբեմն Պրուզ, ըստ ոմանց աչաց գունոյն համար, ըստ այլոց փոքրահասակ ըլլալուն, բայց և քիչ մնացածն հաւասար իր բազմատեսակ ուրիշ գրուածոցն, գրեթէ անհրաժեշտ հարկ դնէ յիշելու զնա հաճութեամբ մեր գործոյս մէջ՝ այլ համասօտիւ, զընդարձակն թողլով Հայկական Դըպրութեան հեղինակաց և յատուկ իր վրայ գրուաց¹. վստն զի սա վերջինն է յարժանաւոր մատենագիրս մեր, ժԳ. դարը կնքելով և ժԳ-ն բանալով. իրմէ ետքը ոչ ոք իրեն հաւասարեցաւ կամ մտեցաւ, և ոչ իսկ իր դարուն հոչակեալքն, միանգամայն անըլով իր վարպետն՝ Մեծ անուանեալ Վարդանն եւս, և իրմէ առաջ այլ սակաւք: Իրեն նման հանճարեղ և հմուտ վայելչաբան մի գտնելու համար, պէտք է ելնել մինչեւ ի Մխրթար Գոչ, ի Լամբրոնացի և ի Շնորհալի, և

1. Ինչպէս ի Յռչիկս, Հար. Բ, 437-495:

աւելի վեր մինչ ի Յովհաննէս Սարկաւազ Վարդապետ: Չի տարակուսիր այս բանիս ով որ մեր մատենագրութեան տեղեակ է և կարգացեր Եզընկացոյս այլեւայլ և իրարմէ տարբեր տեսակաւ գրածներն, որոց մէջ թէ հմուտիւն կայ թէ հանճար, և երբեմն բարձրագոյն, ինչպէս իր քանի մի Տաղից և Շարակիւնաց մէջ (փեմականն Ո՞վ զարմանալին Ջրօրհնեաց, Լերիկքն Լուսաւորչի՝ զոր ոմանք մեր մեծ Քերթողհօր համարին, վայելուչն Այսօր գոշարձացեալ այբբենաթիւն, և այլն): Իսկ իր հանճարոյ հարատութեան և գորութեան ապացոյցք են՝ ընտիր ընտիր և այլագէժ արտագրութիւնքն, Մեկնողակաւն, շարունակութեամբ Շնորհալոյ շատ պակաս թողած Մասթէի Աւետարանին, որոյ անոյշ գրչէն հետու չի մնար հետեւողն. — Մեկնորչիւն Պատարագի, որ մեզ ծանօթ չէ. — Մեկնորչիւն Պերսականիւն, ճոխագոյն և լաւագոյն քան զամէն իր նախորդներուն, յորոց վեց եօթն գտեր և յիւշէ. — Ներքողեակք, որ յատկապէս վերաբերին մեր նպատակին, և են Ս. Գրիգորի Լուսաւորչիկն, Մեծիկ Ներսիսի՝ առթիւ իր Նշխարաց յայտնուելուն. — Ճառք և Ատենարանորչիւնք, ինչպէս խօսածն յարքայական հանդիսի Բ Լեւոնի որդւոց (Հեթմոյ Բ և Թորոսի) Չխաշորաշրեանն կամ Ասպետութեան. — Երկնայիկ Շարժեակց կամ Աստեղաբաշխական բացատրութիւնն՝ ի խնդրոյ Հայոց և Վրաց իշխանազանց, որոյ և կրկնութիւնն ալ յօրինեց Հազար տող ռոտուաւորով. — Կաւեռք վաւանակաւնց ի խնդրոյ Յակովբայ կաթողիկոսի. — Աշխարհականաց համար այլ նմանապէս Խրատք, ռամկական լեզուաւ. — Ոսկիտոր մի, Ս. Հարց Ճառից և Վիպարանորչեակց, լաւ ընտրանօք և տեղ տեղ պարզելով և կոկելով:

Այս ամենն տարբեր գործ է, և թերեւս ի նմանիսն առաջին (յեւ Լամբրոնացոյն), ի լատին լեզուէ թարգմանութիւնն մասին ինչ Ատոռաճարանորչեակ Ս. Թովմայի Ակոռիկացոյ. որ ցուցանէ

իր սրամտութիւնն՝ իր տարիքն առած ժամանակին այլ սովորելով բաւականապէս այն օտար լեզուն՝ բարձր նիւթի վրայօք գրուած: Այս բանս յայտարար է իր դիտողութեան և յարգելուն արեւմտեան իմաստութիւնն և եկեղեցւոյ վարդապետութիւնն, որ Լատին Քարողչաց ի Հայս դաւոյն և յաւաճանաւոյն անտի յարեւելս՝ ծանօթացեր էր արթնամիտ մերայոց՝ նախ քան զհաստատութիւն Ունիորդաց անուանեալ կարգին. թող որ Եզնկայեցին ի Կիլիկիա գտնուած ատենը ծանօթացեր էր Լեւոնեանց և Հեթմեանց արքունեաց մէջ Լատին և փռանկ վարդապետաց և պաշտօնէից. հաւանորէն ծանօթ էր և Վրաց լեզուի, անոնց քով կենալով ժամանակ մի, և այլեւայլ ատեն այլեւայլ կողմեր և հաշակեալ վանքեր բնակելով ինչպէս ի Հաղբատ, և այլեւայլ գիտնոց աշակերտելով որոց գլխաւորն Վարդան Մեծն. բայց աւելի երկար ատեն և վերջերը հաստատուելով յԱրտագու Ս. Թաղէոսի վանքն՝ մօտ ի Գործոր գիւղ՝ յորմէ առաւ իր մէկ մականունն (Գործորեցի): Հօն զինքն ընդունեցաւ Զարարիա լուսամիտ արքեպիսկոպոսն տեղոյն. որոյ հետ համախոհ էր ի կրօնական խնդիրս, որպէս և ի Կիլիկիա եղած ժողովոց, բայց ոչ սիրող վիճմանց, որոյ համար՝ անգամ մի թէ և հրաւիրեալ՝ բայց ոչ ինքն գնաց և ոչ Զարարիա. (Տես ի թիւն 97): Երկուքն այլ նոյն հին առաքելական վանաց մէջ երեւին վախճանեալ՝ յառաջին քառորդի ԺԿ. դարու:

Մենք պատմական տեսակիտին միայն մտադրելով՝ կարծեմք, որ վերը յիշածներնէս աւելի Պատմական բան գրած ըլլայ մեր պանծալի հեղինակն: Ռոշքեանն իր շատ անգամ յիշուած քառարանին մէջ այսպիսի տող մի ունի ի Յովհաննէ Եզնկայւոյ. « Ի ձին խամթաւոր նստեալ՝ վազէր »: Քանի մի տեղ այլ միայն Եզնկ նշանակէ զհեղինակ բառին, որ կրնայ մեր հին Եզնիկն այլ ըլլալ, բայց ոճ լեզուին չի յարմարիր ասոր. յիշած տողքն են. « Առ

» ժամ մի տեղի տայ ընդդիմարանից »: — « Երբր » նմա խանկաւ (խանիկ. փոքր ափսէ) դայար » թուզ »: — « Արպէս զիտայ հերձանեղի՝ զբարիս » ճեղքէր »:

Հեղինակիս քանի մի գրոց Յիշատակարաններն ընծայէ Յ47ր Յօդուած գրոցս, յԲ Մասին:

105. Ե Ս Ա Յ Ի Ն Չ Ե Յ Ի

Ժամանակաւ ոչ միայն քիչ մի երիցագոյն է Եսայի Նչեցի քան զԵզնկայեցին, այլ և զսա իր աշակերտաց կամ ունկնդրաց մէջ ունեցեր է, իր մեծ համբաւէն շարժելով և ձգելով առ ինքն. զի Եզնկայցին՝ ի բնէ փափագող գիտութեանց և ծանօթութեանց, ամէն կողմ՝ ուր հաշակուած վարժարան կամ վարդապետ մի կար՝ կ'երթար աշակերտարար լսելու: Եսայի յետ վարդանայ համբաււորն եղած է ի վարդապետս Մեծին Հայոց, Միւնեաց Գրաձորոյ վանաց առաջնորդ ըլլալով, ուր կ'աւանդէն թէ երեք հարիւրէ աւելի բանասիրաց վարդապետական Գաւազան տղած է:

Իր գրածներէն մեզի հասածքն են Մեկնորիւնք քերականի և Էզնկիեղի Մարգարեոքեան. և կրօնական խնդրոց վրայօք թռչոյք, (յորոց մին առ Հերոու Պայլ ի Կիլիկիա), և Վիւարսնորիւնք. ասոնց մէջ շափազանց պաշտպանութիւն կայ ազգայնոց, որով և ոչ յստակ տեսութիւն յամենայնի: Իսկ Մեկնորականքն շափաւոր քննութեամբ գրուած են. բայց ոչ ատոնք և ոչ կրօնականքն՝ իր մեծ համբաւոյն հաւաստիք կրնան ըլլալ: Շատ երկար տարիներ այն հաշակուած վանաց առաջնորդոն և հարիւրաւոր վարդապետներ ընծայոյն՝ հարկ է թէ աւելի գրաւիչ բան կամ բաներ այլ գրած ըլլայ: Միթէ անոնցմէ մին այլ չէ՞ Պատուոչ

քիւն մի ազգային զիպաց, երկար կամ կարճ ժամանակի. — Կրնայ հաւանական կարծուիլ. որովհետեւ Չաչկեցին ի շարս պատմչաց՝ առանց մականուան կարգէ և զԷսայի ոմն, և յառաջ քան զԺանոթ Վարդանն և Կիրակոս, նաեւ քան զՎանական. բայց իր դասակարգութեան մէջ կան ուրիշ յետեւառաջութիւնք, և հաւանական կ'ընեն որ յիշեալ Եսային ըլլայ Նշեցիս: — Թէ՛ ի Գլաձոր վանս և թէ՛ ուրիշ կողմեր գրուած շատ Չեռագրաց մէջ գտնուին յիշատակք Նշեցւոյն:

106. Գ Ա Ն Ի Է Լ ?

Չաչկեցին ընդ մէջ Կիրակոսի և Վարդանայ յիշէ այս անուամբ Պատմիչ մի, որ բոլորովին անծանօթ է մեզ, և ոչ յիշուած ուրիշէ. չեմք այլ կարծեր՝ որ ըլլայ դար մի վերջը զրոյ Արճիշեցի Մեռարն, որոյ լատինարէն գրածն կայ: Տէս ի կարգի ԺԳ. դարու Պատմչաց, թիւ 110:

107. Ա Բ Ո Ի Ս Ա Հ Լ

Յիշեն զսա Փռանկ արեւելագէտք Լըքիէն, Ռրնոտոյ, և Հերպոյ՝ արարացի կոչմամբն Էպոռ Սարան Ան-Էրնակի, վասն զի արարերէն զրեր է՝ այդ լեզուին ծաղկած երկրի մի մէջ իր ժամանակին, որ ԺԳ. դարու պառչածի. վասն զի գրած Պատմութեան միջոցն է Քրիստոսի 1168 թուականէն մինչեւ ի 1337. իսկ նիւթն է՝ Պատմութիւն քրիստոնէոսքեան Ափրիկէի ազգաց, որ են Եգիպտացիք (կամ Ղըփտիք), Եթովպացիք, Եռապացիք, Արաբացիք և

հնագոյն Լիբիացիք, Եռապացիք, Մաքրիտանացիք, նաեւ Արեւելեան Հնդիկք: Այս շատ հետաքննական Պատմութեան սակաւագիւտ արարերէն Չեռագիրն գտնուէր ի մեծ գրատան Բարիզու. քիչ տարի առաջ թարգմանուեցաւ անգղիարէն և բնագրին հետ տպագրեցաւ յՕքսֆորտ. յորմէ քաղելով ինչ որ մեր ազգին վերաբերի՝ Եգիպտոսի մէջ վանաց և եկեղեցեաց նկատմամբ, մենք այլ թարգմանելով աշխարհարար, փոքր տետրակ մի հրատարակեցինք ի Վանս մեր յամի 1895 (ութսուն երես), վերագրելով՝ Արաշահի Հայ, Պատմութիւն եկեղեցեաց և վանորհից Եգիպտոսի:

Նախընթաց դարուն մէջ Լըքիէն (Ս. 1398) յԱրուսահլէ առած յիշէ մեր Գրիգոր Գ կաթողիկոսի՝ եղբոր Շնորհալուոյն՝ յամին 1117 երթալն յԵրուսաղէմ և յԱղեքսանդրիա, և այն կողմերու վանականաց Հայոց և եկեղեցեաց ընծայելն ոսկեզարդ և մանրանկար Աւետարաններ, եթէ չէ շփոթած յամի 1167-8ի Եգիպտոսի Հայոց եպիսկոպոսին ըրածին հետ:

Արուսահլի Հայ ըլլալուն վրայ տարակոյս չի կայ. սակայն ինչպէս գրութիւնն օտար լեզուաւ է, այսպէս ազգային ոգի այլ չերեւիր իր գրածին մէջ, թէ և ստուգութեամբ պատմէ:

108. Մ Ա Ր Ո Ի Գ Է Գ Ա Հ Ա Ն Ա Յ

Սա Կաֆայի (Թէոփոսիոյ) Ս. Միքայէլի եկեղեցւոյն քահանայն էր, և յիշուի յամին 1366: Սորա գործն թէ և Պատմութիւն Հայոց կոչէ իտալացի Պոնոռլի ի Վարս Ս. Լուսաւորչի մերոյ, այլ հաւանորէն գրածն կաթողիկոսաց պատմութիւնն էր, որ սկըսի, « Յետ երկերիւր վաթսուներկեց ամի » կատարման Առաքելոցն Բարթողիմէոսի և Թա-

» դէոսի », և այլն, զոր Կալանոս ի լատին թարգմանած և հրատարակած է: Ռոչքեան Ստեփանոսն այլ յիշէ զայս իր Հայ-լատին բառագրոց մէջ: Այդ բնագիր կաթողիկոսաց շարագասութեան Պատմութիւնն հին ըլլալով՝ գուշակուի որ Մարուզէ առաջ տարեր հասուցեր է մինչև իր ժամանակը. գուցէ և աւելի տեղեկութիւններ զըրած, որ Կալանոսի գործոյն հարկաւոր չէր և չէ օրինակած կամ թարգմանած:

109. ՆԵՐՍԷՍ ՊԱԼԵՆՅ. — 110. ԴԱՆԻԷԼ

ՄՆՈՒՐ

Լատին և Հայ եկեղեցեաց դաւանութեան կամ վարդապետութեանց սաստիկ վիճման ժամանակ և մօտ ի կէս ժԻ. դարու, այս երկու անձինք կերպով մի պարագլուխ եղած են, որոց գործն, գրածն և հետեւանքն ըստ այսմ տեսութեան՝ կրնան գտնել հետաքննողք ի Պատմութեան Հայոց Չամչենի (Հար. Գ, էջ 330-352): Մեզ հօս բաւական ըլլայ յիշել զպատշաճն մեր Պատմական խնդրոյն:

Առաջինն, որ կոչուի Պաղոն, Պալեց, Պաղոն, ըստ իր վկայութեան՝ Մանսգիւրտի (հին Հարք գաւառի) եպիսկոպոս կամ արքեպիսկոպոս էր, հակամէտ այն ժամանակի լատին Քարոզչաց Միաբանդարեան, և իր ծայրայեղութեանն համար մերժուելով ի Հայոց, այլ աւելի ետանդեամբ գրով և բանիւ սկսաւ շատագովել զլատինականն և ստգոմանել զհայկականն. առ որ յարմար համարեցաւ նախընթաց դարուն վերջերը գրող Դոմինիկեան Լեհացի Մարտինոս արքեպիսկոպոսի (Martinus Polonus) գրած Հռովմայ Պապերու Ժամանակագրութիւնը թարգմանել հայերէն, ըստ տեղոյն

խառնելով իր կողմանէ՝ Հայոց կրօնական յիշատակներ. և ըստ այսմ գրուի ի կարգի Պատմչաց մերոց: Ի սաստկանալ վիճմանց և ամբաստանութեանց զՀայոց, սասնց մուրուրութիւն համարեալ իրաւ անիրաւ հարիւր և աւելի կէտեր նշանակեց երկար և պժգալի գրուածով մի՝ որ զրկուեցաւ առ թագաւորն Հայոց (Լեւոն Դ) և առ կաթողիկոսն (Մխիթար), պահանջելով որ մի առ մի պատասխանեն անոնց: Հայք ժողով գումարեցին, քննեցին այդ Յուցակը, ապշեցան, և տեղ տեղ այլ չհասկացան, ոչ միայն լատինարէն գրուած ըլլալով, այլ և մուրար համարեալ Հայոց անուանքն այլանդակած. վերջապէս հարկ համարեցան՝ ըստ պահանջման Հռովմայեցոց մի առ մի պատասխանել. և այս բանս շարագրելու համար կարող գատուեցաւ մէկ փրանկիսկեան կրտսեր անուանեալ Հայ կարգաւոր մի, Դանիէլ Արձիլեցի, ըստ ոմանց Դաւրիթեցի (զոր Ներսէս՝ Մնշար, Minor, կոչէ), որ այն երկար ցուցակին ամէն մէկ յօդուածին՝ աւելի երկար պատասխաններ գրեց նոյն լատին լեզուաւ. որոյ հին ձեռագիր օրինակ մի եւս գտնուի ի մեծ գրատան Քարիզու, այլ և գրեթէ ամբողջ տպագրուած է ի Պատմագիրս Ժողովոց Լատինաց: Անուշտ հայերէն այլ թարգմանուած պիտի ըլլայ, որ չէ յայտնուած կամ ընջուած է. շատ անտեղի հարցմունքներ այլ առաջարկուած էին մէջը, ի գայթակղութիւն լսողաց: Թերեւս Լատինաց գրածը թարգմանած ըլլայ Ներսէս. որոյ զլխաւոր պատմական թարգմանութեանն համար՝ մեր ժԻ. դարու պատմագրաց մին գրէ. « Գաւազանագիրքն Հռովմայեցոց... կայ ի մէջ ազգիս Հայոց, վաղուց » ժամանակաց թարգմանեալ ի խնդրոյ (փոխանակ) ըսելու ի ձեռն) Պալիսենց Սրբեցոյ »:

Եթէ Ներսէսի գրածին մէջ հայ յիշատակքն ստիպեցին զմեզ ընդունելու զինքն ի շարս մեր Պատմչաց, չկարեմք դուրս թողուլ և իր հակառակորդ Մնշարը. որ իրրեւ թարգման և լեբան Ժո-

զովոյն Հայոց՝ բողոքած է ընդդէմ ամբաստանող Պալիննցին, և յայտնած՝ որ իր անվայել գնացից և խօսիցն համար մերժուած էր ի կաթողիկոսէն, և նա իրրեւ ի վրէժ բարդեր էր Հայոց վերայ ամբաստանութիւններ, և մասնաւոր անձանց դիպուածն իրրեւ հասարակաց կը վերադրէր, ըստոյն և անստոյգը:

Իրրեւ դարձեալ մեր նպատակին վերաբերելի յիշեմք, որ Ներսէս նախայիշեալ պատմական գործէն դատ՝ թարգմաններ է կամ իրմէ առաջ թարգմանածի վրայ ձեռք դրեր է, որ է Հոովմայ եկեղեցւոյ կարգաց կամ ծիսից զիրք, պարզապէս ըսելով Մարտոց. որոյ մէջ երբ իրեն յարմար առիթ գտնէ՝ խառնէ պատմական յիշատակներ, մանաւանդ իր հակառակորդ Մնռարին վրայ, մինչև ի խորս դժոխոց իջեցընելով գնա. զոր և հրատարակել անգամ անարժան համարիմ. բայց զպատմական ինչ մասնն, եթէ ստոյգ է. զի, ըստ իր ըսածին՝ Դանիէլ յատեան հոովմէական կանչուեր է. յետս կոչումն ըրեր է գրածին, և եպիսկոպոսական պատիւ ընդուններ է. յետոյ դարձեալ իր առաջին գրածին և ըրածին գարձեր է, և չարաչար մեռեր է: Ի Կանոնի կարգաբոլոյց և վերանայտոյրնան (իբր Ապաշխարոզ արձակելու) այսպէս գրէ Ներսէս. « Որպէս և Դանիէլ Մնռարն եղեւ, զոր տեսաք ակամբք և լուաք »
 « ականջօք, առաջի սրբազնագոյն և ծայրագոյն »
 « քահանայապետին Տեառն Կլեմենդոսի Զ-ի, ի »
 « յամի քահանայապետութեան նորա հինգերորդի »
 « (1346), առաջի սիւնհոգոսին կարտինալարացն »
 « իւրոց և այլ բազմութեան արհիեպիսկոպոսաց և »
 « եպիսկոպոսաց և արքայից և հօետոր և ճարտա »
 « սան արանց և բազմութեան ժողովելոցն՝ աւելի »
 « քան երկուց հազարաց: Զասացեալ Մնռարն չա »
 « բարխտն Դանիէլ Սրճիչացին, ազգաւ հայ, »
 « կամեցայ հաշտեցուցանել ընդ հաւատն սուրբ »
 « եկեղեցւոյն Քրիստոսի: Իսկ մոլին և չարն այն... »
 « ստեաց Հոգւոյն Սրբոյ երգմամբ... և երդուաւ

» կալ ի հաւատս կաթողիկէ սուրբ. և ոչ եկաց,
 » եթէ ոչ՝ մինչ զի եպիսկոպոս եղեւ ի յիւր դատա »
 » պարտութիւնն. դարձեալ ուրացաւ չարագոյն... »
 » իսկ յետոյ չարաբախտն այն նախասացեալ Մը »
 » նոյր Դանիէլն՝ ուսեալ հերձաւ և անկեալ սա »
 » տակեցաւ » : ...

111. Մ Ի Ի Թ Ա Ր Ա Պ Ա Ր Ա Ն Ե Յ Ի

Մեծ Նատագով մի եւս միաբանութեան Հայոց և Լատինաց եկեղեցւոյ է Միսիրար Ապարանեցի, բայց ոչ բուն իրրեւ շերտէս, թէ և բան գնաւ ելի լատինացեալ, մի յՌեկիրոյ անուանելոցն ըլլալով, ծննդեամբ յԱպարաններ գեղջէ Երնջակայ. շատ հեղ զինքն Միսիրարիչ կ'անուանէ: Ընգետասաներորդ դարու առաջին գրողներէն է. նախընթաց դարու վերջերն այլ գրուած ունի և երեւի անոր կիսում կամ աւելի առաջ ծնած. վասն զի իր զլխաւոր գործոյն մէջ գրելով 1440ին, « Այժմ յիսուն ամ մերձ է, կ'ըսէ, որ ի դրունս » սուրբ գրոց դեգերեալ կամք, և ի հին ի նոր » թարգմանեալ գրեանքն ի յայլոց ազգաց և յեր » կաթաղիր մատեանս և ի յայլ մատեանս, և ի » սուրբ և ի նախնի վարդապետաց ասացուածս » խուն մի վարժեալ ». ըսել է, թէ շատ բան կարդալով քննելով քիչ շատ այլ տեղեկացեր է. շատ կողմեր այլ քալած կ'երեւի գրքեր քննելու. և թէպէտ երկու երեք անգամ կրկնէ իրմէ առ ջիններուն վկայութեամբ, թէ երկու անգամ Հայոց գրքերն այրեր են թշնամիք, այլ դեռ զատ ի թարգմանութեանց՝ Հայոց յատուկ գրածներէն զանազան կողմէ եթէ մէկտեղ բերուն՝ հազար բեռն և աւելի կ'ըլլան, և թէ մինակ Մակուայ բերդի (կամ Ծրակին) մէջ ի Սըտոյ բերուած են յիսուն

լիար ձեռագիրք. լիարն այլ ծանր կշիւ մի իմա-
նալու է: Այս յիշեալ տեղն շատ տարիներ կեցեր
քններ է, թէ երկարագիր և թէ գրչագիր մատեան-
ներ, ինչպէս որոշելով կ'ըսէ, և միայն Լուսաւորչի
վարք հինգ տեսակ գրուած, ոչ մէկն մէկայլին
նման: Այս յիշատակով կ'իմանամք և տեսնեմք
այլ որ յիրաւի, թէ և լեզուի ոճն ստորին է, բայց
ոչ սակաւ հմտութիւն ունի և հետաքննական տե-
ղեկութիւններ իրեն մօտ ժամանակաց. և որչափ
և շատագովէ զեկեղեցին Հռովմէական, խոստո-
վանի՝ « Ըստ ուխտի սուրբ հօրն մերոյ Լուսաւոր-
» չին Հա՛ (միշտ այսպէս զրէ զՀայ) և հնազանդ
» և հլու կաթողիկէ և առաքելական եկեղեցւոյ »:
Իր մեծ դիտմունքն և ջանքն է ցուցնել՝ որ ի
սկզբանց ի վեր Հայք ընդունած են և միաբանած
Հռովմէական եկեղեցւոյ, թէ և վերջին ժամանակ-
ներն թուրքութիւն մտած է, և հակառակորդ կան,
զորս Սոնք և Ծար (կամ Ծայր) անուանէ: Իր
քիչ մի խառնիխուռն գրած գիրքն (Ոսկեփորկի
նման) իրրեւ յիսուն կամ աւելի յօդուած բաժ-
նուած է՝ այլեւայլ նիւթերով, և որպէս և է՝ ըն-
դունելի է ընդ Պատմութիւնս Հայոց և ոչ ար-
համարհելի, ներելով ոճոյն նուաստութեան և տեղ
տեղ դիւրահաւան կարծեացն:

Իր ժամանակին և աւելի առաջ Հայոց մէջ երեւ-
ցած աղանդաւորաց վրայ սուած տեղեկութիւնքն
հետաքրքրական երեւնալով մեզ, ներկայացնեմք
363 Յօդուածով յ'Բ Մասին գրոցս:

Զհաւատացեալ Հայս ժամանակին բաժնէ չօրս
գաս. — Ա. Սոյ միաբանքն, որք ազգային ծէսը
պահելով՝ ինչ ինչ ընդունած և միաբանած են ընդ
Հռովմէականաց: — Բ. Սոնքք, բաժանեալքն ի
Սըսեցւոց: — Գ. Ծայրք, յունածէսքն հայալե-
զուք ի Հռոմոց տունն, յեզնկայէ մինչ ի կեսաւ-
րիս: — Դ. Միաբանող Հայք (Ունիորք), որք
մասամբ Լատինաց ծէսն ընդունած են, յետոյ
Պանկեցիք կոչուած, ըստ գաւառի միոյ Նախճուա-
նի, յորոց մեծ մասն մի եւս ի Ղրիմ:

112. ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑԻ, ԾԵՐԵՆՑ

Չորեքտասաներորդ դարուն վերջերն և յառաջին
քառորդ ժե-ին, շատ հռչակուած է Գրիգոր Խղա-
րեցի վասն զիտութեանն և սրբակեաց վարուցն և
նահատակութեան յամին 1425. զոր զատ յայլոց
յիշեն զովութեամբ իրեն աշակերտեալքն՝ Մեծո-
փեցին Թովմաս և Առաքել Բաղիշեցի. յետինս՝
նաեւ ոտանաւոր բանիւ, յորում կ'ըսէ.

- « Բարունույն իմ Գրիգորի,
- » Ար մականուն Ծերենց կոչի,
- » Նահատակին այն ցանկալի,
- » Եւ քաջարան վարդապետի »:

(Տես իր վարքն ի Յօդուածն 373, յ'Բ Մասին
գրոցս): Առաջինն վկայէ, թէ նա յիսուն տարի
գրելու պարապեր է. և հարկ է որ իր անուամբ
հիմայ ճանչցուածներէն զատ շատ բան այլ գրած
ըլլայ:

Իւր ծանօթ գրութեանց մէջ ամենէն նշանաւորն
է Յայրնաշորքն, իրմէ առաջ գրողներունը պար-
զելով¹, և աւելցընելով ուրիշ Սրբոց յիշատակներ
և մանաւանդ նոր վկայից ի Հայս, իր մօտ ժա-

1. Գաղափարող մի գրոցս՝ մեծաբանութեամբ զովե-
լով զհեղինակն գրէ. « Սուրբն և ընտրեալն, արին և
» քայն, հսկողն առաքինին, սղորմածն և ազբատասէրն,
» հիւրընկալն և առատազարգեւն, բարի ընտրութիւնն
» և մարգասէրն, քաջարան և քարտուղար հարտա-
» բապետն, բանահիւսն և ախեզերալուր քարոզն,
» ջահն անշիջանելի եղեալ ի մատեան սղատինի,
» մեծ վարդապետն Ծերենց Գրիգորն հոգելի, երա-
» նեալ, ի յանձին իւրում հոգս ամենելով և զսուրբ
» Գիրքս փարթամացուցանելով առ ի դիւրաւ հաս-
» կանալ ընթերցողացն և լսողացն. որոյ յիշատակն
» օրհնութեամբ եղիցի »:

մանակի տիրապետող Պարսիկ և այլակրօն նմանեաց բռնութեամբ նահատակելոց:

Բայց ասոնցմէ զատ շատ հաւանական է որ յատուկ Պատմաբան մ'այլ գրած է, ըլլայ հաւաքումն յիշեալ վիպարանութեանց, ըլլայ Լէնկթիմուրի յաջորդաց և Սեառ ոչ Սպիտակ ոչխարաց դրօշից ըրածներուն ի Հայս. վասն զի այն Պատմագրաց ցանկոզն՝ որ վաթսուներկու Պատմիչ Հայոց կ'ըսէ, յետ ամենեցուն և յառաջ քան զՄեծոփեցին՝ կարգէ զսա, և միայն զսա առնուանէ « Մաշրք. Գրեգոր Խլաթեցի, առաջնորդ » վանից Ս. Ստեփանոսի, որ կոչի Յիպնայ: Սնչուշտ արձակ և ընդարձակ Պատմութիւն էր սա, և զատ յ'ոտանաւորէն որ կոչի « Յիշատակա » յան աղետից ի ժամանակի մերում », չորս հարիւր վաթսուսու տող ութոտեան, յորում ողբայ Լէնկթիմուրի և որդւոցն և անոնց հակառակորդաց ըրածն ի Հայս: (Տե՛ս Յօգուած 374, յ'Բ Մասին):

Յայտմաւորաց մէջ այլեւայլ տօնից կարգին գրած է և Գանձեր¹, հետեւակ ոճով: — Ուրիշ մանր գրուածներ այլ ունի, որոց մէջ նշանակելու են թռչորքն, շատքն պատասխանիք առ այլեւայլ վարդապետս, որք իր գիտութեան վրայ մեծ համարմունք ունենալով հարցընէին պէսպէս կրօնական ինդիրներ. — թռչորք մ'այլ գրած է առ Յակովբ Գ. կաթուղիկոս, Սղթամարայ աթոռոյն նկատմամբ՝

1. Գանձերուն սմանց ներքեւ՝ մէկմէկ տուն զաւեշտ ոճով ոտանաւորներ կայ Օրինակաց սմանց մէջ. ինչպէս Յովնանու Գանձին.

- « Գանձ եմ աղվոր. թէ ձայն ունիս՝
- » Բոտեալ բանիւ սաս զու զիս.
- » Ի Յունանու մեծի տօնիս
- » Գրիգոր Մերենցն երգեաց ը զիս:
- » Ով իմաստուն պատուաղ տօնիս,
- » Բամիզ կոչեա զիս յատենիս
- » Ի յարբաթու առաւօտիս,
- » Երգեա ձայնիւ ժողովրդիս »:

զոր չընդունիր, և յորդորած է զընդունողսն՝ որ հպատակին Սոյ կաթուղիկոսին և ըլլայ մի հոգեւոր գլուխ եկեղեցւոյն Հայոց: Ոմանք ի թղթոցն աշխարհիկ կամ ուամիկ ոճով են, նաեւ այլազգի բառեր խառնած. ոմանց մէջ կ'ողբայ ժամանակին վտանգն և նեղութիւնը. « Գիպեցաք, կ'ըսէ, սաս » նասառն ժամուց և ցրտաշունչ բարուց, վայրի » ժողովոց և անընդել առաջնոց, ոչ գտանելով » հանգիստ աղաւնոյ՝ ի ջուրս հեղեղաց մեղաց ծած » կելոյ »: — Ուրիշ թղթի մէջ. « Կեամք մենա » ցեալ յայնպիսի եղբարց, ի մէջ թշնամեաց, և » յաւերակս վանորէից, ոչ կամայ ի ներս անկեալ և » կամօք ազատել ոչ կարացեալ »: Տեղ տեղ իմաստակ կամ բառախաղ շարագրութեամբ գրէ, նման իմն իր Գանձերուն: Վանայ ծովու եղբրքը բնակելով ստորագրէ. « Որպէս լուաք՝ նոյնպէս և շա » սաք. Երկիր լեռնային և բնակիչք ըստ նմին. — » Ծովս դառնորակ և ծովեգերայքս ըստ նմին քա » տակ. — Լեզու քաղցրունակ, ունայն և դար » տակ. — Երթամբք մերձաւորք և սրտիւ հեռա »ւորք. — Անգէտ գիտուն և անաշխատ իմաս » տուն. — Խոտ ի վերայ խոտի դիզեալ և աւաղ » կուտեալ. — Սմբարտակ բարձրացեալ, ձայնիւ » վերջացեալ, ձեւոց պանծալեաց ցուցեալ », և այլն:

Իր հեղինակութեան կամ կարողութեան նշանակ է և առ վարդապետ մի գրածն, հրաւիրելով որ եթէ ընտանեաց քով չուզեր բնակիլ, իրեն առաջնորդութեան կամ հովուութեան վիճակ կուտայ, « Ի Տէր Յուսկայ-որդոյ Վանացն (յարեւել » լից Վանայ) մինչ ի Սրաւելադոյն (վանք ի հիւ » սիսային արեւմտեան կողմն ծովուն) քո է. ես » էնց կու կամիմ Աստուծով զքեզ առ իս, զինչ » զլոյս աչացս », և այլն:

Գառնալով Գրիգորի Յայտմաւորաց, ԺԳ. գաւրէն վերջը գրեթէ ամէն օրինակողք այն գրոց՝ պէսպէս բանիւ յիշեն զԽլաթեցին. հմտագոյն

զրոյ մի (յամին 1601) կ'ըսէ. « Ի վերջին ժամա-
 » նակիս՝ որ էր թուական Հայոց ՊԾ (1401), վար-
 » դապետ ոմն շնորհալի, Գրիգոր անուն, ի մայ-
 » բաքաղաքէն Խլաթայ, Մերենց կոչեցեալ, յոյժ
 » կորովամիտ, հանճարեղ և բանիրուն, և անհա-
 » մեմատ քարտուղար որ է գրադիր, ոչ ինչ նուազ
 » գոյով սա յառաջին սուրբ վարդապետացս՝ գորս
 » յիշեցաք յանուանէ՜, և զամենայն զոր ինչ և
 » առնոյր ի գին գրելոցն՝ աղքատաց և կարօտե-
 » լոց բաշխէր: Սա գրեալ և բնթերցեալ բազում
 » անգամ գառաջին կարգեալ Սրբոց գիրքս. և զի
 » էր կարճաօտ բանք նոցա, և ինքն ըստ իւրում
 » իմաստութեանն յաւել ի գիրքս յայտ բազում
 » շահաւէտ և օգտակար բանս ի Հարանց Վարուց
 » և ի Պատմագրաց, և տէրունական տօնից և գըլ-
 » խաւորաց Սրբոց ճառս և Գովասանութիւնս. է
 » որ յինքենէ, և է՝ որ ի Տօնապատճառէ ի յա-
 » ռաջին սուրբ վարդապետացն ասացեալ, եզ ի
 » գիրքս յայտ և հարըտացոյց զսա: Սյլ և Գանձս
 » բազումս ասաց յինքենէ ի վերայ անուան իւրոյ,
 » Տաղս և Մեղեդիս. և եթող զրով յիշատակ իւր
 » ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ, և ի զուար-
 » ճութիւն մանկանց Սիրիսի: Եւ զինի սահմա-
 » նեալ կենաց ժամանակի իւրոյ՝ մարտիրոսական
 » մահուամբ ել յաշխարհէս, նահատակեալ սրով
 » յանիծեալ ազգէն Ընօշկանից ի վանքն Յիսկնայ,
 » ի ԸՃ-ից և ի ՀԳ (ՊՀԳ=1425) թուականիս
 » Հայոց. և անդ է թաղեալ սուրբ նշխարք ոսկե-
 » բաց նորա ի վանքն Յիսկնայ »:

1. Գրիգոր Վկայասէր, Ներսէս Շնորհալի և Կի-
 բակոս:

113. ԹՈՎՄԱՍ Վ. ՄԵԾՈՓԵՑԻ

Իրբեւ Պատմիչ այս մեր լեզուի անչքութեան
 դարուս (Փե.), ամենէն նշանաւոր կամ կարեւորն
 է Թովմաս Մեծովեցի, իր ժամանակի ամենէն
 բարբարոս, աշխարհակալ և աշխարհաւեր անձին
 և յաջորդացն ի Հայս գործերը պատմելով, որ է
 ձինկիղխանեանց ըրածներուն նորոգող կազն Լեկ
 Թիխնաչն և իր որդիքն, որք այն ժամանակի ձե-
 ոագրաց յիշատակարանաց մէջ սաէպ յիշուին, և
 են Շահ-Ռուսն և Միրան-Շահ որդիք Թիմուրի,
 Պոսկա որդի առաջնայն, Օմար՝ երկրորդին. նոյն-
 պէս և ասոնց հակառակորդ Թուրքմանն Գարա-Էռ-
 առֆ կոչուած, և իր որդիքն Սրակուար՝ տիրապետ
 Գավրէժի, Շահ-Մահմուտ՝ Պաղտատայ, և այլն:

Որչափ այլ նուազս ոճով գրած է Թովմաս,
 առւած տեղեկութիւնքն յարգի եղած են, օտարաց
 նոյն բռնաւորին վրայօք գրածը՝ իր ստոյգ և ար-
 դարախոհ գրութեամբն հաստատելով կամ լրացը-
 նելով. անոր համար Եւրոպացի պատմաբանք օգ-
 տուած են իրմէ, և մեծ մասը թարգմանած է Փ. Եւե՝
 փռանկերէն, և տպագրած ի Լուվէն, ի 1860, բա-
 ւական երկար Յառաջաբանով և ծանօթութեամբը¹:
 Հայապատումիս Բ Մասին մէջ Թովմայի են
 Յօդուածքն 364-8:

Եթէ այս զլիւաւոր պատմական գրութեանը մէջ,
 ինչպէս նաեւ ուրիշ գրուածոց այլ՝ Թովմաս յիշէ
 ժամանակին գիտնական կամ գործունեայ վար-
 դապետները, ինքն այլ մեծագոյն գործ մի ըրած

1. Exposé des Guerres de Tamerlan et de Chah-
 Rouh dans l'Asie Occidentale; d'après la Chronique
 arménienne de Thomas de Medzoph. Par Félix
 Nève.

է՛ Հայոց կաթողիկոսական աթոռը ճիշդ Ս. Սա-
հակայ մահուանէն հազար տարի վերջը փոխա-
զրել տալով յԷջմիածին (ի 1440), որ համարուած
է օրինաւոր և ընդհանրական աթոռ. իսկ Կիլիկիոյ
կամ Սոսյ աթոռն այլ իր երկու հարիւր և աւելի
տարիներու յայրդուութեան իրաւամբք՝ մնացեր է
հաստատուն և շարունակէ մինչեւ հիմայ: Ինքն
Թովմաս գրած է այս Էջմիածնի Աթոռոյ հաստա-
տութեան կամ վերահաստատութեան դէպքն եւս:

Գրած է և իր ատեն հանգիպած քանի մի ևս
հաստակաց Պատմութիւնը, ինչպէս Ստեփանոս վար-
դապետի և Պետրոս քահանայի ուրացողաց և զՂա-
ցիոց (1424)՝ յետինս երկար ճառի ոճով յառա-
ջարանութեամբ, զոր ոմանք ի Յայսմաւուրաց ըն-
դունած՝ կ'աւանդեն: — Թովմաս գրած է և քանի
մի թռչող եկեղեցական խնդրոց և վարչութեան
նկատմամբ. հաւաքեր է նաեւ իրմէ առաջնոց նոյն-
պիսի թղթերն:

Պատմութեան վերաբերեալ այս գրութիւններէն
գատ ունի և Մեկնոյթիւն Դանիէլ Մարգարէի. հա-
ւանօրէն և այլ հատուկտոր գրուածներ և Յիշա-
տակարաններ. որոց բովանդակին համար՝ բաւական
մեծ համբաւ ունեցեր է, նաեւ Գրիգորի Տաթե-
ւացւոյ աշակերտ և երբեմն անոր հիւրընկալ ըլլա-
լովն իր վանաց մէջ, որ է Մեծոփայ Ս. Աստուածա-
ծնի վանքն՝ մօտ յԱրճէշ, ուսկից ոչ շատ հեռի՝
Ազիովտի դաւառէն էր հայրենեօք:

Էջմիածնի աթոռոյն փոխազրուութեան շարժա-
ռիթ մ'եղած գրուի ի Պատմութեան Թովմայի
տեսիլը մի, գուցէ ուրիշէ յարած: Ով այլ ըլլայ
գրողն, գործոյն կատարուելէն վերջը հնարուած է
տեսիլքն և անոր նմանքն: Կան և ուրիշ գիրաւհա-
ւանութեամբ գրուած դէպք ի պատմութեան թով-
մայի. բայց քաղաքականքն ստոյգք են, շատին
ականատես ըլլալով և յականատեսից տեղեկանա-
լով: Եթէ երբէք անճշդութիւն գտնուի, « Դու
» անմեղադիր լեր (կ'ըսէ ինքն տեղ մի), զի ծեր

» էի և յետ յիսուն ամացս սկսայ, վասն այսորիկ
» յետ և յառաջ գրեցի »:

Հնագոյն քան զԹովմաս թուի Սիմեոն Բա-
խուսանցի, որ Լէնկթիմուրի գործերը պատմագրեր
է 1392 թուականէն սկսեալ: Անցեալ դարու (ժԹ.)
վերջերը հետաքրքիր մի տեսեր է և յիշէ զայս:

114. Ա.Ռ.Ա.Ք.Ե.Լ. Բ.Ա.Ղ.Ի.Շ.Ե.Յ.Ի

Առաքել Բաղիշեցի, որ Բաղիշոյ մօտ Պօռ կոչուած
գեղէն ըլլալով ծննդեամբ՝ Պօռեցի այլ կոչուի, վե-
րայիշեալ երկու կարգաւորաց նահատակութեան
պատմութենէն գատ, զոր գրած է Մեծոփեցին,
գրած է ուրիշ նահատակաց պատմութիւն, որ և
անցեր են ի Յայսմաւուրս. ինչպէս Մարտիրոսի
Հիգանցոյ (մեռ. ի 1431), Վարդանայ Բաղիշեցոյ
(մեռ. ի 1421), և իր վարպետին՝ Գրիգորի Խա-
րեցոյն (մեռ. ի 1425):

Արձակ գրուածներէ աւելի ստանաւոր և երկար
գրուածներ ունի, ինչպէս Յովնատափայ Պատմու-
րիւնն, և Նախահարց վիպասանութիւնն, որ ըստ
ոմանց իր համանուն Սիւնեցւոյն քերդուածն է.
ինչպէս նաեւ Կ. Պօլսոյ առման վրայ քերդուած,
որոյ վերջը յիշէ իր ծնողքն և գաւակը.

- « ... Ծնողաց իմոց բարի
- » Ղուծու Մէլիք և Ներսէսի...
- » Եւ գաւակին իմ բաղձալի
- » Տէր Յովաննէս քահանայի,
- » Որ ի հասակ մանկագունի
- » Փոխեալ յաշխարհըն կենդանի »:

115. ԱՌԱՔԵԼ, ՍԻՒՆԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Այս Առաքել երկնագոյն է և հռչակաւոր քան զհաղիչեցին՝ թէ՛ իբրեւ ազնուական և թէ՛ աւելի կոկիկ զրոզ, քեւորդի և աշակերտ Գրիգորի Տաթեւացւոյ, որոյ վրայ Ներքող մի գրած է, որ և գտնուի ի Յայամաւորս: Աւելի հռչակեալ են ոտանաւոր երկար վիպասանութիւնքն, որոց զլսաւորն Աղանգիրքն է, նախաձարց երջանիկ և յետոյ ապերջանիկ դիպուածն, որոյ համար կոչուի և Դրասխապիրք, նաեւ Կողգիրք՝ Եւայի յԱրամայ կողէն գոյանալուն համար. — Վիպասանութիւն Ս. Լուսաւորչին. և Վիպասանութիւն Մեծիկ Ներսիսի: Ատնցմէ աւելի ընտիր են իր Երգերն կամ Տաղերն ի տէրունական Տօնս և բարոյական Խրատքն:

Ինչպէս վերեւ յիշեցինք, այս երկու Առաքելից հեղինակութիւնքն շփոթին իրարու հետ: Ըստ ոճոյ և լեզուի գրութեան՝ Սիւնեցին աւելի ընտիր է, և աւելի մօտ իրմէ առջի դարու. Մեծոփեցին կոչէ զսա «Մեծ իմաստասէր... որ ունէր զմիտքն իբրեւ զզհրեղինաց, և էր սիրոզ ամենայն առաքինու» թեանց»:

116. ԱՌԱՔԵԼ, ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍ ԱՂՈՒԱՆԻՅ

Ուրիշ Առաքել Պատմիչ մի եւս կարծուի ժե. դարուս վերջերը, կաթողիկոս Աղուանից, որ կուշուած է նաեւ կաթողիկոս Ճալէթու. որդի Արքա-համ քահանայի և Սաւլի-փաշի: Ի Լեհաստան գըրուած Հայոց Պատմութեան հաւաքման մի մէջ յիշուի շփոթութիւն և կռիւ մի Գավրիթու այլա-

կրօնից մէջ, և վերջը գրուած է. «Զոր փոքր ի» շատէն եւ Տէր Առաքել կաթողիկոս գրեցի»: Օրինակողն աւելցուցեր է. «Յառաջ քան զԱռա» քելն էր Թումաս կաթողիկոս». որ հաստատէ թէ Աղուանից կաթողիկոսը էին սղբա: Ուշքեան Ստեփանոս յիշէ Գավրիթոս Պատմաբիւն մի, որ թեւեւս այս Առաքելի գրածն ըլլայ:

117. ԱՐՐԱՀԱՄ ԱՆԿԻՒՐԱՅԻ

Թէ և ոչ օրինաւոր Պատմիչ այլ վիպասան, սակայն իր գրած դիպուածին աշխարհահռչակ մեծութիւնն, միանգամայն և տաք զգացումն և մանրէնչ պարագայք կ'արժանաւորեն ի կարգ Պատմը-չաց մերոց կարգել ի նուազեալ ժե. դարուս, զԱնկիւրացիս Արքանաւ, որ այդ իր օրերուն հանդիպածըն իբրեւ վէպ գրեր է. այն է Կոստանդնուպօլսոյ առումը և Յունաց կայսերութեան վերջանալն, չորս հարիւր և աւելի ութսունեան տողից չափաբանութեամբ, որ կրնայ նոյն դարուն չափաբանից հետ կարգացուիլ: Քերթուածն սկսի թուականաւ դիպուածին, (1453).

«Յինքն հարիւր և՛ երկու թըւին...

» Տէր բարկացաւ յոյժ վերջստին

» Աղբին Հառմոց յունականին», և այլն:

Վերջացընէ՛ իր ականատես ըլլալուն յիշատակաւ.

«Ես Արքահամ մեղօք լըցեալ...

» Քանզի զԿոստանդնուպօլսին

» Ի բարութեան ժամն եմ տեսեալ.

» Երեք ամիս անդ եմ կացեալ

» Եւ զսըրբութիւնսն ուխտ արարեալ.

» Ըզպատմուճանքն Քրիստոսի

» Բաղում՝ անգամ աչօք տեսեալ:

» Զձեզ աղաչեմ յոյժ աղերեսալ

- » Որք հանդիպիք զայս ընթերցեալ,
- » Թէ գըտանէք ի սմա սըղալ,
- » Ներումն առնել՝ ոչ մեղադրեալ » :

118. ԹՈՎՄԱՍ Վ. ՄԻՆԱՍԵԱՆՑ
 119. ՄՈՎՍԷՍ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԾԿԵՑԻ

Լէնկթիմուրի որդւոց և անոնց հակառակորդ Գարա Եւսուֆ Թուրքմանի որդւոց ըրածները գրած է Թովմաս՝ 1420 տարիէն մինչեւ 1452: Յիշողն է մեր օրերուս գրող մի, որ կարգացեր է զայն: Իսկ Մովսէս այլ առաջինին նման՝ բայց ոտանաւոր բանիւ գրեր է ձեռն-Շահի և Ուղուս Հասանայ իրարու հետ պատերազմին 1467-73 տարիներում:

120. ՍԻՄԷՈՆ Վ. ԱՊԱՐԱՆԵՑԻ

Վեշտասաներորդ դարու նուազեալ մատենագրաց մէջ գուցէ սա է նշանաւորն. Մովաց երկրի այն Ապարանք կամ Ապարանից անուանեալ գիւղէն՝ որոյ Ս. Խաչն և եկեղեցին հռչակեց Գրիգոր Նարեկացին՝ թուացիկ բանաստեղծական ոճով, որ թուի յատուկ շնորհք մի այն կողմի աղգայնոց, և որոյ ընդունակ ըլլալն այս Սիմէոն վարդապետի՝ յայտնի է տաղաչափեալ գործերէն. որոց զլիւաւորն է և կարեւոր՝ Վիպարասնոտրիւնն Պահլաւառնեաց և Մամիկոնեից, զոր քաղած է ի պատմութեանց Ղազարայ Փարպեցւոյ, Սերիոսի, և Ղեւոնդ Երիցու, և վերածեր է յութոսնեան ոտանաւոր:

Ինչպէս ուրիշ քանի մի մեղի ծանօթ քերդուածոց մէջ՝ այսպէս այս վիպասանութեանն մէջ այլ կան բանաստեղծական և ողորկ շափաբերական մասունք: Մեզ համար պիտանին քանի մի պատմական յիշատակքն են, և զլիւաւորն՝ այն ի նորոցս Անանուն կոչուած պատմըչին (տպագրելոյ ընդ Սերիոսի) յիշած Հայկազն թագաւորքն, և այլ քանի մի, որք հաստատեն թէ Ղազար Փարպեցի՝ ոճով և երկար գրած է իր պաշտպան Մամիկոնեանց վրայ, զոր Սիմէոն գտեր և կարգացեր է անկէ հազար տարի վերջը:

Այս Վիպասանութիւնս ոչ շատ տարի առաջ, (ի 1870), տպագրեցաւ յԷջմիածին, հեղինակին ուրիշ մէկ երկու քերդուածոցն հետ:

Երկրորդ քերդուածն Սիմէոնի՝ առջինին կցած (որով իբր երեք հարիւր երեսուն ութոսնեան տող բովանդակէ), նախ Ապարանից Խաչին յիշատակութիւնը կ'ընէ և անոր աւեր ամայի մնալն՝ ըստ Նարեկացւոյն,

« Յորմէ և իմ հետեւելով՝

» Ի յոտ հանի ըստ իմ կարեաց », և

վկայէ ինքն Սիմէոն. — յետոյ կը պարունակէ Ողբ Մեծոխայ Ս. Ռախտիկ: Եւ այս երկուքին անուամբ այլ մակագրի քերդուածն: Իրմէ առջի դարուն հեղինակաց պէս կ'ողբայ Հայոց աշխարհին կրած պատահարները, յորոց ստիպուեր է իր հայրենիքէն հեռանալ, ինչպէս յայտնէ.

« Չմեզ բնակեցոյց յայտեայս ծովի (Վանայ)

» Հանդերձ ծնողիւք յԱղիալտի.

» Ի սեփական երկրէն ելեալ

» Ըստ հին կոչման անուն Աղձնի,

» Որ մերձակայ է ի Կորդիս

» Եւ Կորճէից տանըն գրացի.

» Պատըսպարեալ Տեառն խնամօք

» Ըստ Նարեկայ Գրիգորիսի.

» Յելից տարուն մինչ ի մուտս

» Աջն Անեղին է հովանի.

- » Եւ բնիկ զիւղն իմ Ապարանից
- » Ի յԱրծրունի գարմէն շինած .
- » Յարեւելից տանէն եկած
- » Ի լեւնտտին եզնն կացած » :

Համառօտելով Ապարանից վանից յիշատակը, գտանայ ողբալ զՄեծոփայն .

- » Առ քեզ են բանբըս սրտատրուփ ,
- » Ո՛վ հրաշալի սուրբըդ Մեծօփ ,
- » Տոնն¹ ողկուզին հընձան և գուր ,
- » Անմահ հացին ամբար ամփոփ » :

Երկարօրէն նկարագրելով իրբ հարս մի զարդա-
րուն գովարանէ գտեղիս , սրտ համար կ'ըսէ թէ ,

- » Յովնանեհիս շինեալ նորոգ ,
- » Իւլիտոյ անմահ փեսային գոյգ » :

Գուցէ այս Յովհաննէան ըլլայ իբ « Հոգեոյ հայր
» և Վարժեցուցողն իմնատից զըրոյ » (վախճանեալ
ի 1589), զոր առաջ շատ գովարանէ . և խօսքով
մի եւս² կարծեք տայ թէ և ինքն (Սիմէոն) ձեռք
զարկած ըլլայ տեղոյն նորոգութեան :

Այս Վիպասանութեան իրբ վերջաբան — յիշա-
տակարան՝ տանըչորս տուն այլ գրելով (իր անուան
տաւերով անագլուխքն), կ'իմացընէ որոնց խնդրաւ
նօք գրելն .

- » Ենորհազարկեալ կիրակոսի ,
- » Սեանիայ սըրբասիրի ,
- » Արք հարկ եգին ինձ անմրտի
- » Տաղաչափել զգիրս Ղազարի .
- » Ազել ոտիւք հովերայէս
- » Չթագաւորաց ճաւըն պէսպէս » . և այլն :

1. Ի զըջագրին հաս հայկական յատուկ նշանագիր
մի գրուած է՝ Դրասխա ներկայացընող . և սերիշ մի
վրան գրեք է տունն . իսկ տպագրեալն կը դնէ՝ տեւանն :

2. « Այլ և գործոյս ձեռըն տացէ
» Հաստահեղոյս այս պարըսպի
» Հատուցանէ յաւարտ ըզկերտոս
» Ամրափակելը շուրջանակի » :

Առաջ այլ գրած էր գովութեամբ և մաղթանօք
ստանց համար .

- ... « Երկուցըն խնդրողաց
- » Աւտումիասէր հանճարեղաց ,
- » Կիրակոսի պետին պատուած ,
- » Անանիայ շնորհօք օծած .
- » ՅԱյրարատեան տանէն եկած ,
- » Յուսմունս տաւից կան դեգերած .
- » Ողորմեացի անեղն Աստուած՝
- » Արժան լինել աստիճանաց .
- » Անուր հրաման քարոզելոյ
- » Եւ գաւազան իշխանութեանց » :

Երրորդ համառօտ հարիւր կիսատ կամ յիսուն
երկար տողերով յիշատակ մ'այլ ունի Սիմէոն,
(տողից անագլխովք Ապարանցոյ Սիմեոնի կապե-
լով), Թուրքաց զԵրավրէժ տանելուն ի Պարսից,
Օսման զօրավարի ձեռօք, յամին 1585, զոր քանի
մի տունով յիշէ : Յետոյ իբ քնարը կ'առնու և
գանգատի առ արեւ և գիշեր .

- « Է՛ արեգակ, է՛ր կու ծագես ըզլոյսդ մեր աչքն՝
(որ զայն տեսնուն .
- » Է՛ շամանդաղ գիշերային , է՛ր փոխարկես ըզ-
(գոյն նըսեմոյն .
- » Չի դառնաշունչ օդ ձըմերանս՝ շանցնի , որ մեզ
(լինի գարուն :
- » Բայց ակն ունիք Յիսուս Փրկչին՝ որ ջերմ՝
(աննէ զգող արեւուն .
- » Սառն հալի 'ստ Երգոց երգոյն , քաղցրիկ հնչէ
(ձայն տատակուն .
- » Մարդիկ միմեանց տան աւետիք , ասեն՝ եկաւ
(մեզ նոր գարուն :
- » Չէ պարտ կտրել ըզթել յուսոյն... Այլ յոյս
(առնուլ զՄանկունս հըրոյն¹ :

Տաղաչափութեան ճարտարութիւնն և մանաւանդ
զգագուն ողին՝ հաւանել տան որ Սիմէոն դեռ ուս

1. Այսինքն երեք մանկունքն ի հնցին Բաբելոնի :

րիչ ասոնց նման և աննմաններ այլ արտագրեր է, որք զեռ անծանօթ մնան, ինչպէս և իր վախճանն:

Իր յատուկ ձեռամբ գրած գրքի մի մէջ¹, յիշած է իր ծնողաց անունն, Խաչատուր և Նարինջ. վիպասանութեանց մէջ այլ յիշէ ժօրը վախճանելն (ի 1588), գթած սրտովն շկարնալով զպատմութիւն և զողբ իրարմէ զատել: Նշանելի է իր երախտագէտ ազգասէր համարձակութեամբ՝ գերագոյն համարելն մեր եկեղեցական կարգերն և պաշտամունքն և զովուիլն ի մետաւան ազգաց, զորս թուէ յանուանէ.

- « Թէպէտ ինեւ² իմաստնացան,
 » Դամատեղացն ըզկարգն ուսան.
 » Զոր տեսանեմ դէմ՝ յանդիման,
 » Ոչ որ յուխտից ի յիս նրման
 » Տօնացուցիւ պայծառացան.
 » Այլատեւիցըն վեհ՝ զըտան,
 » Քան զՅունականս այլ ճոխացան,
 » Վրաց է՝ Աղուանից թագ և պարծան.
 » Հումայեցուց եւ Ասորուց,
 » Եւ Ընկլիզացն են զովասան.
 » Ի Հապաշից եւ Մարունեաց
 » Եւ ի Ղըրթոյն Հայք զովեցան,
 » Ազգին Հնդկաց եւ Բուղարաց.
 » Ի մետասանցն երանեցան:
 » Իմոյս կարգով՝ ամենեքեան՝
 » Վանք է՝ անապատ՝ զարգարեցան »:

Թողունք յետագայ շափազանցօրէն՝ լերանց նմանութեամբ (Սինայ, Սեպհոյ, Մասեաց, և այլն) գերագոյն համարելն զմերը, զոր և ինքնին խոստովանի.

1. Վեշտասաներորդ դարու սկիզբը զրուած կիւլիկոյ Տարեզրի մի լուսանցից վրայ այլ կայ իր ձեռնագիրն. « Ես Սիմէոն Վարդապետս Ապարանեցի » զայս գիրս զրեցի »:

2. Թէպէտ յանուն Մեծոփայ վանաց երեւի ըսածն, սակայն այն այլ վերաբերի յընդհանուրն:

- « Յանդըգնագոյն է եւ անելս՝
 » Քան ըզթաբօրըն Հերմոնեան.
 » Զի ի նոսա մասամբ ցուցան,
 » Եւ յիմ՝ խորհուրդս զուշակեցան »:

121. ԲԱՐՍԵՂ ԵՒ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅՔ, ԱՐՃԻՇԵՅԻՔ

Բարսեղ և Յովնանեկս քահանայք՝ վեշտասանեբորդ դարու սկիզբէն ի Շահ Իսմայէլէ սկսեալ Պարսից նոր թագաւորաց գործերը և Օսմանեանց հետ ըրած կռիւները գրած են:

Ասոնց շարունակութիւն կրնայ ըսուիլ Բարսեղ Վարապեցի վարդապետի գրածն ժՁ. դարու վերջերը, Շահից և Սուլտանաց հակառակամարտութիւնը:

122, 123. ԴԱԻԹ ԵՒ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՔ. — 124. ԲԷԿԼԱՐ ՎԱՆՅԻ

Դաշիր Բաղիշեցի՝ Արարացուց աշխարհակալութեան սկիզբէն մինչեւ մօտ ի վերջ ժէ. դարու, վերոյիշեալ աշխարհաց տիրողաց գործերն ըստ կարգի տարեգրութեան՝ տեղ տեղ ընդարձակ տեղ տեղ համառօտ՝ գրած յիշուի:

Վարդան Բաղիշեցի այլ իր ժամանակի (ժէ. դար) քանի մի դիպուածները պատմեր է, յորս և Երուսաղեմի Հայոց և Յունաց հակառակութիւնը:

Բեկլար Վանցի իր հայրենեաց կողմերում հանդիպածները գրած է՝ իբրեւ հարիւր տարուան միջոցի (1635-1732):

125. ՅՈՎՀԱՆՆԵՍ

ԾԱՐԵՑԻ. — 126. ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԻԿ

Ապարանեցւոյն Ժամանակակից ժ.Ձ. դարը կնքող քանի մի փոքր կամ քիչ ծանօթ Պատմիչք կամ Ժամանակագիրք այլ յիշուին: Այս երկուքն Հայ-Աղուանից աշխարհէն են և ազնիւ ցեղէ Գօփեանց. յորոց Ջհանշահի որդւոյն Միրզաշահի, և ասոր որդւոյն Մելգոնի՝ որդի է Տեր Յովնանեկս, որ թէ պապուն անուամբ մականուանի, թէ ցեղին և թէ անոնց և իր հայրենի Ծար աւանին: Այս կողմերում՝ յետին դարուց այլագոյնաց իշխանութեան ատեն ըրածն և եղածն՝ թուի բաւական երկարօրէն գըրած ըլլալ, որոյ թերեւս վերջին մասն է Առաքել Դավրիթացւոյ պատմագրոց վերջը տպագրած եօթն կամ ութ թուղթ բանը՝ 1572 թուականէն սկսեալ իրր տասն տարուան պատմութիւն: Թէպէտ ումանք կարծեն թէ աւելի առաջ տարած ըլլայ պատմութիւնը, սակայն թէ իր թուրքական Յովնանեկսի և թէ Մաղաքիա իր մահը նշանակեն 1582-ին: Թաղուեր է ի Վասակաշէն գիւղ, Սեւանայ ծովեղերքը: Ամէն յիշողքն գովութեամբ և մեծարանօք յիշեն գնա. Մեծ Վարդապետն կոչէ Մաղաքիա, և այսու եւս հաւանելի կ'ըլլայ՝ թէ աւելի արժանաւոր բան մի գրած է: Ինքն (Յովհաննէս) նշանակած է ձեռագրի մի մէջ թէ ստացեր է զայն յամին 1531, յորմէ յայտնի բաւական ծեր ըլլալն ի մահուն: Պատմութեան սկիզբն այլ գրէ, թէ կր տասներկու տարուան եղայ՝ ինքզինքս ճանչցայ. և սկսի պատմել. բայց այս ըսել չէ թէ տասներկու տարուան սկսած է գրել գրածը, այլ բան պակսի տպագրուածին մէջ:

Իսկ ինչ որ հիմայ ծանօթ է, զայն շարունակեր

է՛ իրր քսան տարի այլ՝ ցվերջ ժ.Ձ. դարու (1600) վերոյիշեալ Յովնանեկսիին, Ծարեցւոյն եզրօր թռոն, որոյ պատուոյ համար կամ առ խոնարհութեան՝ այդպէս փոքրեր է իր անունը իկ մասնըկամբ: Ասոր գրածն հրատարակուած է ի Ճռաքաղ ամսագրի (Ա. Բ. 1859-60): Գլխաւոր դիպուած պատմութեանն է Օսմանեանց, Լաշա փաշայի առաջնորդութեամբ, և Պարսից Խիւտապէնա շահի պատերազմներն ի Հայս, ի Վիրս և յԱղուանս, սովք և սրածուծիւնք. Օսմանեանց առնուլն զԴավրիթ (զոր և Ապարանեցին յիշէ), և Վրաց Սիւնն խանի կամ թագաւորի բռնուիլն և յուղարկուիլն ի Կ. Պօլիս:

127. Օ Հ Ա Ն Ա Ռ Ա Ք Ե Լ

Այսպիսի անուամբ մէկ մի յիշէ Յակ. Շահան Ջրպետ իր փռանկերէն գրած Հայոց պատմութեան մէջ, որպէս թէ Օսմանեանց և Պարսից պատերազմաց գործերը պատմագրած ըլլայ ցամն 1586: Իրմէ առած երեւի Շորէն զայս յիշատակ, և 1586 թուին տեղ՝ որպէս թուի սխալմամբ գրէ 1568: Ուրիշի յիշատակ մի չգտնելով՝ տարակուսիմք պատմըլին ըլլալուն վրայ, կամ կասկածիմք որ շիոթուի վերոյիշեալ Յովհաննիսեանց հետ:

128. ՍՐԱՊԻՈՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Ծանօթ ի շարս կաթողիկոսաց Էջմիածնի նսեւ Գրիգոր ԺԳ անուամբ, ի սկզբան ժե. դարու, (1603-24). հայրենեօքն և առաջնորդութեամբ Ամբայ և Եղեսիոյ, այդ քաղաքաց անուամբ այլ կո-

չուի: Կաթուղիկոսութենէն առաջ և կաթուղիկոսութեան ատենն այլ ազգային դիպաց և խնդրոց մէջ գործունեայ եղած է և ի գիրս ժամանակակցաց շատ և շատ անգամ յիշուի: Բայց մենք իբրեւ Պատմիչ դիտելով՝ լսեմք իրեն թուումս աշակերտէն՝ որ նա գեղեցիկ մտածութեամբ իր հայրենեաց (Եգեւսիոյ) պատմագրին Մատթէի Ուռհայեցւոյ հետեւեր է, և անոր Տարեգրութեանց կըցեր է նորագոյն դիպումներ, Չեռագրաց Յիշատակարաններէն քաղելով: որ թէ և հեղինակութիւն չըլլայ, այլ գովելի և կարեւոր գործ է: Մատթէոսի տարեգրոց շարունակեալ Օրինակաց մէջ գտնելու է Սրապիոնի Յաւելուածը:

129, 130. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՆԹԱՊՅԻ ԵՒ ԵՓՐԵՄ, ԿԱԹՈՒՂԻԿՈՍՔ ՍՍՈՅ

Էջմիածնի կաթուղիկոսին գրեթէ ժամանակակից է Յովնանեկս Անրապցի կաթուղիկոսն Սոսյ, որ իր մէկ յաջորդին (Եփրեմայ) գրածներէն երեւի թէ Պատմական տեղեկութիւններ գրած է. որոցմէ մին իր ատեն Սատուռնի Գաւիւրայ անուանելոյն աս-

1. « Այսը մատենագրութեան (Մատթէի) փափա-
 » գող եղեալ մեծ Բաբունապետ Տէր Սրապիոն Ուռ-
 » հայեցի, որ յայսմ ժամանակի սա միայն երեւի
 » հոգաբարձու ծածկեալ և անյայտ Պատմագրաց-
 » զմանս ի հեռատանէ քաղում ծախիւք ետ բերել-
 » և զմանս գրել: և զայն որ ոչ յայտնի շարագրով
 » էր կարգեալ, ինքն ի գրոց Յիշատակարանաց ժա-
 » ղովելով հաւաքեաց ի աբիի՝ զպատմութիւն և զժա-
 » մանակս. որ և զայս Պատմագիրս Մատթէի տեսեալ
 » ետ ինձ թուումայնս գրել... ի թուին Ռեթի (1600) ի
 » դաւառն Եկեղեաց, ի դուռն Ս. Նշանիս և Ս. Սար-
 » գսիս ». և այլն: (Տես Հայաստան Լրագիր. Բ. 75):

պատակութիւնը բաւական երկարօրէն գրած: Եփրեմ երկու անգամ յիշէ զնա՝ ըսելով. « Այն որ » բանիս է վիպարան ». գործեալ. « Իսկ Աջապահն » այն քաջարան, — Յորմէ լինիմք մեք վիպարան »: Յիշատակս պահանջէ զյիշողն այլ անցընել ի կարգ յիշելոյն, թէ և ժամանակաւ հեռի՝ նոյն և ի մեր գործոյս, այսինքն Եփրեմ կաթուղիկոս Սըսոյ (1771-1784), որ գրած է իր ցեղին Աջապահից Պատմութիւնը յաջորդաբար՝ թէ արձակ և ընդարձակ, և թէ համառօտ՝ չափաբանութեամբ: Յայտնի է մեր բանասիրաց՝ որ Աջապահ կամ Աջապահ կոչուեցան թէ եկեղեցականք և թէ աշխարհիկք՝ որք յորդոց յորդի պահէին Ս. Լուսաւորչի Աջը, և թէպէտ սովորաբար ի կաթուղիկոսարանի պահուէր այն՝ ուրիշ սրբութեանց հետ, բայց առիթ պահողին սերունդքն յորդոց որդի այդպէս կուչուեցան: — Սոսյ թեմին նկատմամբ հանգրկած բաներու և կաթուղիկոսաց՝ կան մասնաւոր գիտելիք ի գրութեան Եփրեմի, յորս գտնուին և անստոյգք ինչ կամ սխալք:

131. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԱԳԵՐԷՅ ԿԱՄԵՆԻՅՈՅ

Մասնական յիշատակաց գրող մ'է մեր գաղթական Լեհահայոց զլիւսաւոր քաղաքաց միոյն (Կամենիցոյ) խոհական աւագերէց Յովնանեկս, ժՁ. դարու վերջերը, ութսունեւորսամայ վախճանեալ յամին 1611: Յիտուն տարիէ աւելի եկեղեցոյն հովիւ ըլլալով, թէ եկեղեցական և թէ քաղաքական դիպումները տարեգրած է, սկսանելով համառօտաբար յ'ամէ 1430, և երկարելով հետզհետէ մինչեւ ի 1610. յետ որոյ իր որդոյն և յաջորդի Տէր Գրեգորի որդին Օրսենա շարայարեր է տարեգրուութիւնը մինչեւ ի 1621, բայց թաթարերէն: Այս

գործս Ռուսներոյ գողթականաց մէջ ազնուական
 և տէրութեան ատենի դատարար Պր. Գրիգոր
 Պըրլգրեանի խնդրանօք և ծախիւք տարագրեալ հրա-
 տարակեցիկնք ի Վանս մեր յամին 1895, աւելցը-
 նելով շատ յիշատակներ՝ նաեւ Լեհաստանի Հա-
 յոյ վրայօք, քաղեալ ի պատմըչաց և ի ձեռագրաց,
 Հանդերձ քան կօնդակօք կաթուղիկոսաց առ եպիս-
 կոպոսա և առ ժողովուրդ այն կողմանց և առ թա-
 դարս Լեհաց յետ կիսոյ ժ.Ւ. դարու մինչեւ յետ
 կիսոյ ժե-ին (ի Մեորովպ կաթուղիկոսէ մինչեւ ի
 Փիլիպպոս) և շարակարգաւ անոնց քսանեւ-
 հինգ եպիսկոպոսաց, 1365 թուականէն սկըսեալ:
 Այլեւայլ հետաքննական դիպաց Յաշեռաճք այլ
 կան այս հաւաքման մէջ, յորս և երկար չափա-
 բանեալ պատմութիւն հռչակաւոր Թորոսովիչ Նիկիոյ
 եպիսկոպոսի գործոց, և Լեհահայոց միաբանելուն
 ընդ Հռովմէական եկեղեցոյ:

Անաարակոյս գտնուին այսպիսի տարէգրութիւնք
 ուրիշ կողմանց և քաղաքաց գողթականաց մէջ
 այլ, ծանօթք և անծանօթք, որք կրնան ոչ սակաւ
 լոյս կամ գէթ նշոյլ ծագել մեր համատարած աղ-
 գին սփռեալ և իրարմէ շատ հեռացեալ սերընդոց
 ծանօթութեան համար. և այսու կրնան և ի կարգ
 Պատմըչաց անցնիլ, թէ և ոճով գրուած շրջան-
 վանն զի Պատմութեան պատուականագոյն պա-
 Հանչն է յայտնութիւն եղերոց:

132. ՍԻԻՆԵՑԻ (ԱՆԱՆՈՒՆ)

133. ԳՐԻԳՈՐ ԿՍՄԱԽԵՑԻ

Ստեփանոս Ռոչքեան իր Տարէգրոց մէջ շատ
 անգ քաղեր է ի պատմական գրուածոյ մէկու մի,
 որոյ ոչ անունը յիշէ և ոչ գրոց անունը, այլ միայն
 Սիւն. համառօտելով, և տեղ մի ամբողջ Սիւնեցի:

Յայտ է որ չէ սա Օրբեղեանն որ երբեմն Սիւնեցի
 կոչուի, այլ թուի այն աշխարհին կողմերէն մէկն,
 ժ.Ձ. դարէն այլ ասդին, վասն զի քաղած պատ-
 մական յիշատակէն ժ.Ւ. դարու կիսէն մինչեւ ի
 1636 հասնին. բայց որոչ չիմացուիր թէ օր տե-
 ղույ կամ անձանց պատմութիւն է այդ Սիւնեցոյն
 գրածն:

Գրիգոր կամախեցի վիշտասաներորդ դարու եր-
 կրորդ կիսուն՝ Պարսից Շահ Թահմազի Օսմանեանց
 հետ ըրած կռիւները պատմած է:

134. ԱՌԱՔԵԼ ԴԱԻՐԻԺԵՑԻ

Յեա կանոնաւոր Պատմչաց ժ.Ւ. դարու և ժ.Ւ-ին
 սկզբան, արժանաւոր պատմիչ մի չէ հասած մեզ
 յետագայ դարերուն՝ մինչեւ ի սա, որ թէ՛ իրմէ
 առջի երկու երեք դարուց պատմիչներէն և թէ՛
 իրմէ վերջնոց ամենէն լուսագոյնն է և կ'արժէ օրի-
 նաւոր Պատմչաց դասակցել: Եթէ և հայաբանու-
 թեամբ ստորին է. բայց կարգաբանութեամբ գո-
 վելի. և շատ յարգի և պատուական է ծանօթու-
 թեամբք ժե. դարու սկիզբէն մինչեւ ի կէսն և ա-
 ւելի անդին, այն ժամանակի քաղաքական մեծ
 դիպաց նկատմամբ մեր ազգին, երկու մեծ տէրու-
 թեանց՝ Օսմանեանց և Պարսից ըրած պատերազմ-
 ներով և իրարմէ խելով մեր երկրին մասերը. և
 պատմելով այն ցաւալի դիպուածն, որ է Շահ-Ա-
 բասայ մեծ մաս մի Հայոց հանել քշելն Երասխայ
 եզերքներէն և յատկապէս ի վաճառաշահ գիւղաքա-
 ղաքէն Չուղայ՝ ի խորս Պարսկաստանի, օղորմելի
 վտանգօք, և շատերու ջրախեղդ և սովալլուկ մա-
 հուամբ: Պարզ, անարուեստ՝ բայց զգայուն և իրա-
 ւախոհ կերպով գրած է այս ամենը. որոց կըցէ և
 քանի մի նահատակելոց պատմութիւն:

Մէկ կարեւոր մաս մ'այլ պատմութեանն է յիշատակն այն ժամանակի Մովսէս և Փիլիպպոս խոհական կաթողիկոսաց ըրած նորոգութեանց և բարեկարգութեանց յԷջմիածին. նոյնպէս և ճգնաւորական և կրօնաւորական կարգաց նորոգման՝ քանի մի հոգեւէր անձանց առաջնորդութեամբ: Իր ծերութեան ատեն՝ Փիլիպպոս կաթողիկոսի յորդորանօք գրեր է Առաքել իր Պատմութիւնը. և դադրեցուցած թուականէն քիչ վերջը վախճաներ է: Լաւ մտածութեամբ՝ իր ժամանակի տեսած և լսածէն առաջ եղած զիպուածոց ժամանակագիր կամ տարէգիրներ այլ գտնելով, զանոնք այլ կցեր է գրոց ետեւը. այսպիսի են մեր առաջ յիշած Ծարեցիւն Յովհաննէս և Յովհաննիսիկն, և այլն:

Պատմածներուն մեծ մասին ականատես ըլլալով Առաքել, մեծ յարգ ունի անտարակոյս ստուգութեամբ, և օտարաց անծանօթ բաներ յայտնելով: Ասոր համար իրաւամբ արժանի համարեցան Պրոսէ և Լանկուա, մին փոսանկերէն թարգմանելով, միւսն տպագրութեամբ հրատարակելով զայն (ի 1874). առաջինն շատ տարի առաջ այլ Բեդրպուրկի գիտնական ձեմարանին Յիշատակարանաց մէջ տեղեկութիւն գրած էր այս հեղինակիս վրայ. որոյ բընագիրն անոր գրեցէն քիչ վերջը նորէն տպագրեցաւ յԷջմիածին, և այս վերջին տարիներս այլ աւելի վայելուչ և յստակ, և սակաւ յաւելուածով:

Առաքելի արժանեաց համար, մեր Հայապատուի որոշեալ ժամանակէն (ժՁ. դար) անդին անցնելով, քանի մի Յօդուած առած եմք իրմէ (395. 398. 399, յ'Բ Մասին), Հայոց բոնի գաղթականութեան և եկեղեցեաց և վանորէից նորոգման, նաեւ սասանութեամբ աւերմանց նկարագրութիւնքը:

ԿԱՄ ՉԱԿՔԷՆՈՍ ՍԱՐԿԱՒԱԳ.

Յետ Առաքելի և քիչ վերջ իրմէ և իբր յետին դասելի ընդ Պատմիչս է Սարկաւագոս այս, որ թէ նկատմամբ իր ժամանակակից Վաղարշապատցի համանուն համբաււոր վարդապետին, և թէ իր կարճ հասակաւ և կաղ ըլլալուն համար՝ Փոքր կոչուեր է, նաեւ Չակքեոս, յԱւետարանի յիշեալ կարճակատակին նմանութեամբ: Երեւանի քաւարես դեղէն է հայրենեօք, ի տղայութենէ զրկուած, վարժած և ապրած մօտաւոր հին և հնչակաւոր Յովհաննապետից մէջ՝ մինչեւ ի ծերութիւնն, թերեւ և հօն թաղուած. որոյ և Պատմութիւնը գրած է խնամքով՝ կոչելով Կոնրակ Յովհաննապետից, այսինքն առաջին հիմնարկութեանն և այլեւայլ ժամանակի շինութեանց, առաջնորդաց և վարդապետաց տեղոյն, և եկեղեցեաց արձանագրութեանց զորս մի առ մի օրինակեր է: Եւ շատ պատուական գործ է:

Բայց ասկէ մեծ և իր զլիւսաւոր գործն է՝ երկու հատոր բաժնած Պատմութիւնն, մաս մի Առաքելի պատմածներէն յիշելով, այլ մեծաւ մասամբ անոր պատմածներէն իբր քառասուն տարի վերջը եղածներն ի Մեծ Հայոս և ի Վիրս: Առաջին հատորն քառասունհեռութ զլուս բաժնած՝ յիշէ Պարսից թագաւորաց գործերն՝ յատկապէս ի Հայոս, սկսելով ի ձիհանչազէ և ի Շահ-Իսմայէլէ մինչեւ ի մեծ Շահ-Աբաս, և անոր ընդ Օսմանեանց կռիւները: Երկրորդ հատորն, վաթսուհեւեց զլուս բաժնած է, յորում մաս մի Շահ-Աբասայ և յետոյ անոր առաջին յաջորդաց և Երեւանի կողմնակալ գրուած խաներու ատեն եղածները: Այս հատորին մէջ են և աւելի քան զառաջնոյն՝ յիշատակք գործոց Մով-

սեսի, Փիլիպպոսի և Յակոբ կաթողիկոսաց, նա-
հատակաց ոմանց պատմութիւնք, ժամանակակից
նշանաւոր վարդապետաց և եպիսկոպոսաց յիշա-
տակք, և կերպ կերպ հետաքրքրական դիպուածոց
նկարագրութիւնք: Բոլոր կտրճ կտմ երկայն պատ-
մածքն սկսին ի կիսոյ ժն. դարու մինչեւ ի 1634.
այս թուականէն սկսի բուն իր հեղինակօրէն գրածն,
և հասնի գրեթէ ի վերջ ժն. դարու: Աւաջին
մասնը քաղած է գրոց յիշատակարաններէ, և ի ծե-
րոց յաճոններէն. իսկ վերջինն՝ իր ատեն հանդիպածքն
են: Գրուածն է պարզ և յստակ. թէ և ստորին
հայարանութեամբ, այլ հաճութեամբ կարդացուի՝
դիպուածոցն պէսպիսութեանն և նորութեանն հա-
մար:

Ի վերջ յետին գլխոյ (Բ հատորի) Պատմու-
թեանն գրած է Չաքարիա. «Յայսմ աւետ որ
» զՊատմութիւնս աւարտեցաք՝ ի թուին ՌՃԽԸ
» (1699-1700) եկն կարկուտ, ի մայիսի 30, ի շաբ
» ձուոյ հաւու, և փշրեաց զամենայն բոյս»: Ատով
կ'իմացուի որ Չաքարիա ինչուտն այն ատեն՝ ի
խոր ծերութեանն այլ ուղեր է շարունակել զՊատ-
մութիւնը. բայց չէ կրցած նորէն աչքէ անցընել
իր ձարըտած ո՞ր և է թղթի վրայ գրածները, և
մաքուր օրինակել. և այնպէս երկար ատեն մնացի
է ձեռագիրն, մինչեւ մօտ ի վերջ ժն. դարու՝
Ղուկաս կաթողիկոս յանձներ է կետարացի Նա-
նայետ անուամբ զպրի մի, կարգադրել զայն և
մաքուր օրինակել, յորմէ շատ օրինակներ այլ դա-
ղափարուած են:

Ըստ արժանեաց պատմութեան ժամանակին՝
յետ Աւաքելի զՉաքարիա եւս փռանկերէն թարգ-
մանած է Պրոսէ:

136. Զ Ա Ք Ս Ր Ի Ա Ե Ր Է Յ

Անծանօթ և երկբայելի Չեռագրաց ցանկի մի
մէջ յիշուած է. «Չաքարիայ Երեցու Պատմա-
» գիրքը, որ ժողովեաց յամին 1689... բայց յոյժ
» վերի վայր է գրեալ Պատմագիրքս, և բարում
» ուրեք անտոյգ»: Թուի թէ ժամանակագրական
բան կամ Գաւազանագիրք մ'էր, յորում նշանա-
կեալ էին թուականք Ժողովոց, Կարգք կաթողի-
կոսաց, Պատրիարքաց չորեք գլխաւոր աթոռոց,
Կայսերաց Հռովմայ, Օսմանեան թագաւորաց, և
այլն:

137. Գ Ր Ի Գ Ո Ր Կ Ե Ս Ա Ր Ա Յ Ի

Ծանօթ պատրիարք Կոստանդնուպօլսի, աշա-
կերա Ուռ հայեցի հաշակեալ Սրապիտն Վարդա-
պետի: Իր եղբորորդին Տէր Յակօբ վկայէ թէ՝
սա «Ժողովեաց և շարագրեաց երկու գիրք. զմէկն
» թվականք և Պատմութիւնք, յԱղամայ մինչեւ
» ի մեր ՌՉԵ (1636) թիւն, աշխատեալ մինչեւ
» ի վախճան իւր: Այլ և թարգմանեաց գիրք մի
» ըստուշարայի (աստեղաբաշխական) արարի լեզուէ
» ի մեր բարբուռ. այլ և գունդ մի մեր լեզուաւ՝
» երկնից հանգոյն, աստեղագարդ շարիւ. զարդա-
» բեալ: Այլ և ասաց մխիթարական բանս վասն
» մահուան վարդապետին իւրոյ Տէր Սրապիտն
» Բարունապետին»: — Յիշէ և այլեւայլ գրուած-
ները, ոտանաւոր և արձակ, աղօթք, և այլն:

138. ՄԵԼՔԻՍԵՂ ՎԺԱՆԵՑԻ

Չաքարիա Սարկաւագ պատմելով (Ա. խդ) զԼախար Յովհաննէս եպիսկոպոսի մի ըրածը կամ երազը, կ'ըսէ թէ «Մելքիսեղ զրեալ էր զՊատու մոռքիւն նորին, յաճախ աւելի քան զՍաղմոսն. » և էր գիրքն այն ի գրատանն Յովհաննավաւ » նից. և ոչ զիտեմ՝ զինչ արարին »: Այդ եպիսկոպոսին սուտ տեսիլներն էին անշուշտ պատմաւ գրածին մեծ մասն:

139. ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻ ՔԷՅՕՄԻԻՐՃԵԱՆ

Այդ թուրք մականունը՝ զինքն և իր եղբայրը յիշող Իտալացիք՝ Carbonari թարգմանած են: Երեւիսա Չեյկպի փէ. զարուն վերջերը (1695-ին) կնքած է կեանքը, ի Կ. Պօլիս: Հանճարեղ և աշխոյժ գրիչ մի՝ հմուտ երոպական լեզուաց, աւելի եւս արեւելեայց, որոց (թուրք) բառերը՝ շատ հեղ իր հայերէն երբեմն պարզ երբեմն ռամկականին մէջ խառնէ. ծանօթ արեւելեան և յատկապէս Օսմանեանց պատմութեանց, որոց թէ՛ նախորդաց թէ՛ իր ժամանակակցաց վրայօք շատ տեղեկութիւն գրած է: Կոնյակէս և Հայոց Պատմութիւն մի, թէ՛ հայերէն և թէ՛ թուրքարէն: Գրած է առանձինն և ազգային Նահատակաց Պատմութիւններ, թէ՛ ի Յայամաւուրաց և թէ՛ յայլ գրոց, այլ և ի լրոյ և ի տեսոյ ըարդեալ և հաւաքեալ. յորոց կարգին չհասաւ անցընել իր երանելի եղբայրն՝ Տէր Կոմիտասը, որ տաճերկու տարի իր մահուրնէն ետքը նահատակեցաւ: Գրած է նաեւ Աշխարհագրութիւն մի Հայաստանի, և ի խնդրոյ Աւստրիոյ կայսեր զես-

պանին՝ ժամանակին Հայոց ամեն վանաց տեղադրութիւն կամ տեղագրութիւն. շատ հետաքննելի գործ, եթէ յայտնուի ի վիենա կամ ուրիշ տեղ: Գրածներուն մեծ մասն անյարգար և առձեռն ժողոված են. զուցէ զոմանս յետոյ կոկած ըլլայ: Կան մեր քով իր այդ գործոց իր ձեռօք գրածներն եւս:

140. ԵՐԱՆԵԼԻ ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ

Տէր Կոմիտաս Քեօմիշքանեան, կրտսեր եղբայր աւաջնոյն, իրմէ առաջ նահատակելոց շատերէն և իրմէ վերջիններէն ամենէն աւելի հոչակեալ և սքանչելագործ վկայ, մեծապէս յիշեալ և պատուեալ, մանաւանդ յամսաթուի նահատակութեանն (6 նոյեմբերի, 1707, ի Կոստանդնուպօլիս). որոյ վարքն և սքանչելիքն իտարերէն այլ և հայատառ թուրքերէն այլ տպագրուած են. և զարմանք է հանդիսապէս շտօնուելին, թէ և անցած է ի կարգս Յայամաւուրաց: Երանգուն հոգեսէր, և երէց եղբօրն պէս սրամիտ և աշխոյժ յայտնուի իր արձակ և չափով զրուածոց մէջ, որոց զլիաւորն է՝ ըստ մեր նպատակի՝ Պատմութիւն իր ժամանակակից և տարբեր հոգեով հոչակեալ Ալետիք պատրիարքի գործոց, աքտորանաց և իրր յաղթանակաւ դարձին ի Կոստանդնուպօլիս: Տօնացոյց մ'այլ յօրինած է՝ Երից ազգաց անուանեալ, այսինքն Հայոց, Յունաց և Լատինաց:

141. Մ Ա Ղ Ա Ք Ի Ա Դ Պ Ի Ր

Մաղաքիա Դպիր կրնայ կոչուիլ վերջին ի Պատմագիրս մեր, ոչ ընդարձակ գրութեամբ երկար կամ կարճ ժամանակի դիպուածոց, այլ համառօտ ազգային յիշատակօք բովանդակ ժամանակի, այսինքն Ժառանակագրոտրեանր. սկսեալ ի Հայոց թուականէն մինչեւ ի սկիզբն ժ՛՛. դարու (ց'ամն 1707). յիշելով մէկ երկու տողով նշանաւոր դիպուածներն նաեւ այն ազգաց, որոց իշխանութեան ներքեւ էին մերազգիք, և ընդարձակելով յետին դարուց (ժ՛՛-է.) յիշատակներն՝ Օսմանեան տէրութեան հպատակաց: Թէ և կարճ են յիշատակքն, այլ շատ թուով, և շատ պատմիչներ քննած է թէ առաջին դարերուն և թէ իրեն մօտ դարերուն. իսկ իրեն աւելի մօտ ժամանակին՝ այլ աւելի ճօն է տեղեկութեամբք: Մեծադիր անծալ թղթով խիտ տողով եօթանասուն երես կ'ըլլայ բովանդակ զըրուածն. յառաջարանն կամ սկիզբն պակտի, գոնէ մեր քով եղած օրինակի մէջ, նոյնպէս և վերջարան չկայ. այլ երեւի որ հեղինակն ինչուան իր կենաց վերջին տարիներն նշանակէ տարեգրութիւնը, որ և կենացն հետ դադրի:

Մաղաքիա որդի է Գրիգորի, և թոռն թորոսի, ի Չնքուշ աւանէ՝ Խարբերդ գաւառի սահմաններէն: Իսկ իր որդիքն՝ իր անունն իրենց մականունն սեփականեր են. այսպէս մէկ թոռնը կոչուի Հ. Յարուրիւն Մաղաքեան, ի Մխիթարեանց Ս. Ղազարու, (վախճանեալ ի 1797). ասոր եղբորորդին այլ Հ. Մատրեոս Մաղաքեան, նոյնպէս Մխիթարեան, (վախճանեալ ի 1847), հեղինակ երկհատոր կենսագրական բառագրոց, յորում ազգային անձանց շատ տեղեկութիւնք կան, մանաւանդ վերջին դարուց: Ժամանակագրութենէն վերջը դրած է Մաղաքիա

և զկարգ կաթուղիկոսաց Հայոց, նաեւ զՍոոյ՝ յետ յերկուս բաժանման աթոռոյն, և վերջին ժամանակաց բաւական տեղեկութեամբք. նաեւ զպատրիարքաց Երուսաղեմի, զթագաւորաց Հայոց, և այլն:

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ

Յետին երկուց դարուց, այսինքն Ութեւտասնէրորդին և Իննեւտասնէրորդի, ազգային պատմագիրք՝ մեր նպատակին չեն ծառայեր, մանաւանդ որ շատքն յստակ հայերէն այլ չեն գրեր: Հանուանցի յիշեմ միայն ոմանց անունները, որոց նմաններ այլ եղած են հաւանօրէն, որք կամ ծանօթ չեն ինձ և կամ չեմ կրցած նշանակել:

142. Ղ Ո Ի Կ Ա Ս Վ Ա Ն Ա Ն Դ Ե Յ Ի

143. Ե Ս Ս Յ Ի Հ Ա Ս Ա Ն Զ Ս Լ Ա Լ Ե Ա Ն

Բաւական ծանօթ է Ղոչկաս Վանանդեցի թէ գրութեամբք թէ տպագրութեամբ. բայց իր գլխաւոր գործն որոյ համար Ղազար Զահկեցի՝ վնա մեր բոլոր Հայոց Պատմչաց վերջին դասէ ժամանակաւ, ծանօթ չէ ինձ:

Ազուանից կաթուղիկոսն Էսայի Հասան Զալալեան իր երկրին հանդիպածները գրած է իր ժամանակին, ի 1717. որ և տպագրուած է ի Շուշի, յամին 1839:

144. ՅՈՎՍԷՓ ԶՈՒՂԱՅԵՅԻ

Յովսէփ Բահանայ Զոռայեցի՝ շատ տարիներ աշխատելով հաւաքեր և գրեր է՝ երեսունեւորս Պրակներու բաժնելով՝ եկեղեցական Պատմութիւն ի Քրիստոսէ մինչեւ ի կէս ժԸ. գարու, և անուաներ է ֆենիկոն: Գործն աւարտեր է ի Բասրայ, ի 1761, եօթանասամեայ ըլլալով, որդւոց և թուանց տէր: Յակոբ Այուբեանց գրէ ասոր համար. « Պատմագիրք որ ֆենիկոն կոչի, յԱրամայ » մինչ ի Ռիձ (1751) թիւն. յորս գոն զանազան » ասութիւնք ի վերայ աստուածայնոց արանց, և » պատմութիւնք Հայոց իշխանաց և թագաւորաց, » և վասն ամենայն անցիցն անցելոց. զոր տեսու » զացն է յայանի»: — Տես յԱզգասեր Արարատեան լրագրի, Ա. 436, Գ. 145:

145. ԽՍՉԱՏՈՒՐ ԶՈՒՂԱՅԵՅԻ

Գրած է Խաչատուր Զոռայեցի՝ Պատմութիւն Պարսից և Նոր Զուղայի. վախճանեալ է ի 1796: Վերոյիշեալ Այուբեանն այլ կ'ըսէ. « Խաչատուր » վարդապետ, Պատմագիրք վասն բռնակալութեան » Պարսից և թագաւորաց Նետողաց, և վասն ժա » անգութեանցն Հայոց և նահանգաց նոցին, այլ » և գետոց և լերանց. երկու հատոր արարեալ է, » վասն անցելոցն և ներկայիցն, որ ունի պարա » ւանդեալս յինքեան զբազում և զզանազան պատ » մութիւնս»: — Տես յԱզգասեր Արարատ. Ա. 436: Արովհեսեւ Նոր Զուղայի վրայ խօսիմ, հարկ համարիմ՝ յիշել նաեւ,

146. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՅ

Նոր Զոռայի աւելի կարգաւ Պատմաբիւն գրող մեր օրերում՝ զՊ. Յարութիւն Յովհաննիսեանց այլ, որ և ապագրեցաւ հօն ի Նոր Զուղայ, երկու հատոր, յամին 1880:

147. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՂԱՓԱՆԵՅՈՅ

Պատմաբիւն Ղափանեցոց կամ Պատմաբիւն Դաւրի Բեկի, արժանաւոր պատմական դէպք է, որով գրուածն այլ յարգի: Բաւական ծանօթ է ժԸ. դարուն սկզբան Սիւնեաց Ղափան¹ կոչուած արեւելեան կողմանց պայազատող Հայ տանուտերանց Մեղիք անուանելոց՝ միաբանելով գէմ կենալն, կուռի և շատ հեղ յաղթել վանելն զիրենք զզուող նեղացընող պարսիկ բռնաւորները: Իրենց առաջին զլուխ և զօրավարն ըլլալով Դաւիթ անուամբ մէկն, բոլոր իրենց գործոց պատմութիւնն եւս թէ՛ անոր անուամբ կոչուի և թէ՛ իրենց երկրին (Կապան-Ղափանի): Ոչ շատ տարի առաջ յԷջմիածին տպագրեցաւ այս Պատմութիւնս, առանց ճանչնալու հեղինակին անունը. և հարկ է յայանել՝ որ այն գործոց և պատերազմաց առաջնորդաց մէկն էր Ստեփանոս Վրբանես Ծառուսեան, որ յետ այն գործոց՝ վաճառականութեան զբաղելով՝ շատ տարի (1730-50 ամաց միջոց) կեցած է ի Վենետիկ, և գրած է այդ Ղափանեցոց ըրածը, հաւանօրէն ուրիշներէ յորգորուած. և ինքն գրոց լեզուի բաւական հմուտ

1. Յանուն հին կապան գաւառի Սիւնեաց:

չըլլալով, մեր Մխիթար Աբբազօր աշակերտ և հայրենակից սերաստացի Ստեփաննան Հ. Ղուկասայ տուներ է կոկիկ շարագրել: Յիշեալ վարդապետս վախճանած է յԱռինճ Մշոյ, յամին 1751, քառասուններկու տարեկան:

Ղափանեցոց նախնիթաց ըղձիւք և յարատեւանօք իրենց երկիրն և ազգն ապահովելու համար քրիստոնեայ տէրութեանց պաշտպանութեամբ՝ ամէն ըրածն և գրածն, այս ետքի տարիներում լաւ ծանօթացուց մեր պատուաւոր և գիտնական Պարոնայց և Ռուսական տէրութեան բարձրաստիճան պաշտօնէից մէկն, Կարապետ Եղեան, իր հաւաքած թղթովք և ճօխ տեղեկագրութեամբք. որ կրնայ այն եւանդուն գործողներուն արժանաւոր վարձք համարուիլ:

Այս մեր Հայոց զինուորական վերջին գործերն անշուշտ միայն Շահումեանն չէ գրած կամ թելադրած. և թէ ոչ միայն անոր յիշածները, այլ նոյն կամ մօտիկ կողմերու Ղարապաղի ժամանակակից կամ քիչ առաջ և վերջը եղող տանուտերանց նման գործերն՝ ուրիշներ այլ գրած են, Մեյիքաց Պատմոռքիչն անուանելով, որ շատ անգամ լսուած է, բայց կարծեմ ոչ է հրատարակուած, բայց եթէ Բաֆֆիի (Գարրիի Պատկանեանի) Վիպասանականն:

148. Ա. Բ. Բ. Ա. Հ. Ա. Մ. Ե. Բ. Ե. Ի. Ա. Ն. Յ. Ի

Արքանաւ Երեւանցի, որդի Յովհաննի, գրած է Պարսից թահմազ Ղուլի թագաւորին գործոց և պատերազմաց Պատմութիւնն ուսմիկ ոճով, բայց ոչ բոլոր կենացն, այլ քանի մի տարուան:

Նման իմն և իր անուանակից կաթուղիկոսն Արքանաւ Գ. կրետացի (1734-7), գրած է քանի

մի եւս տարուան պատմութիւն՝ այդ Պարսից վերջին աշխարհակալին, և յատկապէս իրեն (պատմըչին) հանդիպածները, իր ճամբորդութիւնները, Էջմիածնի վիճակը, հօն գալն թահմազայ, և այլն:

149. Յ. Ա. Կ. Ո. Բ. Ն. Ա. Լ. Ե. Ա. Ն

Յակոբ Նալեան անուանի պատրիարք է Կոստանդնուպօլսոյ Հայոց: Իր թերուղիդ կրօնական գրածներէն գատ, ունի և տպագրուած եւս է համառօտ Պատմութիւն Հայոց տէրութեան, ի Հայկայ մինչեւ ի վերջ Ռուբինեանց. նաեւ Աշխարհագրոռքիչն մի Հայոց ըստ Խորենացւոյն, և առանձինն զլիաւոր քաղաքաց թէ՛ բնիկ Հայոց երկրի և թէ՛ սահմանակցաց. որ շատ կարեւոր տեղեկութիւններ ունի քան զպատմութիւնն: Լեզուն ուսմիկ է, և թուրքերէնով իսկ խառնած:

150. Բ. Ա. Բ. Ա. Ղ. Ա. Մ

Նման իմն Նալեանի Աշխարհագրութիւն մի գրած է Բարադաւ կամ Բարաւ: Յետ Պատմութեան Ռուբինեանց և Առցախոյ իշխանաց, այսինքն Մեյիքաց Ղափանու, զՄեծ և Փոքր Հայս քսան Աշխարհք հաշուէ ըստ նախնեաց, յորս երկու հարիւր յիսունեւութ գաւառներ նշանակէ: Լեզուն աւելի յստակ է քան զպատրիարքին: Այս գործըս տպագրուած է ի Մատրաս Հնդկաց, յամին 1772:

151. ՄՈՒՐԱՏ ԽԱՆ

152. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

153. ՅԱԿՈԲ Վ. ԹՕՓՈՒԶԵԱՆ

Մոռատ խան Վանյի՝ Վարագայ խաչին երեւմանէն սկսելով՝ այն կողմերու դիպուածները տարեգրաբար նշանակել է մինչեւ ի սկիզբն ժ.թ. դարու:

Յովնանէն Արքեպիսկոպոս Սերաստիոյ՝ գրեթէ վերոյգրելոյն ժամանակակից է, և մինչ յ'ժ.թ. դար հասուցած է զպատմութիւն իւր նախորդ եւ պիսկոպոսաց Սերաստիոյ, սկսեալ ի ժ.Ա. դարէ և ի Սիոն նպիսկոպոսէ:

Լմայ վանաց միտրան էր Յակոբ Վարդապետ Թօփոզեան, որոյ առաջնորդաց գործերն և կղզւոյն հանդիպածն երկուհարիւր տարիներու միջոց (1621-1830) պատմագրեր է:

154. ԱՌԱՔԵԼ Վ. ԿՈՍՏԱՆԴԵԱՆՅ

Անցեալ (ժ.թ.) դարու գրիչ է Սաքել Վարդապետ Կոստանդեանց, որ խնամով ժողվեր է իր հայրենեաց՝ Հայ-Աղուանից՝ յիշատակները և ընդարձակ գործ մի ձեւացուցեր է, շատ հետաքննելի կարեւոր տեղեկութեամբք. այլ ո՛ր մնայ ձեռագիրն կարեւոր տեղեկութեամբք. այլ ո՛ր մնայ ձեռագիրն չգիտեմ: Սա իր երկրին և Վասպուրականի կողմանց նոր Պատմիչները ծանուցանողն եղած է:

155. ՍՏԵՓԱՆՈՍ ՌՈՇՔԵԱՆ

Ի կէս ութեւտաներորդ դարու, Մտեփանոս Ռոշքեան, կանոնիկոս էր Կամենիցոյ: Արժանաւոր է կերպով մի դասուելու ի կարգս Պատմչաց, իր Հայ-լատին և Լատին-հայ ընդարձակ բառագրոց համար, որով անմուանալի անուն և յիշատակ թողած է, մանաւանդ իրմէ առաջ եղած Հայոց Պատմչաց գործերէն քաղած անթիւ վրկայութեանցն համար, յորս կան և ցարդ անձանօթ Պատմիչք. միանգամայն իր իսկ գրած Լեհահայոց եպիսկոպոսաց և այլ գործոց տեղեկութեանցն համար:

156. ՄՈՒՐԱՏ ՃԱ

Թողլով վերոյգրելոց նման կամ աւելի նուաաս մասնական դիպաց՝ մեր ժ.Ը-ժ.Թ. դարուց Պատմութիւն գրողները, զոտար լեզուով համազգի գրողաց մէջ չկարեմք մտնալ եւրոպական համբաւ ստացող և անոնց ու արեւելեան լեզուաց հմուտ Մոռատան ազգայինն (ծն. 1740, մեռ. 1807) փռանկերէն գրող և կոչուող Le Baron d'Ohsson, դեսպան Եռեսոաց ի Կ. Պօլիս, իր արժանապէս գովեալ շորս հասոր Մոռոյաց Պատմութեանն համար, (*Histoire des Mongols, depuis Tchinguiz-Khan jusqu'à Timour Bey ou Tamerlan; 1852, Amsterdam*): Չատ յայոց՝ գովուած է և միւս գրածն և մեծադիր տպագրեալ՝ *Tableau de l'Empire Ottoman* տիտղոսով:

157. ԹՈՎԱՄԱՍ ԽՕՁԱՄԱԼԵԱՆ

Կարծեմ թէ այդ Մողղաց սերունդի յաջորդ Հնդկաստանի ինքնակալաց կամ անոնց վերջին ժամանակաց գործոց վրայ գրած է Թովմաս Խօջանալեան անուամբ մէկն. բայց տեղեկութիւն չունիմ գրածին որպիսութեան վրայ: Յիշուած է յԱղգասեր Արարատեան, Ա. 62. 125:

158. Հ. ՄԻՔԱՅԷԼ Վ. ՉԱՄՉԵԱՆ

Բայց արդ թողով ոչ միայն յիշել՝ այլ և վրնտուել զյետին ժամանակաց ազգային պատմագիրս, գրեալ թէ յանցանք համարիմ շիրիշին՝ որով և կնքել զշարս Պատմչաց Հայոց, անով՝ զոր կարելի էր ոչ ամենէն վերջին այլ և ամենէն առաջին դասել, և անուանել գերագոյն և իսկագոյն Պատմիչ Հայոց, Հ. ՄԻՔԱՅԷԼ Վ. ՉԱՄՉԵԱՆ, ծնեալ ի 1738 ի Կ. Պօլիս, և վախճանեալ անդ ի 29 նոյ. 1823 ամի: Բանասէրք ոմանք, նաեւ բանածախք՝ լուսաւորեալ դարուս զուգընթաց չեն համարիր նորագործն, և պակաս շատ ծանօթութիւններէ. այլ այս արդարեւ ժամանակին ժլատութիւնն է և ոչ գրողին. եթէ յիշենք որ այդ մեծ և ծանր գործն ասկէ հարիւր քսան տարի առաջ հրատարակուած է ի Վանս մեր (1781-86). յորում տասնեակք մեր հին Պատմչաց դեռ չէին եկած ի յայտ, և ոչ եւրոպական արեւելագիտութիւնն բարգաւաճեալ: Իսկ նա երկար տարիներ քննելով և քաղելով ինչուան իր ատեն գտնուածները՝ ոչ միայն պատմագիրներ, այլ ո՞ր և է տեսակ հին և նոր ազգային

գրուած, և օտար պատմիչներ (Լատին՝ և ի լատին թարգմանեալ Յոյն պատմիչք), մեծ և տաժանելի աշխատանօք, անդուլ քրտամբք և երբեմն այլ վայրկենական լքման արտասուօք (որպէս վկայեն իր ձեռասուն մեծարգոյ աշակերտք), այդ թանձր երեք հատորովք այնպիսի գործ մի յերևան հանեց, որ ի ժամանակին ակնեցուց, նախանձեցուց և ինչուան հիմայ ողջամիտ օտար և ազգային գիտնականները հիացընէ և արժէքը բարձրացընէ:

Նախնի պատմիչք մեր կամ միայն իրենց ժամանակին և մասնաւոր դէպք ինչ պատմէին, կամ թէ իրենցմէ առաջ (օրինակ իմն Խորենացին) ի սկզբանէ հետէ գրեն ազգին քաղաքական պատմութիւնը. զնոյն կրկնեն յաջորդք իրենց ոճով, և աւելցընելով իրենց օրերուն դէպքերը: Իսկ սա Քրիստոսէ առաջ և վերջ քսան դարուց Հայոց Պատմութիւնը հաւաքեր դասեր է ժամանակագրական կարգաւ, շատ տեղ Հայոց սահմանակից կամ գործակից ազգաց ըրածն այլ կարեւոր համարելով՝ նշանակած, բաղդատելով ազգայնոց և օտարաց ըսածները:

Քաղաքականին հետ զուգեր է և կրօնական Պատմութիւնն, որպէս ոչ ոք ըրած էր, ստոյգ եկեղեցական և աստուածարանական քննութեամբք. որոց նորութիւնն և ընդարձակութիւնն՝ ոչ միայն զշատս ակնեցուցին, ինչպէս վերն ըսինք, այլ և ի նախանձ և յատելութիւն շարժեցին, մինչեւ բողոքել ի գերագոյն ատեան կրօնական, ի դահն Հռովմէական, և նա ոչ միայն մանրամասն քննութեամբ արդարացուց, այլ և զարմացմամբ վկայեր է ոմն ի քննողաց և Սարսախելի Սատռաճարան կոչեր է զՉամչեանն:

Եւ արժէ գիտնալ (նաեւ մեր այս համառօտ յիշատակաւ) որ արդարեւ բազմահմուտ էր յաստուածարանութեան՝ ո՞ր և է Հարց զրոց և կարծեաց. և ոչ հասարակ գիտութեամբ, այլ գերագոյն յըստակ և խոր տեսութեամբ, միանգամայն և աս-

տուածաշնորհ լուսով և սիրով: Այս բանիս յայտնի և ինքնախօս վկայք են՝ իր զանազան գրուածքն, որով և մտացն սովորականէ վեր պայծառութեան և հարստութեան:

Հասարակաց ծանօթն վերոյիշեալ մեծ Պատմա գրութիւնն է. որոյ և համառօտութիւնն գրած է մէկ հատոր, Խորախնայն անուանելով, և զնոյն թարգմանելով թուրքարէն՝ Կիւղարի կոչմամբ: Այլ և աւսոնցմէ աւելի կրնան ապացոյց ըլլալ Չամչեանի խորին գիտութեան և տաղանգին՝ իր աստուածաբանական գրուածքն, որոց մէկն այլ է հոչակաւոր Յակոբ Նալեանի յաջուծախ կրօնական գրուածոց Հերքումնը, նոյնպէս և քանի մի նմաններու: Գարծեալ Տասն հաստ հատոր Սարգսաց Մեկնոչիւնն, անբաւ հարստութեամբ, ոչ միայն հին Ս. Հարց աւանդութեանց, այլ և Հըրէից, որոց լեզուին այլ հմուտ էր, իսկ լատին լեզուի եւ քով տեղեակ: - Թերեւս ասոնցմէ վեր գնելու է, եթէ ոչ ըստ հմտութեան, այլ ըստ աստուածախոհութեան՝ իր հոգեւոր գրեանքն, Նոռագարան Օրեննոչիւնաց, Սեղան խեկոց, Պատկեր տօնից, և Հրահանգ եօրենիի աղօթք. ասոնք, և այլ անտիպ մնացեալ գրութիւնք: Իսկ բերնով՝ շատ տարի և շատ հոգեւոր շահով քարոզած է յԱնգարիա, ի Պասրա՝ սաստիկ մարդածախ ժանտամահի ատեն, և աւելի երկար՝ իրր երեսուն տարի՝ ի Կասսանդանուպօլիս, ուր և կնքեր է իր բազմարդիւն կեանքը ութսունեւից տարուան. ուր և իրր քսան տարի առաջ վախճաններ էր իր անդրանիկ կրօնակից եղբայրն եւս, Հ. Յակովչոս Վ. (1805) ութսունեւերկու տարուան:

Այս ամէն գրուածոց մէջ այլ՝ եթէ աւելի կամ պակաս լեզուի պարզութիւն մի բանեցուցեր է, բազմաց հասկանալի ըլլալու համար (մինչեւ առանձնական գրուածոց մէջ ռամկականն և այլազգականն այլ խառնելով), սակայն հայկաբանութեան հմտութեանն այլ յատուկ վկայ և հաւաստիք թո-

ղած է Քերականոչիւնն, կատարեալ քան իրմէ առջիններուն և զրգիւ աւելի կատարելագործելոց:

Թէ և մեր նպատակն իր Պատմագրութեանն վրայ էր, սակայն այս տարբեր յիշատակք այլ կաւելոր են իր հանճարոյ և ոգւոյ հարստութիւնն և լայնութիւնն յայտնելու. որ ուրիշ և մասամբ նիւթական կերպով մ'այլ յայտնուած է և յառաջ քան զայլս. վասն զի ի պատանեկութեանն՝ Օսմանեան արքունի սպասաւորութեամբ ճարտար ոսկերիչ եղած է, և ինչուան հիմայ պահեմք և զենեմք ի հանդիսի իր շինած արծաթեայ գեղեցիկ անօթներ նշխարաց Սրբոց: Եւս և վայելուչ զարդարեր և նկարաձեւեր, յորոց ոմանք փորագրեալ և տպագրեալ եւս են: Այդ արուեստով անտարակոյս էր որ համբաւաւոր վարպետ մի պիտի ըլլար. բայց ինքն՝ երբ ի շափաւոր հասակին աշխարհական կարգի հրաւերք եղած է իրեն, քսանեւերեք տարուան եռանդեամբ թողլով զաշխարհ՝ իր մեծ եղբոր ճամբուն հետեւեր և եկեր է (ի 1763) ի Ս. Ղազար Վանս Մխիթարայ. ուր զատ յայլոց գործոց՝ մեծագոյն և իսկական յիշատակներ այլ թողած է, հոգեսուն և հոգեկիր աշակերտներ, յորոց բաւական ըլլայ յիշել զԱզգերեան Հ. Մկրտիչ Վ., զՓափազեան Իգնատիոս արքեպիսկոպոսն, և զՄաղաբեան Հ. Մատթոս Վ.:

Այս ամենն բաւական կարծեմ բանաւորաց՝ ի դաս Պատմաց Հայոց ո՛ր պատշաճ համարին կարգելու, այլ անշուշտ բոլոր Հայ հանճարեղաց վերագոյն դասակարգին՝ զՀ. ՄԻՒՍՅԷԼ Վ. ՉԱՄՉԵԱՆ:



ԱԶԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԱՑ

Գրոյս այս Առաջին Մասին՝ Հայ Պատմչաց վրայօք
 տեղեկութեանց և դասակարգութեան մէջ սակաւ
 ուրեք կրկնաբանութիւնք սպրդած են. զորս բազմ-
 արդիւն Հեղինակն անտարակոյս կը բարեփոխէր, եթէ
 ժամանակ ունեցած ըլլար աչքէ անցընելու դրածը:

Յունուար 1902

Յ Ա Ն Կ

Օ Տ Ա Ր Ե Ի Բ Ն Ի Կ Պ Ա Տ Մ Չ Ա Յ

Աբելգեհնոս, յոյն 60	Ազուլոզոր Արտեմիդացի 22
Աբուազի 504	Ազուլֆէտա Իսմայէլ Դաւառ կացի, ասորի 65
Աբրահամ Անկիւրացի 519	Ազգիւանոս 62
Աբրահամ Երեւանցի 542	Առաքել Բաղիշեցի 517
Աբրահամ Խոստովանող 95	— Գաւրիմեցի 551
Ագաթանգեղոս 69-78	— Կալ. Սիւնեաց 518
Ագաթանգեղոս Կնիդացի 61	— Կիթ. Աղուանից 516
Ագամ պրեմացի 64	— Վրլ. Կոստանդեանց 544
Ահարոն Վանանդեցի 183	Ասողիկ Ստեփանոս 215
Աղաթիս 65	Ասուրիս 21
Աղաթուղեն, աշխարհազէր 56	Ատաբացի պատմիչը 65-8
Աղաթոնիսոս, յոյն 56	Արիստազոր Մելիտացի 57
Աղեքսանդր Կոնստանդինոս Բաղ- մովէպ 60	Արիստակէս Լաստիվերացի 221
Ամբիանոս Մարկելիանոս 65	Արիստոն ֆելլացի 31
Անանիա Նարեկացի 209	Արձան թարգմանիչ 110
Անանիա Շիրակացի 167	Արտաշէս Բ 45-4
Անաստաս Գրապեա 64	Արտաւազ Ա 18
Անաստաս Վարդապետ 176	Արտաւազ Աբրահամ 178
Անարսիմեն Լամպրակեցի, յոյն 59	Արտիթէս 84
Անդրէաս թարգմանիչ 135	Արրիանոս 62
Անդրէաս Վանական 95	Արիւ. Վիկտոր 65
Անդրիանէ կամ Ագրիանէ 134	Ափրիկանոս 57, 65
Աննա Կոմնենա 64	
Անտիոքիանոս 21	Բանան 86
Անտոն անապատական Ի Հոս- մայ 50	Բարադամ 545
Ապիւլֆարոս Էլի - ճառագի, արաբացի 66	Բարլաժան Եղեացի 58
Ապ - Իւլ - Ֆադա, արաբացի, աշխարհազէր 66	Բարսեղ Արճիշեցի 525
Ապ - Իւր - Ռաշիւ, արաբա- ցի, աշխարհազէր 66	Բարսեղ Մեծն 65
Ապլլարիպ 160	Բեղա 64
	Բերոսոս 55-4
	Բեկլար Վանցի 523
	Բիւռոսեան Սիբիլա 55
	Բուզանդ Փաւստոս 98-105
Հայասպ. Ա.	23

Գազիկ, հայր Աստվածայ Վա-
նայ 187
Գազուխնի Ջաբարիա, արա-
բացի, աշխարհագիր 66
Գեներալուս 64
Գեորգ Գեմիստոս 64
— Պալիսիերէս 64
Գլխակա 64
Գոտաւա Ալտիւլֆարաճ, ա-
րաբացի 66
Գորգի 86
Գուլիելմո Տիւրացի 64
Գրիգոր Անաւարդեցի 299
Գրիգոր Ալուլֆարաճ, աս-
րի 64
Գրիգոր Աստուածաբան 64
Գրիգոր Երէց 245
Գրիգոր Խլաթեցի Երեմից 511
Գրիգոր Կամախեցի 550
Գրիգոր Կեսարացի 555
Գրիգոր Մազիսարոս 225
Գրիգոր Նարեկացի 241
Գրիգոր Սարգիսազապետ 169
Գրիգոր Սիհեուացի 258
Գրիգոր Վարդապետ 275
Գրիգոր Բ Վկայաւէր 224
Գրիգոր Տուրացի, փռանկ 64

Գանիէլ 504
Գանիէլ Մնուր 506
Դաաթարի Ալուլճաֆար, արա-
բացի 66
Դաւիթ Բաղիշեցի 525
Դաւիթ Հաչիներզու 87
Դելլիուս 22
Դիոգենէս Լայրտացի 62
Դիոդորոս Սիկիւլիացի 62
Դիոնիսիոս Ալիկաոնացի 62
Դիոն Կաստրոս 65
Դուկա 64

Եաբարի, արաբացի 66
Եաբուլի, արաբացի 66
Եզնակ Երէց 170
Եզնիկ Կողբացի 109
Եւանգելոս, յոյն 55

Եղիշէ Վարդապետ 128-158
Ենովք Վահկացի 241
Եսայի Հասան Ջալալեան 559
Եսայի Նշեցի 505
Եսովբոս զրիշ 59
Երաստոթենէս, յոյն 59
Երեմիա Չէլեպի Բեօմիւր-
ճեան 556
Երոզոս. տ. Հերոզոտոս:
Եւազարոս 62
Եւազր 65
Եւաբրիոս 65
Եւզուրեմոս 60
Եւսեբիոս Կեսարացի 65
Եւսեբիոս արաբացի 64
Եւստոպիոս 65
Եփեթոս Կուլաֆի 59
Եփեսոս կթ. Սայ 528

Չակքէոս 168
Չաբարիա Երէց 555
Չաբարիա Կործորեցի 288
Չաբարիա (Չակքէոս) սար-
կաւազ 555
Չենովք Գլակ 78-84
Չոնարա 64
Չոսիւոս 65

Էլ Մասին Գեորգ, ասորի 65
Էլ Մասուտի Ալուլ Հա-
սան, արաբացի 66
Էլ Սաբէտի Ալուլ Աբդըլլա,
արաբացի 66
Էլ-Վարտի, արաբացի, աշ-
խարհագիր 66

Թեոդորեոս 62
Թեոդորոս Քելթոզ 95
Թեոփանէս Բիւզանդացի 64
— Միլեոսացի 22
Թեոփիլակոս 65
Թեոփրաստ. տ. Տիւրան:
Թովմաս 161
Թովմոս Արծրունի 495
Թովմոս Խոջմալեան 546
Թովմաս Մեծոփեցի 515

Թովմաս Մինասեանց Վրդ.
520

Ժոէնիլի, փռանկ 64
Իպն-Էլ-Էթեր, արաբացի 64
Իպն-Հաւզալ Ալուլիսասէմ,
արաբացի 66
Իպն-Փուլան, արաբացի 66
Իպսիլրատ (Հեւոսիկրատ) 21
Իսիզոր Խոտաքս 22
— Սիւլիւրացի 64

Լաբուրնա 52-5
Լամբերտոս 65
Լաւրիտոս 65
Լեւոն Գրաւաարիկոս 64
— Սարկաւազ 64
Լուկիանոս 24

Խալիոնիլ ֓րանկիս 64
Խաչատուր Կեւանցի 296
Խաչատուր Ջուզալեցի 540
Խաթոն Լամպակեցի, յոյն
57
Խոսրով Թարգմանիշ 111
Խոսրով Սահակայ, 149
Խոսրով կամ Խոսրովիկ, հոե-
տոր 111

Կալլիսթենէս 59
Կամազրոս 62
Կամենիա 64
Կապեոսիկոս 65
Կաստոր Հոսիացի 62
Կարապետ Ստանացի 255
Կեղրիտոս 64
Կեփագրոն 62
Կիրակոս Արեւելցի 265
Կիրակոս Գանձակեցի 265
Կիրակոս ճղնաւոր 15
Կոմիտաս (Երանելի Տէր) 557
Կոստանդին Կանդակուզի 64
— Մանասէր Կիւնաւոս 64
— Պերփեոսեան 64
Կորիւն 105-9

Կուրտիոս 62
Կրեպիա, յոյն 58

Հաճի Գալֆա, արաբացի 66
Հասամ Արեւելցի 184
Հեթում Բ Յազաւոր 287
Հեթում-Հեղի 282
Հեթում Պատմիշ 282
Հեկաղէս Միլեոսացի, յոյն
55
Հերոզոտոս 56
Հերովիտանոս 65
Հեւոսիկրատ. տ. Իպսիլրատ:

Ղազար Փարպեցի 158-149
Ղերբուհա. տ. Լաբուրնա:
Ղեւոնդ Երէց 180
Ղեւոնդ, պատմիշ Առաքելոց
180
Ղուկաս Վանանդեցի 559

Մալալ Եւաթրոս, արաբացի
64
Մալաբիա Արեղայ 272
Մալաբիա Գպիր 558
Մամբրէ Վերծանող 95
Մանեթոն, յոյն 60
Մանուրի, արաբացի 66
Մաշտոց կաթողիկոս 485
Մատթէոս զիտնաւոր, Թարգ-
մանիշ 151

Մատթէոս Ուոչակեցի 242
Մատթէոս սյլ 242
Մար Իբաս 25-52
Մարկոպոլ Վենետիկեցի 64
Մարուզէ քահանայ 505
Մաքրիլի Թաքէտափն, արա-
բացի 66
Մեդաթիենէս 60
Մէլքիսեդ Վժանեցի 556
Մեհնական պատմութիւնք
55

Մեկորով Երէց 201
Մեկորուրոս 19-20
Միլիպէլ Ասորի 65, 259
Միլիոնոս, արաբացի 66

Մեղադատուի Ահաբ, արա-
բացի, աշխարհազիր 66
Մեկնեճճիմ պաշի, արաբացի
66
Մերայել Ասալիոյ 64
Մելիթար Այրիվանեցի 289
Մելիթար Անեցի 246
Մելիթար Ապարանեցի 509
Մելիթար Գոշ 249
Մելիթար Ահեւացի 257
Մնացորդը պատմաբանաց ա-
ռաջնոց 95
Մովսէս Եզնեացի 500
Մովսէս Խորենացի 115-128
Մովսէս կաղանկատուացի 175
Մովսէս պատմաբան 175
Մովսէս քահանայ Արծկեցի
520
Մուրառ խան 544
Մուրառա 545

Յակոբ Վ. Թօփուզեան 544
Յակոբ պատրիարք Նալեան
545
Յարութիւն Յովհաննիսեանց
541
Յոյն պատմիչք 55-68
Յովհան Ոսկերեւան 65
Յովհաննէս Անթապի, կթ.
Սոյ 528
Յովհաննէս Արճիշեցի Ռոս-
նակեր, 258
Յովհաննէս քահանայ Արճի-
շեցի 525
Յովհաննէս Արքեպիսկոպոս
Սեբաստիոյ 544
Յովհաննէս Եզնեացի կամ
Եզնեկայեցի 500
Յովհաննէս Եկեղեցապան 152
Յովհաննէս Ծարեցի 526
Յովհաննէս կաթողիկոս Զ.
195
Յովհաննէս կամենիցացի 529
Յովհաննէս Կոզնոն 217
Յովհաննէս Մամիկոնեան 161
Յովհաննէս Սարկաւազ Վար-
դապետ 226

Յովհաննէս Սիւլիւսէս 64
Յովհաննէս Վանական Վար-
դապետ 258
Յովհաննէս Քորեպիսկոպոս
172
Յովհաննիսիկ 526
Յովսէփ Զուլպիցի 540
Յովսէպոս Եբրայեցի 62
Յովսիս 133
Յոնանդէս 65
Յուլիոս Կեսար 62
Յուսաբնոս 62

Կեսար պատմաբան Ռուսաց
64
Կերոս Աբեղայ 159
Կերոս Թարգմանիչ 112
Կերոս Լամբրոնացի 254
Կերոս Դնորձալի 254
Կերոս Պաշինց 506
Կեկեասա Խոնիտալէս 64
Կեկեիթր Գրիգորոս 64
— Պրիւսենիոս 64

Հասնեան Ստեփանոս Վըր-
թմանէս 141-2
Հասնուհ Բաղրատունի 188
Հէնախատիւն, արաբացի 66

Ունայիտորոս 52
Ոսրոյէ (Ոքսելայէ) 21
Որոսոս 65
Ուխտանէս 206
Ուղիւպ 41

Չամչեան Հ. Միքայել Վրդ.
546

Պալքի արաբացի 66
Պանդալէոն քահանայ 205
Պարովրանոս 61
Պեսարոս Քերթաղ Սինեաց
157
Պէլաղօբի, արաբացի 66
Պէն Ամիտ, ասորի 65
Պիտիլոն Թարգմանիչ 40
Պլինիոս 62

Պլուտարքոս 62
Պրատոն 58
Պրիլիբատէս 61
Պրոլոն Տրեքելիւանոս 65
Պոդարեթոս 61
Պորփիւր 22
Պոսիպոլոս 65
Պտղմէոս 62

Ջուանչիւր Վրացի 245

Ռուբինոս 65

Սալուստիոս 62
Սահակ Թարգմանիչ 149
Սահալէ Անեցի 245
Սանկունիաթոն 55
Սարկաւազ. ա. Յովհ. Սար-
կաւազ Վրդ.:
Սեբիոս 164
Սեմիոնիոն, պարսիկ 55
Սեբաստո Ռուբինոս 65
Սեբէլլա 55
Սիւէոն Ապարանեցի 520
Սիւնկիւոս 64
Սիւլւաքէս, յոյն 56
Սմբատ Գունգատապլ 274
Սողոմոնոս 65
Սոկրատ 65
Սողոմոն հայր Մաքնոցաց
177
Սուեանիոս 62
Սուիզա 64
Սուլպիլիոս Սեւերոս 65
Սպարախանոս 65
Ստեփանոս աշակերտ Մաշ-
տացի 185
Ստեփանոս Ասողիկ. ա. Ա.
ասղիկ:
Ստեփանոս Բելզանդացի 65
Ստեփանոս Ռոշքեան 545
Ստեփանոս Տարոնացի Թարգ-
մանիչ 152
Ստեփանոս Օրպիլեան 291

Սարաբոն 62
Սրապիոն կաթողիկոս 527

Վալերիոս Մարտինոս 62
Վահրամ սրբի Տեղբանայ
225
Վահրամ Բաբուն 280
Վանական. ա. Յովհ. Վա-
նական Վրդ.:
Վարդան Այդեկցի 246
Վարդան Մեծն 268
Վարդան Վրդ. Բաղիշեցի
525
Վելլ. Պատերիկուոս 65
Վիգեաիոս 65
Վիպասանութիւն և Վիպա-
սանք 42
Վրայր 45

Տակիտոս 62
Տատրանոս 48
Տեղբան Ա. 17-8
Տիտոս Լիվիոս 62
Տիւրան կամ Տիւրանիոն (Թե-
ոփրատոս) 20
Տրոգոս Պոնապէոս 62

Փաստոս. ա. Բուզանդ:
Փեռեկեղէս, յոյն 56
Փերմելիանոս 50-1
Փիլիմոն 22
Փիլոն Պիւլպիցի 55
Փլորոս 62
Փղզղոն Տրալիւանացի 60
Փոռ 64

Քանթոն 59
Քանթոն Սմեանցի 58
Քանթոնէս Սպանիացի 64

Օհան Առաքել 527
Օտարազդի հայապատուէք 48
Ֆրուատար 64

The first part of the book is devoted to a general history of the world, from the beginning of time to the present day. It covers the various ages and periods of human civilization, and the progress of knowledge and art. The author discusses the different nations and empires, and the causes of their rise and fall. He also touches upon the various religions and philosophies that have shaped the human mind.

The second part of the book is a detailed account of the history of the British Empire, from its early beginnings to its present extent. It describes the various colonies and territories that have been acquired, and the policies and administration that have governed them. The author also discusses the military and naval power of the empire, and its influence on the world.

The third part of the book is a history of the United States, from its declaration of independence to the present. It covers the various presidents and administrations, and the major events and conflicts that have shaped the nation. The author also discusses the political and social changes that have taken place, and the role of the United States in the world.

The fourth part of the book is a history of the various nations and empires of the world, from ancient times to the present. It covers the various dynasties and rulers, and the major events and conflicts that have shaped their histories. The author also discusses the cultural and scientific achievements of these nations, and their influence on the world.

The fifth part of the book is a history of the various religions and philosophies of the world, from ancient times to the present. It covers the various founders and teachings, and the major events and conflicts that have shaped their histories. The author also discusses the cultural and scientific achievements of these religions, and their influence on the world.

The sixth part of the book is a history of the various arts and sciences of the world, from ancient times to the present. It covers the various inventors and discoveries, and the major events and conflicts that have shaped their histories. The author also discusses the cultural and scientific achievements of these arts and sciences, and their influence on the world.

The seventh part of the book is a history of the various languages and literatures of the world, from ancient times to the present. It covers the various authors and works, and the major events and conflicts that have shaped their histories. The author also discusses the cultural and scientific achievements of these languages and literatures, and their influence on the world.

The eighth part of the book is a history of the various customs and traditions of the world, from ancient times to the present. It covers the various customs and traditions, and the major events and conflicts that have shaped their histories. The author also discusses the cultural and scientific achievements of these customs and traditions, and their influence on the world.

The ninth part of the book is a history of the various laws and governments of the world, from ancient times to the present. It covers the various laws and governments, and the major events and conflicts that have shaped their histories. The author also discusses the cultural and scientific achievements of these laws and governments, and their influence on the world.

The tenth part of the book is a history of the various wars and conflicts of the world, from ancient times to the present. It covers the various wars and conflicts, and the major events and conflicts that have shaped their histories. The author also discusses the cultural and scientific achievements of these wars and conflicts, and their influence on the world.

2p

up

hush

1785

7013

